ՌՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

# ՍԻՐԻԱՅԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ԱՐԱԲ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1946-2000)

ՌՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

# ՍԻՐԻԱՅԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ԱՐԱԲ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1946-2000)

*CAIRO UNIVERSITY*
*FACULTY OF ARTS*
*CENTER FOR ARMENIAN STUDIES*

ROUBEN KARAPETIAN

# THE PLACE AND ROLE OF SYRIA IN THE ARAB-ISRAELI CONFLICT (1946-2000)

CAIRO 2008

9(569)
Կ-29

جامعة القاهرة
كلية الآداب
مركز الدراسات الأرمنية

*ԿԱՀԻՐԵԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ*
*ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ*
*ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ*

5088

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՌՈՒԲԵՆ ԿԱՐԼԵՆԻ

# ՍԻՐԻԱՅԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ԱՐԱԲ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1946-2000)

ԿԱՀԻՐԵ –2008

Հրատարակվում է Կահիրեի Համալսարանի
բանասիրական ֆակուլտետի հայագիտական
կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ Նիկոլայ Հովհաննիսյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Աշխատությունը նվիրված է արաբ-իսրայելական հակամարտությունում Սիրիայի դերակատարության ու քաղաքականության ուսումնասիրությանը 1946-2000թթ.:

Գրքում լուսաբանվում են տարածաշրջանում տեղի ունեցած կարևորագույն դեպքերն ու իրադարձությունները, վերլուծության են ենթարկվում մեծ տերությունների քաղաքականությունը, Պաղեստինի հիմնախնդիրն ու արաբ-իսրայելական հակամարտությանը վերաբերող հանգուցային հարցերը:

Հասցեագրված է արևելագետ-պատմաբաններին, միջազգայնագետներին, քաղաքագետներին և ընթերցողների լայն շրջանակներին:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ....................8

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՍԻՐԻԱՆ ԵՎ ԱՐԱԲ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ.

ա.Սիրիական ազգայնականությունը եվ սիոնիստական գաղափարախոսությունը մանդատային շրջանում՝ 1920-194....................14
- Օսմանականության ժամանակաշրջան....................15
- Արաբականության շրջան....................24
- Ֆրանսիական մանդատը Սիրիայում....................37

բ.Իսրայել պետության ստեղծումը և նորանկախ Սիրիայի դիրքորոշումը Պաղեստինյան հարցի նկատմամբ....................45

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՍԻՐԻԱՆ ԱՐԱԲ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՀՈՐՁԱՆՈՒՏՈՒՄ (1948-1967թթ.)

ա.Սիրիայի մասնակցությունը 1948թ. առաջին արաբ-իսրայելական պատերազմին....................61
բ.Սառը պատերազմի սկիզբը տարածաշրջանում: Սիրիայի և Եգիպտոսի միավորումն ու Միացյալ Արաբական Հանրապետության ստեղծումը (1958-1961թթ.)....................65
դ.Իսրայելի և սիոնիզմի դեմ պայքարը Սիրիայի Բաասական նոր վարչակարգի գաղափարախոսության մեջ....................91
գ.«Վեցօրյա» արաբ-իսրայելական պատերազմը և դրա թողած հետևանքները Սիրիայի վրա....................107

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՍԻՐԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԱԲ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ (1967-1978թթ.)

ա.Սիրիայի մերձավորարևելյան քաղաքականության մշակումն ու իրականացումը Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ԽՍՀՄ գլոբալ առճակատման հենքի վրա....................114
բ.Դամասկոսը և Պաղեստինի ազատագրության կազմակերպությունը......120
գ.1970թ. Հորդանանյան ճգնաժամը և իշխանափոխությունը Սիրիայում....................126
դ.Հաֆեզ Ասադի դիրքորոշումն արաբ-իսրայելական հակամարտության նկատմամբ....................130

ե.Սիրիայի մասնակցությունը 1973թ. «հոկտեմբերյան» պատերազմին..........139
զ.Դամասկոսի տեղը Հ.Քիսինջերի «քայլ առ քայլ» քաղաքականության մեջ..........146
է.Քաղաքացիական պատերազմը Լիբանանում..........163
ը.Քեմփ-Դևիդի համաձայնագրի ստորագրումը և Սիրիան..........173

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ.
ՔԵՄՓ-ԴԵՎԻԴԸ ՃԱՆՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝ ԱՐԱԲ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ (1978-1991թթ.)

ա.Սիրիայի մերձավորարևելյան քաղաքականության հիմնախնդիրները Քեմփ-Դևիդից հետո..........192
բ.1982թ. Իսրայելի ներխուժումը Լիբանան..........200
գ.Թաիֆի համաձայնագիրը և Pax Syriana-ի հաստատումը Լիբանանում..........220
դ.Ահաբեկչության, թմրադեղերի առևտրի ու մարդու իրավունքների հիմնահարցերը ԱՄՆ-Սիրիա հարաբերություններում..........230

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ.
ՍԻՐԻԱՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱԿՏԻՎ ՄԱՍՆԱԿԻՑ (1991-2000թթ.)

ա.Սիրիայի մասնակցությունը 1991թ. Ծոցի պատերազմին..........239
բ.Մադրիդի խաղաղության համաժողովը՝ չավարտված ճանապարհի սկիզբ..........243
գ.Սիրիան և խաղաղության գործընթացը 1990-ական թվականներին..........255
դ.Սիրիայի և Իսրայելի միջև խաղաղություն հաստատելու վերջին փորձը..........266
ե.Հաֆեզ Ասադի դարաշրջանի ավարտը. Սիրիան ներքին և արտաքին նոր մարտահրավերների առջև..........277
ՎԵՐՋԱԲԱՆ..........286

ՀԱՎԵԼՎԱԾ1 ԲԱԼՖՈՒՐԻ ՀՌՉԱԿԱԳԻՐԸ..........290
ՀԱՎԵԼՎԱԾ2 ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՄԱՆԴԱՏԸ (Քաղվածք)..........291
ՀԱՎԵԼՎԱԾ3 «ՍՊԻՏԱԿ ԹՈՒՂԹ» (“WHITE PAPER”)..........293
ՀԱՎԵԼՎԱԾ4 ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ Հ.181 ԲԱՆԱՁԵՎԸ.305
ՀԱՎԵԼՎԱԾ5 ՊԱՂԵՍՏԻՆԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ (Քաղվածք).......307
ՀԱՎԵԼՎԱԾ6 ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ Հ.242 ԲԱՆԱՁԵՎԸ.317
ՀԱՎԵԼՎԱԾ7 ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ Հ.338 ԲԱՆԱՁԵՎԸ.319



ՀԱՎԵԼՎԱԾ8 ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԻՍՐԱՅԵԼԻ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ ՄԻՋԵՎ ՈՒԺԵՐԻ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ..........320
ՀԱՎԵԼՎԱԾ9 ԳՈԼԱՆԻ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՔԸ.324
ՀԱՎԵԼՎԱԾ10 ՍԻՐԻԱՅԻ ԵՎ ԻՍՐԱՅԵԼԻ ՄԻՋԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԾՐՋԱՆԱԿ..........325
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..........331
1.Արխիվային նյութեր, պաշտոնական փաստաթղթեր, հաղորդագրություններ, տեղեկատու գրականություն..........331
2.Մենագրական ուսումնասիրություններ, հոդվածներ..........334
3.Պարբերական մամուլ..........350
4.Էլեկտրոնային-համացանցային կայքէջեր..........352

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սիրիան, զբաղեցնելով բացառիկ կարևոր աշխարհագրական դիրք տարածաշրջանում, հանդիսանում է արաբական և իսլամական աշխարհի կրոնական ու մշակութային կարևորագույն կենտրոններից մեկը: Այստեղ են ձևավորվել ու կյանքի կոչվել քաղաքական տարբեր գաղափարներ և շարժումներ, որոնք հսկայական ազդեցություն են թողել արաբական աշխարհի քաղաքական, տնտեսական ու մշակութային զարգացման ընթացքի վրա:

Որպես արաբական «ումմայի» անբաժան մաս, Սիրիան բնականաբար կարևոր ռազմավարական դերակատարություն է ունեցել և շարունակում է ունենալ արաբ-իսրայելական հակամարտության մեջ, ինչպես նաև մերձավորարևելյան խաղաղության հաստատման գործընթացում: Ավելի քան կես դար Սիրիան, գտնվելով տարածաշրջանում ծավալված անհաշտ պայքարի էպիկենտրոնում, գործուն մասնակցություն է ունեցել միջազգային այդ ամենատևական հակամարտության բոլոր փուլերում:

Մինչև 1979թ. Իսրայելին հակամարտ ու հակազդող արաբական պետություններից ամենակարևորն էր համարվում Եգիպտոսը՝ իր ռազմական ներուժով, տարածքով, գործուն ղեկավարությամբ և շահեկան աշխարհագրական դիրքով: Սակայն ստորագրելով Իսրայելի հետ համաձայնագիրը Քեմփ-Դևիդում, Եգիպտոսը կորցրեց իր այդ դերը, իսկ նրա տեղը արաբ-իսրայելական հակամարտությունում գրավեց Սիրիան:

Երբ առանց Եգիպտոսի այլևս ավարտվեց արաբական երկրների կողմից Իսրայելի դեմ հաջողությամբ լայնածավալ պատերազմ վարելու հնարավորությունը, ապա ստեղծված պայմաններում Սիրիան դարձավ այն առանցքային երկիրը, առանց որի անհնար է համապարփակ խաղաղության հաստատումը տարածաշրջանում: Որոշ վերլուծաբաններ անգամ հայտարարեցին, որ ռազմական տեսանկյունից 1979թ. հետո արաբ-իսրայելական հակամարտությունը վերածվել է սիրիա-իսրայելական հակամարտության:

Արաբ-իսրայելական հակամարտության վերաբերյալ գոյություն ունեն բազմաթիվ հետազոտություններ՝ մենագրական աշխատություններ, գրքեր, հոդվածներ և այլ հրապարակումներ: Սակայն այդ հակամարտությունում Դամասկոսի դերի և վարած քաղաքականության վերաբերյալ 1946թ. ապրիլի 17-ին՝ անկախության նվաճումից մինչև 2000թ. ընկած ժամանակահատվածն ընդգրկող հատուկ ուսումնասիրություն դեռևս կատարված չէ: Այդ իմաստով սա առաջին փորձն է հայ արաբագիտության մեջ:

Սիրիայի քաղաքականությունը արաբ-իսրայելական հակամարտության նկատմամբ, այդ քաղաքականության գաղափարական հենքն ու հիմնավորումը առավել հստակ ներկայացնելու



նպատակով, անհրաժեշտ ենք համարել աշխատության մեջ անդրադառնալ Սիրիայում ազգայնական շարժման ձևավորման, սիրիական ազգայնականության և համաարաբականության գաղափարախոսության վերաբերող մի շարք սկզբունքային հարցերի: Այս բոլորը չափազանց կարևոր է ոչ միայն Սիրիայի նորագույն պատմության, այլև ժամանակակից Սիրիայի ներքին և արտաքին քաղաքականության վերաբերյալ հիմնավոր և համապարփակ պատկերացում կազմելու համար: Գիտական հիմնահարցերի նման շրջանակը ներառում է նոր մոտեցումներ, մեկնաբանություններ և դրանց համարժեք լուծումներ:

Աշխատության կարևոր նորույթներից մեկն այն է, որ վերլուծության են ենթարկվում Դամասկոսի վարած արտաքին քաղաքականության իրական շարժառիթները՝ ներքին քաղաքական գործընթացների և տարածաշրջանային զարգացումների հետ սերտ փոխկապակցվածության մեջ: Աշխատության մեջ լուսաբանվում են նաև Սիրիայի հարաբերությունները Իսրայելի հետ, հաշվի առնելով դրանց վրա ազդող բազմաթիվ ներքին և արտաքին քաղաքական գործոնները: Նորովի է մեկնաբանվում գերտերությունների վարած քաղաքականության ազդեցությունը այդ հարաբերությունների վրա:

Գրքի մեջ զգալի տեղ է հատկացված Պաղեստինի հիմնախնդրի նկատմամբ Սիրիայի քաղաքականության քննությանը: Մանրազնին հետազոտված են իսրայելա-պաղեստինյան հակամարտության նկատմամբ Դամասկոսի դիրքորոշման տարբեր փուլերն ու հատկանշական ելևէջները:

Մերձավոր Արևելքում ընթացող սառը պատերազմը ԽՍՀՄ և ԱՄՆ-ի միջև իր արտացոլումն էր գտել Սիրիայի արտաքին քաղաքական հայեցակարգում: Ուստի գրքի մեջ մանրամասն ներկայացված են ոչ միայն Դամասկոսի հարաբերությունները նշված գերտերությունների հետ, այլև վերջիններիս վարած քաղաքականությունն ու հետապնդած նպատակները տարածաշրջանում:

Սիրիայի արտաքին քաղաքականության հիմնական խնդիրներից է արաբական երկրների հետ հարաբերությունների զարգացումը: Ուստի միջարաբական կապերի ամրապնդման, համաարաբական գաղափարախոսության հարցերի քննությանը նույնպես տեղ է հատկացված սույն աշխատության մեջ:

Աշխատության ժամանակագրական սահմաններն ընդգրկում են 1946թ., երբ աշխարհի քաղաքական քարտեզի վրա հայտնվեց Սիրիա անկախ պետությունը, մինչև 2000թ.՝ Սիրիայի նախագահ Հաֆեզ Ասադի կառավարման ավարտը:

Ինչպես հայտնի է, մերձավորարևելյան հակամարտության նկատմամբ Սիրիայի ներկայիս դիրքորոշման սկզբունքները ձևավորվել են դեռևս 1970թ. աշնանը՝ այսպես կոչված «ուղղիչ շարժման» ընթացքում

ընդունված Բաաս կուսակցության ծրագրային փաստաթղթերում: Այդ խնդրով աշխատության ժամանակագրական սահմանները սահմանափակել ենք 2000 թվականով, երբ ավարտվեց Հաֆեզ Ասադի դարաշրջանը, հաշվի առնելով այն փաստը, որ 30 տարիների ընթացքում Դամասկոսի դիրքորոշումը արաբ-իսրայելական հակամարտության նկատմամբ որևէ սկզբունքային փոփոխության չի ենթարկվել ու աչքի է ընկել հետևողականությամբ և շարունակականությամբ: Հաֆեզ Ասադի ղեկավարած վարչակազմերը վերոհիշյալ ժամանակաշրջանում փոխել են միայն շեշտադրումները՝ հարմարեցնելով երկրի ընթացիկ արտաքին քաղաքական կուրսը աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային զարգացումներին:

Աշխատության մեջ պատշաճ ուշադրություն է դարձված Սիրիայի ներքին քաղաքական զարգացումների՝ հատկապես ընդդիմության, տնտեսական խնդիրների հետ կապված հարցերի լայն շրջանակի վրա:

1975թ. ի վեր Սիրիայի արտաքին և ներքին քաղաքականության համար որոշիչ նշանակություն ունի Դամասկոսի կողմից Լիբանանի վերահսկողության հարցը: Այդ հաշվի առնելով աշխատության մեջ քննվում են ինչպես Լիբանանում ծագած քաղաքացիական պատերազմի ընթացքում Սիրիայի քաղաքականության էությունն ու իրական դրդապատճառները, այնպես էլ Թաիֆի համաձայնագրի ստորագրումից հետո Pax Syriana-ի հաստատման հետևանքներն ու Լիբանանում սիրիական ներկայության ազդեցությունը տարածաշրջանում խաղաղության հաստատման գործընթացի վրա:

Իսրայելի նկատմամբ Սիրիայի քաղաքական ռազմավարության վերլուծությունը հնարավորություն է ընձեռում ընկալելու արաբ-իսրայելական հակամարտության նրբություններն ու առանձնահատկությունները, ինչպես նաև դրա կարգավորման և տարածաշրջանում խաղաղության հաստատման հեռանկարները:

Գրքում արված կարևորագույն եզրահանգումն այն է, որ եթե ժամանակին ասվում էր (մինչև 1979թ.), որ լայնածավալ արաբ-իսրայելական պատերազմն անհնարին է իրականացնել առանց Եգիպտոսի, ապա այսօր վստահաբար կարող ենք հայտարարել, որ արաբ-իսրայելական հակամարտության կարգավորումն ու տարածաշրջանում տևական խաղաղության հաստատումն անհնարին է առանց Սիրիայի:

Արաբ-իսրայելական հակամարտության մեջ Սիրիայի դերակատարությունը հեղինակը համարում է առանցքային, հատկապես վերջին երեք տասնամյակների ընթացքում: Եվ եթե պաղեստինյան հիմնախնդիրը արաբ-իսրայելական հակամարտության «սիրտն է», ապա ռազմավարական և աշխարհաքաղաքական տեսակետից Սիրիայի վարած քաղաքականությունից ու Իսրայելի հետ նրա հարաբերությունների բարելավումից է կախված լինելու



հակամարտության *վերջնական* կարգավորումը:

Միջազգային հանրությունն ու Իսրայելը պետք է գիտակցեն, որ Սիրիայի վրա տնտեսական ու քաղաքական ճնշումներ իրականացնելով, նրան խաղաղության գործընթացից մեկուսացնելով անհնար է կարգավորել բուն իսկ իսրայելա-պաղեստինյան հակամարտությունը:

Միմիայն տարածաշրջանային համագործակցության հարցերում Սիրիայի *գործնական* ընդգրկման արդյունքում՝ սիրիա-իսրայելական հարաբերությունների բարելավման միջոցով /խաղաղության համաձայնագրի ստորագրում և Գոլանների վերադարձ/, հնարավոր կլինի հասնել Պաղեստինի հիմնախնդրի արդար կարգավորմանն ու Մերձավոր Արևելքում տևական խաղաղության հաստատմանը, այլ ոչ թե հակառակը՝ իսրայելա-պաղեստինյան համաձայնության արդյունքում՝ Պաղեստինի «պետության» ստեղծումով՝ այլընտրանք չթողնել Սիրիային և պարտադրել նրան համաձայնության գալ Իսրայելի հետ վերջինիս համար պայմաններով:

Գիրքը խարսխված է պաշտոնական փաստաղթերի ու վավերագրերի վրա, որոնցից հատկապես կցանկանայի առանձնացնել Հ.Ասադի ելույթների ժողովածուները, սիրիական ղեկավարների հարցազրույցներն ու Բաաս կուսակցության նյութերը, Արաբական երկրների լիգայի որոշումներն ու ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերը:

Հեղինակին մեծապես օգտակար է եղել 2003թ. Մոսկվայում «Ժողովրդավարություն» միջազգային հիմնադրամի կողմից հրատարակված «Մերձավորարևելյան հակամարտություն» երկհատորյակը՝ իր պարունակած փաստական հարուստ նյութով. այստեղ զետեղված են ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարության 1947-1967թթ. արխիվային նյութերը արաբ-իսրայելական հակամարտության վերաբերյալ, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության 1948-1962թթ. ու ԱՄՆ Ազգային արխիվի պետքարտուղարության փաստաթղթերը:

Աշխատության մեջ օգտագործվել են նաև ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի գերատեսչությունների արխիվային փաստաթղթերը:

Պետք է հիշատակել նաև աշխատության համար շատ կարևոր՝ Սիրիայի և Իսրայելի, ինչպես նաև ամերիկյան ու խորհրդային բարձրաստիճան պաշտոնյաների և քաղաքական գործիչների՝ Խ.Ազմի, Մ. Տլասի, Ֆ.Շարաայի, Գ.Մեյիրի, Շ.Պերեսի, Դ.Բեն-Գուրիոնի, Հ.Քիսինջերի, Ս.Վենսի, Մ.Օլբրայթի, Ռ. Ռեյգանի, Ռ.Նիքսոնի, Ե.Պրիմակովի, Ա.Գրոմիկոյի հուշագրությունները:

Վերջին տարիների ընթացքում ռուս հետազոտողներից հարկ է հատկապես առանձնացնել Վ.Յուրչենկոյի, Ա.Ֆիլոնիկի, Վ.Մախլուֆի և այլոց կատարած աշխատությունները Սիրիայի վերաբերյալ:

Աշխատության մեջ օգտագործված արաբական աղբյուրների մի մասը վերաբերում է Սիրիայում ազգայնականության ձևավորման, Բաաս կուսակցության գաղափարաբանական հարցերին, իսկ մյուսը՝ Սիրիայի ղեկավարների և նրանց վարած քաղաքականության էությանը, Սիրիայի արտաքին քաղաքական կուրսի մշակման ու իրականացման խնդիրներին: Սիրիացի հեղինակներից հարկ է առանձնացնել Ռ.Ավվադի, Մ. Ռազզազի, Հ. Արդելլահի, Ա.Հաֆեզի, Հ. Հանիի, Ջ. Ջաբռուի, Մ.Քուրդ Ալիի, Բ. ալ-Ջաաֆարի և այլոց անունները:

Ընդհանուր առմամբ վերոհիշյալ հեղինակների աշխատությունները հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու Սիրիայի արտաքին քաղաքականության, արաբ-իսրայելական հակամարտության նկատմամբ Դամասկոսի մոտեցումների մասին: Սակայն պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ սիրիական հեղինակների աշխատանքները հրատարակվել են մի երկրում, ուր առկա է խիստ պետական և կուսակցական գրաքննություն: Այդ պատճառով էլ այդ աշխատանքները անհարկի գաղափարականացված են և հաճախ կրում են դեկլարատիվ ու մակերեսային բնույթ: Այդ իմաստով Բեյրութում և Կահիրեում հրատարակված աշխատանքները առավել չեզոք են և հավասարակշռված:

Աշխատանքը կատարվել է տարաբնույթ աղբյուրների և գրականության հիման վրա, որպիսիք են ամերիկյան, արաբական, իսրայելական, ռուս և հայ հետազոտողների արժեքավոր աշխատությունները, Մերձավոր և Միջին Արևելքի պատմության և արտաքին քաղաքական հարցերի վերաբերյալ տպագրված բազմաթիվ մենագրությունները, ժողովածուներն ու պարբերականները:

Սիրիա-իսրայելական բանակցությունների ակտիվ մասնակից Ի.Ռաբինովիչի, ինչպես նաև Մերձավոր Արևելքում 1988-2000թթ. ԱՄՆ հատուկ բանագնաց Դեննիս Ռոսսի աշխատանքները, բրիտանացի Պ. Սիլի, ամերիկյան հետազոտողներ Կ. Բրաունի, Վ. Պերտեսի, Ֆ. Խուրիի, Ռ. Քվանդի, Վ. Լաքերի, Է.Դաունի, ինչպես նաև ռուսաստանյան հեղինակներ Ե.Պրիմակովի, Ե.Պիրլինի, Է. Փիր-Բուդաղովայի, Ս. Իվանովի, Վ.Վավիլովի և Զ.Լևինի աշխատանքները նշանակալիորեն նպաստեցին սույն աշխատության շարադրմանը:

Ընականաբար Մերձավոր Արևելքի վերաբերյալ յուրաքանչյուր գիտական աշխատանք կատարելիս դժվար է շրջանցել դասական դարձած այնպիսի հեղինակների օգտագործումը, ինչպիսիք են Ջ. Անտոնիուսը, Ֆ. Աջամին և Ա. Հուրանին:

Հայ արաբագետներից հատկապես պետք է նշել Ն.Հովհաննիսյանի և Հ. Գրիգորյանի գիտական աշխատությունները: Իսկ ժամանակագրական առումով սույն աշխատությունը Ն.Հովհաննիսյանի «Սիրիայի անկախ հանրապետության ստեղծումը» և «Սիրիան անկախության համար մղված պայքարում» արժեքավոր



հետազոտությունների շարունակությունն է հանդիսանում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացման դարաշրջանում որևէ գիտական հետազոտություն անհնար է իրականացնել առանց համացանցի ընձեռած լայն հնարավորությունների օգտագործման: Ուստի համացանցի առավել տեղեկատվական կայքէջերին զետեղված փաստագրական և այլ տեսակի նյութերը նույնպես աղբյուր են հանդիսացել սույն աշխատանքի համար:

Ուսումնասիրության աղբյուրագիտական և փաստական հենքը ամբողջանում է նաև նրանով, որ նրա մեջ հեղինակն օգտագործել է Եգիպտոսում որպես ՀՀ դեսպան պաշտոնավարման, Լիբանան, Սիրիա և Իսրայել բազմաթիվ այցելությունների ընթացքում բարձրաստիճան պաշտոնյաներից և օտարերկրյա դիվանագետներից անձամբ ստացված նյութեր ու տեղեկություններ:

Ավելորդ է նշել, որ արաբների պատմության ուսումնասիրությունն առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում Հայաստանի համար: Արաբական երկրները Հայաստանի մերձավոր հարևաններն են և նրանք պատկանում են միևնույն՝ մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանին: Վերոհիշյալը հատկապես արդիական հնչեղություն ունի այսօր, երբ արաբական երկրների հետ կապերի ամրապնդումը ռազմավարական նշանակություն է ձեռք բերել մեր պետության համար: Այդ տեսանկյունից սույն աշխատանքը կարող է նպաստել ՀՀ մերձավորարևելյան քաղաքականության մշակմանն ու արդյունավետ իրականացմանը:

# ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

# ՍԻՐԻԱՆ ԵՎ ԱՐԱԲ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ

## *ՍԻՐԻԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍԻՈՆԻՍՏԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԴԱՏԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ՝ 1920-1943թթ.*

Սիրիա այցելողը կարող է հանդիպել քաղաքական քարտեզների, որոնց վրա Սիրիայի սահմանները Լիբանանի և Հորդանանի հետ նշված են ոչ թե որպես «միջազգային», այլ զուտ «ներքին սահմաններ»: Այդ քարտեզների վրա Իսրայելը գոյություն չունի, իսկ Պաղեստինի պետությունը բաժանված է Սիրիայից «ժամանակավոր» սահմանով:

Քարտեզի վրա եղած անճշտությունները վկայում են, որ ներկայիս Սիրիայի ժողովուրդը չի մոռացել, որ մինչև 1920թ. «Սիրիա» անվան հասկանում էին ոչ միայն այն տարածքը, որը զբաղեցնում է ժամանակակից Սիրիան, այլ նաև՝ Լիբանանը, Իսրայելը, Հորդանանն ու 1939թ. Ֆրանսիացիների կողմից Թուրքիային «շնորհված» Ալեքսանդրեթի սանջակը: Այսինքն՝ ամբողջ այն տարածքը, որը կազմում է պատմաաշխարհագրական Սիրիան կամ «Բիլադ աշ-Շամը»:

Բնականաբար, Սիրիայի պատմությունը անքակտելիորեն կապված է եղել Պաղեստինի հետ, ուր սկսած 19-րդ դարի վերջից սկիզբ է դրվել հրեաների աստիճանաբար ներգաղթին, հիմքեր նախապատրաստելով ամենատևական և արյունալի՝ արաբ-իսրայելական հակամարտության համար:

Ինչպես հայտնի է, մինչ I Համաշխարհային պատերազմը արաբական երկրների մեծ մասը, այդ թվում նաև Սիրիան, գտնվում էին Օսմանյան կայսրության տիրապետության տակ: Պատերազմի ավարտից հետո՝ 1920թ. ապրիլին երկարատև սակարկումներից հետո Անտանտի բարձրագույն խորհուրդը, որը նիստ էր գումարել Սան-Ռեմոյում, որոշում է կայացնում Սիրիայի և Լիբանանի կառավարման մանդատները հանձնել Ֆրանսիային:

1920թ. ֆրանսիական մանդատի հաստատումից մինչև 1946թ. ապրիլի 17-ը՝ անկախության նվաճումը, Սիրիան թևակոխում է ազգային-ազատագրական պայքարի մի այնպիսի ժամանակաշրջան, որը «դուրս գալով նեղ սիրիական շրջանակներից, ձեռք էր բերել համաարաբական նշանակություն»:[1]

[1]Оганесян Н.О..Образование независимой Сирийской Республики, стр.3.



Պատմական այս ժամանակահատվածում կայացման և զարգացման տարբեր դրսևորումներ ունեցավ քաղաքական կյանքը Սիրիայում: Տարբեր էին սիրիական քաղաքական գործիչների գաղափարներն ու մոտեցումները՝ երկրի ապագայի և ներքին զարգացումների վերաբերյալ: Տարբեր էին Սիրիայում և արտերկրում ստեղծված քաղաքական կազմակերպությունների առջև դրված խնդիրներն ու օրակարգային հարցերը:

Սույն գլխի նպատակն է ներկայացնել պետականության բացակայության պայմաններում սիրիական քաղաքական վերնախավի վերաբերմունքը Պաղեստինում կատարվող պատմական զարգացումների նկատմամբ: Այս իմաստով կարևոր է սիրիական քաղաքական գործիչների և կազմակերպությունների քաղաքական կեցվածքը ու դիրքորոշումների վերլուծությունը՝ Պաղեստին հրեական ներգաղթի և սիոնիստական ծրագրերի իրականացման վերաբերյալ:

Այդ նպատակով, առաջին հերթին անհրաժեշտ ենք համարում հակիրճ անդրադառնալ Սիրիայում ազգայնականության ձևավորման հարցերին:

*Սիրիայում ազգայնականությունը տարբեր գաղափարական դրսևորումներ ունեցավ, որը կարելի է բաժանել հետևյալ փուլերի. առաջինը՝ 1860-1918թթ. օսմանականության- «օսմանիզմի», երկրորդը՝ 1918-1948թթ. արաբականության՝ «արաբիզմի», երրորդը՝ 1948-1970թթ.՝ սիրիականության կամ «սիրիանիզմի»,[2] և, վերջապես, չորրորդը՝ 1970-2000թթ. սիրիական արաբականության փուլը:*

## *ՕՍՄԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ*

Հենց սկզբից պետք է նշել, որ Սիրիայում ազգայնականության մասին լրջորեն կարելի է խոսել միայն I Համաշխարհային պատերազմի ավարտից հետո, երբ ազգային առանձին ինքնիշխան միավորի ստեղծման անհրաժեշտությանը վերաբերող գաղափարները գերիշխող դարձան սիրիական քաղաքական վերնախավի մեջ: Թեև արաբագետներից ոմանք ազգայնականությունը Սիրիայում մինչ Առաջին աշխարհամարտը նախընտրում են անվանել «սիրիանիզմ»[3], մենք կարծում ենք, որ տվյալ ժամանակահատվածում «սիրիական ազգայնականություն» տերմինը պետք է օգտագործել մեծ վերապահումներով: Սիրիան զուտ աշխարհագրական անվանում էր

[2]Բացառությամբ 1958-1961թթ. Եգիպտոսի հետ միավորման տարիների, երբ «երկրային» ազգայնականությունը՝ սիրիանիզմը անվտանգության և այլ նկատառումներով ստորադասվեց Գ.Նասերի արաբական ազգայնականությանը՝ նասերիզմին:

[3] Kayali, Hasan. Arabs and Young Turks: Ottomanism, Arabism and Islamism in the Ottoman Empire, 1908-1918, p.212.

տարրեր կրոնական համայնքների ու ցեղախմբերի համար, որոնք հիմնականում առաջնորդվում էին ոչ թե Սիրիայի կամ սիրիական հայրենիքի գաղափարներով, այլ կրոնական կամ համայնքային շահերով:[4]

Վերոհիշյալը, սակայն, չի հերքում Սիրիայում «օսմանիզմի» և այնուհետև՝ «արաբիզմի» գաղափարախոսությունների առկայությունն արդեն սկսած 19-րդ դարի կեսերից:[5] Սիրիայում այս երկու գաղափարախոսությունների ձևախախտումն ընթացել է փուլային կերպով, կապված ներքին և արտաքին մի շարք պայմանների ու գործոնների հետ:

Սիրիացիների ազգային ինքնագիտակցության զարգացման վրա մեծ ազդեցություն գործեցին 1830թ.՝ Մուհամմեդ Ալիի ներխուժումը երկիր ու դրան հաջորդած նրա որդու՝ Իբրահիմ փաշայի կառավարման տարիները: Այդ ընթացքում Սիրիայում իրականացված առաջադիմական բարեփոխումները, մտավոր և քաղաքական կյանքի խթանումը, կրոնական փոքրամասնությունների նկատմամբ խտրականության վերացումը բարենպաստ պայմաններ ստեղծեցին երկրում փոքր, բայց ակտիվ արևմտյան քրիստոնեական առաքելությունների /միսիաների/ գործունեության և առաջին ազգայնական ընկերությունների ստեղծման համար, որոնք հիմնականում լուսավորական նպատակներ էին հետապնդում:[6]

Իբրահիմ փաշայի կառավարման ընթացքում կատարված բարեփոխումները մեծապես նպաստեցին 19-րդ դարի 40-ական թվականներին արաբական իրականության մեջ ազգային-մշակութային՝ «Նահդա» (Զարթոնք) անվանումն ունեցող շարժման ձևավորմանը:

1840թ. հետո, երբ անգլիացիների ճնշման հետևանքով, Իբրահիմը ստիպված եղավ լքել երկիրը, թուրքերը փակեցին արաբական դպրոցներն ու քոլեջները, սակայն, վախենալով Արևմուտքի հակազդեցությունից, թույլատրեցին կաթոլիկ և բողոքական առաքելությունների գործունեությունը: Այս վերջին հանգամանքի շնորհիվ քրիստոնյա արաբների թիվն ու ազդեցությունը երկրում աստիճանաբար մեծացավ: Եթե քրիստոնյաները օգտվում էին արևմտյան այդ առաքելությունների կողմից հովանավորվող կրթական հաստատություններից, ապա արաբ մահմեդականներն ու դրուզները զրկված էին ժամանակակից արաբական դպրոցներ հաճախելու իրավունքից: Դա էր թերևս պատճառը, որ քրիստոնյա արաբները, ինչպես և հայերը, առաջինը ծավալելով իրենց լուսավորական ու քարոզչական գործունեությունը Լիբանանում և Սիրիայում, զարկ տվեցին բնակչության լայն զանգվածների ազգային ինքնագիտակցության աճին ու դարձան արաբական «Նահդայի» դրոշակակիրները:

Հարկ է նկատել նաև, որ մի շարք արաբագետներ և այլ հեղինակներ նվազեցնում են քրիստոնեական հաստատությունների ու քրիստոնյա արաբների դերակատարությունը Արևմուտքի առաջադեմ գաղափարները Մերձավոր Արևելք ներմուծելու հարցում: Մասնավորապես՝ Է.Դաունը, Ա.Նուսուլին, Մ.Քուրդը և այլք ընդգծում են, որ այդ շրջանում Եգիպտոսի պետական կրթական հաստատությունները ոչ պակաս կարևորություն ունեցան, իսկ օսմանյան պետական դպրոցներում ուսանած սիրիացի մահմեդական ազգայնական գործիչները մեծամասնություն էին կազմում: Նրանք նշում են նաև ազգային ինքնագիտակցության ձևավորման գործում արևմտյան հաստատությունների բացասական դերը:[7]

Անհերքելի է այն փաստը, որ Եգիպտոսը նշված ժամանակահատվածում հանդիսանում էր արաբական աշխարհի քաղաքական և մտավոր կենտրոնը: Եգիպտոսի փաստացի կիսանկախ կարգավիճակը Օսմանյան կայսրությունում, այնտեղ տիրող առավել ազատական մթնոլորտն ու համեմատաբար բարգավաճ տնտեսական իրավիճակը առաջադեմ սիրիացիներին մղում էին արտագաղթելու ոչ միայն Եվրոպա, այլև Եգիպտոս և այնտեղ ծավալելու իրենց քաղաքական գործունեությունն ու ազգայնական քարոզչությունը: Աբդուլ Համիդի կողմից հաստատված դաժան վարչակարգի պայմաններում նման գործունեության ծավալումը անհնար էր իրականացնել հայրենիքում՝

[4]Արաբները կազմում են երկրի բնակչության 90 տոկոսը /այդ թվում՝ 74 տոկոսը սուննի, 12 % ալավի և 3 % դրուզ և այլք/, քրդերը բնակչության 9 տոկոսը և մնացյալը քրիստոնյաները /հույն, հայ, մարոնի/ և այլք: http://www.state.gov/r/pa/ei/bgn/3580.htm

[5] The Origins of Arab Nationalism. Edited by Rashid Khalidi, Columbia University Press, 1991; Dawn, C.Ernest. From Ottomanism to Arabism: Essays on the Origins of Arab Nationalism. Urban, Chicago and London:University of Illinois Press, 1973; Antonius, George. The Arab Awakening. London. 1938; Hourani, Albert. Arabic Thought in the Liberal Age 1798-1939. 11th reprint, Cambridge University Press, 2002; Nuseibieh, Z.Nazem. The Ideas of Arab Nationalism. Ithaca, N.Y., 1956; Haim, G.Sylvia. Arab Nationalism. Los Angeles, 1962; Sharabi, Hisham. Arab Intellectuals and the West: The Formative Years, 1875-1914. Baltimore, 1970: Ajami, Fouad. The Arab Predicament. Cambridge, 1981; Zeine, N. Zeine. The Struggle for Arab Independence. Beirut, 1960; Левин З.И. Развитие основных течений общественно-политической мысли в Сирии и Египте. М., 1972.

[6] Այդպիսիք էին «Սիրիական ընկերությունը» (Syrian Society), «Արևելյան ընկերությունը» (Oriental Society) և «Սիրիական Գիտական ընկերությունը» (Syrian Scientific Society):

[7]Dawn, C.Ernest. From Ottomanism to Arabism: Essays on the Origins of Arab Nationalism, pp.159-63,177; Hourani, Albert. The Emergence of the Modern Middle East, p.204; النصولى أنيس زكريا. أسباب النهضة العربية فى القرن التاسع عشر. بيروت، 1926/1345; Անիս Զաքարիա ալ-Նուսուլի. Արաբական Նահդայի (զարթոնքի) պատճառները 19-րդ դարում, Բեյրութ, 1926, էջ. 21-52; كرد على محمد. مجلات المجمع العلمى العربى بدمشق. دمشق، 1926، ص18-66. ; Մուհամմեդ Քուրդ Ալի. Դամասկոսի Արաբական Գիտական Ակադեմիայի ժողովածու, Դամասկոս, 1926, էջ 18-66:





5088
ԳՐԱԴԱՐԱՆ

Սիրիայում: Այսպես, Կահիրեում հիմնադրված «Ալ-Մուկաթթամ»-ը (1889) հանդիսացավ առաջին անկախ օրաթերթը, որը պաշտպանում էր սիրիական ազգայնական գաղափարները: Ստեղծվել էր մի այնպիսի իրավիճակ, երբ սիրիական ազգային շարժման հիմնական ներկայացուցիչները գործում էին արտասահմանում՝ Եվրոպայում (հիմնականում Փարիզում) կամ Եգիպտոսում: Քրիստոնյա սիրիացիները միություններ և պարբերականներ էին հիմնում Եվրոպայում, իսկ մահմեդական սիրիացիները՝ Եգիպտոսում:

Այսուհանդերձ, պետք է հստակ նշել, որ Բեյրութում, Դամասկոսում և Հալեպում բացված եվրոպական կրթական հաստատությունները «արաբական զարթոնքի» խթանման համար ունեցան բացառիկ նշանակություն:

«Նահդայական» շարժման հիմնական նպատակը կայանում էր արաբների հոգևոր-մշակութային արժեքների՝ լեզվի, գրականության, գիտության, պատմության հերոսական էջերին, ինչպես նաև արաբական հասարակությանը եվրոպական մշակույթի և առաջադեմ հասարակական-քաղաքական մտքին հաղորդակից դարձնելու ու արաբական իրականության մեջ իշխող հետամնացության և խավարամոլության դեմ պայքարելու մեջ: Նահդայական շարժման նշանակալի դեմքերն էին Նասիֆ Յազիջին ու Բուտրուս ալ-Բուսթանին, Ամին Շմեյիլը, Միքայել Մշակկան, Խալիլ ալ-Խուրին և ուրիշներ[8] Շարժման կարևոր կենտրոններում՝ Սիրիայում, Լիբանանում և Եգիպտոսում բացվեցին ազգային դպրոցներ, հրատարակվեցին թերթեր, հիմնվեցին գրադարաններ և այլ կրթա- մշակութային օջախներ: Այս շարժման մեջ անհերքելի է քրիստոնյա արաբների ու հայերի շոշափելի ներդրումը:[9]

«Նահդայի» գաղափարական հենքի վրա հետագայում ծավալվեց արաբական ազգային-ազատագրական հզոր շարժումը, որը տարբեր գաղափարական, ծրագրային, մարտավարական ու ռազմավարական դրսևորումներ ունեցավ Սիրիայի քաղաքական կյանքում, ուր, անտարակույս, գերիշխող դերակատարություն ունեցան սիրիացի մահմեդական քաղաքական գործիչները:

Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ 1839թ.՝ թանզիմաթի առաջին փուլով, սկիզբ դրվեց եվրոպական մեծ տերությունների, մասնավորապես Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի առավել ակտիվ միջամտությանը Օսմանյան կայսրության ներքին գործերին՝ շահարկելով երկրում տարբեր կրոնական փոքրամասնությունների անմխիթար վիճակը: Սիրիայի սուննի մահմեդականները, որոնք կազմում էին երկրի բնակչության

---

[8] Jamal Mohammed Ahmed. Intelectual Origins of Egyptian Nationalism, pp.81-88.

[9] هوفهانيسيان نيكولاى. العلاقة التاريخية الأرمنية العربية. قاهر 2008; Հովհաննիսյան Ն. Հայ-Արաբական պատմական առնչությունները, էջ 28:



մեծամասնությունը, խանդով էին վերաբերվում կրոնական այն փոքրամասնություններին, որոնք վայելում էին եվրոպական պետությունների հովանավորությունը: Ինչպես ասենք, Անգլիան պաշտպանում էր դրուզներին և հրեաներին, Ֆրանսիան՝ մարոնիներին, իսկ Ռուսաստանը՝ ուղղափառ համայնքի ներկայացուցիչներին: Այս ամենը ստեղծում էր բաժանարար գծեր Սիրիայում բնակվող տարբեր ազգային և կրոնական փաքրամասնությունների միջև: «Բիլադ աշ-Շամը» կազմված էր բազմաթիվ «փակ համայնքներից», որոնք կառավարվում էին իրենց սեփական կրոնական, ազգային, լեզվական, ցեղային չգրված օրենքներով: Ուստի, Սիրիայում տվյալ ժամանակահատվածում բացակայում էր «սիրիական» ազգային միասնական միավորը: Սիրիական վերնախավում առկա մրցակցությունը, համայնքների հետայնդած նպատակների և շահերի անհամատեղելիությունը, խոչընդոտում էին երկրում հզոր ազգային շարժման ձևավորմանը:

Հարկ ենք համարում առանձնացնել հետևյալ երկու հիմնական զարգացումները, որոնք, մեր կարծիքով, խթանեցին Սիրիայում ազգայնականության առաջացումը:

Առաջինը, *Արևմուտքի ազդեցության աստիճանաբար աճն ու արևմտյան մշակույթի և քաղաքակրթության ակտիվ ներգործությունն էր* :

Շատ պատմաբաններ արաբական ազգայնականության առաջացումը կապում են միայն տարածաշրջան Արևմուտքի ներթափանցման, արևմտյան քաղաքակրթության տարածման հետ: Մենք արդեն նշել ենք Սիրիայում ազգայնականության կայացման գործում արևմտյան առաքելությունների, կրթական հաստատությունների դերակատարության մասին:

Անտարակույս, Օսմանյան կայսրությունում ազգային գաղափարախոսության, ազգի և հայրենիքի գաղափարները սկսեցին ի հայտ գալ եվրոպական երկրների ակտիվ ներթափանցման արդյունքում: Արևմուտքի և Արևելքի փոխհարաբերությունները բնավ էլ վերջինիս օգտին չէին խոսում: Արևմուտքը իր առաջադեմ գիտությամբ և տեխնոլոգիական նորամուծություններով մի կողմից հարգանք էր ներշնչում արևելյան ժողովուրդներին, իսկ մյուս կողմից էլ նրանց մեջ արթնացնում անարդարության զգացում և անգամ վիրավորանք: Դեռևս մի քանի հարյուրամյակ առաջ խավարի մեջ գտնվող Եվրոպա առաջադեմ գիտություն և մշակութային արժեքներ արտահանող Արևելքը, 19-րդ դարի կեսին ստիպված էր խոնարհվել այդ նույն Արևմուտքի ուժի, նրա տեխնոլոգիական և հասարակական զարգացման մակարդակի առջև: Ռազմական անհաջողությունները և կայսրության աստիճանական փլուզումը միայն խորացրեցին օսմանյան կայսրության քաղաքական վերնախավ|. մեջ այդ զգացումը:

Ինչ վերաբերում է արար մտավորականներին ու քաղաքական գործիչներին, ապա նրանք սկսեցին փնտրել արևմտյան քաղաքակրթության առաջընթացի ու զարգացման գաղտնիքները: Տարբեր բացատրություններ եղան՝ սկսած հասարակության մեջ իսլամի դերի և արժեքների անկումից, մինչև հայրենիքի, հայրենասիրական ու ազգայնական գաղափարների պակասը: Նշվում էր հասարակության մեջ մաքուր իսլամի վերականգնման անհրաժեշտությունը, որպես կառավարությունները բարեփոխելու, կաշառակերությունը վերացնելու, ազատությունները հաստատելու միջոց: Արար մտավորականները փորձեցին իսլամական արդիականացման (մոդեռնիզմ) գաղափարները համարեցնել արաբականության քարոզչության հետ (Ջամալ ալ-Դին ալ-Աֆղանի, Մուհամեդ Աբդո, Ռաշիդ Ռիդա, Աբդել Ռահման ալ-Քավաքիբի): Որոշ արևելագետներ հակված են իսլամական արդիականացումը դիտարկել որպես «արաբականության հիմք և սկզբնաղբյուր»:[10]

Սակայն այս հարցի վերաբերյալ գոյություն ունեն նաև այլ կարծիքներ, ինչպես օրինակ, Հիշամ Շարաբին և Բասսամ Թիբին, որոնք միանգամայն հակառակն են հայտնում՝ ընդգծելով արաբական ազգայնականության ու նրանց գաղափարախոսների աշխարհիկ արմատները՝ մատնանշելով քրիստոնյաներ Նաջիբ Ազուրիի, Ամին ալ-Ռիհանիի և ուրիշների գործունեությունը:[11]

Սիրիացի մտավորականներն ու հասարակական գործիչները, թեև իրենց արար էին անվանում և հպարտանում էին արաբական մշակութային ու պատմական ժառանգությամբ, դեռևս չէին հասունացել քաղաքականապես՝ մինչև ազգային պետության ստեղծման, անկախության ձեռքբերման անհրաժեշտության ըմբռնումը: Այսուհանդերձ, հարկ է հիշեցնել, որ դեռևս 1868թ. Իբրահիմ ալ-Յազիջին կոչ էր անում արարներին «վերականգնել իրենց անցյալի երբեմնի փառքը» և թոթափել թուրքական լուծը: 1870թ. անգամ պաստառներ հայտնվեցին Բեյրութի փողոցներում, որոնք կոչ էին անում ապստամբության և պահանջում էին Սիրիայի անկախությունը Լիբանանի հետ միասին: Սակայն վերոհիշյալը միայն եզակի անջատ դեպքեր էին, որոնք չընկալվեցին արաբական լայն զանգվածների կողմից և բնականաբար, քաղաքական իմաստով, չունեցան շարունակություն: Մինչև 1908թ. արաբական ազգայնական շարժումը հիմնականում անկազմակերպ բնույթ էր կրում, բացառություն էր կազմում Փարիզում 1904թ. Նաջիբ Ազուրիի կողմից ստեղծված «Արաբական հայրենիքի լիգան» (Ligue de la Patrie Arabe):

[10] Cf. The Origins of Arab Nationalism. in Rashid Khalidi (ed.), The Origins of Arab Nationalism. p.10.

[11] Sharabi, Hisham. Arab Intellectuals and the West: The Formative Years, 1875-1914, pp. 98-101; Tibi, Bassam. Arab Nationalism: A Critical Inquiry, pp. 61-79.



Իսկ ինչ վերաբերում է «վաթան»-ի (հայրենիք) և «վաթանիյա»-ի (հայրենասիրություն) գաղափարներին, ապա այստեղ գերիշխում էին օսմանյան հայրենասիրությունն ու նվիրվածությունը Օսմանյան հայրենիքին: Այսպես, Կ.Պոլսում և Կաhիրեում գրական հենքի վրա հիմնվեցին «Արաբական վերածնունդ» (Ալ-Նահդա ալ-Արաբիյա), /1908/, «Գրական ակումբ» (Ալ-Մունթադա ալ-Ադաբի) /1909/ կազմակերպությունները: Անգամ ՝ ի հակազդեցություն երիտթուրքերի կողմից իրականացվող թուրքացման ծրագրի, ավելի ուշ հիմնված արաբական՝ «Օսմանյան ապակենտրոնացման կուսակցությունը» (Հիզբ Ալ-Լամարքազիյա Ալ-Ուսմանիյա) /1912/, «Արար Օսմանյան Եղբայրություն» (Ալ-Իխաա ալ-Արաբի ալ-Ուսմանի) /1908/ և այլ կազմակերպություններ հիմնականում հանդես էին գալիս բարեփոխումների, Օսմանյան կայսրության կազմում արաբների համար ինքնավարություն ձեռք բերելու օգտին:

*Երկրորդ կարևոր գործոնը, որը շոշափելի ազդեցություն ունեցավ սիրիական ազգայնականության զարգացման վրա՝ դա երիտթուրքերի կողմից իրականացվող «թուրքացման» քաղաքականությունն էր:* Վերջին հանգամանքը արաբների համար ակնհայտ դարձրեց Օսմանյան կայսրությունում «բարեփոխումների» կամ «հավասարության» գաղափարների ողջ սնանկությունն ու իրագործման անհնարինությունը: Սիրիացի որոշ քաղաքական գործիչներ սկսեցին բարձրաձայն խոսել Սիրիայի անկախության և արաբական պետության ստեղծման անհրաժեշտության մասին:[12]

Այսուհանդերձ, սիրիացիների մեծամասնությունը ողջունեց 1908թ. երիտթուրքական հեղափոխությունը՝ տարվելով երիտթուրքերի կողմից առաջ քաշված առաջադիմական կարգախոսներով:

Երիտթուրքերը խորամանկ և նենգ քաղաքականություն էին որդեգրել կայսրությունում ապրող այլազգիների նկատմամբ: Բացառություն չէին կազմում նաև արաբները: Սկզբում նրանք փորձեցին սիրաշահել արաբներին, քանի դեռ հույսեր կային իսլամիզմի կամ օսմանիզմի քաղաքականության իրականացման հնարավորության վերաբերյալ: Այնուհետև, որդեգրելով թուրքիզմը՝ երկրի արհեստական թուրքացման ծրագիրը, որպես իրենց ներքին քաղաքականության հիմնարար ուղղություն, երիտթուրքերն արդեն իսկ բացահայտ կերպով փորձեցին արաբներին ընդգրկել թուրքական բազմաթիվ կազմակերպությունների և միությունների մեջ՝ "Թյուրք Ուջախի" (Թուրքական ընտանիք), «Թյուրք Յորդի» (Թուրքական Հայրենիք) և այլն, իսկ թուրքական մամուլը սկսեց խոսել արաբների ազգային ինքնագիտակցության առկայության վտանգի մասին:[13] Փակվում էին

[12] Ամենակարևորներն կազմակերպություններն էին՝ «Ալ-Ֆաթաթ»-ն ու «Ալ-Ահդը», որոնք ստեղծվեցին Փարիզում համապատասխանաբար 1911 և 1914թթ.:

[13] Haddad, George. Fifty Years of Modern Syria and Lebanon, pp.41-43.

արաբական ակումբներն ու կազմակերպությունները, արաբները պաշտոնանկ էին արվում, արաբ վալիներն ու մութասարըֆները փոխարինվում էին թուրքերով, արգելվում էր արաբերեն գրագրությունը:

Հեղափոխությունից արդեն որոշ ժամանակ անց, երբ ակնհայտ դարձավ երիտթուրքերի թուրքայնացման քաղաքականության ողջ էությունը, սիրիական վերնախավի հիմնական մասը, որը թեև բաժանված էր իր սեփական քաղաքական "գաղափարներով և նախասիրություններով", սկսեց հակվել սիրիականության գաղափարներին՝ Սիրիայի անկախության և ազգային պետության ստեղծման անհրաժեշտությանը:

Սակայն պետք է նկատել, որ ազգային գործիչներից ոչ բոլորն էին կիսում վերոհիշյալ գաղափարները: Այս կապակցությամբ Ա.Հուրանին առանձնացնում է 1911թ. Փարիզում ստեղծված «Ալ-Ֆաթաթ» կազմակերպությունը, որը թեև իր վերջնական նպատակն էր համարում անկախության ձեռքբերումը, այնուամենայնիվ՝ 1913թ. Փարիզում կայացած առաջին ազգայնական համաժողովում պահանջեց միայն «ամբողջական իրավունքներ արաբների համար և ապակենտրոնացում կայսրության կազմի մեջ»:[14]

Ինչ վերաբերում է սիրիական այն գործիչներին, որոնք կողմ էին Սիրիայի քաղաքական կարգավիճակի փոփոխմանն ու երկրի անկախության նվաճմանը, ապա նրանց միջև նույնպես գոյություն ունեին տարակարծություններ՝ հիմնականում անկախության հասնելու միջոցների վերաբերյալ: Նրանց մի մասը կարծում էր, որ այդ հարցում պետք է ապավինել մեծ տերությունների օժանդակությանը, մյուսները՝ սեփական ուժերին: Տարբեր էին նաև նրանց պատկերացումները ապագա Սիրիայի ինքնիշխանության մակարդակի մասին՝ անկախ պետություն կամ ինքնակառավարվող թագավորություն կայսրության հետ դաշնության մեջ:

Պետք է նկատի ունենալ նաև այն օբյեկտիվ խոչընդոտները որոնք առկա էին Սիրիայում ազգայնականության զարգացման ճանապարհին: Այնտեղ բնակվող ազգերը տվյալ ժամանակահատվածում դեռևս չէին մտածում «երկրային» կատեգորիայով, նրանք իրենց սիրիացիներ չէին համարում, այլ՝ սուննիներ, ալավիներ, քրդեր, դրուզներ, հույներ, իսմաիլիներ, հրեաներ և այլն: Միմյանց նկատմամբ վերաբերմունքը բավական չեզոք և հանդուրժողական էր: Բնակչության հիմնական մասը խոսում էր արաբերեն, սակայն այդ հանգամանքը ազգային միասնության համար չնչին նշանակություն ուներ:

Երկրի առաջնորդները իրենց քաղաքական առաջնայնություններում ղեկավարվում էին ոչ թե "սիրիական" ազգային, այլ համայնքային շահերով և կրոնական պատկանելությամբ: Այսպես,

[14] Hourani, Albert. Syria and Lebanon. A Political Essay, p.40.



երև Սիրիայի բնակչության մեծամասնությունը կազմող սուննի մահմեդականները չէին «զգում, որ Օսմանյան թուրքական իշխանությունը իրենց համար օտար կառավարություն է, ապա ալավիները, դրուզները, իսմաիլիները, այլ զգացումներ ունեին»:[15]

Ֆիլիպ Խուրին իր արժեքավոր աշխատության մեջ նկատում է, որ երև Սիրիայի մահմեդական բնակչությունը հանդես էր գալիս Օսմանյան կազմի մեջ մնալու օգտին և անգամ Սեքքայի շերիֆ Հուսեյնի ապստամբությունը «դավաճանություն էր համարում», ապա երկրի քրիստոնյա հպատակները հիմնականում պաշտպանում էին Սիրիայի անկախության գաղափարը:[16]

Մեծ տերությունների «բաժանիր, որ տիրես» քաղաքականության իրականացումը նույնպես խոչընդոտում էր Սիրիայում միասնական ազգային գաղափարախոսության ձևավորմանը: Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը իրենց աշխարհաքաղաքական շահերից դրդված՝ «պաշտպանելով» Օսմանյան կայսրությունում բնակվող տարբեր կրոնական և ազգային փոքրամասնությունների շահերը, գիտակցաբար թե, անգիտակցաբար, այդ ժողովուրդների և կրոնական համայնքների միջև անվստահություն ու անգամ թշնամանք էին սերմանում: Այս հանգամանքը ոչ միայն վերջիններիս մեջ «փոքրամասնության բարդույթի»[17] առաջացման պատճառ դարձավ, այլև, երբ Սիրիան անկախություն ձեռք բերեց 1946թ., ապա այն փաստորեն ի հայտ էր գալիս որպես «պետություն, առանց ազգային պետություն լինելու և քաղաքական միավոր՝ առանց քաղաքական միասնական համայնք հանդիսանալու»:[18]

Թեև սիրիացիները ականատես եղան իրենց նկատմամբ երիտթուրքերի ստոր քաղաքականությանը, սարսափի և կոտորածի տարիներ ապրեցին Ջեմալ փաշայի կառավարման և այնուհետև Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, կարող ենք հաստատել, որ *ընդհուպ մինչև 1918 թվականը՝ կայսրության փլուզումը, սիրիական ազգայնական վերնախավը, այնուամենայնիվ, հավատարիմ մնաց օսմանիզմի գաղափարախոսությանը կամ ծանր պայմանների թելադրմամբ ստիպված եղավ հաշտվելու օբյեկտիվ իրողությունների հետ, առաջնային համարելով այլ խնդիրներ:*

[15] Nikolaos van Dam. The Struggle for Power in Syria. Politics and Society under Asad and the Ba`th party, p.2.
[16] Khoury, Philip. Urban Notables and Arab Nationalism. p.78.
[17] «Փոքրամասնության բարդույթին» առաջին անգամ անդրադառնում է ֆրանսիացի արևելագետ Ժար Վելերսը : Jacques Weulersse. Paysans de Syrie et du Proche Orient, p.77.
[18] Cf. Moshe Maoz. Society and State in Modern Syria., in Menahem Milson (ed.), Society and Political Structure in the Arab World, pp.29-91; Moshe Maoz. Attempts at Creating a Political Community in Modern Syria. Middle East Journal. Vol.26, No2, Spring 1972, pp.123,125-126.

Այս բոլորը հաշվի առնելով, 1860-1918թթ. միջև ընկած ժամանակահատվածը կարող ենք համարել սիրիական քաղաքական կյանքում *օսմանականության* գաղափարախոսության գերիշխանության փուլ: Միայն Առաջին համաշխարհային պատերազմից հետո կարելի է խոսել "Արաբական ազգի" մասին, երբ արաբական ազգայնական շարժումը ստացավ կազմակերպված քաղաքական բնույթ:

## *ԱՐԱԲԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ*

Օսմանականությունից անցումը *արաբականության* իրականացավ մի քանի արտաքին կարևոր գործոնների՝ Արևմուտքի նկատմամբ անվստահության խորացման (հատկապես Սայքս-Պիկո համաձայնագրի ստորագրումից և Բալֆուրի հռչակագրից հետո), Սիրիայում Ֆրանսիական մանդատային կառավարման հաստատման և ավելի ուշ Պաղեստինում հրեաներին դիմակայելու հարցը համընդհանուր արաբական խնդրի վերածելու շնորհիվ:

Մանդատային համակարգը քաղաքականապես հասունացրեց և կոփեց Սիրիայի ազգային ղեկավարներին՝ քաղաքական անկախության հարցը դարձնելով օրակարգային հարցերից մեկը: Այստեղ, կարելի է համաձայնվել ամերիկացի պատմաբան Մայքլ Բառնեթի հետ, ըստ որի, արաբ առաջնորդները սկսեցին «սկզբնավորել, հարմարեցնել ու կուտակել Արաբիզմի խորհրդանիշները իրենց իշխանությունը օրինականացնելու, այդ խորհրդանիշները հիմնականում օգտագործելով անկախության և պետականության համար մղած պայքարում, և, որ արաբիզմի անվան տակ անկախության պայքարը օգնեց խորացնելու և օրինականացնելու արաբիզմը»:[19]

Արաբական միասնության ու ազգայնականության արագ զարգացման համար զգալի խթան հանդիսացան *բրիտանական քաղաքականությունն ու սիոնիստական ծրագրերի իրականացումը Պաղեստինում:* Պաղեստինում հրեաների զանգվածային վերաբնակեցման և սեփական անկախ պետության ստեղծմանն ուղղված ծրագրերի գործադրման արդյունքում արաբական ազգային շարժումը նոր լիցք և զարգացում ստացավ հատկապես 1936 թվականի ապստամբությունից հետո:

Փաստորեն, արաբականության զարգացման համար մեր նշված երկու կարևոր գործոններին՝ *Արևմուտքի նկատմամբ ու ակտիվ միջամտությանը, երիտթուրքերի «թուրքացման» քաղաքականությանը ավելացավ երրորդ, ոչ պակաս կարևոր գործոնը՝ հրեական ներգաղթն ու սիոնիստական ծրագրերի իրականացումը Պաղեստինում*:

19 Barnett, M.Michael, Dialogues in Arab Politics: Negotiations in Regional Order, p.62.



Երբ արաբ լուսավորիչները անցյալի փառքի հենքի վրա արթնացրին ընդհանուր պատմության, լեզվի և մշակույթի վրա հիմնված արաբների ազգային ինքնագիտակցությունը, որը հարցականի տակ էր դրվում երիտթուրքերի կողմից, ապա սիոնիստական ծրագրերի իրականացումը վտանգում էր արաբների անկախ պետություն ունենալու հեռանկարը: Կարելի է համաձայնվել հետևյալ ձևակերպման հետ. եթե թուրքացման քաղաքականությունը վտանգեց արաբների «մշակութային ստատուս-քվոն», ապա սիոնիստական ծրագրերի իրականացումը՝ նրանց «քաղաքական ստատուս-քվոն»:[20]

Պաղեստինում ծավալված պայքարը սիոնիզմի դեմ նույնացվեց արաբական աշխարհում նրանց ընդհանուր հակաիմպերիալիստական պայքարի հետ, արագորեն աճող քաղաքական ակումբներն ու կազմակերպությունները, ինչպես նաև օրըստօրե զարգացող արաբական մամուլը նպաստեցին Պաղեստինի հարցի՝ համաարաբական հարցի վերածմանը:

Ձևավորվելով գրեթե միաժամանակ, սակայն ունենալով զարգացման տարբեր և իրարից անկախ ընթացք՝ սիոնիզմն ու արաբականությունը (արաբիզմը) իրար հետ բախվեցին Պաղեստինում՝ սկիզբ դնելով պաղեստինցիների և հրեաների միջև անողոք պայքարի, որն այնուհետև վերածվեց նորագույն պատմության մեջ ամենատևական՝ արաբ-իսրայելական հակամարտության: Պայքարը դուրս եկավ Պաղեստինի տարածքից և ընդգրկեց ողջ տարածաշրջանի երկրները՝ դարձնելով այն ոչ միայն համաարաբական, այլ՝ միջազգային օրակարգային խնդիր, որը մինչև օրս սպասում է իր կարգավորմանը:

Առաջին աշխարհամարտը երկու գաղափարախոսությունների համար էլ դարձավ շրջադարձային: Արաբական աշխարհն ու հրեաները փորձեցին օգտագործել պատերազմը իրենց ազգային նպատակների իրականացման համար:

*Արաբները, հարյուրամյակներ ի վեր բնակվելով հետամնաց Օսմանյան կայսրությունում, Առաջին համաշխարհային պատերազմի վերջում քաղաքական փորձառությունից զուրկ լինելով, պատրաստ չեղան արդյունավետորեն դիմակայելու Պաղեստինում սիոնիստական ծրագրերի իրականացմանը: Միասնական քաղաքական ղեկավարության բացակայության պայմաններում արաբներըապավինեցին անգլիացիների անորոշ խոստումներին (Հուսեյն-Մակ Մահոն նամակագրություն) և արդյունքում մնացին առանց անկախ պետության: Իսկ հրեաները նպատակայաց օգտագործելով իրենց լոբբին Լոնդոնում*[21]

[20] http://www.geocities.com/martinkramerorg/ArabNationalism.htm.

[21] Անգնահատելի է սիոնիստական շարժման ղեկավար Խաիմ Վայցմանի ջանքերն այս ուղղությամբ: Բրիտանացի պատմաբան Չարլզ Վեբստերի համաձայն, բրիտանական իշխող շրջանակներին նրա համոզելու կարողությունը հանդիսանում է «դիվանագիտության պատմության մեջ առանց ուժի համոզման միակ հաղթանակը»:

*և ԱԳ նախարար Արթուր Ջեյմս Բալֆուրից կորզելով առաջին և ամենակարևոր փաստաթուղթը[22] իրենց ծրագրի իրականացման համար՝ տարիներ անց ի զորու եղան ստեղծելու իրենց անկախ պետությունը՝ Իսրայելը:*

Իսկ ի՞նչն էր պատճառը, որ Բրիտանական կայսրությունը հենց սկզբից պաշտպանեց Պաղեստինում «հրեական ազգային տուն» ստեղծելու սիոնիստների առաջ քաշած գաղափարը:

Առաջին հերթին, "հրեական հողակտորը" Պաղեստինում Լոնդոնի համար լուրջ ռազմավարական նշանակություն կարող էր ունենալ՝ Եգիպտոսից դեպի Հնդկաստան անխափան հաղորդակցության ապահովման համար: Բալֆուրի վերոհիշյալ նամակ-հռչակագիրը լույս տեսավ այն ժամանակ, երբ ակնհայտ էր, որ Օսմանյան կայսրությունը, Գերմանիան, Ավստրո-Հունգարիան և Բուլղարիան պարտություն են կրում, երբ արդեն տեսանելի էր դառնում Ֆրանսիայի հետ օսմանյան տարածքների բաժանման հարցը և այս հենքի վրա Բալֆուրի հռչակագիրը կարծես կանխապես վճռում էր Պաղեստինի կառավարման հետագա ճակատագիրը:

Գոյություն ունեն նաև երկու առավել նվազ լուսաբանված դրդապատճառներ՝ բրիտանական կառավարության կողմից նման բովանդակությամբ նամակի ի հայտ գալու վերաբերյալ: Առաջինը, այդ քայլով բրիտանական կառավարությունը թերևս փորձում էր սիրաշահել ոչ միայն Բրիտանիայի, այլև աշխարհասփյուռ հրեական համայնքները: Օրինակ, Լոնդոնը հույս ուներ, որ Ռուսաստանի հրեաները ջանքեր կգործադրեն Ռուսաստանը պատերազմի մեջ պահելու ուղղությամբ: Այս կարծիքի կողմնակիցները անգամ նշում են, որ եթե Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղափոխությունը տեղի ունենար մի քանի օր շուտ, ապա դժվար թե այդ փաստաթուղթը երբևիցե լույս աշխարհ գար:[23] Պատերազմի մեջ գտնվող Բրիտանիան ուներ նաև իր երկրի ներսում հրեական համայնքի նյութական օժանդակության կարիքը: Բրիտանիայի վարչապետ Լլոյդ Ջորջը հռչակագրի հրապարակումից 20 տարի անց գրել է. «Սիոնիստները պահեցին իրենց խոստումը՝ աշխատելու հանուն Դաշնակիցների հաղթանակի: Միակ հարցը, որ ներկայումս մնում է, այն է, թե արդյո՞ք մենք պատրաստ ենք հարգելու մեր խոստումը»:[24]

(Bregman Ahron and El-Tahri Jihan. The Fifty Years War. Israel and the Arabs., p.24).

[22] 1917թ. նոյեմբերի 2-ին Սիոնիստական դաշնության նախագահ Վ. Ռոթշիլդին ուղղված նամակում, Բրիտանիայի ԱԳ նախարարը պաշտոնապես իր կառավարության բարյացակամ վերաբերմունքն է արտահայտել Պաղեստինում հրեաների համար «ազգային տուն» (national home) հիմնելու գաղափարին: Տեքստը տես՝ Հավելված 1-ում:

[23] Fromkin, David. A Peace to End all Peace. The Fall of the Ottoman Empire and the Creation of the Modern Middle East, pp.276-284.

[24] George, Lloyd. Memoirs of the Peace Conference, Vol.2, p.737.



Երկրորդ, 1916թ. դեկտեմբերից Բրիտանիայի վարչապետի պաշտոնը ստանձնած Լլոյդ Ջորջը խորապես հավատացյալ մարդ էր և համոզված էր, որ հրեաները բոլոր իրավունքներն ունեն վերաբնակվելու իրենց պատմական հայրենիքում՝ Պաղեստինում: Դեռ ավելին. հրեաների վերադարձը Պաղեստին, ըստ նրա, Աստծո կամքի իրականացումն էր: Կարծում ենք, վերոհիշյալը նույնպես իր դրական ազդեցությունն ունեցավ սիոնիստների ծրագրերի իրականացման համար: Սնձապես Լլոյդ Ջորջի և նրան հաջորդող այլ վարչապետների (Ն.Չեմբերլեն և Ու.Չերչիլ) նման "բարյացակամ" քաղաքականություն շնորհիվ հնարավոր դարձավ շուրջ երկու տասնամյակի ընթացքում իրագործել հրեաների զանգվածային ներգաղթը Պաղեստին և արդյունքում՝ 1948թ. մայիսի 15-ին ստեղծել Իսրայել պետությունը: Ավելի ուշ երեսնականների վերջին, երբ անգլիացիների համար ակնհայտ դարձան ներգաղթի վտանգն ու տարածաշրջանի ապակայունացման հեռանկարը, փորձեր կատարվեցին զսպել, սահմանափակել ներգաղթը: Սակայն արդեն ուշ էր: Երկրորդ համաշխարհային պատերազմն ու հրեական Հոլոքոստը խթանեցին զանգվածային ներգաղթը, իսկ հրեաների բացահայտ պայքարը Պաղեստինում անգլիացիների ներկայության դեմ ստիպեց վերջիններին դուրս գալ այնտեղից և Պաղեստինի հարցը հանձնել նորաստեղծ ՄԱԿ-ին: Դրան մենք մանրամասն կանդրադառնանք հաջորդ գլխում:[25]

Առաջին Համաշխարհային պատերազմի ժամանակ Անգլիան, որ արաբների օգնության կարիքն էր զգում, վարպետորեն խաղաց արաբների հակաթուրքական և ազատագրական զգացմունքների հետ և կեղծ խոստումներով նրանց զինված պայքարի հանեց Թուրքիայի դեմ: Իրականում Անգլիան, ինչպես նաև Ֆրանսիան արաբական անկախ պետություն ստեղծելու ոչ մի մտադրություն չունեին:

Դեռ ավելին, Հեջազի կառավարիչ և Մեքքայի շերիֆ Հուսեյնի և Եգիպտոսում անգլիական գլխավոր կոմիսար Մակ-Մահոնի միջև ընթացող նամակագրությանը
զուգահեռ (1915 հուլիսից-1916 մարտ),[26] երբ Անգլիան, սահմանների փոփոխություն ենթադրելով, այնուամենայնիվ, համաձայնվեց արաբական անկախ պետության գաղափարին, 1915թ. նոյեմբերից մինչև

[25] ԽՍՀՄ ԱԳՆ գաղտնազերծված արխիվային նյութերից կարելի է հաստատել նաև, որ Իսրայել պետության ստեղծման գործում Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո իր շոշափելի ներդրումն ունեցավ նաև Խորհրդային Միությունը: Տես՝ "Советско-израильские отношения. 1941-1953"; Млечин. Л.. Особая папка. Иосиф Сталин-создатель Израиля.

[26] Woodward, L. Ernest and Butler, Rohan. Documents on British Foreign Policy, 1919-1939, First Series, vol.4. London, 1952; Correspondence between Sir Henry McMahon and the Sharif Hussein of Mecca, July 1915-March 1916. London, 1939; Report of a Committee Set Up to Consider Certain Correspondence between Sir Henry McMahon and the Sharif of Mecca in 1915 and in 1916. London, 1939.

1916թ. մայիս Անգլիան և Ֆրանսիան գաղտնի բանակցություններ էին վարում արաբապատկան տարածքների բաժանման և գաղութացման վերաբերյալ:

Արդյունքում եվրոպական այդ տերությունների միջև կնքվեց «Սայքս-Պիկոյի» հայտնի համաձայնագիրը: Դրա ուժով Ֆրանսիայի տիրապետության տակ էին անցնում Ադանայի վիլայեթը, սիրիա-լիբանանյան ծովափնյա մասը, ներկայիս Սիրիայի ողջ տարածքը, ինչպես նաև Մոսուլի (Իրաք) հարուստ նավթային շրջանը, որը 1918թ. Ֆրանսիան ստիպված էր լինելու վերադարձնել բրիտանացիներին: Վերջիններիս, ըստ պայմանագրի անցնում էր Միջագետքի արևելյան մասը, իսկ արևմտյան մասն ու ներկայիս Հորդանանի տարածքը հռչակվում էր Բրիտանիայի ազդեցության գոտի: Պաղեստինը դրվում էր միջազգային վերահսկողության տակ և միայն Հայֆա և Ակրա նավահանգիստները էին անցնում Բրիտանիային: Պետք է նշել, որ համաձայնագիրը վավերացվեց նաև Ռուսաստանի կողմից, որին հատկացվեց Օսմանյան կայսրության հյուսիս-արևելյան մասը, Կ.Պոլիսը, Բոսֆորի արևմտյան ափը, Մարմարա ծովը, Դարդանելը ու Սև ծովի մերձափնյա որոշ շրջաններ: Համաձայնագիրը չանտեսեց նաև Հունաստանի և Իտալիայի շահերը, որոնք համապատասխանաբար ձեռք բերեցին Անատոլիայի արևմուտքում՝ Զմյուռնիայի փոքր հատվածը, ինչպես նաև կայսրության ողջ հարավային մասը:

Մեծ տերությունների ծրագրի համաձայն, միայն Արաբական թերակղզին պետք է ստանար անկախություն՝ Հաշիմյանների առաջնորդությամբ: Գերմանիան նույնպես իր սեփական նպատակները էր հետապնդում Մերձավոր և Միջին Արևելքում, առաջին հերթին Եգիպտոսում, ինչպես նաև Միջագետքում և Սիրիայում:

Բնականաբար, արաբական երկրների անկախության ամենամեծ թշնամին Օսմանյան կայսրությունն էր: Գերմանա-ավստրիական բլոկում հանդես եկած Թուրքիան նպատակ ուներ ոչ միայն ճնշել արաբական երկրների ազգային-ազատագրական պայքարը, այլև պահպանել Օսմանյան կայսրության ամբողջականությունն ու իր տիրույթները Սիրիայում, Պաղեստինում, Միջագետքում և Արաբիայում, գրավել Եգիպտոսն ու խորանալ Անդրկովկասում, Ղրիմում, Պովոլժիեյում, Թուրքեստանում, ինչպես նաև Հյուսիսային և Կենտրոնական Աֆրիկայում: Մի խոսքով, անկախ այն հանգամանքից, թե որ կողմը կհաղթանակեր պատերազմում, արաբական երկրներին ազատագրվելու հեռանկար չէր մնում:

Սակայն վերոհիշյալը ամենևին էլ չէր նշանակում, որ արաբները հրաժարվել էին թուրքական լծի դեմ ակտիվ պայքարից: Ռազմաճակատում թուրքական անհաջողություններին զուգընթաց՝ ուժեղանում էր արաբական ազգայնական կազմակերպությունների հակաթուրքական գործունեությունը: Արաբ զինվորները չէին ցանկանում



պատերազմել հանուն Թուրքիայի և զանգվածաբար փախչում էին թուրքական բանակից ու կազմակերպում պարտիզանական ջոկատներ:

Սիրիան, ինչպես և մյուս արաբական երկրները, որպես Օսմանյան կայսրության մաս, նույնպես ներքաշվել էր Առաջին համաշխարհային պատերազմի մեջ:

Պատերազմը քայքայեց երկրի տնտեսական վիճակը: Ռազմական նպատակների համար գյուղացիներից բռնագրավում էին անասունները և պարենամթերքը, տասնյակ հազարավոր գյուղացիներ հարկադրաբար ուղարկվում էին պաշտպանական բնույթի շինություններում աշխատելու և այլն: Մի շարք վայրերում ժողովուրդը մատնվեց քաղցի: Միայն Լիբանանում Թուրքիայի կողմից իրականացված «իրական շրջափակման հետևանքով սովից և ավերումներից պատերազմի տարիներին մահացավ 150 հազ. մարդ»[27]:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի կառավարող շրջանները, օգտվելով պատերազմի ընձեռած հնարավորություններից, փորձեցին ռազմական ուժով և զանգվածային ֆիզիկական բնաջնջման ուղիով լուծել ազգային հարցը, և առաջին հերթին՝ հայկական և արաբական հարցերը: 1915թ. իրագործելով 1.5 մլն հայերի հրեշավոր ցեղասպանությունը՝ երիտթուրքերը մեկ տարի անց փորձեցին նույնպիսի հաշվեհարդար տեսնել արաբների հետ: Թուրքական ոճրագործները, համոզվելով, որ արաբները պատրաստ են զինված ապստամբությամբ Թուրքիայից անջատվելու և անկախություն նվաճելու՝ դաժան ահաբեկումներ ձեռնարկեցին արաբական մի շարք երկրներում:

Հայերի ցեղասպանության գործում իր «նշանակալի ավանդն» ունեցած Ջեմալ փաշան պատերազմի սկզբից մի քանի ամիս հետո նշանակվեց Սիրիայում թուրքական զորքերի հրամանատար: Սիրիայում ստեղծվեց ռազմական դատարան, որը մահապատժի ենթարկեց արաբ այն գործիչներին, որոնք անդամակցում էին ազգայնական ակումբներին և կազմակերպություններին կամ էլ վերջիններիս հետ քաղաքական կապեր էին պահպանում: Հետաքրքրական է, որ առաջին զոհը կախաղան հանվեց 1916թ. ապրիլի 6-ին, իսկ մեկ ամիս անց քսանմեկ արաբ առաջնորդներ կախվեցին՝ 7-ը Դամասկոսում և 14-ը՝ Բեյրութում:

Արաբները, որոնք ոչինչ չգիտեին վերը նշված «Սայքս-Պիկոյի» համաձայնագրի գոյության մասին, 1916թ. հունիսին, հավատարիմ մնալով իրենց տված խոսքին, ապստամբության դրոշ բարձրացրին Թուրքիայի տիրապետությունից վերջնականապես ազատվելու համար: 1916թ. հունիսի 5-ին Հուսեյնի որդիներ Ալին ու Ֆեյսալը Համզայում՝ Մեդինայի մոտ, Հուսեյնի անունից հռչակեցին արաբների

[27] Haddad, George. Fifty Years of Modern Syria and Lebanon, p.47.

անկախությունը: Կարծես թե առարկայանում էր թուրքական լծից ազատվելու և անկախ պետություն ստեղծելու արաբների դարավոր երազանքը:

Սակայն Բրիտանիան դրժեց Հուսեյնին տված իր խոստումը: Հուսեյնը այդպես էլ տեղյակ չպահվեց Սայքսի և Պիկոյի միջև ձեռքբերված համաձայնության մասին, չնայած համաձայնագրի ստորագրումից մեկ տարի անց Հուսեյնին տեսակցելու նպատակով նրանք այցելել էին Ջեդդա: Եվ պարզ չէ, թե ինչպիսին կլինեին իրադարձությունների հետագա զարգացման ընթացքը, եթե Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո բոլշևիկները չհրապարակեին այդ գաղտնի համաձայնագրի տեքստը:

Ստեղծված իրավիճակից շտապեց օգտվել Ջեմալ փաշան, որը 1917թ. նոյեմբերին Հուսեյնին հղած իր նամակում կոչ էր անում թողնել դավաճան եվրոպացիներին և միանալ Թուրքիային՝ խոստանալով պատերազմից հետո լիակատար ինքնավարություն տրամադրել արաբներին: Սակայն ստանալով Մակ Մահոնի փոխանորդ Վինգեյթից հավելյալ հավաստիացումներ այն մասին, որ համաձայնագրի տեքստը սխալ է մեկնաբանվել և որ Բրիտանիան պատրաստ է արաբների օգտին փոխել նրա որոշ հոդվածները, Հուսեյնը վերստին հավատաց անգլիացիներին: Զարմանալին այն էր, որ Հուսեյնը չպահանջեց անգամ տեսնել համաձայնագրի տեքստը, որն ամբողջովին ուղղված էր Բրիտանիայի, Ֆրանսիայի և Անգլիայի շահագրգռությունների ծավալմանը՝ արաբների անկախության հաշվին:[28] Դեռ ավելին, Անգլիայի արտգործնախարար Բալֆուրը բացատեղյակ էր այն բանին, որ Ֆրանսիան երբեք չի համաձայնվի արաբների օգտին համաձայնագրի փոփոխմանը, ինչպես նաև նրան, որ իրենք Իրաքից հրաժարվելու որևէ մտադրություն չունեն: Իսկ ինչ վերաբերում է Պաղեստինին, ապա Բալֆուրը պետք է հրապարակեր իր հայտնի հռչակագիրը:

Այդ հռչակագրի հրապարակումը կտրուկ ընդվզում առաջացրեց արաբական աշխարհում: Սակայն նորից անգլիացիներից ստանալով հավաստիացումներ այն մասին, որ հրեաների համար Պաղեստինում «ազգային տան ստեղծումը պետք է համապատասխանի արաբական բնակչության քաղաքական և տնտեսական ազատությանը», Հուսեյնը հանձնարարեց իր որդիներին և արաբական այլ ղեկավարներին՝ համագործակցել Բրիտանիայի հետ և հանդարտեցնել արաբների կրքերը, ինչպես նաև աջակցել հետապնդումների ենթարկվող հրեաներին՝ ապաստան ստանալու Պաղեստինում:

Իր հերթին, Բալֆուրը շարունակում էր հանգստացնել արաբներին: Այդ նպատակով 1918թ. մարտին Վայցմանը մեկնեց Կահիրե և Երուսաղեմ, ուր Եգիպտոսի և Պաղեստինի առաջնորդներին փորձեց

[28] Nutting, Anthony. The Arabs. A Narrative History from Mohammed to the Present, p.291.



համոզել, որ հրեաների ներգաղթը Պաղեստին՝ «որևէ կերպ չի ոտնահարի արաբների իրավունքները»: Հունիսին բրիտանական արտգործնախարարությունը հայտարարեց, որ արաբների կողմից ազատագրված տարածքներին՝ Հեջազին և Անդրհորդանանին, կշնորհվի «լիակատար և ինքնիշխան անկախություն» (“complete and sovereign independence”),[29] իսկ ինչ վերաբերում է Պաղեստինի և Իրաքի տարածքներին, որոնք ազատագրվել են բրիտանացիների օգնությամբ, ապա նրանք կկառավարվեն համաձայն այդ երկրների բնակչության կամքի: Իսկ այն երկրները, որոնք դեռևս չեն ազատագրվել՝ Սիրիան և Լիբանանը, ապա նրանք պետք է պայքարեն իրենց ազատությանն ու անկախությունը ձեռք բերելու համար:

Վերջապես, 1918թ. նոյեմբերին, Թուրքիայի անձնատուր լինելուց հետո, հրապարակվեց համատեղ անգլո-ֆրանսիական հռչակագիրը, որի համաձայն այդ երկու տերությունները նախատեսում էին Պաղեստինում, Սիրիայում և Իրաքում ստեղծել այնպիսի վարչակարգեր, որոնք «իշխանությունը կստանան տեղական բնակչության ընտրության և նախաձեռնության ազատ իրականացման արդյունքում»: Փաստորեն հռչակագրով չեղյալ էր համարվում Սայքս-Պիկո գործարքը և Սիրիան, Իրաքը, Պաղեստինն ու Արաբական թերակղզին հնարավորություն էին ստանում ընտրելու իրենց կառավարիչներին: Բայց սա միայն թղթի վրա: Իսկ իրականում Բրիտանիայի և Ֆրանսիայի կառավարությունները մտադիր էին բաժանել այդ երկրները միմյանց միջև: Եվ դա հայտնի դարձավ անմիջապես Դամասկոսում Ֆեյսալի հայտնվելուց հետո: Բրիտանական քաղաքացիական և զինվորական կառավարություն ստեղծվեց Երուսաղեմում և Բաղդադում, ֆրանսիացիները վերցրեցին Լիբանանի և հյուսիս-արևմտյան Սիրիայի կառավարումը, իսկ արաբներին տրվեց Սիրիայի կենտրոնական մասը և Անդրհորդանանը՝ Հալեպից մինչև Աքաբա: Ֆեյսալը բողոքելով արաբական տարածքների նման բաժանման ծրագրի դեմ, որը միանգամայն հակասում էր արաբներին նախկինում տված խոստումներին, մեկնեց Փարիզ և Լոնդոն: Լոնդոնում արժանանալով սառը ընդունելության, Ֆեյսալը ձեռնունայն մեկնեց Փարիզ, ուր պետք է կայանար խաղաղության վեհաժողովը:

Ֆրանսիայի և Բրիտանիայի միջև մրցակցության և անվստահության մթնոլորտի առկայության պայմաններում[30], նրանք երկուսն էլ հրաժարվեցին ճանաչել Ֆեյսալին, որպես արաբների ներկայացուցչի և բանակցել նրա հետ: Միակ համաձայնությունը, որին Ֆեյսալը կարողացավ հասնել Ֆրանսիայի ղեկավար Կլեմանսոյի հետ 1919թ. նոյեմբերին՝ Աքաբայի և Հալեպի միջև ընկած տարածքում

[29] Նույն տեղում, էջ 293:

[30] Բրիտանացիները փորձում էին ֆրանսիացիներից զավթել Մոսուլի նավթային հարուստ շրջանը, իսկ ֆրանսիացիները Բալֆուրի հռչակագրից հետո իրենց խաբված էին համարում անգլիացիների կողմից:

(ներառյալ Դամասկոսը), արաբների իշխանության ճանաչումն էր, ինչպես նաև Բրիտանիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի ներկայացուցիչներից բաղկացած հանձնաժողովի ստեղծումն ու տարածաշրջան գործուղումը: Արդյունքում միայն ամերիկացիներից բաղկացած հանձնաժողով ստեղծվեց, որը հայտնի դարձավ «Քինգ-Քրեյնի հանձնաժողով» անվան տակ:

Քինգ-Քրեյնի հանձնաժողովը կատարեց իր առաքելությունը մեծագույն պատասխանատվությամբ և առաջարկեց, որպեսզի ժամանակավոր մանդատներ նախատեսվեն Սիրիայի, Պաղեստինի և Իրաքի համար: Հանձնաժողովի կարծիքով, Սիրիայի և Պաղեստինի մանդատները պետք էր հանձնել Միացյալ Նահանգներին, իսկ Իրաքի մանդատը՝ Բրիտանիային, ընդ որում, միապետի հարցը պետք է լուծվեր հանրաքվեի միջոցով: Ինչ վերաբերում է Ֆրանսիային, ապա հանձնաժողովը, հաշվի առնելով արաբների մեջ բացարձակ հակաֆրանսիական տրամադրությունների առկայությունը, խորհուրդ էր տալիս Ֆրանսիային արաբական որևէ երկրի կառավարման մանդատ չհանձնել: Պաղեստինում «հրեական օջախի» ստեղծման հարցում հանձնաժողովը կողմ էր հրեաների սահմանափակ և աստիճանական ներգաղթի իրականացմանը: Սակայն Անգլիայի և Ֆրանսիայի հավակնությունների և շարունակվող պայքարի պատճառով Քինգ-Քրեյնի հանձնաժողովի դրույթները այդպես էլ մնացին չիրագործված:

Մինչ այդ Ֆեյսալը վերադարձավ Դամասկոս, ուր, միավորելով «Ալ-Ֆաթաթ»-ը և «Ալ-Ահդ»-ը, ստեղծեց Արաբական անկախության կուսակցությունը: Վերջինս 1920թ. մարտին հրավիրեց «Սիրիական ընդհանուր համաժողով», որի ընթացքում Ֆեյսալը «Սիրիայի Միացյալ թագավորության» թագավոր հռչակվեց: Համաժողովի ընթացքում ընդունված հռչակագիրը չեղյալ հայտարարեց Բալֆուրի հռչակագիրն ու Սայքս-Պիկոյի համաձայնագիրը և մերժեց ֆրանսիական վերահսկողության որևէ ձև: Սիրիական համաժողովին հաջորդեց նմանատիպ հավաք Իրաքում, ուր երկրի առաջնորդները հռչակեցին Իրաքի անկախությունը Աբդալլահի գլխավորությամբ: Ֆրանսիան և Բրիտանիան այդ արձանագրություններն ու որոշումները իրավական ուժից զուրկ որակեցին և ենթարկեցին խիստ քննադատության:

1920թ. ապրիլի 25-ին Սան-Ռեմոյում կայացավ խաղաղության վեհաժողովը, ուր աշխարհի հզորները բաժան-բաժան արեցին արաբական տարածքները՝ Անգլիան ստացավ Պաղեստինը,[31] ինչպես նաև ընդլայնեց Իրաքի իր մանդատը Մոսուլի շրջանով, իսկ Ֆրանսիան ստացավ ամբողջ Սիրիան ու Լիբանանը: Սան-Ռեմոյի արդյունքում Ֆեյսալն ու արաբները զրկվեցին անգամ Սիրիայի մի մասից, ներառյալ Հալեպն ու և Դամասկոսը, որոնք տրվել էին նրանց հետպատերազմյան

[31] Բրիտանական մանդատի մանրամասները տես՝ Հավելված 2-ում:



բաժանումից հետո և որոնք 5 ամիս առաջ նրանց խոստացել էր Ֆրանսիայի վարչապետ Կլեմանսոն:

Արաբները պարտվեցին աշխարհաքաղաքական այս «մեծ խաղի» արդյունքում՝ քաղելով հզոր տերությունների «ուժային քաղաքականության» ու սեփական թուլության պտուղները: Այնս արաբները պետք է իրենց հույսը դնեին միմիայն սեփական ուժերի վրա:

Այդպես էլ եղավ Սիրիայում և Իրաքում: Փորձելով որոշ փոխհատուցում տալ արաբներին՝ Բրիտանիան Ֆեյսալին նշանակեց Իրաքի թագավոր: Ծավալված անհավասար պայքարի ընթացքում չկարողանալով փոքրաթիվ ուժերով հետ գրավել Սիրիան, Աբդալլահը ստիպված եղավ ընդունել Անդրհորդանանի էմիրի կարգավիճակը բրիտանական մանդատի ներքո: Իսկ Հուսեյնը իր անհեռատես քաղաքականության հետևանքով, ոչ միայն փչացրեց իր հարաբերությունները բրիտանական կառավարության հետ, այլև ներքաշվեց պատերազմի մեջ՝ ընդդեմ Իբն Սաուդի վահաբական ջոկատների: Մի շարք պարտություններից հետո վատառողջ Հուսեյնը շերիֆի պաշտոնը զիջեց իր ավագ որդուն՝ Ալիին:

Ինչ վերաբերում է Սիրիայում քաղաքական վերնախավին, ապա մինչ Առաջին աշխարհամարտը նրա ներկայացուցիչների հիմնական մտահոգությունը կայանում էր սեփական տնտեսական դիրքերի և կարողությունների ապահովության մեջ: Օսմանյան պետության փլուզումը նրանց համար հղի էր անկանխատեսելի հետևանքներով: Նրանք պատրաստ չէին դեռևս անկախ կարգավիճակ ունենալու, ուստի ամեն կերպ շահագրգռված էին Օսմանյան կայսրության պահպանման հարցում: Ֆեյսալն անձամբ խոստովանել է, որ Սիրիայի մահմեդականները ընդհանուր առմամբ մեղադրում էին իր ընտանիքին «Իսլամական (Օսմանյան) կայսրության ոչնչացման համար»:[32] Եվ զարմանալի չէ, որ 1918 թ. վերջում, հայտնի Լոուրենս Արաբիացին Լոնդոն իր զաղտնի հաղորդագրության մեջ գրել է, որ «հոժարակամ հակաօսմանյան ապստամբությունը Սիրիայում անհնարին էր»:[33]

Սիրիայում մեծամասնություն կազմող սուննի մահմեդականները, հաստատ մնալով Օսմանյան կայսրության կազմում Սիրիայի գտնվելու իրենց ցանկության մեջ, այնուամենայնիվ շեշտում էին Իսլամի արաբական ծագումը և պահանջում էին, որ մշակութային և կրոնական ղեկավարությունը կայսրությունում կազմված լինի արաբներից: Այս մոտեցումը փոխվեց երիտթուրքերի վարած քաղաքականության պատճառով, երբ պատերազմից հետո, թուրք ազգայնականներից վերջնականապես հիասթափված, երկրի սուննի մահմեդական

[32] معلم وليد. سوريا، 1918-1958، دمشق 1985 - Վալիդ Մուալլիմ. Սիրիան 1918-1958թթ., էջ 78:
[33] Dawisha, Adeed. Arab Nationalism in the Twentieth Century. From Triumph to Despair, p.38.

առաջնորդները առաջ քաշեցին անկախության ձեռքբերման անհրաժեշտությունը:

Այստեղ մեկ անգամ ևս պետք է նշենք այն հանգամանքը, որ Սիրիան հանդիսանում էր ավելի շատ աշխարհագրական անվանում, քան խիստ քաղաքական միավոր: Բացի դրանից, միասնական քաղաքական ղեկավարումն ու ընդհանուր քաղաքականության որդեգրումը հանուն ազգային նպատակների, Սիրիայում գրեթե անհնար էր, երև հաշվի առնենք երկրում գոյություն ունեցող բազմազեմ կրոնական, կլանային, ցեղային համապատկերը: Եթե դրան գումարենք Սիրիայի շրջանների ազնվականության միջև հայտնի տեղային մրցակցությունը՝ Դամասկոսի ու Հալեպի, և մյուս կողմից՝ Հոմսի ու Համայի միջև,[34] ապա հստակ կդառնա այն հանգամանքը, որ վերոհիշյալ դավանական բաժանումն իր հերթին հանգեցնում էր քաղաքական մասնատվածություն, ինչը մեծապես դժվարեցնում էր ազգային ընդհանուր օրակարգի մշակումն ու արդյունավետ իրագործումը:[35] Ինչպես դիպուկ նկատել է Ադիդ Դավիշան, «Տարբեր այլ ինքնությունների առկայությունն ու մրցակցությունը շատ դեպքերում առավել ուժեղ էր, քան *արաբական* ազգային ինքնությունը»:[36] Տարբեր կլանների և ցեղերի շահերը միշտ չէր, որ համընկնում էին ավելի ընդարձակ՝ սիրիական ազգայնական շահերի հետ:

Այդպես պատահեց Ֆեյսալի կարճատև կառավարման տարիներին: Օրինակ, այն ժամանակ երբ Ֆեյսալը պայքարում էր Սիրիայի ինքնակառավարման համար, երկրի մարոնի համայնքը կտրականապես դեմ էր Սիրիական անկախ պետության ստեղծմանը և կողմ էր Ֆրանսիական մանդատի ներքո երկրի դաշնային և ժողովրդավար կարգավիճակին:[37] Քաղաքական այս ուղեգծի կողմնակիցները համախմբվել էին Սիրիական Կենտրոնական Կոմիտեում (Le Comite Central Syrien), որի հիմնադիրն էր Ֆրանսիայում բնակվող Շուքրի Ղանեմը: Իսկ օրինակ, Դամասկոսում քաղաքական և տնտեսական մեծ հեղինակություն վայելող «Ալ-Այանի» (հարուստ

[34] Ըստ Է.Դաունի, «մինչբաասական» սիրիական քաղաքական դաշտը հիմնականում բաժանված էր երկու դաշինքների՝ մի կողմից Դամասկոսի և Համայի իսկ մյուս կոնից՝ Հալեպի և Հոմսի: Ավելի ուշ՝ առաջինը Հալեպի և Հոմսի ընդդիմադիր ուժերի հետ կազմեց Ազգային կուսակցությունը, իսկ երկրորդը՝ Դամասկոսի և Հալեպի ընդդիմության հետ՝ Ժողովրդական կուսակցությունը: Տես՝ Dawn, C. Ernest. The Foreign Policy of Syria. Diplomacy in the Middle East. The International Relations of Regional and Outside Powers, pp.163.
[35] Նույն տեղում, էջ 160-161:
[36] Dawisha, Adeed. Arab Nationalism in the Twentieth Century. From Triumph to Despair, p.44.
[37] زين نور الدين زين، الصراع الدولی فی الشرق الأوسط وولادة دولتا سوريا ولبنان، بيروت، 1958 -Զային Նուր ադ-Դին Զային. Միջազգային պայքարը Մերձավոր Արևելքում և երկու պետությունների՝ Սիրիայի և Լիբանանի ծնունդը, էջ.153-155:



հողատերերի և վաճառականների քաղաքային խավը) անդամները նույնիսկ մարտնչեցին արաբական բանակի դեմ՝ Ֆրանսիացիների կողքին և որպես ազատարարների ողջունեցին վերջիններիս մուտքը Դամասկոս:[38] Ինչ վերաբերում է սուննի մահմեդականությանը, ապա այն ավելի շատ բաժանված էր «եգիպտամետ» և «իրաքամետ» խմբավորումների, որոնք ներքին և արտաքին քաղաքական բոլոր հարցերի լուծումը կապում էին Իրաքի կամ Եգիպտոսի միջամտության հետ:

Իսկ ինչպիսի՞սի դիրքորոշում էին որդեգրել սիրիական ազնվականությունը, քաղաքական գործիչները, տարբեր կրոնական և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները սիոնիստական ծրագրերի ու հետագայում Պաղեստին հրեաների ներգաղթի նկատմամբ: Այս հարցը, թերևս, ամենից քիչ է լուսաբանվել ինչպես արաբական, այնպես էլ արևմտյան հետազոտողների կողմից:

Չնայած դեռևս 1904թ. Նաջիբ Ազուրին կանխատեսում էր, որ արաբական և սիոնիստական ազգայնական շարժումները դատապարտված են անհաշտ մրցակիցներ լինելու, այնուամենայնիվ սկզբնական շրջանում արաբական շրջանակները և հատկապես Մեքքայի շերիֆ Հուսեյնը բարյացակամ էին տրամադրված հրեական ներգաղթի ու Պաղեստինում հրեական օջախ ստեղծելու սիոնիստական ծրագրերի նկատմամբ: Այդ մասին են վկայում սիոնիստների հանդիպումը 1911թ. «Մունթադա ալ-Առաբ» /Արաբական ակումբի/ ներկայացուցիչների հետ, որոնց թվում էր նաև սիրիական գործիչ Ֆարիս Խուրին, 1913թ. Ստամբուլում սիոնիստական կազմակերպության ներկայացուցիչ Սամի Ռոզենբերգի հրավիրումը Փարիզում կայացած Արաբական համաժողովին և նրա հանդիպումները սիրիական կողմի հետ, Առաջին աշխարհամարտի սկզբին սիոնիստ ղեկավարներ Սոկոլովի և Ռուխինի հանդիպումները սիրիական ազգայնական գործիչներ Ջամիլ Մարդամի և Աբդել Ռահման Շահբանդարի հետ:[39]

Այնուհետև, պատերազմի ավարտին՝ 1918թ., երբ վերջնականապես հօդս ցնդեցին երիտթուրքերի «արաբական ինքնակառավարման» վերաբերյալ խոստումները, արաբները ձեռնարկեցին շփումներ սիոնիստների հետ՝ Թուրքիայի դեմ ընդհանուր ճակատի ստեղծման հնարավորությունը քննարկելու նպատակով:[40]

[38] بازی ناجی عبدالنبی. سوريا: صراع الأستقطاب. دراسة وتحليل لأحداث الشرق الأوسط والتدخلات الدولية فی أحداث سوريا 1917-1973 دمشق، 1975; Բազի Նաջի աբդել Նաբի. Սիրիա՝ բևեռացման պայքարը. Մերձավոր Արևելքի և միջազգային հարաբերությունների ուսումնասիրություն և վերլուծություն, էջ 78-84:
[39] Maoz, Moshe. Syria and Israel. From War to Peacemaking, . p.1; Mandel N.J. The Arabs and Zionism before World War I, p.141.
[40] Kimche, Jon. Palestine or Israel: The untold story of why we failed, 1917-1923:1967-1973, pp. 45-48.

Այսպես, արդեն իսկ 1918թ. մարտին Հուսեյնը իր "Ալ-Կիբլա" պաշտոնաթերթի միջոցով կոչ էր անում Պաղեստինի արաբներին՝ ընդունել Եվրոպայից եկող հրեաներին, «որպես եղբայրների»:[41] 1918թ. հունիսին տեղի ունեցան Խ.Վայցմանի և էմիր Ֆեյսալի /ավելի ուշ՝ թագավորի/ բանակցությունները Աքաբայի մոտակայքում, որոնք հանգեցրին պատմական համաձայնագրի ստորագրմանը՝ 1919թ. հունվարի 3-ին: Որոշ պատմաբաններ օգտագործում են այս հանգամանքը՝ շեշտելու այն փաստը, որ սկզբնական շրջանում սիոնիստական ծրագիրը, համարվելով «ոչ-իմպերիալիստական, այլ ազգային», հավանության արժանացավ արաբների կողմից:[42] Ֆեյսալի ստորագրած համաձայնագրի մեջ նշվում էր ոչ միայն երկու ժողովուրդների միջև գոյություն ունեցող ցեղային և պատմական կապերի, այլև Պաղեստինում Արաբական պետության և Հրեական Պաղեստինի «զարգացման» մասին:

Արդյո՞ք այս փաստաթղթով Ֆեյսալը համաձայնվում էր Բալֆուրի հռչակագրի և Պաղեստինում «հրեական ազգային տան» ստեղծման հետ: Իրականում ի՞նչ էր ընկած Ֆեյսալի նման հանդուրժողական քաղաքականության հիմքում:

Պետք է ընդգծել, որ Ֆեյսալը հանդիսացավ առաջին քաղաքական գործիչը, որը ոչ միայն հայտարարեց Սիրիայի անկախության անհրաժեշտության մասին, այլև իր ամբողջ ջանքերը գործադրեց այն իրականացնելու համար: Առաջին համաշխարհային պատերազմը միջազգային ասպարեզում ուժերի նոր դասավորում էր ստեղծում և Օսմանյան կայսրության փլուզման անխուսափելիության պայմաններում, Ֆեյսալի հիմնական թշնամիներն էին դառնում եվրոպական մեծ տերությունները Անգլիան և Ֆրանսիան, որոնք պատրաստվում էին բաժանել Մերձավոր Արևելքը: Իսկ հրեաները Ֆեյսալի համար կարող էին գործնական դաշնակիցներ լինել հակաիմպերիալիստական և անկախության համար մղվող պայքարում:

Սակայն դաշնակիցներ լինելը բնավ չէր նշանակում, որ Ֆեյսալը հրաժարվում էր Սիրիայի անկախության գաղափարից և խոստանում էր Պաղեստինը հանձնել հրեաներին: Այս կապակցությամբ հիշարժան է բրիտանական մի ամսագրի մեջ հրատարակված Ա.Թիբավիի հոդվածը, ուր նա անդրադառնում է Լոուրենս Արաբացու միջամտությանը՝ Պաղեստինում սիոնիստական ծրագրերի իրականացման և այդ ուղղությամբ արաբների դրական վերաբերմունքն ապահովելու հարցում: Լոուրենսը հանդես եկավ որպես թարգմանիչ՝ Ֆեյսալի և Վայցմանի միջև Փարիզի խաղաղության համաժողովի ընթացքում: Իր այդ դերը Լոուրենսն օգտագործեց որոշակիորեն ծառայեցնելու սիոնիստական ծրագրերի հանդեպ իր ունեցած բարյացակամ վերաբերմունքին: Թիբավին նշում է, որ դրա ապացույցն է Ֆեյսալի այն ծանոթագրությունը, որը կցված էր համաձայնագրին՝ անգլերեն լեզվով և Ֆեյսալի կողմից գրված արաբերեն գրության թարգմանությունն էր: Չնայած այն հանգամանքին, որ արաբերեն տեքստում «Արաբական անկախության» ճանաչումը որպես նախապայման էր նշվում այդ համաձայնագրի ստորագրման համար, Լոուրենսը Վայցմանին փոխանցած տեքստում միտումնավոր բաց էր թողել այդ բառակապակցությունը:[43]

Հենց այդ սխալ թարգմանությունն էր, որ սիոնիստներին հիմք տվեց պնդելու այն մասին, որ արաբները համաձայնվել են Բալֆուրի հռչակագրի հետ: 1919թ. հոկտեմբերի 3-ին "Jewish Chronicle" ամսագրում Ֆեյսալի կողմից արված հայտարարությունը վերջնականապես հերքեց հրեաների վերոհիշյալ հաստատումները: Բալֆուրի հռչակագրի վերաբերյալ արաբական դիրքորոշման վերաբերյալ հարցին Ֆեյսալը պատասխանել է հետևյալ կերպ. «Չնայած որ մենք չենք կարող խոսել ապագայի մասին, սակայն այսօր Պաղեստինը, Սիրիան և Միջագետքը անբաժանելի են և մենք արաբներս չենք կարող հրաժարվել մեր թագավորության մասը կազմող Պաղեստինից: Մենք իրականում մինչև վերջ կպայքարենք որպեսզի Պաղեստինը հանդիսանա մեր թագավորության մասը և Արաբների գերիշխանությունը հաստատվի այդ հողում»:[44]

Պետք է նշել նաև, որ Ֆեյսալի կողմից հովանավորված «Սիրիական համաժողովը», հանդես գալով Մեծ Սիրիայի անկախության օգտին, ներկայացուցչական իմաստով ընդգրկում էր նաև Լիբանանն ու Պաղեստինը: Իսկ 1919 թ, հուլիսի 1-ին կայացած նրա առաջին նիստի ժամանակ հստակ ձևակերպվեցին հակասիոնիստական դիրքորոշումներ, մերժվեցին սիոնիստների ծրագրերը, ինչպես նաև Բալֆուրի հռչակագիրը:[45]

## *ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՆԴԱՏԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ*

Սիրիան կարճատև քաղաքական անկախ կարգավիճակից հետո ընկավ Ֆրանսիացիների իշխանության տակ: Սիրիայի նորագույն պատմության մեջ 1920 թվականի հուլիսի 24-ը նշվում է որպես

---

[41] Maoz, Moshe. Syria and Israel. From War to Peacemaking, p.2.

[42] Ֆեյսալի և Վայցմանի միջև ստորագրված համաձայնագրի տեքստն ու Ֆեյսալի նամակը հրեա անվանի գործիչ, դատավոր Ֆելիքս Ֆրանկֆուրտերին տես՝ W. Laqueur (ed.),The Arab-Israeli Reader, pp.17-21:



[43] A.L.Tibawi. T.E.Lawrence, Faisal and Weizmann: The 1919 attempt to secure an Arab Balfour Declaration. Royal Central Asian Journal. Vol.LVI, Part II, June 1969, pp.156-163. Անկախության մասին նշվել էր նաև 1919թ. հունվարի 4-ին Մեծ Բրիտանիայի արտագործնախարարությանը Ֆեյսալի կողմից ուղարկված հուշագրի մեջ:

[44] Interview with Faisal. *Jewish Chronicle*, October 3, 1919, pp. 25-28.

[45] معلم وليد, سوريا، 1918-1958، دمشق 1985، ص 111-164; Maoz, Moshe. Syria and Israel. From War to Peacemaking, p.3.

անկախության առաջին փուլի ավարտ:[46]

1920թ. Ֆրանսիական մանդատի հաստատումից մինչև 1946թ. ապրիլի 17-ը՝ անկախության նվաճումը, Սիրիան թևակոխել էր ազգային-ազատագրական պայքարի մի այնպիսի ժամանակաշրջան, որը «դուրս գալով նեղ սիրիական շրջանակներից, ձեռք էր բերել համաարաբական նշանակություն»:[47]

Ինչ վերաբերում է մանդատային շրջանում սիրիական ազգայնական գործիչների դիրքորոշմանը Պաղեստինում կատարվող իրադարձությունների և զարգացումների նկատմամբ, ապա պետք է նշել, որ այն մեծապես պայմանավորված էր համաարաբական և տեղական սիրիական ազգայնականության միջև փոխգործակցության, մեծ տերությունների հետ հարաբերություններով, Ֆրանսիայի և Բրիտանիայի միջև մրցակցության, ինչպես նաև տնտեսական և ֆինանսական հանգամանքներով:

Իսրայելյան ու նաև մեծ թվով ամերիկյան հեղինակներ իրենց աշխատությունների մեջ բազմաթիվ օրինակներ են բերում սիրիական ղեկավարների կողմից սիոնիստական ծրագրերի նկատմամբ որդեգրած հանդուրժողական կեցվածքի վերաբերյալ:[48] Նրանք սիրիացիների այդպիսի դիրքորոշման պատճառը բացատրում են նրանով, որ սիրիական ղեկավարները հզոր սիոնիստական շարժման հետ համագործակցության միջոցով սկզբնական շրջանում փորձում էին Լոնդոնին մղել՝ խոչընդոտելու Ֆրանսիայի կողմից Սիրիայի մանդատը ստանձնելուն, իսկ ավելի ուշ՝ ստանալ Բրիտանիայի աջակցությունը «Մեծ Սիրիայի» ծրագրի իրականացման գործում /հիմնականում 1930-ականներին/:

Չի կարելի հերքել նաև այն փաստը, որ սիրիական բազմադեմ հասարակության, հիմնականում փոքրամասնությունների՝ դրուզների, ալավիների և մարոնիների[49] ներկայացուցիչները

[46] Haddad, George. Fifty Years of Modern Syria and Lebanon, p.67.

[47] Оганесян Н.О.Образование независимой Сирийской Республики, с.3.

[48] Maoz, Moshe. Syria and Israel. From War to Peacemaking; Porath, Yehoshua. The Emergence of the Palestinian Arab Nationalist Movement; N.J. Mandel. The Arabs and Zionism before World War I.

[49] Արաբները կազմում են երկրի բնակչության 90 տոկոսը /այդ թվում՝ 74 տոկոսը սուննի, 12 % ալավի և 3 % դրուզ և այլք/, քրդերը բնակչության 9 տոկոսը և մնացյալը քրիստոնյաները /հույն, հայ, մարոնի/ և այլք: http://www.state.gov/r/pa/ei/bgn/3580.htm.
**Հայ-սիրիական** առնչությունները, որոնք հայ-արաբական քաղաքական և պատմամշակութային հարաբերությունների բաղկացուցիչ մասն են կազմում, իրենց արմատներով դարերի խորքն են գնում և ունեցել են զարգացման տարբեր փուլեր: Հայերի և արաբների ճակատագրերը պատմության ընթացքում մեկ անգամ ևս խաչաձևեցին Օսմանյան կայսրության ժամանակաշրջանում, իսկ 1915թ. Հայոց ցեղասպանության դժնդակ օրերին Սիրիան ապաստան տվեց հազարավոր հայ գաղթականներին: Դամասկոսում և Հալեպում աստիճանաբար կազմակերպվեց հայ համայնքը՝ իր ազգային վարչությամբ, մշակութային և մարզական կառույցներով, դպրոցներով ու թերթերով: Այսօր Սիրիայում բնակվում է շուրջ 150 հազար հայ:



բարյացակամ էին վերաբերվում Պաղեստին հրեական ներգաղթին:[50] Օրինակ, 1936թ. հունիսին վեց ալավի ազգայնականներ նամակ են հղել Ֆրանսիայի վարչապետին, ուր իրենց համերաշխությունն են հայտնում Պաղեստինում սիոնիստների գործունեությանը. «Այս բարի հրեաները քաղաքակրթություն և խաղաղություն բերեցին արաբ մահմեդականներին և ոսկի ու բարգավաճում տարածեցին Պաղեստինում առանց որևէ մեկին վնասելու կամ ուժով ինչ-որ բան վերցնելու»:[51]

Սակայն հարկ է մեկ անգամ ևս շեշտել, որ այդ դեպքերը կամ անձերը չէին ներկայացնում Սիրիայի քաղաքական ողջ վերնախավը, որը Պաղեստին հրեաների զանգվածային ներգաղթի սկզբից հիմնականում հանդես էր գալիս խիստ քննադատությամբ և անհանդուրժողական կեցվածք էր որդեգրել սիոնիստական ծրագրերի նկատմամբ: Թերևս Սիրիայի ազգայնականները ի վիճակի չէին լուրջ գործնական քայլեր

[50] Արաբախոս **Մարոնիները** դեռևս 7-րդ դարում բնակվել են Սիրիայում՝ դավանելով մոնոթեիզմ (միաստվածություն): Նրանց եկեղեցու հիմնադիրն է ասորիքյան սուրբ Մար Մարոնը: Բյուզանդիայի կողմից հետապնդումների հետևանքով, 10-րդ դարում մարոնիները ապաստան են գտնում Լիբանանի լեռներում: Խաչակիրների արշավանքի ժամանակ 12-րդ դարում նրանք ճանաչում են Հռոմի Պապի գերագահությունը՝ պահպանելով սեփական ծիսակատարությունները, արարողակարգը և պատրիարքական համակարգը:
**Դրուզները** մահմեդական շիա համայնքի աղանդներից մեկի հետևորդներն են: Դավանանքը հիմնադրվել է 10-րդ դարում՝ Կահիրեում: Ֆաթիմյան խալիֆ Ալ-Հաքիմը իրեն հռչակել էր Աստված: Խալիֆի մահից հետո, նրա հետևորդները ենթարկվեցին հետապնդումների, իսկ նրա վեզիրներից մեկը, որի անունով էլ կոչվում է աղանդը, ապաստան գտավ Սիրիայում՝ աստիճանաբար ընդլայնելով իր համախոհների թիվը: Նրանց հայեցակարգի վրա մեծ ազդեցություն է թողել հնդկական և հունական փիլիսոփայական միտքը: Առաջին դրուզների ամիրայությունը ստեղծվել է 12-րդ դարում Լեռնային Լիբանանում, ուր ընդհուպ մինչև 16-րդ դարը մարոնիաբնակ շրջանները կամ ուղղակի ենթարկվել են դրուզական ամիրայությանը, կամ էլ տնտեսական և այլ կապերով առնչվել են նրա հետ:
**Ալավիների** համայնքի վերաբերյալ տեղեկատվության պակասը բացատրվում է ալավիների կողմից իրենց կրոնական հայեցակարգի և ներհամայնքային գործերի մասին տեղեկությունը գաղտնի պահելու ավանդույթով: Նրանք ունեն երեք տասնյակից ավելի ցեղեր ու կազմում են Սիրիայի բնակչության 12 տոկոսը՝ ավելի քան մեկ միլիոն մարդ: Ալավիներին համախմբող ամենահիմնական գործոնը հանդիսանում է նուսայրիների կրոնական հայեցակարգը: Նրանց ավանդույթները, տոներն ու ծեսերը ազդեցություն են կրել Ղուրանից, Թորայից և Ավետարանից, անգամ կռապաշտությունից: Հավատքի հիմնական աղբյուրն է իսլամը, քանի որ նուսայրիզմը առաջացել է 9-րդ դարի երկրորդ կեսին՝ որպես ծայրահեղ շիա իսլամի աղանդ: Հավատքի հիմնաքարն է «աստվածային եռյակի» թեզը՝ Ալիի, Մուհամեդի և Սալման ալ-Ֆարիսիի: Ալին «այնը»՝ աստվածային իմաստն է, այսինքն ինքը՝ Աստվածը և նրանից սերած ամեն ինչ, Մուհամեդը՝ «միմ»-ը Աստծո անունն է, որը ստեղծել է Սալման ալ-Ֆարիսիին: Այս երեքը իրարից բաժանողը ալավիների կողմից համարվում է հերետիկոս: Ալավիները բնակվում են Սիրիայի հյուսիս-արևմտյան մասում և Միջերկրականի ափին:

[51] Pipes, Daniel. Is Damascus Ready for Peace. 'Foreign Affairs", Vol.70, Iss:4, 1991, pp.36-52; الحريري أبوموسى. العلويون .بيروت، 1980 ،ص5-34.

իրականացնելու, սակայն իրենց ելույթների, բերբերի միջոցով մշտապես քննադատում էին սիոնիստներին և նրանց գործելակերպը Պաղեստինում:

Պետք է նաև նկատի ունենալ, որ մանդատային փուլում սիրիական քաղաքականության մեջ Պաղեստինի հարցը առաջնային չէր համարվում, այն ստորադասվում էր ազգային ավելի կարևոր խնդրի՝ Ֆրանսիայի մանդատային կառավարման դեմ պայքարի ու անկախության նվաճմանը: Այս հանգամանքից ելնելով է, որ 1928թ. ստեղծված ամենաhեղինակավոր՝ «Ազգային Դաշինքը» /Քութլա Վաթանիյա/ սկզբնական շրջանում ընդունել էր «Սիրիան՝ առաջինը» կարգախոսը, և, մի կողմից որդեգրելով Ֆրանսիայի հետ քաղաքական համաձայնության գալու նպատակով «պատվաբեր համագործակցության» սկզբունքը, մյուս կողմից էլ՝ Ֆրանսիայի դեմ Բրիտանիայի դիվանագիտական աջակցությունը ապահովելու ձգտումով, զսպում էր սիրիական հասարակության մեջ հակաբրիտանական տրամադրությունները, կապված Պաղեստինում նրանց վարած քաղաքականության հետ:

Սակայն սիրիական քաղաքական գործիչները հաշվի չառան այն, որ թեև Մերձավոր Արևելքում երկու գերտերությունների՝ Ֆրանսիայի և Բրիտանիայի միջև մրցակցության հանգամանքը նրանց հնարավորություն էր ընձեռում օգտագործելու Լոնդոնի և Փարիզի միջև առկա հակասությունները ու շահերի բախման հանգամանքը, այնուամենայնիվ, երբ խնդիրը հասնում էր գործնականին՝ ռազմական միջամտությանը, գերտերությունները, նախընտրում էին պահպանել կապերը միմյանց հետ, քան գործել «տարածաշրջանային իրենց գործընկերների» օգտին. հատկապես, այն դեպքերում, երբ հարցը վերաբերում էր վերջիններիս տարածքների փոխանակմանը կամ բաժանմանը և  հնարավորություն կար համաձայնվելու իրար հետ խաղաղ միջոցներով՝ առանց ուժի գործադրման:[52]

Այսպիսով, 1930-ականների կեսից ակնհայտ դարձավ, որ «Ազգային Դաշինքի» քաղաքականությունը փակուղի է մտել: Այդ ժամանակ Սիրիայում կատարված սոցիալ-տնտեսական, մշակութային և այլ համակարգային փոփոխությունների հետևանքով աճող միջին խավի ներկայացուցիչները, ի տարբերություն ավանդական ազնվականության, սկսեցին առաջ քաշել համաարաբական խնդիրներ, հատկապես Պաղեստինի հարցը, որը ձեռք բերեց առավել արդիական նշանակություն: Ինչպես Ֆ.Խուրին է ասում, « ի հայտ եկած «Ազգային Դաշինքից» ավելի արմատականացված շարժումները իրենց հետքը թողեցին ազգայնական քաղաքականության վրա: Նրանք ցանկանում էին վերաձևակերպել ազգայնականությունը, որը առավել մեծ ուշադրություն էր դարձնում զանգվածների սոցիալական և տնտեսական գործունեության վրա:

[52] Brown, Carl (ed.), Diplomacy and the Middle East, p.162.



Նրանք ավելի շատ ցանկանում էին շեշտել համաարաբական միասնությունը, քան հին ազգայնական սահմանադրական կարգախոսները, խորհրդարանական ձևերը և անհատական ազատությունները»:[53]

Ազգայնական այս սերնդի ներկայացուցիչներն էին, որ հիմնեցին 1933թ. «Ազգային Գործողությունների Լիգան» և «Ազգային Դաշինքի» հիմնական քննադատները հանդիսացան: Լիգան մեծ հեղինակություն էր վայելում հիմնականում երիտասարդների շրջաններում: Ինչպես նշում է Ա.Դավիշան, «Լիգան ճանապարհ հարթեց Արաբական ազգայնական այլ կուսակցությունների, հատկապես Բաաս կուսակցության համար: Այն կարևոր դեր խաղաց Արաբական ազգայնական գաղափարների ժողովրդականացման և տարածման գործում»:[54] Այսուհանդերձ, «Ազգային Գործողությունների Լիգան» և «Ազգային Դաշինքը» այն հիմնական քաղաքական միավորներն էին Սիրիայում, որոնք 1930-ականներին իրենց ձայնն էին բարձրացնում Պաղեստինում հրեաների աստիճանաբար աճող ներգաղթի և տեղի բնակչության շահերի պաշտպանության և սիոնիստների դեմ ակտիվորեն պայքարելու օգտին:

Իրավիճակը Պաղեստինում ծայրաստիճան սրվեց 1936 թվականին: Արաբ բնակչությունը գործադուլ սկսեց, որն էլ  վերածվեց լայնածավալ ապստամբության և տևեց շուրջ երեք տարի:[55] Այս իրադարձությունները մեծ ներգործություն ունեցան Պաղեստինից դուրս բնակվող արաբական զանգվածների գիտակցության վրա և Պաղեստինը այլևս դարձրեցին համաարաբական խնդիր:

Սիրիական քաղաքական վերնախավը մտահոգված էր Պաղեստինում հրեական ազդեցության ընդլայնման և ապակայունացման հեռանկարով: Առաջին հերթին, բացի արաբական համերաշխությունից, Պաղեստինը համարվում էր «Մեծ Սիրիայի» կամ «Բիլադ աշ-Շամի» արևելյան անքակտելի մասը: Երկրորդ, հրեական պետության հեռանկարը անմիջական հարևանությամբ աշխարհաքաղաքական վտանգ կարող էր ներկայացնել Սիրիայի համար և խոչընդոտ հանդիսանալ արաբական միասնության իրականացման ճանապարհին: Երրորդը՝ Պաղեստինում հրեական կապիտալի ներթափանցման արդյունքում արդյունաբերության, քաղաքների ու նավահանգիստների արագ զարգացումը լրջորեն խարխլում էր սիրիական գործարար խավի դիրքերը:

[53] Khoury, S. Philip. Syria and the French Mandate: The Politics of Arab Nationalism, 1920-1945, pp.626-627.

[54] Dawisha, Adeed. Arab Nationalism in the Twentieth Century. From Triumph to Despair, p.80.

[55] Այդ ժամանակահատվածում սպանվեցին երեք հազար արաբ, երկու հազար հրեա և վեց հարյուր բրիտանացի: Տես՝ Cleveland, L. William. A History of the Modern Middle East, pp.252-253.

Ի պաշտպանություն Պաղեստինյան դատի, Սիրիայում տեղի էին ունենում ցույցեր և գործադուլներ, հրատարակվում էին հակաբրիտանական և հակասիոնիստական գրքույկներ: Սիրիացիները նաև իրենց հնարավորության սահմաններում նյութական օժանդակություն էին ցուցաբերում պաղեստինցիներին՝ հանգանակություններ կազմակերպելով, դրամ և ոսկեղեն, ինչպես նաև զինամթերք առաքելով Պաղեստին:[56]

Փաստորեն Պաղեստինյան խնդիրը դարձնելով համաարաբական խնդիր, սիրիական քաղաքական վերնախավը ամրապնդում էր իր դիրքերը համաարաբական պայքարի դրոշի ներքո և հզոր խթան էր ստանում արդեն իսկ իր որդեգրած արաբականության /արաբիզմի/ գաղափարախոսության համար:

Տարբեր հեղինակների կարծիքները հաշվի առնելով՝ կարելի է արձանագրել, որ Սիրիայում արաբականության գաղափարախոսության տարածումն ու ակտիվ քարոզչությունը իրականացվեց, ելնելով հետևյալ պատճառներից.

Առաջինը, արաբականությունը Սիրիայում անհրաժեշտ էր իշխող վերնախավին, որը դրանով արդարացնում էր իր սեփական գոյությունը: Հայտարարելով իրենց արաբական պայքարի առաջատարներ, Սիրիայի քաղաքական առաջնորդները անուղղակի կերպով իրենց կապում էին արար ժողովրդի անցյալի, ներկայի և ապագայի հետ:

Երկրորդ, արաբականությունը հնարավորություն էր տալիս համախմբելու երկրի տարբեր կրոնական, ցեղային և տեղական շահեր հետապնդող բնակչության հատվածները: Արաբիզմը, իհարկե, չէր կարող վերացնել նրանց միջև առկա բազմաթիվ տարբերությունները, սակայն ի վիճակի էր վերջ դնելու քաղաքական մասնատվածությանը:

Եվ վերջապես՝ երրորդը, արաբիզմի գաղափարախոսությունը հզոր կռվան էր Սիրիայի անկախության համար նրանց մղած պայքարում:[57]

*Ընդհանրապես պետք է հիշել, որ 1920-1948թթ. արաբականությունը Սիրիայում հիմնականում կրում էր հակագաղութային, հակաիմպերիալիստական բնույթ:* Ինչպես դիպուկ նշում են տարբեր հեղինակներ, պատմական անցյալի, մասնատվածության և մեծ տերությունների կողմից իրականացվող «մերձնայությունների» պայմաններում դժվար էր ակնկալել, որ սիրիացիներին հնարավոր կլինի ազգային-ազատագրական պայքար

[56] Khoury, S. Philip. Syria and the French Mandate: The Politics of Arab Nationalism, 1920-1945, pp.542-544.

[57] Shlaim, Avi. Collusion Across the Jordan: King Abdullah, the Zionist Movement, and the Partition of Palestine, p. 26; Khoury, Urban Notables and Arab Nationalism, pp. 79–81; Khoury, Syria and the French Mandate, pp. 40–41; Zeine Zeine, The Struggle for Arab Independence: Western Diplomacy and the Rise and Fall of Faisal's Kingdom in Syria, pp. 65-72.



ծավալել սիրիականության կարգախոսներով: Երբ երկրի հիմնական մասը սեփական ինքնությունը չի կապում Սիրիայի, այլ՝ այս կամ այն կրոնի, ցեղի կամ գյուղի հետ, դժվար է պահանջել, այն պայքարի «Սիրիայի» անկախության համար: Ստեղծված իրավիճակում, երբ չափազանց թույլ են իշխանության և ինքնիշխանության ավանդական ռեսուրսները, միայն արաբականության գաղափարախոսությունն էր, որ կարող էր որոշակի միասնական քաղաքական դաշտ ստեղծել և բարձրացնել այն դրոշը, որը պետք է տաներ ժողովրդին անկախության պայքարի:[58]

Հարկ ենք համարում նշել, որ որոշ պատմաբաններ անդրադառնում են «սիրիականության» գաղափարախոսության առկայությանը տվյալ ժամանակահատվածում:[59] Կարծում ենք սիրիականությունը ընդհանրապես գերիշող գաղափարախոսություն չէր այն պարզ պատճառով, որ Սայքս-Պիկոյի համաձայնագիրը, այնուհետև Բալֆուրի հռչակագիրը, Սան Ռեմոյի խորհրդաժողովը և վերջապես Ալեքսանդրեթի սանջաքի բռնազավթումը Թուրքիայի կողմից՝ զրկեցին «սիրիականությունը» լուրջ իրավական հիմքերից, իմաստազրկելով աշխարհագրական Սիրիայի միավորման և այդ տարածքներում միասնական մեկ պետության ստեղծման ուղղությամբ քարոզչությունը: Այսպես, Սայքս-Պիկոյի համաձայնագիրը առաջին անգամ Սիրիայի ներսում գծեց քաղաքական նոր սահմաններ: Կարելի է ասել, որ Պաղեստինում հրեական պետության ստեղծումով վերջ դրվեց անգամ դեկլարատիվ «սիրիականության» գաղափարախոսությանը այն տեսքով, ինչպես հասկանում էին Սիրիայի ազգային ամենախոշոր գործիչներից մեկը՝ Անտուն Սաադան ու նրա համախոհները:

*Սիրիականության գազափարախոսությունը գործնական որակներ ձեռք բերեց միայն Սիրիայի անկախության նվաճումից հետո, մինչև Բաասի իշխանության գալը, որը բարձրացրեց սեփական՝ բաասական «սիրիական արաբիզմի» դրոշը Սիրիայում:*

Նորանկախ Սիրիայում «Վաթանի» /հայրենիքի/ գաղափարի ակնհայտ աճի պայմաններում երկրի ղեկավարները ստիպված էին ընդունել սիրիականության կարևորությունը և սիրիական պետական

[58] http://www.ciaonet.org/book/barnett/ Barnett, N. Michael. Dialogues in Arab Politics:Negotiations in Regional Order. Ch.3 The Creation of "Arab" Politics, 1920–1945; Hopwood, Derek. Syria: 1945–86, p. 1; Batatu, Hanna. The Old Social Classes and the Revolutionary Movements of Iraq, p. 13; Wilson, King Abdullah; Malik Mufti, Sovereign Creations: Pan-Arabism and Political Order in Syria and Iraq, chaps. 2 and 3.

[59] Է.Դաունը նշում է սիրիականության երկու ձևերի առկայություն՝ «օսմանյան սիրիանիզմ» և «արաբական սիրիանիզմ»: Dawn, C. Ernest. The Foreign Policy of Syria. Diplomacy in the Middle East. The International Relations of Regional and Outside Powers, p.160.

հաստատությունների անկախության պահպանման առաջնայնությունը:[60] Անգամ այն պայմաններում, երբ այն բախվում էր կոմունիստական գաղափարախոսության, Անտուն Սաադայի սիրիական ազգայնականության և «Բիլադ աշ-Շամ»-ի ստեղծմանը հետամուտ պոպուլիստական քարոզիչների հետ: Սիրիականությունը անխուսափելի էր, քանի դեռ կենսական էր անկախության ամրապնդման հրամայականը՝ ներքին և արտաքին բազմաթիվ մարտահրավերների առկայության պայմաններում: Չնայած, որ արաբական աշխարհում ակնհայտ էին նաև արաբական միասնության միտումներ /լեզվի, մշակույթի, կրթության և այլ ոլորտներում/, այնուամենայնիվ, նորանկախ գրեթե բոլոր արաբական երկրներում «երկրային ազգայնականությունը» գերադասելի էր «համաարաբական ազգայնականությունից»:[61]

Սիրիայի դեպքում պետք է հաշվի առնել այն փաստը, որ այդ երկիրը ազգային անվտանգության առումով գտնվում էր, թերևս, ամենախոցելի իրավիճակում: Պ.Սիլի կարծիքով, Իրաքը և Եգիպտոսը մշտական պայքարի մեջ են գտնվել Սիրիան կառավարելու համար:[62] Գ.երտերությունները նույնպես որևէ առիթ բաց չէին թողնում Սիրիայի նկատմամբ վերահսկողություն հաստատելու համար: Դեռևս լիարժեք քաղաքական միավոր չդարձած, Սիրիան էլ իր անվտանգության խնդիրները փորձում էր լուծել երրորդ ուժի միջոցով՝ սկզբում ԱՄՆ-ի /Հ.Զաիմ, Ա.Շիշեքլի/, հետո ԽՍՀՄ-ի /Խալիդ ալ-Ազմ/ օգնությամբ, այնուհետև Եգիպտոսի հետ միավորման /Շ.ալ-Քուվաթլի/ միջոցով:

*Սիրիայի ներսում արաբական միասնության՝ արաբիզմի ջատագովները առաջին արաբ-իսրայելական պատերազմի պարտությունից հետո, այնուհետև Իրաքի հետ միավորման երկու անհաջող փորձերից և Եգիպտոսի հետ կարճատև միավորման փլուզումից հետո, սկսեցին գիտակցել սեփական պետության շահերը արաբական միասնականությանը ստորադասելու անարդյունավետությունն ու անհեռանկարային լինելու հանգամանքը: Ակնհայտորեն նախապատվությունը տրվում էր սիրիականությանը՝ որպես երկրի ինքնիշխանության ու անկախության պաշտպանության միջոցի:*

Այնուհետև՝ «Միասնություն, ազատություն, սոցիալիզմ» կարգախոսի տակ «Բաաս» կուսակցության 1963թ. հաղթանակով և յոթ տարի անց *Հաֆեզ ալ-Ասադի «ուղղիչ շարժումով», ժամանակակից Սիրիայի քաղաքական դաշտում սկիզբ դրվեց «սիրիական արաբիզմի» գաղափարախոսության հաղթարշավին:*

[60] خالد العزم. مذكرات خالد العزم المجلد الثاني. بيروت .دار المتحدة للنشر، 1971; Խալիդ ալ-Ազմի հուշերը, երկրորդ հատոր, Բեյրութ, 1971, էջ 220:

[61] Е.Примаков.Конфиденциально: Ближний Восток на сцене и за кулисами (вторая половина XX-начало XXI века, с.53.

[62] Scale, Patrick. The Struggle for Syria. A Study of Post-War Arab Politics 1945-1958, p.2.



## *ԻՍՐԱՅԵԼ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ՆՈՐԱՆԿԱԽ ՍԻՐԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ՀԱՐՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ*

Երկրորդ համաշխարհային պատերազմը հիմնովին փոխեց Մերձավոր Արևելքի աշխարհաքաղաքական պատկերը՝ արագացնելով տարածաշրջանում ոչ միայն արաբական երկրների անկախացման, այլև սեփական պետություն ստեղծելու հրեաների դարավոր երազանքի իրականացման գործընթացը:

Իսրայելի պետության ստեղծումը իրականացվեց սիոնիստական գաղափարախոսությամբ ղեկավարվող հրեական կազմակերպությունների քրտնաջան աշխատանքի և լավ կազմակերպված լոբբիստական գործունեության շնորհիվ: Եթե մինչև Երկրորդ աշխարհամարտը սիոնիստների հիմնական ջանքերը ուղղված էին գաղութային ամենահզոր ուժերից մեկի՝ Անգլիայի կողմը, ապա պատերազմից հետո քաջ գիտակցելով համաշխարհային բեմահարթակի վրա ուժերի փոփոխվող հարաբերակցությունն ու ձևավորվող երկբևեռ աշխարհակարգը, սիոնիստները շրջվեցին դեպի Միացյալ Նահանգները: ԱՄՆ-ում հրեական արդյունավետ քարոզչության արդյունքում ամերիկացիների զգալի մասը համակվեց ցեղասպանությունը վերապրած հրեա ժողովրդի և Իսրայելի պետության գոյատևման նկատմամբ ինչպես զուտ մարդկային համակրանքի, այնպես էլ «պատասխանատվության» զգացումներով:

Պետք է նշել, որ, Իսրայելի պետության ստեղծման գործում ոչ պակաս կարևոր ներդրում ունեցավ նաև Խորհրդային Միությունը, թեև այս մասին խորհրդային պատմագրությունը երկար տարիներ խուսափում էր նշել: Ռուս հեղինակ Լ.Մլեչինը անգամ նշում է, որ Ի.Ստալինը առանցքային նշանակություն է ունեցել Իսրայելի պետության ստեղծման գործում:[63]

Արաբ-իսրայելական հակամարտության արմատները գալիս են դարերի խորքից՝ դեռևս բիբլիական ժամանակներից: Այդ հակամարտության պատմությունը ուսումնասիրելիս անհրաժեշտ է տեղյակ լինել, որ հրեաները գրեթե ամբողջապես արտաքսվել էին Պաղեստինից դեռևս Հռոմեական կայսրության ժամանակաշրջանում: Պաղեստինը դարեր շարունակ մնացել է հրեաների համար, որպես Սիոնի զգացական կենտրոն և «Ավետյաց Երկիր»: Հրեաների ներգաղթի առաջին ալիքը Պաղեստին՝ տեղի ունեցավ 19-րդ դարի վերջին՝ Եվրոպայում հրեաների հետապնդումների հետևանքով, ուր աստիճանաբար սկսեց ձևավորվել *սիոնիզմի* գաղափարախոսությունը: Վերջինիս առաջնորդ

[63] **"Советско-израильские отношения. 1941-1953"; Млечин Л. Особая папка. Иосиф Сталин-создатель Израиля.**

Թեոդոր Հերցլը[64] հիմնավորեց միասնական հրեական ազգի գոյությունը և «մշտական հակասեմականության» պայմաններում նախնիների հայրենիքում հրեաների համախմբման անհրաժեշտությունը: Հայտարարելով Պաղեստինը ամբողջ աշխարհի հրեաների «հոգևոր և ազգային կենտրոն»՝ սիոնիստները կոչեցին այն Իսրայել Երկիր (Էրեց Իսրայել):

1897թ. Բազելում կայացած սիոնիստական առաջին համաժողովում (Շվեյցարիա) ընդունվեց այսպես կոչված, «Բազելյան ծրագիրը», որի համաձայն, պետք է գործնական քայլեր ձեռնարկվեին Պաղեստինում «հրեական օջախ» ստեղծելու ուղղությամբ: Համաժողովում ստեղծվեց նաև Սիոնիստական համաշխարհային կազմակերպությունը:

Անհաջողությամբ ավարտելով Օսմանյան իշխանությունների հետ վերոհիշյալ նպատակի իրականացման վերաբերյալ շփումները՝ սիոնիստական առաջնորդները Պաղեստինի գաղութացման հարցում դիմեցին եվրոպական մեծ տերությունների աջակցությանը: Այդ նպատակով սկզբում նրանք իրենց հույսերը կապեցին Գերմանիայի հետ, որը 19-րդ դարի վերջին արդեն նախապատրաստվում էր աշխարհի վերաբաժանմանը և Պաղեստինը դիտարկում էր որպես ռազմավարական կարևոր տարածաշրջան: Սակայն շուտով սիոնիստական ղեկավարները փոխեցին իրենց ուղեգիծը և փորձեցին ձեռք բերել Անգլիայի օժանդակությունը, որը նույնպես հետաքրքրություն էր ցուցաբերում Պաղեստինի նկատմամբ:

Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին Պաղեստինում բնակվող հրեաների թիվը կազմում էր ընդամենը 55 հազար՝ այսինքն 700.000-անոց բնակչության միայն 8%-ը: Մնացած 92%-ը արաբներ էին, որոնց 4/5 մասը մահմեդականներ էին, իսկ մյուսը քրիստոնյաներ: Ինչպես գիտենք, 1916թ. մայիսին Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև կնքված Սայքս-Պիկոյի համաձայնագրով Պաղեստինը հանձնվում էր Ֆրանսիային, ինչը ի չիք էր դարձնում Հուսեյն-ՄաքՄահոն նամակագրությամբ արաբների անկախ պետություն ստեղծելու վերաբերյալ անգլիացիների խոստումը:

1917թ. նոյեմբերի 2-ին Բալֆուրի հռչակագրով[65] Բրիտանիան խոստացավ իր աջակցությունը հրեաներին՝ Պաղեստինում հիմնել

[64] Թ.Հերցլը (1860-1904) ավստրիացի լրագրող էր, որը մինչ Դրեյֆուսի գործը անգամ չէր էլ հիշում իր հրեական արմատների մասին: Նրա գաղափարները հիմնականում ամփոփված են 1896թ. Վիեննայում հրատարակված՝ «Հրեական պետություն՝ Հրեական հարցի լուծման ժամանակակից փորձը» աշխատության մեջ:

[65] Բրիտանիայի արտգործնախարար Արթուր Ջեյմս Բալֆուրի նամակը ուղղված բրիտանաբնակ հրեաների ներկայացուցիչ Վոլթեր Ռոթշիլդին: Տեքստը տես՝ Հավելված 1-ում:



«ազգային տուն»: Այնուհետև 1920թ. ապրիլին Փարիզում գումարված խաղաղության համաժողովը վճռեց Պաղեստինի մանդատը հանձնել Մեծ Բրիտանիային, ինչն էլ վերջնականապես ամրագրվեց Ֆրանսիայի և Անգլիայի միջև Սան-Ռեմոյում:

Բրիտանացի անվանի դիվանագետ-արաբագետ Էնթոնի Նաթինգը նշում է, որ Պաղեստինում բրիտանական մանդատի առաջին հինգ տարիների ընթացքում արաբները *ընդհանուր առմամբ հանդուրժողական կեցվածք էին ընդունել հրեաների նկատմամբ*.[66] Եվ այդ այն պայմաններում, երբ մանդատային իշխանությունները բացահայտ հրեամետ քաղաքականություն էին վարում (բրիտանական՝ Գաղութային գրասենյակում /Colonial office/ աշխատող արաբները փախարինվում էին հրեաներով և այլն), իսկ հրեաները 1920թ. կայացած խորհրդաժողովի ընթացքում հայտարարում էին, որ սիոնիզմի նպատակը ոչ թե հրեաների համար «ազգային տուն», այլ ազգային անկախ պետություն ստեղծելն է:

Է.Նաթինգը արաբների համեմատաբար հանգիստ վերաբերմունքը հրեաների նկատմամբ բացատրում է այն հանգամանքով, որ Պաղեստինում Բրիտանիայի կառավարության Բարձրագույն հանձնակատար նշանակվեց Հերբերտ Սամուելը: «Հանդիսանալով առաջին հրեա կառավարիչը Պաղեստինում երկու հազար տարի ընդմիջումից հետո և Պաղեստինում երեք միլիոն հրեա բնակեցնելու սիոնիստական երազանքի ջերմ կողմնակիցը լինելով՝ այնուամենայնիվ, իր կառավարման ընթացքում նա չափազանց արդար էր արաբների հետ գործակցության մեջ և երբեք ցույց չտվեց իր բարյացակամ վերաբերմունքը Սիոնիստների նկատմամբ: Հակառակ դեպքում, ինչպես կարելի էր բացատրել այն փաստը, որ 1928թ. մարտին, երբ սիոնիստական հանձնաժողով ժամանեց Պաղեստին հրեաների և բրիտանական մանդատային իշխանությունների միջև կապեր հաստատելու նպատակով, արաբները շարունակեցին հանգիստ և անվրդով դիտել, թե ինչպես են հրեաները հրապարակայնորեն միջոցառումների ընթացքում բարձրացնում իրենց դրոշները և կատարում ազգային օրհներգը»:[67]

Պաղեստինում հրեական ներգաղթի սկզբնական շրջանում արաբների համեմատաբար «հանգիստ» կեցվածքը մասամբ կարելի է բացատրել նրանց քանակական գերազանցության գիտակցումից բխող ինքնավստահությամբ, մասամբ էլ այն հանգամանքով, որ Պաղեստինում ապրող հրեա հնարնակները դեմ էին արտահայտվում հրեական պետության ստեղծմանը:

Stein, Leonard. The Balfour Declaration, London, 1961; Sanders, Ronald. The High Walls of Jerusalem: A History of the Balfour Declaration and the Birth of the British Mandate for Palestine. New York, 1983.

[66] Nutting, Anthony. The Arabs, pp.315-318.

[67] Նույն տեղում, էջ 317-318:

Այնուամենայնիվ, կարծում ենք, որ ընդհանրացնել ու ասել, որ արաբները հանդուրժողական կեցվածք էին ընդունել Պաղեստին հրեական ներգաղթի, հրեաների կողմից մեծածավալ հողատարածքների գնման և բնակեցման ծրագրերի նկատմամբ, կհակասեր պատմական ճշմարտությանը:

Պաղեստինի արաբ բնակչությունը, իհարկե անհանգստացած էր հրեական ներգաղթով, որի համար բրիտանական իշխանությունները սահմանել էին տարեկան քվոտա՝ 16.500 մարդ:

1920թ. ապրիլին Երուսաղեմում տեղի ունեցան արաբների բողոքի զանգվածային ցույցեր, որոնք տևեցին մի քանի օր, իսկ դրանց հիմնական կազմակերպիչը՝ Երուսաղեմի մուֆթի Հաջ Ամին Հուսեյնին փախավ Սիրիա և բրիտանական գաղութային իշխանությունների կողմից դատապարտվեց տասը տարի ազատազրկման:[68]

Արաբների բողոքների արդյունքում 1921թ. ներգաղթը կասեցվեց, մինչև որ 1922թ. գաղութների հարցերով նախարար Ու. Չերչիլը չհաստակեցրեց Պաղեստինում բրիտանական կառավարության վարած քաղաքականությունը: Նախարարի անունից հրապարակվեց մի փաստաթուղթ, ուր մասնավորապես ասվում էր. «Անպատասխանատու հայտարարությունները այն մասին, որ Անգլիան նպատակ է հետապնդում ստեղծել ամբողջությամբ հրեական Պաղեստին անիրատեսական են և չեն համապատասխանում Բրիտանիայի իրական նպատակներին: Խոսքը վերաբերում է ոչ թե ամբողջ Պաղեստինը հրեական ազգային տան վերածելուն, այլ նրան, որ այդպիսի տուն պետք է ստեղծվի Պաղեստինում»:

1931թ. Պաղեստինում հրեական բնակչությունն արդեն ավելացել էր 2 անգամ և կազմում էր ընդհանուր բնակչության 17%-ը, հրեա նորաբնակների թիվը կազմում էր 170.000: Արաբները մտահոգված էին այն հանգամանքից, որ Պաղեստինի համար չափազանց կարևոր այնպիսի հարցեր, ինչպիսիք էին ներգաղթը և հողային խնդիրները, գտնվում էին Հրեական գործակալության /Jewish Agency/ արդյունավետ վերահսկողության տակ: Չնայած մանդատային իշխանությունները փորձեցին որոշ քայլեր ձեռնարկել այդ հարցերը ղեկավարելու ուղղությամբ, սակայն տեղի տվեցին հրեական գործակալության կողմից ԱՄՆ-ում, Եվրոպայում և Ռուսաստանում ծավալած քարոզչությանը. բրիտանական իշխանությունները հակահրեական դիրքորոշման մեջ մեղադրանքներից խուսափելու նպատակով ստիպված էին թույլատրել հրեաներին՝ գործել վերջիններիս համար շահավետ ու հարմար ձևով:

1933թ. Հիտլերի իշխանության գալով և Գերմանիայում հրեաների հետապնդումների արդյունքում հրեական ներգաղթը Պաղեստին

[68] Այսուհանդերձ Հ.Սամուելը մեկ տարի անց նրան թույլատրեց վերադառնալ Երուսաղեմ:



եռապատկվեց՝ 10.000-ից հասնելով տարեկան 30.000-ի: 1934թ. այն հասավ 43.000-ի, իսկ 1935թ.՝ 62.000-ի:

Երբ հրեաները կազմեցին Պաղեստինի ամբողջ բնակչության 30 տոկոսը, մանդատային իշխանությունները վերջապես սկսեցին գիտակցել, որ անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել արաբ բնակչությունը պաշտպանելու ուղղությամբ: Բրիտանական կառավարությունը հայտարարեց, որ Պաղեստինի Օրենսդրական Խորհուրդը կհաստատվի համամասնական ներկայացուցչության հիմքի վրա, ինչը ձեռնտու էր Պաղեստինի բնակչության մեծամասնությունը կազմող արաբներին, սակայն վտանգում էր սիոնիստների հիմնական ծրագրի իրականացմանը՝ հրեական պետության ստեղծմանը: Հրեաների անցան հարձակման և Բրիտանիայի խորհրդարանում ծավալված բուռն բանարկումներից հետո կառավարության այդ առաջարկի ընդունումը փաստորեն տապալվեց՝ հիմնականում Չերչիլի զգացական ելույթի շնորհիվ:

Արաբները նորից խաբվեցին: 1936թ. ապրիլին հիմնադրվեց Արաբական բարձրագույն կոմիտե (Arab Higher Committee) կազմակերպությունը, որը կոչված էր ղեկավարելու արաբների պայքարը Պաղեստինում:[69] Երուսաղեմի մուֆթին՝ Հաջ Ամինը ընտրվեց նրա նախագահ և համընդհանուր գործադուլ հայտարարեց Պաղեստինի ամբողջ տարածքում: Արաբները սպառնում էին շարունակել գործադուլը այնքան ժամանակ, մինչև բրիտանական կառավարությունը ընդհանրապես արգելի հրեական ներգաղթը: Զուգահեռաբար արաբները գործողություններ էին ձեռնարկել բրիտանական կառավարության հեռախոսային, ճանապարհային և երկաթուղային համակարգերի դեմ: Բրիտանացիները թեև արհամարհեցին մուֆթիի պահանջները, սակայն ի վիճակի չեղան անտեսել դրան հաջորդած բռնությունները ու զանգվածային ելույթները:

Բրիտանական կառավարությունը մեկ անգամ ևս փորձեց շեղել արաբների ուշադրությունը դիվանագիտական միջոցներով՝ հայտարարելով Թագավորական հանձնաժողովի ստեղծման մասին, որը պետք է զբաղվեր Պաղեստինում տիրող իրավիճակով: Բրիտանացիների այդ քայլը տվեց իր արդյունքը՝ Արաբական բարձրագույն կոմիտեի կոչով 6 ամիս տևած գործադուլը դադարեցվեց հիմնականում Անդրհորդանանի էմիր Աբդուլլահի և արաբական այլ ղեկավարների ճնշման տակ:

Սակայն արաբները թույլ տվեցին ռազմավարական կոպիտ սխալ: Տեղեկանալով, որ մանդատային իշխանությունները կազմել են հրեական

[69] Հրեաները իրենց շահերը պաշտպանող Հրեական գործակալությունը (Jewish Agency) ստեղծել էին դեռևս 1929թ.: Արաբական բարձրագույն կոմիտեի ստեղծումը անհարկիորեն ուշացավ 7 տարով, որ ճակատագրական կարելի է համարել Պաղեստինի ապագայի համար:

ներգաղթի նոր ժամանակացույց, նրանք մուֆթիի գլխավորությամբ որոշում կայացրեցին բոյկոտել Թագավորական հանձնաժողովի աշխատանքները: Ավելի անտրամաբանական, ավելի անհրատեսական ու անարդյունավետ պայքարի միջոց դժվար էր մտածել: Հանձնաժողովը ժամանեց Պաղեստին, հանդիպեց հարյուրավոր բրիտանացիների և հրեաների, ինչպես նաև այցելության վերջում *որոշ արաբների* հետ:

Արդյունքում Թագավորական հանձնաժողովի վերջնական զեկույցը խիստ հրեամետ և հակաարաբական բնույթ էր կրում: Զեկույցում անօրինական էին նկատվում արաբների դժգոհությունները, իսկ վերջիններիս պահանջները ինքնակառավարման հաստատություններ ստեղծելու վերաբերյալ մանդատի պայմաններում համարվում էին «ոչ գործնական»: Միևնույն ժամանակ առաջարկվում էր Պաղեստինը բաժանել 2 մասի՝ արաբների և հրեաների միջև: Բոլորին է հայտնի հանձնաժողովի վերոհիշյալ զեկույցը Պաղեստինի բաժանման վերաբերյալ: Սակայն հաճախակի է մոռացության մատնվում այն հանգամանքը, որ բրիտանական այդ առաջարկով բնակչության 30%-ը կազմող հրեաներին տրվում էր Պաղեստինի մշակելի հողերի 60%-ը: Հրեաներին էին հատկացվում հյուսիսում՝ Գալիլեան, արևմուտքում՝ հարուստ Էսդրաելոն շրջանը: Իսկ արաբներին՝ վայրի Սամարիայի ու Նեգևի անապատային շրջանները:

Արաբները, վրդովված Բրիտանիայի նման քաղաքականությունից, 1937թ. օգոստոսին պատերազմ հայտարարեցին նրանց և հրեաներին: Հաջ Ամին Հուսեյնին սպառնաց մահապատժի ենթարկել բոլոր այն արաբներին, որոնք կհամաձայնվեն կամ էլ կընդունեն Պաղեստինի բաժանման գաղափարը: Ի պատասխան արաբների կողմից սեպտեմբերին Բրիտանական շրջանային հանձնակատարի (British District Commissioner) սպանությանը, բրիտանական իշխանությունները պատժիչ գործողություններ ձեռնարկեցին Պաղեստինի արաբ բնակչության նկատմամբ: Առաջին հերթին ուժեղացվեցին Պաղեստինում տեղակայված բրիտանական զինվորական ստորաբաժանումները, զենք ու զինամթերք պահելու համար մահապատիժ մտցվեց, արգելվեց Արաբական Բարձրագույն Կոմիտեի գործունեությունը, նրա անդամներից շատերը ձերբակալվեցին և արտաքսվեցին երկրից: Չնայած բրիտանացիների վերոհիշյալ միջոցառումներին ու մարդկային կորուստներին (1936-37թթ. ընթացքում արաբական կողմից զոհվեց 1000 մարդ, իսկ հրեականից՝ 82), արաբները շարունակեցին իրենց պայքարը Պաղեստինում:

1938թ. ապրիլին 18-ամսյա արյունահեղությունից հետո Բրիտանիան ստիպված եղավ մեկ այլ հանձնաժողով ուղարկել Պաղեստին: Այն նորից առաջարկեց Պաղեստինի բաժանումը: Այս անգամ հրեաներին էին հատկացվում մերձափնյա հարթավայրերը, իսկ Գալիլեան ու Նեգևը դրվում էին Բրիտանական մշտական մանդատի



տակ: Ինչ վերաբերում է արաբներին ապա նրանք կտրվում էին Նեգևով Կարմիր ծովից, իրենց տնօրինության տակ պահելով միայն Սամարիան և անապատային Գազայի հատվածը:

Հասկանալի է, որ արաբները թշնամաբար ընդունեցին բրիտանական այդ ծրագիրը ևս: Նրանք մանդատային իշխանություններից պահանջեցին ամբողջովին կասեցնել հրեաների ներգաղթը Պաղեստին և ստեղծել ներկայացուցչական Արաբական կառավարություն: Հրեական գործակալությունը, իր հերթին, մերժեց ներգաղթի սահմանափակման և արաբական կառավարության ստեղծման գաղափարը: Նրանք էլ, իրենց հերթին, ձեռնամուխ եղան զինվորական միավորումների կազմակերպմանը, որոնք պետք է պայքարեին արաբների դեմ: Միևնույն ժամանակ հրեաները սկսեցին անօրինական ներգաղթի իրականացումը, որի արդյունքում 1938-39թթ. ընթացքում շուրջ 35 հազար հրեա մուտք գործեց Պաղեստին՝ առանց մանդատային իշխանությունների թույլտվության:

Պայքարը արաբների և հրեաների միջև գնալով սաստկանում էր: Բրիտանացիների համար անբարենպաստ իրավիճակ էր ստեղծվել Եվրոպայում, երբ Մյունխենին հետևեց Չեխոսլովակիայի գրավումը Հիտլերի կողմից: Անհրաժեշտ էր արագ կարգավորել իրավիճակը Պաղեստինում՝ Սուեզի ջրանցքի պաշտպանությանն ուղղված ռազմավարության իրականացումը առավելագույնս ապահովելու համար:

1939թ. սկզբին Լոնդոնում կազմակերպվեց համաժողով՝ Պաղեստինի արաբների, Հրեական գործակալության և արաբական երկրների մասնակցությամբ: Միանգամայն կանխատեսելի էր, որ համաժողովը չէր կարող որևէ գործնական արդյունք ունենալ: Արաբները պահանջում էին անկախ Արաբական Պաղեստին, ուր ապահովված կլինի հրեա փոքրամասնության բոլոր իրավունքները: Հրեա պատվիրակները հենց սկզբից բացառեցին ամեն մի լուծում, որը կարող էր անգամ նվազեցնել Պաղեստինում Հրեական պետության ստեղծման հնարավորությունը: Հասկանալի է հրեաների նման կեցվածքը՝ տասնյակ միլիոն ֆունտ գումարներ էին ներդրվել Պաղեստինում հողեր գնելու և բնակավայրեր ստեղծելու ուղղությամբ, որոնց թիվը արդեն հասել էր 250-ի: Եթե 1920թ. հրեա և արաբ բնակչության հարաբերակցությունը կազմում էր մեկը տասներկուսի դիմաց, ապա 1939թ. այն արդեն կազմում էր մեկը երկուսի դիմաց՝ կես միլիոնանոց հրեա բնակչությամբ:

1939թ. մայիսին Բրիտանական կառավարությունը հրապարակեց խնդրի կարգավորման իր սեփական տարբերակը: Այդ նշանակալի փաստաթուղթը հայտնի է «Սպիտակ թուղթ» (White Paper) անվամբ: Մանդատին հակառակ, Սպիտակ թուղթը ճանաչում էր անկախ կառավարություն ստեղծելու, հրեական ներգաղթից ու հողային ձեռքբերումներից պաշտպանվելու արաբների իրավունքը: Բրիտանացիները ընդունելով իրենց քաղաքականության «չաշխատող» և

«անարդար» լինելու հանգամանքը, կարծում էին, որ Պաղեստինում Հրեական պետության ստեղծումը կհակասի արաբներին նախկինում իրենց տված խոստումին, քանի որ այն կհանգեցնի արաբական բնակչության, լեզվի և մշակույթի նվաստացմանը: Բրիտանացիները առաջարկում էին 10 տարվա անցումային շրջան, որից հետո Պաղեստինը պետք է դառնար երկազգային պետություն, ուր կառավարությունը կազմված կլիներ արաբներից և հրեաներից այնպիսի ձևով, որ «կպաշտպանվեր յուրաքանչյուր համայնքի կենսական շահերի պաշտպանությունը»: Ներգաղթի կապակցությամբ պաշտոնական Լոնդոնը առաջարկում էր հաջորդ 5 տարիների ընթացքում թույլատրել 75 հազար հրեաների մուտքը Պաղեստին, որից հետո ներգաղթի հետ կապված բոլոր հարցերը պետք է համաձայնեցվեին ուղղակի արաբների հետ: Բրիտանական Բարձրագույն հանձնակատարին իրավունք էր տրվում արգելել Պաղեստինի որոշ հատվածներում հրեաների կողմից հողի գնումը:

«Սպիտակ թուղթը» լուրջ հաջողություն կարելի է համարել արաբների համար: Քսան տարիների ընթացքում առաջին անգամ Բրիտանական կառավարությունը հրապարակավ ընդունեց Պաղեստինում արաբ մեծամասնության իրավունքները: Սակայն բրիտանական այդ փաստաթուղթը ի հայտ եկավ մեծ ուշացումով: Բրիտանացիները ուշ հասկացան հենց իրենց կողմից Պաղեստինում ստեղծված իրավիճակի ողջ բարդությունն ու անդառնալի բացասական հետևանքները:

Եթե հրեաներն ու արաբները ընդունեին բրիտանացիների այդ առաջարկը և համաձայնվեին կառուցել երկազգային պետություն, ապա ոչ միայն հնարավոր կլիներ խուսափել Իսրայելի պետության ստեղծումից հետո տեղի ունեցած արյունահեղությունից ու պատերազմներից, այլև Պաղեստինը, որպես տարածաշրջանի ամենազարգացած և մտավոր հզոր ներուժ ունեցող երկիր և վերածվեր Մերձավոր Արևելքում առաջընթացի և զարգացման աղբյուրի:

1939թ. թերևս հնարավոր էր, որ հրեաները և արաբները ապրեին միասին՝ խաղաղ պայմաններում, եթե երկու կողմերի ղեկավարները պատրաստ լինեին փոխզիջումների դիմել: Սակայն ցավալին այն էր, որ արաբներն ու հրեաները կտրականապես մերժեցին ընդունել բրիտանական առաջարկները, երկուստեք էլ ձգտելով վերահսկողություն հաստատել ամբողջ Պաղեստինի վրա: Արաբ քաղաքական գործիչներից և ոչ մեկը ի վիճակի չեղավ հարցը կարգավորելու այն ժամանակ, երբ արաբները դեռ պահպանում էին երկուսը-մեկի դիմաց քանակական առավելությունը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքով Բրիտանիայի ուշադրությունը կենտրոնացավ եվրոպական ճակատում, իսկ «Սպիտակ թուղթը» այդպես էլ մնաց թղթի վրա՝ չիրագործված:



Չնայած Պաղեստինում արաբների և հրեաների միջև հաստատված հարաբերական խաղաղությանը, գիտակցելով Լոնդոնի կողմից իրենց ծրագրերի նկատմամբ «զսպողական» քաղաքականության անշրջելիության փաստը, սիոնիստները սկսեցին բացահայտ պայքարը Պաղեստինում Բրիտանիայի ներկայության դեմ: Նրանք ձեռնարկեցին զինյալ խմբերի վարժեցումն ու զինումը, զուգահեռաբար ահաբեկչական գործողություններ կազմակերպելով Պաղեստինում բրիտանական բարձրաստիճան պաշտոնյաների դեմ (Բրիտանական նախարար-ռեզիդենտ Լորդ Մոյնի սպանությունը, Պաղեստինի բարձրագույն հանձնակատար Հարոլդ Մակ Մայքլի դեմ մահափորձը):

Պատերազմի ավարտից հետո սիոնիստները կրկնապատկեցին իրենց ջանքերը Պաղեստինը վերահսկելու և այդ նպատակով միջազգային աջակցությունն ապահովելու ուղղությամբ: Նացիստական Գերմանիայի իրականացրած ոճիրը հրեաների նկատմամբ՝ բարենպաստ միջազգային մթնոլորտ ձևավորեց սիոնիստների համար՝ վերջնականապես հրեական պետությունը ստեղծելու համար:

1947թ. փետրվարի 17-ին Բրիտանիայի արտգործնախարար Էռնստ Բեվինը հայտարարեց. «Նորին մեծության կառավարությունը չունի այն ուժը, որպեսզի կարողանա Պաղեստինը հանձնել կամ արաբներին կամ էլ հրեաներին, կամ էլ անգամ բաժանել այն նրանց միջև: Ուստի, մենք հանգեցինք այն եզրակացության, որ միակ հնարավոր տարբերակն է՝ փոխանցել խնդիրը Միացյալ Ազգերի Կազմակերպության իրավասությանը»:[70] 1948թ. մայիսի 15-ին Բրիտանիան հայտնեց Պաղեստինից իր ուժերը դուրս բերելու մտադրության մասին: Մինչև նշված ժամկետը, նորաստեղծ ՄԱԿ-ը ստիպված եղավ ուղիներ փնտրել Պաղեստինի խնդիրը կարգավորելու համար: Այդ պահին միջազգային քաղաքական շրջանակներում 2 տարբերակ էր քննարկվում Պաղեստինի ապագայի վերաբերյալ: Մեկը՝ երկիրը հրեական և արաբական երկու պետությունների բաժանելու առաջարկն էր, որն ընդունելի էր հրեա և անընդունելի՝ արաբ համայնքի համար, իսկ մյուսը, միացյալ պետություն (երկրում բնակվող մահմեդական, քրիստոնյա և հրեա համայնքների հավասար ներկայացուցչությամբ) ստեղծելու առաջարկն էր, որն ընդունվում էր արաբների և մերժվում հրեաների կողմից:

Խնդիրը քննարկելու և առաջարկություններ ներկայացնելու նպատակով 1947թ. մայիսին ՄԱԿ-ը Պաղեստինի հատուկ կոմիտե (UNSCOP) նշանակեց: Պաղեստին այցելության արդյունքում 1947թ. սեպտեմբերի 1-ին Կոմիտեն ներկայացրեց զեկուցագիր, ուր մասնավորապես նշված էր, որ «միայն բաժանման միջոցով հնարավոր է գտնել իրար հակասող այս երկու ազգային ձգտումների (արաբների և հրեաների) ամբողջական արտահայտումը, ինչպես նաև օգնել երկու

[70] Bregman, Ahron & El-Tahri, Jihan. The Fifty Years War. Israel and the Arabs, p.21.

ժողովուրդներին, որպեսզի նրանք իբրև անկախ պետություններ իրենց արժանի տեղը գրավեցնեն միջազգային հանրության և Միացյալ ազգերի ընտանիքում»: 1947թ. նոյեմբերին վերոհիշյալ զեկուցագիրը հանձնվեց ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի քննարկմանը: Նոյեմբերի 29-ին սիոնիստական շարժման առաջնորդները ծավալեցին մի աննախընթաց եռանդուն լոբբիստական գործունեություն, որի արդյունքում ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան 33 կողմ և 13 դեմ ձայներով քվեարկեց Պաղեստինի բաժանման և բրիտանական մանդատի ավարտից հետո Իսրայելի պետության ստեղծման օգտին:[71]

Բաժանման վերաբերյալ 181-րդ բանաձևը նախատեսում էր երկու՝ հրեական և արաբական պետությունների ստեղծում: Պաղեստինի 14.000 ք.կմ. տարածքը տրամադրվում էր հրեական պետությանը /բնակեցված 558.000 հրեաներով և 405.000 արաբներով/, իսկ արաբական պետությանը՝ 11.500 ք.կմ. /804.000 արաբներով և հրեաներով/: Սուրբ տեղերը, ներառյալ Երուսաղեմն ու Բեթղեհեմը կազմելու էին միջազգային գոտի: Նախատեսվում էր տնտեսական միություն ստեղծել երկու պետությունների միջև՝ համատեղ վերահսկելու դրամը, մաքսատները, երկաթգիծն ու փոստային ծառայությունները, ինչպես նաև Հայֆայի և Յաֆֆայի նավահանգիստները:[72]

Քվեարկությունից հետո Արաբական Լիգայի նախագահ Աբդուլ Ռահման Ազզամ Փաշան ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի դահլիճից դուրս գալուց նախազգուշացրեց. «Բաժանման գիծը Պաղեստինում դառնալու է կրակի և արյան գիծ»:[73] Եվ իսկապես, մայիսի 15-ին բրիտանական ուժերի դուրսբերումից և Իսրայելի պետության ստեղծումից հետո բռնկվեց առաջին արաբ-իսրայելական պատերազմը:

Պաղեստինում սիոնիզմին դիմակայելու արաբական կողմի անհաջողության հետևյալ հետաքրքական պատճառաբանությունն է բերում պատմաբան Դևիդ Ֆրոմկինը. «Արաբների ընդդիմությունը հրեական բնակավայրերի նկատմամբ արմատավորված էր էմոցիաների, կրոնի, օտարատյացության, այն բարդ զգացումների մեջ, որոնք պատում են մարդկանց, երբ նորեկների հոսքը փոխում է իրենց միջավայրը: Պաղեստինի արաբները պաշտպանում էին իրենց վտանգված կենսակերպը: Արաբ պատվիրակությունները գործուղվում էին՝ հանդիպելու Ու.Չերչիլի հետ և ճիշտ չէին ներկայացնում սիոնիզմի մերժման իրենց իրական հիմքերը: Օրինակ, հրեական ներգաղթի դեմ իրենց առարկությունը նրանք հիմնավորում էին այն բանով, որ երկիրը ի վիճակի չէ տեղավորելու ավելի շատ բնակիչ: Իսկ Չերչիլը խնդիրն

[71] ԽՍՀՄ-ը նույնպես քվեարկեց բաժանման օգտին:

[72] Gresh, Alain & Vidal. Dominique. A to Z of the Middle East. Zed books, London, 1990, pp.150-151. Տես՝ Հավելված 4:

[73] Bregman, Ahron & El-Tahri, Jihan. The Fifty Years War. Israel and the Arabs, p.26.



ընկալեց այնպես, որ արաբները մերժում են զուտ տնտեսական պատճառներից ելնելով և այնուհետև շարժվեց առաջ՝ ապացուցելու համար, որ նրանց տնտեսական մտավախությունները անհիմն են»:[74]

Սակայն կարծում ենք արաբների անհաջողության հիմնական պատճառն այն էր, որ ի տարբերություն հրեաների, նրանք չունեին ոչ միայն սիոնիզմին հակադրելու համարժեք գաղափարախոսություն ու մշակված ծրագիր, այլև այնքան անհրաժեշտ ազգային միասնություն: Արաբ առաջնորդների միջև գոյություն ունեցող հակասությունները, ինչպես Պաղեստինում /Հաջ Ամին Հուսեյնիի և Ռագաբ Նաշաշիբիի/, այնպես էլ արաբական երկրներում քաղաքական առաջնորդների հետապնդած նպատակների տարբերությունները խոչընդոտում էին Պաղեստինում միասնական և արդյունավետ քաղաքականության իրականացմանը:[75]

*Այսպիսով պաղեստինա-իսրայելական հակամարտությունը դուրս եկավ Պաղեստինի սահմաններից և ընդգրկեց արաբական այլ երկրներն ու գերտերությունները՝ դարձնելով այն միջազգային օրակարգային խնդիր, որը մինչև օրս սպասում է իր կարգավորմանը:*

Դժբախտաբար, Պաղեստինի անմիջական արաբ հարևանները՝ Եգիպտոսը, Սիրիան, Անդրհորդանանը տարբեր մոտեցումներ ունեին Պաղեստինի ապագա կարգավիճակի նկատմամբ: Սիրիայի համար Պաղեստինի կորուստը, Ալեքսանդրեթի սանջակի և Լիբանանի հետ մեկտեղ, արդեն իսկ նշված ռազմաքաղաքական և տնտեսական վտանգներից բացի, «Բիլադ աշ-Շամի» մի մասի հերթական կորուստն էր նշանակում: Այդ իսկ պատճառով, ի տարբերություն արաբական մյուս երկրների, Սիրիան հույժ ցավագին արձագանքեց Պաղեստինի կորուստին: Վերոհիշյալ հանգամանքը լուրջ ազդեցություն ունեցավ սիրիական քաղաքական մտքի ձևավորման և հետագա զարգացման վրա:

Անդրհորդանանի թագավոր Աբդալլահը փորձում էր «հարմար առիթը» օգտագործել՝ Պաղեստինի հաշվին իր պետության տարածքն ընդլայնելու համար: Այդ նպատակով առաջ էր քաշում «Մեծ Սիրիայի» ստեղծման գաղափարը:

Եգիպտոսի քաղաքական օրակարգում հիմնական խնդիրն էր դարձել բրիտանական ներկայության դեմ պայքարը: Պաղեստինի հարցը առաջնային հնչեղություն չուներ, անգամ Նասերի իշխանության սկզբնական շրջանում փորձեր կատարվեցին ստանալու հրեական աջակցությունը բրիտանացիների դուրսբերումը երկրից ապահովելու համար:

[74] Fromkin, David. A Peace to End all Peace. The Fall of the Ottoman Empire and the Creation of the Modern Middle East, p. 523.

[75] Այսպես, օրինակ, Մեքքայի շերիֆ Հուսեյնը շարունակ հավատում էր բրիտանական այն հավաստիացումներին, որ հրեական բնակավայրերը ոչ մի կերպ չեն սահմանափակի արաբների քաղաքական և տնտեսական ազատությունը:

Իր հերթին, Իրաքի ղեկավարությունը հավակնում էր սեփական հովանու ներքո համախմբել «Բարեբեր մահիկի» բոլոր երկրները, այդ թվում և Պաղեստինը:

Բնական էր, որ այս բոլորը անհնար էին դարձնում համաարաբական դարձած՝ Պաղեստինի հարցում ընդհանուր քաղաքականության մշակումն ու իրականացումը: Սակայն դա բնավ չէր նշանակում, որ այդ երկրները ոչինչ չէին անում Պաղեստինում սիոնիստական քաղաքականությանը հակազդելու համար: Վերջին հաշվով, արաբ իշխանավորները ստիպված էին արձագանքել իրենց երկրներում հասարակության լայն զանգվածների տրամադրություններին, որոնք բողոքի հզոր ալիքներ էին բարձրացնում՝ Պաղեստինի «հրեականացման» դեմ և նրա արաբ ժողովրդի պաշտպանության օգտին:

Մենք արդեն նշել էինք, որ 1936թ. իրադրության սրումը Պաղեստինում էլ ավելի ամրապնդեց արաբական երկրներում «պաղեստինամետ» և ծայրահեղ ազգայնական ուժերի դիրքերը, որոնք «Պաղեստինի» հարցը աստիճանաբար սկսեցին ծառայեցնել իրենց սեփական քաղաքական շահերին: Նշված ժամանակաշրջանում Սիրիայում քաղաքական գրեթե բոլոր ուժերը բացառում էին Պաղեստինում հրեական «ազգային տուն» ստեղծելու հնարավորությունը: Միգուցե որոշ քաղաքական գործիչներ «կարող էին ընդունել կամ հանդուրժել ընդարձակ դաշնության մեջ Իսրայելյան սահմանափակ ինքնիշխանության գաղափարը կամ ինքնակառավարումը Պաղեստինի մի փոքր մասում, սակայն նրանք բոլորն էլ մերժում էին Պաղեստինում ամբողջապես անկախ հրեական միավորի ստեղծումը»:[76]

Սիրիայում «Ազգային դաշինքը» և հատկապես «Իսթիկլալ» խմբակցությունը, պահանջում էին «Արաբական Պաղեստին», որը պետք է համաարաբական միասնության մաս կազմեր: Այս խմբակցությունը հետագայում պետք է դառնար ամենահզորը սիրիական քաղաքական դաշտում և Սիրիայի առաջին նախագահ Շուքրի ալ-Քուվաթլիի իշխանության հենարանը:

Իրադարձությունները Պաղեստինում ստիպեցին արաբական աշխարհի ղեկավարներին քայլեր ձեռնարկել, որքանով որ թույլ էին տալիս նրանց համեստ կարողությունները, Պաղեստինում իրավիճակը կայունացնելու, հրեական ներգաղթը կասեցնելու և Բրիտանական իշխանությունների քաղաքականությունը փոփոխության ենթարկելու ուղղությամբ:

Սիրիայում արաբականության՝ արաբական աշխարհի միասնականությանն ուղղված քաղաքական գիծը առավել արտահայտված էր: Եվ դա միանգամայն բացատրելի է: Արաբականության քարոզչությունը հնարավորություն էր տալիս

[76] Maoz, Moshe. Syria and Israel. From War to Peacemaking, pp.12-13.



միավորելու բազմադեմ երկրի տարբեր քաղաքական ուժերը միասնական գաղափարական հենքի վրա, ինչպես նաև հայցել արաբական այլ պետությունների աջակցությունը՝ եթե ոչ «Մեծ Սիրիայի» ստեղծման գործում, ապա գոնե աշխարհագրական այդ տարածքների արաբական ինքնության պահպանման համար՝ Լիբանանում, Պաղեստինում և այլն: Արաբիզմը ընձեռում էր այդ հնարավորությունը:

Աստիճանաբար մեծ թվով սիրիացիներ ներքաշվում էին Պաղեստինում սիոնիզմի դեմ պայքարի մեջ: Մենք արդեն նշել ենք, որ ի պաշտպանություն պաղեստինցիների պայքարի, Սիրիայում տեղի էին ունենում ցույցեր, գործադուլներ, հանգանակվում էին նյութական և ֆինանսական միջոցներ: Սիրիացիները իրենց ակտիվ գործնական մասնակցությունն էին ցուցաբերում նաև Պաղեստինում հրեաների դեմ զինված պայքարի կազմակերպման և իրականացման գործում:

Այսպես, սիրիացի Ֆավզի ալ-Քավուքջին ղեկավարեց պաղեստինցիների զինված պայքարը բրիտանացիների և հրեաների դեմ:[77] Նա իրեն հռչակեց «Հարավային Սիրիայում Արաբական հեղափոխության գլխավոր հրամանատար»: Փաստորեն, Պաղեստինում Ֆ. ալ-Քավուքջիի մասնակցությունը սիրիական իշխանություններին անմիջականորեն ներքաշեց Պաղեստինյան խնդրի մեջ՝ Ֆրանսիական մանդատի պայմաններում: Սիրիացի կամավորները՝ հիմնականում աղքատ դասակարգերից, թեև նրանց մեջ կային նաև Հոմսի որոշ ազնվական ընտանիքների ներկայացուցիչներ, միացան Ֆ.Քավուքջիին և պաղեստինյան ապստամբության մեջ զբաղեցրեցին ղեկավար դիրքեր:[78]

Պաղեստինյան ապստամբությանը ակտիվորեն աջակցող և մասնակցող սիրիացիներից կարելի է առանձնացնել Շեյխ Իզզ ալ-Դին ալ-Ղասամին, որը սիրիացի մահմեդական ծայրահեղական էր և 1935թ. գլխավորում էր պաղեստինյան ջոկատների պայքարը ՀայՖայի մոտակայքում, ինչպես նաև Շեյխ Մուհամմադ ալ-Աշմարին, որը 1936-39թթ. ապստամբության ընթացքում ղեկավարում էր պաղեստինյան ջոկատներից մեկը:[79]

Սիրիական ռազմական, նյութական և քարոզչական աջակցությունը Պաղեստինին համակարգվում էր Դամասկոսում ստեղծված «Պաղեստինի պաշտպանության կոմիտեի» միջոցով: Հրեական ապրանքների բոյկոտից բացի, այս կոմիտեն 1937թ.

[77] Ֆ. ալ-Քավուքջին 1925թ. սիրիական ապստամբության հերոսներից էր և սիրիական բանակի նախկին սպա: Կասեցնելով իր ծառայությունը Իրաքյան բանակում նա վերադարձավ Սիրիա և կամավորների գունդ հավաքագրելով անցավ Պաղեստին: Նրա գործունեության մասին մանրամասն տես՝ خيرية قومية. فلسطين فى مذكرات فوزى الكاوكجى. بيروت، 1975 Ազգային բարեգործություն /խմբ./ Պաղեստինը Ֆավզի Քավուքջիի հիշողություններում, Բեյրութ, 1975:

[78] Khoury, S. Philip. Syria and the French Mandate: The Politics of Arab Nationalism, 1920-1945, pp.546-547.

[79] Maoz, Moshe. Syria and Israel. From War to Peacemaking, p.8.

Բլուդանում /Արևելյան Սիրիա/ կազմակերպեց Արաբական համաժողով, որի ընթացքում ընդունվեցին ծայրահեղ հակասիոնիստական բանաձևեր և քայլեր մշակվեցին Պաղեստինի ժողովրդի պայքարին աջակցելու ուղղությամբ:[80]

Սիրիական քաղաքական դաշտում՝ «Ազգային Դաշինքի» ներսում Պաղեստինի հարցի նկատմամբ երկու մոտեցում էր ձևավորվել՝ Ջ.Մարդամի և Շ.Քուվաթլիի: Առաջինը ավելի իրատեսական մոտեցում էր որդեգրել Պաղեստինի հարցում: Նա զգուշանում էր հրապարակայնորեն և պաշտոնապես պաշտպանելու Արաբական ապստամբությունը Պաղեստինում, փորձելով կոծկել սիրիական աջակցությունը ապստամբներին և վերջ դնել հակաիրեական գործողություններին սիրիական քաղաքներում: Ջ.Մարդամի նման կեցվածքը կարելի է բացատրել նրանով, որ նա մտահոգված էր հիմնականում այն հանգամանքից, որ ապստամբությունը կարող է վտանգել Ֆրանսիայի հետ երկկողմ համաձայնագրի շուրջ ընթացող բանակցությունները և որ Սիրիայի աջակցությունը ապստամբներին կարող է զրկել սիրիացիներին անգլիացիների հնարավոր օժանդակությունից՝ Սիրիայի անկախության ձեռքբերման հարցում: 1937թ. հոկտեմբերին, գտնվելով Փարիզում, Ջ.Մարդամը հրապարակայնորեն քննադատեց Պաղեստինում տեղի ունեցող «ահաբեկչությունը» և նշել, որ «սիրիական կառավարությունը Բրիտանիայի և Ֆրանսիայի իշխանությունների հետ համատեղ քայլեր է ձեռնարկում զինամթերքի և ապստամբների՝ Պաղեստին մուտքը արգելափակելու ուղղությամբ»:[81] Ջ. Մարդամը 1936-37թթ. հանդիպումներ է ունեցել Խ.Վայցմանի հետ՝ սիոնիստական շարժման աջակցությունը հայցելու Ֆրանսիայի վարչապետ Լեոն Բլյումի հետ բանակցություններում:[82]

Պաղեստինում Արաբական ապստամբության աջակցելու հարցում սիրիական վերնախավի որոշակի «վերապահումները» կարելի է վերագրել նաև առկա տնտեսական դրդապատճառներին: Ապստամբության շարունակությունը շոշափելի տնտեսական կորուստներ էր պատճառում Սիրիայի գործարարներին, քանի որ Պաղեստինը նաև սիրիական ապրանքների սպառման հիմնական շուկաներից մեկն էր:

Պաղեստինի հարցում Ջ.Մարդամի վարչակազմի վերոհիշյալ քաղաքականությունը ընդդիմացավ Շ.Քուվաթլին, որը 1938թ. հրաժարական տվեց: Այս քայլի շնորհիվ Շ.Քուվաթլին ժողովրդի կողմից

[80]Բլուդանում կայացած համաժողովի մանրամասները տես՝ Kedourie, Elie. The Bludan Congress on Palestine, 1937. Middle Eastern Studies, vol.17, no.1, January 1981, pp.107-125; Khoury, S. Philip. Syria and the French Mandate: The Politics of Arab Nationalism, 1920-1945. Princeton, New Jersey: Princeton University Press, 1987. pp.554-555.

[81] P.S.Khoury. Divided Loyalties? Syria and the Question of Palestine, 1919-1939, Middle Eastern Studies, 21 (1985), pp.338-340.

[82] Maoz, Moshe. Syria and Israel. From War to Peacemaking, p.9.



ճանաչվեց որպես Պաղեստինի ժողովրդի դատի և համաարաբական պայքարի առաջնորդ:

1939թ. Պաղեստինում ապստամբության պարտության և Սիրիայում մանդատային իշխանության կողմից պաղեստինամետ բոլոր ներակառուցվածքների ոչնչացման պայմաններում «Ազգային Դաշինքի» նոր ղեկավար դարձավ Շ.Քուվաթլին: Հետագայում Սիրիայից Ալեքսանդրեթի սանջակի անջատումից հետո Ջ.Մարդամը ընդհանրապես հեղինակազրկվեց, իսկ 1943թ. ազգային ընտրությունների արդյունքում Սիրիայի առաջին նախագահը դարձավ Շ.Քուվաթլին, որը մտադրված էր շարունակել պայքարը Պաղեստինում սիոնիստական ծրագրերի իրականացման դեմ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, երբ իմպերիալիստական մեծ պետությունների միջև դիվանագիտական սաստիկ պայքար էր ծավալվել Սիրիայի շուրջ, երկրի ներսում դրությունը աստիճանաբար լարվում էր: Սիրիայում մտցվել էր արտակարգ դրություն, գործում էին ռազմական օրենքներ: Ֆրանսիայի կապիտուլյացիան և Վիշիի կառավարությունը նոր դժվարություններ առաջ բերեցին Սիրիայի համար: Զինվորական բռնապետական վարչակարգի հաստատմամբ, դեմոկրատական ազատությունների սահմանափակումը և ազգային հայրենասիրական ուժերի գործունեության արգելքը շիկացրել էին քաղաքական մթնոլորտը: Չդիմանալով քաղցին և զրկանքներին՝ սիրիական ժողովուրդը ոտքի ելավ: 1941թ. փետրվարի վերջին համընդհանուր գործադուլ սկսվեց:1942-43թթ. Սիրիայում տեղի ունեցան հակաֆրանսիական ելույթներ: Որոշ տատանումներից հետո Ֆրանսիան հարկադրված էր զիջել: 1943թ. մարտի 25-ին վերականգնվեց 1930թ. մարտի 14-ի Սահմանադրությունը, իսկ 1943թ. դեկտեմբերի 22-ին Փարիզը ստորագրեց համաձայնագրեր Լիբանանի և Սիրիայի հետ՝ այդ երկու երկրներին փոխանցելով կառավարման մի շարք գործառույթներ, իր ձեռքում պահելով ամենակարևորը՝ ազգային բանակը:

1946թ. ապրիլի 17-ին Ֆրանսիական և անգլիական զորքերի էվակուացմամբ ավարտվեց անկախության համար սիրիական ժողովրդի մղված պայքարը:[83]

Ինչպես արդեն նշել ենք, Պաղեստինում սիոնիստական քաղաքականությանը արդյունավետ դիմակայելուն խոչընդոտում էին արաբական երկրների միջև եղած հակասությունները: Իրաքն ու Հորդանանը Դամասկոսի կողմից մշտապես դիտարկվել են որպես մրցակից երկրներ: Իրաքի և Եգիպտոսի միջև շարունակաբար պայքար է ընթացել արաբական աշխարհում առաջնության համար:

[83]Սիրիայի պատմության այդ ժամանակաշրջանի մասին մանրամասն տես՝ Ն.Հ.Հովհաննիսյան, Հ.Ս.Սարգսյան. Սիրիան անկախության համար մղված պայքարում (1917-1946թթ.), ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1975:

Անվիճելի է այն փաստը, որ Հաշիմյանների ախորժակը՝ Պաղեստինը իրենց բազավորության մեջ ներառելու ուղղությամբ, երբեմն ավելի շատ անհանգստություն է պատճառել Սիրիային, քան իրեական ներգաղթն ու սիոնիստական ծրագրերի իրականացումը: Արաբական երկրների համար Պաղեստինի հարցը դարձավ այն փորձաքարը, որին բախվեցին արաբ առաջնորդների անձնական հավակնություններն ու սեփական շահերը:

Ի պաշտպանություն վերոհիշյալ տեսակետի, բերենք միայն հետևյալ օրինակը. թեև Պաղեստինի խնդիրը լայնորեն քննարկվել է 1944թ. սեպտեմբերին Ալեքսանդրիայում կայացած արաբական խորհրդակցության և 1945թ. Կահիրեում՝ Արաբական լիգայի ստեղծման մասին դաշնագրի ստորագրման ժամանակ, այնուամենայնիվ, արաբ առաջնորդները անդրադարձել են այդ հարցին ոչ թե Պաղեստինի իրեական և արաբական համայնքների միջև եղած ներքաղաքական անհամաձայնությունները հարթելու կամ Պաղեստինի անկախ պետություն ստեղծելու տեսանկյունից, այլ Անդրհորդանանի և Իրաքի կողմից համապատասխանաբար ներկայացված «Մեծ Սիրիայի» և «Բարեբեր մահիկի» ծրագրերի իրականացման ենթատեքստում: Ալեքսանդրիայում ընդունված հատուկ բանաձևում խոսքը փաստորեն վերաբերում էր նրան, թե որ երկրի կազմի մեջ կմտնի Պաղեստինը անգլիացիների հեռանալուց հետո:[84] Այս հանգամանքը ճակատագրական նշանակություն ունեցավ Պաղեստինի համար: Պատերազմի արդյունքում Անդրհորդանանը Իսրայելի հետ միասին բաժանեց պաղեստինցիներին տրամադրված Արևմտյան ափը, իսկ Եգիպտոսը վերահսկողություն հաստատեց Գազայի հատվածի վրա:

Եթե արաբ ղեկավարները, մի կողմ դնելով սեփական շահերը, վճռական քայլեր ձեռնարկեին Պաղեստինի արաբական պետության ստեղծման օգտին, անտարակույս, միանգամայն այլ կլիներ ողջ Մերձավոր Արևելքի քաղաքական զարգացման հետագա ընթացքը:[85]

---

[84] Григорян Г.М. Позиция Сирии в ближневосточном конфликте, с.14.

[85] Ճիշտ է 1948թ. սեպտեմբերի 22-ին հայտարարվեց Գազայում «ամբողջ Պաղեստինի կառավարության» ստեղծման մասին՝ Ահմեդ Հիլմի փաշայի գլխավորությամբ, սակայն անգլիական ճնշման տակ արաբական երկրները ձեռնպահ մնացին այն ճանաչելուց:



# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

## ՍԻՐԻԱՆ ԱՐԱԲ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՀՈՐՁԱՆՈՒՏՈՒՄ (1948-1967թթ.)

### *ՍԻՐԻԱՅԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1948թ. ԱՌԱՋԻՆ ԱՐԱԲ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԵՎ ՆՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ*

Անվանի սիրիագետ Պ. Սիլը 1940-50-ական թթ. որակում է որպես «Սիրիայի համար պայքարի» ժամանակաշրջան:[86] Հենց այդ ժամանակ էր, երբ դրսից հրահրվող ներքին անկայունությունն ու երկրի աշխարհագրական մասնատումը գաղութային ուժերի կողմից Սիրիան վերածել էին «փաստորեն գոյություն չունեցող մի միավորի»:[87]

Մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը Ազգային Դաշինքը /Քութլա Վատանիյա/ Սիրիայի քաղաքական կյանքում դեռևս շարունակում էր զբաղեցնել մենաշնորհային դիրք: 1947 թվականի գարնանը Դաշինքը վերափոխվեց Ազգային կուսակցության /Հիզբ ալ-Վատանի/, որը ղեկավարում էին Շ.Քուվաթլին, Ջ. Մարդամը, Ֆ.Խուրին և այլք: Իսկ 1948թ. օգոստոսին անջատված ընդդիմադիրների խումբը հիմնեց Ժողովրդական կուսակցությունը /Հիզբ ալ-Շաաբ/, որը հիմնականում հակադրվում էր Շ.Քուվաթլիին: Նրանց բաժանման հիմքում ընկած էին ավելի շուտ անձնական, քան քաղաքական հակասությունները:

1947թ. ապրիլին Սիրիայի քաղաքական կյանքում տեղի ունեցավ կարևորագույն իրադարձություն, որը գալիք տասնամյակների ընթացքում պետք է որոշեր նրա ներքին և արտաքին քաղաքական կյանքի բոլոր զարգացումները: «Բաաս» կուսակցության հիմնադիր առաջին համագումարով սկիզբ դրվեց մինչ օրս Սիրիայում իշխող քաղաքական ուժի պատմությանը:

Սիրիայի քաղաքական առաջնորդների համար Պաղեստինի խնդիրը ավելի շատ ներքին կայունությանը սպառնացող քաղաքական, սոցիալական և տնտեսական բազում խնդիրներից շեղելու միջոց էր: Պաղեստինի ժողովրդի պայքարին աջակցությունը ու հակասիոնիզմը համահունչ էին բնակչության լայն զանգվածների տրամադրություններին և այս կերպ նաև երկրի ղեկավարները ամրապնդում էին սեփական քաղաքական դիրքերը: Սակայն նորանկախ Սիրիան չուներ ոչ նյութական, ոչ էլ ռազմական կարողություն՝ Պաղեստինի հարցում լուրջ

---

[86] Patrick Seale.The Struggle for Syria.A study of Post-War Arab Politics. 1945-1958, pp. 125.

[87] W.Quandt.Ed.,The Middle East, Ten Years after Camp-David, p.331.

գործնական միջամտություն իրականացնելու համար:

Սիրիայի դիրքորոշումը Պաղեստինի հարցում հստակ էր՝ Դամասկոսը կտրականապես մերժեց ինչպես Ազգերի Լիգայի որոշումը Պաղեստինում անգլիական մանդատի հաստատման վերաբերյալ, այնպես էլ Պաղեստինի բաժանման ՄԱԿ-ի ծրագիրը: Եվ դա միանգամայն հասկանալի էր. Դամասկոսը ոչ միայն կորցնում էր իր պատմաաշխարհագրական տարածքի անբաժան մասը հանդիսացող Պաղեստինը, այլև հայտնվել էր իր հակառակորդ՝ Հաշիմյան Անդրհորդանանի կողմից այդ տարածքները բռնազավթելու հնարավորության առջև: Դամասկոսը մտահոգված էր, որ Աբդալլահ թագավորի կողմից հռչակված «Մեծ Սիրիայի» ստեղծումը կսպառնա նաև իր գոյությանը, որպես ինքնիշխան երկրի: Հարևանությամբ ունենալով մեկ այլ մրցակից՝ Իրաքը, Դամասկոսին այլ բան չէր մնում, քան ապավինել արաբական աշխարհի ամենահարուստ և ամենամեծ երկրի՝ Եգիպտոսի աջակցությանն ու բարեկամությանը: Վերջինիս համար Անդրհորդանանն ու Իրաքը նույնպես մրցակիցներ էին: Միջարաբական հարցերում Սիրիան հանդես էր գալիս Եգիպտոսի կողմից՝ պաշտպանելով նրա դիրքորոշումները:

Այսպես, 1948թ. առաջին արաբ-իսրայելական պատերազմին մասնակցելու Դամասկոսի որոշումը ընդունվեց միմիայն հետևելով Կահիրեին:

Եգիպտոսի վարչապետ Մահմուդ Ֆահմի Ալ-Նուկրաշի փաշան առարկում էր նորաստեղծ Իսրայելի վրա հարձակման գաղափարին:[88] Նրա համոզմամբ Եգիպտոսի նպատակը կայանում էր ոչ թե սիոնիստների դեմ պատերազմ վարելու, այլ Սուեզի ջրանցքից Բրիտանիայի հեռանալն ապահովելու մեջ: Այնուհետև, երբ Իրաքն ու Հորդանանը խոստացան իրենց ռազմական միջամտությունը, Եգիպտոսի Ֆարուկ թագավորը անհանգստանալով բրիտանացիների դաշնակից Հաշիմյանների ծավալման հնարավորությունից, նույնպես պատերազմին մասնակցելու հրաման տվեց իր բանակին:[89] Սիրիան առանց խանդավառության հետևեց Եգիպտոսի օրինակին:

Հետաքրքրական է, որ արաբ ղեկավարները պատերազմից առաջ

[88] Արաբական Բարձրագույն Կոմիտեի նախագահ և աքսորում պաղեստինյան գլխավոր խոսնակ Հաջ Ամին Հուսեյնին նույնպես արաբական բանակների Պաղեստին ներխուժման դեմ էր արտահայտվում: Նա չէր թաքցնում իր այն մտավախությունը, որ Պաղեստին ներխուժելու արդյունքում Հորդանանի թագավոր Աբդալլահը կօգտագործի առիթը պաղեստինյան տարածքներն ու Երուսաղեմը գրավելու և իր թագավորությանը բռնակցելու համար:

[89] Բրիտանական խորհրդով և թոջալերմամբ, վեց հազարանոց անդրհորդանանյան լեգեոնը պետք է ներխուժեր Պաղեստին և հրեաների հետ գաղտնի պայմանավորվածության համաձայն, գրավեր պաղեստինցիների համար բաժանման ծրագրով նախատեսված տարածքները: Safran, Nadav. From War to War.The Arab-Israeli Confrontation 1948-1967, p.29.



անհանգստանում էին ոչ թե պատերազմին իրենց բանակների բացարձակ անպատրաստ լինելու հանգամանքից, այլ Պաղեստինի տարածքների նկատմամբ հենց «եղբայրական» արաբական երկրների հնարավոր ոտնձգություններից: Այսպես, Պաղեստին ներխուժելու կողմնակից Ազզամ փաշան միակն էր, որ շարունակաբար ահազանգ էր հնչեցնում արաբական կողմի դանդաղկոտության և անպատրաստ լինելու իրողության առթիվ: Նրա օգնականի խոսքերով, արաբները «կարծում էին, որ հրեաները արաբական կանոնավոր բանակները տեսնելուն պես պետք է անմիջապես փախուստի դիմեն»:[90] Ներխուժումից ընդամենը մեկ շաբաթ առաջ միայն եգիպտական բանակի ստորաբաժանումները պատերազմին նախապատրաստվելու հրաման ստացան: Ըստ, եգիպտացի բարձրաստիճան զինվորականներից մեկի, «բանակը ոչ բարոյական, ոչ էլ ռազմական առումներով» պատրաստ չէր պատերազմական գործողությունների: Պատերազմին մասնակցող ամենամեծ՝ 15 հազարանոց եգիպտական բանակը չուներ մարտական գործողությունների անհրաժեշտ փորձ ու կարողություններ:

Անմխիթար էր նաև սիրիական բանակի վիճակը: Սիրիայում և Լիբանանում ԽՍՀՄ դեսպան Դ.Սոլոդի գաղտնի հաղորդագրության մեջ ասվում է, որ երբ Սիրիայի նախագահ Շուքրի ալ-Քուվաթլին իր մոտ է կանչում սիրիական զինված ուժերի սպայակույտի հրամանատար գեներալ Աբդալլահ ալ-Ատֆեհին և հարցնում թե ինչքան զինվոր կարող է տրամադրել սիրիական բանակը Պաղեստին ուղարկելու համար, վերջինս պատասխանում է, որ առկա 15.000-անոց բանակից միայն հազար զինվոր:[91]

Իսրայելի պետության հռչակման հաջորդ օրը՝ 1948թ. մայիսի 15-ի առավոտյան, Անդրհորդանանի, Եգիպտոսի, Սիրիայի բանակները, լիբանանյան և իրաքյան ռազմական ստորաբաժանումների մասնակցությամբ մտան Պաղեստին:

Առաջին արաբ-իսրայելական պատերազմը բազմաթիվ ընդմիջումներով և փուլերով պաշտոնապես տևեց 8 ամիս՝ ներխուժումից մինչև եգիպտացիների հետ զինադադարի կնքումը:

[90] Կարապետյան, Ռուբեն. Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն. Ուսումնական ձեռնարկ ԲՈՒՀ-երի ուսանողների համար,էջ 160:
Արաբ-իսրայելական առաջին պատերազմի վերաբերյալ տես Kimche, Jon. Seven Fallen Pillars. New York: Praeger, 1953; O'Ballance, Edgar. The Arab-Israeli War, 1948. New York, 1957; Safran, Nadav. From War to War.: The Arab-Israeli Confrontation, 1948-1967. New York, 1969; Rubin, Barry. The Arab States and the Palestine Conflict. Syracuse, N.Y., Syracuse University Press, 1981; Pablo De Azcarate. Mission in Palestine, 1948-1952. Washington, 1966.

[91] Ближневосточный конфликт. 1947-1956. Из документов архива внешней политики Российской Федерации, с. 40. Այլ աղբյուրներ Պաղեստինում սիրիական բանակի թվակազմի վերաբերյալ նշում են երեք հազար զինվոր: Maoz, Moshe. Syria and Israel. From War to Peacemaking, p.19.

Առանց խորանալու պատերազմի մանրամասների մեջ, նշենք միայն, որ Իսրայելը հաղթանակած դուրս եկավ: Նա իր վերահսկողության տակ առավ հավելյալ տարածքներ, որոնք բաժանման ծրագրով տրամադրվել էին Պաղեստինի արաբներին: Առաջին զինադադարից հետո Իսրայելին հաջողվեց մեծ քանակությամբ զենք ստանալ Չեխոսլովակիայից (Զատեկ օդային բազայից):[92] Կարծում ենք, որ գլխավորապես վերոնշյալ հանգամանքի շնորհիվ, Իսրայելն ի վիճակի եղավ ոչ միայն շարունակել, այլև հաղթել այդ պատերազմում:

Արաբական երկրները կրեցին երկրորդ պարտությունը՝ այս անգամ ռազմի դաշտում:[93] Անգամ Անդրհորդանանի կողմից Արևմտյան Ափի և Երուսաղեմի արևմտյան մասի, իսկ Եգիպտոսի կողմից՝ Գազայի հատվածի վերահսկողությունը չէր կարող փոխել արաբական աշխարհը պատած համընդհանուր հուսահատության մթնոլորտը:

Պաղեստինի արաբները պատերազմից հետո փորձեցին փրկել դրությունը՝ Պաղեստինի պետության ստեղծման հարցը դնելով Արաբական լիգայի խորհրդի քննարկմանը: Խորհրդի անդամները, քննարկելով Իսրայելի կողմից դեռևս չգրավված Արևմտյան ափում և Գազայի հատվածում Պաղեստինյան պետության ստեղծման հնարավորությունները, տեղիք տալով Հորդանանի թագավոր Աբդալլահի ճնշմանը, այդպես էլ որևէ հստակ որոշման չհանգեցին: Սիրիան, Եգիպտոսը և Իրաքը՝ հոգնած պատերազմից, չցանկացան հավելյալ հակամարտության մեջ մտնել, այս անգամ արաբական երկրի՝ Անդրհորդանանի հետ: Այսպիսով, շուրջ 700-800 հազար պաղեստինցիներ ապաստան գտնելով հարևան արաբական երկրներում, դարձան փախստականներ, զրկվելով մինչ օրս սեփական պետություն ունենալու հնարավորությունից:

Ինչ վերաբերում է Սիրիային, ապա պատերազմի ավարտին վերջինիս վերահսկողության տակ մնացած ՄԱԿ-ի բաժանման ծրագրով Իսրայելին տրամադրված երեք փոքր հողակտորները՝ 1949թ. հուլիսի 20-ին Իսրայելի հետ ստորագրված Ընդհանուր զինադադարի համաձայնագրի համաձայն, վերածվեցին ապառազմականացված գոտիների՝ ՄԱԿ-ի համապատասխան հանձնաժողովի /Mixed Armistice Commission/ վերահսկողության տակ:[94] Այդ տարածքների կարգավիճակի

[92] Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ "սոցիալիստական" Չեխոսլովակիան առանց Մոսկվայի ի վիճակի չէր ինքնուրույն որոշումներ կայացնելու, հատկապես արտաքին քաղաքական նման կարևոր հարցում, ապա կարելի է ասել, որ ԽՍՀՄ-ն անուղղակիորեն վճռեց առաջին արաբ-իսրայելական պատերազմի բախտը:

[93] Առաջինը դիվանագիտական պարտությունն էր՝ Պաղեստինի բաժանման թույլատրումն ու Իսրայելի պետության ստեղծումը:

[94] Համաձայնագրի տեքստը տես՝ http://www.yale.edu/lawweb/avalon/mideast/arm04.htm կայքէջի վրա:



անորոշությունը հաջորդ տարիներին Սիրիայի և Իսրայելի միջև պարբերական բախումների և լարվածության աղբյուր դարձավ:

Առաջին արաբ-իսրայելական պատերազմը ակնհայտորեն իմաստազրկեց արաբիզմի քարոզչությունը: Խորը հակասությունների մեջ գտնվող և պառակտված արաբական աշխարհը ի զորու չեղավ ոչ միայն միասնաբար պատերազմելու, այլև համախմբվելու մեկ գաղափարախոսության շուրջ: Յուրաքանչյուր արաբական երկիր հետապնդում էր իր սեփական նպատակները, ուստի որոշ պատմաբանների կողմից այդ ժամանակաշրջանում արաբական աշխարհում համաարաբականության /պանարաբիզմի/ գերակայության մասին պնդումները, մեր կարծիքով, չեն համապատասխանում իրականությանը:

Ինչ վերաբերում է Սիրիային, ապա նրա նախագահ Շ.Քուվաթլին չէր կարող հայտարարել ժողովրդին, որ ինքը համարում է Սիրիան առաջնային կամ էլ, որ Սիրիան չափազանց թույլ է Պաղեստինը փրկելու համար: Իրականում՝ սիրիական անկախության համար մղված պայքարի այդ առաջամարտիկը, թեև ողջ կյանքում ջերմեռանդորեն քարոզում էր արաբականության և արաբական միասնության գաղափարները ու երդվել էր «սիրիական դրոշը երբեք Արաբական ազգից վեր չբարձրացնել»,[95] այնուամենայնիվ, դարձավ Սիրիայի «հանրապետականության» խորհրդանիշը և սկիզբ դրեց «սիրիանիզմի» գաղափարախոսության տարածմանը երկրում:

## *ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԻԶԲԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ: ՍԻՐԻԱՅԻ ԵՎ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԻԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ՄԻԱՑՅԱԼ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ (1958-1961թթ.)*

Եթե Սիրիայի քաղաքական պատմության՝ անկախության ձեռք բերումից մինչև երկրում Հաֆեզ Ասադի իշխանության հաստատումը՝ 1970թ. ընկած ժամանակահատվածը բաժանելու լինենք փուլերի ապա 1945-1958թվականները կարելի է առանձնացնել որպես առաջին շրջան: 1958թ. փետրվարին Եգիպտոսի հետ Սիրիայի միավորումով սկիզբ դրվեց երկրորդ շրջանին, որը տևեց մինչև միավորման փլուզումը՝ 1961թվականը: Երրորդ շրջանն ընդգրկում է 1961-1970թթ. փոթորկալից ինը տարիները, երբ Եգիպտոսից անջատվելուց հետո միայն տարածաշրջանային քաղաքականության օրակարգում դրվեց Սիրիան այլ պետությունների ազդեցության ոլորտից հանելու և «ինքնուրույն» պետություն դարձնելու հարցը:

[95] عبداللہ فكرى الخانى. جهاد شكرى القوتلى فى سبيل الأستقلال والوحدة. لبنان دار النفايس، 2003، ص11.; Աբդալլահ Ֆիքրի ալ-Խանի. Շուքրի ալ-Քուվաթլիի Ջիհադը անկախության և միասնության ճանապարհին, Լիբանան, Դար ալ-Նաֆաիս, 2003, էջ 11:

Սիրիական պաշտոնական պատմագրության մեջ այդ առաջին փուլը /1945-1958թթ./ հիշատակվում է որպես իրար հաջորդող «ազգայնական վարչակարգերի» ժամանակաշրջան, որ ներկայացնում էր «բուրժուական» ժողովրդավարության կամ էլ զինվորական մենիշխանության տարբեր ձևեր:[96] Այդ 13 տարիների ընթացքում, սիրիացիներին այդպես էլ չհաջողվեց կարգ ու կանոն հաստատել երկրում, ամրապնդել անկախությունն ու պետականության հիմքերը: Իրար հաջորդող «մեկօրյա գեներալները» և քաղաքական գործիչները թեև միաձայն խոստանում էին ժողովրդին պայծառ ապագա, այնուամենայնիվ երկիրը շարունակում էր մնալ թույլ և անկազմակերպ, կռվախնձոր հանդիսանալով իրար հետ մրցակցող արաբական երկրների, մասնավորապես Իրաքի, Եգիպտոսի, Հորդանանի և Սաուդյան Արաբիայի համար:[97] Եվ ինչպես իրավացիորեն նշում է Պ. Սիլը, «Սիրիայի ներքին գործերը որևէ կարևորություն չունեին, եթե ավելի լայն առումով առաջին հերթին չէին կապվում արար հարևանների, և ապա՝ շահագրգիռ այլ ուժերի հետ»:[98]

Նորանկախ Սիրիայի ղեկավարների համար լուրջ մարտահրավեր էր տարածաշրջանում ազդեցության համար ծավալվող պայքարը հիմնականում Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի միջև: Սիրիան հայտնվել էր անգլո-ամերիկյան ճնշման տակ՝ մի կողմից ԱՄՆ-ը ճնշում էր բանեցնում Դամասկոսի վրա Թուրքիայի և Իսրայելի միջոցով՝ «համատեղ պաշտպանական դաշինք ստեղծելու», իսկ մյուս կողմից Անգլիան՝ Իրաքի և Անդրհորդանանի միջոցով համապատասխանաբար «Մեծ Սիրիայի» և «Բարեբեր մահիկի» ծրագրերի մեջ Սիրիան ընդգրկելու ուղղությամբ: Երկու դեպքերում էլ դեռևս չամրապնդված սիրիական պետականությանը սպառնում էր անկախության կորուստը:

Այսպես, 1950թ. բացահայտվեց դավադրություն «երկրի անվտանգության դեմ», որը նպատակ էր հետապնդում միավորելու Սիրիան Անդրհորդանանի հետ: Ինչպես նշված է Սիրիայում ԽՍՀՄ դեսպանության կողմից պատրաստված տեղեկանքում, այդ դավադրության բացահայտման գործում սիրիական բանակի սպայակույտին օժանդակեցին ամերիկացիները:[99] Վերոհիշյալը վկայում է տարածաշրջանում սեփական դիրքերը ամրապնդելու համար ԱՄՆ-ի և

[96] 121ص،1965 ،المنهج الحزبی. حزب البعث العربی الأشتراكي، القيادة القومية. دمشق; Դամասկոս, 1965 121 էջ:
.221ص،1964-1963 ،نضال البعث فی سبيل الوحدة الحرية الأشتراكية، بيروت Բեյրութ, 1963-1964, 221էջ: «البعث », 25.10.1963:

[97] Yosef Olmert. Domestic Crisis and Foreign Policy in Syria: The Assad Regime., Middle East Review, Vol. XX, No. 3, Spring 1988, p.17.

[98] Patrick Seale. The Struggle for Syria: A Study of Post-War Arab Politics, pp. 1-2.

[99] Архив Внешней Политики Российской Федерации. Ф.128.Оп.14.П.16.Д.22.Л.39-40,60-63.



Անգլիայի միջև ընթացող պայքարի մասին: Անգլիացիներն էլ իրենց հերթին աջակցեցին մեկ այլ ամերիկյան ծրագրի ձախողմանը, երբ Սիրիայի նախկին վարչապետ Նազեմ Կուդսին, որը Սիրիայի Ժողովրդական կուսակցության առաջնորդներից էր, Արաբական Լիգայի քննարկմանը ներկայացրեց Արաբական Միացյալ Նահանգներ ստեղծելու առաջարկը: Արաբական երկրների կողմից միասնական պաշտպանական կամ քաղաքական միավորման որևէ փորձ թուլացնում էր տարածաշրջանում Անգլիայի դիրքերը: Վերջինս իրեն հնազանդ արաբական վարչակարգերի միջոցով՝ Իրաքում /Նուրի Սայիդ/ և Անդրհորդանանում /Աբդալլահը/ ընդդիմանում էր ամերիկյան ծրագրերին:

Սիրիա-իրաքյան դաշնության ստեղծումը, ըստ անգլիացիների, կարող էր խափանել Սիրիայի զավթումը սիոնիստների կողմից: Եթե Լոնդոնը Սիրիայի և Իսրայելի միջև խաղաղության հաստատման հարցում բռնել էր «խիստ չեզոք» դիրքորոշում, ապա ԱՄՆ-ն ամեն կերպ ճնշում էր գործադրում արաբական երկրների, այդ թվում նաև Սիրիայի վրա՝ Իսրայելի հետ խաղաղության համաձայնագիր կնքելու ուղղությամբ:[100] Այս հարցում ԱՄՆ շահագրգռվածության մասին հայտնել է ԱՄՆ դեսպան Ջեյմս Քեյլին Արաբական Լիգայի նստաշրջանին մեկնող սիրիական պատվիրակության անդամների հետ հանդիպման ընթացքում:[101] Հավանական է, որ Լոնդոնը կարող էր օգտագործել Իսրայելի սպառնալիքը՝ դեռևս թույլ և բաժանված արաբական աշխարհին իր սեփական ծրագրերը թելադրելու համար:[102] Իսկ Իսրայելի հետ խաղաղության հաստատման արդյունքում՝ համաշխարհային պատերազմից հետո տնտեսական անհամեմատ ավելի հզոր կարողություններ ունեցող ԱՄՆ-ը հեշտությամբ կամրապնդեր իր դիրքերը արաբական երկներում:

1948թ. պատերազմից հետո էլ Անդրհորդանանի Աբդալլահ թագավորը շարունակում էր փայփայել Մեծ Սիրիայի ստեղծման հույսերը: Վերջինիս դիմակայելու մտահոգությունն էր պատճառը, որ Սիրիայի ղեկավարությունը 1949թ. վերջին նախաձեռնեց Իրաքի հետ դաշնություն կազմելու ծրագիրը: Եթե Դամասկոսը կողմ էր «թույլ միությանը»՝ երկրի հանրապետական կարգը պահպանելու պայմանով, ապա Իրաքի իշխանությունները հանդես էին գալիս ավելի սերտ

[100] Из записи беседы посланника СССР в Ливане и в Сирии Д.Солода с премьер-министром Сирии Х.Аль-Азмом. 14 апреля 1950г. Ближневосточный конфликт. 1947-1956. Из документов архива внешней политики Российской Федерации, с. 121.

[101] Նույն տեղում, էջ 121:

[102] Այսպես՝ իսրայելյան կողմի հետ շարունակվող սահմանային /ապառազմականացված գոտում/ բախումների պայմաններում՝ «Իսրայելի օդային հարձակումից» պաշտպանելու պատրվակով անգլիացիների դրդմամբ 1951թ. մայիսին Սիրիա մտան իրաքյան զորքերը:

դաշնության օգտին՝ կենտրոնացված ղեկավարություն, միասնական դիվանագիտական կորպուս, ֆինանսական և դրամական ինտեգրացում, երկու բանակների միացյալ հրամանատարություն: Իրաքի հետ միության գաղափարը սառը ընդունելության արժանացավ արաբական աշխարհում, իսկ Սիրիայի ներսում ծրագրին ընդդիմացավ սիրիական բանակի սպայակազմը գնդապետ Ադիբ Շիշեքլիի գլխավորությամբ, որն էլ 1949թ. դեկտեմբերի 19-ին հեղաշրջման արդյունքում իշխանությունից հեռացրեց ընդամենը մի քանի ամիս նույնպես հեղաշրջման միջոցով իշխանության եկած և նույնպես գնդապետ՝ Սամի Հիննավիին:

Այստեղ տեղին է մեջբերել հետևյալ խոսքերը. «Թեև զինվորական հեղաշրջումը պայման չէ, որ հակազգային ուղղվածություն ունենա, այն այնուամենայնիվ ցուցադրեց սիրիական հայրենասիրական աճող տրամադրությունները, հօգուտ միության ուղղված նախաձեռնությունները Սիրիայի համար ձեռքբերումների և կորուստների տեսանկյունից գնահատելու միտումը»:[103]

Իսրայելի հետ հարաբերությունների հարցը կարծում ենք այդքան էլ առաջնային դեր չէր խաղում Սիրիայի զինվորական ղեկավարներ Հոսնի Զայիմի/1949թ. մարտի 30-ից մինչև օգոստոսի 14-ը/[104] և Ադիբ Շիշեքլիի քաղաքական օրակարգերում: Երկուսն էլ որդեգրել էին իրատեսական դիրքորոշում Իսրայելի նկատմամբ և նախընտրում էին ավելի չոտ նորաստեղծ հրեական պետության հետ քաղաքական համաձայնությունը, քան պատերազմը:[105]

Եվ դա միանգամայն բնական էր: Այն պայմաններում, երբ Արևմուտքը բոլոր հնարավոր միջոցներով փորձում էր Սիրիային ներգրավել «կոմունիստական էքսպանսիան զսպելու» քաղաքականության մեջ,[106] երբ այդ նույն Արևմուտքի կողմից հրահրվում էր Սիրիան հարևան արաբական երկրների կազմում «միավորելուն» ուղղված ծրագրերի իրականացումը, Դամասկոսում նստած գնդապետների համար խուսանավելու կամ սեփական մարտավարությունը մշակելու այլընտրանք գրեթե չէր թողնված: Հատկապես եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ Մոսկվան Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո շատ ավելի առաջնային արտաքին քաղաքական խնդիրներ ուներ Արևելյան Եվրոպայում:[107]

Ակնհայտ է, որ այդ պայմաններում Իսրայելի դեմ լուրջ հակամարտության մեջ մտնելն, առավել ևս՝ պատերազմելուն, Սիրիան պատրաստ չէր:

Փաստորեն, 1948թ. պատերազմից հետո գոնե մինչև 1955թ. ռազմական լուրջ ընդհարումները Իսրայելի հետ, Սիրիան գտնվում էր մի այնպիսի վիճակում երբ սպառնալիքները մեծ տերությունների և արաբական երկրների՝ Իրաքի կամ Հորդանանի կողմից շատ ավելի իրատապ էին և շոշափելի, քան Իսրայելի վտանգը:

Կարծում ենք արդարացի չեն այն միակողմանի պնդումները, թե այդ տարիներին սիրիական ղեկավարները գործում էին ազգային շահերին հակառակ կամ այլ ուժերի թելադրանքով: Նրանք ուղղակի փորձում էին հարմարվել իրականությանը: Չէ որ քաղաքականությունը ոչ միայն հնարավորության, այլև իրականության հետ հարմարվելու արվեստ է:

Դամասկոսը ոչ միայն կարողացավ խզել իր հարաբերությունները Անդրհորդանանի և Իրաքի հետ, փակելով սահմանները, այլև հրաժարվեց իրեն այդքան անհրաժեշտ ԱՄՆ-ի տնտեսական օժանդակությունից[108] ու մերժեց մասնակցել Թուրքիայի և արևմտյան երկրների հետ համատեղ «պաշտպանական դաշինքներին», որոնք անտարակույս ուղղված էին Խորհրդային Միության դեմ:

Մասնակիցն ու ականատեսը լինելով արաբական բանակների պարտությանն ու սիրիական զորքերի անմխիթար վիճակի, Ա.Շիշեքլին փորձեց կյանքի կոչել «սիրիականության» գաղափարները: Ժամանակակից սիրիական բանակ ստեղծելու և Սիրիան «պողպատյա ամրոցի» ու «արաբական երկրների Պրուսիայի» վերածելու նրա անկեղծ ձգտումը միանգամայն արժանի է դրական գնահատականի: Սակայն ծագում են առաջնային հետևյալ հարցերը. ի՞նչ միջոցներով և ի՞նչպես էին դրանք իրագործվելու: Վստահ ենք Սիրիայի ղեկավարը քաջ գիտակցում էր, որ վերոհիշյալ նպատակի իրականացման համար առնվազն անհրաժեշտ էր երկրի ներսում վերացնել քաղաքական անկայունության և սոցիալական ճնշման աղբյուրները, ինչպես նաև ստեղծել քաղաքական կենսունակ համակարգ: Այդ նպատակին հասնելու համար նորանկախ Սիրիայի ղեկավարությանը անհրաժեշտ էր առաջին հերթին ապահովել գերտերություններից մեկի՝ ԽՍՀՄ-ի կամ

[103] Dawisha, Adeed. Arab Nationalism in the Twentieth century. From Triumph to Despair, p.132.

[104] Հ.Զայիմի հեղաշրջումը Սիրիայի նորագույն պատմության մեջ բանակի առաջին միջամտությունն էր քաղաքականությանը՝ շահարկելով Իսրայելի դեմ պայքարի հարցը:

[105] Նման իրավիճակը սահմանաբար փոխվեց 1951թ. հետո երբ Իսրայելը միակողմանիորեն սկսեց աշխատանքներ Հուլայի նախագծով ենթադրվող ապառազմականացված գոտում, որը հանգեցրեց բախմանը սիրիական զորքերի հետ:

[106] ԱՄՆ նախագահ Հ.Թրումենի ձևակերպված հայեցակարգը:

[107] Գոնե մինչև 1955թ.՝ Սիրիային և Եգիպտոսին ռազմական օժանդակություն տրամադրելու որոշումը:

[108] 1950թ. հունվարի 20-ին ԱՄՆ նախագահ Հ. Թրումենի՝ Կոնգրեսին հղված ուղերձի «չորրորդ կետը» հետևյալն էր. «Մենք պետք է սկսենք նոր խիզախ ծրագրի իրականացումը՝ մեր գիտական և տեխնիկական առաջընթացի բարիքները տրամադրել թերզարգացած երկրների զարգացմանն ու նրանց վիճակի բարելավմանը»: Այս «չորրորդ կետը» ընդգրկվեց ԱՄՆ նախագահի «համայնավարության էքսպանսիայի զսպման» հայտնի հայեցակարգի մեջ: Վերջինիս համաձայն, 1950թ. ամռանը Վաշինգտոնը օժանդակություն առաջարկեց արաբական երկրներին: 1951թ. հունիսին Սիրիան մերժեց այն, իսկ Լիբանանը, Եգիպտոսը, Հորդանանն ու Իսրայելն ընդունեցին:

ԱՄՆ-ի լայնածավալ քաղաքական և տնտեսական աջակցությունը: Խորհրդային Միության կողմից արաբական երկրների նկատմամբ դեռևս հստակ արտաքին քաղաքական հայեցակարգի բացակայության պայմաններում, հին գերտերությունների՝ Անգլիայի և Ֆրանսիայի գաղութային երկարատև վերահսկողությունից «կշտացած» արաբական աշխարհի շատ երկրներ սրընթաց զարգացող և գերտերության կարգավիճակի հայտ ներկայացրած ԱՄՆ-ը դիտարկում էին որպես միակ հնարավոր գործընկեր, եթե ոչ դաշնակից: 1948թ. հետո թե արաբական երկրները և թե Իսրայելը փորձեր կատարեցին ապահովել ԱՄՆ-ի օժանդակությունը՝ Բրիտանիայի գաղութային տիրապետությունից ազատվելու և Լոնդոնի քաղաքականությանը հակակշռելու նպատակով:

Սպառազինությունների ձեռքբերման ու տնտեսական օժանդակության կենսական անհրաժեշտությունն էր, որ Ա.Շիշեքլիին ստիպեց դիմել Վաշինգտոնին, իսկ այնուհետև Մոսկվային՝ իր հավակնոտ սոցիալ-տնտեսական բարեփոխումները երկրի ներսում իրականացնելու, ինչպես նաև բանակը ժամանակակից սպառազինություններով ապահովելու և Իսրայելի հնարավոր հարձակումից պաշտպանվելու համար:

Սակայն ոչ մի տնտեսական կամ ռազմական համաձայնագիր ԱՄՆ-ի հետ այդպես էլ չստորագրվեց՝ հիմնականում երկրի ներսում առկա «հայեցակարգային չեզոք» /doctrinaire neutralists/ ընդդիմադիրների ճնշման պատճառով: Վերջիններս դավաճանություն էին համարում Արևմուտքի հետ որևէ համաձայնագրի կնքում, քանի որ Արևմուտքը ստեղծել և հզորացրել է Իսրայելը:[109]

Սիրիայի քաղաքական գործիչների մի շրջանակ էլ անգամ անհնարին էր համարում արաբ-իսրայելական խաղաղության համաձայնագրի կնքում՝ ամերիկյան միջնորդությամբ, քանի որ կարծում էր, որ «նման համաձայնագրի ստորագրումը կհանգեցնի «Արաբական ժողովրդի մյուս մասի հուդայականացմանը /հրեաների կողմից Պաղեստինի բռնազավթումից հետո/ և արաբները ավելի շուտ կնախընտրեն դառնալ Խորհրդային Միության հանրապետություն»:[110] Իսկ Բեյրութում հրատարակվող «Բայրութ ալ-Մասա'» օրաթերթը վերլուծում էր հետևյալ կերպ. «Մենք ատում ենք Ռուսաստանը, սակայն սիոնիզմը ավելի շատ ենք ատում»:[111]

Գործնական օժանդակությունը սակայն եկավ ոչ թե ԱՄՆ-ից, այլ՝ ԽՍՀՄ-ից: Ռազմական օգնության խնդրանքով Սիրիայի վարչապետ Խալեդ ալ-Ազմը դեռևս 1951թ. դիմել էր Սիրիայում ԽՍՀՄ դեսպանորդ

---

[109]Seale, Patrick. The Struggle for Syria, p.128; Public Records Office, Foreign Office (FO 371) dispatches to and from Beirut,Damascus and Tel Aviv 1948-1962; FO 371/104755, London, 26May 1953, citing the Syrian Ambassador.

[110] Maoz, Moshe. Syria and Israel. From War to Peacemaking, p.3.

[111] Նույն տեղում:



Վ.Բելյաևին:[112] Սակայն սպասված խորհրդային զենքը Սիրիային տրամադրվեց միայն 1955թվականին: Սիրիային զինվորական տեխնիկայի «որոշ տեսակներ մատակարարելու Չեխոսլովակիայի համաձայնության մասին» Սիրիայի վարչապետ Ս.Ասալին Դամասկոսում հայտնեց Սիրիայում ԽՍՀՄ դեսպանորդ Ս.Նեմչինան՝ 1955թ. մարտի 31-ին կայացած հանդիպման ընթացքում:[113]

Հետաքրքրական է, որ նույն հերթականությամբ նմանատիպ զարգացումներ տեղի ունեցան նաև Եգիպտոսում՝ 1952թ. հեղափոխությունից հետո: ԱՄՆ-ի կողմից սպասված տնտեսական օժանդակության դիմաց պայմաններ առաջադրելու և ձգձգելու պատճառով, 1955թ. սեպտեմբերին Գ.Նասերը հայտարարեց ԽՍՀՄ-ից սպառազինություն գնելու իր կառավարության որոշման մասին: Պետք է ասել, որ հեղափոխության առաջին երկու տարվա ընթացքում Գ.Նասերի համար բրիտանական ներկայությունից ազատվելու հարցը առավել առաջնային էր համարվում, քան Իսրայելի դեմ պայքարը: Այդ մասին են վկայում Փարիզում Նասերի վստահված անձի՝ Ա.Սադեկի և իսրայելական դիվանագետ Ձ.Դիվոնի միջև գաղտնի շփումները, որոնց նպատակն էր ապահովել Իսրայելի աջակցությունը բրիտանական զորքերը Եգիպտոսից շուտափույթ պարպելու ուղղությամբ, որից հետո ակնկալվում էր խաղաղության համաձայնագրի ստորագրումը երկու երկրների միջև:[114]

Այսպիսով, ԱՄՆ-ի կողմից հովանավորվող դաշինքների ձևավորման քաղաքականության և ԽՍՀՄ-ի կողմից Եգիպտոսին ու Սիրիային ռազմական օժանդակության տրամադրման արդյունքում «սառը պատերազմը» աստիճանաբար սկսեց տեղափոխվել Մերձավոր Արևելք: Այդ ժամանակաշրջանից տարածաշրջանը վերածվեց ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև գլոբալ դիմակայության բեմահարթակի: Վերջիններիս միջև ծավալվող պայքարն ու մրցակցությունը անխուսափելիորեն հանգեցնում էր նաև արաբական երկրների ռազմաքաղաքական բևեռացմանն ու բաժանմանը:

Մենք արդեն նշել ենք, որ Սիրիան մերժեց 1951թ. ԱՄՆ-ի

---

[112] Ближневосточный конфликт. 1947-1956. Из документов архива внешней политики Российской Федерации, с. 142.

[113] Նույն տեղում, էջ 267:

[114]Բանակցությունները ընդհատվեցին 1954թ. Իսրայելի հատուկ ծառայությունների՝ Եգիպտոսում «131 միավորի» կողմից կազմակերպված ահաբեկչական հատուկ գործողությունների իրականացման արդյունքում: Այս ճգնաժամը հայտնի դարձավ "Լավոնի գործ" անվան տակ: Լավոնը Իսրայելի պաշտպանության նախարարն էր, որը բացահայտումից հետո հրաժարական տվեց՝ իր տեղը զիջելով Բեն-Գուրիոնին: Bregman, Ahron and El-Tahri, Jihan. The Fifty Years War. Israel and the Arabs. BBC Series, pp..46-49; Е.Примаков. Конфиденциально: Ближний Восток на сцене и за кулисами (вторая половина XX-начало XXI века), с.36-39.

Ֆրանսիայի, Անգլիայի և Թուրքիայի կողմից «Միջինարևելյան հրամանատարության» անվան տակ ռազմական դաշինքի մեջ մտնելու առաջարկը: Այն նախատեսում էր Հյուսիսատլանտյան դաշինքի մասնաճյուղի ստեղծումը արաբական երկրների, Իսրայելի և Թուրքիայի մասնակցությամբ: Բնականաբար «հրամանատարության» հիմնական նպատակն էր կասեցնել ԽՍՀՄ ներթափանցումը նավթառատ Մերձավոր Արևելք: Այս ծրագիրը հիմնավորվում էր Արևմուտքի կողմից՝ ԽՍՀՄ հնարավոր սպառնալիքի առկայության պայմաններում «համատեղ պաշտպանություն» իրականացնելու անհրաժեշտությամբ: Սիրիան շարունակեց դաշինքներին չմիանալու և չեզոքություն պահպանելու իր քաղաքականությունը: Այդ քաղաքականության հիմունքները մեկ անգամ ևս հաստատվեցին 1955թ. փետրվարին՝ Ս.Ասալիի կառավարության հրապարակած Հայտարարության մեջ:

Ինչպես հայտնի է, նույն թվականի փետրվարի 24-ին Բաղդադում Թուրքիայի և Իրաքի՝ արևմտյան երկու «հովանավորյալ» պետությունների միջև ստորագրվեց փոխադարձ համագործակցության մասին Համաձայնագիր, որին այնուհետև միացան Մեծ Բրիտանիան, Պակիստանը և Իրանը ստեղծելով Կենտրոնական համաձայնագրի կազմակերպությունը, որը հայտնի դարձավ Բաղդադյան դաշինք անվան տակ: Սիրիան մերժեց մասնակցել դաշինքին և ի հակակշիռ դրա, համաձայնվեց Եգիպտոսի և Սաուդյան Արաբիայի հետ քաղաքական, տնտեսական ու ռազմական նոր դաշինքի կնքման գաղափարին:[115]

1954թ. սեպտեմբեր-հոկտեմբերին Սիրիայում կայացած խորհրդարանական ընտրություններին Բաասը /Արաբական Սոցիալիստական Վերածննդի կուսակցությունը/ Միշել Աֆլակի և Սալահ ալ-Դին Բիտարի ղեկավարությամբ գրավեց 22 տեղ /ընդհանուր՝ 142-ից/, կոմունիստ Խալեդ Բագդաշը դարձավ խորհրդարանի տեղակալ, իսկ Խալիդ ալ-Ազմը ստանալով մեծ թվով ձայներ Դամասկոսում ձևավորեց խորհրդարանական «չեզոքների» մեծ խմբակցությունը: Այս նոր ուժերը,

[115] Այս եռակողմ դաշինքը գործնականում երկար կյանք չունեցավ՝ 1961թ. Սիրիայի և Եգիպտոսի միության փլուզման ու մեկ տարի անց Եմենում Սաուդյան Արաբիայի և Եգիպտոսի միջև ծավալված հակամարտության պատճառով: Սաուդյան Արաբիայի Ֆեյսալ թագավորը կոչ արեց գումարել միջազգային իսլամական վեհաժողով, բացի արաբական երկրներից՝ Թուրքիայի, Իրանի և Պակիստանի մասնակցությամբ: «Կրոնական հենքի վրա ստեղծվելիք այդ նոր դաշինքը կոչված էր հակակշռելու Նասերական արաբական ազգայնականությունը»: Տես՝ Е.Примаков. Указ. соч; с.226. Սաուդյան Արաբիայի այս նախաձեռնությունը իրականություն դարձավ միայն 1969թ. սեպտեմբերին Ռաբատում: Այս համաժողովը համարվում է Իսլամական կոնֆերանս կազմակերպության հիմնադրման տարեթիվը: Սիրիան չմասնակցեց համաժողովին Մարոկկոյի հետ դիվանագիտական հարաբերությունների բացակայության պատճառով: Տես՝ Ա.Փաշայան, Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը. նպատակները, գործունեությունը, դիրքորոշումը Ղարաբաղյան հակամարտության նկատմամբ. Երևան, 2003, էջ 41:



ինչպես նաև 1955 փետրվարին Խալիդ ալ-Ազմի կողմից կազմված նոր կառավարությունը կարողացան դիմակայել Ժողովրդական կուսակցության[116] և իրաքամետ այլ ուժերի ճնշումներին, որոնք նպատակաուղղված էին Սիրիան Բաղդադի դաշինքի մեջ ընդգրկելուն:

Սիրիայի մերժողական այս դիրքորոշումը ծայրաստիճան լարեց սիրիա-թուրքական հարաբերությունները, որոնք առանց այդ էլ բարդացել էին Ալեքսանդրեթի սանջակի հարցով: Սակայն Թուրքիայի կողմից Սիրիայի վրա ճնշում բանեցնելու հիմնական հրահրողներն էին ԱՄՆ-ը և Բրիտանիան: Առանց Սիրիայի թուրք-իրաքյան հակախորհրդային շղթան մնում էր կտրված՝ իր հերթին վտանգելով իրաքյան նավթի անխափան տարանցումը Սիրիայի տարածքով: Թուրքիային մտահոգում էր խորհրդային ներթափանցումը Սիրիա և այնտեղ հնարավոր խորհրդայնամետ իշխանության հաստատումն ու ռազմակայան տեղադրելու հնարավորությունը: Իրավիճակը թուրք-սիրիական սահմանին չափազանց սրվել էր: Շատերը հավանական էին համարում լայնածավալ պատերազմի բռնկումը:

Խորհրդային Միության կառավարությունն ու ԽՍՀՄ կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղար Ն.Խրուշչովը հանդես եկան հայտարարություններով՝ ուր պաշտպանելով Սիրիայի դիրքորոշումը և հայտնեցին «անկախության ու ինքնիշխանության պաշտպանության նպատակով անհրաժեշտ օժանդակություն ցուցաբերելու պատրաստակամության», ինչպես նաև «Սիրիայի վրա հարձակման անթույլատրելիության և տարածաշրջանի համար անկանխատեսելի հետևանքների» մասին: Մասնավոր հանդիպումների ընթացքում ակնարկներ արվեցին նաև ԽՍՀՄ-ի ուղղակի միջամտության հնարավորության վերաբերյալ: Չցանկանալով լուրջ բարդություններ ԽՍՀՄ-ի հետ, Վաշինգտոնն իր հերթին նույնպես դիմեց Թուրքիային զսպվածության կոչերով: Եգիպտոսը շտապեց աջակցություն ցուցաբերել Սիրիային՝ Լաթակիայի նավահանգիստ ռազմանավ ուղարկելով: Արդյունքում, թուրք-սիրիական պատերազմի վտանգը չեզոքացվեց:

Սիրիական պաշտոնական շրջանակների վերլուծության համաձայն, ԱՄՆ-ը ցանկանում էր որ Սիրիայի վրա հարձակվի Իրաքը, այնուհետև նրան միանա Թուրքիան, քանի որ Իսրայելի հետ բախումը անպայմանորեն կարող էր արաբական աշխարհի ընդվզումն առաջացնել, իսկ արաբական Իրաքի կամ մահմեդական Թուրքիայի հարձակումը Սիրիայի վրա՝ հազիվ թե միասնական արաբական հակազդեցության արժանանար: Եվ իսկապես, 1956-1957 թթ. Սիրիայում իշխանափոխության գաղտնի ծրագրերի մշակմամբ հանդերձ,

[116] Կուսակցությունը հիմնադրվել էր 1932թ., որպես գաղտնի ընկերություն և հայտնի է ֆրանսերենով որպես Parti Populaire Syriene/PPS/:

Վաշինգտոնը աշխատում էր ազդել Թուրքիայի և Իրաքի, ինչպես նաև տարածաշրջանի այլ արևմտամետ երկրների վրա՝ փորձելով խուսափել Սիրիայի դեմ պայքարում Իսրայելի ներգրավումից, անգամ փորձելով զսպել Բեն-Գուրիոնին Սիրիայի նկատմամբ որևէ գործողություններ իրականացնելուց:[117]

Այն հանգամանքը, որ Սիրիայի դեմ Թուրքիայի ռազմական գործողությունների իրականացումը լրջորեն ծրագրվում էր, որևէ կասկած չի հարուցում: Այդ մասին են վկայում 1958թ. Իրաքում հեղափոխությունից հետո արխիվային փաստաթղթերում Բաղդադյան դաշինքի գործունեության վերաբերող նյութերը, որոնք հայտնվել էին եգիպտական հատուկ ծառայությունների մոտ: Գ.Նասերը անգամ խոստացել էր նրանց պատճենները փոխանցել ԽՍՀՄ ղեկավարությանը:[118]

Սիրիան մերժում էր միանալ Բաղդադյան դաշինքին ոչ թե Խորհրդային Միության նկատմամբ տածած սիրո և բարեկամական զգացմունքների, այլ այն պարզ պատճառով, որ իր անկախության ամենամեծ վտանգը տվյալ ժամանակահատվածում համարում էր Իրաքը:[119] Վերջինիս հետ միասին մասնակցությունը որևէ դաշինքի մեջ հղի էր լուրջ հետևանքներով Դամասկոսի համար, առաջին հերթին անվտանգության տեսանկյունից: Սիրիային չէր կարող նաև չմտահոգել Իրաքի և Հորդանանի միջև ստորագրված համատեղ պաշտպանական համաձայնագրի փաստը, որի համաձայն, Իրաքը որևէ պատրվակով կարող էր իր զորքերը մտցնել Հորդանան՝ շրջափակման մեջ վերցնելով Սիրիան:

Չնայած, որ 1948թ. պատերազմից հետո Հորդանանում ապաստան գտած հարյուր հազարավոր պաղեստինցիների ներկայությունը ստիպում էր Ամմանին որոշակիորեն զսպել իր ախորժակը և հաշվի նստել երկրի բնակչության իր այդ հատվածի տրամադրությունների հետ: Պետք է նշել, որ Հորդանանին իրենց չեզոք դաշինքի մեջ ներառելու և Բրիտանիայի ազդեցությունը այդ երկրում նվազեցնելու նպատակով, Եգիպտոսը, Սիրիան և Սաուդյան Արաբիան փորձեցին անգամ տնտեսական աջակցության փաթեթ առաջարկել Հորդանանին:[120]

---

[117] US Secretary of State to the President, Confidential, 20 Aug.1957, DD 2094 (1987); US President to British Prime Minister, Top Secret 22 Aug.1957, DD2091 (1987).

[118] Ближневосточный конфликт. 1957-1967. Из документов архива внешней политики Российской Федерации, с. 233-238.

[119] 1963թ. հետո Դամասկոսն ու Բաղդադը սկսեցին ակտիվորեն համագործակցել միմյանց հետ՝ անգամ 1963թ. մարտին այդ երկու պետությունների բաասական առաջնորդները առաջարկեցին էին Գ.Նասերին՝ Իրաք-Սիրիա-Եգիպտոս միասնական պետություն ստեղծել: Առաջարկն այդպես էլ մնաց չիրագործված:

[120] Այդ մասին ԽՍՀՄ արտգործնախարար Վ.Մոլոտովին է հայտնել Սիրիայի ԱԳ նախարար Խ.ալ-Ազմը 1955թ. հունիսի 26-ին Մոսկվայում կայացած հանդիպման ընթացքում: Տես. Ближневосточный конфликт. 1947-1956, с. 298.



Սակայն հիմնականում ներքին անկայունության մտավախությունից ելնելով էր, որ Հորդանանը չմիացավ Բաղդադյան դաշինքին, իսկ 1956թ. մայիսին Հորդանանը Սիրիայի հետ ստորագրեց համատեղ զինվորական հրամանատարություն ստեղծելու վերաբերյալ համաձայնագիր՝ Իսրայելի հետ հնարավոր պատերազմի ժամանակ համագործակցության նպատակով: Նույն թվականի հոկտեմբերին Հորդանանը միացավ սիրիա-եգիպտական ռազմական դաշինքին:

Իսկ լարվածությունը թուրք-սիրիական հարաբերություններում հասավ իր բարձրակետին: Սիրիայի ԱԳՆ ուղղված թուրքական երկու պաշտոնական հայտագրերից մեկում նշվում էր, որ դաշինքի նկատմամբ Սիրիայի թշնամական վերաբերմունքի շարունակման դեպքում «Սիրիայի վերացումը որպես աշխարհագրական հասկացություն, մի քանի օրվա հարց է»: Այնուհետև թուրքական կողմը փորձել է մեղմացնել իր դիրքորոշումը պարզաբանելով, որ նկատի է առնվել «խորհրդային վտանգի առկայության պայմաններում ստեղծված իրավիճակը»:[121]

Թուրքիայի ղեկավարությունը, ի դեպ, խստորեն հակադարձում էր Ալեքսանդրեթի կարգավիճակի կամ Սիրիայի կողմից հողային որևէ հարցի բարձրացմանը: Այսպես, ի պատասխան Սիրիայի ԱԳ նախարարի այն հայտարարությանը, թե «Թուրքիայի և Սիրիայի միջև առկա են որոշ վիճելի հարցեր՝ կապված սահմանային հողերի և Սիրիայի քաղաքացիների ունեցվածքի հետ», Թուրքիայի վարչապետ Մենդերեսը պատասխանել է. «Եթե դուք խոսում եք Ալեքսանդրեթի մասին, ապա մենք կխոսենք Հալեպի մասին: Մենք պատրաստ ենք կապերի խզմանն ու սահմանների փակմանը»:[122] Պետք է արձանագրել, որ Սիրիայի ղեկավարները բարձրաստիճան հանդիպումների ընթացքում, հատկապես ԽՍՀՄ ներկայացուցիչների հետ, այդ ժամանակահատվածում բազմիցս ահազանգել են Թուրքիայի կողմից առկա վտանգի և անգամ Սիրիա ռազմական ներխուժման հնարավորության վերաբերյալ:

Սիրիայի ազգային անվտանգության ամրապնդման ուղղությամբ և Բաղդադյան դաշինքին հակազդելու նպատակով կարևորագույն ձեռնարկումներ էին 1955թ. հոկտեմբերի 20-ին պաշտպանական համաձայնագրի կնքումը Եգիպտոսի հետ, իսկ յոթ օր հետո էլ՝ Սաուդյան Արաբիայի հետ: Դրանք նախատեսում էին ռազմական և ֆինանսական աջակցություն Իսրայելի կամ երրորդ երկրի կողմից հարձակման դեպքում, ինչպես նաև համատեղ զինվորական հրամանատարության ստեղծում: Այդ երկրների քաղաքական հետագա մերձեցման մասին վկայեց նաև 1956թ. մարտի 12-ին երեք ղեկավարների կողմից /Նասեր, Քուվաթլի և Սաուդ/ հրապարակված համատեղ հռչակագիրը, ուր վերահաստատվեց նրանց հավատարմությունը չեզոք քաղաքական գծի

---

[121] Նույն տեղում, էջ 262:

[122] Նույն տեղում, էջ 263:

իրականացմանը միջազգային ասպարեզում:

1954թ. փետրվարից հետո ներքին անկայունությունն ու մեկ տարվա ընթացքում իրար հաջորդող 5 կառավարությունների փոփոխությունը մեծապես խոչընդոտեցին Սիրիայի տնտեսական զարգացման ծրագրերի ու արդյունավետ արտաքին քաղաքականության իրականացմանը: Միջխմբային հակասություններն ու հակամարտությունը երկրի քաղաքական և զինվորական վերնախավերում դանդաղեցնում և բոլացնում էին պետականության ամրապնդմանն ուղղված բարեփոխումների գործընթացը: Ներքին զարգացումները, բնականաբար, մեծապես կախված էին արտաքին գործոններից՝ տարածաշրջանում աստիճանաբար սաստկացող ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի դիմակայությունից, ինչպես և Իրաքի, Թուրքիայի և Իսրայելի կողմից աճող վտանգից:

Սիրիայի ներքաղաքական ուժերը միակարծիք չէին ոչ միայն ԽՍՀՄ-ի, այլև արաբական երկրների հետ համագործակցության հարցերում: Այսպես, Սիրիայի խոշոր հողատերերի շահերը պաշտպանող Սիրիական ժողովրդական կուսակցությունը հանդես էր գալիս Իրաքի հետ մերձեցման առաջարկներով:

1955թ. ապրիլի 22-ին Սիրիայի գլխավոր շտաբի պետ Ադնան Մալիքի սպանությունը էլ ավելի սրեց իրավիճակը երկրում: Ժողովրդական կուսակցության շատ անդամներ այդ թվում նաև կուսակցության հիմնադիր Անտուն Սաադայի կինը ձերբակալվեցին, իսկ կազմակերպության գործունեությունը կասեցվեց: 1956թ. դեկտեմբերի 31-ին Ս.Ասալին վերակազմավորեց իր կառավարությունը՝ նրա կազմից հանելով ազգային կուսակցության և Մունիր Ալ-Աջլանիի Սահմանադրական ճակատը, որը նույնպես մեղադրվում էր հակապետական գործունեության մեջ: Բաաս-ը պահպանեց տնտեսության և արտաքին գործերի նախարարի պաշտոնները, իսկ Խ.Ալ-Ազմը զբաղեցրեց պաշտպանության նախարարի պաշտոնը:[123]

Հակառակ 1949թ. հուլիսի 20-ին Իսրայելի հետ ստորագրված Ընդհանուր Զինադադարի համաձայնագրի, որը պետք է «խթաներ Պաղեստինում ներկա զինադադարի վերածումը մշտական խաղաղության» աստիճանաբար լարվում էին նաև սիրիա-իսրայելական հարաբերությունները: Բախումները սիրիա-իսրայելական սահմանին հաճախակի դարձան հատկապես համաձայնագրով ստեղծված Ապառազմականացված գոտիներում: Իսրայելը այդ գոտիները կարևորում էր իր համար կենսական նշանակություն ունեցող Թիբերիա լճի վրա միակողմանի վերահսկողություն հաստատելու տեսանկյունից և չնայած ՄԱԿ-ի հանձնաժողովի առկայության հանգամանքին, ձեռնարկեց ռազմական գյուղատնտեսական կիբբուցների /բնակավայրերի/ ստեղծումն այդ գոտիների որոշ մասերում: Երբ

[123] Seale, Patrick. The Struggle for Syria, p.282.



սիրիացիները իրենց դժգոհությունն արտահայտեցին կրակոցներով, իսրայելցիները պատասխանեցին նույն կերպ: Այնուհետև վեճ ծագեց Գալիլեա ծովում ձկնորսության սիրիացիների իրավունքի առթիվ: Հակամարտությունը իր գագաթնակետին հասավ 1955թ. դեկտեմբերին, երբ շուրջ 50 սիրիական զինվոր զոհվեց իսրայելական հարձակման արդյունքում: Այս տարածքում Սիրիայի և Իսրայելի միջև բախումներ տեղի ունեցան նաև 1960, 1962 և 1964 թվականներին:[124]

1955թ. իսրայելական հարձակման վերաբերյալ Սիրիայի ԱԳ նախարար Ս.Գազին ԽՍՀՄ դեսպանին հայտնել է հետևյալը. «Արևմուտքը փորձում է կտրել Սիրիան իր դաշնակիցներից՝ Եգիպտոսից և Սաուդյան Արաբիայից՝ ու ստիպել Դամասկոսին՝ վերանայելու իր արտաքին քաղաքականությունը»: Ըստ նախարարի, Տիբերիա լճի միջադեպը սոսկ ռազմական բախում չէր, այլ նախապես ծրագրված հարձակում, որի նպատակներից մեկն էր վախեցնել Լիբանանին, որպեսզի վերջինս հրաժարվի Սիրիայի հետ ռազմական դաշինք ստորագրելուց, իսկ Հորդանանին էլ ստիպի միանալ Բաղդադյան դաշինքին:[125]

Անգամ իսրայելամետ հեղինակները նշում են, որ Իսրայելի վարչապետ Բեն-Գուրիոնի կեցվածքը «չափազանց կոշտ էր և սադրող»: Իսրայելի գլխավոր շտաբի պետ գեներալ Մակլեֆֆը խոստովանում էր. «Մենք /իսրայելցիները/ ցանկանում էինք լրացնել ապառազմականացված գոտում առաջացած վակուումը՝ բնակավայրերի շինարարությամբ և սիրիական գյուղացիներին ստիպելով հեռանալ տարածաշրջանից: Շատ դաժան բաներ էին պատահում՝ հողատարածքները կիսվում էին, սիրիացիների ցանում էին ձմռանը և գալիս էին հավաքելու ամռանը: Մենք փչացնում էին նրանց հողատարածքները կամ պարզապես այրում: Սխալմամբ նրանց յուրաքանչյուր գյուղացու մենք համարում էինք ֆիդայի և քայլեր էինք ձեռնարկում նրանց դեմ ինչպես սահմանը խախտած հանցագործների»:[126]

Իսրայելի քաղաքական վերնախավում առկա էին լուրջ տարաձայնություններ հատկապես Մոշե Շարետի[127] և Բեն-Գուրիոնի միջև: Վերջինս արաբներին համարում էր ոխերիմ թշնամիներ և ծայրահեղ դիրքորոշում ուներ Սիրիայի նկատմամբ: Մ.Շարետը, որը հանդես էր գալիս դիվանագիտական միջոցներով Սիրիայի հետ հարաբերությունների կարգավորման օգտին, ռազմական դիմակայությանը կողմնակից ուժերին ստիպված տեղի տվեց և

[124] Drysdale, Alasdair and Hinnebusch R. Syria and the Middle East Peace Process. Council on Foreign Relations, p.99.

[125] Ближневосточный конфликт. 1947-1956, с. 374-375.

[126] Maoz, Moshe. Syria and Israel. From War to Peacemaking , p.50.

[127] Մոշե Շարետը Իսրայելի վարչապետն էր 1953-55 թթ.:

հրաժարական տվեց 1955թվականի վերջին: Մ.Շարետի հրաժարականը կապված էր Սիրիայի դեմ իրականացված «սահմռկեցուցիչ և սադրիչ» գործողությունների հետ, որոնք հովանավորվում էին Բեն-Գուրիոնի կողմից: Վերջինս այն ծրագրել էր առանց վարչապետին տեղյակ պահելու:[128] Իր հուշերում Մ.Շարետը գրում էր. «Պաշտպանության նախարար Բեն-Գուրիոնը խորհրդակցել էր արտգործնախարար Բեն-Գուրիոնի հետ և հաստատում էր ստացել վարչապետ Բեն-Գուրիոնից»:[129] Որպես արտգործնախարար Մ.Շարետը պաշտոնավարեց կարճ ժամանակահատվածում և երկրորդ անգամ ստիպված եղավ հրաժարական տալ 1956թ. հունիսին: Մ.Շարետը այդպես էլ մնաց Իսրայելի քաղաքական կյանքում որպես չափավոր, խոհեմ և խաղաղասեր քաղաքականության խորհրդանիշ:

Պայքարը Սիրիայի համար գնալով սաստկանում էր հատկապես գերտերությունների ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև: Չնայած որ ԱՄՆ-ն ուշադրությունը կենտրոնացրել էր եգիպտա-իսրայելական ճակատում, այնուամենայնիվ տվյալ ժամանակահատվածում Սիրիայի նկատմամբ ամերիկյան քաղաքականության հիմնական նպատակն էր թույլ չտալ Մոսկվայի դիրքերի ամրապնդումը Սիրիայում, ինչպես նաև վերջինիս մերձեցումը Եգիպտոսի և Սաուդյան Արաբիայի հետ:[130]

Մենք արդեն նշել ենք, որ Վաշինգտոնը ամեն գնով փորձում էր Սիրիան ընդգրկել Բաղդադյան դաշինքի մեջ: Ուշագրավ է ԱՄՆ պետքարտուղարի տեղակալներից մեկի մեկնաբանությունը դաշինքի անհրաժեշտության վերաբերյալ. «Վերոհիշյալ դաշինքի ստեղծման անհրաժեշտությունը պայմանավորված է Թուրքիայի դիրքով, որի հաղորդակցությունները Արևմուտքի հետ կարող են հեշտությամբ կտրվել ռուսների կողմից նոր պատերազմի ժամանակ: Այդ դեպքում Թուրքիան զրկված կլինի ամենակարճ ճանապարհով ԱՄՆ-ից և Անգլիայից օժանդակություն ստանալու հնարավորությունից: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է հնարավորին չափով արագ Թուրքիայի թիկունքում ստեղծել պետությունների ռազմական դաշինք, որի միջոցով ԱՄՆ-ը և Անգլիան կկարողանան անխափան օգնել Թուրքիային ԽՍՀՄ-ի դեմ ապագա պատերազմում»:[131]

---

[128] Ի դեպ Մ.Շարետին նաև չէին տեղեկացրել Եգիպտոսում 1954թ. իսրայելյան հատուկ ծառայությունների՝ «131 միավորի» կողմից ահաբեկչական գործողություններ կազմակերպելու մասին, որոնք ուղղված էին ամերիկյան և անգլիական օբյեկտներին ու նպատակ էին հետապնդում խզել ամերիկա-եգիպտական կապերը, ինչպես նաև խափանել անգլիական զորքերի դուրսբերումը Եգիպտոսից:

[129] Maoz, Moshe. Syria and Israel. From War to  Peacemaking, p.49.

[130] Бодянский В.Л. Обьединенная Арабская Республика (Сирийский район). – Политика США на Арабском Востоке, с.98.

[131] Ближневосточный конфликт.1948-1956, с. 287.



Սակայն Սիրիան և Եգիպտոսը դիմադրեցին ու չմիացան տարբեր անուններով հրապարակ նետվող ռազմական հակախորհրդային խմբավորումներին, ի չիք դարձնելով Արևմուտքի ծրագրերը:[132] Եվ ինչպես հայտնել է Նասերը Բրիտանիայի արտգործնախարար Ա.Իդենին. «Ռազմական տեսանկյունից այսպես կոչված պաշտպանության հյուսիսային շրջագիծը ոչինչ չարժե առանց պաշտպանական խորքի, որը կարող են ապահովել միայն արաբական երկրները»:[133]

Այդ քաղաքականության պատճառով էր, որ Վաշինգտոնը փորձեր արեց միջամտելու Սիրիայի ներքաղաքական կյանքին: 1957թ. դեկտեմբերին Մոսկվայում սիրիական խորհրդարանական պատվիրակության հետ հանդիպման ընթացքում Ն.Խրուշչովը նախազգուշացրել է, որ ռազմական ներխուժման տարբերակի ձախողումից հետո, Վաշինգտոնը փորձում է օգտագործել Սիրիայում առկա ներքին քաղաքական տարաձայնությունները: Նա հայտնել է, որ ԽՍՀՄ-ը փաստեր ունի, որ ամերիկացիները նախապատրաստվում են վերացնել՝ Քուվաթլիին, Ասալին, Ազմին, Բիզրին, Բաղդաշին:[134]

Օգտվելով Սիրիայում ստեղծված անկայուն և լարված, երբեմն նաև բռնային ներքաղաքական իրավիճակից, 1957թ. նախագահ Դ.Էյզենհաուերի վարչակազմը Սիրիայում իշխանափոխության փորձ կատարեց: Այն ժամանակ ԱՄՆ-ի ղեկավարությունը, ընդգծելով Մերձավոր Արևելքի տնտեսական և ռազմավարական նշանակությունը, վճռականորեն հայտարարում էր, որ չի թույլատրի, որպեսզի «միջազգային համայնավարությունը» լրացնի տարածաշրջանում գոյություն ունեցող վակուումը:[135]

Եգիպտոսի և ԽՍՀՄ-ի հարաբերությունների սերտացումը հանգեցրին նրան, որ ԱՄՆ պետքարտուղարը 1956թ. հուլիսի 19-ին Վաշինգտոնում Եգիպտոսի դեսպանին տեղեկացրեց, որ ԱՄՆ-ն հրաժարվում է Եգիպտոսին տրամադրել 270 մլն դոլարի նախկինում խոստացված վարկը Ասուանի ջրամբարի առաջին հերթի կառուցման նպատակով: Պատասխան քայլը եղավ հուլիսի 26-ին Նասերի կողմից Սուեզի ջրանցքի ազգայնացման մասին հայտարարությունը: Արևմուտքի հակազդեցությունն իրեն երկար սպասեցնել չտվեց: Օգոստոսի 2-ին Բրիտանիայի ու Ֆրանսիայի արտգործնախարարներն ու ԱՄՆ պետքարտուղարը հանդիպում ունեցան Լոնդոնում: Նշված երկրները, նաև փոխզիջումային լուծում գտնելու նպատակով, սեպտեմբերի 5-ին Կահիրե առաքելություն ուղարկեցին, որն ավարտվեց անհաջողությամբ:

---

[132] Ն.Հ.Հովհաննիսյան, Հ.Ս.Սարգսյան, Սիրիան անկախության համար մղված պայքարում (1917-1946թթ.), էջ 314:

[133] Նույն տեղում, էջ 415:

[134] Ближневосточный конфликт. 1957-1967, с. 148-153.

[135] "Vital Speeches of the Day", New-York,1957, N7, p.200-202.

Եգիպտոսը շարունակում էր օգտագործել ջրանցքը: Նասերը տեղի չտվեց նույնիսկ Եգիպտոսի արտասահմանյան հաշիվները սառեցնելու վերաբերյալ հնչած սպառնալիքներին: Եգիպտոսը հանդես եկավ ընկերության բաժնետերերին փոխհատուցում վճարելու առաջարկությամբ, սակայն պնդեց, որ ջրանցքը «եղել է ու պետք է լինի եգիպտական»:

Մասնակից բոլոր կողմերի ձեռնարկած տարբեր միջոցառումներից ու պաշտոնական հայտարարություններից հետո, Իսրայելը, չնայած ՄԱԿ-ի նախազգուշացումներին, հոկտեմբերի 29-ին հարձակում գործեց Եգիպտոսի վրա: Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան վերջնագիր ներկայացրեցին երկու կողմերին էլ: Այնուհետև, հոկտեմբերի 31-ին ռմբակոծեցին Կահիրեն և Ալեքսանդրիան, իսկ նոյեմբերի 2-ին ներխուժեցին ջրանցքի գոտի: Նոյեմբերի 5-ին անգլո-ֆրանսիական ուժերը գրավեցին Պորտ-Սայիդը, սակայն նոյեմբերի 7-ին տեղի տալով ԱՄՆ և ԽՍՀՄ ճնշումներին՝ համաձայնվեցին զինադադար հաստատել:[136]

Ամենայն հավանականությամբ Անգլիան ու Ֆրանսիան դաշնակիցների պատերազմ սանձազերծելով Եգիպտոսի դեմ՝ Նասերին տապալելու ուղղակի նպատակ էին հետապնդում: Ինչ վերաբերում է Իսրայելին, ապա նա հասավ իր նպատակին՝ ապահովելով անարգել մուտքը Տիրանի նեղուցից Աքաբայի ծոցում գտնվող Էյլաթ նավահանգիստ: Պայմանագրային այս նոր կետերի ու տարածքային ջրեր համարվող շրջաններում Իսրայելին նավարկության իրավունքի հարցը մեկ տասնամյակ անց՝ 1967թ. հունիսին, նոր կռվի բռնկման շարժառիթ պետք է հանդիսանար:

*1956թ. պատերազմի ամենակարևոր արդյունքն այն էր, որ բրիտանական ու ֆրանսիական բանակների անհաջողությունն ու նրանց ուժերի հարկադրաբար դուրսբերումը Եգիպտոսից, խորհրդանշեց Մերձավոր Արևելքում եվրոպական՝ Անգլիայի և Ֆրանսիայի գերիշխանության դարաշրջանի ավարտը: ԱՄՆ-ն ի հայտ եկավ որպես Արևմտյան գերտերություն տարածաշրջանում ու հայտնվեց ԽՍՀՄ-ի հետ*

136 1956թ. պատերազմի վերաբերյալ տես՝ Политика Англии на Ближнем и Среднем Востоке. М., 1966; Медведко Л.И. К востоку и западу от Суэца. М., 1980; Neff, Donald. Warriors at Suez: Eisenhower Takes America into the Middle East. New York: Simon & Schuster, 1981; Kunz, B. Diane. The Economic Diplomacy of the Suez Crisis. Chapel Hill: University of North Carolina Press, 1991; Freiberger, Z.Steven. Dawn over Suez: The Rise of the American Power in the Middle East. Chicago, 1992; Kyle, Keith. Suez. New York: Str. Martin`s Press. 1991; Lucas, W. Scott. Divided We Stand: Britain, the US and the Suez Crisis. London: Holder and Stoughton, 1991; Louis, Roger William and Owen Robert. Suez 1956: The Crisis and its Consequences. Oxford: Claredon Press, 1989; Childers, B. Erskine.The Road to Suez. London, 1962; Nutting, Anthony. No End of a Lesson. London, 1967; ԱՄՆ պետքարտուղարության հատուկ հրապարակումը՝ The Suez Canal Problem. Washington, 1956; Lloyd, Selwyn. Suez 1956: A Personal Account. London, 1978.



*ակտիվ դիմակայության և պայքարի մեջ: Տարածաշրջանում ստեղծվեց նոր համակարգ՝ երկու հակադիր ճամբարներով, որոնցից առաջինն ընդգրկում էր ԽՍՀՄ և «ազգայնական» վարչակարգեր ունեցող Եգիպտոսը, Սիրիան և 1958թ. հետո նաև Իրաքը, իսկ երկրորդը՝ ԱՄՆ-ը, Իսրայելը և «չափավորական» ամերիկամետ արաբական միապետությունները՝ Հորդանանը, Սաուդյան Արաբիան, Քուվեյթը և այլն:*[137]

Սուեզի ճգնաժամը Նասերին արաբական հերոս դարձրեց: Պատերազմը հաջող ավարտի հասցրեց նրա կողմից Սուեզի Ջրանցքի Ընկերության ազգայնացումը և ապահովեց Խորհրդային Միության ռազմական օգնությունը: Արաբների կարծիքով, Եգիպտոսը մարտնչեց Բրիտանիայի, Ֆրանսիայի ու Իսրայելի դեմ, իսկ Նասերը մարտահրավեր նետեց աշխարհին ու հաղթող դուրս եկավ:

Եգիպտոսում տեղի ունեցող դեպքերն ու զարգացումները իրենց ազդեցությունն էին թողնում արաբական մյուս երկրների և հատկապես Սիրիայի վրա:

Ճգնաժամի հենց սկզբից Սիրիան իր «ամբողջական աջակցությունն ու համերաշխությունը հայտնեց» Եգիպտոսին և հայտարարեց, որ Սուեզի ջրանցքի ազգայնացման փաստը օգտագործվում է Արևմուտքի կողմից՝ որպես ցանկալի պատրվակ, արաբական երկրներում ազգային զարթոնքը ճնշելու համար: Սիրիան կարծում էր, որ ջրանցքով միջազգային ազատ նավագնացությունն ապահովելու համար երրորդ կողմի վերահսկողության կարիքը չկա և, որ այդ ուղղությամբ բավարար է Եգիպտոսի կողմից պաշտոնական պարտավորության ստանձնումը: Հակառակ դեպքում՝ միջազգային վերահսկողության հաստատումը, ըստ Դամասկոսի, կնվազեցնի Եգիպտոսի անկախությունն ու ինքնիշխանությունը:[138]

137 Տարածաշրջանում ձևավորված Հովանավոր-Հաճախորդ /Patron-Client/ այդ համակարգն իր հերթին ընդգրկում է հարաբերությունների հետևյալ վեց խմբերը՝
1. Հարաբերությունները գերտերությունների միջև՝ ԽՍՀՄ և ԱՄՆ
2. Հովանավոր-Հաճախորդ՝ ԱՄՆ և Իսրայել
3.Հովանավոր-Հաճախորդ՝ ԽՍՀՄ և Սիրիա (մինչև 1973թ. ԽՍՀՄ և Եգիպտոս), ԽՍՀՄ և Իրաք (1958թ. հետո):
4.Մրցակից Հովանավոր և Մրցակից Հաճախորդ՝ ԱՄՆ և Սիրիա
5.Մրցակից Հովանավոր և Մրցակից Հաճախորդ՝ ԽՍՀՄ և Իսրայել
6.Մրցակից Հաճախորդ և Մրցակից Հաճախորդ՝ Իսրայել և Եգիպտոս, Իսրայել և Սիրիա: Տես՝ Handel Michael. Weak States in the International System, London, Frank Cass, 1981. Shoemaker Christofer & Spanier John. Patron-Client State Relationships, Multilateral Crisis in the Nuclear Age, New-York, Praeger, 1984.

138 FO 371/12156, Tel Aviv, 13 December,1956; US National Archive (NA)/68300/10657, DOS 179, 17 December, 1956.

Պատերազմի ընթացքում Սիրիան պատրաստ էր օգնության հասնել Եգիպտոսին, սակայն եգիպտական բանակի հրամանատար գեներալ Ամրը հորդորեց սիրիացիներին չներքաշվել պատերազմի մեջ՝ զգուշանալով Բրիտանիայի և Ֆրանսիայի կողմից Սիրիա հնարավոր ներխուժումից: Պատերազմի ընթացքում Սիրիան բրիտանական մեկ օդանավ խփեց, որը թռչում էր իր օդային տարածքով, պայթեցրեց բրիտանական նավթատարը, որն անցնում էր սիրիական տարածքով, ինչպես նաև դիվանագիտական հարաբերությունները խզեց Բրիտանիայի և Ֆրանսիայի հետ:[139]

Սուեզի պատերազմը, ինչպես նաև Իսրայելի թշնամական գործողությունները սիրիա-իսրայելական սահմանին՝ նպաստում էին Սիրիայում հակաիսրայելական տրամադրությունների սրընթաց աճին: Սիրիայի ղեկավարությանը անհանգստացնում էր Իսրայելի հետ պատերազմելու հավանականությունը, որին, չնայած ռազմական բյուջեի աստիճանաբար ավելացմանը, նրանք դեռևս պատրաստ չէին:[140]

1957թ. մարտին ԱՄՆ Կոնգրեսի կողմից «Էյզենհաուերի հայեցակարգի» հաստատումից հետո, Սիրիան հայտնվեց էլ ավելի խոցելի վիճակում: «Էյզենհաուերի հայեցակարգի» համաձայն, նախատեսվում էր տնտեսական և ռազմական փաթեթային աջակցության ցուցաբերում Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի «համախոհ» երկրներին, իսկ ԱՄՆ-ի նախագահին ռազմական միջամտություն իրականացնելու իրավունք էր տրվում տարածաշրջանի ցանկացած երկրում, որին «սպառնում էր բացահայտ ռազմական հարձակում Միջազգային Համայնավարության կողմից վերահսկողության տակ գտնվող որևէ պետության կողմից»:[141] Սա նշանակում էր, որ Վաշինգտոնը Արևմուտքի շահերի պաշտպանության ուղղությամբ տարածաշրջանում ստանձնում էր առաջնային պատասխանատվությունը:

---

[139] FO 371/121867, Damascus, 30 October,1956; Seale, Patrick. The Struggle for Syria. London. 1965, p.262.

[140] Սիրիայի ռազմական ծախսերը 5 տարվա ընթացքում / 1955-1960թթ./ ավելացան գրեթե 2.5 անգամ: Այնուամենայնիվ այն շուրջ երկու անգամ նվազ էր Իսրայելի ռազմական ծախսերից, որը 1955թ. կազմում էր 72.3 մլն ամ. դոլար, իսկ 1960թ.՝ 161.1 մլն ամ.դոլար:

| Տարի | & մլն անգլ.ֆունտ | $ մլն ամ.դոլար | ՀՆԱ /&/ | ՀՆԱ % |
|---|---|---|---|---|
| 1955 | 104.8 | 29.3 | 2.017 | 5.2% |
| 1956 | 166.3 | 46.7 | 2.757 | 6.0% |
| 1957 | 166.0 | 46.4 | 2.884 | 5.8% |
| 1958 | 276.8 | 77.4 | 2.273 | 12.2% |
| 1959 | 271.3 | 75.9 | 2.195 | 12.3% |
| 1960 | 285.1 | 79.7 | 2.913 | 9.8% |

Safran, Nadav. From War to War. The Arab-Israli Confrontation,1948-1967, p.170; p.199.

[141] Ambrose Stephen. Eisenhower, 2 vols, New York: Simon & Schuster, 1984, pp.381-388.



Զարմանալի է, որ ամերիկյան բարձրաստիճան գործիչները ԽՍՀՄ ղեկավարների հետ հանդիպումների ընթացքում Սիրիային ու Եգիպտոսին խորհրդային զենքի առաքումները որակում էին «վտանգավոր, անթույլատրելի, տարածաշրջանում ուժերի հավասարակշռությունը խախտող» և այլն: Միևնույն ժամանակ, նրանք հայեցակարգային որոշումներ էին ընդունում նույն օժանդակությունը ցուցաբերելու իրենց «հավատարիմ» արաբական երկրներին: Այսպես, ԱՄՆ պետքարտուղար Ջ. Դալլեսը 1957թ. հոկտեմբերին Նյու-Յորքում ԽՍՀՄ ԱԳ նախարար Ա.Գրոմիկոյի հետ կայացած հանդիպման ընթացքում, որպես սեփական քաղաքականության արդարացում, ասել է. «ԱՄՆ-ն շահագրգռված է Մերձավոր և Միջին Արևելքի երկրների անկախության պահպանման մեջ: ԱՄՆ-ն իր երկու դաշնակիցներին՝ Անգլիային և Ֆրանսիային դուրս է մղել տարածաշրջանից ոչ այն նպատակով, որ նրանց տեղը գրավի Խորհրդային Միությունը: Մենք չենք ցանկանում ինքներս ներխուժել այս շրջան: «Էյզենհաուերի» հայեցակարգը նպատակամղված է Միջին և Մերձավոր Արևելքի երկրներին օգնելու, միևնույն ժամանակ ԱՄՆ-ը չի հետապնդում որևէ այլ նպատակ և քաղաքական դիրքեր գրավելու որևէ ցանկություն չունի: Սակայն չենք ցանկանում որ այդ իրականացվի Անգլիայի, Ֆրանսիայի կամ ԽՍՀՄ-ի կողմից»:[142]

Իսկ իրականում Մերձավոր Արևելքում երկու գերտերությունները՝ ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը պայքարի մեջ էին իրենց «համախոհների» համար՝ նրանց զենք և զինամթերք, վարկեր ու ֆինանսական այլ տեսակի օժանդակություն տրամադրելով:

«Ամեն դեպքում գերտերություններին չի կարելի վստահել և հավատալ». ահա այս էր հիմնական այն դասը, որ յուրացրել էին արաբական երկրները Անգլիայի և Ֆրանսիայի երկարատև գաղութային կառավարումից:

Հայկական՝ «հացի մեջ աղ չկա» դիպուկ ասացվածքը կիրառելի է թե ԱՄՆ-ի և թե ԽՍՀՄ-ի դեպքում: Արաբական «համախոհները» չէին վստահում ոչ մեկին և ոչ էլ մյուսին, նրանք մինչև օրս էլ չեն կարողացել հաղթահարել գերտերությունների նկատմամբ ունեցած իրենց բարդույթը:

Իհարկե, գերտերությունների քաղաքականությունը շատ դեպքերում պարտադրող էր, երբեմն կոշտ և ոչ ճկուն: Եվ դա բացատրելի է, սակայն իրենց հպարտությունը պահպանելու և դեմքը չկորցնելու հարցում չափազանց նրբանկատ արաբները վերոհիշյալին կարող են էլ ավելի մեծ ուժով դիմադրել, պայքարել եվ վերջապես լցվել ատելությամբ նման քաղաքականություն իրականացնողի նկատմամբ:

ԽՍՀՄ-ի դեպքում այն բարդանում էր մեկ կարևորագույն հանգամանքով: Արաբական երկրները երկյուղում էին, որ ԽՍՀՄ-ի հետ սերտ համագործակցության արդյունքում իրենց երկրներում

---

[142] Նույն տեղում, էջ 120-124:

կոմունիստական կուսակցությունների հզորացման միջոցով Մոսկվան ի վիճակի կլինի միջամտել իրենց ներքին գործերին: Այդ իսկ պատճառով թե նասերական Եգիպտոսում և թե բաասական Սիրիայում կոմունիստական կուսակցությունների դեմ անհաշտ պայքար ծավալվեց: Արաբ ղեկավարները խնդրում էին «չգաղափարականացնել» ԽՍՀՄ-ի հետ բարեկամությունը և յուրաքանչյուր առիթով արտահայտվում էին իրենց գաղափարախոսական տարբերությունների մասին: Այս կապակցությամբ հատկանշական են Նասերի հետևյալ խոսքերը,՝ Սիրիայի հետ միավորումից առաջ. «Այս երկու տարվա ընթացքում /1955-1957թթ./ ես չեմ տեսել և լսել, որ Խորհրդային Միությունը Եգիպտոսին աջակցելու դիմաց իր համար ինչ-որ արտոնյալ պայմաններ պահանջի կամ անի որևէ բան, ինչը կարող է վնաս հասցնել եգիպտա-ամերիկյան հարաբերություններին: Ընդհակառակը, Խորհրդային Միությունը միշտ բարեկամաբար խորհուրդ է տվել խուսափել հարաբերությունների վատթարացումից և լինել խոհեմ: Իսկ ամերիկյան կողմը որևէ գործնական օժանդակություն չցուցաբերելով, ամենասուր և դժվար պահերին փորձել է շանտաժի ենթարկել՝ ծանր հետևանքների սպառնալիքներով»:[143] Բայց հենց այդ նույն Նասերը երկու տարի հետո երբ արդեն կայացել էր Սիրիայի հետ միավորումը և այնտեղ ճնշման ու հետապնդումների էին ենթարկվում կոմունիստական կուսակցությունն ու համայնավարները, հայտարարեց, որ ԽՍՀՄ-ը միջամտում է Եգիպտոսի ներքին գործերին:

*Եգիպտոսը, ինչպես նաև Սիրիան չվստահելով ոչ ԱՄՆ-ին և ոչ էլ ԽՍՀՄ-ին, մշտապես փորձել են օգտագործել նրանց հակասությունները, առավելագույն տնտեսական, ռազմական և այլ տեսակի օժանդակություն ու արտոնություններ ապահովելով իրենց համար: Նրանք երբեք հնազանդորեն չեն կատարել «հովանավոր» երկրների կողմից թելադրված քաղաքականությունը: Երկբևեռ աշխարհակարգը զարգացող երկրներին ավելի ձեռնտու էր, քան այսօրվա միաբևեռ համակարգը, երբ բացակայում է ԱՄՆ-ին հակակշռելու անգամ որևէ լուրջ լծակ կամ գործոն: Այդ իսկ պատճառով արաբական աշխարհում այսօր առկա է սառը պատերազմի ժամանակների հանդեպ որոշակի կարոտախտը: Բնականաբար, կարոտ ոչ թե ԽՍՀՄ-ի, այլ տարածաշրջանում սառը*

143Ближневосточный конфликт. 1957-1967, с. 47-55; 266-275: Գ.Նասերի որոշ հիասթափությունը Մոսկվայից և ԱՄՆ-ի հետ հարաբերությունները լավացնելու փորձերը նաև ԽՍՀՄ-ի կողմից միջին շառավղի հրթիռներ և ինքնաթիռներ հատկացնելու մերժման հետևանք կարող էր լինել: Բացասական ազդեցություն ունեցան նաև հրապարակումները արևմտյան՝ ֆրանսիական և անգլիական մամուլում Գ.Նասերի դեմ «ԽՍՀՄ-ի կողմից կազմակերպվող մահափորձի մասին»: Նասերի հաշվարկներով, իր «հակակոմունիստական» արշավը կարող էր նաև ապահովել ԱՄՆ-ի աջակցությունը Իրաքում իր հակառակորդ Կասեմին իշխանությունից հեռացնելու հարցում:



*պատերազմի արդյունքում ստեղծված իրավիճակներից և պայմաններից օգտվելու հնարավորությունների նկատմամբ:*

Պաղեստինա-իսրայելական հակամարտության կարգավորման հարցում Սիրիայի դիրքորոշման մասին Սիրիայի արտգործնախարար Սալահ Բիտարը Սիրիայում ԽՍՀՄ դեսպան Ս.Նեմչինային 1958թ. փետրվարին հայտնել է հետևյալը. «Ներկայումս Սիրիան շահագրգռված չէ պաղեստինյան խնդրի կարգավորման մեջ՝ ՄԱԿ-ի 1947թ. Պաղեստինի բաժանման ծրագրի համաձայն, քանի որ այն կարող է հանգեցնել նրան, որ արաբական երկրները ստիպված կլինեն ճանաչել Իսրայելի ու Պաղեստինի բաժանման փաստը, որը արաբական երկրները համարում են անարդար և որի հետ չեն կարող համաձայնվել: Սիրիան, ինչպես անցյալում, այնպես էլ ներկայումս, չի ճանաչում ՄԱԿ-ի բաժանման մասին ընդունված բանաձևը: Սակայն Սիրիան գտնում է, որ պաղեստինյան խնդրից բխող որոշ գործնական հարցեր արժանի են, որ դրանց վերաբերյալ ներկայումս որոշումներ ընդունվեն: Այդ հարցերի շարքին է դասվում, առաջին հերթին, Իսրայել հրեաների ներգաղթի և արաբ փախստականների՝ Իսրայել վերադարձի հարցերը այն հողերի վրա, ուր նրանք բնակվում էին մինչև Պաղեստինի բաժանումը: Իսրայելի բնակչության աճը մտահոգիչ է և անհրաժեշտ է սահմանափակել հրեական ներգաղթը»:[144]

Ընդհանրապես պետք է նշել, որ տվյալ ժամանակաշրջանում Պաղեստինի հարցը Սիրիայի արտաքին քաղաքականության առաջնայնությունների մեջ ընդգրկված չի եղել: Այն ավելի շատ կիրառական կարևորություն է ունեցել Դամասկոսի համար՝ փախստականների, ՄԱԿ-ի օժանդակության ստացման և այլ հարցերի հետ կապված: Սիրիա-իսրայելական հարաբերությունների լարվածությունը ջրային խնդրի, սահմանային հարցերի վերաբերյալ, ավելի առաջնային էին Սիրիայի կառավարության համար:

*Պետք է ընդգծել, որ Պաղեստինի հարցը արաբական օրակարգ է մտել լրջորեն միայն 1963թ.՝ Իրաքում և Սիրիայում Բաաս-ի իշխանության գալուց հետո, իսկ այնուհետև մերձավորարևելյան թատերաբեմում՝ 1964թ. Պաղեստինի Ազատագրության Կազմակերպության /ՊԱԿ/ ստեղծումից հետո:*

Փաստորեն Իսրայելի ռազմատենչ գործողությունների ու սիրիա-իսրայելական սահմանին իրադրության շիկացումը, արտաքին լուրջ վտանգների առկայությունը թե հարևան Իրաքի և թե Թուրքիայի կողմից, ինչպես նաև «Էյզենհաուերի» ամերիկյան նոր հայեցակարգը, ներքին անկայուն իրավիճակը անխուսափելի էին դարձնում Եգիպտոսի հետ Սիրիայի էլ ավելի սերտ մերձեցումը, որն էլ վերջնականապես հանգեցրեց նրանց միավորմանը և Միացյալ Արաբական Հանրապետության /ՄԱՀ/

144Նույն տեղում, էջ 177-178:

ստեղծմանը 1958թ. փետրվարին:[145]

Կարծիքներ կան, որ սիրիական ղեկավարների որոշումը Եգիպտոսի հետ միավորվելու հիմնականում պայմանավորված էր ներքին քաղաքական իրավիճակով՝ երբ կոմունիստական կուսակցությունը աստիճանաբար ուժ և ազդեցություն էր հավաքում երկրի ներսում: Բաաս-ն իր հերթին ամրապնդելով իր դիրքերը երկրի ներսում, հատկապես Սուեզի պատերազմից հետո, հավատարիմ իր համաարաբականության և Արաբական աշխարհի միասնությունն ապահովելու գաղափարախոսությանը, պաշտպանեց միության գաղափարը: Ամենայն հավանականությամբ, բաասականները հույս ունեին Նասերի ձեռքով քաղաքական ասպարեզից հեռացնել իրենց ապագա մրցակիցներին՝ կոմունիստներին:[146]

Ի դեպ, Գ.Նասերը դաշնության գաղափարի ակտիվ կողմնակից չէր:[147] Եթե սիրիական կողմը ցանկանում էր արագացնել Եգիպտոսի հետ միավորման գործընթացը, ապա Նասերն ավելի շատ կողմ էր երկու երկրների միջև փաստացի առավել սերտ համագործակցությանը արտաքին քաղաքական, տնտեսական, ռազմական և մշակութային ոլորտներում, քան այդ դաշնության իրավաբանական՝ ֆորմալ ձևակերպմանը: Նրա հիմնական մտահոգությունը կայանում էր նրանում, որ Սիրիան խորհրդարանական հանրապետություն էր, իսկ Եգիպտոսը՝ նախագահական: Եգիպտոսում քաղաքական կուսակցություններ չկային, իսկ Սիրիայում դրանք շատ էին: Եգիպտոսի ղեկավարին առավել անհանգստացնում էր Սիրիայում կոմունիստական կուսակցության գործունեությունը:[148] Այսուհանդերձ, համարելով իրեն Արաբական աշխարհի առաջնորդ, Նասերը չէր կարող նաև մերժել միություն կազմելու

[145]Եգիպտոսի և Սիրիայի միությանն ուղղված գործընթացի մասին տես. Malik, Mufti. Sovereign Creations: Pan-Arabism and Political Order in Syria and Iraq. Ithaca, N.Y.: Cornell University Press, 1996), chap. 6. Torrey, Gordon. Syrian Politics and the Military, 1945–58 (Columbus: Ohio State University Press, 1964) pp. 374–81; Seale, Patrick. The Struggle for Syria. London. 1965, chap. 22.

[146] Barnett N. Michael. Dialogues in Arab Politics: Negotiations in Regional Order. Columbia University Press, 1988, ch. 5. The Ascent and Descent of Arabism, 1956-1967; Rabinovich, Itamar. Syria Under the Ba'ath, 1963–66, pp. 9–10; 15.

[147] Մինչ այդ երկու երկրների միջև ստորագրված պաշտպանական համաձայնագրով արդեն իսկ հաստատվել էր համատեղ զինվորական հրամանատարություն, արտաքին քաղաքականության մշակման համար ստեղծվել էր նախարարներից կազմված միացյալ կոմիտե, լուրջ քայլեր էին ձեռնարկվել տնտեսության զարգացման համատեղ ծրագրավորման, կրթական համակարգերի համապատասխանեցման ուղղությամբ:

[148]Համարելով կոմունիստներին «երրորդ շարասյուն» և «ԽՍՀՄ-ի գործիք», Գ.Նասերը միավորումից հետո անհաշտ պայքար ծավալեց երկրում համայնավարների դեմ, դրանով որոշակի լարվածություն առաջացնելով ԽՍՀՄ-ի հետ հարաբերություններում, իսկ ԱՄՆ-ին՝ Նասերի հետ մերձենալու հույսեր ներշնչեց:



սիրիական առաջարկը:[149]

«Ամուսնությունն» այնուամենայնիվ կայացավ, երկու երկրներում էլ մարդիկ ուրախության և տոնական տրամադրության մեջ էին: Եվ զարմանալի չէ, որ միության հայտարարումից մի քանի օր հետո Եգիպտոսում և Սիրիայում կայացած հանրաքվեները գրանցեցին կողմ քվեարկածների համապատասխանաբար՝ 99.25 և 99.8 բարձր տոկոսներ:




**Syrian referendum card: "Do you agree to the union of Syria and Egypt in the United Arab Republic? Agree. Disagree."**150

Միության ստեղծումն իր ուրույն ազդեցությունն ունեցավ 1958թ. Լիբանանում, այնուհետև նաև Իրաքում և Հորդանանում ներքաղաքական իրադրության ապակայունացման գործում, ինչն առիթ տվեց ԱՄՆ-ին և Անգլիային ռազմական ուժով ուղղակի միջամտելու այդ երկրների ներքին գործերին՝ համապատասխանաբար Լիբանանում և Հորդանանում:

Սիրիայի և Եգիպտոսի միության տարիներին պաղեստինա-իսրայելական հակամարտությունը նույնպես առաջնային տեղ չէր գրավում ՍԱՀ-ի արտաքին քաղաքականության մեջ: Հակամարտող կողմերը՝ թե արաբները և թե իսրայելցիները ավելի շատ զբաղված էին քարոզչությամբ, քան խնդրի կարգավորմամբ: Այսպես, Նասերը վերահսկում էր Գազայի հատվածը և միայն ձևականորեն էր բարձրացնում էր Պաղեստինի պետության ստեղծման հարցը: Հորդանանը լիովին գոհ էր ստեղծված իրավիճակից, երբ Պաղեստինի

[149] Նասերի պահանջով միավորումից հետո ՍԱՀ-ում արգելվեց քաղաքական կուսակցությունների գործունեությունը:

[150] Սիրիայում անցկացված հանրաքվեի հարցաթերթիկը. «Համաձայն եք Սիրիայի և Եգիպտոսի միավորմանը՝ Միացյալ Արաբական Հանրապետության մեջ»:

շրջափեյի մասը Հորդանան գետի արևմտյան մասում փաստորեն կլանվել էր իր կողմից: Միևնույն ժամանակ, Հուսեյն թագավորը հայտարարելով հորդանանյան հպատակություն ստանալու բոլոր պաղեստինցիների իրավունքի մասին, փաստորեն օրակարգից հանում էր նաև պաղեստինցի փախստականների խնդիրը: Իսրայելը, թերևս, բավարարված էր 1948թ. պատերազմի արդյունքում Պաղեստինից գրաված իր մասով:

Իսրայելի և ՍԱՀ-ի միջև գոյություն ունեցող միակ ամենասուր հարցը շարունակում էր մնալ Սուեզի ջրանցքով իսրայելական բեռների ազատ տեղափոխման հարցը: 1960թ. փետրվարի 1-ին իսրայելական զինված ուժերը խոշոր ռազմական սադրանք իրականացրեցին՝ զորքերը մտցնելով Տիբերիական լճի հարավ-արևելյան մասի ապառազմականացված գոտի և ավերելով սիրիական Հիրբաթ-Թավաֆիկ գյուղը: Միջադեպը սկսվեց նրանով, որ այդ գոտում սիրիացիների վերահսկողությունը չթույլատրելու նպատակով իսրայելցիները սկսեցին հողերի մշակումն այդ տարածքում: Դիտարկելով նման գործողությունները, որպես իրենց տարածքի ներխուժում՝ սիրիական կողմը կրակ բացեց գյուղացիների վրա: Ի պատասխան, իսրայելական զինվորները ավերեցին ողջ գյուղը: Միջադեպը Իսրայելի և ՍԱՀ-ի միջև հարաբերությունների ծայրաստիճան սրման պատճառ հանդիսացավ: Եգիպտական բանակը շարժվեց դեպի Սինայի թերակղզի: Սակայն բացահայտ բախումից հնարավոր եղավ խուսափել: Եվ պետք է նշել, որ ԱՄՆ-ի ակտիվ միջամտությունը իր դրական դերն ունեցավ իսրայելական կողմին զսպելու ուղղությամբ: ԱՄՆ-ի նախագահը անգամ ելույթ ունեցավ, ուր նշեց, որ Վաշինգտոնը «այսուհետ ևս ձեռնպահ կմնա Իսրայելին զենք մատակարարելուց»:[151] Ամերիկյան երկու ռազմանավ մտան հորդանանյան Աքաբա նավահանգիստ, միևնույն ժամանակ նշվեց, որ Վաշինգտոնի այս քայլը թելադրված է ՍԱՀ-ի և Իսրայելի սահմանին իրավիճակի վատթարացման հետ:

Մեր կարծիքով, ԱՄՆ-ի վերոհիշյալ քայլերը առաջին հերթին, Եգիպտոսի համակրանքը շահելու և Կահիրեի հետ հարաբերությունները բարելավելու նպատակ էին հետապնդում: Իսրայելն էլ իր հերթին օգտագործեց իրավիճակի ապակայունացումը՝ ՍԱՀ-ից սպառնացող վտանգի պատճառաբանությամբ ԱՄՆ-ի օժանդակությունն ապահովելու նպատակով: Միջադեպից անմիջապես հետո, մարտի 7-ին, Բեն-Գուրիոնի այցը ԱՄՆ-ը հստակ ամրագրեց այն ուղեգիծը, որ արաբական երկրների հետ մերձեցման իր ցանկությունը երբեք չի իրականացվի Իսրայելի հաշվին:

*Այս երկու հակասող ցանկությունների համատեղումը՝ Իսրայելի հետ համագործակցության խորացումը և արաբական երկրների հետ հարաբերությունների բարելավումը, տարիներ ի վեր խոչընդոտեց և այսօր*

[151] Ближневосточный конфликт. 1957-1967, с. 311-313.



*էլ դեռ շարունակում է խոչընդոտել ԱՄՆ-ի արդյունավետ արտաքին քաղաքականության իրականացմանը տարածաշրջանում:*

Եգիպտոսի հետ միավորման տարիները մենք առանձնացրել ենք որպես Սիրիայի նորագույն քաղաքական պատմության երկրորդ ժամանակաշրջան, որը տևեց ընդամենը երեք ու կես տարի և որի ընթացքում Սիրիան կորցրեց իր քաղաքական անկախությունը և պահպանվեց զուտ որպես աշխարհագրական միավոր:[152]

Միավորման ժամանակաշրջանում անտեսվեցին Սիրիայի տնտեսական զարգացման առանձնահատկություններն ու քաղաքական պայմանների տարբերությունները համեմատած Եգիպտոսի հետ: Սիրիական գործարար խավը դժգոհ էր Գ.Նասերի վարած սոցիալ-տնտեսական քաղաքականությունից և եգիպտական բուրժուազիայի՝ Սիրիական շրջանում գերիշխանություն հաստատելու ձգտումից:[153]

Սիրիայի ներքին քաղաքական իրավիճակի սրման արդյունքում 1961թ. սեպտեմբերին վերջ դրվեց ի սկզբանե հեռանկար չունեցող այդ միությանը: Եգիպտոսի անհաշվենկատ և «գաղութային» քաղաքականությունը Սիրիայի հանդեպ, «արաբական սոցիալիզմի» բռնի ներդրումը Սիրիայում, նասերիզմի և բաասիզմի գաղափարախոսական տարբերությունները՝ հատկապես արաբական միասնականության հարցում,[154] այս ամենը հանգեցրին արաբական երկրների նորագույն պատմության ընթացքում միավորման առաջին և վերջին փորձի տապալմանը:[155]

Այս փլուզումը արձանագրեց Արաբական աշխարհում համաարաբականության /պանարաբիզմի/ գաղափարախոսության ճգնաժամը: Այն արդեն չէր համապատասխանում ժամանակի պահանջներին և կորցրել էր իր նախկին քաղաքական նշանակությունը:[156]

[152] Երրորդ շրջանն ընդգրկում է 1961-1970թթ. փոթորկալից ինը տարիները, երբ Եգիպտոսից անջատվելուց հետո միայն տարածաշրջանային քաղաքականության օրակարգում դրվեց Սիրիան այլ պետությունների ազդեցության ոլորտից հանելու և «ինքնուրույն» պետություն դարձնելու հարցը: Չորրորդ շրջանը՝ 1970-2000 թթ. Հ.Ասադի իշխանության ժամանակաշրջանն է: Իսկ 2000թ. հունիսից սկիզբ դրվեց վերջին՝ Բաշար Ասադի կառավարման շրջանին:

[153] Փիր-Բուդաղովա Է.Պ. Քաղաքական և սոցիալ-տնտեսական վերափոխումները Սիրիայում (1962-1970թթ.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, ժողովածու IX հատոր, Արաբական երկրներ, ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1978, էջ 27:

[154] Նասերի արաբիզմը քարոզում էր արաբական ինքնիշխան պետությունների փոխկապակցվածությունը ուժի և անվտանգության հիման վրա, իսկ Բաասի արաբիզմը՝արաբական միասնության իրականացումը միասնական քաղաքական մեկ միավորի ստեղծման միջոցով:

[155] Մի քանի տարի հետո, 1963թ. Իրաքի և Սիրիայի բաասականները անհաջող փորձեր կատարեցին Եգիպտոսի հետ միավորման ուղղությամբ:

[156] Григорян. Г. Позиция Сирии в ближневосточном конфликте, стр.24.

Պետության շահերը վեր դասվեցին արաբական միասնության գաղափարներից: Նորից հաղթանակեց «երկրային» ազգայնականությունը՝«սիրիանիզմը»:[157]

Սիրիայի ամենահզոր քաղաքական ուժը՝ Բաասն իր 1961թ. հոկտեմբերի 5-ի հայտարարության մեջ դատապարտեց «երկրում զինվորական դիկտատուրա հաստատելու փորձը, որը թելադրված էր հետադիմական ուժերի կողմից և հետապնդում էր նրանց տնտեսական և կապիտալիստական շահերը»:[158]

Միության կողմնակիցները շատ էին Սիրիայում անջատման հեղաշրջումից հետո, այդ իսկ պատճառով ներքին քաղաքական մասնատվածությունը՝ հատկապես իշխանությունների քաղաքացիական և զինվորական թևերի միջև, հեշտացրին 1963թ. մարտին Սիրիայի բաասականների կողմից հեղաշրջման իրականացումը Դամասկոսում:[159] Սկսվեց մի նոր ժամանակաշրջան Սիրիայի քաղաքական կյանքում, որն ազդարարեց «Սիրիայի համար» պայքարի ավարտն ու ձևավորեց մինչ օրս Սիրիայում գործող քաղաքական համակարգը:

***Տարածաշրջանում գաղափարական հակասությունների և ընդհանուր ռազմաքաղաքական լարվածության աճի պայմաններում, Բաաս-ը արաբական քաղաքական ուշադրության կենտրոն վերադարձրեց Պաղեստինի հիմնախնդիրը և դրանում է կայանում նրա ամենակարևոր պատմական առաքելություններից մեկը:***

Բաաս-ի հաղթանակը վերացրեց 1940-ականների վերջից Դամասկոսի և Հալեպի՝ երկու մրցակից վերնախավերի գերիշխանությունը Սիրիայի քաղաքական կյանքում: Այսպիսով, Սիրիայի հայտնի «50 ընտանիքների» փոխարեն քաղաքական ասպարեզ եկավ կազմակերպված և փոփոխությունների կողմնակից ակտիվ ուժ, որն ավելի քան չորս տասնամյակ ղեկավարում է երկիրը:

[157] Примаков Е.Конфиденциально: Ближний Восток на сцене и за кулисами (вторая половина XX-начало XXI века, стр.58.

[158] Григорян Г. Позиция Сирии в ближневосточном конфликте, стр.23.

[159] Մեկ ամիս առաջ Իրաքում նույնպես բաասականները իրականացրել էին հեղաշրջում:



## *ԻՍՐԱՅԵԼԻ ԵՎ ՍԻՈՆԻԶՄԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ ԲԱԱՍԱԿԱՆ ՆՈՐ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ*

1963 թվականը շրջադարձային էր Սիրիայի քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացման համար: Մարտի 8-ին հեղաշրջման հետևանքով երկրում իշխանության եկավ Բաաս:[160] Վերջինիս քաղաքական-գաղափարաբանական ծրագիրը, որով սահմանվեց քաղաքականությունը «Միասնություն, Սիրիայի արտաքին և ներքին քաղաքականությունը «Միասնություն, ազատություն, սոցիալիզմ» կարգախոսի տակ, մշակվել և ընդունվել էր Դամասկոսում 1947թ. կայացած կուսակցության հիմնադիր համագումարի ժամանակ:

Այն հռչակում էր արաբական ազգի /ումմայի/ միավորումը միասնական սոցիալիստական հասարակության մեջ: Ըստ բաասական միասնական գաղափարախոսության, Արաբական հայրենիքը /վաթանը/, միասնական քաղաքական և տնտեսական ամբողջություն է: Արաբական *ումմայի* միասնությունը հանդես է գալիս նաև որպես արաբական մշակութային միասնություն:

Արաբական միասնության վերաբերյալ Բաասի հեղափոխական կոչերը ունեին ավելի շատ դեկլարատիվ բնույթ և նպատակամղված էին հիմնականում ներքին քաղաքական սպառման համար: Նրանց հռչակած՝ արաբական միավորումը միասնական պետության տեսքով անհնար էր իրականացնել ներքին և արտաքին տարբեր մարտահրավերների առջև կանգնած, պատմական և ընթացիկ զարգացման տարբեր մակարդակներ ունեցող արաբական երկրների միջև:

1945թ. ստեղծված միակ համաարաբական կազմակերպությունը՝ Արաբական պետությունների լիգան,[161] անկարող գտնվեց իրականացնելու իր վրա դրված առաքելությունը՝ ոչ միայն Արաբական երկրների քաղաքական միավորման, այլև միասնական համակարգի մեջ

[160] Այն հիմնադրվել էր Միշել Աֆլակի /քրիստոնյա/ և Սալահ Բիտարի/ մահմեդական/ կողմից, որոնք ուսուցիչներ էին Դամասկոսից և ավարտել էին Փարիզի Սորբոնի համալսարանը: Բաասի վերաբերյալ տես՝ K.Abu Jaber. The Arab Ba`th Socialist Party. A History. Syracuse, NY,1966; J.F.Delvin. The Ba`th Party: A History. Stanford, Calif., 1976; Itamar Rabinovich. Syria under Baath:1963-66:The Army-Party Symbiosis. Israel University Press, Jerusalem, 1972; արաբերեն. افلاق ميشيل. فى سبيل البعث. بيروت، 1959 ،ص102; الجندى سامى. البعث. بيروت، 1969 ،ص297; الرزاز منيف. التجربة المرة. بيروت، 1967 ،ص 10-; نضال البعث 1943-1949. بيروت، 1963 ،ص209; نضال حزب البعث 1943-1975. دمشق، 1978 ،ص398. Բաասի գործունեության քննադատական աշխատանք է. Մուսա Սաֆադի. Հիզբ ալ-Բաաս. Բեյրութ,1964:

[161] Արաբական պետությունների լիգայի ստեղծման նախաձեռնությունը եկավ Լոնդոնից, որը մտադիր էր միասնական այդ կազմակերպության միջոցով պահպանել իր մենիշխանությունը Մերձավոր Արևելքում: Արաբական լիգայի մասին տես՝ Կարամանուկյան Շ., Արաբական Պետությունների Լիգայի դերը արաբական երկրների հակաիմպերիալիստական պայքարում, Երևան, 1988:

ընդգրկելու ուղղությամբ: Արաբական աշխարհը չմիավորվեց ոչ տնտեսական միասնական շուկա ստեղծելու, ոչ էլ ԵՄ-ի օրինակով՝ մարդկանց, ապրանքների և ծառայությունների ազատ հոսքը պետությունների միջև փոխադարձաբար ապահովելու շուրջ: Տարիներ ի վեր այդ կազմակերպության օրակարգում դրված էր Արաբական խորհրդարանի ստեղծման հարցը, ինչը նույնպես դեռևս իրականություն չի դարձել:

Այնուամենայնիվ, պետք է արձանագրել, որ Արաբական լիգան հանդիսացավ մինչ օրս գործող միակ համաարաբական կազմակերպությունը, որն անցնելով երկար ու ձիգ ճանապարհ դեռևս փորձում է լուծումներ գտնել Արաբական աշխարհում առկա բազմաթիվ խնդիրների համար: Միանգամայն արդարացի է Ե.Պրիմակովը երբ նշում է, որ «անհնար է հերքել Արաբական լիգայի գոյության և գործունեության օգտակարությունը, սակայն այն երբեք չի լուծել միասնական արաբական պետություն կամ արաբական աշխարհում ընդհանուր վերնաշենքային պետական համակարգեր ստեղծելու խնդիրը»:[162]

Պաղեստինի հիմնախնդիրը նույնպես ի սկզբանե ավելի շատ արաբական երկրները բաժանող քան միավորող հանգամանք էր հանդիսանում՝ հակառոդ շահերի առկայության պատճառով, սկզբում Հորդանանի և Եգիպտոսի կողմից նրա տարածքների վերահսկողության, այնուհետև Պաղեստինի ազատագրության կազմակերպությունն ու նրա ղեկավարությունը վերահսկելու պատճառով: Վերջին դեպքում պայքարը ծավալվում էր Սաուդյան Արաբիայի, Եգիպտոսի և Սիրիայի միջև: Նրանք մշտապես ձգտել են իրենց շահերին հարմարեցնել ՊԱԿ-ի և նրա ղեկավարության գործունեությունը: Հակասությունները ծագեցին արդեն իսկ ՊԱԿ-ի առաջին ղեկավար Ա.Շուքեյրիի առաջադրումից հետո: Իսկ Լիբանանում և Հորդանանում պաղեստինցիների ակտիվությունը անմիջական կապված էր այդ երկրների ներքաղաքական իրավիճակի հետ: 1970թ. Հորդանանի ճգնաժամը և այնուհետև Լիբանանում ծագած քաղաքացիական պատերազմն ու Իսրայելի ներխուժումն այդ երկիր 1982թ.՝ ցույց տվեցին, որ Պաղեստինի հարցը ստորադասվում է արաբական երկրների կողմից սեփական անվտանգության և կայունության ապահովման հարցերին:

*Բաաս-ն առաջին քաղաքական կազմակերպությունն էր արաբական աշխարհում, որն իր գաղափարաբանական ու արտաքին քաղաքական գործունեության առանցքում դրեց հակասիոնիզմն ու Իսրայելի դեմ պայքարի առաջնայնությունը:*

Տարբեր կարծիքներ կան հիմնավորելու բաասականների կողմից «հակասիոնիստական» քաղաքականության որդեգրման փաստը:

---

[162] Примаков Е.Конфиденциально: Ближний Восток на сцене и за кулисами (вторая половина XX-начало XXI века), с.61-62.



Մասնագետների մի խումբ գտնում է, որ այն ուղղակիորեն կապված է կուսակցության գաղափարական հենքը կազմող «սուրբ եռյակից» մեկի՝ ազատության համար հռչակված պայքարի անհրաժեշտության հետ: Բաասականների համար անհատական ազատությունների հաստատումը անքակտելիորեն կապված էր մեծ տերությունների՝ իմպերիալիստական վերահսկողությունից ազատվելու հետ: Պաղեստինում սիոնիստական ծրագրերի իրականացումը և Իսրայելի պետության ստեղծումը իմպերիալիստների հովանավորությամբ այդ հակաիմպերիալիստական շղթայի մասն էր հանդիսանում: Ըստ Բաասի, Արաբական աշխարհի ազատագրումը անհնար է առանց Պաղեստինի ազատագրման, ուստի Իսրայելի և նրա հովանավորների դեմ պայքարը համարվեց կուսակցության հիմնական նպատակներից մեկը:

Հեղինակների մյուս խումբը, հիմնականում արևմտյան և իսրայելյան, հակված է Սիրիայի բաասական իշխանությունների հակաիսրայելական ակտիվ քարոզչությունն ու քաղաքականությունը, կապել երկրի ներքին զարգացումների հետ: Սոցիալական լայն հենարանի բացակայության պայմաններում, երկրի փոքրամասնությունը ներկայացնող բաասական ալավի վերնախավը փորձում էր հակաիսրայելական և հակասիոնիստական կարգախոսներով շեղել իսլամական դժգոհ զանգվածների ուշադրությունը ներքին խնդիրներից, ինչպես նաև Իսրայելի վտանգի մշտական առկայության հիմնավորումով արդարացնել երկրում հաստատված «ռնապետական պատժիչ» վարչակարգն ու Իսրայելին դիմակայող առաջնային պետության կարգավիճակի հաստատմամբ ամրապնդել սեփական դիրքերը տարածաշրջանում և ապահովել մեծ տերության՝ ԽՍՀՄ-ի և արաբական այլ երկրների շարունակական աջակցությունը:

Հիմնականում համաձայնվելով Բաասի հակասիոնիստական դիրքորոշման և հետևաբար՝ հակաիսրայելական քաղաքականության գաղափարական հիմնավորման հետ, այնուամենայնիվ, կարծում ենք, որ տվյալ ժամանակահատվածում, հատկապես Եգիպտոսի հետ միավորման անհաջող փորձից հետո, Իսրայելի դեմ պայքարի շեշտադրումով բաասական նոր իշխանությունները փորձում էին բարձրացնել կուսակցության հեղինակությունը երկրի ներսում ու միջարաբական ասպարեզում, ինչպես նաև ակտիվացնել սեփական դերակատարությունը համաարաբական խնդիրների լուծման գործում: Դժվար թե բաասականները այնքան միամիտ լինեին, որպեսզի կարծեին թե Պաղեստինի հարցը և ընդհանուր թշնամու՝ Իսրայելի դեմ պայքարը կարող է միավորել արաբական երկրները:

Վերոհիշյալի ապացույցը կարող է լինել այն, որ Սիրիայի բաասական ղեկավարները առանց հաշվի առնելու սեփական կարողությունները՝ հանդես էին գալիս Իսրայելի դեմ պատերազմի կոչերով: Այսպես, 1964թ. սեպտեմբերի 13-ին Ալեքսանդրիայում կայացած

Արաբական լիգայի երկրների ղեկավարների համաժողովում՝ Սիրիայի ներկայացուցիչ Ա.Հաֆեզը հանդես եկավ Իսրայելի վրա անհապաղ հարձակվելու առաջարկով: Արաբական երկրների կողմից «ռազմական ոչ բավարար պատրաստվածության» պատճառաբանությամբ առաջարկը մերժվեց, հիմնականում՝ Եգիպտոսի կողմից: Նասերը որակում էր Սիրիայի բաասականներին որպես «տաք գլուխների» կամ «Մերձավոր Արևելքի պրուսացիների», նշելով որ արաբական աշխարհի ներկա կարողությունները չեն կարող ապահովել սրընթաց հաղթանակ՝ «մի քանի օրվա ընթացքում», որպեսզի բացառվի մեծ տերությունների և ԱՄՆ-ի ԱԽ-ի միջամտությունը:[163]

Ինչ վերաբերում է Սիրիայի կողմից Իսրայելի դեմ պայքարի շահարկմանը ներքին ու արտաքին նկատառումներից ելնելով, ապա կարծում ենք, որ տասնամյակներ պաթոլոգիական անկայունություն ապրող երկրում կայունություն ապահովելու միակ միջոցը ուժեղ կենտրոնաձիգ իշխանական համակարգի ստեղծումն էր, որ հաջողվեց իրականացնել միայն Հաֆեզ Ասադին: *Սիրիայում ցայտուն կերպով ի հայտ եկավ ներքին և արտաքին քաղաքական փոխկապակցվածության հանգամանքը: Ներքին կայունության ապահովման միջոցով հնարավոր եղավ ապահովել արտաքին քաղաքական կուրսի հետևողականությունն ու շարունակականությունը: Եվ, հակառակը, արտաքին քաղաքական առաջնայնությունների շարքում Իսրայելի դեմ պայքարի ամրագրումը հանգեցրեց ռազմական և անվտանգության հզոր համակարգերի ստեղծմանը, որի միջոցով էլ ապահովվեց երկրի ներքին կայունությունը: Թե այդ ինչ մեթոդներով և ինչ գնով արվեց արդեն մեկ այլ, առանձին հետազոտության առարկա է:*

Բաաս կուսակցության հիմնադիր համագումարի քաղաքական փաստաթղթում արդեն իսկ նշվեց «Պաղեստինում սիոնիզմի դեմ պայքարն ակտիվացնելու անհրաժեշտությունը»: 1947թ. նոյեմբերի 29-ի Պաղեստինի բաժանման վերաբերյալ ՄԱԿ-ի բանաձևի ընդունման կապակցությամբ Բաասը քննադատելով իմպերիալիստական ծրագրերի իրականացումը Պաղեստինում, կոչ արեց կազմավորել կամավորների ջոկատներ՝ սիոնիստների դեմ պայքարելու նպատակով. «Արաբական ժողովրդի զանգվածներ. այս ճակատամարտը վճռորոշ նշանակություն ունի և դրա ելքից է կախված լինելու ձեր և ձեր զավակների, գալիք սերունդների ճակատագիրը»:[164]

Ինչպես ցույց տվեցին հետագա զարգացումները և հատկապես 1973թ. պատերազմն ու դրան հաջորդած՝ Եգիպտոսի կողմից Քեմփ-Դևիդում հաշտության պայմանագրի ստորագրումը Իսրայելի հետ, արաբական երկրները Իսրայելի դեմ պայքարի հարցում տարբեր

[163] Ближневосточный конфликт. 1957-1967, с. 438-441.

[164] .1949-1943 نضال البعث, էջ 58:



մարտավարական մոտեցումներ էին որդեգրել ու տարբեր նպատակներ էին հետապնդում: Սադդամ Հուսեյնի Իրաքը Ծոցի արաբական երկրների համար ավելի մեծ վտանգ էր ներկայացնում, քան Իսրայելը: Իրաքի՝ Քուվեյթ ներխուժումը ցրեց արաբական միասնականության վերաբերյալ բոլոր պատրանքները:

1963-1966թթ. ընթացքում Սիրիայի և Իսրայելի միջև ամենից սուր և լարված հարցը շարունակում էր մնալ Իսրայելի կողմից Հորդանան գետի ջրային պաշարների տնօրինումը: Դեռևս 1953թ. Իսրայելի կառավարությունը աշխատանքներ սկսեց Տիբերիական լճի հյուսիսային մասում՝ ապառազմականացված գոտում, որտեղից նախատեսվում էր ջուրը երկու ջրանցքներով հասցնել մինչև լճից մի քանի հարյուր մետր հեռավորության վրա գտնվող Թաիֆա լեռան տակ կառուցվելիք արտամղիչ համակարգերը, որտեղից էլ ջուրը, ըստ նախագծի, պետք է արտամղվեր դեպի Նեգևի անապատ: Այդ համակարգերի աշխատանքն ապահովելու նպատակով նախատեսվում էր երկու փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումը:

Սակայն 1953թ. Սիրիայի բողոքից հետո և ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի ճնշման տակ Իսրայելը ստիպված եղավ կասեցնել այդ ծրագիրը, որը, սակայն, վերսկսեց մի քանի տարի հետո: Այս կապակցությամբ 1962թ. փետրվարին Սիրիայի վարչապետ Մաառուֆ Դավալիբին ԽՍՀՄ դեսպանին հայտնել է հետևյալը. «Սիրիան պատրաստ է դիմել ռազմական միջոցների՝ Իսրայելի աշխատանքները կասեցնելու նպատակով: Անգամ եթե մենք ստիպված լինենք պատերազմելու միայնակ»: Այնուհետև Դավալիբին դիմել է ՄԱԿ-ի ԱԽ-ի բոլոր անդամ երկրներին՝ Իսրայելի վրա ճնշում բանեցնելու խնդրանքով:[165]

Ջրային խնդիրը քննարկվեց 1964թ. հունվարի 13-17 Կահիրեում կայացած Արաբական լիգայի անդամ երկրների ղեկավարների գագաթնաժողովը:[166] Արաբական երկրների կողմից ի հակակշիռ իսրայելական ծրագրի, ընդունվեց «արաբական ծրագիրը» Հորդանան գետի ջուրը Լիբանանի, Հորդանանի և Սիրիայի տարածք ուղղելու վերաբերյալ: Նախատեսվում էր ստեղծել աշխատանքային խումբ, իսկ Քուվեյթը, Եգիպտոսն ու Սաուդյան Արաբիան այդ նպատակի իրականացման համար պարտավորվեցին տրամադրել վեց ու կես միլիոն ֆունտ:[167] Համաժողովի ընթացքում քննարկվեց «արաբական միացյալ հրամանատարության» ստեղծումը ՍԱՀ-ի զինված ուժերի գլխավոր

[165] Նույն տեղում, էջ 376-378:

[166] Գագաթնաժողովի ընթացքում քննարկվեցին Պաղեստինցիների կազմակերպության ստեղծման, միջարաբական խնդիրների՝ սաուդա-եմենյան, ալժիրա-մարոկկյան կարգավորման հարցերը: Այն կարևոր դեր խաղաց ՍԱՀ-ի կազմից Սիրիայի դուրս գալուց հետո Նասերի անձնական հեղինակության վերականգնման ուղղությամբ:

[167] Ближневосточный конфликт. 1957-1967, с. 409.

շտաբի պետի ղեկավարության տակ: Նախատեսվում էր 15 մլն ֆունտ տրամադրել Լիբանանի, Հորդանանի և Սիրիայի զինված ուժերի ամրապնդման համար: Պայմանավորվածություն ձեռք բերվեց՝ «միացյալ հրամանատարության» տրամադրության տակ դնել 200 հազարական զինվոր յուրաքանչյուր արաբական երկրից, որոնք պետք է գտնվեն իրենց երկրի տարածքում:[168] Կահիրեի գագաթնաժողովում ընդունված կարևոր որոշումներից էր «պաղեստինյան ժողովրդի քաղաքական կազմակերպության» ստեղծումը, որը հանձնարարվեց Ա. Շուքեյրիին: Վերջինս 1964թ. սեպտեմբերին Ալեքսանդրիայում կայացած Արաբական լիգայի երկրների ղեկավարների գագաթնաժողովի ընթացքում եգիպտացիների պնդմամբ նշանակվեց նորաստեղծ Պաղեստինի Ազատագրության կազմակերպության /ՊԱԿ/-ղեկավար՝ չնայած Սիրիայի, Սաուդյան Արաբիայի և պաղեստինյան որոշ շրջանների դիմադրությանը:

Աստիճանաբար սրվում էր ներքաղաքական իրավիճակը Սիրիայում: 1963թ. բաասական հեղաշրջմանը չէին մասնակցել կուսակցության վետերանները՝ նրանց վերապահված էր հիմնականում երկրորդական դերակատարություն: Երկրի նոր ղեկավարները իրենց գաղափարախոսական «սուրբ եռյակից» հիմնական շեշտադրումը դրեցին սոցիալիզմի վրա, որը դարձավ կուսակցության հիմնական նպատակներից մեկը: Բանակի և կուսակցության համատեղումը, միակուսակցական համակարգի «վերևից» ներդրումը և ցեղային ու համայնքային խտրականության դրսևորումները լուրջ հարված հասցրեցին Բաասի հեղինակությանը: Իշխանության երեք տարիների ընթացքում պայքար ծավալվեց կուսակցության երիտասարդ, հեղաշրջումն իրականացնող ծայրահեղական, գյուղացիական կամ «աջ» բաասականների, և կուսակցության հին, ավելի չափավոր վետերան առաջնորդների միջև: Վերջիններս դեմ էին վարչակարգի հայեցակարգային սոցիալիզմին և պանարաբիզմի անտեսմանը: Պայքարը հիմնականում ծավալվել էր Սալահ Ջադիդի, Մուհամմադ Ումրանի և Ամին ալ-Հաֆեզի միջև:

Միջկուսակցական անհաշտ պայքարի արդյունքում 1966թ. փետրվարի 23-ին իշխանությունը Սիրիայում գրավեց Բաասի «ձախ», մարքսիստական ուղղվածություն ունեցող թևը, հաղթանակ տանելով աջերի և նասերականների դեմ: Եվ ինչպես Ե.Պրիմակովն է նշում. «հեղաշրջումից անմիջապես հետո՝ Սիրիայի վարչապետի հետ կայացած հանդիպումից հետո, ես համոզվեցի այն բանում, որ Սիրիայում իշխանության են եկել Բաասի աջ թևի հակառակորդները, որոնք

[168] « روز اليوسف », /եգիպտական օրաթերթ/, 22 հունվարի 1964թ.:



հականասերական չէին, այլ հակառակը, ձգտում էին լավ հարաբերություններ հաստատել Եգիպտոսի հետ»: [169]

Սիրիայի փաստացի ղեկավարումը կենտրոնացավ ԲԱԱՍ-ի քաղաքական քարտուղար Սալահ Ջադիդի ձեռքերում: Երկրի նախագահի պաշտոնը, ըստ օրենքի, պետք է զբաղեցներ բնակչության 70 տոկոսը կազմող սուննի մահմեդական համայնքի ներկայացուցիչը: Այդ իսկ պատճառով Ջադիդը, ներկայացնելով Սիրիայի ալավի փոքրամասնությունը, պաշտոնապես չհայտարարեց իրեն նախագահ՝ սահմանափակվելով Բաաս-ի տարածաշրջանային քարտուղարի օգնականի պաշտոնով:

Սակայն իրականում Ջադիդը համար առաջին մարդն էր երկրում: Նա առանցքային պաշտոնների նշանակեց իր բոլոր մտերիմներին և համախոհներին: Վարչապետ դարձավ դոկտոր Յուսուֆ Զուայինը, նախագահ՝ Նուր ադ-Դին ալ-Ատասին: Չնայած օրըստօրե աճող տարաձայնություններին՝ բանակում հեղինակություն վայելող գնդապետ Հաֆեզ Ասադի և Սալահ Ջադիդի միջև, վերջինս Ասադին վստահեց պաշտպանության նախարարի պաշտոնը:

Յ.Զուայինի գլխավորած կառավարությունը հաճախ բնութագրվում է իբրև «լենինյան ոճի կառավարություն»[170], որը հետապնդում էր հեղափոխական գաղափարներ, հենվելով հիմնականում միջին դասակարգի զինվորականների, գավառական ուսուցիչների, կրոնական և ազգային փոքրամասնությունների ու չքավոր խավերի վրա: Ջադիդի օրոք հիմք դրվեց երկրի տնտեսության վրա պետական հսկողությանը: Ունևոր և հարուստ սիրիացիների մեծ մասը լքեց հայրենիքը: Երկիրը բաժանվեց երկու խավերի՝ բարեկամ «բանվորների», «զինվորների», «գյուղացիների», «ուսանողների», «կանանց» ու թշնամի՝ «ֆեոդալների» և «հետադիմականների»:

Այնուհանդերձ այդ բոլոր փոփոխությունների մեջ կային նաև դրական կողմեր. Ջադիդի մերձավոր շրջապատը հիմնականում կազմված էր ազնիվ մարդկանցից, որոնք փորձում էին «պլանավորել» երկրի տնտեսության զարգացումն ու իրականացնել բազմաթիվ արդյունաբերական նախագծեր, ինչպիսիք էին մայրուղիների և երկաթգծերի կառուցումը, երկրի հյուսիսում նոր հայտնաբերված նավթահորերի շահագործումը և այլն:

Պետք է նշել, որ այս նախագծերի մեծամասնությունն իրականացվեց Խորհրդային Միության օգնությամբ, օրինակ՝ Եփրատի ափին նոր հիդրոէներգետիկ համալիրի, Հոմսում նավթամշակման

[169] Примаков Е. Конфиденциально: Ближний Восток на сцене и за кулисами (вторая половина XX-начало XXI века), с.82.
[170] Seale P, The Assad and the Struggle for the Middle East, p 64.

գործարանի կառուցումը և այլն:[171] Սիրիայի կոմունիստական կուսակցության ղեկավար Խալեդ Բաղդաշը 8 տարվա աքսորից հետո վերադարձավ Սիրիա, իսկ երկրի պատմության մեջ առաջին անգամ համայնավար Սամիհ Ատիյան դարձավ կառավարության անդամ, որպես Հաղորդակցության նախարար: Այս բոլորը հիմք տվեց Վաշինգտոնին պնդելու, որ «Սիրիան վերածվել է տարածաշրջանում համայնավարների հենարանի»:[172]

1966թ. մարտի 10-ին Դամասկոսում գումարված Բաասի տարածաշրջանային արտակարգ համաժողովում հաստատվեց, որ «Սիրիան կպայքարի առաջադիմական բոլոր ուժերի հետ իմպերիալիզմի և գաղութատիրության հին ու նոր ձևերի դեմ»:[173] Համաժողովի մասնակիցները միևնույն ժամանակ նշեցին, որ սոցիալիստական ճամբարի պայքարը իմպերիալիզմի դեմ «զարգացող երկրների ժողովուրդների բարգավաճման ամենայավ գրավականն է»:[174]

Միանգամայն հասկանալի է, որ ԽՍՀՄ-ի և սոցիալիստական այլ երկրների հետ մերձեցման Սիրիայի բաասական կառավարության քաղաքականությունը չէր կարող չանհանգստացնել Վաշինգտոնին: 1965թ. մարտին ԱՄՆ Պետքարտուղարի տեղակալ Ֆ.Թալբոթը Սիրիայում ամերիկյան դեսպանություն ուղարկված շրջաբերականներից մեկում նշում էր, որ «զենքի վաճառքը, որի միջոցով Խորհրդային Միությունը փորձում է շահել արաբների ընկերությունը, անպատասխանատու ուղի է»:[175] Ի հակակշիռ Խորհրդային Միության տնտեսական և ռազմական օժանդակությանը Եգիպտոսին, Սիրիային և Իրաքին (մոտավորապես 2 մլրդ ԱՄՆ դոլարի),[176] ԱՄՆ-ը սկսեց սպառազինությունների առաքումը Իսրայելին (հիմնականում "Hawk" տեսակի հրթիռներ, տանկեր և այլ զինամթերք):[177] Սակայն, ինչպես կտեսնենք հետագայում, Սպիտակ տան այսպիսի քաղաքականությունը ոչ թե «հավասարակշռող» դեր ունեցավ, այլ միանգամայն հակառակը՝ խախտեց տարածաշրջանային "status quo"-ն, անուղղակիորեն

[171]Вавилов В.В. Социально-экономические преобразования в Сирии. (1946-1970гг), с.100.

[172] Seale P. նույն տեղում, էջ 79:

[173]«البعث»/սիրիական օրաթերթ/,16.03.1966:

[174]Медведко Л. Сирия после февральских событий. Международная жизнь,1966, N 7, с.91-93.

[175]Circular Telegram to Chief of Missions in Arab States from Phillip Talbot, March 18, 1965, Box116, National Security File, Country File, Lyndon J.Baines Johnson Papers, L.B.J.Library, Austin, Texas.

[176] Polk William R. The Arab World Today, p.408.

[177]"New York Times", April 16,1964.



նպաստելով հաջորդ արաբ-իսրայելական պատերազմի սանձազերծմանը:

Խորհրդային Միության հետ կապերի սերտացումն ու սիրիական կառավարության որդեգրած հակաիմպերիալիստական քաղաքականությունն առաջին հերթին հանգեցրին սիրիա-ամերիկյան հարաբերությունների վատթարացմանն ու տնտեսական համագործակցության ծրագրերի նվազեցմանը: ԱՄՆ-ը հրաժարվեց անգամ նախկինում համաձայնեցված Սիրիային վարկերի տրամադրումից:[178]

Մենք արդեն նշել էինք նավթային գործոնի կարևորությունը տարածաշրջանում ԱՄՆ-ի տնտեսական, քաղաքական և ռազմաստրատեգիական ծրագրերի իրականացման համար: Այս իմաստով հիշատակման արժանի է այն հանգամանքը, որ Սիրիայում գտնվող նավթային ընկերությունների սեփականության ազգայնացման, իսկ 1966թ. օգոստոսի 28-ին «Իրաք Պետրոլեում» (IPC) նավթային ընկերության կողմից կուտակված պետական պարտքի վճարման ու երկրի տարածքով նավթի տարանցման համար 50% կոնցեսիոն մուծումների ավելացման մասին Սիրիայի նոր կառավարության հայտարարությունից անմիջապես հետո սրվեց ներքաղաքական իրավիճակը երկրում: Ընդհուպ մինչև 1967թ. սկիզբը չդադարեցին դավադրություններն ու սադրանքները, իսկ սիրիա-իսրայելական սահմանին զուգահեռաբար ուժեղացավ լարվածությունը:

Այսպես, 1967թ. հունիսին ՄԱԿ-ում Սիրիայի մշտական ներկայացուցիչ Ջ.Թոմեն, ելույթ ունենալով ՄԱԿ-ի նստաշրջանում, նշեց, որ 1967թ. հունիսի իսրայելական հարձակումը «անմիջական կապ ունի Արաբական Արևելքում իմպերիալիստական մոնոպոլիաների կողմից իրականացվող քաղաքականության հետ»: Ըստ Թոմեի, տարածաշրջանում դեպքերի զարգացումները վտանգավոր բնույթ ստացան այն ժամանակ, երբ սիրիական ղեկավարությունը մարտահրավեր նետեց «Իրաք Պետրոլեում»-ին:[179]

1966թ. սեպտեմբերի 6-ին սիրիական կառավարությունը դավադրության երկու փորձ բացահայտեց: Մեկը կազմակերպված էր Միշել Աֆլակի և Սալահ Բիտարի՝ աջ բաասական ղեկավարների կողմից, իսկ մյուսի կազմակերպիչն էր Բաասի մարզային ղեկավարության նախկին անդամ մայոր Սալիմ Հաթումը:[180] Վերջինիս, ինչպես նաև դավադրության մյուս անդամներին, հաջողվեց փախչել և քաղաքական ապաստան ստանալ հարևան Հորդանանում: Սիրիական

[178]Вавилов А.В. Социально-экономические преобразования в Сирии (1946-1970гг), с.222.

[179]Middle East Record, Vol.3, 1967, p.135.

[180] «البعث», 03.03.1967:Современная Сирия, (Справочник), с.217.

իշխանությունների կողմից անցկացված հետաքննության արդյունքում և նրանց կողմից արված հայտարարության համաձայն, Ս.Հաթումն իր գործողությունները «համադրել էր ամերիկյան Կենտրոնական Հետախուզական Գործակալության (ԿՀԳ) հետ»:[181]

1967թ. «վեցօրյա պատերազմի» նախօրեին Սիրիայում ներքաղաքական իրավիճակի ապակայունացման ու սիրիա-իսրայելական սահմանին իրավիճակի սրման պատճառների վերաբերյալ գոյություն ունեն երկու ծայրահեղ տեսակետներ: Առաջինի համաձայն, Սիրիայի ներքին և արտաքին իրավիճակի սրումը բացատրվում է որպես «ԱՄՆ-ի և արևմտյան տերությունների կողմից վրեժխնդրություն՝ «Իրաք Պետրոլեում»-ի դեմ սիրիական ժողովրդի մղած պայքարի համար»[182], ինչպես նաև որպես «տարածաշրջանում սեփական դիրքերի թուլացումը կանխելու ԱՄՆ-ի փորձ»:[183]

Մյուս տեսակետի համաձայն, «1967թ. ԱՄՆ-ի կախվածությունը արաբական նավթից գրեթե չնչին էր», իսկ միջազգային գների բավականաչափ ցածր լինելու հանգամանքն ու նավթի այլընտրանքային աղբյուրների առկայությունը ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության ձևավորման և իրականացման հարցում «երկրորդական դեր էին հատկացրել» նավթային գործոնին: Ուստի Սիրիայում տեղի ունեցող իրադարձությունների հետ Վաշինգտոնը որևէ կապ չուներ:[184]

Համարելով վերոհիշյալ երկու տեսակետները ծայրահեղ և իրականությանը լիարժեք չհամապատասխանող, հարկ ենք համարում նշել, որ թեև 1967թ. ԱՄՆ-ի և արևմտյան այլ երկրների նկատմամբ արաբական երկրների կողմից իրականացված նավթային էմբարգոն ընդհանուր առմամբ չհաջողվեց վերածել յուրջ քաղաքական և դիվանագիտական զենքի, այնուամենայնիվ, պատերազմի ընթացքում այն բազմաթիվ մտահոգությունների առիթ տվեց, կարճատև սակայն իրական դժվարություններ ստեղծելով ՆԱՏՕ-ի, ինչպես նաև Ճապոնիայի համար: Նավթային գործոնի կարևորության մասին է խոսում այն փաստը, որ Սպիտակ տունը ստիպված էր հրաժարվել Անվտանգության Խորհրդի օրակարգում քննարկման առարկա դարձած՝ Եգիպտոսի կողմից փակված Տիրանի նեղուցը վերաբացելու նպատակով ԱՄՆ-ի անմիջական ռազմական միջամտությունից՝ հիմնականում նավթային

[181] "The Daily Star", 02.10.1966; 06.10.1966.

[182] Փիր-Բուդաղովա Է.Պ. Քաղաքական և սոցիալ-տնտեսական վերափոխումները Սիրիայում (1962-1970թթ., Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, ժողովածու IX հատոր,Արաբական երկրներ, էջ 82:"За рубежом", 1967, No.16, c.3.

[183] Statement on the Results of 9-th Emergency Congress held in Early September 1967, p.10.

[184] Quandt W. Decade of Decisions: American Policy towards the Arab-Israeli Conflict 1967-1976, p.70; Burton I.Kaufman, The Arab Middle East and the US: Inter Arab Rivalry and Superpower Diplomacy, p.62.



արաբական պետությունների հետ հարաբերությունները վատթարացնելու մտավախության պատճառով:

Ինչ վերաբերում է Սիրիայում ԱՄՆ-ի կողմից անուղղակիորեն կազմակերպված դավադրությունների մասին պնդումներին, ապա կասկած չի հարուցում բաասական վարչակարգի տապալմանն ուղղված ամերիկյան ծրագրերի առկայությունը: Սակայն անհիմն են թվում այն մեղադրանքները, որոնց համաձայն, ԱՄՆ-ը հրահրում էր բախումները սիրիա-իսրայելական սահմանին: Վաշինգտոնը միանշանակ չէր ցանկանում Սիրիայի և Իսրայելի միջև պատերազմի սանձազերծումը: Լ.Ջոնսոնի վարչակազմը, զբաղված լինելով Վիետնամով, չէր կարող ցանկանալ ներքաշվել մեկ այլ պատերազմի մեջ: Այդ պատճառով «ԱՄՆ-ի համարյա բոլոր ջանքերը ուղղված էին Իսրայելի զսպմանն ու բազմակողմանի դիվանագիտական գործողության հիմքի ստեղծմանը»:[185] Կարծում ենք, ստորև ներկայացված փաստերը հաստատում են վերոհիշյալ տեսակետը:

Այսպես, փորձելով կանխել իսրայելական հարձակողական գործողությունները 1967թ. մայիսի 18-ին, ԱՄՆ նախագահ Լ. Ջոնսոնը նամակ հղեց Իսրայելի վարչապետ Լևի Էշկոլին, զգուշացնելով, որ ինքը «չի կարող ԱՄՆ-ի անունից պատասխանատվություն ստանձնել Իսրայելի այնպիսի գործողությունների համար, որոնք նախապես համաձայնեցված չեն իր հետ»:[186] Հաջորդ օրը Ջոնսոնը ԽՍՀՄ Նախարարների Խորհրդի նախագահ Կոսիգինին ուղղված նամակում, վերահաստատելով Իսրայելին պաշտպանելու ԱՄՆ-ի հաստատակամությունը, միևնույն ժամանակ առաջարկեց «հանդես գալ համատեղ նախաձեռնությամբ Իսրայելի և Սիրիայի, Միացյալ Արաբական Հանրապետության միջև պատերազմը կանխելու նպատակով»:[187] Իսկ մայիսի 22-ին Կոսիգինին հղած մեկ այլ նամակում ԱՄՆ նախագահը մատնանշեց, որ «Սիրիայում տեղակայված որոշակի ուժեր անհանգստություն են պատճառում Իսրայելին», հնարավորություն ստեղծելով տարածաշրջանում բախման համար: Այդ նույն գրության մեջ Ջոնսոնն առաջարկում էր «ճնշում գործադրել բոլոր կողմերի վրա՝ բախումից խուսափելու նպատակով»:[188] Մայիսի 23-ին ԱՄՆ նախագահը

[185] Quandt W. Decade of Decisions: American Policy toward the Arab-Israeli Conflict 1967-1976, p.40.

[186] Department of State Telegram,196541, of May 17,1967. (Secret declassified August 10,1989).

[187] Middle East Record, Vol.3,1967, Jerusalem Israeli Universities Press for Shiloah Center for Middle East and African Studies, pp.194,196.

[188] Department of State Telegram 199729 of May 22,1967, (Secret declassified August 24,1990).

դիմեց Սիրիայի և Եգիպտոսի ղեկավարներին՝ կոչ անելով «ձեռնպահ մնալ այնպիսի քայլերից, որոնք կարող են հանգեցնել պատերազմի»:[189]

1967թ. արաբ-իսրայելական պատերազմից առաջ իր ուրույն ապակայունացնող դերն ունեցավ մերձավորարևելյան թատերաբեմում 1964թ. հայտնված Պաղեստինի Ազատագրության Կազմակերպությունը (ՊԱԿ): Արաբական աշխարհում գոյություն ունեցող հակասությունների պայմաններում պաղեստինցիների հարցը շահարկման առարկա դարձավ Դամասկոսի համար, որի շնորհիվ վերջինս փորձեց ամրապնդել Սիրիայի դիրքերը արաբական աշխարհում, հարված հասցնելով իր ավանդական դարձած հակառակորդներին՝ Հորդանանին և Սաուդյան Արաբիային: Ի տարբերություն Հորդանանի, սիրիական իշխանությունները թույլատրեցին դեռևս 1958թ. ստեղծված Պաղեստինի ազատագրության շարժման ալ-Ֆաթհ-ի ֆիդայիներին օգտագործել երկրի տարածքը, որպես հենարան Իսրայելի վրա հարձակումներ կատարելու համար:[190]

Հետաքրքրական է, որ ալ-Ֆաթհի հարձակումների կապակցությամբ իսրայելական մեղադրանքներին պաշտոնական Դամասկոսը պատասխանում էր չքմեղաբար. «Մենք հստակ չգիտենք, թե որտեղ են գտնվում Ալ-Ֆաթհի ջոկատները և որևէ կերպ պատասխանատու չենք նրանց կողմից իրականացված հարձակումների համար»: Կամ էլ ուղղակի առարկությամբ. «Ալ-Ֆաթհը ստեղծվել և ղեկավարվում է ԿՀԳ-ի կողմից՝ Սիրիայի վարչակարգը տապալելու նպատակով և մենք որևէ պատասխանատվություն չունենք նրա գործունեության համար»:[191]

Միաժամանակ, անհրաժեշտ ենք համարում նշել, որ Սիրիայի ղեկավար շրջանակները, «քաջ գիտակցելով Իսրայելի ռազմական գերակայության փաստը», ոչ միայն չէին ցանկանում Իսրայելի հետ պատերազմ վարել, այլև, չնայած նրա հետ ծայրաստիճան լարված հարաբերություններին, չէին կարծում, որ բանը դրան կհասնի:[192] Չէին կարծում այն սխալ պատկերացման հիման վրա, որ Իսրայելի կառավարությունը երկրում տիրող ներքաղաքական և տնտեսական ճգնաժամի խորացման պայմաններում կխուսափի լայնածավալ պատերազմ սանձազերծելուց: Այդ մասին է վկայում Սիրիայի վարչապետ Յ.Զուայենի ելույթը 1967թ. ապրիլին. «Ներկայումս Իսրայելը գտնվում է փլուզման եզրին: Նրա վարչակարգը ցնցված է և մասնատված՝ իշխանության համար պայքարով, նրա տնտեսությունը ճգնաժամի մեջ է: Իսրայելի ռազմական գերազանցությունը առասպել է, որը չի կարող մեզ

[189] Heikal Mohammed. The Cairo Documents:The Inside Story of Nasser and His Relationship with World Leaders, Rebels and Statesman, p.243.

[190] Rabinovich, Itamar. Syria under Baath:1963-66:The Army-Party Symbiosis, pp.180-208. 1961թ. Ֆաթհի կենտրոնակայանը տեղափոխվել էր Դամասկոս:

[191] Burdett. Winston. Encounter with the Middle East. An Intimate Report What Lies Behind The Arab-Israeli Conflict, p.169.

[192] Maoz, Moshe. Syria and Israel. From War to Peace-Making, p.85.



խաբել: Անգամ եթե յուրաքանչյուր իսրայելցի դառնա զինվոր, արդ՞յոք դա Իսրայելին կտա ռազմական գերազանցություն»:[193]

Ընդհանրապես բաասական գաղափարախոսության մեջ կենտրոնական տեղ էին զբաղեցնում Պաղեստինի ազատագրմանը վերաբերող հարցերը: Ըստ բաասականների, Պաղեստինի ազատագրումը հնարավոր է հաջողությամբ պսակել միայն արաբական աշխարհի միասնականության պայմաններում ազգային-ազատագրական պայքարի միջոցով «ողջ արաբական հայրենիքն ազատագրելու» նպատակով:

Իսրայելի նկատմամբ ռազմական գերակայության ապահովումից հետո միայն ակտիվ պայքար ծավալելու՝ արաբական այլ երկրների մոտեցումները, Բաասը համարում էր «պարտվողական»: Կուսակցությունը կարծում էր, որ զենքի ձեռքբերման համար պահպանողական և հետադիմական արաբական երկրները ծախսում են շատ միջոցներ, որոնք նպատակ ունեն ռազմական գերակայության հասնել ոչ թե Իսրայելի, այլ առաջադեմ արաբական երկրների նկատմամբ: Բաասը, որպես այլընտրանք, դեկլարատիվ կերպով առաջարկում էր «ազգային ազատագրական պայքարի ճանապարհը, որին հետևել են ժողովրդական զանգվածները Ալժիրում»:[194]

Գոյություն ունի մի տեսակետ, որի համաձայն 1967թ. նախօրեին իրավիճակի վատթարացումը սիրիա-իսրայելական սահմանին անմիջական կապ ուներ Սիրիայում սրված ներքաղաքական իրավիճակի հետ: Այս տեսակետի կողմնակիցները պնդում են, որ 1967թ. մայիսին Սիրիայի լարված ներքաղաքական կացությունն անգամ սպառնում էր բաասական վարչակարգի գոյությանը: Վերջինս փրկելու և երկրում ներքին լարվածությունը թուլացնելու նպատակով ԽՍՀՄ-ն ամեն կերպ ձգտում էր ակտիվացնել սիրիա-եգիպտական պաշտպանական համաձայնագիրը՝ տեղեկություններ հաղորդելով Եգիպտոսի սահմանին իսրայելական զորքերի կուտակումների վերաբերյալ, ինչը էլ ավելի սրեց իրավիճակը:[195]

Իհարկե, Մոսկվան ցանկանում էր համոզել Նասերին՝ մի կողմ դնել Սիրիայի հետ ունեցած տարաձայնությունները և համատեղ «հեղափոխական ճակատ ստեղծել»: Խորհրդային դիվանագիտական գործունեության արդյունքում 1966թ. Սիրիայի և Եգիպտոսի միջև ստորագրվեց համատեղ պաշտպանության վերաբերյալ համաձայնագիրը: Կարծիք կա, որ այդ քայլով ԽՍՀՄ-ը փորձում էր

[193] Middle East Record, vol.3, 1967, p.160.

[194] Statement of the National Command about the Achievements of the 9th National Congress, pp.40-45.

[195] Yaacov Bar-Siman-Tov. Linkage Politics in the Middle East. Syria between Domestic and External Conflict, 1961-1970, p.157.

ապահովել Սիրիայի անվտանգությունը Եգիպտոսի հաշվին՝ չնայած որ համաձայնագիրը չէր վերաբերում Իսրայելի հետ սահմանային բախումներին և գործնական առումով անիմաստ էր:[196]

Իրականում, թե ԽՍՀՄ-ը և թե ԱՄՆ-ն ձգտում էին բույլ չտալ պատերազմի բռնկումը տարածաշրջանում: Երկու գերտերություններն էլ պատերազմից առաջ դիմեցին իրենց «հաճախորդներին» զսպվածության և ռազմական գործողություններից խուսափելու կոչերով: Այնուհետև անմիջական կապի միջոցով Մոսկվան և Վաշինգտոնը արդյունավետ համագործակցեցին պատերազմի մեջ միմյանց ուղղակի ներքաշումը բացառելու և ՄԱԿ-ի Անվ-ի ճնշման միջոցով ռազմական գործողությունները կասեցնելու ուղղությամբ:[197]

Իսկ ինչ վերաբերում է սիրիա-եգիպտական պաշտպանական համաձայնագրին, ապա, մեր կարծիքով, Եգիպտոսի գլխավորությամբ ընդհանուր զինվորական հրամանատարություն հաստատելով, Նասերը առաջին հերթին նպատակ էր հետագայում վերահսկել պաշտոնական Դամասկոսի կողմից ձեռնարկվելիք հնարավոր անկանխատեսելի քայլերը:

Այսուհանդերձ, բախումները սիրիա-իսրայելական սահմանին նոր թափ ստացան ապրիլի 7-ից հետո, երբ խփվեց վեց սիրիական ինքնաթիռ: 1967թ. ապրիլի 9-ից մինչև մայիսի 8-ը ընկած ժամանակահատվածում 14 ռազմական միջադեպ արձանագրվեց սիրիա-իսրայելական սահմանի վրա: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Ու.Թանը սահմանային այս միջադեպերը որակեց որպես «պայթյունավտանգ», մատնանշելով, որ նրանց մեջ ներգրավված են «հատուկ պատրաստվածություն» ունեցող անձեր:[198] ԱՄՆ Պետքարտուղարությունը խուսափում էր սիրիա-իսրայելական սահմանային բախումների վերաբերյալ որևէ հստակ դիրքորոշմամբ հանդես գալուց՝ նախընտրելով հարցի քննարկումը ՄԱԿ-ում հայտնի ընթացակարգի շրջանակներում:[199]

Պատերազմն անխուսափելի էր, քանի որ դեռևս պատերազմից շատ առաջ երկու կողմերն էլ գիտակցում էին հաստատված ստատուս-քվոյի երկարատև պահպանման անհնարինությունը: Այդ մասին է վկայում ՄԱՀ-ում ԽՍՀՄ դեսպանի և ՄԱՀ-ի փոխնախագահ, մարշալ Ա.Ամերի միջև 1965թ. փետրվարի 23-ին կայացած հանդիպման զրույցի գրառումը: Ա.Ամերը հայտնել է դեսպանին, որ Դամասկոսում ամերիկյան աղբյուրներից տեղեկատվության արտահոսքի հիման վրա եգիպտական

196 Safran, Nadav. From War to War. The Arab-Israeli Confrontation, pp. 276-277.

197 Примаков Е. Конфиденциально: Ближний Восток на сцене и за кулисами (вторая половина XX-начало XXI века), с.121-124.

198 US Policy and Diplomacy in the Middle East Crisis, May 15-June 10, 1967. Unpublished Manuscripts, National Security File, NSC History, Middle East Crisis, Johnsons Papers, p.7-8.

199 Burdett Winston. Encounter with the Middle East. An Intimate Report: What Lies Behind The Arab-Israeli Conflict, p.159.



հետախուզությունը հետևյալ եզրակացության է հանգել. «Իսրայելը 1965թ. կեսերին ծրագրում է ռազմական գործողություններ իրականացնել արաբական որոշ երկրների դեմ: Թել-Ավիվում կարծում են, որ այդ ժամանակը ամենահարմարն է նման գործողությունների համար, քանի որ եգիպտական զորքերը խրվել են Եմենում, Իրաքի բանակը զբաղված է Իրաքի Քուրդիստանի դեպքերով, սիրիական բանակը արդյունավետ գործել չի կարող՝ հաշվի առնելով ներքին անկայունության հանգամանքը, Հորդանանի բանակը թույլ է, իսկ Լիբանանը փաստորեն զինված ուժեր չունի: Այս պայմաններում իսրայելական բանակը ամրապնդել է իր ռազմական ներուժը՝ Արևմտյան Գերմանիայից ստանալով նորագույն մեծաքանակ զինամթերք: Իսրայելը հաշվի է առնում նաև ՊԱԿ-ի ազդեցության աճի փաստը արաբական աշխարհում, ինչպես նաև Հորդանան գետի ջրերի օգտագործման արաբական հականախագիծն իրականացնելու արաբական երկրների վճռականությունը»:[200]

Եթե սիրիա-իսրայելական սահմանային բախումները անմիջական շարժման մեջ դրեցին «վեցօրյա» պատերազմին նախորդող գործընթացները, ապա Եգիպտոսի ներքաշումը՝ Սինայի թերակղզում զորքերի կենտրոնացումն ու մայիսի 22-ին Տիրանի նեղուցի փակումը, հանգեցրեց իրավիճակի կտրուկ սրմանը՝ դառնալով պատերազմի բռնկման պատճառ:

Վ. Քվանդտի խոսքերով, եգիպտական վերոհիշյալ գործողությունների հետևանքով «Վաշինգտոնը ստիպված էր պատերազմի հարցում իր սկզբնական կարմիր լույսը փոխել դեղինի», որն էլ բավարար եղավ Իսրայելի խորհրդարանի համար՝ հունիսի 4-ին պատերազմ սկսելու վերաբերյալ որոշում կայացնելու և հաջորդ օրը, առանց պատերազմ հայտարարելու՝ ՄԱՀ-ի, Սիրիայի և Հորդանանի վրա հարձակվելու համար:[201]

Պատերազմի բռնկման պատճառների մասին առավել հստակ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է նշել, որ 1967թ. մայիսին Մոսկվա այցելության ընթացքում Եգիպտոսի ռազմական նախարար Շամս էլ-Դին Բադրանին ԽՍՀՄ պաշտպանության նախարար Ա.Գրեչկոն, այնուհետև՝ ԽՍՀՄ վարչապետ Ա.Կոսիգինը հստակ նշել են Եգիպտոսի նախահարձակ լինելու և Իսրայելի դեմ պատերազմ սկսելու անթույլատրելիության մասին: Այդ մասին հայտնում են ինչպես Ա.Կոսիգինի օգնականը, այնպես էլ հանդիպմանը մասնակցած՝ Եգիպտոսում երկար տարիներ աշխատած հայազգի անվանի դիվանագետ Պավել Ակոպովը: Օդանավակայանում Ա.Գրեչկոն Բադրանին ասել է միայն հետևյալը. «Եթե ամերիկացիները միջամտեն,

200 Ближневосточный конфликт. 1957-1967, стр. 458-462.

201 Quandt W.B. Peace Process, American Diplomacy and the Arab-Israeli conflict since 1967, p.26.

մենք 100 տոկոսով ձեզ հետ ենք: Եթե ԱՄՆ-ը խառնվի՝ մենք կգանք ձեզ օգնելու, մենք ձեզ կփրկենք»: Ներկայումս հայտնի չէ, թե ինչպես է Բադրանը Նասերին փոխանցել Գրեչկոյի խոսքերը: Միգուցե ասել է միայն, որ Մոսկվան «մեզ կօգնի»՝ թողելով ամերիկացիների միջամտության նախապայմանը: Կամ էլ, ինչպես Ե.Պրիմակովն է վերհիշում, Նասերի վրա կարող էր ազդած լինել պատերազմից մի քանի ամիս առաջ Կահիրե այցելած նույն Ա.Գրեչկոյի այն խոսքերը, որ «եգիպտական բանակը կարող է լուծել իր առջև դրված ամեն մի խնդիր»:

*Հստակ է միայն, որ Նասերը չփորձեց մեղմել լարվածությունը, այլ ուղղակի թույլ տվեց, որ Իսրայելը հարձակվի առաջինը:*[202]

Պատերազմից մի քանի տարի առաջ ֆրանսիացիների օգնությամբ Դիմոնայում /Նեգևի անապատում/ Իսրայելի կողմից միջուկային զենքի ստեղծմանն ուղղված աշխատանքների իրականացման փաստը, որի մասին հայտնի դարձավ ամերիկացիների միջոցով, նույնպես ամրապնդեց Կահիրեի այն կարծիքը, որ ժամանակն ընթանում է Իսրայելի օգտին և վերջինիս հետ պատերազմն այլընտրանք չունի:

Փաստորեն, տարածաշրջանի բևեռացումն ու գերտերությունների կողմից հակամարտության երկու կողմերի սրընթաց զինումն ու քաջալերումը, բախումները սիրիա-իսրայելական սահմանին, ՊԱԿ-ի և նրա զինված ջոկատների գործողությունները արդեն իսկ ստեղծել էին նախապատերազմական իրավիճակ, որն էլ պայթեց Նասերի ինքնավստահության հետևանքով սխալ հաշվարկված քայլերի պատճառով: Իսկ Սիրիան, չցանկանալով լայնածավալ պատերազմի բռնկումը Իսրայելի հետ, այնուամենայնիվ, խորհրդային օրհնությամբ կապելով իր անվտանգությունը Եգիպտոսի հետ՝ ակամա դարձավ Իսրայելի հարձակման երկրորդ զոհը:

[202] Bregman Ahron and El-Tahri Jihan. The Fifty Years War. Israel and the Arabs, pp.81-85; Е.Примаков.Конфиденциально: Ближний Восток на сцене и за кулисами (вторая половина XX-начало XXI века), с.114.



## *«ՎԵՑՕՐՅԱ» ԱՐԱԲ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԴՐԱ ԹՈՂԱԾ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՍԻՐԻԱՅԻ ՎՐԱ*

1967թ. հունիսի 5-ին սկսված և վեց օր տևած արաբ-իսրայելական պատերազմի արդյունքում Իսրայելին հաջողվեց գրավել արաբական երկրներին պատկանող ընդարձակ տարածքներ՝ 60 հազար կմ$^2$: Իսրայելը ՍԱՀ-ից զավթեց Գազայի հատվածը, Սինայի թերակղզին՝ դուրս գալով Սուեզի ջրանցքի արևելյան ափը, Հորդանանից՝ Հորդանան գետի ամբողջ արևմտյան ափը, Երուսաղեմի արևելյան մասը, Բեթղեհեմ ու Նաբլուս քաղաքները, իսկ Սիրիայից՝ Ալ-Կունեյտրան ու Գոլանի բարձունքները, կանգ առնելով Դամասկոսից ընդամենը 40 կմ հեռավորության վրա:[203]

«Վեցօրյա» պատերազմը խախտեց Մերձավոր Արևելքում ուժերի միջև հաստատված ռազմավարական հավասարակշռությունը: Անցյալ դարի 90-ականների խաղաղության գործընթացը կոչված էր կարգավորելու հիմնականում հենց այդ պատերազմի հետևանքով առաջացած խնդիրները: Պատերազմին հաջորդած՝ Իսրայելի հետ բանակցությունները կենտրոնացված էին հենց այդ տարածքների վերադարձման և այնտեղ իսրայելական բնակավայրերի կառուցման հետ կապված հարցերի վրա:

«Վեցօրյա» պատերազմը Իսրայելի հետ պայքարի առաջին ճակատ մղեց պաղեստինցիներին: Այն Եգիպտոսում «արաբական սոցիալիզմի» ճգնաժամի և նրա վարչակարգի թուլացման պատճառ հանդիսացավ:

Պատերազմը լրջագույն հոգեբանական հարված հասցրեց արաբական աշխարհին, որը կարողացավ իր ինքնավստահությունը *մասամբ* վերականգնել միայն 1973թ. պատերազմից հետո:

Ինչպես արդեն նշեցինք, 1967թ. վեցօրյա պատերազմի հետևանքով Սիրիան կորցրեց կենսական նշանակություն ունեցող Գոլանի բարձունքները, որոնց ռազմավարական կարևորությունը պայմանավորված է առաջին հերթին յուրահատուկ աշխարհագրական դիրքով. 438 մղոն բարձրություն ունեցող, հրաբխային լավայից առաջացած, դրանք ձգվում են արևելքում դեպի իսրայելական Հալա դաշտավայրը և Գալիլեյան ծովը: Պատմությունն ապացուցել է, որ այն բանակը, որը տիրել է Գոլաններին, վերահսկողություն է հաստատել ոչ միայն Գալիլեայի, այլ նաև Դամասկոս տանող ճանապարհի վրա:

1967թ. պատերազմի արդյունքում Սիրիան խզեց դիվանագիտական հարաբերությունները ԱՄՆ-ի հետ, որոնք վերականգնվեցին միայն

[203] Никитина Г.С. Государство Израиль, с.386.

1974թ., բայց հիմնականում չփոխեցին իրենց հակամարտ էությունը: Այդ պատերազմն «էլ ավելի ուժեղացրեց Սիրիայի անմիջական կախվածությունը Մոսկվայից և Իսրայելինը՝ ԱՄՆ-ից»:[204]

Առաջին հայացքից, ԱՄՆ-ի ղեկավար շրջանները պետք է որ բավարարված լինեին պատերազմի արդյունքներով՝ Իսրայելի վիճակն էլ ավելի անվտանգ էր, քան երբևիցե, իսկ Խորհրդային Միությանը հարող հիմնական արաբ հակառակորդները պարտված ու նվաստացված էին: Սակայն Իսրայելը պատերազմի արդյունքում զավթեց տարածքներ՝ ոչ միայն Սիրիայից և Եգիպտոսից, այլև Հորդանանից, որը համարվում էր ԱՄՆ-ի դաշնակիցը տարածաշրջանում: Պատերազմից հետո տարածաշրջանում աճեցին հակաամերիկյան տրամադրությունները, այդ թվում նաև պահպանողական արաբական երկրներում: Ամերիկյան փորձագետները սկսեցին խոսել ամերիկյան արտաքին քաղաքական ուղեգծի փոփոխության անհրաժեշտության մասին:

Պատերազմը հարված էր նաև տարածաշրջանում ԽՍՀՄ-ի դիրքերին այն իմաստով, որ Սիրիայում և Եգիպտոսում որոշակիորեն պարտություն կրեց խորհրդային զենքը: Իրավիճակը մեղմելու նպատակով, Մոսկվան պատերազմից անմիջապես հետո շտապեց անհատույց ռազմական տեխնիկա տրամադրել Եգիպտոսին և Սիրիային:[205]

Պատերազմը թուլացրեց և խարխլեց Ս.Ջադիդի սոցիալիստական վարչակազմի հիմքերը: Բաաս կուսակցության չափավորական զինվորական և ծայրահեղական քաղաքացիական թևերի միջև՝ ի դեմս Ասադի և Ջադիդի, աստիճանաբար զարգացավ հակասությունը, որն իր գագաթնակետին հասավ 1970թ. սեպտեմբերի Հորդանանի ճգնաժամի օրերին:

Ասադը «վեցօրյա պատերազմին» մասնակցեց Սիրիայի պաշտպանության նախարար նշանակվելուց 15 ամիս հետո: Նրան ժառանգություն էր հասել պատերազմական գործողություններին անպատրաստ, սպաների խիստ պակասություն ու ԽՍՀՄ բանակի օգտագործումից հանված, բարոյապես մաշված զինամթերք ունեցող 50 հազարանոց բանակ: Այն իր տրամադրության տակ ուներ ընդամենը 500 տանկ, որոնցից միայն կեսն էր մարտունակ և 100 ՄիԳ-17 կործանիչ: Բանակը չուներ հակաօդային պաշտպանության համակարգ ու

[204] " Major Problems in American Foreign Policy". Steven Spiegel, The Six Day War and the Benefits of the US-Israeli Alliance, Ch.13, p.672.

[205] Մոսկվան Սիրիա առաքեց շուրջ 300մլն. ԱՄՆ դոլարի զինտեխնիկա՝ 400 տանկ և 120 օդանավ, ինչպես նաև 1000 մասնագետով ավելացրեց Սիրիայում գտնվող ԽՍՀՄ ռազմական խորհրդականների կազմը: Տես Ramet, Pedro. The Soviet-Syrian Relationship since 1955, p.46.



նավատորմ: Իրենց բացասական դերն ունեցան նաև զինվորական հրամանատարության բարձրաստիճան պաշտոնյաների միջև ալ-տարաձայնությունները. երկրի սպայակույտի պետ Ահմադ Սուվայդանին, լինելով Ս.Ջադիդի մարդը, փաստորեն չէր ենթարկվում պաշտպանության նախարարին:

Միանգամայն հասկանալի է, որ այդպիսի բանակով անհնար էր պատերազմ վարել լավ վարժեցված և արդիական զենքով զինված իսրայելական բանակի դեմ: 1967թ. սեպտեմբերին կայացած Բաասի 9-րդ արտակարգ համագումարը մատնանշեց պարտության մեկ այլ հիմնական պատճառ՝ «արաբական ժողովուրդների միասնականության բացակայությունը, որը չափազանց ծանր հետևանքներ ունեցավ ամբողջ արաբական աշխարհի համար»:[206]

Այստեղ հարկ է նշել, որ հետպատերազմյան շրջանում նույնպես չկար միասնություն արաբական երկրների միջև: Եթե պատերազմից ամենաշատ տուժած արաբական երկրները՝ Եգիպտոսն ու Հորդանանը, չէին բացառում Իսրայելի հետ հարաբերությունների քաղաքական կարգավորման հնարավորությունը, ապա Սիրիան միանշանակ դեմ էր այդ ուղղությամբ որևէ դիվանագիտական քայլերի: Եվ չնայած այն հանգամանքին, որ Դամասկոսը պաշտոնապես արգելել էր Սիրիայի տարածքի օգտագործումը Իսրայելի վրա հարձակումներ կատարելու համար, այնուամենայնիվ, «կողմնակից էր Իսրայելի դեմ ահաբեկչական գործողությունների իրականացմանը»:[207]

1967թ. օգոստոսի 26-ին Խարտումում կայացավ 13 արաբական երկրների արտգործնախարարների խորհրդակցությունը, որի արդյունքում հաստատվեցին Իսրայելի նկատմամբ արաբական երկրների քաղաքականության *3 «ոչ»-երից բաղկացած հիմնադրույթները՝ «ոչ» Իսրայելի հետ խաղաղությանը, «ոչ» Իսրայելի ճանաչմանն ու «ոչ» Իսրայելի հետ բանակցություններին: Խորհրդակցության ընթացքում ճանաչվեց անկախ պետություն ստեղծելու Պաղեստինի ժողովրդի իրավունքը:*

Այնուհանդերձ արաբական ճամբարում ի հայտ եկան տարաձայնություններ Արևմուտքի նկատմամբ նավթային էմբարգոյի շարունակման հարցում: Եթե Սիրիան և Եգիպտոսը հանդես էին գալիս էմբարգոյի շարունակման օգտին, ապա Սաուդյան Արաբիան, Քուվեյթը և այլ պետություններ տրամադրված էին բացասաբար, պատճառաբանելով, որ նավթի վաճառքից ստացված եկամուտները կարող են ավելի արդյունավետ ներդրում ունենալ Իսրայելի կողմից արաբական զավթած տարածքներն ազատագրելու գործում:[208] Խարտումում նաև որոշում

[206] Statement on the Results of 9-th Emergency Congress held in Early September, 1967, p.10.

[207] Robert Stephens. Nasser: A Political Biography, pp. .520-522.

[208] Daniel Yergin. The Prize: The Epic Quest for Oil, Money and Power, pp.554-558. Տես

կայացվեց 1967թ. պատերազմից տուժած արաբական երկրներին ֆինանսական օգնություն տրամադրելու վերաբերյալ:[209]

1967թ. նոյեմբերի 22-ին ՄԱԿ-ի Անվտանգության Խորհուրդն ընդունեց հ.242 հայտնի բանաձևը, որն «անթույլատրելի համարելով պատերազմի միջոցով տարածքների գրավումը», կոչ արեց Իսրայելին՝ «դուրս բերել զինված ուժերը գրաված բոլոր տարածքներից» և կարևորեց «արդար և շարունակական խաղաղության հաստատումն ու տարածաշրջանի բոլոր պետությունների համար անվտանգության պայմանների ստեղծումը»:[210]

Արժանի է հիշատակման այն փաստը, որ բանաձևի նախագծի հեղինակներից մեկը, Բրիտանիայի արտգործնախարար լորդ Քերադոնը երկու կողմերի՝ արաբների և հրեաների համաձայնությունն ապահովելու նպատակով բանաձևի տեքստում միտումնավոր բաց է թողել անգլերեն որոշիչ հոդը (the) «տարածքներ» բառից առաջ, որը հետագայում տեղի տվեց իրարամերժ մեկնաբանությունների: Արաբներն սկսեցին պնդել, որ իսրայելական զորքերի դուրսբերումը պետք է իրականացվի գրավված ***բոլոր*** տարածքներից, իսկ Իսրայելը նույն համառությամբ հայտարարում էր, որ դուրս բերումը պետք է հասկանալ արաբական գրավյալ ***որոշ*** տարածքներից:[211]

242 բանաձևը նաև կողմերին կոչ էր անում հարգել տարածաշրջանի բոլոր երկրների ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունն ու քաղաքական անկախությունը, ինչպես նաև խաղաղ պայմաններում, անվտանգ ու միջազգայնորեն ճանաչված սահմաններում ապրելու նրանց իրավունքը:

Բանաձևը ընգծում էր տարածաշրջանի ջրային ուղիներով ազատ ու անխափան նավագնացության, պաղեստինյան փախստականների խնդրի արդար կարգավորման, ինչպես նաև բոլոր երկրների տարածքային ամբողջականությունն ու քաղաքական անկախությունը ապահովելու նպատակով Իսրայելի և արաբ հարևանների սահմանամերձ շրջաններում ապառազմականացված գոտիների ստեղծման անհրաժեշտությունը:

Վաշինգտոնը որոշակի վերապահումներով (հիմնականում անվտանգության խնդիրներին վերաբերող), բայց ընդհանուր առմամբ, կողմ էր արտահայտվում իսրայելական ուժերի դուրս բերմանը գրավյալ արաբական բոլոր տարածքներից, այդ թվում նաև Սիրիայի Գոլանի բարձունքներից: Պետք է նշել, որ մինչև 242 բանաձևի ընդունումը

Հավելված 2:

[209] Васильев А.М. История Саудовской Аравии, с.432.

[210] United Nations, Security Council SIRES/242, 1967 (S/8247), November 22,1967.

[211].Kaufman, Burton. The Arab Middle East and the US: Inter Arab Rivalry and Superpower Diplomacy, p.63.



Վաշինգտոնն ու Լոնդոնը Փոխըմբռնման հուշագիր ստորագրեցին, ուր ասվում էր, որ «իսրայելական զորքերի դուրսբերման տակ պետք է հասկանալ դուրսբերում ՄԱՀ-ից, Հորդանանից և Սիրիայից գրաված բոլոր տարածքներից»:[212]

Ի տարբերություն Եգիպտոսի և Հորդանանի, Սիրիան խիստ բացասական դիրքորոշում որդեգրեց ՄԱԿ-ի վերոհիշյալ բանաձևի նկատմամբ: Սիրիայի նմանօրինակ կեցվածքը պայմանավորված էր ոչ միայն ռազմաքաղաքական, այլև գաղափարախոսական պատճառներով. բանաձևը չէր արտացոլում Պաղեստինի հիմնախնդիրն ու նրա ժողովրդի իրավունքները: Եվ, ինչպես նշում է Ե.Դմիտրիևը. «Չնայած որ, ընդունված փաստաթուղթը կրում էր համապարփակ և հավասարակշռված բնույթ, սակայն հաշվի չէր առնում մերձավորարևելյան կարգավորման կարևորագույն բաղադրիչը, նրա սիրտը՝ Պաղեստինյան հարցի գործնական լուծման, նրա բնիկ ժողովրդին ինքնորոշման իրավունքի տրամադրման անհրաժեշտությունը: 242 բանաձևում պաղեստինյան խնդիրը դիտարկվում էր զուտ որպես փախստականների խնդիր»:[213] Հանդես գալով այդ հարցում ամբողջ «արաբական ազգության անունից» բաասական Սիրիան, բնական է, որ չէր կարող ընդունել նման բանաձևը:[214]

Այդ իսկ պատճառով պաշտոնական Դամասկոսը հրաժարվեց ընդունել ՄԱԿ-ի ներկայացուցիչ Գ.Յարինգին, որը տարածաշրջան էր ժամանել 242 բանաձևի իրականացման հետ կապված հարցերը քննարկելու նպատակով: Այդ օրերին սիրիական պաշտոնական «Ալ-Բաաս» օրաթերթը գրում էր. «Այն, որ Իսրայելը մինչև հիմա հրաժարվում է դուրս բերել զորքերը և պահանջում է ուղղակի բանակցություններ վարել արաբների հետ, նշանակում է, որ ԱՄՆ-ը և Իսրայելը արհամարհում են միջազգային հանրության կարծիքը»:[215]

1968թ. հունվարին ԱՄՆ-ի նախագահ Ջոնսոնը, հանդիպելով Իսրայելի վարչապետ Էշկոլին, փորձեց համոզել նրան՝ զիջումների դիմել գրավված արաբական տարածքների և պաղեստինյան փախստականների հարցում:[216] Իրենց հերթին, Իսրայելի ղեկավարները մի կողմից հայտարարում էին, որ Իսրայելը չի հանձնի Գոլանները, իսկ մյուս կողմից նշում էին, որ Սիրիայի ղեկավարությունը, անկախ Գոլանների հարցից, դեռևս պատրաստ չէ Իսրայելի հետ խաղաղության հաստատմանը և, ի տարբերություն Եգիպտոսի ու Հորդանանի, չի

[212] Neff, Donald. Warriors for Jerusalem: the Six Days that Changed the Middle East, p.341.

[213] Дмитриев Е. Мир на Ближнем Востоке-Утопия или реальность?-“Мировая экономика и международные отношения”, 5/1987, с.46-47.

[214] «البعث », 24.11.1967:

[215] «البعث », 02.12.1967:

[216] Memo of Conversation, 17 May,1968, NSC Secret DD, 1379 (1985), Johnsons Library.

տարանջատում Պաղեստինի ազատագրման և Գոլանների վերադարձի խնդիրները:[217]

ԱՄՆ-ի դիրքորոշումը Գոլաններից իսրայելական զորքերի դուրսբերման անհրաժեշտության վերաբերյալ աստիճանաբար փոխվեց, հանգեցնելով նրան, որ Վաշինգտոնը սկսեց կիսել Թել-Ավիվի այն կարծիքը, թե Գոլանները կենսական նշանակություն ունեն Իսրայելի անվտանգության ապահովման համար: Իսկ ԱՄՆ պաշտպանության նախարար, գեներալ Վիլերի կարծիքով, «ռազմական տեսանկյունից Իսրայելն անպայմանորեն պետք է վերահսկի Գոլանների արևելյան սահմանը՝ Գալիլեայի շրջանը պաշտպանելու համար»:[218]

Ստեղծված կացության մեջ Սիրիան անարդյունք փորձեր կատարեց համախմբել «առաջադեմ» արաբական երկրների ուժերը՝ ի դեմս Եգիպտոսի, իսկ 1967թ. հուլիսից՝ Իրաքի: Մնալով միայնակ և որոշակիորեն «ինքնամեկուսացվելով» արաբական աշխարհից, Սիրիան բռնեց Մոսկվայի հետ հարաբերությունների սերտացման ուղին: Արդեն 1968թ. վերջին ԽՍՀՄ-ի օգնությամբ Սիրիան ի վիճակի եղավ վերականգնել պատերազմի հետևանքով կրած ռազմական կորուստները:

Ընդհանրապես, Արևմուտքում հաճախակի էր խոսվում այն մասին, թե իբր, Սիրիան դարձել է Խորհրդային Միության հնազանդ հպատակը և տարածաշրջանում անշեղորեն իրականացնում է խորհրդային քաղաքական գիծը: Իրականում, չնայած Մոսկվայից Դամասկոսի որոշակի կախվածությանն ու հարաբերությունների անհավասարությանը, Սիրիան երբևիցե չի թույլատրել ԽՍՀՄ-ին միջամտել իր ներքին գործերին և ազդել իր արտաքին քաղաքականության վրա: Լարված պահեր հաճախակի են արձանագրվել սիրիա-խորհրդային հարաբերություններում: Այսպես, չնայած Մոսկվայի ճնշմանը, Սիրիան շարունակ մերժում էր Իսրայելի հետ քաղաքական կարգավորման հնարավորությունը: Դեռ ավելին, Իսրայելի դեմ պաղեստինյան հարձակումների քաջալերումն ու բացահայտ աջակցությունը, 1970թ. ներխուժումը Հորդանան, 1973թ. պատերազմն ու ներգրավելը լիբանանյան ճգնաժամում և այլն, իրականացվեցին Խորհրդային Միության կամքին հակառակ:[219]

Եթե մինչև 1967թ. տարածաշրջանում խորհրդային դիրքերի ամրապնդումն ու արաբական «ազգայնական» ճամբարի ուժեղացումը Վաշինգտոնը փորձում էր Իսրայելին զսպել հիմնականում Սաուդյան Արաբիայի և Իրանի միջոցով, ապա 1967թ. հետո Մերձավոր Արևելքում ամերիկյան շահերի հետապնդման գործում Իսրայելը սկսեց

[217] Meir Golda. My Life, p.270.

[218] Schoenbaum D. The United States and the State of Israel, p.160.

[219] Bahgat Korany and Ali E.Hillal Dessouki. The Foreign Policies of Arab States., Westview Press, London, 1984, p.293.



առանցքային դեր խաղալ՝ պատերազմի արդյունքում վերածվելով տարածաշրջանային լուրջ ուժի: Ըստ այդմ, 1967թ. պատերազմից հետո ԱՄՆ-ը դարձավ Իսրայելի գոյության և անվտանգության հիմնական «հովանավորը»:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

# ՍԻՐԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԱԲ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ (1967-1978թթ.)

## *ՍԻՐԻԱՅԻ ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ԱՄՆ-Ի ԵՎ ԽՍՀՄ-Ի ՄԻՋԵՎ ԳԼՈԲԱԼ ԱՌՃԱԿԱՏՄԱՆ ՀԵՆՔԻ ՎՐԱ*

ԱՄՆ նախագահ Լ. Ջոնսոնին փոխարինած Ռիչարդ Նիքսոնը շարունակեց սառը պատերազմի «խաղի կանոնները» Մերձավոր Արևելքում, ուր ԽՍՀՄ-ի ազդեցության նվազեցումը շարունակեց մնալ Վաշինգտոնի մերձավորարևելյան քաղաքականության հիմնական նպատակներից մեկը:

Սակայն այդ քաղաքականության մեջ ի հայտ եկան նոր շեշտադրումներ: Նիքսոնը համոզված էր, որ Մոսկվայի ազդեցությունը նվազեցնելու համար Վաշինգտոնին առաջին հերթին անհրաժեշտ է բարելավել հարաբերությունները կամ առնվազն մեղմել սուր անկյունները արաբական աշխարհի «ազգայնական» ճամբարի, հատկապես Սիրիայի և Եգիպտոսի հետ, որոնք խորհրդային զենքի հիմնական սպառողներն էին և ամենալուրջ ռազմական վտանգն էին Իսրայելի համար: Ի տարբերություն իր նախորդի, ամերիկյան նոր նախագահը կարծում էր, որ արաբ-իսրայելական հակամարտության կարգավորումն անհնար է առանց Խորհրդային Միության գործուն մասնակցության: «Խաղաղության հաստատման բանալին գտնվում է ինչպես Կահիրեում և Դամասկոսում, այնպես էլ Մոսկվայում»,-գրում էր Նիքսոնը:[220]

Հարկ է նշել, որ Սպիտակ տան ղեկավարության մեջ առկա էին լուրջ տարաձայնություններ ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության վերաբերյալ: Եթե ԱՄՆ պետքարտուղար Ռոջերը կողմնակից էր համընդհանուր արաբ-իսրայելական կարգավորմանը, որը պետք է ընդգրկեր Իսրայելի հարևան բոլոր երկրները, ապա Քիսինջերը, որը մինչ պետքարտուղար նշանակվելը վարում էր ԱՄՆ նախագահի անվտանգության գծով խորհրդականի պաշտոնը, կողմնակից էր «քայլ առ քայլ» կարգավորմանը: Եթե Ռոջերը կարծում էր, որ անկախ կողմերի միջև գոյություն ունեցող հակասություններից, բանակցությունները պետք է շարունակվեն, ապա Քիսինջերի պատկերացմամբ, բանակցությունները պետք է վարվեին միմիայն այն կողմերի միջև, որոնք պատրաստ են դիմել

[220] Nixon R. The Memoirs of Richard Nixon. New York, Crosset & Dunlop, 1978, p.249-250.



զիջումների:[221] Այսպիսով, պետքարտուղարությունում գոյացել էր «արաբագետների» մի խումբ, որն, ի տարբերություն Սպիտակ Տան դիրքորոշման, կողմ էր ԱՄՆ-ի հավասարակշռված մոտեցմանը արաբ-իսրայելական հակամարտությանը՝ ոչ արաբամետ էր և ոչ էլ իսրայելամետ:[222] Իսրայելին զենքի առաքումների հարցում նրանք զուսպ քաղաքականության կողմնակիցներ էին և կարծում էին, որ ԱՄՆ-ը պետք է հանդես գա հստակ հայտարարությամբ՝ Իսրայելի կողմից 1967թ. պատերազմի ընթացքում արաբական տարածքների գրավման անթույլատրելիության վերաբերյալ: Բնական է, որ այդպիսի մոտեցումը կտրուկ հակազդեցության էր արժանանում ինչպես Իսրայելի կառավարության, այնպես էլ ԱՄՆ հրեական լոբբիի կողմից:

Նիքսոնն ու Քիսինջերը հանդես էին գալիս Իսրայելին ռազմական օժանդակության քաղաքականության շարունակման օգտին: Մտահոգված լինելով Մերձավոր Արևելքում միջուկային բախման հնարավորության վտանգից, նրանք սխալմամբ կարծում էին, որ Իսրայելի ռազմական գերակայության հաստատումը կստիպի նրա արաբ հարևաններին հրաժարվել հակամարտությունը ուժային միջոցներով կարգավորելու գաղափարից: Միևնույն ժամանակ, Նիքսոնն ու Քիսինջերը երկյուղում էին, որ եթե նոր բախման արդյունքում արաբները մեկ անգամ ևս պարտված դուրս գան, ապա Մոսկվան պարտադրված կլինի միջամտել, ինչն էլ անխուսափելիորեն հակամարտության մեջ կներքաշի նաև Միացյալ Նահանգներին:

1969թ. փետրվարի 1-4-ը կայացավ ԱՄՆ-ի Ազգային Անվտանգության Խորհրդի (ԱԱԽ) նիստը, ուր քննարկվեցին մերձավորարևելյան քաղաքականության հիմնական սկզբունքները: Նիստի արդյունքում որոշում կայացվեց ակտիվացնել խաղաղության հաստատմանն ուղղված ջանքերը՝ ապահովելով երկկողմ շփումները Խորհրդային Միության հետ, ինչպես նաև քննարկումները ՄԱԿ-ի շրջանակներում: ԱԱԽ-ը հաստատեց ամերիկյան քաղաքականության հետևյալ սկզբունքները՝

- Բոլոր կողմերը պետք է մասնակցեն բանակցություններին
- Բանակցությունների նպատակն է համաձայնագրի (binding agreement) ստորագրումը, ոչ անպայման խաղաղության պայմանագրի տեսքով (peace treaty), որով Իսրայելը պետք է վերադարձնի արաբական տարածքները, իսկ արաբները պետք է խոստանան հարգել Իսրայելի ինքնիշխանությունը
- Իսրայելական զորքերի դուրսբերումը պետք է իրականացվի

[221] Kissinger H. White House Years, 1979, pp.344-345.

[222] Արաբագետների խումբը հիմնականում կազմված էր ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ ՝ Ռոջեր Դևիսից, Եգիպտոսի հարցերով զբաղվող Ռիչարդ Պարկերից, Սիրիայի պատասխանատու Թալկոտ Սիլից:

մինչև Իսրայելի և Եգիպտոսի միջև հաստատված միջազգային սահմանը, ինչպես նաև Հորդանանի Արևմտյան ափից

- Գազայի հատվածի վերաբերյալ պետք է հատուկ պայմանավորվածություն ձեռք բերվի
- Որոշ կարևոր տարածքներ պետք է ապառազմականացվեն
- Հորդանանը պետք է քաղաքացիական և կրոնական դեր ունենա միացյալ Երուսաղեմում
- Պետք է կարգավորվի փախստականների խնդիրը:[223]

Ակնհայտ էր, որ 1969-1970թթ. ընթացքում խաղաղության գործընթացն առաջացնելու նպատակով Վաշինգտոնն իր հիմնական ուշադրությունը կենտրոնացնում էր եգիպտա-իսրայելական և հորդանանա-իսրայելական քաղաքական համաձայնագրերի ստորագրման վրա: Իսկ ինչ վերաբերում է Սիրիային, ապա տվյալ ժամանակահատվածում նա կարծես չէր ընդգրկվել պետքարտուղարության կողմից ամերիկյան մերձավորարևելյան քաղաքականության առաջնային խնդիրների շարքում:

Խորհրդային Միության, Անգլիայի և Ֆրանսիայի հետ խորհրդատվություններից հետո, ԱՄՆ-ի պետքարտուղարությունը հանդես եկավ նոր «խաղաղարար» նախաձեռնությամբ, որը հայտնի դարձավ «Ռոջերի ծրագիր» անվամբ: Այն կազմված էր կարճ նախաբանից և 10 կետերից, ուր մանրամասն նշված էին Եգիպտոսի և Իսրայելի միջև ստորագրվելիք համաձայնագրի պայմանները:[224] Հետաքրքրական է, որ Ռոջերի ծրագիրը ժամանակագրական առումով զուգադիպեց Իսրայելի դեմ արևելյան ճակատի ամրապնդմանն ուղղված արաբական աշխարհի դիվանագիտական և քաղաքական ջանքերի ակտիվացման գործընթացին: Կարծում ենք, որ ամերիկյան վերոհիշյալ ծրագիրը որոշակիորեն նպատակ ուներ թուլացնել արաբական հենց այդ արևելյան ճակատը, «խաղից հանելով» ամենաազդեցիկ ու հզոր արաբական ուժին՝ Եգիպտոսին, որից հետո, օգտվելով գոյություն ունեցող միջարաբական հակասություններից, նաև Հորդանանին:

Սիրիայի ղեկավարությունը հրաժարվեց ընդունել Ռոջերի ծրագիրն ու խիստ քննադատության ենթարկելով՝ այն որակեց որպես «արաբական ազգին պարտվողականություն» պարտադրելու փորձ:[225] Դամասկոսը շարունակաբար մերժում էր բանակցություններ վարելու և ծրագրեր քննարկելու որևէ հնարավորություն Իսրայելի կամ էլ նրա «քողարկված

[223] Kaufman, Burton. The Arab Middle East and the US: Inter Arab Rivalry and Superpower Diplomacy, pp.65-85.

[224] Փաստաթղթի անգլերեն տեքստը չի հրապարակվել: Որոշ կրճատումներով նրա արաբերեն թարգմանությունը տպագրվել է 1969թ. դեկտեմբերի 9-ին «Ալ-Նահար» (Բեյրութ) օրաթերթում, իսկ այնտեղից էլ՝ անգլերեն թարգմանությամբ Arab Report and Record-ում, Dec.1-15,1969, pp.521-22.

[225] International Documents on Palestine, 1970, p.830.



պաշտպան ԱՄՆ-ի հետ»:[226] Ընդհանուր առմամբ, կարելի է հաստատել, որ 1967-1970թթ. ընկած ժամանակահատվածում սիրիա-ամերիկյան ուղղակի միջպետական պաշտոնական շփումները գրեթե բացակայում էին:

Դրա հետ մեկտեղ, նույն շրջանում Դամասկոսը վատթարացրեց հարաբերությունները նաև պահպանողական արաբական երկրների հետ՝ իր հերթին անկարող գտնվելով գործնական փոխշահավետ կապեր հաստատել Եգիպտոսի և Իրաքի հետ: Բաասական ղեկավարներն ի վիճակի չեղան արդյունավետ ուղիներ գտնել ստեղծված ծանր կացությունից դուրս գալու համար: Անբարենպաստ զարգացումները Սիրիայի արտաքին քաղաքական ճակատում ուղղակի ազդեցություն ունեցան երկրի ներքաղաքական կյանքի վրա՝ հանգեցնելով երկրի ղեկավարության, մասնավորապես նրա զինվորական և քաղաքացիական թևերի միջև լուրջ տարաձայնությունների առաջացմանը:

1969թ. մայիսի 20-ին Սիրիայի սահմանադրությունն ու նոր կառավարության կազմը հաստատելու նպատակով հրավիրված Բաասի արտակարգ համաժողովը նույնպես չկարողացավ հարթել կուսակցության վերնախավում առկա հակասությունները, որոնք գնալով խորանում էին:[227]

Այսուհանդերձ ակնհայտ էին դրական տեղաշարժերը երկրի տնտեսության մեջ: Կարճ ժամանակահատվածում հաջողությամբ իրականացվեցին բազմաթիվ տնտեսական ծրագրեր: Այսպես, 1967թ. Խորհրդային Միության օգնությամբ սկիզբ դրվեց Եփրատի հիդրոէներգետիկ համալիրի շինարարությանը: 1968թ. հուլիսի 27-ին առաջին բեռնատար նավը լիաբեռնվեց սիրիական նավթով: Հատկանշական է այն փաստը, որ Սիրիան դարձավ արաբական երկրներից առաջինը, որն առանց արտասահմանյան ընկերությունների մասնակցության՝ կարողացավ իրականացնել նավթահանումը, դրա վերամշակումն ու արտահանումը: Միանգամայն հասկանալի է, որ բացի տնտեսական շահույթից, այն նաև մեծ քաղաքական նշանակություն ունեցավ Սիրիայի համար:

Կարելի է հաստատել, որ արտաքին քաղաքականության մեջ առկա լուրջ խնդիրները չէին խանգարում Դամասկոսին հետևողականորեն իրականացնելու «սոցիալ-տնտեսական առաջադիմական, Սիրիայի համար մինչ այդ չտեսնված և արմատական բնույթի բարեփոխումները»:[228]

Ինչպես արդեն նշել ենք, Նիքսոնի վարչակազմը հիմնական ուշադրությունը կենտրոնացրել էր Եգիպտոսի և Իսրայելի, ինչպես նաև

[226] Оганесян Н.О. Отношения Иракской Республики со странами Арабского Востока, с.51-56.

[227] «البعث», 29.05.1969:

[228] Հովհաննիսյան Ն.Հ, Սարգսյան Հ.Ս. Սիրիան անկախության համար մղված պայքարում, էջ 316-316:

զուգահեռաբար Հորդանանի և Իսրայելի միջև տարվող բանակցությունների վրա: Այդ առումով 1967-1973թթ. Վաշինգտոնի մերձավորարևելյան քաղաքականության մեջ կարելի է ընդգծել հետևյալ երկու բացթողումները: Առաջինը, տարվելով արաբ-իսրայելական հակամարտությունում գլոբալ դիմակայության (ԽՍՀՄ և ԱՄՆ) հարցերով, Քիսինջերը թերագնահատեց այդ ճգնաժամի մեջ ընդգրկված արաբական երկրների ներսում, այդ թվում և Սիրիայում, կատարվող գործընթացները: Երկրորդ բացթողումը կայանում էր նրանում, որ «երրորդ աշխարհի» նկատմամբ Նիքսոնի ու Քիսինջերի որդեգրած ռազմավարության համաձայն, աշխարհի այն շրջաններում, ուր չկա ԱՄՆ-ի անմիջական ներկայությունը, անհրաժեշտ է հենվել տարածաշրջանային, այսպես կոչված «պետություն-ներկայացուցիչների» վրա, որոնք էլ իրենց հերթին պետք է աջակցեն ԱՄՆ-ի քաղաքականության իրականացմանը: Մերձավոր Արևելքում այդպիսի «պետություն-ներկայացուցիչներ» դարձան Իրանն ու Իսրայելը: Հետագա դեպքերը ապացուցեցին ամերիկյան այդ ռազմավարության բացարձակ անհեռատեսությունը: Դրա վկայությունն էր 1978թ. հեղափոխությունը Իրանում, որը չափազանց ծանր հարված հասցրեց ԱՄՆ-ի տարածաշրջանային դիրքերին ու հեղինակությանը: Իսկ ինչ վերաբերում է Իսրայելին, ապա կարծում ենք, որ անսահմանափակ ռազմական և տնտեսական օժանդակություն ցուցաբերելով վերջինիս, Վաշինգտոնը ավելի շատ հարվածի տակ էր դնում իր իսկ սեփական շահերը արաբական աշխարհում: Չնայած նրան, որ 1974-75թթ. Քիսինջերը խոստովանեց այդ հանգամանքը, սակայն իսրայելամետ քվեարկողների ազդեցությունը այնքան մեծ էր, որ ի չիք էր դարձնում ԱՄՆ վարչակազմի փորձերն Իսրայելի կեցվածքը զսպելու ուղղությամբ:[229]

1967-1970թթ. տարածաշրջանում էլ ավելի սաստկացավ դիմակայությունը գերտերությունների միջև: Սիրիան և Միացյալ Նահանգները, գտնվելով հակառակ ճամբարների տարբեր բևեռներում, չէին կարողանում մերձեցման եզրեր գտնել: Խորհրդային Միությունը շարունակում էր սիրիական բանակի զինումն ու վարժեցումը, ինչին Միացյալ Նահանգները հակադրեցին համազոր և երբեմն էլ ավելի գերազանցող ռազմական օգնությունը Իսրայելին:[230]

1970թ. հուլիսի 2-ին, ելույթ ունենալով ամերիկյան հեռուստատեսությամբ, Նիքսոնը Սիրիան և Եգիպտոսը ներկայացրեց որպես «Իսրայելի թշնամի հարևանների»: Միջին Արևելքում ստեղծված իրավիճակը չափազանց պայթյունավտանգ համարելով, Նիքսոնը

[229] Rubenberg, Cheryl. Israel and the American National Interest, p.5.

[230] Առաջին անգամ Վաշինգտոնը Իսրայելին ուղղակի զենք (50 «Ֆանտոմ» տիպի ռմբակոծիչ) մատակարարեց Լ.Ջոնսոնի նախագահության վերջին օրերին:



չբացառեց ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև բախման հնարավորությունը: Նա իր ելույթում անդրադարձավ նաև Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի քաղաքականությանը, շեշտելով, որ այն հիմնականում հիմնված է այն համոզմունքի վրա, որ խաղաղության, ինչպես նաև տարածաշրջանի յուրաքանչյուր պետության անվտանգության ապահովումը բխում է ԱՄՆ-ի շահերից: Նիքսոնը նշեց նաև, որ ԱՄՆ-ը վստահ է, որ Իսրայելը «չի պատրաստվում ծով նետել որևէ պետություն, մինչդեռ արաբական պետությունները ցանկանում են այդ անել Իսրայելի հետ»: Ըստ Նիքսոնի, ուժերի հավասարակշռության խախտումն ու Իսրայելի թուլացումն անմիջապես կարող են հանգեցնել պատերազմական գործողությունների վերսկսմանը: Ուստի, *հավասարակշռության պահպանումը* նույնպես բխում է Ամերիկայի շահերից:[231]

Իրավիճակը տարածաշրջանում շարունակում էր մնալ լարված՝ Եգիպտոսը 1968թ. մարտից ձեռնարկել էր այսպես կոչված «հյուծիչ պատերազմ» Իսրայելի դեմ, որն ավարտվեց միայն 1970թ. օգոստոսի 8-ին, զինադադարի կնքումով: 1969թ. դեկտեմբերից մինչև 1970թ. փետրվար ընկած ժամանակահատվածում տեղի ունեցան 2 արաբական համաժողովներ՝ մեկը Ռաբատում, իսկ մյուսը Կահիրեում: Սիրիական պատվիրակությունը բոյկոտեց Ռաբատի համաժողովի վերջին նիստը՝ համաձայն չլինելով առաջարկված որոշման նախագծի հետ, որը, ըստ սիրիացիների, «խիստ հակաիսրայելական չէր»: Կահիրեի համաժողովին բնորոշ էր կարծիքների էլ ավելի միասնականությունն ու բացահայտ հակաամերիկյան ուղղվածությունը: Համաժողովը դատապարտեց ԱՄՆ-ի «հակաարաբական կեցվածքը» և կոչ արեց արաբական երկրների «բոլոր ուժերն ու հնարավորությունները կենտրոնացնել ընդհանուր թշնամիների՝ սիոնիզմի և իմպերիալիզմի դեմ զինված պայքարի» համար:[232]

Ջադիդի վարած ծայրահեղական քաղաքականության արդյունքում հաճախակի դարձան բախումները սիրիա-իսրայելական սահմանին:[233] 1970թ. մարտի 15-ին իսրայելական զորքերը իրականացրեցին լայնածավալ գործողություն Սիրիայի տարածքում, հարձակվելով Դամասկոսի մոտակայքում տեղակայված սիրիական զորքերի ճամբարի վրա, իսկ ապրիլի 2-ին զինադադարի գծի սիրիական մասում տեղի ունեցավ 1967թ. պատերազմից հետո անենամեծ ճակատամարտը:

[231] Riad, Mahmoud. The Struggle for Peace in the Middle East, p.142.

[232] International Documents on Palestine, 1970,p.756.

[233] Այսպես, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների ընթացքում տեղի ունեցած 28 միջադեպերի համեմատությամբ, 1969թ. միայն դեկտեմբերին 41 սահմանային բախում արձանագրվեց, իսկ 1970թ. հունվար-ապրիլ ամիսներին՝ 242: Այդ մասին տես Middle East Record, 1969-1970, pp.196-197, 203.

## *ԴԱՄԱՍԿՈՍԸ ԵՎ ՊԱՂԵՍՏԻՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ*

1948թ. պատերազմից հետո Սիրիայում ապաստան էին գտել շուրջ 100.000 պաղեստինցի փախստականներ: Նրանք համարվում էին սիրիացիներ, ըստ օրենքի, և օգտվում էին այդ երկրի քաղաքացիների բոլոր իրավունքներով: Ս.Ջադիդը հակված էր պաղեստինցիներին դիտարկել «հերոսական» լույսի տակ երբ նրանք սկսեցին ֆիդայական ջոկատներ կազմակերպել Իսրայելի դեմ պայքարելու նպատակով:[234] Սիրիական իշխանությունները պաղեստինցիներին տրամադրեցին երկու ճամբար Դամասկոսի մոտակայքում՝ զինվորների վարժեցման համար, ինչպես նաև կենտրոնակայան Դիրայում՝ Հորդանանում և Արևմտյան ափում գործողությունները ղեկավարելու համար: Սիրիացիները պաղեստինցիներին փոխանցեցին Ալժիրի նախագահ Հուարի Բումեդյենի կողմից առաքված զինամթերքը: Ի դեպ, Ալժիրը առաջինը ճանաչեց 1958թ. Յասիր Արաֆաթի /Աբու Ամար/ կողմից ստեղծված Պաղեստինի դիմադրության շարժումը՝ Ալ-Ֆաթհին, երկրորդը՝ Սիրիան էր:

Պաղեստինցիների գործունեությանը վերահսկում էր Սիրիայի բանակի սպայակույտի օպերատիվ բաժինը, որը մեծապես զսպում էր ջոկատների գործունեությունը 1966-1967թթ. աշնանն ու ձմռանը:

Ս.Ջադիդի իշխանության սկզբում Սիրիայի տարածքում գործում էին երկու պաղեստինյան կազմակերպություններ՝ Յ.Արաֆաթի Ֆաթհը և սիրիացիների կողմից հովանավորվող Պաղեստինի ազատագրության ճակատը /ՊԱՃ/ Ահմեդ Ջիբրիլի գլխավորությամբ: Սիրիական իշանությունները նրանց մատակարարում էին անհրաժեշտ զինտեխնիկա և զինամթերք: Վերջին հանգամանքի շնորհիվ էր, որ Ֆաթհի զինվորական թևը՝ Ալ-Ասիֆան 1967թ. ապրիլին իրականացրեց 4 հարձակում իսրայելական կողմի վրա, իսկ մայիսի սկզբին հրետանակոծության ենթարկեց Իսրայելի հյուսիսային գյուղերը:[235]

1961թ. Ֆաթհի կենտրոնակայանը տեղափոխվեց Դամասկոս: Սակայն Սիրիայի և պաղեստինցիների ռազմավարությունները տարբերվում էին միմյանցից: Եթե Արաֆաթը ձգտում էր պատերազմի Իսրայելի հետ, ապա սիրիացիները չէին ցանկանում պատերազմել: Սիրիացիները թույլատրում էին պաղեստինցիներին փոքրածավալ ռազմական գործողություններ իրականացնել ապառազմականացված գոտում՝ խրախուսելով դրանք հիմնականում Հորդանանի կամ Լիբանանի տարածքից: Դժվար թե Դամասկոսը լուրջ հույսեր էր կապում պաղեստինցիների հետ՝ Իսրայելի դեմ պայքարում, սակայն ֆիդայիների գործողությունները շարունակական պայքարի տպավորություն էին

[234] Seale P. Asad of Syria: The Struggle for the Middle East, pp.124-125.

[235] Lawson, H.Fred. Why Siria Goes to War. Thirty Years of Confrontation, p.44.



թողնում՝ սիրիացիների կողմից լայնածավալ պատերազմ վարելու անհնարինության պայմաններում: «Ֆիդայիները պատվավոր լուծում էին առաջարկում» Դամասկոսին՝ ստեղծված իրավիճակում:[236]

Այնուհետև, 1964թ. հունվարին Կահիրեում կայացած Արաբական լիգայի գագաթնաժողովում «ծրագրվեց» Պաղեստինի Ազատագրության Կազմակերպության /ՊԱԿ/ ստեղծումը: Չնայած սիրիացիների և սաուդցիների դիմադրությանը, եգիպտական առաջարկով կազմակերպության ղեկավար նշանակվեց Ահմեդ Շուքեյրին:[237] Փաստորեն, զուգահեռաբար քաղաքական ասպարեզում իրարից անջատ սկսեցին գործել երկու պաղեստինյան կազմակերպություն, որոնք տարբեր մարտավարական և գործնական մեթոդներ էիր որդեգրել Իսրայելի դեմ պայքարում:[238] Եթե Ֆաթհի համար զինված պայքարը Պաղեստինի ազատագրման համար միակ միջոցն էր, ապա Ա.Շուքեյրին սահմանափակվում էր միայն խոսքերով: Ֆաթհը չմտավ ՊԱԿ-ի մեջ և շարունակեց իր անկախ գործունեությունը մինչև 1969թ. փետրվար, երբ ՊԱԿ-ի գործկոմի նախագահ ընտրվեց Յ.Արաֆաթը:[239]

Պաղեստինյան զինված պայքարի նկատմամբ Ասադի վերաբերմունքը հստակ դրսևորվեց 1972թ. ապրիլին՝ Քուվեյթ իր պաշտոնական այցելության և սիրիական համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում: Այդ հանդիպման ժամանակ Ասադը նշեց, որ «պաղեստինյան դիմադրությունը արաբական ազատագրական պայքարի մաս է կազմում, սակայն դա որոշիչ գործոն չէ Իսրայելի դեմ պայքարում»: Նա ընդգծեց, որ «այդ ուղղությամբ կարևոր դեր են խաղում եգիպտական և սիրիական բանակները, իսկ պաղեստինյան

[236] Նույն տեղում, էջ 125:

[237] Ե.Պրիմակովը նրան բնութագրում է որպես «անդեմ և ինքնուրույնությունից զուրկ անձի»: Примаков Е. Конфиденциально: Ближний Восток на сцене и за кулисами (вторая половина XX-начало XXI века), с.228.

[238] ՊԱԿ-ի ենթակայության ներքո գործում էին 8 շարժումներ՝ Ֆաթհը, Պաղեստինի Ազատագրության Ժողովրդական Ճակատը/ՊԱԺՃ/, Պաղեստինի Ազատագրության Դեմոկրատական Ճակատը/ՊԱԴՃ/, Ալ-Սաիկան, ՊԱԺՃ-ԳՀ /ՊԱԺՃ- Գլխավոր հրամանատարություն/, ԱԱՃ /Արաբական Ազատագրության Ճակատ/, ՊԱՃ /Պաղեստինի Ազատագրության Ճակատ/, ՊԺՊՃ/Պաղեստինի Ժողովրդական Պայքարի Ճակատ/:

[239] Յ.Արաֆաթի դիրքերը պաղեստինյան շարժման մեջ մեծապես ամրապնդվեցին 1968թ. մարտի 21-ին Քարամե բնակավայրի մոտ Իսրայելի բանակի դեմ հաջող ռազմական գործողությունների իրականացումից հետո: Այդ ճակատամարտից հետո Յ.Արաֆաթը դարձավ Պաղեստինյան հերոս, իսկ նրա ղեկավարած Ֆաթհի հեղինակությունը արաբական աշխարհում շեշտակիորեն բարձրացավ: Այս հաջողությունը մեծապես նպաստեց Յ.Արաֆաթի, որպես ՊԱԿ-ի ղեկավարի ընտրությանը: Չնայած որ այդ ճակատամարտում մեծ դեր խաղացին հորդանանյան բանակի ստորաբաժանումները /25 հորդանանցի զինվոր զոհվեց/, սակայն վերջիններիս դերը Յ.Արաֆաթի կողմից միտումնավոր նվազեցվեց:

դիմադրությունը զուտ քաղաքական նշանակություն ունի»:[240]

ՊԱԿ-ի նկատմամբ Դամասկոսի դիրքորոշման մասին ամբողջական պատկերացում ունենալու համար նշենք, որ Սիրիայի քաղաքական վերնախավը Լիբանանի պես, Պաղեստինը մշտապես համարել է հարավային Սիրիայի մաս, որը գրավված է Իսրայելի կողմից: Պաղեստինի խնդիրը նաև բաասական Սիրիայի պանարաբական և հակաիսրայելական քաղաքականության անկյունաքարն էր: Այդ իսկ պատճառով սիրիական իշխանությունների աջակցությունը Ֆաթհին, այնուհետև ՊԱԿ-ին՝ կրել է շարունակական բնույթ:

Դամասկոսը միշտ ձգտել է վերահսկել ՊԱԿ-ի գործողությունները՝ պաղեստինյան շարժման մեջ՝ Ֆաթհին հակակշռելով այլ շարժումներ հովանավորելու միջոցով, ինչպիսիք էին Պաղեստինի ազատագրության ճակատը /ՊԱՃ/ և Ալ-Սաիկան:

Այդ պատճառով էլ Դամասկոսի և ՊԱԿ-ի միջև հարաբերությունները չէին կարող անամպ լինել: Նրանք ունեցել են բազմաթիվ ճգնաժամային պահեր, վերելքի ու անկման ժամանակահատվածներ: Անհամաձայնությունն ու հակասությունները ՊԱԿ-ի և սիրիական ղեկավարության միջև ծագել են այն ժամանակ, երբ պաղեստինցիների գործողությունները չեն համապատասխանել Սիրիայի շահերին կամ առաջնայնություններին: Այդ դեպքում Դամասկոսը խիստ միջոցներ է ձեռնարկել ՊԱԿ-ի դեմ:

Այս կապակցությամբ հիշատակման արժանի են Հ. Ասադի հետևյալ խոսքերը Յ.Արաֆաթին՝ Դամասկոսի և ՊԱԿ-ի միջև ծագած հերթական վեճի ընթացքում. «Դու մեզանից ավելի շատ չես ներկայացնում Պաղեստինը: Պաղեստինի ժողովուրդ կամ պաղեստինյան միավոր չկա, այլ գոյություն ունի միայն Սիրիա, իսկ Պաղեստինը Սիրիայի անբաժանելի մասն է կազմում»:[241]

Սիրիայի պաշտպանության նախարար, այնուհետև երկրի ղեկավար Հ. Ասադը ՊԱԿ-ի նկատմամբ ավելի իրատեսական մոտեցում ուներ ու ավելի քիչ էր տարված բաասական գաղափարաբանությամբ, քան կառավարության իր քաղաքացիական գործընկերները: Այսպես, պաղեստինյան ֆիդայիններին աջակցելով հանդերձ, նա ջանք չխնայեց նրանց սիրիական քաղաքականության նպատակներին ծառայեցնելու համար: Ըստ Ասադի, գաղափարական օժանդակությունը չէր նշանակում, որ մի քանի հազար զինված երիտասարդ պաղեստինցիներ կարող են մարտնչել ցանկացած պահին և ցանկացած վայրում: ՊԱԿ-ը շարունակում էր իր գործունեությունը Դամասկոսում, ֆիդայինները զինվում և մարզվում էին սիրիական ճամբարներում: Չնայած Ասադի հավաստիացումներին, որ «Սիրիան այն թոքերն են, որոնցով շունչ է

---

[240] «الرأي العام» (բավեյրյան օրաթերթ), 22.04.1972թ.:

[241] Dawisha, Adeed. Syria and the Lebanese Crisis, pp.103-106.



առնում պաղեստինյան շարժումը», պաղեստինյան ջոկատները, այնուամենայնիվ, գտնվում էին սիրիական իշխանությունների հսկողության տակ և ի վիճակի չէին առանց վերջիններիս համաձայնության Իսրայելի դեմ ինքնակամ գործողություններ իրականացնելու:[242]

Այսպես, ներկուսակցական հակասությունները, որոնք առկա էին Ս.Ջադիդի և Հ.Ասադի միջև, արտահայտվեցին նաև ՊԱԿ-ի նկատմամբ նրանց մոտեցումներում: Այդ առավել ցայտուն կերպով դրսևորվեց Հորդանանի ճգնաժամի օրերին: Այսպես, երբ 1970թ. սեպտեմբերին բախումներ տեղի ունեցան պաղեստինցիների և հորդանանյան բանակի միջև, սիրիական բաասական վարչակարգի քաղաքացիական թևը փորձեց օգտագործել արտաքին քաղաքական այդ կարևոր հարցը՝ կուսակցության ներսում սեփական դիրքերը ամրապնդելու համար: Յուսուֆ Զուային՝ սիրիացիների կողմից հովանավորվող Ալ-Սաիկայի ղեկավարը, այդ օրերին Ամման այցելությունից հետո զեկուցագիր ներկայացրեց Սիրիայի կառավարությանը, ուր առաջարկում էր «ներխուժել Հորդանան»:[243] Առաջարկը հավանության արժանացավ նաև Ս.Ջադիդի կողմից: Սիրիայի նախագահ Ալ-Ատասին Դամասկոսում կազմակերպված հանրահավաքներից մեկում խոստացավ «արյունը չափսոսալ» Հորդանանում պաղեստինցիներին օգնելու նպատակով: Վարչակարգի նման անհաշվենկատ և պոպուլիստական քաղաքականությունը հանգեցրեց Հ.Ասադի և զինվորականների միջամտությանը՝ ալ-Սաիկայի բաժանմունքների փակմանը երկրի տարածքում: Զինվորական հրամանատարությունը հայտարարեց, որ Բաասի շրջանային մասնաճյուղերը այսուհետ կգործեն որպես Ալ-Սաիկայի գրասենյակներ, քանի որ «նրանք այլևս նույնն են դարձել»:[244]

1970թ. Հորդանանի ճգնաժամից և ՊԱԿ-ի Բեյրութ տեղափոխումից հետո էլ Դամասկոսը շարունակեց իր աջակցությունը ցուցաբերել պաղեստինցիներին: 1974թ. Ռաբատի գագաթնաժողովում Սիրիան ամենաեռանդուն կողմնակիցն է եղել ՊԱԿ-ի՝ որպես Պաղեստինի ժողովրդի միակ օրինական ներկայացուցչի ճանաչմանը: 1975թ. մարտին Դամասկոսը առաջարկել է ՊԱԿ-ին՝ ստեղծել միասնական Սիրիա-ՊԱԿ քաղաքական և ռազմական հրամանատարություն, պաղեստինյան շարժումը վերահսկելու ակնհայտ մտադրությամբ: Հ.Ասադի բազմակողմանի աջակցությունը ՊԱԿ-ին՝ նրան Լիբանանում վերածեց կարևոր ռազմական և քաղաքական միավորի, որը սկսեց իրական վտանգ ներկայացնել անզոր լիբանանյան կառավարության համար և նպաստեց Լիբանանում քաղաքացիական պատերազմի բռնկմանը: ՊԱԿ-

---

[242] Maoz, Moshe. Syria and Israel From War to Peacemaking, p.113.

[243] Middle East Record 1969-1970, p.1150.

[244] Arab Report and Record,1-15 August, 1970.

ի դերակատարությունը Լիբանանում խոչընդոտում էր այդ կարևորագույն երկրում Դամասկոսի քաղաքական նպատակների իրականացմանը: Ահա այստեղից էլ սկսվեցին լուրջ բախումները Յ.Արաֆաթի և Հ.Ասադի միջև:

Այն հարցին, թե ինչու Հ.Ասադը քաղաքացիական պատերազմի սկզբնական շրջանում որոշեց օժանդակել աջակողմյան քրիստոնեական ուժերին՝ մենք կանդրադառնանք քիչ ավելի ուշ, Լիբանանի քաղաքացիական պատերազմին նվիրված մասում, սակայն այստեղ հարկ է նշել, որ Լիբանանում սիրիական ուժերը փաստորեն հայտնվեցին ձախակողմյան և արմատական պաղեստինյան ուժերի, այդ թվում նաև ՊԱԿ-ի հետ հակամարտության մեջ: 1976թ. ամռանը Յ.Արաֆաթը հայտարարեց, որ ՊԱԿ-ը սիրիացիների համար «Լիբանանը կվերածի երկրորդ Վիետնամի»: 1976թ. հուլիսի 20-ին Հ.Ասադը այսպես հակադարձեց Յ.Արաֆաթին. «Պաղեստինյան դիմադրությունը ներկայումս կռվում է այլ ուժերի / Լիբանանի ձախերի/ նպատակների իրականացման համար և Պաղեստինի արաբ ժողովրդի շահերին հակառակ: Նա /Արաֆաթը/ ուզում է ազատագրել Ջունիեն և Տրիպոլին /Լիբանանում/ և չի ցանկանում ազատագրել Պաղեստինը, եթե նույնիսկ հայտարարում է այդ մասին»:[245]

«Չկան մշտական դաշնակիցներ և թշնամիներ, այլ կան մշտական շահեր» սկզբունքը կիրառելի է ՊԱԿ-Դամասկոս հարաբերությունները բնութագրելու համար: Երբ Լիբանանում սկսվեցին բախումները լիբանանյան քրիստոնյա ուժերի և սիրիացիների միջև և հատկապես 1978թ. հետո, Դամասկոսը սկսեց համագործակցել ՊԱԿ-ի հետ՝ նրանց ճամբարներն ու հնարավորությունները երկրում օգտագործելու նպատակով:

1982թ. Լիբանան Իսրայելի ներխուժումից և ՊԱԿ-ի կենտրոնակայանի Թունիս տեղափոխվելուց հետո, Յ.Արաֆաթին թուլացնելու նպատակով, սիրիացիները հակամարտություն հրահրեցին Ֆաթհի ներսում. հեղինակություն վայելող Աբու Մուսան և Աբու Սալեհը ելույթ ունեցան Յ.Արաֆաթի քաղաքականության դեմ: Նրանք մեղադրեցին Յ.Արաֆաթին Իսրայելի հետ հաշտություն կնքելու պատրաստակամության, Հուսեյն թագավորի հետ բանակցություններ վարելու, այնուհետև՝ Կահիրե, Սաղաթին այցելելու համար:

Սիրիացիները աջակցություն ցուցաբերեցին Արաֆաթի դեմ ապստամբած Ֆաթհի վերոհիշյալ գործիչներին հատկապես 1983թ. նոյեմբերին, երբ նրանք լայնամասշտաբ ռազմական գործողություն իրականացրեցին Լիբանանի Տրիպոլի քաղաքի դեմ, որը ՊԱԿ-ի միակ և վերջին պատվարն էր այդ երկրում:

Սիրիացիները անտարակույս ձգտում էին հեռացնել «անհնազանդ» Արաֆաթին ՊԱԿ-ի ղեկավարումից: Այդ մասին բացահայտ կերպով

[245] Maoz Moshe. Syria and Israel From War to Peacemaking, p.165.



հայտարարում էին նաև Սիրիայի ԱԳՆ որոշ բարձրաստիճան դիվանագետներ:[246]

Ե.Պրիմակովը իր գրքում նշում է ՊԱԿ-ի և սիրիացիների հաշտեցման ուղղությամբ Մոսկվայի և անձամբ իր աշխատանքների մասին: Նա հետաքրական տեղեկատվություն է հաղորդում սիրիացիների կողմից Աբու Մուսային և ապստամբներին աջակցելու պատճառների վերաբերյալ: Արաֆաթի խոսքերով, Հ.Ասադի եղբայրը Ռիֆաաթը հայտնել է իրեն, որ սիրիական ղեկավարությունը ի սկզբանե սխալ տեղեկատվություն էր ստացել այն մասին, որ ապստամբները վայելում են համատարած օժանդակություն և կարող են իրենց հետևից տանել Ֆաթհի մեծամասնությունը: Համոզվելով այն բանում, որ այդ տեղեկությունները իրականությանը չեն համապատասխանում, Հ.Ասադը ստեղծել է հանձնաժողով՝ մրցակից պաղեստինյան խմբավորումները հաշտեցնելու նպատակով: Այդ հանձնաժողովում չեն ընդգրկվել ոչ ԱԳ նախարար Ա. Խադդամը և ոչ էլ ռազմական հետախուզության պետ Ալի Դուբան, որոնք հանդես էին գալիս Սիրիայի և Արաֆաթի մերձեցման դեմ:[247]

Ինչևիցե, Սիրիայի և ՊԱԿ-ի միջև վստահությունը այդպես էլ չհաջողվեց վերականգնել: Յ.Արաֆաթն ու Հ.Ասադը չկարողացան հաղթահարել միմյանց միջև առկա նաև անձնական հակակրանքը: Այն հանգամանքը, որ Խորհրդային Միությունը, հանդիսանալով Սիրիայի «հովանավոր» երկիր, վերջինից անկախ հաստատեց և այնուհետև պահպանեց ՊԱԿ-ի հետ ուղղակի կապն ու օժանդակությունը,[248] նույնպես իր ուրույն դերն ունեցավ պաղեստինցիների նկատմամբ սիրիացիների անվստահության պահպանման գործում:

Ավելի ուշ՝ 90-ականների խաղաղության գործընթացն ու ԱՄՆ-ի կողմից հիմնական ուշադրության կենտրոնացումը պաղեստինյան ուղղությամբ, /palestinian track/ և սիրիական գործոնի անտեսումը, ՊԱԿ-ը հանեցին Դամասկոսի ազդեցության ոլորտից: Իսրայելի դեմ պայքարում Դամասկոսին անհրաժեշտ էին նոր ուժեր: Պաղեստինում այն դարձավ «Համասը», իսկ Լիբանանում՝ «Հեզբալլահը»: Այս կապակցությամբ անհրաժեշտ է հստակեցնել մի կարևոր հանգամանք: Դամասկոսը երբեք չի ունեցել «Հեզբալլահը» ամբողջովին վերահսկելու հնարավորություն:

[246] Примаков Е. Конфиденциально: Ближний Восток на сцене и за кулисами (вторая половина XX-начало XXI века), с.245.

[247] Նույն տեղում, էջ 247:

[248] Թեև ԽՍՀՄ-ը ձեռնպահ էր մնում ՊԱԿ-ին ուղղակի ռազմական օժանդակություն ցուցաբերելուց, սակայն ոչ առանց Մոսկվայի գիտության, Արևելյան Եվրոպայի երկրներն ու Հյուսիսային Կորեան զենք էին մատակարարում ՊԱԿ-ին: Այսպես, ԳԴՀ-ից, Բուլղարիայից և Չեխոսլովակիայից Արաֆաթը ստանում էր հրետանու համար անհրաժեշտ զինամթերքը, Հունգարիայից՝ տանկեր իսկ ԿԺԴՀ-ից՝ «կատյուշաներ»: Гриневский О. Сценарий для Третьей мировой войны. Как Израиль чуть не стал ее причиной, с.168.

Այն միայն թույլատրել է իրանական օժանդակության անխափան մատակարարումը «Հեզբալլահին» և վերջինիս գործունեությունը Լիբանանի Բեքաայի հարթավայրում: Իբրև փոխհատուցում, «Հեզբալլահը» ձեռնպահ է մնացել այնպիսի գործողություններից, որոնք կարող էին պատճառ դառնալ Իսրայելի հզոր հակահարվածի և բնականաբար՝ Սիրիայի դիրքերի թուլացմանը Լիբանանում:[249] Սիրիան երբեք չի ցանկացել պատերազմ Իսրայելի հետ: Դամասկոսի շահերից է բխել հակամարտության կրակի «անմար» պահպանումը՝ թե ներքին և թե արտաքին քաղաքական նկատառումներից ելնելով:

Իսկ «Համասի» դեպքում զավեշտալին այն էր, որ ժամանակին պաղեստինյան «Համասի» հզորացման ու նրա գործունեության ակտիվացման մեջ շահագրգռվածություն էր ցուցաբերում Իսրայելը՝ պաղեստինյան շարժումը մասնատելու և Յ.Արաֆաթի աճող հեղինակությանն ու միանձնյա առաջնորդությանը հակակշռելու նպատակով: Դամասկոսը բազմակողմանի աջակցություն ցուցաբերեց «Համասին» և ԱՄՆ-ի բողոքներին հակառակ, թույլատրեց իր տարածքում «Համասի», «Պաղեստինի Ազատագրության Դեմոկրատական Ճակատի Գլխավոր հրամանատարության» /ՊԱԴՃ-ԳՀ/ և «Իսլամական ջիհադ» կազմակերպության գրասենյակների գործունեությունը:

### *1970թ. ՀՈՐԴԱՆԱՆՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ*

1968թ. սկսած Հորդանանում ծայրաստիճանի ակտիվացել էր պաղեստինցի ֆիդայիների շարժումը: Պետք է նշել, որ 1967թ. պատերազմի հետևանքով հարյուր հազարավոր պաղեստինցիներ ապաստան էին գտել Հորդանանում և աստիճանաբար ստեղծել «պետություն պետության մեջ»:[250] 1970թ. սեպտեմբերին Ջ.Հաբբաշի գլխավորած Պաղեստինի Ազատագրության Ժողովրդական Ճակատը 4 քաղաքացիական ինքնաթիռների առևանգում իրականացրեց, որոնցից երեքն իջեցրեց Հորդանանի անապատում, իսկ մեկը՝ Կահիրեում: Ահաբեկիչների նպատակն էր ճնշում գործադրել Իսրայելի վրա, որպեսզի վերջինս ազատ արձակի իր բանտերում գտնվող պաղեստինցի ֆիդայիներին: ՊԱԱՃ-ը, ինչպես նաև ՊԱԿ-ը հակադրվում և հակամարտություն էին գրգռում Հորդանանի Հուսեյն թագավորի և պաղեստինցիների միջև: Ասենք, որ 1970թ. «հորդանանյան ճգնաժամին» նախորդել էին պաղեստինցիների և Հորդանանի կառավարական ուժերի միջև ընդհարումները, որոնց հիմնական պատճառն էր հորդանանյան վարչակազմի պատրաստակամությունը՝ իր իսկողության տակ վերցնել «Ռոջերի ծրագրով» նախատեսված Հորդանան գետի արևմտյան ափը:

1970թ. ամռանը Հորդանանը նորից կանգնել էր քաղաքացիական պատերազմի շեմին: Պաղեստինյան որոշ խմբավորումներ առաջ էին քաշել «հորդանանյան վարչակազմի դեմ ազգային-ազատագրական պայքարի» ծայրահեղական ու անիրական կարգախոսը՝ իբրև Պաղեստինի համար մղվող «պատմական պայքարի անբաժան մաս»:[251]

Սիրիական ղեկավարությունն ուղղակի կապ էր տեսնում Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի վարած քաղաքականության և հորդանանա-պաղեստինյան ճգնաժամի խորացման միջև: Ըստ արաբագետ-դիվանագետ Ե.Դմիտրիևի,[252] 1970թ. ամռանը Հորդանանի կառավարությունը պատրաստվում էր պայքարել պաղեստինցիների դեմ և, միևնույն ժամանակ, ԱՄՆ-ը զենք ու ռազմամթերք էր առաքում Հորդանանին:[253] Սիրիայի ԱԳՆ-ի հայտարարություններից մեկի մեջ ասվում էր, որ «Հորդանանի ղեկավարությունը երբեք չի համարձակվի հարվածել ֆիդայիներին, եթե վստահ չլինի Միացյալ Նահանգների աջակցությանը»:[254]

Մեր կարծիքով, սիրիա-իսրայելական սահմանին ռազմական գործողությունների սաստկացման պայմաններում, Վաշինգտոնը, օգտվելով միջարաբական հակասություններից, փորձում էր թուլացնել արաբական շարքերի միասնականությունը: Իսկ Հորդանանը հանդիսացավ արաբական այդ շղթայի ամենաթույլ օղակը:

Իսկապես, Սպիտակ տունը միանշանակ անհանդուրժողական կեցվածք էր որդեգրել ահաբեկիչների նկատմամբ և անկասկած, ճնշում էր գործադրում Հորդանանի վրա, կոչ անելով Հուսեյնին՝ ջախջախել ֆիդայիներին: Միևնույն ժամանակ, Վաշինգտոնը չէր ցանկանում ճգնաժամի խորացումն ու տարածումը Հորդանանի սահմաններից դուրս:

Իր հերթին, Հուսեյնը քաջ գիտակցում էր պաղեստինցիների հետ ընդհարման բացասական հետևանքները Հորդանանի համար, ինչպես երկրի ներսում, այնպես էլ արաբական աշխարհում: Այդ իսկ պատճառով ճգնաժամի սկզբում նա փորձեց հակասությունները հարթել խաղաղ ճանապարհով, հաշվի չառնելով անգամ 1970թ. հունիսին իր վրա

---

[249] Բնականաբար, իրերի նման դրությունը շարունակվեց մինչև սիրիական ուժերի դուրսբերումը Լիբանանից, որն իրականացվեց 2005թ.՝ Ռ.Հարիրիի սպանությունից հետո՝ միջազգային հզոր ճնշման արդյունքում:

[250] Delvin, John. Syria: Modern State in an Ancient Land, p.101.

[251] Дмитриев Е. Палестинский узел, стр.77.

[252] Ե.Դմիտրիև՝ ռուս արաբագետ-դիվանագետ Ե.Պիրլինի (1932-2001) ծածկանունն է: Նա զբաղեցնելով ԽՍՀՄ ԱԳՆ-ում սպատասխանատու պաշտոններ, իր գիտական աշխատությունները ստիպված էր հրատարակել ծածկանվան տակ՝ քաղաքական հնարավոր անցանկալի մեկնաբանություններից և դիվանագիտական բարդություններից խուսափելու նպատակով:

[253] Նույն տեղում, էջ 78:

[254] International Documents on Palestine, 1970, p.930.

կատարված թող որ անհաջող մահափորձը: Սակայն վերոհիշյալ առևանգումները, ինչպես նաև երկրորդ անհաջող մահափորձը ստիպեցին Հուսեյնին՝ 1970թ. սեպտեմբերի 15-ին հրաման արձակել բանակին, շարժվելու պաղեստինցի ֆիդայիների դեմ: Հորդանանում բռնկվեց քաղաքացիական պատերազմ:

Հորդանանի դեպքերին առաջինն արձագանքեց Սիրիան, որը պաղեստինցիներին օգնության հասնելու նպատակով իր ցամաքային ու օդային ուժերը բերեց մարտական պատրաստականության և տանկային ստորաբաժանումներ կենտրոնացրեց հորդանանյան սահմանին: Սեպտեմբերի 20-ին սիրիական տանկերը ներխուժեցին Հորդանան:

ԱՄՆ-ի նախագահ Նիքսոնը սիրիական ներխուժումը բնութագրեց որպես «ամենալուրջ սպառնալիքն աշխարհի խաղաղության համար»[255], իսկ պետքարտուղար Ռոջերը հրապարակայնորեն դատապարտեց սիրիական «ներխուժումը»:[256] Այստեղ հարկ է նշել, որ դեռևս սեպտեմբերի 17-ին Նիքսոնը հայտարարել էր, թե «Միացյալ Նահանգները պատրաստ են միջամտել, եթե Սիրիան և Իրաքը փորձեն օժանդակել պաղեստինցիներին»:[257] Եվ իսկապես, Սպիտակ տունը վճռականորեն էր տրամադրված. սեպտեմբերի 19-ին Նիքսոնը մարտական պատրաստականության բերեց Արևմտյան Գերմանիայում տեղակայված իր օդային ուժերը՝ հրամայելով 6-րդ նավատորմին շարժվել դեպի Միջերկրականի արևելյան շրջաններ:

Սիրիական տանկերին օդային հարված հասցնելու նպատակով Հուսեյնը սկզբից պահանջեց ամերիկյան կամ անգլիական անմիջական միջամտությունը, իսկ հետո համաձայնվեց իսրայելական միջամտության և ամերիկյան «հովանոցի» ապահովման հետ:

Այդ օրերին նորից ի հայտ եկան գոյություն ունեցող տարաձայնությունները Ռոջերի և Քիսինջերի միջև: Առաջինը ճգնաժամի կարգավորման հարցում կողմնակից էր ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի ջանքերի համադրմանը: Համոզված լինելով, որ սիրիական ներխուժման ետևում կանգնած է Մոսկվան, Քիսինջերը կարծում էր, որ Հորդանանի ճգնաժամը վերածվել է ԱՄՆ-ի և Խորհրդային Միության միջև մրցակցության՝ Մերձավոր Արևելքում ազդեցության գոտիներ հաստատելու համար:[258] Նա վստահ էր, որ ի վերջո, «եթե Միացյալ Նահանգները չգործեն, ճգնաժամը գնալով էլ ավելի կխորանա, իսկ Մոսկվան նախաձեռնությունը կվերցնի իր ձեռքը»:[259] Քիսինջերին

[255] US Foreign Policy for the 1970`s. A Report to the Congress by Richard Nixon, February 25,1974 (US Embassy, Tel-Aviv), p.127.

[256] "New York Times", September 21,1970.

[257] "Chicago Sun-Times", September 17,1970.

[258] H.Kissinger.White House Years. Boston:Little, Brown & Co,1979, pp. 617-619.

[259] Նույն տեղում, էջ 611-612:



հաջողվեց համոզել Նիքսոնին, որպեսզի վերջինս համաձայնվի Իսրայելի ներկայացրած ծրագրին, ըստ որի միայն օդային հարվածը բավարար չէր և նախատեսում էր Իրբիդի շրջանում դրա հետ մեկտեղ նաև ցամաքային հարձակում իրականացնել սիրիական դիրքերի վրա: Այդ ծրագրի իրագործման համար Նիքսոնը շտապ 500մլն. ԱՄՆ դոլարի օգնություն, ինչպես նաև 18 «Ֆանտոմ» տեսակի ռմբակոծիչ ինքնաթիռներ տրամադրեց Իսրայելին:

Սեպտեմբերի 23-ին Սիրիայի ԱԳՆ-ն հանդես եկավ հայտարարությամբ, ուր քննադատեց Սիրիայի դեմ ռազմական գործողությունների իրականացմանն ուղղված ԱՄՆ-ի փորձերը, ինչպես նաև կոչ արեց դատապարտել ԱՄՆ-ի սադրիչ գործողությունները:[260]

Սիրիական տանկային միավորումները, չստանալով օդային աջակցություն և կորցնելով 120 տանկ, ստիպված եղան նահանջել: Նույն օրը Հուսեյնը հայտնեց ԱՄՆ-ի դեսպանին, որ Հորդանանի տարածքում իսրայելական օդային հարվածների կարիքը չկա և որ Իսրայելը կարող է իր ցամաքային գործողություններն ուղղել Սիրիայի դեմ:[261] Սակայն Իսրայելը չցանկացավ ցամաքային բախում ունենալ սիրիական բանակի հետ: Վաշինգտոնն իր հերթին «ողջունեց» սիրիական զորքերի դուրսբերումը Հորդանանից: Երեք տարի անց ամերիկյան Սենատում Քիսինջերը կհայտարարի, որ «սիրիական ներխուժումը Հորդանան՝ մեզ ավելի մոտ էր կանգնեցրել պատերազմի շեմին, քան որոշ շատ ավելի հայտնի ճգնաժամեր»:[262]

Ճգնաժամի արդյունքները դրական գնահատվեցին Միացյալ Նահանգների կողմից՝ Հուսեյնը մնաց իշխանության գլուխ, ֆիդայիները ծայրաստիճանի թուլացան, սիրիական ներխուժումը կասեցվեց առանց իսրայելական կամ ամերիկյան անմիջական միջամտության, ինչպես նաև Խորհրդային Միության ներքաշման:

Սակայն մեր կարծիքով, Հորդանանի ճգնաժամի ընթացքում ամերիկյան քաղաքանություն կերտողները անտեսել էին հետևյալ երկու հանգամանքները: Առաջինը՝ թերագնահատելով սիրիական գործողությունների հիմքում ընկած իրական դրդապատճառները, նրանք չկարողացան հասկանալ այն պարզ հանգամանքը, որ սիրիական բանակի ներխուժումը, ինչպես նաև նրա դուրս բերումը Հորդանանից կատարվեց ոչ թե Խորհրդային Միության ճնշման կամ էլ ԱՄՆ-ի ցուցաբերած «վճռական կեցվածքի», այլ Սիրիայի ներքին քաղաքական զարգացումների արդյունքում: Հորդանանից սիրիական տանկերի դուրսբերման հիմնական պատճառը կայանում էր նրանում, որ Ասադը, գիտակցելով ռազմական գործողություններ վարելու համար

[260] Black September, Beirut,1971, p.143.

[261] Marvin and Bernard Kalb. Kissinger, p.204.

[262] "The Economist", 19.11.1977.

անբարենպաստ պայմաններն ու բանակին սպասող՝ հնարավոր ծանր հետևանքները, չցանկացավ երկրի օդային ուժերը ներքաշել «կասկածելի արկածախնդրության մեջ»։ Ասադի այդ որոշման վրա անկասկած ազդեցություն ունեցան նաև նրա և Ջադիդի միջև առկա հակասություններն ու պայքարը՝ ներխուժման անարդյունք ավարտը էլ ավելի կհեղինակազրկեր Ասադի հակառակորդին։

Ճգնաժամի օրերին Ասադի կայացրած այդ որոշման պատճառների վերաբերյալ գոյություն ունի նաև մեկ այլ տեսակետ, որի համաձայն Հորդանան ներխուժման ժամանակ Ասադն արդեն կայացել էր որպես Սիրիայի de facto ղեկավար, ուստի տանկերի ներխուժումը Հորդանան՝ չէր կարող իրականացվել առանց նրա համաձայնության։ Եվ քանի որ Ասադն այդքան էլ բարյացակամ վերաբերմունք և հարգանք չուներ պաղեստինցիների և նրանց ղեկավարության նկատմամբ, այդ իսկ պատճառով էլ չէր ցանկանում, որ վերջիններս հաղթանակած ու էլ ավելի ուժեղացած դուրս գան այդ պայքարից։[263]

Ամերիկյան քաղաքականության երկրորդ թերացումը եղավ այն, որ Նիքսոնն ու Քիսինջերը հորդանանյան դեպքերը նույնպես դիտարկելով ԽՍՀՄ-ի հետ համընդհանուր դիմակայության տեսանկյունից, գերագնահատեցին խորհրդային գործոնը և չկարողացան հասկանալ, որ Մոսկվան նվազագույն հետաքրքրություն ունի Հորդանանում, որ ՊԱԿ-ի հետ նրա հարաբերությունները հեռու են դրական լինելուց, որ Սիրիան այնքան անկայուն էր ու անկանխատեսելի, որ նրան ռազմական և տնտեսական օժանդակություն ցուցաբերելով հանդերձ, Խորհրդային Միությունը այնուամենայնիվ, զգուշավոր քաղաքականություն էր որդեգրել այդ երկրի նկատմամբ։ Ուստի մեզ անհիմն են թվում հայտարարությունները այն մասին, որ Հորդանան սիրիական ներխուժման հետևում կանգնած էր Մոսկվան։ Եվ եթե հաշվի առնենք, որ ամերիկյան դիվանագիտական ջանքերը ճգնաժամի օրերին ուղղված էին նաև դեպի ԽՍՀՄ, ապա միանգամայն պարզ կդառնա, որ դրանք չէին կարող որևէ գործնական բան ավելացնել Մոսկվայի առանց այդ էլ զսպողական կեցվածքի վրա։

### *ՀԱՖԵԶ ԱՍԱԴԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆ ԱՐԱԲ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ*

Հորդանանի ճգնաժամից հետո Միացյալ Նահանգները շարունակեցին տարածաշրջանում ռազմական հավասարակշռության պահպանման քաղաքականությունը, որը Վաշինգտոնի կողմից դիտվում էր որպես կայունության, եթե ոչ խաղաղության բանալի։ Զենքի առաքումներն Իսրայելին, ինչպես նաև Հորդանանին առաջնային խնդիր

[263] Weinberger, Naomi Jay. Syrian Intervention in Lebanon: The 1975-76 Civil War, p.76.



էին ամերիկյան վարչակազմի համար, ավելի առաջնային, քան խաղաղարար նախաձեռնությունները։[264]

ԱՄՆ-ի և Իսրայելի միջև հարաբերությունները, «Հովանավոր-հաճախորդ» մակարդակին մնալով հանդերձ, աստիճանաբար վերածեցին ամուր փոխադարձ ռազմավարական նշանակություն ունեցող ամուր դաշինքի։ ԱՄՆ-ի համար այդ դաշինքի ռազմավարական անհրաժեշտության հիմնավորումն այն էր, որ Իսրայելը կարող է ոչ միայն ամուր պատնեշ հանդիսանալ տարածաշրջանում խորհրդային ազդեցության տարածման ճանապարհին, այլև ի վիճակի է պաշտպանել «չափավոր» արաբական վարչակարգերը «ծայրահեղականներից» և ապահովել տարածաշրջանային կայունությունը։ Ելնելով վերոհիշյալ նկատառումներից, երբեմն առանց հաշվի առնելու ԱՄՆ-ի և Իսրայելի շահերի ընդհանրությունն ու համատեղելիությունը տվյալ դեպքում, պաշտոնական Վաշինգտոնը քաղաքական, դիվանագիտական և բարոյական լուրջ օժանդակությունն էր ցուցաբերում Իսրայելին։

Իսկ Սիրիայում Հորդանանյան դեպքերից հետո հակասություններն ու տարաձայնությունները իշխող Բաաս կուսակցության մեջ գնալով էլ ավելի էին սրվում։ Կուսակցության վերնախավում ստեղծված կացությունը քննարկելու նպատակով հոկտեմբերի 30-ին Դամասկոսում գումարվեց Բաասի 10-րդ արտահերթ համաժողովը, որի պաշտոնական օրակարգով նախատեսվում էր արաբական աշխարհում ստեղծված իրավիճակի քննարկումը։ Սակայն փաստորեն այն վերածվեց կուսակցության ղեկավարության և Ասադի կողմնակիցների՝ կուսակցության քաղաքացիական և զինվորական թևերի միջև սուր բանավեճի։

Հիշատակման արժանի է Հ.Ասադի ելույթը համաժողովում։ Նա ասաց, որ «Գ.Նասերի մահից հետո Սիրիան չունի այնքան շռայլություն, որ հանդես գա Իսրայելի հասցեին անհիմն մեղադրանքներով և ծայրահեղականություն խաղա։ Ապագայում ավելի լավ կլիներ, որ մենք ձեռնպահ մնանք ոչնչով չապահովված սադրիչ գործողություններից, որոնք կարող են օգտագործվել թշնամու կողմից՝ որպես պատրվակ, սիրիական բանակին մարտահրավեր նետելու և նրան պատերազմի մեջ ներքաշելու համար, որը այսօր դեռ ի վիճակի չէ հաղթելու»։[265] Ասադի այս ելույթը հարուցեց կուսակցության քաղաքացիական թևի ներկայացուցիչների ընդվզումը։ Նրանք Ասադի ելույթը որակեցին որպես «պարտվողական»։

Համաժողովի ընթացքում պարզ դարձավ, որ Ասադը և իր հիմնական

[264] Այդ առաքումները գագաթնակետին հասան 1971թ., երբ ԱՄՆ-ն 545մլն. դոլարի վարկ տրամադրեց Իսրայելին՝ զինամթերք գնելու համար։ 1972-73թթ. Իսրայելը իր «հովանավորից» ստացավ համապատասխանաբար 300 և 307 մլն. դոլարի վարկեր։ Տես՝ Կարապետյան Ռ. Սիրիա-ամերիկյան հարաբերությունները (1967-1996թթ.), էջ 38։

[265] Григорян Г. Позиция Сирии в ближневосточном конфликте, с.158.

զինվորական համախոհ Մուստաֆա Տլասը համարյա ամբողջապես մեկուսացված են: Եվ երբ որոշում ընդունվեց պաշտպանության նախարար Ասադին և սպայակույտի պետ Տլասին պաշտոնանկ անելու վերաբերյալ, վերջիններս անմիջապես պատասխան գործողությունների դիմեցին:[266]

Նոյեմբերի 13-ին Ասադը հրամայեց զինվորներին՝ գրավել կուսակցության քաղաքացիական թևի, ինչպես նաև բաասական մեծամասնության «ժողովրդական կազմակերպությունների» գրասենյակները: Դրան հետևեցին կուսակցության նշանավոր գործիչների, ներառյալ Ջադիդի և երկրի նախագահ Նուր ալ-Դ-ին ալ-Ատասիի ձերբակալությունները: Ի դեպ, Ջադիդը մինչև իր մահը՝ 1993թ. օգոստոսի 19-ը, պահվեց Դամասկոսի Մազզա բանտում, իսկ Նուր ալ-Դ-ին ալ-Ատասին ազատ արձակվեց միայն 1992թ.: Նոյեմբերի 16-ին Ասադի խումբը հսկողություն հաստատեց երկրի ողջ տարածքում: Նոյեմբերի 13-ին նորաստեղծ ժամանակավոր տարածաշրջանային ղեկավարության կողմից հրապարակված հայտարարության մեջ նշվում էր, որ «նման գործողությունների նպատակն է Բաաս-ի նախկին ղեկավարության կողմից թույլ տված սխալների ուղղումն ու կուսակցական համագումարների որոշումների հետևողական իրականացումը»:[267]

Նոյեմբերի 21-ին կազմվեց «ազգային միասնության» կառավարություն՝ Ասադի գլխավորությամբ: Կառավարության կազմում Բաասի անդամներից բացի, ընդգրկվեցին նաև այլ քաղաքական կուսակցությունների ու խմբավորումների անդամներ, այդ թվում՝ Արաբական սոցիալիստական միության և համայնավար կուսակցության ներկայացուցիչներ: Մինչև նախագահի ընտրությունը, երկրի ղեկավար նշանակվեց Ահմեդ ալ-Խատիբը:

Նշված իրադարձությունները սիրիական պատմագրության մեջ հայտնի դարձան որպես «նոյեմբերի 16-ի ուղղիչ շարժում»:

Սիրիայի նորագույն պատմության մեջ սկսվեց չորրորդ՝ Հ.Ասադի իշխանության շրջանը, որը տևեց շուրջ 30 տարի, մինչև 2000թ. նրա մահը: Տարբեր գնահատականներ են տրվում նրա կառավարման տարիներին՝ ծայրահեղ բացասականից մինչև անվերապահորեն գերազանց: Իհարկե, երկրում ստեղծվեց կենտրոնաձիգ ամբողջատիրական համակարգ, որը տվյալ ժամանակահատվածում այլընտրանք չուներ, հաշվի առնելով սոցիալ-տնտեսական և քաղաքական առանձնահատկությունները: Արևմուտքի համար այդքան կարևոր «ժողովրդավարությունն ու մարդու իրավունքները», չէին կարող առաջնային լինել պատերազմական վիճակում գտնվող պատմամշակութային զարգացման տարբեր ուղի անցած և կայունության կարոտ երկրի համար: Այս ամենը բարդանում էր

266 «الرأي», 1970թ. նոյեմբերի 14 և17:

267 Современная Сирия. Справочник, с.224.



նաև այն հանգամանքով, որ Հ.Ասադը ներկայացնում էր երկրի ալավի փոքրամասնությունը, ուստի նրա վարած ներքին և արտաքին քաղաքականությունն էլ պետք է նաև հաշվի առներ այդ հանգամանքը: Նրա համար իշխանության կայունությունը ավելի բարձր արժեք էր քան «սիրիացիներին անհայտ ժողովրդավարության հորձանուտը»:[268]

Ուստի Հ.Ասադի ամենահիմնական ձեռքբերումը իր կառավարման ընթացքում՝ կայունության ապահովումն էր, որն էլ հնարավորություն տվեց բարեփոխումներ իրականացնելու երկրում: Մեր այս աշխատության նպատակների մեջ չի մտնում Սիրիայի ներքին քաղաքական հարցերի լուսաբանումն ու այդ ուղղությամբ վարչակարգի վարած քաղաքականության մեկնաբանումը, ուստի մենք առավելապես կկենտրոնանանք արաբ-իսրայելական հակամարտությունում Դամասկոսի վարած քաղաքականության վրա: Սիրիագետների մի խումբ /հիմնականում արևմտյան և իսրայելական/ հանդես է գալիս մեղադրանքներով Հ.Ասադի հասցեին՝ «ահաբեկչությանը սատարելու», «տարածաշրջանում ապակայունացման հիմնական պատճառը հանդիսանալու» և շատ այլ մեղքերի մեջ: Սակայն բոլոր հետազոտողները համակարծիք են այն բանում, որ *Հաֆեզ Ասադի օրոք Սիրիան աննախադեպ հեղինակություն ձեռք բերեց արաբական աշխարհում և առաջնային դերակատարություն ստանձնեց արաբ-իսրայելական հակամարտության մեջ:*

Ասադն իշխանության եկավ ոչ միայն իր երկրի, այլև ամբողջ արաբական աշխարհի համար շրջադարձային ու դժվար պահին, երբ Նասերի մահից հետո արաբական երկրների բաժանվածության պայմաններում սերտանում ու էլ ավելի էր ամրապնդվում ռազմավարական համագործակցությունը ԱՄՆ-ի և Իսրայելի միջև:

Իշխանությունը գրավելուց հետո Ասադը ձեռնամուխ եղավ իր կառավարության կազմակերպական ենթակառույցների ստեղծմանը և կենտրոնացված հսկողության հաստատման աշխատանքներին: Բաաս-ի ժամանակավոր տարածաշրջանային ղեկավարությունը նշանակեց 173 անդամից բաղկացած օրենսդիր մարմին՝ Ազգային Խորհուրդ: Նորաստեղծ խորհրդում Բաաս-ը 87 տեղ զբաղեցրեց: Մնացած տեղերը բաշխվեցին «ազգային կազմակերպությունների» և փոքր կուսակցությունների միջև: 1971թ. մարտին Բաաս-ը անցկացրեց իր տարածաշրջանային համագումարը և ընտրեց 21 հոգուց բաղկացած նոր Տարածաշրջանային ղեկավարություն՝ Ասադի գլխավորությամբ: Նույն ամսին տեղի ունեցավ ազգային հանրաքվե, որը հաստատեց Ասադին որպես երկրի Նախագահ, 7 տարի ժամկետով: 1972թ. մարտին, իր իշխանության հիմքերը ամրապնդելու և ընդարձակելու նպատակով

268 Мир глазами президента Сирии Хафеза Асада. Сборник речей и выступлений, с.26.

Ասադը ստեղծեց Ազգային Առաջադիմական ճակատ՝ կուսակցությունների կոալիցիա Բաաս-ի գլխավորությամբ, որին հետևեցին տեղական իշխանությունների ընտրություններ՝ Սիրիայի 14 նահանգներում: Այնուհետև կայացան երկրի օրենսդիր մարմնի՝ Ազգային Խորհրդի 1962թ. ի վեր առաջին ընտրությունները: 1970-73թթ. համառոտակի կարելի է բնութագրել որպես Ասադի իշխանության ամրապնդման, կառավարման համակարգի ձևավորման, օրենսդրական և իրավական համակարգի ստեղծման, երկրի ներքին և արտաքին քաղաքականության մշակման ժամանակաշրջան:

Այդ ժամանակաշրջանը համալրվեց 1973թ. երկրի հիմնական օրենքի՝ Սահմանադրության ընդունումով, որն ամրագրեց Բաաս կուսակցության գերակայությունը պետության և հասարակության մեջ՝ լայն իրավունքներ վերապահելով երկրի նախագահին, որը դարձավ նաև Սիրիայի զինված ուժերի գլխավոր հրամանատարը:

Սիրիայում կատարվող փոփոխություններին ուշադրությամբ հետևում էին Վաշինգտոնում: Մինչ իշխանության գալը, Ասադը բազմիցս քննադատել էր «համայնավարական» և ԽՍՀՄ-ի կողմից «ներշնչվող» Ջադիդի կառավարությունը: Անգամ 1969թ. մարտի 17-ին բրիտանական «Դեյլի թելեգրաֆ» թերթին տված հարցազրույցում Ասադն իր երկրի ներքին և արտաքին բոլոր դժվարությունները կապեց ԽՍՀՄ-ի հետ: Այդ իսկ պատճառով Արևմուտքը և, մասնավորապես Միացյալ Նահանգները, սկսեցին որոշակի հույսեր փայփայել, որ Ասադը կարող է իրենց նկատմամբ ավելի բարենպաստ և հավասարակշռված քաղաքականություն որդեգրել:

Սակայն Ասադը ոչ միայն չարդարացրեց Արևմուտքի այդ հույսերը, այլև իշխանությունը գրավելուց անմիջապես հետո շտապեց հայտարարել «սոցիալիստական ճամբարի և մասնավորապես բարեկամ ԽՍՀՄ-ի հետ հարաբերությունները զարգացնելու» իր մտադրությունների մասին, միաժամանակ երկու համայնավար ընդգրկելով նորաստեղծ Տարածաշրջանային ղեկավարության մեջ:[269] Այստեղ պետք է ընդգծել, որ շարունակաբար շեշտելով Մոսկվայի հետ ռազմավարական դաշնակիցներ լինելու փաստը և սիրիա-խորհրդային հարաբերությունները զարգացնելով հանդերձ, Ասադը փորձում էր խուսափել այդ հարաբերություններին գաղափարախոսական երանգավորում հաղորդելուց:

Հիասթափված՝ Սիրիայում կատարված իշխանափոխությունից, Միացյալ Նահանգները հանդես եկան երկու նախաձեռնությամբ: Առաջինը, "Ռոջերսի առաքելությունն էր»: ԱՄՆ-ի դեսպան Յարինգը մոտավորապես մեկ տարի շարունակ միջնորդական ջանքեր գործադրեց եգիպտա-իսրայելական բանակցությունների վերսկսման ուղղությամբ:

[269] Damascus Domestic Service, November 16,1970.



Երկրորդ նախաձեռնություն հիմքում ընկած էր «միջանկյալ կարգավորման» գաղափարը: 1971թ. օգոստոսին այդ երկու նախաձեռնություններն էլ ավարտվեցին անարդյունք:

ԱՄՆ-ի քաղաքականությունը Սիրիայի նկատմամբ առաջին հերթին նպատակ ուներ խոչընդոտել ԽՍՀՄ-ի հետ Դամասկոսի մերձեցմանը, չթույլատրել միասնական արաբական ճակատի ստեղծմանն ուղղված սիրիական նոր կառավարության ծրագրերի իրականացումը:

Դեռևս 1968թ. նոյեմբերի 2-ին Նյու-Յորքում ԱՄՆ պետքարտուղար Դ-ին Ռասկը Եգիպտոսի արտաքին գործերի նախարար Մահմուդ Ռիադի հետ հանդիպման ժամանակ առաջարկեց քննարկել *եգիպտական տարածքներից* իսրայելական ուժերի ամբողջական դուրսբերման խնդիրը՝ հակառակ ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի 242 բանաձևի, որի համաձայն, Իսրայելը պարտադրվում էր դուրս բերել իր զորքերը գրավյալ *բոլոր արաբական տարածքներից:* Միանգամայն ակնհայտ էր ԱՄՆ-ի ձգտումը եգիպտա-իսրայելական, սիրիա-իսրայելական, հորդանանա-իսրայելական առանձին համաձայնագրերի միջոցով թուլացնել ծայրահեղական արաբական ճակատի միասնությունը: Քիսինջերն իր հերթին հետագայում վարպետորեն փորձեց նաև անվստահություն և կասկած սերմանել Եգիպտոսի և Սիրիայի հարաբերություններում:[270]

Սակայն, եթե ԽՍՀՄ-ի հետ արաբների մերձեցումը խոչընդոտելու և հնարավորության դեպքում նաև նրանց կապերը Մոսկվայի հետ խզելու՝ Քիսինջերի հետապնդած հիմնական նպատակը չհաջողվեց իրականացնել Սիրիայի դեպքում, ապա այն հաջողությամբ պսակվեց Եգիպտոսում, երբ 1972թ. Անվար Սադաթը այնտեղից արտաքսեց բոլոր խորհրդային մասնագետներին:

Հաշվի չառնելով ԽՍՀՄ-ի հետ 1972թ. մայիսին ստորագրած 10-կետանոց հուշագիրը, որի համաձայն երկու երկրները «հատուկ պատասխանատվություն էին ստանձնում անել ամեն ինչ իրենց ուժերի սահմաններում, որպեսզի չթույլատրեն բախումներ և այնպիսի զարգացումներ, որոնք կարող են ուժեղացնել միջազգային լարվածությունը», ԱՄՆ-ը, վարելով «ձգձգման» քաղաքականություն, աստիճանաբար ավելացնում էր ռազմական օժանդակության չափերը Իսրայելին:[271] Մինչդեռ ԽՍՀՄ-ը, հավատարիմ մնալով ստորագրված համաձայնության դրույթներին, մերժեց Եգիպտոս նորագույն ռազմական տեխնիկա առաքելու Սադաթի խնդրանքը:

Այդ մերժումը, ինչպես նաև որոշ զինվորական սարքավորումների առաքման ձգձգումը միայն պատրվակ դարձավ Սադաթի համար՝ երկրից վտարելու շուրջ 10 հազար խորհրդային մասնագետների: Ըստ Պրիմակովի, Եգիպտոսի նախագահի այդ քայլը ԱՄՆ-ի հետ Սադաթի

[270] Riad, Mahmoud, The Struggle for Peace in the Middle East, p.282.

[271] US Foreign Policy, 1972. A Report of the Secretary of State, April 1973, pp.598-903.

նախաձեռնած «մեծ խաղի» շարունակությունն էր:[272]

Միջարաբական հարաբերություններում Սիրիայի նոր վարչակարգը ձգտում էր վերջ դնել երկրի մեկուսացմանն ու ամրապնդել նրա դիրքերը արաբական աշխարհում: Ի տարբերություն Ջադիդի, Իսրայելի դեմ համատեղ ռազմական ճակատ ստեղծելու նպատակով Ասադը փորձեց բարելավել հարաբերությունները Եգիպտոսի, Հորդանանի, ինչպես նաև Սաուդյան Արաբիայի հետ: 1970թ. նոյեմբերին Սիրիան միացավ Եգիպտոսի, Լիբիայի և Սուդանի կառավարությունների կողմից ընդունված Տրիպոլիի խարտիային, որը նախատեսում էր միասնական արաբական պետության ստեղծում: 1971թ. ապրիլի 17-ին հռչակվեց Արաբական Հանրապետությունների Դաշնությունը, որի նպատակն էր «պահպանել արաբական հայրենիքի ամբողջականությունն ու անկախությունը, կառուցել արաբական սոցիալիստական հասարակարգ, ազատագրել գրավված արաբական տարածքները, ամրապնդել արաբական ազգային-ազատագրական պայքարը»:[273]

Պաղեստինի խնդրին ու միջարաբական համագործակցությանը Հ.Ասադն անդրադարձավ 1970 նոյեմբերի 16-ին, իր առաջին ծրագրային ելույթի ընթացքում, ուր երկրի ներքին քաղաքական օրակարգին զուգադրեց արտաքին քաղաքական ուղղվածությունը. «Անհրաժեշտ է լայն համագործակցություն արաբական առաջադեմ բոլոր երկրների հետ, որը կամրապնդի ռազմական պայքարի ռազմավարությունը և կապահովի արաբական ուժերի ներգրավումը ազատության համար մղվող պայքարում, աջակցությունը պաղեստինյան հեղափոխությանն ու պաղեստինյան դիմադրության շարքերում միասնության հաստատմանը»:[274]

Սիրիայի ղեկավարի համոզմունքով խաղաղություն հաստատելու հիմնական պայմանը ոչ թե Գոլանների վերադարձն է, այլ «մեր Պաղեստինի արաբ ժողովրդի իրավունքների վերականգնումը»:[275] Ասադի համար խաղաղության հաստատումը կարող էր ապահովվել միայն 2 պայմանների իրականացմամբ՝ Իսրայելի կողմից գրաված արաբական բոլոր տարածքների վերադարձի և Պաղեստինի ժողովրդի իրավունքի ճանաչման՝ պաղեստինյան պետության ստեղծման միջոցով:

Այս կապակցությամբ հիշարժան է, որ ԱՄՆ-ի նախագահ Ջ.Քարթերը տպավորվել էր Ասադի աշխատասենյակի պատին կախված մեծ նկարից, ուր պատկերված էր 1187թ. Հիթինի պատմական

[272] Примаков Е.М. История одного сговора, с.38-39.

[273] Современная Сирия. Справочник, с. 230.

[274] 120-119ص،1978 ،دمشق .1975-1943 نضال حزب البعث; Բաաս կուսակցության պայքարը 1943-1975, Դամասկոս, 1978, էջ 119-120:

[275] Мир глазами президента Сирии Хафеза Асада. Сборник речей и выступлений, с.59-61



ճակատամարտը, որի արդյունքում խաչակիրները պարտություն կրեցին և Երուսաղեմը նվաճվեց Սալադինի կողմից: «Խոսելով արաբ-իսրայելական հակամարտության և Պաղեստինի հիմնախնդրի մասին, այնպիսի տպավորություն էր ստեղծվում, որ Ասադը իրեն ժամանակակից Սալադին համարելով, պարտավորված էր զգում տարածաշրջանը օտար ներկայությունից ազատելու և Դամասկոսը Արաբական միասնության առանցքային կետ պահպանելու գործում»:[276] Եվ իսկապես, Ասադը հավատարիմ մնաց այդ «պարտավորվածությանը» մինչև իր կյանքի վերջը: Համենայն դեպս, ոչ որ չի կարող հերքել արաբ-իսրայելական հակամարտության, արաբական միասնության հարցերում *նրա փարած քաղաքականության հետևողականությունն ու շարունակականությունը:*

Որպես առաջին քայլ արաբ-իսրայելական հակամարտության հարցում, Ասադը խմբագրեց Սիրիայի արտաքին քաղաքական մոտեցման կարևոր դրույթներից մեկը: Այսպես, եթե 1967թ. ՄԱԿ-ի 242 բանաձևը շարունակաբար մերժվում էր սիրիական ղեկավարության կողմից, ապա 1972թ. մարտին Ասադը հայտարարեց, որ ինքն այլևս չի ընդդիմանալու վերոհիշյալ բանաձևին: Այս նոր դիվանագիտական քայլն Ասադը հիմնավորեց հետևյալ կերպ. «Երբեմն քաղաքական խուսանավումը կարևոր է պատերազմի ուղղությամբ գործադրվող ջանքերի համար: Օրինակ, միջազգային հանրային կարծիքը հանգստացնելու կամ էլ ժամանակ շահելու նպատակով»:[277]

Ասադի համար վերոհիշյալ բանաձևի ընդունումը բնավ էլ Իսրայելի հետ հաշտվելու համաձայնություն չէր նշանակում: Նա չէր հավատում, որ Գոլանների վերադարձի հարցը կամ Պաղեստինի հիմնախնդիրը հնարավոր կլինի լուծել Իսրայելի հետ քաղաքական-դիվանագիտական ուղիներով: Նա հավատացած էր այն բանում, որ միայն ռազմական ուժի գերակայության միջոցով է հնարավոր հաջողության հասնել Իսրայելի դեմ պայքարում: Իսրայելին ցուցաբերվող լայնածավալ ամերիկյան օժանդակությանը Ասադը փորձեց հակադրել ԽՍՀՄ-ից զենքի ներմուծման ավելացմամբ: 1972թ. հուլիսին Ասադի Մոսկվա կատարած երկրորդ այցի ընթացքում ռազմական գործարք ստորագրվեց 700 մլն. ամերիկյան դոլարի չափով:[278]

Ասադի վերոհիշյալ մոտեցումը անհիմն չէր: «Սեփականատիրոջ» իրավունքով, Իսրայելը Գոլանի բարձունքներում ձեռնարկեց հրեական նոր բնակավայրերի կառուցմանը: Արդեն իսկ 1976թ. Գոլաններում բնակվող 15.000 դրուզների կողքին իսրայելական կառավարության ջանքերով ստեղծվել էր 25 հրեական բնակավայր:[279] 1969թ. հունվարին

[276] Carter, Jimmy. Palestine Peace not Apartheid, p.80.

[277] «النهـار» (լիբանանյան օրաթերթ), 17.03.1973թ.:

[278] Communist Foreign Aid to Arab Countries since 1955, N 96, 8June 1967, DD 139E, 1980.

[279] Journal of Palestine Studies, Vol.XII,No.1,1977.

խրայելական կառավարությունը հրապարակել էր ծրագիր, ըստ որի, մինչև 1979թ. բարձունքներում պետք է բնակեցվեին շուրջ 50.000 հրեաներ: Այդ ծրագրի համաձայն, նախատեսվում էր նաև Գոլանների կենտրոնում 30.000 բնակիչ ունեցող նոր քաղաքի կառուցումը:[280]

Դրա հետ մեկտեղ, Սիրիայի նկատմամբ Իսրայելում ստեղծվել էր թշնամանքի այնպիսի մթնոլորտ, որ անգամ երկրի բարձրաստիճան պաշտոնյաներն իրենց ելույթներում հրապարակայնորեն համեմատում էին սիրիացիներին «նացիստների» հետ, նրանց կոչելով հրեական պետության, ինչպես նաև «ազատության և խաղաղության թշնամիներ» և այլն:[281] Իրենց հերթին, Իսրայելի ղեկավարները չէին էլ թաքցնում, որ մտադիր չեն վերադարձնելու Գոլանները, անկախ այն հանգամանքից, թե Սիրիայում ով է իշխանության գլուխ կանգնած:

1967թ. պատերազմից հետո առաջին անգամ, 1969թ. օգոստոսին Սիրիան հարձակում ձեռնարկեց Գոլաններում խրայելական դիրքերի վրա, որին հետևեց Իսրայելի պատասխան հակահարձակումը Սիրիայում և Լիբանանում տեղակայված պաղեստինյան բազաների վրա: Այդ միջադեպի ընթացքում Իսրայելին հաջողվեց 3 սիրիական ՄԻԳ -21 կործանիչ ոչնչացնել: Հունիսի 8-ին և 24-ին սիրիական և խրայելական ուժերի բախման արդյունքում «զոհվեցին և վիրավորվեցին հարյուրավոր սիրիացի զինվորներ», խրայելցիները գերի վերցրեցին 38 հոգի և խփեցին 4 սիրիական ինքնաթիռ:[282] Վստահ լինելով իր ռազմական գերազանցության մեջ, Իսրայելը որդեգրել էր ռազմական գործողությունների սաստկացման քաղաքականություն, որի նպատակն էր, առաջին հերթին ճնշում գործադրել Դամասկոսի վրա՝ պաղեստինցիներին «զսպելու» և «դաս տալու», ինչպես նաև ստիպել Իսրայելին՝ հրաժարվելու «նոր պատերազմ սանձազերծելու մտադրությունից»:[283]

1972թ. սեպտեմբերի 7-ին Իսրայելը լայնածավալ օդային հարձակում իրականացրեց Սիրիայի և Լիբանանի վրա, որին մասնակցեց խրայելական 55 ինքնաթիռ: Այդ հարձակման արդյունքում հյուսիսային Լիբանանի Նահր ալ-Բարեդ ճամբարում զոհվեց 5 (հիմնականում երեխաներ) և վիրավորվեց 27 մարդ: Սիրիական ալ-Մազալիբ գյուղի ռմբակոծման ժամանակ զոհվեց 15 և վիրավորվեց 125 մարդ: 14 հոգի սպանվեցին Դերաս գյուղի և 12 հոգի՝ Համա գյուղի վրա հարձակման հետևանքով:[284]

Բեյրութում լույս տեսնող «Ալ-Մահարիր» օրաթերթի համաձայն,

[280] «Davar», 03.12.1971թ.:

[281] «Divrei Haknesset» - 59.147; 16.10.1970թ.:

[282] M. Maoz, Ibid, p.117.

[283] "New York Times", December 8,1972.

[284] «The Egyptian Gazette», 09.09.1972թ.:



վերոհիշյալ խրայելական հարձակումներն իրականացվել են ամերիկյան օդաչուների կողմից, որոնց հետագայում Իսրայելի քաղաքացիություն է շնորհվել: Ըստ օրաթերթի, օդաչուները մուտք են գործել Իսրայել՝ որպես զբոսաշրջիկներ, նրանք Վիետնամում բազմաթիվ մարտերի մասնակցած, ազգությամբ հրեա ԱՄՆ-ի ամենափորձառու օդաչուներից էին:[285]

Վաշինգտոնը մի կողմից հրապարակայնորեն անհանգստություն էր հայտնում, որ «Մերձավոր Արևելքում վերջին երկու տարիների ընթացքում դժվարությամբ հաստատված հարաբերական զինադադարը որևէ պահի կարող է խախտվել», իսկ մյուս կողմից, շարունակում էր տնտեսական, քաղաքական և դիվանագիտական աջակցությունն Իսրայելին, երբեմն էլ հակառակ ՄԱԿ-ի որոշումների:[286]

1972թ. փետրվարին Սիրիա այցի ընթացքում ԽՍՀՄ առաջին փոխվարչապետ Կ.Մազուրովը մեղադրեց Միացյալ Նահանգներին տարածաշրջանում «առաջադեմ վարչակարգերը ոչնչացնելու ձգտման և պայթյունավտանգ իրավիճակի ստեղծման մեջ»:[287] Սեպտեմբերի 24-ին լիբանանյան «Ալ-Նահար»-ը գրում էր. «Մոսկվայից Սիրիա ժամանեցին մեծ ինքնաթիռներ, որոնք, ամենայն հավանականությամբ, «երկիր-օդ» տիպի հրթիռներ են բերել սիրիական բանակի համար»:[288]

Տարածաշրջան տեղափոխելով համընդհանուր դիմակայությունն ու շարունակելով իրենց «հովանավորյալների» զինումը, գերտերությունները նպաստում էին նրա էլ ավելի բևեռացմանն ու արաբ-խրայելական ճգնաժամի խորացմանը:

## *ՍԻՐԻԱՅԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1973թ. «ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ» ՊԱՏԵՐԱԶՄԻՆ*

Ամերիկյան տարածաշրջանային քաղաքականության որոշակի ակտիվացում նկատվեց 1973թ. փետրվարին, երբ հաջորդաբար Վաշինգտոն այցելեցին Հորդանանի թագավոր Հուսեյնը և Եգիպտոսի նախագահ Սադաթի ազգային անվտանգության խորհրդատու Հաֆիզ Իսմայիլը: Սակայն Խարտումում ամերիկյան դեսպանի և նրա տեղակալի սպանությունները շեղեցին ԱՄՆ պետքարտուղարության ուշադրությունը հորդանանյան և եգիպտական ճակատներից՝ կենտրոնացնելով այն

[285] «المحـــرر العـــربي», 21.09.1972թ.:

[286] 1972թ. դեկտեմբերի 8-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան ձայների 86 կողմ և 7 դեմ /այդ թվում և ԱՄՆ-ը/ կոչ արեց անդամ-երկրներին ձեռնպահ մնալ Իսրայելին օգնություն ցուցաբերելուց, որը կարող է օգտագործվել գրավված տարածքները պահելու համար:

[287] « البعث », 22.02.1972թ.:

[288] «النهـــار», 24.09.1972թ.:

«պաղեստինյան ահաբեկչության»» վրա: Միանգամայն հասկանալի է, որ 1972թ. սեպտեմբերին Մյունխենում օլիմպիական խաղերի ընթացքում իսրայելական 11 մարզիկների, ինչպես նաև նոյեմբերին Հորդանանի վարչապետի սպանությունները չէին կարող հարմար ժամանակ նկատվել ամերիկյան նոր նախաձեռնությունների համար:

1973թ. Միացյալ Նահանգների առջև ծառացավ մեկ այլ անհանգստություն՝ նավթը: ԱՄՆ-ում նկատվող գազի և նավթամթերքի պակասի պայմաններում Սաուդյան Արաբիայում կոչեր էին հնչում օգտագործել նավթային գործոնը Վաշինգտոնի վրա ճնշում բանեցնելու և գրավված արաբական տարածքներից Իսրայելի զորքերի դուրսբերումն ապահովելու նպատակով:

Սադաթն, իր հերթին, Եգիպտոսից արտաքսեց խորհրդային մասնագետներին՝ սխալմամբ կարծելով, որ այդ քայլից հետո Վաշինգտոնը ստիպված կլինի վերանայել իր քաղաքականությունը տարածաշրջանում և կապահովի «արաբական տարածքների վերադարձը»:[289] Սակայն դրանից հետո որևէ գործնական և հստակ արձագանք չստանալով Վաշինգտոնից, ինչպես նաև տեղեկանալով Իսրայելին նոր ռազմական առաքումներ իրականացնելու Նիքսոնի որոշման մասին, Սադաթը վերջնականապես հաստատվեց իր այն մտադրության մեջ, որ միայն նոր «հաջող», սակայն «սահմանափակ» ռազմական գործողությունները կարող են ակտիվացնել բանակցային գործընթացը և հանգեցնել եգիպտա-իսրայելական հարաբերությունների կարգավորմանը:[290] 1973թ. մարտի 26-ին Սադաթը կազմեց «պատերազմի» կառավարություն՝ իր գլխավորությամբ: Երեք օր անց, նա հայտարարեց, որ «պատերազմն Իսրայելի հետ անխուսափելի է»:[291]

Դամասկոսը չեզոք դիրք էր գրավել Եգիպտոսից խորհրդային մասնագետների վտարման հարցում, հայտարարելով, որ դա Եգիպտոսի ներքին գործն է: Պետք է նշել, որ Ասադը ոչ միայն չփորձեց շահարկել ստեղծված իրավիճակն իր օգտին, այլև որոշակի «միջնորդ» դարձավ Մոսկվան և Կաhիրեն հաշտեցնելու և երկու երկների միջև եղած տարաձայնությունները հարթելու գործում: Ասադը, որպես «սառնասիրտ ու հավասարակշռված» քաղաքական գործիչ, չնայած հրապարակայնորեն հանդես էր գալիս Իսրայելի դեմ ռազմական գործողությունների օգտին, այնուամենայնիվ փորձում էր օգտագործել հնարավոր բոլոր քաղաքական և դիվանագիտական լծակները, հիմնականում Մոսկվայի միջոցով, Իսրայելի վրա ԱՄՆ-ի ճնշումը ուղղելու նպատակով: Ասադի պահանջով Սադաթը նույնիսկ ստիպված եղավ հետաձգել պատերազմը մինչև 1973թ. հունիս, Բրեժնևի և Նիքսոնի

[289] "Middle East Journal", No.27,1973,pp.192-193.

[290] ԱՄՆ-ը 36 «Skyhawk » և 48 «Phantom» ինքնաթիռ էր առաքել Իսրայելին:

[291] "Newsweek", April 9,1973.



հանդիպումը:

Արաբական Արևելքում պատերազմի բռնկման հնարավորությունների վերաբերյալ ԽՍՀՄ-ի նախազգուշացումները Նիքսոնն ու Քիսինջերը[292] համարեցին «հոգեբանական ճնշում» և մերժեցին համագործակցել Մոսկվայի հետ՝ խնդրի խաղաղ կարգավորմանը հասնելու նպատակով:[293] Իսրայելի հետ դիվանագիտական կարգավորման ուղին վերջնականապես փակվեց հուլիսի 13-ին, երբ ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդում քննարկվեց բանաձև, ուր դատապարտվում էր արաբական հողերի շարունակվող բռնագրավումը Իսրայելի կողմից: Չինաստանը ձեռնպահ մնաց քվեարկությունից՝ այն չափազանց մեղմ համարելով, իսկ ԱՄՆ-ը դեմ քվեարկեց՝ խափանելով բանաձևի ընդունումը: Սիրիային և Եգիպտոսին պարզ էր, որ ՄԱԿ-ի 242 բանաձևի իրականացմանը սպասում է նույն վախճանը՝ ամերիկյան վետոն:

Ասադը նույնպես կորցնելով արաբական հարցը խաղաղ ճանապարհով լուծելու իր հույսերը, վերջնականապես ընտրեց պատերազմի ուղին: 1973թ. առաջին կիսամյակում Սիրիան Խորհրդային Միությունից ստացավ մոտ 200մլն. ամ. դոլարի զինամթերք, որը նախորդ տարվանից երկու անգամ ավելի էր: Հունիսի վերջին Սիրիայի և Եգիպտոսի նախագահները հաստատեցին Իսրայելի դեմ պատերազմի ծրագիրը, որը հայտնի դարձավ «Բադր» ծածկանվամբ:

Օգոստոսին սիրիական և եգիպտական զինվորական հրամանատարությունները գաղտնի հանդիպումներ ունեցան Ալեքսանդրիայում և Բլուդանում՝ Իսրայելի դեմ ձեռնարկվելիք պատերազմի մանրամասները ճշտելու նպատակով: Սեպտեմբերի 6-ին Դամասկոսի մեծ մզկիթի իմամը Իսրայելի դեմ «ջիհադ» հռչակեց:

Սեպտեմբերի 13-ին խոշոր օդային ճակատամարտ տեղի ունեցավ, երբ իսրայելական ինքնաթիռները փորձեցին հետախուզական նպատակով թռիչք կատարել սիրիական ռազմական օբյեկտների վրայով: Ընդհարման արդյունքում խփվեց 13 սիրիական ինքնաթիռ, իսկ Իսրայելը կորցրեց ընդամենը մեկը:[294] Հարկ է նշել, որ այս միջադեպը նույնպես ազդեց պատերազմ սկսելու վերաբերյալ Ասադի որոշման վրա:

Սեպտեմբերի 25-ին Հորդանանի Հուսեյն թագավորը գաղտնի կերպով զգուշացրեց Իսրայելի վարչապետ Մեյիրին, որ Սիրիան և Եգիպտոսը պատրաստվում են հարձակվել Իսրայելի վրա:[295] Սակայն, Քիսինջերի խոսքերով, իսրայելական և ամերիկյան ղեկավարներն այն կարծիքին էին, որ «Եգիպտոսն ու Սիրիան ռազմական տեսանկյունից ի

[292] Հ.Քիսինջերը ԱՄՆ պետքարտուղար նշանակվեց 1973թ. օգոստոսի 22-ին:

[293] Kissinger H. Years of Upheaval, p.461.

[294] "New York Times", September 14,1973.

[295] «Edioth Ahronot», 15.09.1973թ.:

վիճակի չեն զենքի ուժով հետ գրավելու արաբական տարածքները»:[296]

Միացյալ Նահանգները անտեսեցին նաև 1973թ. պատերազմի նախօրեին ստացվող ահազանգերը: 1973թ. հոկտեմբերի 6-ի ռազմական գործողությունների սկիզբն անսպասելի էր ինչպես Վաշինգտոնի, այնպես էլ Թել-Ավիվի համար: Չնայած որ երկու երկրներն էլ բազմաթիվ տեղեկություններ ունեին իրենց տրամադրության տակ եգիպտական և սիրիական ռազմական նախապատրաստությունների ու զորքի տեղաշարժի վերաբերյալ, այնուամենայնիվ, չկարողացան կատարել հետախուզության տվյալների ճշգրիտ վերլուծություն ու հանգել հստակ եզրակացության:

Թերևս նման անուշադրության պատճառներից մեկը 1967թ. պատերազմից հետո ձեռք բերված ծայրահեղ ինքնավստահությունն էր: Ամերիկացիները սխալմամբ կարծում էին, որ «երբ արաբները զրկված կլինեն Իսրայելի վրա ռազմական և քաղաքական ճնշում բանեցնելու հնարավորություններից, միայն այդ դեպքում նրանք մի կողմ կդնեն իրենց հպարտությունը և ստիպված կլինեն ընդունել իսրայելական ուժի գերազանցության փաստը»:[297] 1973թ. հոկտեմբերի 6-ին բռնկված չորրորդ արաբա-իսրայելական պատերազմը եկավ հաստատելու կատարյալ հակառակը՝ 1967թ. ի վեր ամերիկյան քաղաքականության որդեգրած «ռազմական հավասարակշռության» պահպանման սկզբունքի բացարձակ անկատարությունն ու անարդյունավետությունը:

Չցանկանալով խորանալ պատերազմի ընթացքի և երկու՝ եգիպտական ու սիրիական ճակատներում ծավալված պատերազմական գործողությունների մանրամասների մեջ, պետք է նշենք, որ Սիրիան պատերազմի հետևանքով շատ ավելի մեծ կորուստներ կրեց, քան Եգիպտոսը: Պատերազմի արդյունքում, չնայած սկզբնական շրջանի հաջողություններին ու իսրայելական բանակին պատճառած զգալի վնասին, սիրիացիները ոչ միայն չկարողացան ազատագրել գրավված տարածքները, այլև 600 քառ.կմ. նոր տարածքներ կորցրեցին: Սիրիան «շոշափելի կորուստներ կրեց ոչ միայն ռազմական ուժի, այլև քաղաքացիական և տնտեսական առումներով»:[298] Իսրայելի օդուժը մեծ վնաս հասցրեց սիրիական տնտեսական և քաղաքացիական օբյեկտներին: Այդ իմաստով սիրիացիները շատ ավելի դառնացած ու նվաստացած էին, քան եգիպտացիները:

Այստեղ հարկ է նշել, որ Ասադն ավելի հետևողական գտնվեց Իսրայելի դեմ իր անհաշտ կեցվածքի մեջ, քան Սադաթը: Եթե վերջինս 1973թ. պատերազմը կարևոր նախապատրաստական քայլ էր համարում Իսրայելի հետ հետագա բանակցությունների և խաղաղության

[296] Kissinger H. Years of Upheaval, p. 455-458.

[297] "London Observer", July 29,1973.

[298] «Կանչ», 08.06.1974թ.:



հաստատելու ուղղությամբ, ապա Ասադը պատերազմեց հիմնականում Գոլանները վերադարձնելու և Իսրայելին պատժելու նպատակով: Եթե Սադաթի նպատակն էր սահմանափակ պատերազմ վարելով խաղաքարտ ապահովել Իսրայելի հետ հետագա բանակցություններում, ապա Ասադը անկեղծորեն ձգտում էր լայնածավալ պատերազմի միջոցով հետ նվաճել Սինայն ու Գոլանի բարձունքները: Պատերազմից հետո սիրիա-եգիպտական հարաբերությունների սառնության հիմնական պատճառներից մեկը Ասադի մեղադրանքն էր այն բանում, որ եգիպտական բանակը, հակառակ նախնական պայմանավորվածության, անցնելով Բար Լևի գիծը, անմիջապես չառաջացավ, ինչը հնարավորություն տվեց Իսրայելին ուժերը կենտրոնացնել սիրիական ճակատում և կասեցնել սիրիական առաջխաղացումը Գոլաններում: Իսրայելի համար Գոլանները շատ ավելի «ներքին և զգացական» հարց էր, քան Սինայի թերակղզին: Այդ իսկ պատճառով Իսրայելը շատ ավելի վճռականորեն ու համառ էր պայքարում սիրիական ճակատում:

Ասադի կարծիքով, «Սադաթը անկեղծ չէր Սիրիայի հետ և իրականացնում էր համագործակցության ամենավատ ձևը»:[299]

Հենրի Քիսինջերին փոխարինած ԱՄՆ պետքարտուղար Սայրուս Վենսը նշում էր, որ «Սադաթը պատերազմում հետապնդում էր գլխավորապես քաղաքական և դիվանագիտական նպատակներ»:[300] Անգամ Քիսինջերը հիշատակում էր, որ պատերազմի ընթացքում Սադատն ակտիվացրել էր ամերիկացիների հետ իր գաղտնի կապը: «Իսկ ինչ վերաբերում է սիրիացիներին, ապա պատերազմի ընթացքում մենք որևէ ուղղակի շփում չենք ունեցել».- նշում է Քիսինջերը:[301]

Միևնույն ժամանակ, Հոկտեմբերյան պատերազմը կարևոր նշանակություն ունեցավ ամբողջ տարածաշրջանի և արաբական աշխարհի համար: Առաջին հերթին, այն վերականգնեց 1967թ. պատերազմից հետո կորցրած արաբների ինքնավստահությունը: Արաբական երկրները կարողացան ցրել Իսրայելի ռազմական անպարտելիության վարկածը:[302] Պատերազմի արդյունքում արաբների ձեռք բերած մասնակի ինքնավստահությունը հնարավոր դարձրեց հետագայում եգիպտա-իսրայելական և սիրիա-իսրայելական «չպատերազմելու» համաձայնագրերի կնքումը: Այստեղ հարկ ենք համարում նշել, որ պատմաբաններից շատերը հաճախակի ընդգծում են պատերազմի ընթացքում ցուցադրված արաբական միասնականության հազվադեպ փաստը: Հոկտեմբերյան պատերազմի արդյունքում

[299] Примаков Е.М. История одного сговора, с.47.

[300] Vance C.Hard Choices. Critical Years in America`s Foreign Policy, p.161.

[301] Kissinger H. Years of Upheaval, p.574.

[302] Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Արաբական երկրներ, Երևան, 1978թ., հ. 9, էջ.232:

արաբական աշխարհին ավելի շուտ «հոգեբանական» հաղթանակ տարավ, և այն դժվար թե կարելի է համարել արաբական միասնականության հաղթանակ:

Հիրավի, Սիրիան և Եգիպտոսը «միասնաբար» պատերազմեցին Իսրայելի դեմ, սակայն ոչ միայն հաջողության չհասան Իսրայելի դեմ արաբական հավելյալ ռազմաճակատ բացելու գործում, այլև պատերազմում հետապնդած տարբեր նպատակների պատճառով չկարողացան արդյունավետ համագործակցել և փաստորեն ռազմական տեսանկյունից տանուլ տվեցին պատերազմը: Արաբական երկրները պատերազմի ընթացքում հաջողությամբ օգտագործեցին նավթը, որպես քաղաքական զենք, սակայն ոչ առանց տարաձայնությունների՝ նավթային էմբարգոյի շարունակման նպատակահարմարության, դադարեցման և այլ հարցերի շուրջ:

Այդ իսկ պատճառով արաբական միասնականության վերաբերյալ հաստատումները մեզ չափազանցված են թվում: Հետաքրքրական է Ասադի պատասխանը «Ալ-Անվար» թերթի տված այն հարցին, թե ինչպես է, որ հարյուր միլիոնանոց արաբ ժողովուրդը, իր դրամով, նավթով և զենքով մշտապես պարտված է դուրս գալիս երկուսուկես միլիոն հրեաների կողմից: Ասադը պատասխանել է հետևյալ կերպ. «Այդ հարյուր միլիոն արաբները երբեք չեն պայքարել, չի պայքարել արաբական հեղափոխության անգամ մի մասը, չի պայքարել նաև արաբական նավթը: Այն ժամանակ, երբ այդ հարյուր միլիոն արաբները, արաբական նավթն ու արաբական հեղափոխությունը միասնաբար կմարտնչեն՝ հաղթանակը մերը կլինի»:[303]

Քիսինջերի խոսքերով, պատերազմից հետո ԱՄՆ-ն սկիզբ դրեց տարածաշրջանում «դաշինքների վերանայման» քաղաքականությանը: Վաշինգտոնը կարծես թե սկսեց գիտակցել, որ միայն Իսրայելի ռազմական գերակայությունը չի կարող կայունություն ապահովել տարածաշրջանում: Այստեղ իր ազդեցությունն ունեցավ նաև ԱՄՆ-ի դեմ հաջողությամբ իրականացված նավթային էմբարգոն:[304]

Հոկտեմբերյան պատերազմը ոչ միայն վճռորոշ դեր խաղաց Մերձավոր Արևելքում ամերիկյան քաղաքականության վերանայման հարցում, այլև նոր հնարավորություններ ստեղծեց սիրիա-ամերիկյան հարաբերությունների հետագա զարգացման համար: Ամերիկյան քաղաքականության հիմնական փոփոխությունը եղավ այն, որ արաբ-իսրայելական հակամարտության կարգավորման հարցում Քիսինջերը

[303] «الانوار», (լիբանանյան օրաթերթ) 10.08.1972:

[304] 1973թ. հոկտեմբերի 20-ին Սաուդյան Արաբիայի թագավոր Ֆեյսալը հայտարարեց, որ կրճատում է նավթի արտահանումը և արգելում է նրա վաճառքը Միացյալ Նահանգներին, սկիզբ դնելով արաբական երկրների կողմից իրականացվող նավթային էմբարգոյին, որի հետևանքով էլ նավթի գինը բարձրացավ 5.12-ից մինչև 11.65 ամերիկյան դոլար յուրաքանչյուր բարելի համար:



հրաժարվեց այսպես կոչված «փաթեթային լուծումից» և որդեգրեց «քայլ առ քայլ» նոր քաղաքականությունը: Դեռևս պատերազմի ընթացքում Քիսինջերը համոզված էր, որ «քայլ առ քայլ» քաղաքականության իրականացման դեպքում, եթե հաջողվի հասնել եգիպտա-իսրայելական համաձայնագրի կնքմանը, ապա Սիրիան նույնպես կհետևի օրինակին, ինչպես նաև Հորդանանն ու Լիբանանը:

Պատերազմից հետո փոփոխվեց նաև Սիրիայի նկատմամբ ամերիկյան քաղաքականությունը: Վաշինգտոնն աստիճանաբար սկսեց ընդունել Սիրիայի դերի կարևորությունը արաբ-իսրայելական հակամարտության մեջ, ինչպես նաև հաշվի առնել տարածաշրջանում Ասադի անձնական ազդեցության հանգամանքը:

Ասադը նույնպես հասկանում էր, որ քանի դեռ անհնար է զենքի միջոցով իրականացնել արաբական հողերի վերադարձը, ապա այդ հարցի խաղաղ լուծումը գործնականորեն հնարավոր է միայն Վաշինգտոնի օգնությամբ: Ֆ.Աջամիի խոսքերով, «Ասադի վարչակազմը հայտնվել էր փակուղում: Նրա կողմից բարձրացրած աղմուկը ծայրահեղական էր, իսկ քաղաքականության էությունը՝ պահպանողական»:[305]

Կարող ենք արձանագրել, որ 1967-1973թթ. սիրիա-ամերիկյան հարաբերությունները միանշանակորեն գտնվում էին աննախընթաց ցածր մակարդակի վրա, երբ ոչ միայն իսպառ բացակայում էին կողմերի միջպետական ուղղակի շփումները, այլև բարելավմանն ուղղված երկուստեք լուրջ մտադրություններն ու գործնական քայլերը: Սիրիան և Միացյալ Նահանգները, գտնվելով հակառակ ճամբարների տարբեր կարգավիճակներում, չէին կարողանում միմյանց հետ մերձեցման եզրեր գտնել: Մի կողմից, ԱՄՆ-ի և Իսրայելի միջև օրըստօրե սերտացող ռազմավարական համագործակցությունը, իսկ մյուս կողմից, Խորհրդային Միության «հովանավորությունը» Սիրիային դժվարեցնում էին սիրիա-ամերիկյան հարաբերությունների բարելավման հեռանկարները՝ նպաստելով տարածաշրջանի էլ ավելի բևեռացմանը:

Միայն 1973թ. Հոկտեմբերյան պատերազմի արդյունքում արաբական աշխարհում հաստատված ուժերի նոր դասավորումը ստիպեց Վաշինգտոնին որոշ չափով խմբագրել Սիրիայի նկատմամբ իր քաղաքականությունը, իրական նախադրյալներ ստեղծելով սիրիա-ամերիկյան հարաբերությունների բարելավման համար:

[305] The Middle East and the Western Alliance. Ed.Steven L. Spiegel, London, George Allen & Unwin, 1982, p.150

## *ԴԱՄԱՍԿՈՍԻ ՏԵՂԸ Հ.ՔԻՍԻՆՋԵՐԻ «ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ*

1973թ. պատերազմից անմիջապես հետո Մերձավոր Արևելքում խաղաղության հաստատմանն ուղված ԱՄՆ-ի միջնորդական ջանքերի ակտիվացում նկատվեց: Նիքսոնն ու Քիսինջերը հասկանում էին, որ տարածաշրջանում ստեղծված իրավիճակը լրջորեն վտանգում է ամերիկյան շահերը: Վաշինգտոնի համար բոլոր առումներով հարմար պահ էր ստեղծվել նոր խաղաղ նախաձեռնությամբ հանդես գալու համար: Իսրայելը պատերազմի հետևանքով մեկուսացված էր միջազգային ասպարեզում և գտնվում էր Միացյալ Նահանգներից էլ ավելի մեծ կախման մեջ: Արաբական աշխարհում քաջ գիտակցում էին, որ եթե Խորհրդային Միությունը կարող է զենք մատակարարել, ապա ԱՄՆ-ը ի վիճակի է ստիպել Իսրայելին տարածքային զիջումներ անելու:[306]

Քիսինջերին սպասում էր միջնորդական դժվարին առաքելություն: Նա պետք է մի կողմից «հավասարակշռված» քաղաքականություն վարեր արաբների նկատմամբ, իսկ մյուս կողմից վստահեցներ Իսրայելին, որ որևէ լուծում չի իրականացվի նրա կամքին հակառակ: Միևնույն ժամանակ Քիսինջերը պետք է ցույց տար արաբներին, որ ԱՄՆ-ի միջնորդական ջանքերը ամենևին էլ նավթային ճնշման արդյունք չեն: Հաշվի առնելով ԱՄՆ-ի ներքաղաքական իրավիճակը, Քիսինջերն անհրաժեշտ էր համարում հասարակական կարծիքի աջակցության ապահովումը, ինչպես նաև, հասկանալի պատճառներով, խուսափելը Իսրայելի հետ հրապարակային վեճերից: Միով բանիվ, Քիսինջերի նոր դիվանագիտական նախաձեռնության նպատակն էր առանց Իսրայելի շահերի զոհաբերության՝ հասնել խաղաղ կարգավորմանը Մերձավոր Արևելքում, Խորհրդային Միության ազդեցության սահմանափակմանը տարածաշրջանում և արաբական աշխարհի հետ ԱՄՆ-ի հարաբերությունների բարելավմանը:

Ստեղծված պայմաններում, երբ արաբները պահանջում էին Իսրայելի զորքերի անհապաղ դուրսբերումը գրավված տարածքներից, ապա Իսրայելը փորձում էր ժամանակ շահել, Քիսինջերը առաջ քաշեց միջազգային համաժողով հրավիրելու գաղափարը, որի հովանու ներքո նախատեսվում էր քննարկել հետագա դիվանագիտական գործողությունները ու ստեղծել բանակցային որոշակի շրջանակ:

Չնայած ամերիկյան ղեկավարները ավելի մեծ նշանակություն էին տալիս Եգիպտոսի հետ նոր հարաբերությունների հաստատմանը, այնուամենայնիվ նրանք աստիճաբար սկսում էին գիտակցել նաև Սիրիայի դերի կարևորությունը խաղաղ կարգավորման գործընթացում:

---

[306]«الأهرام», (եգիպտական օրաթերթ)16.11.1973:



Այդ էր, թերևս, հիմնական պատճառը, որ ամերիկացիները փորձեցին կապ հաստատել սիրիացիների հետ: Նոյեմբերի 1-ին Իսրայելի վարչապետ Մեյիրի հետ հանդիպման ընթացքում Նիքսոնը նշեց, որ «ԱՄՆ-ը փորձելու է բարելավել իր հարաբերությունները Եգիպտոսի և Սիրիայի հետ»:[307] Սակայն եզակի պաշտոնական հանդիպումներից բացի, ԱՄՆ-ի և Սիրիայի միջև մշտապես գործող փոխադարձ հաղորդակցման միջոց գոյություն չուներ:

Նոյեմբերի 5-ին Քիսինջերի նոր քաղաքականության շրջանակներում Մարոկկո այցելությամբ սկիզբ դրվեց այսպես կոչված «մաքոքային դիվանագիտությանը»: Երկկողմ բարեկամական հարաբերությունների վերահաստատումից բացի, Քիսինջերի Մարոկկո այցի նպատակներից մեկն էր նաև «ճանապարհ հարթել դեպի Սիրիան և պաղեստինցիները:»[308] Նույն ամսին Սաուդյան Արաբիա այցի ընթացքում Քիսինջերը դիմեց նաև Ֆեյսալ թագավորին՝ Սիրիայի հետ «կապ հաստատելու» խնդրանքով:[309]

1973թ. դեկտեմբերին Քիսինջերը ձեռնարկեց իր երկրորդ այցը տարածաշրջան, որի ընթացքում այցելեց Ալժիր, Եգիպտոս, Սաուդյան Արաբիա, Սիրիա և Իսրայել: Համաժողովին մերժում էին մասնակցել Սիրիան և Իսրայելը: Իսրայելը դեմ էր արտահայտվում համաժողովի անցկացմանը ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի հովանու տակ, ինչպես նաև չէր համաձայնվում համաժողովին պաղեստինյան ներկայության հետ և պահանջում էր, որ Սիրիան տրամադրի ռազմագերիների ցուցակն ու բույլատրի Միջազգային Կարմիր Խաչի ներկայացուցիչների այցելությունը:

Եթե համադրելով ճնշումն ու խոստումները, Քիսինջերին հաջողվեց համոզել իսրայելցիներին՝ մասնակցելու համաժողովին, ապա դեկտեմբերի 15-ին՝ Դամասկոս այցելության ընթացքում, նրա ջանքերն ավարտվեցին ապարդյուն:

Պետք է ասել, որ առաջին հանդիպումն Ասադի հետ մեծ տպավորություն թողեց Քիսինջերի վրա: Սիրիայի ղեկավարը ներկայացավ նրան որպես գրագետ, խելացի և սրամիտ անձնավորություն: Քիսինջերին զարմանք պատճառեց այն հանգամանքը, որ հակառակ իր սպասումներին, Ասադը հանդես եկավ որպես «չափավոր» քաղաքական գործիչ և «Խորհրդային Միության հրամանները անմռունչ կատարող» մարդու տպավորություն չթողեց:[310]

Հանդիպման ընթացքում, որը նախատեսված երկուսուկես ժամի փոխարեն տևեց վեցուկես ժամ, Ասադը հայտնեց ԱՄՆ

---

[307] Golan, Matti.The Secret Conversations of Henry Kissinger, p.111.

[308] Quandt W. Decade of Decisions, p. 216.

[309] Sheehan, Edward. The Arabs, Israelis and Kissinger, pp.70-73.

[310] Quandt W. նույն տեղում, էջ 222:

պետքարտուղարին, որ սիրիական կողմը հրաժարվում է մասնակցել համաժողովի աշխատանքներին, ավելացնելով, որ Սիրիան կմասնակցի միմիայն Իսրայելի հետ ամբողջ Գոլանները ներառող տարանջատման համաձայնագրի ստորագրումից հետո: Միևնույն ժամանակ Ասադը նշեց, որ կարգավորումն անհնար է առանց Պաղեստինի հարցի լուծման, շեշտելով այն հանգամանքը, որ ի սկզբանե հստակեցված չէ իսրայելական ուժերի դուրսբերման հարցն արաբական բոլոր տարածքներից: Ասադը մերժեց նաև Քիսինջերի խնդրանքը՝ Սիրիայում գտնվող իսրայելական ռազմագերիների ցուցակը տրամադրելու վերաբերյալ:

Եթե Քիսինջերն անկարող գտնվեց որևէ շոշափելի արդյունքի հասնել սիրիա-իսրայելական ուղղությամբ, ապա սիրիա-ամերիկյան հարաբերություններում արձանագրվեց շոշափելի առաջընթաց: Քիսինջերի այցելության ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց Դամասկոսում «ամերիկյան շահերը պաշտպանող» ներկայացուցչության բացման վերաբերյալ:

Թել-Ավիվ մեկնելուց հետո Քիսինջերը շարունակեց սիրիացիների վրա ազդելու իր փորձերը: Այսպես, Եգիպտոսի արտգործնախարար Ֆահմիի միջոցով Քիսինջերը տեղեկացրեց Ասադին, որ ռազմագերիների ցուցակի տրամադրման դիմաց Իսրայելը պատրաստ է թույլատրել գյուղացիների վերադարձը իր հսկողության տակ գտնվող սիրիական տարածքներ: Այդ նույն առաջարկն անձամբ Ասադին փոխանցելու նպատակով Բեյրութից Դամասկոս մեկնեց ԱՄՆ-ի դեսպանը: Դեկտեմբերի 18-ին Քիսինջերը ստացավ Ասադի վերջնական պատասխանը. «Սիրիան չի մասնակցի Ժնևում կայանալիք բանակցությունների ներկա փուլին, սակայն չի բացառվում ավելի ուշ մասնակցության հնարավորությունը»:[311]

1973թ. դեկտեմբերի 21-ին Ժնևում իր աշխատանքները սկսեց Մերձավոր Արևելքին նվիրված խաղաղության համաժողովը, որի առաջին փուլին մասնակցեցին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Վալդհայմը, ԽՍՀՄ-ի արտգործնախարար Գրոմիկոն, ԱՄՆ-ի պետքարտուղար Քիսինջերը, Եգիպտոսի, Հորդանանի և Իսրայելի արտգործնախարարները: Սիրիայի ներկայացուցչի բացակայության պաշտոնական պատճառաբանությունն այն էր, որ տվյալ պայմաններում համաժողովը չի կարող նպաստել արաբական հիմնախնդրի կարգավորմանը:

Չնայած այն հանգամանքին, որ Ասադն ու Սադաթը նախօրոք համաձայնվել էին համադրել իրենց դիրքորոշումներն ու ձեռնարկվելիք քայլերը, այնուամենայնիվ Եգիպտոսի արտգործնախարար Ֆահմին մի կողմից հրապարակայնորեն պահանջում էր իսրայելական զորքերի դուրսբերումը 1967թ. գրավված արաբական բոլոր տարածքներից, իսկ

[311] Kissinger H. Years of Upheaval, pp.755-781.



մյուս կողմից՝ ԱՄՆ-ի ակտիվ միջնորդությամբ աշխատում էր արագացնել առանձին եգիպտա-իսրայելական զորքերի տարանջատման համաձայնագրի ստորագրումը:[312] Ինչպես նշում էր «Ալ-Ախբար» օրաթերթը, «Եգիպտոսի կառավարությունը ջերմեռանդորեն ձգտում է բարելավել իր հարաբերությունները ԱՄՆ-ի հետ, որի հետևանքով մենք կարող ենք կորցնել այն, ինչ ձեռք ենք բերել»:[313]

Ի վերջո, Վաշինգտոնի հովանավորությամբ 1974թ. հունվարի 18-ին Եգիպտոսի և Իսրայելի միջև ստորագրվեց զորքերի «տարանջատման» վերաբերյալ համաձայնագիրը, ըստ որի իսրայելական զորքերը դուրս բերվեցին Սուեզի ջրանցքի արևմտյան ափից և հետ քաշվեցին մոտ 20 կմ.:[314]

Այսպիսով, Ժնևի խաղաղության համաժողովի՝ իսրայելական զորքերի «լիակատար դուրսբերման» սկզբունքը փոխարինվեց «զորքերի տարանջատումով», հանգեցնելով մերձավորարևելյան ճգնաժամի ոչ թե լիակատար, այլ մասնակի կարգավորմանը:[315]

«Քայլ առ քայլ» քաղաքականության շրջանակներում Քիսինջերին հաջողվեց եգիպտա-իսրայելական համաձայնագրի ստորագրումով թուլացնել արաբական միասնական ճակատը, որոշակիորեն բարձրացնել Միացյալ Նահանգների վարկն արաբական աշխարհում և ամենակարևորը՝ ճանապարհ հարթել ավելի ուշ սիրիա-իսրայելական համաձայնագրի կնքման համար:

Եթե եգիպտա-իսրայելական համաձայնագրի ստորագրումը համեմատաբար հեշտությամբ տրվեց Քիսինջերին, ապա սիրիա-իսրայելյանը մեծ ջանք ու հետևողական աշխատանք պահանջեց նրանից:[316] Սիրիա-իսրայելական համաձայնագրի ստորագրման նկատմամբ ԱՄՆ-ի ցուցաբերած շահագրգռվածությունը, թերևս, կարելի է բացատրել նրանով, որ այդ համաձայնագիրն առաջին հերթին պետք է ապահովեր արդեն իսկ ստորագրված եգիպտա-իսրայելական համաձայնագրի իրականացումը, ինչպես նաև եգիպտա-ամերիկյան հարաբերությունների հետագա զարգացումը: Հակառակ դեպքում՝ Սիրիայի կողմից համաձայնագրի ստորագրման խափանումը էլ ավելի կթուլացներ Սադաթի դիրքերն արաբական աշխարհում ու բարենպաստ պայմաններ կընձեռեր «ծայրահեղական» արաբական երկրներին՝ տարածաշրջանում իրենց ազդեցությունը տարածելու համար: Դեպքերի

[312] «Սովետական Հայաստան», 22.12.1973թ.:

[313] «الأخبار» (լիբանանյան օրաթերթ), 22.12.1973թ.:

[314] "Внешняя политика Советского Союза", с.326.

[315] Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ եվ ժողովուրդներ, 9 հատոր, Արաբական երկրներ, էջ 307:

[316] Ընդհանուր առմամբ, սիրիական ղեկավարության հետ բանակցությունների վրա Քիսինջերը ծախսել էր 34 օր և 120 ժամ: (Տես՝ W.R.Polk. The Arab World Today, p.423).

նման զարգացումը չէր բացառի նաև պատերազմական գործողությունների վերսկսումը սիրիական ճակատում, որի մեջ Եգիպտոսը նույնպես կարող էր ներքաշվել: Բացի պատերազմի սանձազերծման վտանգից ստեղծված իրավիճակն էլ ավելի ցանկալի կդարձներ Մերձավոր Արևելքում ԽՍՀՄ-ի ակտիվ ներկայությունն ու միջամտությունը: Եվ, վերջապես, առանց սիրիա-իսրայելական համաձայնագրի, կպահպանվեր նավթային էմբարգոյի կրկնվելու հնարավորությունը:

Սիրիա-իսրայելական համաձայնագրի ստորագրման հարցում ԱՄՆ-ի դիրքորոշումը լուսաբանելու համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում իսրայելցի լրագրող Մատի Գոլանի կողմից Իսրայելում Քիսինջերի վարած գաղտնի զրույցների գրառումները: Նրանցից մեկի համաձայն, 1973թ. դեկտեմբերին Իսրայելում գտնվելու ժամանակ Քիսինջերը հայտարարել էր, որ «Սիրիայի հետ տարանջատման համաձայնագրի ստորագրման վերաբերյալ ընթացող բանակցությունների իրական նպատակ այն է, որ այն հնարավորություն է ընձեռում խուսափել սահմանների և վերջնական կարգավորման վերաբերյալ բանակցություններ վարելուց»: Ըստ պետքարտուղարի, բանակցությունների հաջող ավարտը կհանգեցներ մեկ այլ նվաճման՝ նավթային էմբարգոյի վերացմանը: Միևնույն ժամանակ այն վերջ կդներ Իսրայելի մեկուսացմանը և կթուլացներ Ճապոնիայի և Արևմտյան Եվրոպայի երկրների կողմից նրա վրա գործադրվող ճնշումը »:[317] Ակնհայտ է, որ նավթային էմբարգոյի վերացումից բացի, Քիսինջերը ձգտում էր Գոլանների խնդրի այնպիսի կարգավորման, որի արդյունքում իսրայելական զորքերի դուրսբերումը կիրականացվեր միայն 1973թ. պատերազմի ընթացքում գրավված հողերից: Ինչևիցե, Քիսինջերի մերձավորարևելյան քաղաքականության օրակարգում դրված էր երկու հրատապ խնդիր՝ սիրիա-իսրայելական համաձայնագրի ստորագրումն ու նավթային էմբարգոյի վերացումը:

Սիրիա-իսրայելական համաձայնագրի ստորագրման հարցում ոչ պակաս շահագրգռվածություն էր ցուցաբերում նաև Մոսկվան: Սիրիայի այդ մշտական պատերազմական վիճակը և Իսրայելին հակազդող ճակատային միակ արաբական երկիր լինելու հանգամանքը շարունակ գլխացավանք էր պատճառում նրա «հովանավորին», որը պատերազմական գործողությունների վերսկսման դեպքում այս անգամ պարտադրված կլիներ ուղղակիորեն միջամտելու՝ դրանից բխող բոլոր անկանխատեսելի հետևանքներով: Այդ տեսանկյունից սիրիա-իսրայելական համաձայնագրի ստորագրումը ձեռնտու էր նաև ԽՍՀՄ-ին: Ինչպես նշում է Ե.Պրիմակովը, սիրիա-իսրայելական ստորագրվելիք համաձայնագրի որոշ հիմնադրույթներ փոփոխվեցին Սիրիայի օգտին և

[317] Golan M.The Secret Conversations of Henry Kissinger, p.152.



նրա համար ընդունելի դարձան հիմնականում Խորհրդային Միության ակտիվ միջնորդության շնորհիվ:[318] «Ալ-Ախբար» օրաթերթի դիտարկմամբ, «Եգիպտոսի կողմից զորքերի տարանջատման համաձայնագրի ստորագրումը բարդ ու դժվարին կացության մեջ դրեց Սիրիային: Սակայն նրա կողքին էին կանգնած արաբական առաջադիմական ուժերը՝ Ալժիրն ու Իրաքը, ինչպես նաև Խորհրդային Միությունը, սոցիալիստական և աշխարհի բոլոր խաղաղասեր երկրները»:[319]

Կարծես թե Ասադն էլ իր հերթին համաձայնագիրը կնքելու և այդ ուղղությամբ զիջումներ կատարելու պատրաստակամություն էր ցուցաբերում: Այսպես, եթե 1973թ. դեկտեմբերին նա պահանջում էր իսրայելական ուժերի *լիակատար* դուրսբերումը Գոլաններից, ապա մեկ ամիս հետո՝ 1974թ. հունվարի 20-ին, Քիսինջերի հետ երկրորդ հանդիպման ընթացքում Ասադը պահանջեց միայն Գոլանների *կեսի*, Կունեյտրայի և 1973թ. գրավված հողերի ազատագրումը:[320]

Ի դեպ նշենք, որ Քիսինջերի հետ բանակցությունների ընթացքում Ասադը, որպես խաղաքարտ, հաջողությամբ օգտագործեց իսրայելական ռազմագերիների խնդիրը:

Ասադի քաղաքական հաղթանակը կարելի է համարել փետրվարի 3-ին Սաուդյան Արաբիայի թագավոր Ֆեյսալի հայտարարությունը, ըստ որի, նավթային էմբարգոն կշարունակվի այնքան ժամանակ, մինչև որ չստորագրվի սիրիա-իսրայելական զորքերի տարանջատման վերաբերյալ համաձայնագիրը:

Ի պատասխան դրա, պետքարտուղարությունը հանդես եկավ հետևյալ հայտարարությամբ. «Քանի դեռ նավթային էմբարգոն չի վերացվել, ԱՄՆ-ն ի վիճակի չի լինի շարունակել դիվանագիտական ջանքերը»:[321] Այսուհանդերձ, փետրվարի 5-ին ԱՄՆ-ը հինգ կետանոց առաջարկ ներկայացրեց Ասադին, որի համաձայն, Սիրիայի կողմից իսրայելական ռազմագերիների ցուցակը Դամասկոսում ամերիկյան ներկայացուցչությանը փոխանցելու դեպքում, Իսրայելը կներկայացնի համաձայնագրի նախագիծը: Միջազգային Կարմիր Խաչի ներկայացուցիչների կողմից Սիրիայում գտնվող ռազմագերիների այցելելուց հետո Քիսինջերն առաջարկում էր բանակցություններ վարելու նպատակով Վաշինգտոն հրավիրել սիրիական և իսրայելական պատվիրակություններին: Ըստ պետքարտուղարի, դրան կհետևեին բանակցությունները Ժնևում, արդեն իսկ գործող եգիպտա-իսրայելական

[318] Примаков Е.М. История одного сговора: (Ближневосточная политика США в 70-е начале 80-х годов), с.69.

[319] «الأخبار», 20.04.1974թ., էջ 37:

[320] Նույն տեղում:

[321] Quandt W. Decade of decisions, p. 231.

ռազմական աշխատանքային խմբի շրջանակներում: Փետրվարի 9-ին Ասադն իր հավանությունը տվեց ամերիկյան առաջարկին:[322]

Մեկ շաբաթ անց, Ալժիրում կայացավ արաբական չորս պետությունների՝ Եգիպտոսի, Սաուդյան Արաբիայի, Ալժիրի և Սիրիայի ղեկավարների հանդիպումը, որի ընթացքում քննարկվեցին նավթային էմբարգոյի շարունակման, ԱՄՆ-ի նկատմամբ արաբական երկրների դիրքորոշմանն ու սիրիական ճակատում զորքերի տարանջատմանը վերաբերող հարցեր: Վեհաժողովում արաբական երկրների միջև ի հայտ եկան տարաձայնություններ նավթային էմբարգոյի շարունակման խնդրի շուրջ: Հակառակ Սիրիայի և Ալժիրի, Եգիպտոսն ու Սաուդյան Արաբիան հանդես եկան էմբարգոյի վերացման օգտին: Քննարկումները հասցրեցին կողմերի փոխզիջումային տարբերակի՝ Ասադը համաձայնվեց հանձնել ռազմագերիների ցուցակը, իսկ Սադաթը ժամանակավորապես հրաժարվեց էմբարգոյի վերացման պահանջից:

Նավթային էմբարգոն շարունակելու վերաբերյալ արաբական երկրների որոշումը զայրույթ առաջացրեց ԱՄՆ-ի ղեկավար շրջանակներում: Փաստորեն Վաշինգտոնի համար կենսական նշանակություն ունեցող հարցի լուծումը նորից հետաձգվում էր անորոշ ժամանակով: Այնուամենայնիվ, գիտակցելով այն հանգամանքը, որ քաղաքականությունը չի կարելի պայմանավորել միայն նավթային գործոնով, Քիսինջերը ստիպված եղավ շարունակել սիրիա-իսրայելական համաձայնագրի կնքմանն ուղղված իր դիվանագիտական առաքելությունը:

Չպատկերացնելով, թե ինչքան հեռու է գնացել Սադաթի «խաղը» ամերիկացիների հետ, Ասադն անհաջող փորձեր կատարեց Կահիրե-Դամասկոս ռազմաքաղաքական դաշինքի ստեղծման ուղղությամբ:[323] Նա շարունակաբար շեշտում էր արաբական գործողությունների միասնականության կարևորությունը, մասնավորապես Եգիպտոսի և Սիրիայի միջև՝ «ընդհանուր թշնամու դեմ պայքարի հարցում»:[324]

Որոշ քաղաքագետներ Իսրայելի հետ համաձայնագիր ստորագրելու Ասադի համաձայնությունը բացատրում են որպես զուտ Միացյալ Նահանգների հետ հարաբերությունների բարելավմանն ուղղված քայլ: Մասամբ կարելի է համաձայնվել վերոհիշյալ տեսակետի հետ, այն իմաստով, որ, բարելավելով Վաշինգտոնի հետ հարաբերությունները, Դամասկոսը փորձում էր «շահել գերտերություններից մեկի բարեկամությունը՝ նրան չեզոք ուժի վերածելու, նվազեցնելու այդ ուժի կողմից Սիրիայի անմիջական թշնամուն ցուցաբերվող

[322] Նույն տեղում, էջ 231:

[323] «الأهرام», 05.07.1974թ.,Ասադի հետ հարցազրույցից:

[324] «Al-Ahram weekly», 29.04.1974թ.:



օժանդակությունը»:[325] Միևնույն ժամանակ անհրաժեշտ ենք համարում ավելացնել, որ Իսրայելի հետ համաձայնագրի ստորագրումով Ասադը թերևս ձգտում էր կանխել առանձին եգիպտա-իսրայելական համաձայնագրի ստորագրումը, ինչպես նաև խոչընդոտել ԱՄՆ-ի և Եգիպտոսի համատեղ տարածաշրջանային քաղաքականության մշակմանն ու իրականացմանը:

Պետք է նշել, որ Սիրիայի ղեկավար շրջաններում գոյություն ունեին լուրջ տարաձայնություններ ամերիկյան «քայլ առ քայլ» քաղաքականության վերաբերյալ: «Ծայրահեղական» թևը՝ արտգործնախարար Խադդամի գլխավորությամբ, մերժում էր մասնակի համաձայնագրերի կնքման գաղափարը: Նման դիրքորոշումը բացատրվում էր նրանով, որ տվյալ պահին ուժերի ինչպես տնտեսական, այնպես էլ ռազմական հավասարակշռությունը շեղվել է դեպի արաբների կողմը, ուստի ստեղծված իրավիճակում լիակատար կարգավորումը Իսրայելի հետ հնարավոր է իրականացնել Սիրիային հարմար պայմաններով: Խադդամը մտահոգված էր, որ ամերիկյան հովանավորությամբ հաստատված խաղաղությունը կարող է «վերջ դնել» արաբական հեղափոխությանը: Նա կտրականապես մերժում էր նաև Իսրայելի հետ ուղղակի բանակցությունների գաղափարը:[326]

Սիրիական ղեկավարության երկրորդ խումբը՝ վարչապետ Այուբիի գլխավորությամբ, կողմնակից էր տարանջատման համաձայնագրի կնքմանը: Այուբիի կարծիքով, քանի որ պատերազմի արդյունքները գոհացուցիչ են Սիրիայի համար, ուստի անհրաժեշտ է ամբողջապես օգտագործել քայլ առ քայլ քաղաքականության հնարավորությունները՝ հաջողությունը գործնականում ամրապնդելու նպատակով:

Ասադին հաջողվեց գտնել միջին ճանապարհը՝ «մաքոքային դիվանագիտությունը» հնարավորություն էր տալիս խուսափել Իսրայելի հետ ուղղակի բանակցություններ վարելուց, իսկ տարանջատման համաձայնագրի ստորագրումը թույլ կտար առանց հրաժարվելու լիակատար կարգավորումից՝ ստիպել Իսրայելին առավելագույն զիջումներ անել Գոլանների հարցում:

Ինչ վերաբերում է Միացյալ Նահանգներին, ապա Նիքսոնը երկրի ներսում «Վոթերգեյթ»-ի ճգնաժամի հետևանքները մեղմացնելու նպատակով տենդայնորեն ուղիներ էր փնտրում արտաքին քաղաքական ասպարեզում արագ և շոշափելի հաջողության հասնելու համար: Այդ նպատակով ԱՄՆ-ի նախագահը ճնշում էր գործադրում Քիսինջերի վրա՝ պահանջելով շուտափույթ վերացնել արաբական երկրների կողմից

[325] Նույն տեղում:

[326] Խադդամի խոսքերով՝ «Ես չեմ ցանկանում, որպեսզի իմ տղային ասեն, որ նրա հայրը նույն սեղանի շուրջն է նստել սիոնիստների հետ նրանց հետ խաղաղության բանակցություններ վարելու նպատակով»: Տես՝ "New York Times", 06.01.1974, p.10.

գործադրված նավթային էմբարգոն ու արագացնել սիրիա-իսրայելական համաձայնագրի ստորագրումը:

Առաջին հարցը լուծվեց մարտի 18-ին Տրիպոլիում կայացած հանդիպումից հետո, երբ նավթային արաբական երկրների մեծամասնությունը հայտարարեց էմբարգոյի վերացման մասին որոշումը, որն, ի դեպ, բացասաբար ընդունվեց Դամասկոսի կողմից:

Իսկ երկրորդ՝ սիրիա-իսրայելական համաձայնագրի ստորագրման հարցում Մոսկվայի աջակցությունն ապահովելու նպատակով, Քիսինջերը «տհաճ և դժվարին» հանդիպում ունեցավ Լ.Բրեժնևի հետ, որի ընթացքում խորհրդային ղեկավարը մեղադրեց ամերիկացիներին այն բանում, որ նրանք փորձում են հեռու պահել Մոսկվային բանակցային գործընթացից: Այդ հանդիպման ժամանակ որոշվեց, որ մոտ ժամանակներս Իսրայելի և այնուհետև Սիրիայի ներկայացուցիչները հաջորդաբար կմեկնեն Վաշինգտոն՝ համաձայնագրի ստորագրման հնարավորությունները քննարկելու նպատակով: Դրան պետք է հաջորդի Քիսինջերի այցելությունը Մերձավոր Արևելք, որից հետո կողմերը կհանդիպեն Ժնևում և ԽՍՀՄ-ի ներկայությամբ կստորագրեն համաձայնագիրը:

Պայմանավորվածության համաձայն, մարտի 29-ին Իսրայելի պաշտպանության նախարար Մոշե Դայանի՝ Վաշինգտոն կատարած այցին հաջորդեց Սիրիայի բրիգադային գեներալ Հիքմեթ Շիհաբիի այցելությունը: Զորքերի տարանջատման գծին վերաբերող կողմերի դիրքորոշումները զգալիորեն տարբերվում էին: Եթե Դայանն առաջարկում էր, զորքերի միջև տարանջատման գիծն անցնի հոկտեմբերի 6-ի գծից դեպի արևելք՝ նախատեսելով իսրայելական զորքերի ներկայությունը Էլ-Կունեյտրայում, ապա Շիհաբիի ներկայացրած քարտեզի համաձայն, տարանջատման գիծն անցնում էր Կունեյտրայից արևմուտք՝ դեպի հոկտեմբերի 6-ի գիծը և նախատեսվում էր իսրայելական ուժերի դուրս բերումը Էլ-Կունեյտրայից:

Սիրիա-իսրայելական համաձայնագրի ստորագրումն արագացնելու նպատակով Քիսինջերը փորձում էր ապահովել արաբական «բարեկամ» երկրների օժանդակությունը: Իսկ Իսրայելի հետ հարաբերություններում Քիսինջերն օգտագործում էր մտրակի և բլիթի քաղաքականությունը: Անգամ պահեր եղան, երբ ի պատասխան Սիրիայի հետ համաձայնագիր ստորագրելու Իսրայելի մերժողական կեցվածքի, Քիսինջերը դիմեց ուղղակի սպառնալիքի, նշելով, որ իսրայելական ղեկավարության դիրքորոշումը կարող է վտանգել ԱՄՆ-ի կողմից վերջինիս ցուցաբերվող օժանդակությունը: ՄԱԿ-ում Հյուսիսային Լիբանանի վրա իսրայելական հարձակման դատապարտումն ամերիկյան ներկայացուցչի կողմից, ճնշման միջոց հանդիսանալով հանդերձ, նվազեցրեց Թել-Ավիվի զիջումներ կատարելու հնարավորությունը: Բոլոր դեպքերում, մայիսի 2-ին իսրայելական բարձրաստիճան ղեկավարության հետ հանդիպման ընթացքում Քիսինջերին չհաջողվեց փոխել նրա դիրքորոշումը:



Նույն օրը Քիսինջերը հանդիպում ունեցավ նաև Ասադի հետ, որին հայտնեց Իսրայելում վարչապետ Մեյիրի դիրքերի թուլացման մասին, ինչը բացասաբար է ազդում երկրի արտաքին քաղաքականության վրա: Հանդիպման ընթացքում Քիսինջերը քննարկեց նաև ԱՄՆ-ի կողմից Սիրիային օգնություն ցուցաբերելու հարցը: Ասադն իր հերթին վերահաստատեց տարանջատման գծի վերաբերյալ սիրիական հայտնի դիրքորոշումը՝ համաձայնվելով ՄԱԿ-ի բուֆերային գոտուց արևելք և արևմուտք տեղակայվելիք ռազմական ուժերի սահմանափակումների հետ: [327]

Մայիսի 6-ին Իսրայելը նույնպես ստիպված եղավ զիջումներ կատարել՝ համաձայնվեց Էլ-Կունեյտրայի մի մասը վերադարձնել Սիրիային, սակայն իր հսկողության տակ թողնելով քաղաքի արևմտյան մասը: Դա նույնպես անընդունելի էր սիրիացիների համար: Ընդհանուր առմամբ, մայիս ամսվա ընթացքում վեց անգամ հանդիպելով Ասադին, Քիսինջերը կարողացավ վերջնականապես համաձայնեցնել Էլ-Կունեյտրայի, մոտակա բարձունքների, ՄԱԿ-ի տարանջատման գոտում տեղեկայվելիք ուժերի քանակության, զինամթերքի տեսակների արգելման վերաբերյալ բոլոր հարցերը:

Մայիսի 29-ին Ասադին ուղղված նամակում Նիքսոնը հավաստիացրեց, որ «Իսրայելը կպահպանի զինադադարը և Էլ-Կունեյտրայի արևելյան մասում չի տեղադրի այնպիսի զենք, որը կարող է վնաս հասցնել Էլ-Կունեյտրային»:[328]

Հետաքրքրական է, որ Մոսկվան պաշտոնապես չեզոք դիրքորոշում էր որդեգրել ընթացող բանակցությունների նկատմամբ: Սակայն պետք է նշել, որ տարբեր առիթներով Գրոմիկոն խորհուրդ էր տալիս Ասադին՝ «չհամաձայնվել կիսամիջոցների հետ»:[329]

Վերջապես, 1974թ. մայիսի 31-ին, Ժնևի Ազգերի պալատում իսրայելական և սիրիական գեներալներ Շաֆիրի և Տայարիի կողմից ստորագրվեց զորքերի տարանջատման վերաբերյալ համաձայնագիրը: Այն պարունակում էր Քաղաքական փաստաթուղթ, Քարտեզ, Արձանագրություն ՄԱԿ-ի ուժերի կարգավիճակի վերաբերյալ և մի քանի գաղտնի նամակներ ԱՄՆ-ի և երկու կողմերի միջև՝ ուժերի մակարդակների մասին մանրամասնություններով:[330] Համաձայնագրով նախատեսվում էր իսրայելական զորքերի դուրսբերումը 1973թ. ընթացքում գրավված սիրիական տարածքներից, ինչպես նաև 1967թ. գրավված տարածքների մի մասից, այդ թվում Ալ-Կունեյտրայից: Երկու

[327]Sheehan, Edward. The Arabs, Israelis and Kissinger, pp.36-41.

[328] W.Quandt, նույն տեղում, էջ 244:

[329] "Правда", 20 мая 1974г.

[330] Arab Report and Record, May 16-31, p.214; Համաձայնագրի տեքստը տես՝ Հավելված 8-ում:

կողմերի միջև հաստատվեց բուֆերային գոտի, ուր տեղակայվեցին ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերը:[331] Համաձայնագրով նախատեսվում էր նաև բուֆերային գոտուց 10 կմ դեպի արևելք և արևմուտք՝ ոչ ավելի, քան 6 երկու բրիգադների, 75 տանկի և 36 միավոր կարճ տրամաչափի (122 մմ.) հրետանիների տեղակայումը: Ի դեպ բուֆերային գոտում սիրիացիներին տրվում էր քաղաքացիական իշխանության իրավունք: Բուֆերային գոտուց 20 կմ. հեռավորության վրա թույլատրվեց տեղակայել ընդամենը 450 տանկ և միջին տրամաչափի հրետանի: Կողմերը կարող էին հակաօդային հրթիռային համակարգ տեղադրել տարանջատման գոտուց միայն 25կմ. հեռավորության վրա:

Համաձայնագրի ստորագրմանը հաջորդեց վիրավոր ռազմագերիների փոխանակումը, ինչպես նաև Ասադի խոստումը Իսրայելին՝ պաղեստինցիների գործունեությունը սահմանափակելու վերաբերյալ:

Անկասկած, համաձայնագրի կնքումը կարելի է որակել որպես լուրջ առաջխաղացում սիրիա-իսրայելական հարաբերություններում: Սակայն դեռևս անպատասխան էր մնում այն հարցը, թե արդյո՞ք համաձայնագիրը քայլ էր դեպի համընդհանուր խաղաղ կարգավորում, թե ժամանակ շահելու միջոց՝ նոր պատերազմական գործողություններից առաջ:

Այդ օրերին ամերիկյան լրատվական միջոցները կարծես մրցակցում էին միմյանց հետ՝ Քիսինջերի հասցեին գովասանքի խոսքերի մեջ: Ամենաազդեցիկ և հայտնի թերթերի ու ամսագրերի կարծիքով, նա համարվում էր ԱՄՆ-ի պատմության մեջ «ամենատաղանդավոր և վաստակաշատ դիվանագետը»:[332] Ամերիկյան քաղաքական իրականության մեջ Քիսինջերի ունեցած դերի ու ազդեցության մասին քննարկումները շարունակվում են մինչև օրս: Պետական քարտուղարի՝ վարպետորեն բանակցելու, դիվանագիտությունը և ուժը գործնականում հմտորեն հավասարակշռելու, ներարաբական հակասությունները տեղին օգտագործելու և այլ անձնական ունակությունների հետ մեկտեղ, անհրաժեշտ ենք համարում նշել մերձավորարևելյան քաղաքականության մեջ նրա թույլ տված հետևյալ երեք բացթողումները՝

1. Մերձավոր Արևելքում կատարվող բոլոր իրադարձությունները դիտարկելով Խորհրդային Միության հետ գլոբալ դիմակայության տեսանկյունից, Քիսինջերն ի վիճակի չեղավ վերջինիս հետ արդյունավետ համագործակցություն հաստատելու: Ծայրահեղական կեցվածք որդեգրելով ԽՍՀՄ-ի նկատմամբ, նա կամ թերագնահատում էր, կամ էլ գերագնահատում Մոսկվայի դերը տարածաշրջանային գործընթացներում:

[331] "Внешняя политика Советского Союза", Москва, 1975, с.327.

[332] Sheehan, Edward. The Arabs, Israel and Kissinger, p.129.



2. Անձնապես թերահավատ լինելով արաբների և հրեաների միջև իրական խաղաղության հաստատման հարցում, Քիսինջերը, պահպանելով Իսրայելի ղեկավարության հետ իր հատուկ հարաբերությունները, փորձում էր ոչ թե համընդհանուր կարգավորման, այլ կայուն հավասարակշռության (status quo) ապահովմանը տարածաշրջանում: Պետքարտուղարը չկարողացավ հասկանալ այն պարզ իրողությունը, որ Իսրայելի զինումը դեռ բավարար չէ հավասարակշռությունն ապահովելու համար:[333] Քիսինջերի այդ անհեռատես քաղաքականությունը, ինչպես հայտնի է, ոչ միայն չապահովեց տարածաշրջանային status quo-ն, այլև որոշակի խոչընդոտ հանդիսացավ տարածաշրջանում ամերիկյան շահերի հետապնդման համար (1973թ. պատերազմը և նավթային էմբարգոն): Քիսինջերն այդպես էլ չկարողացավ ձեռք բերել արաբական աշխարհի մեծամասնության վստահությունը, ինչպես նաև ի վիճակի չեղավ արդյունավետ վերահսկել այնտեղ կատարվող դեպքերն ու զարգացումները:

3. Միակողմանիորեն շրջվելով Եգիպտոսի կողմը, Քիսինջերը թերագնահատեց Սիրիայի, ինչպես նաև պաղեստինյան գործոնի կարևորությունը տարածաշրջանում խաղաղության հաստատման համար: Եվ ինչպես կտեսնենք հետագայում, հատկապես Լիբանանի ճգնաժամի ընթացքում, նրա այդ դիրքորոշումը էլ ավելի էր դժվարացնելու ամերիկյան մերձավորարևելյան քաղաքականության իրականացումը:

Իր քաղաքական դիրքերը երկրի ներսում ամրապնդելու և որոշ չափով «Քիսինջերի փառքը կիսելու» նպատակով՝ ԱՄՆ-ի նախագահ Ռ.Նիքսոնը հունիսի 15-16-ը պաշտոնական այցով մեկնեց Եգիպտոս, Սիրիա, Իսրայել և Հորդանան: Դա ԱՄՆ-ի նախագահի առաջին այցելությունն էր տարածաշրջանի արաբական երկրներ:

Նիքսոնի այցելությունը Սիրիա՝ մեծապես նպաստեց սիրիա-ամերիկյան հարաբերությունների բարելավմանն ու հիմք դրեց հաջորդ հինգ տարիների ընթացքում նրանց հետագա զարգացման համար: Սիրիա այցելության ընթացքում Նիքսոնն արժանացավ ջերմ ընդունելության: Ինչպես և Քիսինջերը, Նիքսոնը չափազանց տպավորվեց Ասադի անհատականությունից, նա անգամ «հանճարի գծեր» ունեցող մարդ նկատվեց ԱՄՆ-ի նախագահի կողմից: Հանդիպման ընթացքում Նիքսոնը հայտնեց Ասադին, որ ԱՄՆ-ը «կողմնակից է Գոլանի բարձունքներում 1967թ. գոյություն ունեցող սահմանների

[333] 1977թ. հունվարի 11-ին Նյու-Յորքում ամերիկյան-հրեական կազմակերպությունների նախագահների կողմից Հ.Քիսինջերի պատվին տված ճաշկերույթի ընթացքում ԱՄՆ-ում Իսրայելի դեսպան Սիմխա Դինիցը հայտարարեց, որ «միայն վերջին երեք տարիների ընթացքում Իսրայելը ԱՄՆ-ից ստացել է այնքան տնտեսական և ռազմական օգնություն, որքան չի ստացել վերջին 25 տարիներին: Եվ դրանում մեծ դեր է խաղացել Քիսինջերը»: Department of State Press Bulletin, January 12,1977.

վերականգնմանը՝ համընդհանուր խաղաղության շրջանակներում»:[334] Ի պատասխան Ասադի այն խոսքերի, որ Իսրայելը երբեք ինքնակամ չի հանձնի Գոլանի բարձունքները, Նիքսոնը նկատեց, որ «միջանկյալ դիվանագիտության նպատակն է ստիպել իսրայելցիներին հետ քաշվել բարձունքներից քայլ առ քայլ, մինչև նրանց վերջնական նահանջը»:[335] Հանդիպման ընթացքում Նիքսոնը նաև ֆինանսական օժանդակություն առաջարկեց Դամասկոսին: Պետք է նշել, որ դեռևս 1974թ. ապրիլի 24-ին ամերիկյան կոնգրեսին ուղղված հայտագրում՝ 1975թվականի համար մերձավորարևելյան երկրներին հատկացվող օգնության շրջանակներում, դիվանագիտական հարաբերությունների վերականգնման դեպքում Սիրիային 100 մլն. դոլարի օգնություն էր նախատեսվում:

Նիքսոնի՝ Սիրիա կատարած այցի ամենակարևոր արդյունքը եղավ այն, որ հունիսի 16-ին վերականգնվեցին երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունները: Վերադառնալով Վաշինգտոն, Նիքսոնը ձեռնամուխ եղավ Սիրիայի տնտեսական օգնության ծրագրի մշակման աշխատանքներին, որն ընդգրկեց ջրի մատակարարման, ոռոգման, գյուղական ճանապարհաշինության, էներգետիկայի, գյուղատնտեսության և առողջապահության բնագավառները: Այդ ծրագրի շրջանակներում 1975թ. ընթացքում Սիրիան ԱՄՆ-ից ստացավ երկու «զարգացման վարկեր» 58 մլն դոլար ընդհանուր չափով:[336]

ԱՄՆ-ի կոնգրեսի հետազոտական ծառայության տվյալների համաձայն, 1950թ. սկսած մինչև 1981թ.՝ ամերիկյան վերջին ծրագրի իրականացման ավարտը, Միացյալ Նահանգները 627.5 մլն դոլարի ընդհանուր գումարի օժանդակություն են ցուցաբերել Սիրիային, որից 34.0 մլն զարգացման, 438մլն - տնտեսական, 155,4մլն - սննդի և 61 հազարի՝ ռազմական ուսուցման ծրագրերի իրականացման համար: Վերոհիշյալ օգնությունը հիմնականում իրականացվել է 1974-79 թթ. ընկած ժամանակահատվածում:[337]

Նիքսոնի հետ հանդիպումից հետո Ասադը որոշակիորեն խանդավառվեց ամերիկյան նախագահի խոստումներից, որոնք մեկնաբանեց որպես «ամերիկյան լուրջ մտադրություններ»՝ համապարփակ կարգավորման հասնելու և գրավված արաբական տարածքներից իսրայելական զորքերի ամբողջական դուրսբերումն ապահովելու ուղղությամբ: Այսպես «Ալ-Ահրամ»-ին տված հարցազրույցի ժամանակ Ասադն ասաց, որ «Միացյալ Նահանգների դիրքորոշման փոփոխությունը համընկնում է ամերիկյան ժողովրդի շահերին և

[334] "Foreign Policy" N 22, Spring 1976. Sheehan, Edward. Step by Step in the Middle East.
[335] Նույն տեղում:
[336] The Department of State Bulletin, Washiñgton, 28.07.1975, p.127.
[337] CRS Issue Brief, Syrian-US Relations, May 3, 1995, by Alfred B.Prados, Foreign Affairs and National Defence Division., p.11.



հակասում համաշխարհային սիոնիզմի շահերին»:[338] Իսկ ավելի ուշ, Ասադը հայտարարեց. «Արաբներից ոչ մեկը ներկայումս չի խոսում Իսրայելի հետ: Մենք խոսում ենք Միացյալ Նահանգների հետ»:[339] Արդյունքում, 1974-75թթ. ընթացքում աշխուժացան երկկողմ միջպետական շփումները երկու երկրների բարձրաստիճան պաշտոնյաների միջև:[340]

Սակայն Ասադի հույսերը Վաշինգտոնի «լուրջ մտադրությունների» վերաբերյալ չիրականացան: Չիրականացան այն պարզ պատճառով, որ ամերիկյան քաղաքականությունը Մերձավոր Արևելքում մշակվում և իրականացվում էր Քիսինջերի կողմից, որն իր հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով եգիպտա-իսրայելական և հորդանանա-իսրայելական համաձայնագրերի կնքման վրա, անուշադրության էր մատնել սիրիական ճակատը: Մասամբ դա կարելի է բացատրել նրանով, որ ԱՄՆ պետքարտուղարը, քաջ գիտակցելով Գոլանների վերաբերյալ երկրորդ համաձայնագրի ստորագրման անհավանականությունը, ձգտում էր առավելագույնս օգտագործել Եգիպտոսի «բացվածության» հանգամանքը: Պ.Սիլի համաձայն, այդ Քիսինջերն էր, որ «ի չիք դարձրեց համընդհանուր կարգավորման վերաբերյալ Նիքսոնի մտադրությունները»:[341] Ասադը չէր կարող տեղյակ լինել, որ 1974թ. մայիսին, սիրիա-իսրայելական համաձայնագրի ստորագրումից հետո, «ամերիկացիները պարտավորվել էին Իսրայելի հետ համաձայնեցնել հետագա ձեռնարկվելիք բոլոր խաղաղ նախաձեռնությունները Սիրիայի հետ»:[342]

Այդպիսին էր Մերձավոր Արևելքում ամերիկյան «խաղաղարար» քաղաքականության էությունը: Թեև ամերիկացիները սկսեցին գիտակցել Սիրիայի հետ հարաբերությունների զարգացման կարևորությունը, սակայն միայն այնքանով, որքանով այդ չէր հակասում «Իսրայելի անվտանգության ու օրինական շահերին»:[343] Կարճ ասած, Միացյալ Նահանգները շահագրգռված էին միմիայն Իսրայելի համար խաղաղ սահմանների (այդ թվում նաև Սիրիայի հետ ունեցած սահմանների) ապահովման մեջ: Այդ իսկ պատճառով, հնարավոր համարելով որոշ «կոսմետիկ» տարածքային փոփոխությունները Գոլաններում, Վաշինգտոնը որևէ կերպ կասկածի տակ չէր առնում Գոլաններում

[338] «الأهرام», 05.07.1974:
[339] "Washington Post", 05.03.1975.
[340] Սիրիայի արտգործնախարար Աբդ ալ-Հալիմ Խադդամը 1974թ. օգոստոսին և 1975թ. հունիսին այցելեց Վաշինգտոն, ուր հանդիպումներ ունեցավ ԱՄՆ-ի նախագահի հետ:
[341] Seale P. նույն տեղում, էջ 248:
[342] "Foreign Policy", N55,(Summer 1974), pp. 92-112.
[343] «النهار», 01.09.1Փ74թ.:

Իսրայելի ներկայության պահպանման անհրաժեշտությունը:[344]

Վոթերգեյթի ճգնաժամի հետևանքով 1974թ. օգոստոսի 9-ին Նիքսոնը ստիպված եղավ հրաժարական տալ:[345] Նրան փոխարինած փոխնախագահ Ջերալդ Ֆորդը շտապեց հայտարարել, որ Քիսինջերը կշարունակի վարել պետքարտուղարի պաշտոնը:

Նիքսոնի համեմատ՝ Ֆորդն էլ ավելի իսրայելամետ էր: Ինչ վերաբերում է սիրիա-իսրայելական կարգավորման նկատմամբ Ֆորդի դիրքորոշմանը, ապա նրա խոսքերով, «Սիրիայի հետ յուրաքանչյուր խաղաղության համաձայնագիր պետք է ապահովի Իսրայելի ներկայությունը Գոլանններում»:[346]

1974թ. հոկտեմբերի 26-29-ը Ռաբատում կայացավ արաբական երկրների ղեկավարների վեհաժողովը: Այն միաձայն ՊԱԿ-ը հռչակեց որպես պաղեստինցիների շահերը ներկայացնող միակ օրինական կազմակերպություն: Արաբական աշխարհում գերիշխում էր այն կարծիքը, որ Հորդանանի Հուսեյն թագավորը այլևս չի կարող բանակցել Իսրայելի հետ Հորդանան գետի Արևմտյան Ափի վերաբերյալ: Համաժողովի ընթացքում մերժվեց նաև Իսրայելի հետ որևէ մասնակի կարգավորման հնարավորությունը: ՊԱԿ-ի վերաբերյալ Ռաբատի որոշումները և նոյեմբերի 13-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայում ՊԱԿ-ի նախագահ Յասիր Արաֆատի ներկայությունը պատմական իրադարձություններ էին, քանի որ պաղեստինցիները պաշտոնապես ճանաչվեցին որպես հակամարտության կողմ, խափանելով հորդանանա-իսրայելական համաձայնագրի ստորագրումը և հավելյալ խոչընդոտ ստեղծեցին Քիսինջերի «քայլ առ քայլ» քաղաքականության իրականացման համար:

Ասադը հասկանում էր, որ Իսրայելը ձգտում է մեկուսացնել Եգիպտոսը, միայնակ թողնելով Սիրիային իսրայելական գերազանցող ուժերի դիմաց: Այդ իսկ պատճառով սիրիական ղեկավարությունը, սերտորեն համագործակցելով ԽՍՀՄ-ի հետ, ջանք չխնայեց երկրորդ եգիպտա-իսրայելական համաձայնագրի ստորագրումը խափանելու

[344] "Правда", 28.09.1974.

[345] 1972թ. հունիսի 17-ին Վաշինգտոնում դեմոկրատական կուսակցության Վոթերգեյթ կոչվող համալիր ներխուժելու մեղադրանքով ձերբակալվել էին հինգ հոգի: Հետաքննության ընթացքում հաստատվել էին նրանց կապերը ԱՄՆ-ի Կենտրոնական Հետախուզական Գործակալության (CIA) և նախագահի վերընտրության կոմիտեի հետ: Հունիսի 27-ին նախագահ Նիքսոնը ուղղակիորեն ներքաշվեց Վոթերգեյթի գործի մեջ, երբ իր աշխատակազմի ղեկավար Հ.Ռ. Հելդմանի հետ խոսակցության ժամանակ հրամայեց վերջինիս քաղաքական պատճառներով կասեցնել Հետաքննությունների Դաշնային Բյուրոյի (FBI) աշխատանքները այդ գործով: Վերահիշյալ խոսակցությունը ձայնագրվել էր նախագահի գաղտնի ձայնագրող համակարգում և երկու տարի անց հենց այդ ձայնագրության հրապարակումը հանգեցրեց Նիքսոնի հրաժարականին:

[346] Public Papers of the President of the US Gerald Ford, 1975, ii, Washington 1977, 1914 (26 November 1975).



համար:

1974թ. հոկտեմբերին Քիսինջերը երեք անգամ այցելեց Դամասկոս: Ասադի հետ հանդիպումների ընթացքում նա փորձեց պարզել Սիրիայի դիրքորոշումը «Մերձավոր Արևելքում խաղաղության հաստատման հարցի նկատմամբ»:[347] Ասադը տեղեկացրեց Քիսինջերին, որ երկրորդ եգիպտա-իսրայելական համաձայնագրի կնքման դեպքում Սիրիան ստիպված կլինի ուժի դիմել, որպեսզի պարտադրի Իսրայելին՝ կատարելու տարածքային զիջումներ: Հանդիպումների ընթացքում Ասադը հայտնեց նաև, որ ՄԱԿ-ի Տարանջատման դիտորդների ուժի մանդատի ներկայությունը կախված կլինի Գոլաններից Իսրայելի հետագա դուրսբերման կամ էլ Ժնևում համաժողովի աշխատանքների վերսկսման հետ:[348]

Եգիպտոսի մեկուսացումն արաբական աշխարհում էլ ավելի խորացնելու, վերջինիս խուսանավելու և Իսրայելի հետ համաձայնության գալու հնարավորությունը սահմանափակելու նպատակով, Սիրիան աշխատանք էր տանում ՊԱԿ-ը և Հորդանանը հաշտեցնելու և երկու հակամարտ կողմերն իր ղեկավարության տակ միավորելու ուղղությամբ: Անկասկած, սիրիա-հորդանանա-պաղեստինյան եռակողմ ջանքերը Խորհրդային Միության հովանավորությամբ, Իսրայելի ներքին քաղաքական զարգացումները (ղեկավարության մեջ գոյություն ունեցող տարաձայնությունները, մոտալուտ ընտրությունները և այլն), ինչպես նաև տարածաշրջանային անբարենպաստ իրադարձությունները (իրաք-իրանյան համաձայնագրի կնքումը 1975 թ. մարտին, Լիբանանյան ճգնաժամը և այլն), միայն որոշ ժամանակով հետաձգեցին եգիպտա-իսրայելական համաձայնագրի ստորագրումը, որը, սակայն, Վաշինգտոնի ակտիվ միջնորդական ջանքերի շնորհիվ իրականություն դարձավ սեպտեմբերի 4-ին, Ժնևում:

Եգիպտա-իսրայելական երկրորդ համաձայնագրի ստորագրումից հետո հայտնվելով էլ ավելի խոցելի վիճակում, Սիրիան, ի հակազդեցություն ամերիկյան քաղաքականության, էլ ավելի սերտացրեց ԽՍՀՄ-ի հետ համագործակցությունը՝ փորձելով Իսրայելի դեմ նոր ստեղծվելիք արաբական ճակատում ներգրավել Հորդանանը, ինչպես նաև քայլեր ձեռնարկելով սիրիա-իրաքյան հարաբերություններում գոյություն ունեցող «թշնամանքը» մեղմացնելու ուղղությամբ:[349]

Պետք է նշել, որ եգիպտա-իսրայելական համաձայանագրի կնքումից հետո Քիսինջերը «խաղաղության հաստատման» իր ջանքերը

[347] Damascus Domestic Service, 14 October,1974.

[348] Damascus Domestic Service. 11,14,October, and November 7, 1974.

[349] "Известия", 29.05.1975. Այսպես 1975թ. օգոստոսի 5-ին Դամասկոսում Հուսեյնի և Ասադի հանդիպումից հետո հրապարակվեց համատեղ հորդանանա-սիրիական հայտարարություն, որի համաձայն, երկու երկրների ղեկավարներից կազմված ընդհանուր Բարձրագույն Քաղաքական ղեկավարություն էր ստեղծվում:

կենտրոնացրեց նաև սիրիական ճակատում: 1975թ. սեպտեմբերի 29-ին ՄԱԿ-ում արաբական երկրների ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում ԱՄՆ պետքարտուղարը նշեց, որ «Միացյալ Նահանգները պատրաստ են աշխատելու սիրիա-իսրայելական երկրորդ քայլի ուղղությամբ: Ցանկության դեպքում ԱՄՆ-ը միջոցներ կձեռնարկի լիակատար կարգավորումն իրականացնելու համար»: Քիսինջերն ասաց նաև, որ պետք է մտածել, թե ինչպես է հնարավոր բավարարել պաղեստինցիների օրինական պահանջները:[350] Սակայն Քիսինջերի հայտարարությունները որևէ ազդեցություն չունեցան Սիրիայի վրա, որը շարունակում էր մերժել մասնակի կարգավորման հնարավորությունը:[351]

Սադաթի զիջողական կեցվածքը համարելով «արաբական հարցի և զինակիցների դավաճանություն», Ասադը չէր կարող հետևել Եգիպտոսի օրինակին, քանի որ, իր իսկ խոսքերով, «արաբա-իսրայելական հակամարտությունից Եգիպտոսի դուրսբերումը խախտեց տարածաշրջանում առկա ուժերի հավասարակշռությունը և միայնակ թողեց Սիրիային՝ Իսրայելի դեմ պայքարի ճակատային գծի վրա»:[352] Եվ միանգամայն բնական է, որ մերժելով համաձայնության գալ Իսրայելի հետ, Սիրիան շարունակեց ԽՍՀՄ-ի օգնությամբ զարգացնել իր ռազմական կարողությունները՝ չբացառելով Իսրայելի հետ միայնակ պատերազմելու հնարավորությունը: Այստեղ կարևոր ենք համարում հիշատակել, որ Մոսկվայի հետ ռազմական համագործակցությունը ընդլայնելով հանդերձ, Ասադը հասկացրեց խորհրդային ղեկավարներին, որ ամերիկյան առաջարկների մերժումը Սիրիայի կողմից չի նշանակում, որ նա միանշանակորեն կողմ է Ժնևում ԽՍՀՄ-ի հովանավորությամբ և վերջինիս պայմաններով մերձավորարևելյան կարգավորմանն ուղղված համաժողովի աշխատանքների վերսկսմանը: Սիրիական ղեկավարը հայցեց Մոսկվայի աջակցությունը Պաղեստինյան հարցի կարգավորման իր տարբերակին, որի համաձայն, Գոլաններում ՄԱԿ-ի Տարանջատման դիտորդների ուժի մանդատի երկարաձգման հարցը ուղղակիորեն կապվում էր ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից «242» բանաձևի մեջ լրացումներ մտցնելու անհրաժեշտության հետ:[353]

Սիրիայի ռազմավարական հայեցակարգն ու նպատակները Իսրայելի և արաբ-իսրայելական հակամարտության նկատմամբ ներկայացվեցին և ընդունվեցին 1975թ. նոյեմբերին, Բաաս կուսակցության Ազգային համաժողովի ընթացքում: Այդ փաստաթղթում հիմնականում նշվում էր, որ «արաբական ողջ ներուժը պետք է օգտագործել Պաղեստինում իմպերիալիստական, գաղութային,

[350]Press Release. Department of State. Bureau of Public Affairs. September 29,1975.

[351]TACC, 09.11.1975.

[352]Damascus Domestic Service, 3 September 1975.

[353] «الراي», 18.10.1975:



սիոնիստական ներկայության դեմ մղվող պայքարում, որը ազգային ազատագրական պայքարի հիմնական մասն է կազմում»: Արաբ-սիոնիստական պայքարը բնութագրվում էր Բաասի կողմից որպես «ճակատագրական /լինել չլինելու, կյանքի և մահվան/, պատմական պայքար», որը պետք է ավարտվի սիոնիզմի առհավետ ոչնչացմամբ և արաբական բոլոր տարածքների ազատագրմամբ, ներառյալ «ողջ արաբական Պաղեստինյան հողերը»:[354] Առաջին հերթին, սիրիական ղեկավարները նպատակ ունեին ազատագրել 1967թ. Իսրայելի կողմից գրաված բոլոր տարածքները, ներառյալ Արևմտյան ափը, Գազան և Երուսաղեմը: Հ.Ասադը համաժողովում իր ելույթի ժամանակ ասաց հետևյալը.«Մենք պայքարի երկար ճանապարհի կեսին ենք գտնվում և պետք է պատրաստվենք մեզ ռազմականապես: Մեր հիմնական և կարևոր զենքերն են Արաբական միասնությունն ու Արաբական համերաշխությունը: Մենք ջանքեր գործադրեցինք ԱՄՆ-ի հետ դրական հարաբերություններ հաստատելու, նրա բարեկամությունը շահելու ուղղությամբ՝ այն չեզոք ուժի վերածելու, նրա օժանդակությունը մեր անմիջական թշնամուն թուլացնելու և արաբների միջև նոր բաժանումների ստեղծումը խոչընդոտելու նպատակով: Ես ասացի Քիսինջերին, որ մենք՝ արաբներս, որևէ այլ ժողովրդից ավելի շատ ենք ցանկանում խաղաղություն: Սակայն մեր և խաղաղության միջև դեռևս շատ երկար ճանապարհ կա»:[355]

## *ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ*

1975թ. քաղաքացիական պատերազմի բռնկմանը նախորդած 20 տարիների ընթացքում Լիբանանում տեղի էին ունեցել վիթխարի փոփոխություններ: Պարսից Ծոցի երկրների նավթային հարստության աննախադեպ աճի պայմաններում Լիբանանը վերածվեց արևմտյան և ամերիկյան տնտեսությունները ու արաբական աշխարհը կապող առանցքային երկրի: Լինելով տարածաշրջանի առավել ազատական տնտեսություն ունեցող երկիրը՝ Լիբանանը կլանում էր Ծոցի միապետությունների և «սոցիալիստական կապանքների մեջ» գտնվող Սիրիայից, Եգիպտոսից ու Իրաքից հոսող կապիտալը: 1970թ. Լիբանանում ծառայությունների (ֆինանսական, բանկային, առևտրական, զբոսաշրջության) բնագավառը կազմում էր երկրի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) շուրջ 40 տոկոսը՝ աշխարհում

[354] Maoz Moshe. Syria and Israel From War to Peacemaking, p.145.

[355] Drysdale, Alasdair and Hinnebusch R. Syria and the Middle East Peace Process. Council on Foreign Relations, p.112.

ամենաբարձրներից մեկը: Այս առումով, բանկային ոլորտը կենտրոնական և գերիշխող տեղ էր զբաղեցնում երկրի տնտեսության մեջ: Բեյրութում կառուցված բարձրակարգ հյուրանոցներն ու կազինոները, ազատ բարքերը հրապուրում էին ավանդապաշտ արաբ շեյխերին և մեծահարուստներին, որոնք հնարավորություն էին ստանում ոչ միայն անձնական միջոցները Լիբանանում ներդնելու, այլև ժամանակ անցկացնելու և զվարճանալու «Արևելքի Փարիզում»:

Սակայն Լիբանան մուտք գործող կապիտալը և նրանից ստացված շահույթը հավասարաչափ չէր բաշխվում համայնքային հենքի վրա ստեղծված այդ երկրի բնակչության միջև: Լիբանանի կառավարման հենքը կազմող կրոնահամայնքային /կոնֆեսիոնալ/ սկզբունքը ոչ միայն խոչընդոտում էր արդյունավետ սոցիալական քաղաքականության իրականացման հնարավորությունը, այլև բացասական ազդեցություն ունենալով երկրի հասարակական-քաղաքական կյանքի բոլոր բնագավառների վրա՝ մեծապես նպաստում էր պետության թուլացմանն ու որպես հետևանք՝ քրոնիկական անկայունությանը: Եթե 1958թ. ԱՄՆ-ի միջամտության շնորհիվ հնարավոր եղավ խուսափել քաղաքացիական պատերազմից, ապա 1975թ. այդ անհնարին դարձավ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին բրիտանացիների օգնությամբ և ԱՄՆ-ի համաձայնությամբ 1943թ. Լիբանանում քրիստոնյա մարոնիների և սուննի մահմեդականների միջև հաստատված Ազգային Դաշինքը (National Pact) պահպանվեց անփոփոխ, մինչև 1960-ական թվականները՝ Լիբանան *պաղեստինցիների ներհոսքը* (մասնավորապես 1967թ. «վեցօրյա» պատերազմի և 1970թ. Հորդանանի ճգնաժամից հետո) և նույն պաղեստինցիների, որպես Լիբանանի համայնքային կառուցվածքի մեկ այլ բաղկացուցիչ մասի, ի հայտ գալը:

Կազմելով Լիբանանի բնակչության 15%-ը՝ պաղեստինցիները սկսեցին լրջագույնս ազդել երկրի քաղաքական կյանքի վրա: Նրանց անշեղ քանակական աճը, ռազմականացումն ու հզորացումը խախտեց Լիբանանում համայնքային ուժերի միջև հաստատված հավասարակշռությունն ու առաջացրեց քրիստոնյա մարոնիների դժգոհությունն ու գործնական հակազդեցությունը:

Փաստորեն, սոցիալ-դասակարգային հակասությունների հենքի վրա Պաղեստինի դիմադրության շարժման գործունեության ծավալումը Լիբանանում սկսեց վտանգել մարոնի քրիստոնյաների արտոնյալ դիրքը երկրի իշխանական բուրգում: Լիբանանում քաղաքացիական պատերազմի հիմնական պատճառներից մեկը հանդիսացավ «մարոնի քրիստոնյա համայնքի վերնախավի դիկտատուրան, երբ երկրի կառավարման մեջ ստորադաս վիճակում էին հայտնվել ոչ միայն



մահմեդական, այլև քրիստոնյա՝ ուղղափառ, կաթոլիկ, հայ և բողոքական համայնքները»:[356]

Մարոնիների ճամբարում ձևավորվել էին երկու հիմնական ուժեր՝ Բաշիր Ժմայելի «Քաթայիբ» (Ֆալանգա)[357] և Լիբանանի նախկին նախագահ Քամիլ Շամունի որդու՝ Դանիի ղեկավարած «Ան-Նումուր» (Վագրեր) խմբավորումները, որոնք միավորված էին այսպես կոչված Լիբանանյան ճակատի մեջ: Սա քաղաքացիական պատերազմին մասնակցող աջակողմյան ճամբարն էր:

Սակայն նրանց միջև էլ ամեն ինչ հարթ չէր՝ այս երկուսն էլ պայքարում էին Լիբանանի քրիստոնեական համայնքի վրա վերահսկողություն հաստատելու համար: Նրանց ջոկատները հաճախակի բախվում էին միմյանց հետ: 1978-1979թթ. աջակողմյան ուժերը հարձակումներ իրականացրեցին նաև երկրի ամենամեծ քրիստոնյա հայ համայնքի վրա, որը խոհեմաբար որդեգրել էր դրական չեզոքության քաղաքականությունը:

Այն որ աջակողմյան ուժերին չմիացան երկրի քրիստոնյա այլ համայնքները՝ հայ, կաթոլիկ, ուղղափառ, «Ազգային բլոկ» կուսակցությունը, որը բաղկացած էր մարոնիներից, ինչպես նաև մարոնիների «Զղորթայի» խմբավորումը /Սուլեյման Ֆրանժիե/, որը հետագայում դուրս եկավ Լիբանանյան ճակատից և համագործակցեց սուննի ուժերի հետ, հիմնովին հերքում է այն տեսակետը, որ լիբանանյան կոնֆլիկտը կրոնական հենք ուներ:[358]

Պետք է նշել, որ 50-60-ականներին Լիբանանում տեղի ունեցած սոցիալական փոփոխությունները ակտիվացրեցին նաև Լիբանանի

---

[356] Հովհաննիսյան Ն. Արաբական երկրների պատմություն, h.3, Երևան, 2006, էջ.638-649: Տես նաև. Հովհաննիսյան Ն. Լիբանանյան կոնֆլիկտը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը /1975-1982/, Երևան, 1982.

[357] **«Քաթայիբը»** մարոնիների հիմնական քաղաքական կուսակցությունն է, որը հիմնադրվել է 1936թ. նոյեմբերի 21-ին, դեղագործ Պիեռ Ժմայելի կողմից: Հենվելով Լիբանանի փյունիկյան ժառանգության վրա՝ կուսակցությունը որդեգրել էր «Աստված, Ընտանիք, Պետություն» կարգախոսը: Բաշիրը Պիեռ Ժմայելի կրտսեր որդին էր: 1976թ. նա դարձավ աջակողմյան քրիստոնեական կոալիցիայի՝ «Լիբանանյան ուժերի» հրամանատարը, որն ընդգրկում էր իր սեփական կուսակցության 15.000-անոց միլիցիան, երկրի նախագահ Սուլեյման Ֆրանժիեի խմբավորումը հյուսիսում, Շամունի 3.500 հոգանոց խումբը, ինչպես նաև Հայր Կասսիսի մարոնիական եկեղեցական ուժերը: Բաշիր Ժմայելը կողմնակից էր Իսրայելի հետ համագործակցությանը և պայքարում էր Լիբանանում ինչպես ՊԱԿ-ի և սիրիական ներկայության, այնպես էլ իր քաղաքական ընդդիմախոսների դեմ (անգամ մարոնիների շրջանակում): Այսպես, 1978թ. հունիսին Բաշիր Ժմայելը կազմակերպեց սիրիամետ Ֆրանջիյեի ընտանիքի անդամների (որդու՝ Թոնիի, նրա կնոջ ու փոքր դստեր) սպանությունը, իսկ 1980թ. հուլիսի 7-ին նրա ուժերը ներխուժեցին «Առյուծների» կենտրոնակայանը և սպանելով շուրջ 80 հոգի՝ գլուխ բերեցին Քամիլ Շամունի ղեկավարած Ազգային լիբերալ կուսակցության ոչնչացումը: 1982թ. օգոստոսի 23-ին Բաշիրը ընտրվեց Լիբանանի նախագահ:

[358] [358] Հովհաննիսյան Ն. Արաբական երկրների պատմություն, h. 3, Երևան, 2006, էջ. 641:

դրուզներին, որոնք Քամալ Ջումբլատի ղեկավարությամբ սկսեցին բողոքել երկրի քաղաքական անարդար բաժանվածության դեմ՝ պահանջելով իրենց համայնքի համար էլ ավելի մեծ մասնաբաժին:

Քաղաքացիական պատերազմի մյուս կողմը՝ ձախ ուժերը միավորվեցին Ք. Ջումբլատի ղեկավարած Ազգային շարժման մեջ, ուր մտան նաև Առաջադիմական-սոցիալիստական, կոմունիստական, Բաաս, Ազգային-սոցիալիստական կուսակցությունները, Կոմունիստական գործողությունների, նասերականների, մուրաբիտունների կազմակերպությունները և այլն: Հարթ չընթացան նաև հարաբերությունները Ազգային շարժման ներսում, մասնավորապես Ամալ-ի և ՊԱԿ-ի միջև, Լիբանանի ազգային-հայրենասիրական ուժերի և Սիրիայի միջև՝ հատկապես, երբ պարզ դարձավ, որ մուտք գործելով Լիբանան Դամասկոսը բնավ էլ մտադիր չէ հեռանալ այնտեղից:

Անշուշտ, պաղեստինցիների հակաիսրայելական գործունեության հետևանքով տուժում էր Լիբանանը, հարվածի տակ էր դրվում նրա կայունությունն ու անվտանգությունը: Այսպես, 1972թ. Մյունխենի Օլիմպիական խաղերի ժամանակ պաղեստինցիների կողմից սպանվեցին Իսրայելի 11 մարզիկներ: Ի պատասխան դրա, 1973թ. ապրիլի 10-ին Իսրայելի հատուկ ջոկատը կեսգիշերին ներխուժելով Բեյրութ՝ ոչնչացրեց իրենց բնակարաններում գտնվող ՊԱԿ-ի երեք պատասխանատուներին՝ Քամալ Նասսերին, Յուսիֆ Նաջարին և Քամալ Էդվանին: Նույն շրջանում տեղակայված լիբանանյան բանակը որևէ կերպ չմիջամտեց: Վերջին հանգամանքը խորացրեց պաղեստինցիների կասկածները, որ քրիստոնյա ղեկավարությունը գաղտնի իր համաձայնությունն է տվել Իսրայելին այդ գործողությունն իրականացնելու համար:[359]

Իրավիճակը Լիբանանում գնալով շիկանում էր, և երբ 1975թ. ապրիլի 13-ին Բեյրութի Այն առ-Ռումաննա թաղամասի եկեղեցու վրա կրակ բացվեց, որի հետևանքով 4 քրիստոնյա սպանվեց, աջքրիստոնեական «Քաթայիբ»-ի զինված մարտիկները հարձակում գործեցին Թել Զաաթար պաղեստինցի փախստականների ճամբարի վրա՝ սպանելով 27 պաղեստինցի: Երկրում բռնկվեց քաղաքացիական պատերազմ:

Լիբանանի քաղաքացիական պատերազմի մասին գրված են տասնյակ աշխատություններ: Այդ պատճառով չցանկանալով մանրամասն ներկայացնել պատերազմի ընթացքն ու զարգացումները, ստորև կանդրադառնանք հիմնականում Սիրիայի դերակատարության հետ կապված հարցերին:

Կասկած չի հարուցում այն փաստը, որ Լիբանանի ճգնաժամը առաջին հերթին ապակայունացնող ազդեցություն կարող էր թողնել

[359] Bregman, Ahron and El-Tahri, Jihan. The Fifty Yeras War. Israel and the Arabs. Based on BBC TV series, pp.156-157.



հարևան երկրների, մասնավորապես Սիրիայի վրա: Լիբանանյան ճգնաժամի ողջ ընթացքում Սիրիայի գործողությունները ուղղված էին *երկու երկրների միջև հատուկ հարաբերությունների պահպանմանը, Սիրիայի ազգային անվտանգության կարիքներից բխող՝ Լիբանանի միասնականությանն ու անկախության ապահովմանը:* Պաշտոնական Դամասկոսի կարծիքով, Լիբանանում կատարվող դեպքերը, որոնք սպառնում էին խախտել այնտեղ հաստատված նուրբ սոցիալական, քաղաքական և կրոնական հավասարակշռությունը, «իմպերիալիստական դավադրության արդյունք էին», որի նպատակն էր շեղել Սիրիայի ուշադրությունը Իսրայելի դեմ պայքարից և «մասնատել Լիբանանը»:[360]

Սիրիայի համար Լիբանանը երբեք չի եղել սոսկ հարևան երկիր և միշտ դիտարկվել է որպես «Մեծ Սիրիայի» անբաժան մասը: Այս է, թերևս, եղել պատճառը, որ երկու երկրների միջև երբևիցե գոյություն չեն ունեցել դիվանագիտական հարաբերություններ: Ասադի խոսքերով, «Սիրիան և Լիբանանը պատմության ընթացքում իրար կապող ընդհանուր շահերով մեկ երկիր և մեկ ժողովուրդ են եղել: Սա պետք է լավ ընկալվի բոլորի կողմից: Գործնականում ընդհանուր շահերն ու միասնական անվտանգությունն է եղել նպատակը: Չափազանց դժվար է բաժանման գիծ քաշել Լիբանանի և Սիրիայի անվտանգության խնդիրների միջև»:[361]

Այդ իսկ պատճառով, Լիբանանի միասնականության և անկախության պահպանման նպատակով, Սիրիան որդեգրեց «լա ղալիբ վա լա մաղլուբ» (ոչ հաղթող և ոչ պարտվող) կարգավորման տարբերակը: Այսինքն՝ Սիրիային ձեռնտու չէր ոչ պաղեստինյան ուժերի հաղթանակը, ոչ էլ քրիստոնյա մարոնիների կողմից ղեկավարվող Լիբանանի գոյությունը: Եթե վերջին դեպքում ամեն ինչ հասկանալի է թվում /Իսրայելի կողմից հովանավորվող հակասիրիական քրիստոնյա պետության հեռանկարը/, ապա պաղեստինցիների հաղթանակը, վտանգելով Լիբանանում բազմադեմ համայնքների խաղաղ գոյակցությանը և ստեղծված կրոնահամայնքային համակարգի հավասարակշռությանը, կարող էր բացասական արձագանք ունենալ Իսրայելում և պատճառ դառնալ սիրիա-իսրայելական նոր բախման համար, որը տվյալ պահին Սիրիային ցանկալի չէր: Եվ, վերջապես, պաղեստինյան ազգայնական, հեղափոխական Լիբանանը, քաղաքական և գաղափարական առումներով ավելի ձախ, քան բաասական Սիրիան, չէր կարող ընդունվել Դամասկոսի կողմից, որի համար «մրցակից բաասական Իրաքը միանգամայն բավական էր»:[362] Պետք է նաև նկատի ունենալ, որ պաղեստինցիները Սիրիայի կողմից հիմնականում դիտարկվում էին միայն որպես կարևոր և գործնական միջոց՝

[360] Լիբանանյան ճգնաժամի վերաբերյալ 1975թ. հուլիսի 20-ի Ասադի ելույթը:

[361] «الحوادث», (լիբանանյան ամսագիր), 1975թ. հունիս 26-ի:

[362] "Le Monde", 14 April, 1976.

տարածաշրջանում սեփական ծրագրերի իրականացման համար: Բնականաբար, Դամասկոսին անհրաժեշտ էր, որ պաղեստինցիները կառավարելի լինեն: Ուստի Արաֆաթի անկախ դիրքորոշումը չէր կարող դուր գալ սիրիացիներին: Ասադի համար Արաֆաթը նման էր «անզոր հրետանու», որը կարող էր միայն պատերազմ հայտարարել, սակայն ի վիճակի չէր հաղթել: Հ.Ասադի և Յ.Արաֆաթի տարաձայնությունները գնալով վերածվել էին բացահայտ թշնամանքի:

*Մեզ համար անհերքելի է այն փաստը, որ Հ. Ասադը միջամտեց Լիբանանում տեղի ունեցող իրադարձություններին ոչ թե պաղեստինցիներին կամ էլ քրիստոնյաներին օգնելու, այլ Լիբանանը որպես քաղաքական միավոր փրկելու համար: Լիբանանը ոչ միայն «Մեծ Սիրիայի» անբաժան մասն էր Հ.Ասադի համար, այլ մի երկիր, որի կայունությունն ու անվտանգությունը կենսական նշանակություն ուներ Սիրիայի համար: Լիբանանի ներքաղաքական փխրուն հավասարակշռությունը պահպանելու՝ պաշտոնական Դամասկոսի հենց այդ շահագրգռվածությունն էր, որը ճանաչվեց թե արաբական երկրների մեծամասնության և թե ԱՄՆ-ի կողմից: Միջազգային կոնսենսուսի առկայության պայմաններում Սիրիան դարձավ սկզբում de-facto Լիբանանում կայունություն ապահովող միակ գործնական ուժը, իսկ ավելի ուշ՝ de-jure երկիրը անսահմանափակ վերահսկող միակ օտար պետությունը:*

Հաշվի առնելով Լիբանանում ստեղծված համեմատաբար կայուն իրավիճակը, մինչև 1975թ. աշունը Սիրիան նախընտրեց ձեռնպահ մնալ լիբանանյան դեպքերին անմիջականորեն միջամտելուց: 1975թ. սեպտեմբերին եգիպտա-իսրայելական համաձայնագրի ստորագրումից և Լիբանանում բախումների սաստկացումից հետո, Դամասկոսը որոշեց ՊԱԲ-ին (Պաղեստինյան Ազատագրության Բանակ) և «Սայիկա»-յին ենթարկվող երկու պաղեստինյան ստորաբաժանում ուղարկել Լիբանան, որոնք, տեղակայվելով հյուսիսային Տրիպոլի քաղաքի մոտակայքում, փորձեցին վերջ դնել այնտեղ ընթացող ռազմական գործողություններին:[363] Եվ չնայած որ այդ ստորաբաժանումները Լիբանանի կառավարության պահանջով շուտով դուրս բերվեցին երկրից, այնուամենայնիվ, նրանց միջամտությունը նախադեպ ստեղծեց երեք ամիս անց, 1976թ. հունվարի 19-ին, ՊԱԲ-ի Յարմուկ բրիգադի ջոկատների Լիբանան ներխուժման համար, այն ժամանակ, երբ քրիստոնյա ուժերը լայնածավալ ռազմական գործողությունների արդյունքում կանգնեցրել էին երկիրը մասնատման վտանգի առջև: Այս անգամ Սիրիայի միջամտությունն ավարտվեց 1976թ. հունվարին զինադադարի հաստատումով և փետրվարի 14-ին Լիբանանի նախագահ

[363] SANA, 25 September, 1975. « الحوادث», 12.12.1975.



Սուլեյման Ֆրանժիեի կողմից «ազգային համաձայնության» վրա հիմնված կարգավորման նոր ծրագրի հայտարարությամբ:

Արաբների մեծամասնության կարծիքով, լիբանանյան ճգնաժամը առավելապես ձեռնտու էր Իսրայելին: Որոշ քաղաքագետներ էլ համոզված են, որ լիբանանյան պատերազմից շահեցին նաև Եգիպտոսն ու Միացյալ Նահանգները, այն իմաստով, որ այդ երկրում կատարվող դեպքերը շեղեցին արաբական աշխարհի ուշադրությունը Սինայ-2 (երկրորդ եգիպտա-իսրայելյան) համաձայնագրից և նվազեցրին Իսրայելի և ԱՄՆ-ի վրա գործադրվող միջազգային ճնշումը:

Մեկ այլ տեսակետի համաձայն, լիբանանյան ճգնաժամը Վաշինգտոնի մշակած ընդարձակ ծրագրի մի մասն էր կազմում և հետամտում էր ոչնչացնել ՊԱԿ-ն ու ամերիկյան հովանու ներքո խաղաղություն հաստատել Սիրիայի, Եգիպտոսի, Հորդանանի և Իսրայելի միջև:[364]

Մենք համաձայն ենք այն կարծիքին, որ «լիբանանյան ճգնաժամը ժամանակ շահելու և հանգստանալու հնարավորություն էր ընձեռում Իսրայելին»: Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, ապա ճգնաժամի սկզբում Վաշինգտոնը փորձում էր զսպել Իսրայելին ու Սիրիային՝ լայնածավալ պատերազմ սանձազերծելուց՝ միաժամանակ զբաղվելով Լիբանանից ամերիկացիների տարհանման հարցերով:[365] Իսրայելական «Մաարիվ» օրաթերթի համաձայն, ամերիկյան քաղաքական շրջանակները համատացած էին, որ ԱՄՆ-ի միջամտությունը Լիբանանում այնպես, ինչպես դա կատարվեց 1958թ., «անհնարին է և անցանկալի»:[366] Այնտեղ տեղի ունեցող իրադարձությունները Միացյալ Նահանգները համարեցին Լիբանանի «ներքին գործը» և մերժեցին արտաքին միջամտության որևէ հնարավորություն:

Հարկ է հիշատակել, որ լիբանանյան ճգնաժամի նախօրեին և սկզբնական շրջանում հաճախակի էր խոսվում այն մասին, որ ԱՄՆ-ի և Իսրայելի միջև հաստատված հատուկ հարաբերություններում նկատվում է սառնություն, և որ այլևս Իսրայելը չի կարող համարվել ԱՄՆ-ի միակ դաշնակիցը տարածաշրջանում, որ Եգիպտոսը նույնպես կարող է հավակնել այդ դերին: Որոշ քաղաքագետներ դրանով բացատրեցին Թել-Ավիվի և Վաշինգտոնի միջև ի հայտ եկած տարաձայնությունները, մասնավորապես, Լիբանան սիրիական ներխուժման հարցի վերաբերյալ: Իսրայելը ի տարբերություն ամերիկացիների, ներխուժման հենց սկզբից

[364] Quandt W. Decade of Decisions: American Policy toward the Arab-Israeli Conflict 1967-1976, p.281.

[365] Բեյրութից ամերիկացիների տարհանման հարցում հիշատակման արժանի են Լիբանանում ամերիկյան դեսպանության և ՊԱԿ-ի ուղղակի շփումները և համագործակցությունը, ինչը հիմք տվեց որոշ քաղաքագետներին խոսելու անգամ ԱՄՆ-ի կողմից պաղեստինցիների ճանաչման մասին:

[366] «Maariv», 08.01.1976:

ծայրահեղ բացասական դիրքորոշում որդեգրեց, հայտարարելով, որ «Իսրայելը երբեք չի թույլատրի արտաքին ներխուժում Լիբանան», և որ «Իսրայելը չի կարող անկողմնակալ մնալ Սիրիայի ներխուժման դեպքում անկախ նրա հետապնդած նպատակներից»:[367] Սակայն աստիճանաբար ամերիկյան ազդեցության, ինչպես նաև պաղեստինցիների հետ Սիրիայի առճակատման հետևանքով, իսրայելական դիրքորոշումը սկսեց փոխվել: Գտնվելով նախընտրական շրջանում՝ Իսրայելի ղեկավար շրջանները վերջապես որդեգրեցին «սպասելու» քաղաքականությունը: Իսրայելի պաշտպանության նախարարի խոսքերով. «Այնքան ժամանակ, մինչև սիրիացիները պայքարում են պաղեստինցիների դեմ՝ քրիստոնյաների կողքին ու հակառակը, և քանի դեռ սիրիական գործողությունները ուղղված չեն Իսրայելի դեմ, մեր ռազմական միջամտությունը անիմաստ է»:[368]

Այստեղ քննության է արժանի Վաշինգտոնի դիրքորոշումը սիրիական միջամտության նկատմամբ: 1975թ. հոկտեմբերի 16-ին Դամասկոսում ամերիկյան դեսպան Ռիչարդ Մերֆին կոչ էր արել Ասադին՝ ձեռնպահ մնալ Լիբանան ներխուժումից, շեշտելով, որ «արտաքին որևէ միջամտություն չափազանց մեծ սպառնալիք կհամարվի Իսրայելի կողմից»: Սակայն 1976թ. փետրվարից սկսած ամերիկյան դիրքորոշումը փոփոխության ենթարկվեց, և Վաշինգտոնը սկսեց պաշտպանել Լիբանանում սիրիական միջնորդական ջանքերը: ԱՄՆ-ն խորհուրդ էր տալիս Իսրայելին, ինչպես նաև ԽՍՀՄ-ին և եվրոպական այլ տերություններին, չձեռնարկել որևէ գործողություն Լիբանանում՝ նախընտրելով կարգավորման հասնել չափավոր արաբական երկրների, մասնավորապես Եգիպտոսի, Սաուդյան Արաբիայի և Քուվեյթի միջոցով:

Խնդրի քաղաքական կարգավորմանն ուղղված ամերիկյան անհաջող փորձերից հետո, ինչպես նաև Լիբանանում բախումների շարունակման ու Ք.Ջումբլաթի կողմից գլխավորած ձախակողմյան ուժերի հաջող ռազմական գործողությունների պայմաններում ԱՄՆ-ը և Իսրայելը սկսեցին ընդունել Սիրիայի «կայունացնող» դերը Լիբանանում:

Վաշինգտոնը անհազստանում էր, որ ձախակողմյան Լիբանանը պաղեստինցիներին թույլ կտա իր տարածքից հարձակումներ գործել Իսրայելի վրա, ինչը ամենայն հավանականությամբ, կարող էր հանգեցնել պատերազմի՝ դրա մեջ ներքաշելով Սիրիային և հնարավոր է, նաև Եգիպտոսին: Ստեղծված իրավիճակում Միացյալ Նահանգները ոչ միայն չփորձեցին կանխել սիրիական ռազմական ներխուժումը Լիբանան, այլև նշեցին, որ սահմանափակ սիրիական միջամտությունը կարող է կայունացնել իրավիճակը և ապահովել երկրի անվտանգությունը: Պ.Սիլը վկայակոչում է անգամ եռակողմ ԱՄՆ-Սիրիա-Իսրայել «կարմիր գծի»

367 «Maariv», 06.06.1976:

368 Նույն տեղում:



համաձայնագիրը, ըստ որի, Իսրայելը նույնպես համաձայնվել էր Լիբանանում սիրիական ներկայության հետ:[369] Ամերիկյան լրատվական միջոցները պնդում էին, որ Վաշինգտոնին հաջողվել է համոզել Թել-Ավիվին, որ նա սիրիացիների կողմից հարավային Լիբանանում Իսրայելի անվտանգության շահերի ճանաչման դիմաց, համաձայնվի այնտեղ սիրիական ռազմական ներկայության հետ մինչև հյուսիսում անցնող Սիդոն-Ջեզին գիծը («կարմիր գիծը»):[370]

Կարծում ենք ԱՄՆ-ի նման «բարյացակամ» կեցվածքը սիրիական ներխուժման հանդեպ կարելի է բացատրել այն հանգամանքով, որ 1976 թվականը, կայանալիք ընտրությունների առումով, նախագահ Ֆորդի համար որոշիչ տարի էր: Այդ իսկ պատճառով, նրան անհրաժեշտ էր կանխել Մերձավոր Արևելքում, տվյալ դեպքում Լիբանանում, նոր ճգնաժամի առաջացումն իր բացասական բոլոր հետևանքներով: Վաշինգտոնը նաև ցանկանում էր, որ Սիրիան համաձայնվի մայիսի 30-ին Գոլաններում խաղաղապահ «կարմիր բերետների» մանդատի երկարաձգմանը: Հակառակ դեպքում, հօդս կցնդեին Քիսինջերի բոլոր դիվանագիտական հաջողությունները և կստիպեին Ֆորդին իր նախընտրական պայքարն իրականացնել Մերձավոր Արևելքում ընթացող նոր ճգնաժամի ստվերի տակ:

Ամերիկացիները միևնույն ժամանակ նշում էին, որ «սիրիացիների ներկայությունը Լիբանանում Իսրայելի օգտին է, քանի որ Դամասկոսին ենթակա ուժերը կարգելեն միջադեպերը Իսրայելի հյուսիսային սահմանում»: Ամերիկացիները շեշտում էին, որ «ներխուժումը Լիբանան իր հերթին կթուլացնի Սիրիային և կստիպի նոր համաձայնագիր ստորագրել Գոլանների վերաբերյալ»:[371]

Ապրիլի վերջին Լիբանանում նոր նշանակված ամերիկյան դեսպան Ֆրենկ Մելոյը անգամ քննադատեց Քիսինջերին. «Իսրայելցիներին սիրաշահելու նպատակով մենք չափազանց երկար զսպեցինք սիրիացիներին՝ Լիբանան մուտք գործելու հարցում: Դրա հետևանքով էլ ավելի շատ զոհեր եղան»: Այդ օրերին իսրայելական «Դավար» օրաթերթը այսպես էր վերլուծում ամերիկյան դիրքորոշումը լիբանանյան ճգնաժամի նկատմամբ. «ամերիկյան տեսանկյունից լիբանանյան խնդրում միակ լուսավոր կետը Սիրիայի հետ գաղտնի համագործակցությունն է»:[372] Պետքարտուղարության պաշտոնյաները անկեղծորեն նշում էին, որ Քիսինջերը մեծ սխալ է թույլ տվել՝ փորձելով առանձնացնել Սիրիան և Եգիպտոսը: Դրա հետևանքով Եգիպտոսը մեկուսացվել է և կորցրել արաբական երկրների վրա ազդելու իր

369 Seale P. Asad of Syria. The Struggle for the Middle East, p.279.

370 "The Times", 13.09.1976: Ford Library, WHCF CD 71, Box 27, 13 April, 1976.

371 «Yedioth Ahronot» 24.03.1976; «Haaretz», 11.06.1976:

372 Harik I. Lebanon: Anatomy of Conflict, p.121.

կարողությունը: Այդ քաղաքականության արդյունքը եղավ նաև այն, որ ամերիկացիները լիբանանյան ճգնաժամի սկզբնական շրջանում չկարողացան համագործակցել սիրիացիների հետ:

Ներխուժումից հետո կարճ ժամանակում Լիբանանի մեծ մասը հայտնվեց սիրիական հսկողության տակ, սակայն բախումները շարունակվեցին (մասնավորապես Բեյրութում): Սիրիական ներխուժումը դատապարտեցին արաբական երկրները, հատկապես Եգիպտոսը, որը միանալով Իրաքին, Լիբիային և ՊԱԿ-ին՝ փորձեց հակազդել սիրիական գործողություններին:

Հիշատակման է արժանի նաև այն տեսակետը, որի համաձայն, սիրիական միջամտությունը իրականացվեց Քիսինջերի կողմից մշակած քաղաքականության շրջանակներում: Ըստ այդ քաղաքականության, ներխուժման արդյունքում Սիրիան պետք է ջախջախեր ՊԱԿ-ը և որպես փոխհատուցում, ստանար Գոլանները, իսկ Հորդանանը՝ Արևմտյան ափը: Այնուհետև, պետք է Pax Americana հաստատվեր տարածաշրջանում՝ բուլացնելով ծայրահեղական վարչակարգ ունեցող արաբական երկրները և նվազագույնի հասցնելով այնտեղ Խորհրդային Միության ազդեցությունը:[373]

Սակայն իրականում Վաշինգտոնը, չունենալով համապարփակ մշակված քաղաքականություն լիբանանյան ճգնաժամի վերաբերյալ, շփոթված էր Լիբանանում ընթացող պատերազմով՝ դիտարկելով այն զուտ որպես արաբ-իսրայելական հակամարտության շարունակություն: Իսկ ինչ վերաբերում է Սիրիային, ապա նա ոչ ամերիկյան, ոչ էլ՝ առավել ևս, իսրայելական «խաղ էր խաղում» Լիբանանում, թեկուզ այն պարզ պատճառով, որ ոչ Քիսինջերը և ոչ էլ Ֆորդը որևէ լուրջ խաղ չէին մտահղացել, բացի արդեն վերը նշվածից՝ չթույլատրել լայնածավալ արաբ-իսրայելական պատերազմի սանձազերծումը:

1976թ. հոկտեմբերի 18-ին Էր-Ռիյադում կայացավ արաբական երկրների ղեկավարների համաժողովը, որին մասնակցեց նաև ՊԱԿ-ի նախագահ Յասիր Արաֆաթը: Համաժողովի մասնակիցները քննարկեցին Լիբանանում ստեղծված իրավիճակը և կրակի դադարեցման հնարավորությունները: Համաժողովի ընթացքում Ասադին հաջողվեց որոշակի առաջխաղացում արձանագրել սիրիա-եգիպտական հարաբերություններում, ինչպես նաև Եգիպտոսի կողմից Լիբանանում Սիրիայի առաջնային դերի ճանաչման հարցում: Մի քանի օր հետո, հոկտեմբերի 25-26-ին, Կահիրեում տեղի ունեցավ արաբական երկրների ղեկավարների հաջորդ հանդիպումը, որտեղ վավերացվեցին Ռաբատում ընդունված որոշումները, այդ թվում ամենակարևորը՝ Լիբանանում «կարգն ու օրինականությունը վերականգնելու նպատակով արաբական

[373] Quandt W. Decade of Decisions: American Policy toward the Arab-Israeli Conflict 1967-1976, p.283.



խաղաղապահ ուժերի կազմավորման մասին»:[374] Այդ որոշման համաձայն, Սիրիան փաստորեն հատուկ կարգավիճակ էր ստանում Լիբանանում, քանի որ վերոհիշյալ ուժերը կազմված էին լինելու հիմնականում սիրիացիներից:

## *ՔԵՄՓ-ԴԵՎԻԴԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒՄԸ ԵՎ ՍԻՐԻԱՆ*

«Սինայ-2» համաձայնագրի ստորագրումից հետո արաբական աշխարհը կարծես թե նորից միավորվում էր՝ Եգիպտոսը և Սիրիան վերսկսեցին երկխոսությունը, իսկ Հորդանանը բարելավեց իր հարաբերությունները Սիրիայի և ՊԱԿ-ի հետ: Ի հայտ եկած միավորման այդ միտումները պայմանավորված էին թերևս Լիբանանում հաստատված ժամանակավոր զինադադարով, ինչպես նաև ԱՄՆ-ում կայանալիք նախագահական ընտրություններից առաջ նոր դիվանագիտական փուլին նախապատրաստվելու հանգամանքով:

Դեկտեմբերի 18-21-ը Ասադը պաշտոնական այցով ժամանեց Եգիպտոս, ուր երկու երկրների ղեկավարները որոշեցին ստեղծել Միացյալ Քաղաքական Ղեկավարություն և համատեղ կոչ արեցին 1977թ. մարտին բոլոր կողմերի մասնակցությամբ վերսկսել Ժնևի համաժողովի աշխատանքները:[375]

Այսպիսով, հսկողություն հաստատելով Լիբանանում, բարելավելով ու սերտացնելով հարաբերությունները Հորդանանի և Սաուդյան Արաբիայի հետ, Սիրիան աստիճանաբար վերածվում էր տարածաշրջանային ուժի, որն «ի վիճակի էր դառնում դիմագրավել գերտերությունների ճնշումներին»:[376]

1976թ. ընթացքում և 1977-ի սկզբում ամերիկյան լրագրողներին տված իր հարցազրույցներում Ասադը շարունակ նշում էր, որ Սիրիան ցանկանում է վերսկսել բանակցությունները Ժնևում և խաղաղության համաձայնագիր ստորագրել Իսրայելի հետ, պայմանով, որ վերջինս դուրս բերի իր զորքերը 1967թ. պատերազմի ընթացքում գրաված արաբական բոլոր տարածքներից և համաձայնվի Արևմտյան ափում և Գազայի հատվածում Պաղեստինյան պետության ստեղծման հետ: Ասադը նաև կարևորում էր Միացյալ Նահանգների միջնորդական ջանքերն ու Մերձավոր Արևելքի քաղաքական կարգավորման հարցում ունեցած դերը:[377]

[374] Սիրիական զորքերի քանակը սահմանվեց մինչև 30 հազար: Խաղաղապահ ուժերի մեջ մտան նաև Սաուդյան Արաբիայի, Լիբիայի, Սուդանի և այլ երկրների զինվորները:

[375] «الأهرام», 22.12.1976:

[376] 1977թ. մարտի 6-ին "Observer"-ում տպագրված Պատրիկ Սիլի հետ Ասադի հարցազրույցից:

[377] "Washington Post", 02.12.1976; "Time", 17.01.1977.

Տարածաշրջանում լարվածության թուլացմանը և համապարփակ խաղաղության հաստատմանն ուղղված ջանքերը նոր թափ ստացան 1976թ. ԱՄՆ նոր նախագահի՝ Ջիմմի Քարթերի ընտրությունից հետո: Վերջինս իրականացնելով բաց արտաքին քաղաքականություն, փաստորեն վերջ դրեց քիսինջերյան գաղտնի, «մեկ հոգանոց» դիվանագիտությանը: Քիսինջերի «քայլ առ քայլ» քաղաքականությանը Քարթերը հակադրեց համապարփակ կարգավորմանն ուղղված մի նոր քաղաքականություն, որը «ճանաչում էր պաղեստինցիների իրավունքը և կոչված էր իրական խաղաղություն հաստատելու արաբների և հրեաների միջև»:[378]

Ի տարբերություն նախկին նախագահի, Քարթերը գտնում էր, որ Սիրիան մերձավորարևելյան քաղաքականության կարևոր դերակատարներից մեկն է: Ամերիկյան նոր նախագահի նման հուսադրող կեցվածքը հիմք ծառայեց սիրիական որոշ պաշտոնաթերթերին գրելու, որ «Քարթերը փորձում է ազատագրել ամերիկյան քաղաքականությունը սիոնիստական կախվածությունից»:[379] Սակայն մեծ էր Դամասկոսի հիասթափությունը, երբ Քարթերը հրապարակայնորեն ընդունեց Իսրայելի համար «պաշտպանված սահմաններ» հաստատելու գաղափարը, որը հնարավորություն էր տալիս Իսրայելին ոչ միայն հրաժարվել 1967թ. պատերազմի ընթացքում գրաված տարածքները վերադարձնելուց, այլև իսրայելական սահմանների պաշտպանվածությունը նախապայման համարելով, խոստանալու բարենպաստ պայմաններ էր ստեղծում իր դաշնակցի համար: Ըստ Ասադի, «ԱՄՆ-ի հանրապետական և ժողովրդավարական երկու կուսակցություններն էլ հարցի կարգավորմանն են ձգտում արաբական իրավունքների և տարածքների հաշվին»:[380]

1977թ. փետրվարին ԱՄՆ նոր պետքարտուղար Սայրուս Վենսը իրականացրեց իր առաջին այցելությունը տարածաշրջան: Դամասկոսում Վենսի հետ հանդիպումից հետո Ասադը խոստովանեց. «Պետքարտուղար Վենսը, որպես ամերիկյան վարչակազմի տրամաբանող և լուրջ ներկայացուցիչ, դրական տպավորություն թողեց: Սակայն նա որևէ հստակ առաջարկ չներկայացրեց, որը կարող էր հիմք դառնալ իմ հետագա որոշումների համար: Վենսի այցելությունն ուներ զուտ փաստեր հավաքելու նպատակ»:[381] ԱՄՆ պետքարտուղարը

378 Կարապետյան Ռ. Սիրիա-ամերիկյան հարաբերություններ, էջ 78: Քարթերն առաջին ամերիկյան նախագահն էր, որ 1977թ. մարտին իր ելույթում հրապարակայնորեն ընդունեց «Պաղեստինյան հայրենիքի» ստեղծման անհրաժեշտությունը:

379 «تشـــرين», 09.05.1977:

380 Damascus Domestic Service, 15, 20, 23 January 1977; ; «البعث», 15.03.1977.

381 «الأهرام», 01.03.1977.



սիրիական ղեկավարության հետ քննարկեց նաև Ասադի և Քարթերի միջև հանդիպում կազմակերպելու հնարավորությունները: Իսրայելյան աղբյուրների համաձայն, Ասադը մերժել էր Քարթերի հետ Վաշինգտոնում հանդիպելու գաղափարը՝ առաջարկելով այն իրականացնել «որևէ տեղ Եվրոպայում»:[382]

1977թ. մարտին Վաշինգտոնում Իսրայելի վարչապետ Ռաբինի հետ հանդիպումից հետո Քարթերը հայտարարեց մերձավորարևելյան համապարփակ կարգավորման երեք հիմնական սկզբունքները՝

1. Խաղաղության և բնականոն հարաբերությունների հաստատման անհրաժեշտությունը (առևտուր, դիվանագետների փոխանակում և այլն):

2. Բոլոր կողմերի համար անվտանգության երաշխիքների ապահովումն ու 1967-ի պատերազմից առաջ գոյություն ունեցող սահմանների վերականգնումը:

3. Պաղեստինյան հիմնահարցի լուծման անհրաժեշտությունը, որն «ունի ինչպես քաղաքական, այնպես էլ մարդասիրական նշանակություն»:[383]

Քարթերի շահագրգռվածությունն արագ կարգավորման մեջ կարելի է բացատրել նրանով, որ ԱՄՆ նախագահը, ցանկանալով արդարացնել Ասադի և Սադաթի սպասումները, միաժամանակ ձգտում էր զրկել Իսրայելին բանակցություններից խուսափելու հնարավորությունից:

Գոլանների վերաբերյալ ԱՄՆ-ի պետքարտուղարությունը առաջարկել էր կարգավորման հետևյալ տարբերակը: Բարձունքներում տեղակայվելու են նախազգուշացնող կայաններ, ինչպես նաև իսրայելական սահմանափակ ուժեր՝ սիրիական հնարավոր հարձակումը կանխելու նպատակով: Որպես անվտանգությունն ապահովող մեկ այլ միջոց առաջարկվում էր սահմանափակել այն ինքնաթիռների քանակը, որոնք օգտվում են Հորդանանի և Սիրիայի ժամանակակից օդանավակայաններից: Վերջինների վերահսկողությունը նախատեսվում էր հանձնարարել միջազգային դիտորդներին»:[384]

1977թ. մայիսի 9-ին Ժնևում կայացավ Ասադի հանդիպումը Քարթերի հետ, որի ընթացքում ԱՄՆ նախագահը մեկ անգամ ևս վերահաստատեց «Պաղեստինյան օջախի» ստեղծման նկատմամբ իր դրական վերաբերմունքը, նշելով, որ «Միացյալ Նահանգները շարունակելու են համոզել Իսրայելին՝ վերադառնալ մինչև 1967թ. գոյություն ունեցող սահմանները»:[385] Ասադն իր հերթին, հայտնեց

382 «Haaretz», 03.03.1977:

383 "Major Problems in American Foreign Relations:". W.B.Quandt. Carters Creative, Pragmatic Summit Diplomacy, Ch.13, p. 695.

384 «Haaretz»,13.05.1977:

385 Տես «البعث»,17.02.1977 և «تشـــرين», 11.03.1977, Ջուրրան Կուրիյայի հոդվածները:

Քարթերին, որ արաբական գրավված տարածքներից իսրայելական դուրսբերման (այդ թվում նաև Արևելյան Երուսաղեմից) և Պաղեստինյան միավոր ստեղծելու դեպքում (անգամ Հորդանանի հետ կոնֆեդերատիվ հիմունքներով), «Դամասկոսը կհամաձայնվի վերջ դնել Իսրայելի հետ պատերազմական վիճակին և իրականացնել նրա անվտանգության ապահովման հետ կապված որոշ միջոցառումներ»: Ասադը նաև տեղեկացրեց Քարթերին, որ պատերազմական վիճակի վերացումը կհանգեցնի խաղաղության հաստատմանն ու հոգեբանական բնույթի հարցերի լուծմանը:[386]

Պետք է արձանագրել, որ Ասադն ընդհանուր առմամբ գոհ մնաց Ժնևում Քարթերի հետ հանդիպման արդյունքներից:[387] Սիրիական լրատվական միջոցները վերոհիշյալ հանդիպումն անգամ որակեցին որպես «շրջադարձային»՝ մերձավորարևելյան խնդրի կարգավորման համար:[388] Հանդիպումից տպավորված էր նաև Քարթերը, որը տարիներ անց կգրի հրեաների քննադատությանն արժանացած իր գրքում. «Ես հանդիպեցի մի ղեկավարի, որն ազնիվ էր բանակցությունների ժամանակ՝ խաղաղության գործընթացի վերաբերյալ արաբական մոտեցումները հաղորդելու գործում»:[389]

Հանդիպման ընթացքում Իսրայելի հետ քաղաքական կարգավորման վերաբերյալ Ասադի առաջարկը կրկնում էր 1974թ. վերջինիս որդեգրած երկփուլային ռազմավարությունը, ըստ որի, առաջին փուլում նախատեսվում էր ստորագրել չպատերազմելու համաձայնագիր (այսպես կոչված «խաղաղության պայմանագիր»), 1967թ. գրավված արաբական բոլոր տարածքները, ներառյալ Արևելյան Երուսաղեմը, վերադարձնելու և Պաղեստինյան պետություն ստեղծելու դիմաց: Իսկ երկրորդ փուլում՝ դիվանագիտական և տնտեսական հարաբերությունների (այսինքն լիակատար խաղաղության) հաստատումը Իսրայելի հետ:

Ասադը Քարթերին հայտնեց, որ խաղաղության բանակցությունները պետք է համապատասխանեն ՄԱԿ-ի 242 և 338 բանաձևերին և ներառեն Խորհրդային Միությունը: Սիրիայի ղեկավարը կտրականապես մերժում էր Իսրայելի և որևէ արաբական երկրի միջև երկկողմ բանակցությունների անցկացումը, ինչպես նաև «դեմ էր ԽՍՀՄ-ին գործընթացից դուրս թողնելուն»:[390]

Ասադի կարծիքով Սիրիան, ի տարբերություն Իսրայելի և ԱՄՆ-ի, հետևյալով է ապացուցել իր ցանկությունը գործելու հանուն

[386] Carter, Jimmy. The Blood of Abraham. Boston,1985, p.72.

[387] Հ.Ասադի մամլո ասուլիսը 1977թ. օգոստոսի 7-ին Ս.Վենսի Դամասկոս այցելության կապակցությամբ, տպագրվել է «تشرين»-ում 08.08.1977:

[388] Damascus Domestic Service, 09. 05. 1977.

[389] Carter, Jimmy. Palestine Peace not Apartheid, pp.71-81.

[390] Նույն տեղում, էջ 73:



խաղաղության.

- Արաբ-իսրայելական հակամարտությանը վերաբերող ՄԱԿ-ի բանաձևերը հարգելով
- Պաշտպանելով միջազգային մեծամասնության այն որոշումը, որ պաղեստինցիները, ինչպես և աշխարհի ուրիշ ժողովուրդներ, ունեն ինքնորոշման իրավունք
- Հարգելով միջազգային օրենքները, որոնք արգելում են ուրիշներին պատկանող հողերի զավթումն ու բռնակցումը /աներսիա/
- Սեփական սահմանները հաստատելով և հարգելով ուրիշների միջազգայնորեն ճանաչված սահմանները
- Առաջարկելով դուրս բերել սիրիական ուժերը Լիբանանից, երբ այդ կխնդրի լիբանանյան կառավարությունը:[391]

1976թ. նոյեմբերին «Վաշինգտոն փոստ» օրաթերթին տված հարցազրույցում Ասադը նշեց, որ «ՄԱԿ-ի բանաձևերը պետք է իրականացվեն ամենայն ճշտությամբ՝ իսրայելական ուժերի դուրսբերում գրավված արաբական բոլոր տարածքներից, պաղեստինյան պետության ստեղծում և Իսրայելի հետ պատերազմական վիճակի վերացում: Իսրայելի բարձրացրած այլ հարցերը երկրորդական են և որևէ կապ չունեն խաղաղության հաստատման հետ: Նրանք (իսրայելցիները) շարունակաբար խոսում են դիվանագիտական հարաբերությունների, տնտեսական, առևտրական և մշակութային փոխանակումների անհրաժեշտության մասին: Սակայն վերոհիշյալ հարաբերությունները կարող են բացակայել նաև իրար հետ չպատերազմող երկու պետությունների միջև»:[392]

Քարթերն ամբողջովին համամիտ էր Իսրայելի այն տեսակետին, որ խաղաղության հաստատումն ընդգրկում է բնականոն հարաբերությունների հաստատում՝ դեսպանների փոխանակում, առևտուր, բաց սահմաններ, զբոսաշրջություն և տարածաշրջանային համագործակցություն: Այդուհանդերձ, ԱՄՆ նախագահը կողմ էր գրավված տարածքներից Իսրայելի դուրսբերմանը, Գազայում և Արևելյան ափում պաղեստինյան «հայրենիքի» ստեղծմանը:

1977թ. մայիսին Իսրայելի նոր վարչապետ ընտրվեց աջակողմյան Լիկուդ կուսակցության ղեկավար Մենախեմ Բեգինը: ԱՄՆ պետքարտուղար Վենսի խոսքերով, «Բեգինի օրոք պարզ դարձավ, որ Լիկուդը մտադիր է իր պահանջները ներկայացնել» գրավված արաբական տարածքների նկատմամբ:[393] Ընտրվելուց անմիջապես հետո

[391] Carter, Jimmy. Palestine Peace not Apartheid, p.78.

[392] Տես՝ Զոգեֆ Կրաֆթի հարցազրույցը Ասադի հետ: "Washington Post", 02.12.1976. «تشرين», 21.03.1977.

[393] Примаков Е.М. История одного сговора, с.99.

Բեգինն աշխուժացրեց Գոլաններում հրեաների վերաբնակեցման ուղղությամբ նախորդ ղեկավարների քաղաքականությունը: Այնտեղ նոր բնակավայրեր ստեղծելու գործընթացը նոր թափ ստացավ և նույնիսկ գերազանցեց գրավված արաբական այլ տարածքներում վերաբնակեցման տեմպերը: Իսրայելի գյուղատնտեսության նախարար Արիել Շարոնը հայտարարեց, որ «Իսրայելի ջրերի 25 տոկոսը հոսում են Գոլաններից, այդ իսկ պատճառով մենք չպետք է դուրս գանք այնտեղից»:[394] Ա.Շարոնը ներկայացրեց նաև Գոլաններում նոր հրեական բնակավայրերի ստեղծումը նախատեսող Չորսամյա Ծրագիր (1977-1981):

Իսրայելի նոր կառավարությունը բնավ մտադիր չէր դուրս բերել իր զորքերը Գոլաններից, սակայն համաձայն էր «որոշ աննշան ճշտումների՝ զինադադարի գծի ուղղությամբ, այն էլ ոչ ավելի, քան մի քանի հարյուր մետր»:[395]

Վաշինգտոնում բացասաբար ընդունվեց Բեգինի ընտրությունը, որը, խոչընդոտելով արաբ-իսրայելական կարգավորումը, էլ ավելի դժվարացրեց ամերիկյան քաղաքականության իրականացումը: Խոսվեց անգամ Վաշինգտոնի և Թել-Ավիվի լուրջ տարաձայնությունների մասին: Իսրայելական մեկնաբան Ջեև Պլիցերը գրում էր, որ տարաձայնությունները հիմնականում վերաբերում էին «Պաղեստինյան հարցին»: Ըստ Պլիցերի, Միացյալ Նահանգները տեղեկացրել էին Իսրայելին, որ ԱՄՆ-ի ներկայիս մերձավորարևելյան քաղաքականությունը հիմնված է ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի 242 և 338 բանաձևերի վրա: Այստեղ պետք է նկատի ունենալ, որ եթե Գոլանների վերաբերյալ ամերիկացիները հիմնականում կողմ էին Իսրայելի դիրքորոշմանը, ապա պաշտոնական Վաշինգտոնը վճռականորեն դեմ էր Գազայի և Արևմտյան ափից իսրայելական դուրսբերումը բացառող առարկություններին:

Բեգինի կարծր դիրքորոշումն անհանգստացնում էր ԱՄՆ վարչակազմին, քանի որ առանց պաղեստինցիների մասնակցության և գրավված տարածքներից դուրսբերման վերաբերյալ բանակցությունների անցկացման, անիմաստ և անհավանական էր դառնում Ժնևում համաժողովի գումարումը, որին ձգտում էր Քարթերը: Ասադի կարծիքով, «ԱՄՆ-ը կարող է հաջողության հասնել այդ հարցում միայն այն դեպքում, եթե կարողանա չեզոք կեցվածք բռնել: Այն դեպքում, եթե Իսրայելը գիտակցի, որ ամերիկյան ղեկավարությունը իրոք չեզոք դիրք է գրավել կարգավորման հարցում, ապա նա այլևս չի շարունակի բռնագրավված պահել արաբական տարածքները, ինչպես և ոտնահարել

[394] «Maariv», 19.06.1997:

[395] «Maariv»,09.09.1977:



պաղեստինցիների իրավունքները:»[396] Սակայն խորհրդային արևելագետ Լ.Մեդվեդկոյի կարծիքով, «Եթե տարածաշրջանային այլ հակամարտությունների նկատմամբ ԱՄՆ-ը փորձում էր գոնե «չեզոքության» և «անկողմնակալության» տպավորություն ստեղծել, ապա Մերձավոր Արևելքի կարգավորման հարցերում Քարթերի վարչակազմը նույնիսկ չէր էլ փորձում թաքցնել իր իսրայելամետությունը»:[397]

Քարթերից ստացված «դրական տպավորությունը» չխանգարեց Ասադին խորացնելու հարաբերությունները ԽՍՀՄ-ի հետ՝ տնտեսական, տեխնիկական, ռազմական օգնություն ստանալու նպատակով: Միաժամանակ, գիտակցելով խաղաղության հաստատման գործում Վաշինգտոնի կարևորությունը, Ասադը շարունակ կոչ էր անում ԱՄՆ-ին՝ ակտիվացնել ջանքերն այդ ուղղությամբ: Այդ կապակցությամբ հարկ ենք համարում ընգծել գերտերությունների միջև հավասարակշռությունը պահպանելու՝ Ասադի ցուցաբերած փայլուն ունակությունները, որպես իրատես քաղաքական գործիչ ընթացիկ պահից առավելագույն օգուտ կորզելու նրա հմտությունն ու վարպետությունը:

Պետք է նշել, որ Ասադը վստահ էր, որ միայն արաբական երկրների համաձայնեցված և միասնական գործելակերպը ԱՄՆ-ի նկատմամբ կարող է լուրջ նախադրյալներ ստեղծել լիակատար կարգավորման համար: Պաշտոնական Դամասկոսը կարծում էր, որ եթե այս անգամ խափանվի մեկ այլ առանձին եգիպտա-իսրայելական գործարքի՝ «Սինայ -3»-ի ստորագրումը, ապա Իսրայելը ստիպված կլինի զիջումների դիմել: Հետաքրքրական է, որ 1977թ. օգոստոսին Ասադը հայտարարում էր, որ սիրիա-եգիպտական հարաբերությունները «որոշ կնճիռներ ունենալով անցյալում, ներկայումս նորից եղբայրական են» և որ ինքն ու Սադաթը միասնաբար աշխատում են «համախմբել ու հզորացնել համատեղ պայքարը արաբական տարածքները վերադարձնելու նպատակով»:[398] Ասադը բացառում էր Սադաթի կողմից նոր առանձին համաձայնագիր ստորագրելու հնարավորությունը, նշելով, որ «արաբական երկրների ղեկավարների և ԱՄՆ-ի ու այլ ուժերի հետ բանակցությունները նպատակաուղղված են միմիայն համապարփակ կարգավորմանը»:[399]

Թեև Սադաթը, կողմ էր արտահայտվում իսրայելական զորքերի լիակատար դուրսբերմանը արաբական տարածքներից, իրականում շարունակում էր մրցակցությունը Ասադի հետ, առարկում էր ընդհուպ

[396] "Newsweek", 01.08.1997. Interviews with the King Hussein of Jordan and Syrian President Hafez Asad.

[397]Медведко Л.М. К востоку и западу от Суэца, с.339.

[398] "Newsweek", 01.08.1997. Interviews with the King Hussein of Jordan and Syrian President Asad, carried out by Arnaud de Bourchgrave.

[399] Նույն տեղում:

մինչև հոկտեմբերի կեսերը միասնական արաբական պատվիրակության մասնակցությանը Ժնևի համաժողովին և նախընտրում առանձին համաձայնագիր ստորագրել Իսրայելի հետ: Արդեն օգոստոսի 2-ին Կահիրեում հանդիպելով ԱՄՆ-ի պետքարտուղար Վենսին և առանց խորհրդակցելու Սիրիայի հետ, Սադաթն առաջարկեց կազմակերպել արաբական երկրների և Իսրայելի արտգործնախարարների հանդիպումը Վաշինգտոնում՝ առաջիկա համաժողովի ընթացակարգի հետ կապված հարցերն «աշխատանքային խմբում» քննարկելու նպատակով: Թեև Սադաթի այս «ինքնագլուխ» քայլը մտահոգիչ համարվեց Դամասկոսում, սակայն դրանից լուրջ հետևություններ չարվեցին:

Հանդիպելով Վենսին, երբ վերջինիս այցելել էր տարածաշրջան, Ասադը մերժեց Սադաթի առաջարկը՝ հավելելով, որ «եղբայր Սադաթը առաջարկելով այդ խմբի ստեղծումը, ամենայն հավանականությամբ նպատակ ուներ նոր լիցք հաղորդել խաղաղության գործընթացին»: Ասադը հայտնեց Վենսին նաև այն մասին, որ «առաջին հայացքից Սիրիան որևէ մեծ օգուտ չի տեսնում այսպիսի խմբի ստեղծումից և ոչ ուղղակի, ոչ էլ անուղղակի որևէ հանդիպում տեղի չի ունենա Իսրայելի և արաբական երկրների արտգործնախարարների միջև»:[400]

Մինչ այդ Ասադի թիկունքում Սադաթի օգնական Հասան Թուհամին և Իսրայելի արտգործնախարար Դայանը սեպտեմբերին Մարոկկոյում գաղտնի բանակցություններ էին վարում՝ քննարկելով Ժնևի շրջանակներից դուրս համաձայնագրի կնքման հնարավորությունները:

Այս հանդիպումները չանհագստացրեցին ամերիկացիներին, քանի որ նմանատիպ շատ հանդիպումներ էին տեղի ունեցել արաբական և իսրայելական ղեկավարների միջև: Հետագայում արդեն պարզ դարձավ, որ Եգիպտոսը, արաբական միասնական շահերին հակառակ, նախապատրաստվում էր Իսրայելի հետ նոր գործարք կնքելու:

Վաշինգտոնին, որը ձգտում էր Ժնևում համաժողովի անցկացմանը, տվյալ պահին չէր կարող հրապուրել առանձին եգիպտա-իսրայելական համաձայնագրի ստորագրման հեռանկարը: Ամերիկացիները, սակայն, պատշաճ ուշադրություն չդարձրեցին Ասադի և Սադաթի միջև եղած մրցակցությանը՝ հավատալով վերջինիս այն հավաստիացումներին, որ ինքը չի կարող «մարսել» Իսրայելի հետ նոր համաձայնագրի ստորագրումը: Իսրայելյան ղեկավարությունը ուղղակի բանակցություններ ձեռնարկելով Եգիպտոսի հետ և հետագայում օգտագործելով ավանդական ամերիկյան լոբբիի ճնշումը, ստիպեց ամերիկյան վարչակազմին՝ աջակցել իր որդեգրած քաղաքականությանը:

1977թ. սեպտեմբերին Ժնևում կայանալիք համաժողովից առաջ ԱՄՆ պետքարտուղարության առջև ծառացել էր 4 հիմնական խնդիր՝

1. Վաշինգտոնը փորձում էր կողմերից ստանալ խաղաղության

[400] Damascus Domestic Service, 4,12 August, 1977.



համաձայնագրի գրավոր նախագծերը: Իսրայելը ներկայացրեց բավական ծավալուն իրավական մի փաստաթուղթ, որտեղ, սակայն, սահմանային ու բնակավայրերի կարգավիճակի հարցերը անպատասխան էին թողնվել: Սիրիան և Հորդանանը ներկայացրեցին ստորագրվելիք համաձայնագրի հիմնական սկզբունքները:

2. Պետքարտուղարությունը մտահոգված էր Ժնևում պաղեստինյան պատվիրակության ներկայացուցչական հարցով: Վերջապես, հոկտեմբերի կեսերին պարզ դարձավ, որ ՊԱԿ-ը համաձայնվել է միասնական արաբական պատվիրակության գաղափարի հետ, որի մեջ պետք է ընդգրկվեր նաև պաղեստինցի (սակայն ոչ ՊԱԿ-ի ներկայացուցիչը):

3.Վաշինգտոնի ջանքերն ուղղված էին նաև արարողակարգային որոշ հարցերի լուծմանը: Սադաթն այն կարծիքին էր, որ համաժողովը պետք է նախօրոք լավ կազմակերպված լինի, հակառակ դեպքում «ամեն ինչ կխառնվի և որևէ արդյունք չի արձանագրվի»: Նա քիսինջերյան տարբերակի կողմնակից էր, որի համաձայն Ժնևում հրապարակային համաժողովին պետք է նախորդեին գաղտնի բանակցությունները: Սադաթը տագնապում էր, որ եթե բանակցությունները միանգամից տեղի ունենան Ժնևում, ապա արաբական երկրները կփորձեն սահմանափակել խուսանավելու նրա հնարավորությունները, իսկ ԱՄՆ-ը կհայտնվի ամերիկյան հասարակական կարծիքի և իսրայելամետ կոնգրեսի ճնշման տակ:

Իսրայելը նույնպես թերահավատ էր Ժնևում կայանալիք բանակցությունների նկատմամբ: Արտգործնախարար Մոշե Դայանը զգուշացրեց, որ միասնական արաբական պատվիրակության մասնակցությունը բացասական հետևանքներ կունենա համաժողովի աշխատանքների վրա: Սիրիան և ավելի նվազ չափով՝ Հորդանանը, կողմնակից էին մեկ արաբական պատվիրակության մասնակցությանը: Այն դիտվում էր որպես առանձին եգիպտա-իսրայելական համաձայնագրի ստորագրումը խափանելու գործնական միջոց:

4. ԱՄՆ-ի համար լուրջ գլխացավանք դարձավ Խորհրդային Միության ներկայացրած համատեղ հայտարարության նախագիծը: Վերջինս «հավասարակշռված» փաստաթուղթ էր, քանի որ այնտեղ չէր նշվում պաղեստինյան պետության կամ պաղետինյան մասնակցության խնդիրը և բավարար ուշադրություն էր դարձվում տարածաշրջանային երկրների անվտանգության ապահովման անհրաժեշտության ու նրանց միջև բնականոն հարաբերությունների հաստատման հարցերին: Նախագծում հիմնականում օգտագործված էին ՄԱԿ-ի 242 բանաձևի դրույթները: Փաստորեն միակ նորույթը նախագծի մեջ, որը դեռևս չէր օգտագործվել ԱՄՆ-ի կողմից և առաջխաղացում կարող էր համարվել ամերիկյան նախկինում հայտարարված *Պաղեստինյան շահեր*

հասկացության համեմատությամբ՝ փոխարեն, դա *Պաղեստինյան հրավունքներ* ձևակերպումն էր:

Փաստաթղթի նկատմամբ բացասական վերաբերմունք ունենալով հանդերձ, Իսրայելը, ընդհուպ մինչև հոկտեմբերի 1-ը՝ «որևէ կերպ չարձագանքեց» խորհրդա-ամերիկյան համատեղ հայտարարությանը:[401] Միայն Վենս-Գրոմիկո հայտարարությունից հետո իրեական լոբբին ԱՄՆ-ում և Իսրայելը աղմուկ բարձրացրեցին և այնպես վարպետորեն, որ չորս օր հետո, երբ Դայանը մեկնեց Վաշինգտոն, Քարթերը ստիպված եղավ ընդունել ամերիկա-իսրայելական աշխատանքային փաստաթուղթը, որը փաստորեն ի չիք դարձնելով խորհրդա-ամերիկյան հայտարարությունը, Սիրիայի ինչպես նաև ԽՍՀՄ-ի մտադրության հակառակ, լիովին բավարարեց Իսրայելի այդ թվում նաև Եգիպտոսի ցանկությունը՝ Ժնևում երկկողմ բանակցություններ վարել արաբական յուրաքանչյուր երկրի հետ առանձին: [402]

Ամերիկա-իսրայելական վերոհիշյալ փաստաթղթի ընդունումը փաստորեն մերժում էր ոչ միայն ԽՍՀՄ-ի հետ համագործակցության հնարավորությունը, այլև կասկածի տակ էր դնում Ժնևում համաժողովի գումարումը: Ասադը, որն իրեն «դավաճանված» և խաբված էր համարում Քարթերի կողմից, հասկացավ եգիպտա-իսրայելական առանձին գործարքի կնքման անխուսափելիությունը: Ե.Պրիմակովի կարծիքով, Դայանի Վաշինգտոն այցելությունից հետո ամերիկյան քաղաքականությունը կտրուկ փոփոխության ենթարկվեց, որի հետևանքով մոռացության տրվեց անգամ Ժնևում համաժողովի անցկացման գաղափարը:[403]

Հաճախակի է խոսվում այն մասին, որ համաժողովի անցկացումը Ժնևում անցանկալի էր Սադաթի համար, քանի որ Սիրիայի և ԽՍՀՄ-ի ակտիվ մասնակցությունը կարող էր կապել նրա ձեռքերը և խոչընդոտ դառնալ Բեգինի հետ գործարք կնքելու համար: Որոշ հեղինակներ դրանով են բացատրում 1977թ. նոյեմբերին Սադաթի Երուսաղեմ այցելությունը, ինչպես նաև նրանով, որ Սադաթը ցանկանում էր Խորհրդային Միությանը, ինչպես և Սիրիային հեռու պահել մերձավորարևելյան կարգավորման դիվանագիտական գործընթացից: Անկասկած, ձգտելով «չընկնել խորհրդա-սիրիական ծուղակը», Սադաթն իր սեփական կապի միջոցները հաստատեց Իսրայելի հետ, որտեղից ստացավ հավաստիացումներ, որ առանձին խաղաղության նոր համաձայնագիր ստորագրելու դեպքում նա կստանա Սինայը: Դեռևս հոկտեմբերին Սադաթը փորձում էր հասկանալ, թե ինչ ակնկալիքներ

[401] Major Problems in American Foreign Relations. Ch. 13. Washington and the Arab-Israeli Peace Process. p.697.

[402] Maoz Moshe. Syria and Israel. From War to Peacemaking, p.152.

[403] Примаков Е.М. История одного сговора, с.139.



կարող է ունենալ ամերիկացիներից:

Կարծիքներ էին հայտնվում նաև, որ ամերիկա-խորհրդային հայտարարությունից հետո Եգիպտոսի նախագահը, «հոգնելով» իսրայելական ճնշմանը հակազդելու Քարտերի անկարողությունից և ժամանակի վատնումից, վերջնականապես հաստատվեց Իսրայելի հետ ամեն գնով համաձայնության գալու մտադրության մեջ՝ նախաձեռնելով իր այցելությունը Երուսաղեմ:

Ե.Պրիմակովը, հերքելով ամերիկացիների վարկածը, թե Վաշինգտոնը որևէ կերպ չի մասնակցել Երուսաղեմ Սադաթի այցելության նախապատրաստմանը, նշում է անձամբ Քարտերի և նրա վարչակազմի ակտիվ աշխատանքները Սադաթի նախաձեռնությունը խրախուսելու ուղղությամբ:[404] Ամերիկացիներին հաջողվեց համոզել Սադաթին, որ նրա այցելությունը Երուսաղեմ «պատմական բացառիկ հնարավորություն կընձեռի» ԱՄՆ-ին՝ սիոնիստական ճնշմանը դիմագրավելու և իսրայելական ղեկավարությանը խաղաղություն պարտադրելու համար, այն պարզ հիմնավորմամբ, որ «Սադաթն ինքն է առաջարկել խաղաղություն Իսրայելին, իսկ վերջինս այն մերժել է»:[405]

Պաշտոնական Դամասկոսը հավատացած էր, որ «ամերիկյան օժանդակությունը Սադաթին չի նպաստում խաղաղության հաստատմանը: Եվ Միացյալ Նահանգներն իր սեփական քայլերը հարմարեցնում է Սադաթի նախաձեռնություններին»: Այցից առաջ Ասադը նախազգուշացրել էր Եգիպտոսի նախագահին՝ «Արաբական հարցի առթիվ Երուսաղեմ այցելության ծանր ու անցանկալի հետևանքների մասին»:[406] Ասադի կարծիքով, Սադաթի այցելությունը Իսրայել՝ «նշանակում էր Իսրայելի ճանաչում: Նրա այցելությունը Երուսաղեմ՝ նշանակում էր Երուսաղեմի, որպես Իսրայելի անբաժան մայրաքաղաք ճանաչում: Այդ այցելությամբ Սադաթը կոտրեց արաբական միասնականությունն ու ոչնչացրեց տարածաշրջանում խաղաղության հաստատմանն ուղղված բոլոր ջանքերը: Նա թուլացրեց արաբական ճակատն ու գործեց արաբական զանգվածների ձգտումներին ու ցանկություններին հակառակ»:[407]

Կահիրեում ԱՄՆ այդ ժամանակվա դեսպան Հերման Էյլթսը հիշում է, որ ինքն անձամբ է հանձնել Բեգինի հրավերը Սադաթին նույն օրը, երբ Եգիպտոսի նախագահը պատրաստվում էր մեկնել Սիրիա՝ Երուսաղեմ իր կայանալիք այցելության հարցում Հ.Ասադի եթե ոչ աջակցությունը ապա գոնե չեզոքությունն ապահովելու համար: Սիրիայում երկու նախագահները 7 ժամանոց հանդիպում են ունեցել, որի ընթացքում Սադաթին չի հաջողվել համոզել Ասադին: Վերջինս փորձել է

[404] Նույն տեղում, էջ.165:

[405] « الأسبوع العربى », 05.12.1977.

[406] «النهار», 18.11.1977.

[407] "Newsweek", 16.01.1997.

ապացուցել Երուսաղեմ այցելության աննպատակահարմարությունը: Կողմերից յուրաքանչյուրը մնացել է իր կարծիքին: Հանդիպումից հետո Ասադը այդ խոսակցության մասին հայտնել է Սիրիայի կառավարության անդամներին, որոնք Սադաթին դավաճան են համարել և «պահանջել են նրան ձերբակալել»՝ այցը խափանելու նպատակով: Սակայն Ասադը մերժել է, ասելով, «որ արաբական ավանդույթը չի թույլատրում բռնություն հյուրի նկատմամբ»:[408]

Սադաթի այցելությունը դատապարտվեց արաբական երկրների մեծամասնության, մասնավորապես Սիրիայի, Իրաքի, Լիբիայի, Ալժիրի, Հարավային Եմենի, ՊԱԿ-ի կողմից: Այցելությանը անմիջապես հետևող պաղեստինյան և սիրիական ղեկավարների հանդիպումից հետո, հրապարակվեց համատեղ հայտարարություն, ուր նշվեց, որ ամերիկյան օժանդակությամբ կայացած «Սադաթ-Բեգին երկխոսությունը հարցականի տակ դնելով Ժնևում համաժողովի անցկացման հնարավորությունը, նպատակ է հետապնդում առանձին եգիպտա-իսրայելական (հաշվով երրորդ) համաձայնագրի կնքումը»:[409]

Ալժիրը և Լիբիան համաձայնվեցին Սիրիային տրամադրել երկարաժամկետ ֆինանսական օժանդակություն՝ «Իսրայելի դեմ առաջնային արաբական ճակատի պահպանման նպատակով»:[410] Ծոցի արաբական երկրներն ավելի զգույշ դիրքորոշում բռնեցին: Հետաքրքրական է, որ նոյեմբերի 22-ին Դամասկոս այցելության ժամանակ Հորդանանի վարչապետ Մուդար Բադրանը հայտարարեց, որ Ամմանը դիտարկում է Սադաթի այցելությունը որպես «իմաստուն» քայլ և իրեն զգացականորեն չդատելու համար նախընտրում է սպասել այցելության հետևանքներին»:[411] Դամասկոսը պահանջեց Ամմանից 72 ժամվա ընթացքում հայտնել հորդանանյան վերջնական պաշտոնական դիրքորոշումն այդ հարցի վերաբերյալ: Սիրիական աղբյուրների համաձայն, Ամմանի այսպիսի կեցվածքը պայմանավորված էր ամերիկյան ուժեղ ճնշմամբ և միանգամայն տեղավորվում էր Երուսաղեմ Սադաթի այցելությունից հետո Միացյալ Նահանգների ընդունած ռազմավարության շրջանակներում՝ «նվազագույնի հասցնել Սադաթի նախաձեռնության հասցրած վնասը»:[412] Այդ իսկ պատճառով Վաշինգտոնին անցանկալի էին ոչ միայն Սադաթի այցելության գործում ամերիկյան դերակատարության մասին բացահայտումները, այլև այցից

[408] Սիրիայի պաշտպանության նախարար Մ.Տլասի հետ հարցազրույցից: Bregman, Ahron and El-Tahri, Jihan. The Fifty Yeras War. Israel and the Arabs. Based on BBC TV series,pp.129-130.
[409] «الأسبوع العربى», 05.12.1977:
[410] «السفير», 25.11..1977:

[411] Նույն տեղում, 24.11.1977:
[412] Vance C. Hard Choices. Critical Years in America`s Foreign Policy, N.Y., 1983, p.203.



հետո Սիրիայի շուրջ արաբական «մերժողական ճակատի» ստեղծումը:

Տարածաշրջանում ամերիկյան վարկի անկումը, ինչպես նաև արաբական աշխարհում սիրիամետ տրամադրությունները նվազեցնելու նպատակով Քարթերը անձնական նամակներ հղեց Սաուդյան Արաբիայի, Հորդանանի, Սիրիայի և Եգիպտոսի ղեկավարներին: Ասադին ուղղված իր նամակում Քարտերը մասնավորապես գրում էր. «Միացյալ Նահանգները հատուկ կարևորություն են տալիս Սիրիայի դերին, Դամասկոսի հետ շարունակվող համագործակցությանն ու վերջինիս ջանքերին՝ տարածաշրջանում խաղաղություն հաստատելու ուղղությամբ:

Միացյալ Նահանգները հավատացած են, որ համագործակցությունը Սիրիայի հետ սկզբունքային նշանակություն ունի Ժնևում խաղաղության համաժողովի գումարման համար:

Միացյալ Նահանգները լիահույս են, որ արդար և շարունակական խաղաղության հաստատումը Մերձավոր Արևելքում անհնարին է, քանի դեռ չի գտնվել Պաղեստինյան հարցի գործնական լուծումը և քանի դեռ չեն ապահովվել Պաղեստինյան ժողովրդի իրավունքները:

Միացյալ Նահանգները համոզված են, որ նախագահ Սադաթի քայլը պետք է դիտվի ոչ թե որպես անձնական գործողություն, այլ որպես խաղաղության գործընթացի մաս և Ժնևում համաժողովի աշխատանքները վերսկսելուն ուղղված փորձ»:[413]

Դրանից հետո կարծիքներ հայտնվեցին, թե Քարթերի վարչակազմն իբր պատրաստվում է ճնշում բանեցնել Բեգինի վրա, որպեսզի վերջինս զիջումներ անի ոչ միայն եգիպտական, այլև բոլոր արաբական, հատկապես պաղեստինյան, ճակատներում, ինչին Քարթերը մտադիր էր հասնել Մոշե Դայանի օգնությամբ:[414] Սակայն, եթե անգամ ենթադրենք, որ ԱՄՆ-ի նախագահը իրականում նման մտադրություններ ուներ, ապա ինչպես կարելի է բացատրել՝ նրա ազգային անվտանգության գծով խորհրդատու Զ.Բժեզինսկու ծրագիրը, ուր կենտրոնական տեղ էր հատկացվում Եգիպտոսի և Իսրայելի միջև հարաբերություններին: Իսկ ինչ վերաբերում է պաղեստինցիներին, ապա ըստ Բժեզինսկու, նախատեսվում էր համաձայնության գալ միայն Արևմտյան Ափի և Գազայի վերաբերյալ, այն էլ առանց ՊԱԿ-ի: Բզեժինսկու ծրագրի համաձայն, Սիրիային հատկացված էր ամենավերջին տեղը:[415]

Սիրիայում արդեն կանխատեսում էին, որ Սադաթի Երուսաղեմ այցելությանը կհետևի առանձին եգիպտա-իսրայելական համաձայնագրի ստորագրումը: Սիրիայի փոխվարչապետ և արտգործնախարար Աբդ ալ- Հալիմ Խադդամի խոսքերով՝ «Սիրիական

[413] «النهار», 26.11.1977:
[414] Նույն տեղում:
[415] «الفجر», 11.01.1978, (Երուսաղեմում տպագրված Արևմտյան ափի պաղեստինյան թերթ):

որևէ ղեկավար կասկած չունի նրանում, որ եգիպտա-իսրայելական համաձայնագրի ստորագրումը քաջալերում ու հովանավորում է Վաշինգտոնը»:[416]

Այստեղ հիշատակման արժանի են Քարթերի մերձավորարևելյան քաղաքականության մեջ կատարված հետևյալ փոփոխությունները: Երև պաղեստինյան հարցի վերաբերյալ իր նախագահության սկզբնական շրջանում Քարթերը կողմնակից էր և ընդգծված ջերմությամբ էր արտահայտվում «պաղեստինյան հայրենիքի» ստեղծման մասին, ապա արդեն 1979թ. նա հայտարարեց. «Ես դեմ եմ Պաղեստինյան պետության ստեղծմանը: Ես չեմ կարծում, որ դա լավ կլինի պաղեստինցիների համար: Ես չեմ կարծում, որ դա լավ կլինի Իսրայելի համար: Ես չեմ կարծում, որ դա լավ կլինի անգամ հարևան արաբական երկրների համար»:[417] Պատկերը նույնն էր Սիրիայի դեպքում. եթե սկզբում Քարթերը կարևորում էր Դամասկոսի դերը մերձավորարևելյան կարգավորման գործընթացում, ապա ավելի ուշ նա ընդունեց Իսրայելի այն տեսակետը, որ քանի դեռ հիմնական արաբական ուժի՝ Եգիպտոսի բացակայության պայմաններում պատերազմը տարածաշրջանում անհավանական է, արաբական մյուս երկրները, այդ թվում նաև Սիրիան, ստիպված կլինեն համաձայնության գալ Իսրայելի հետ ավելի ուշ: Խաղաղության հաստատումը Եգիպտոսի հետ, ըստ ամերիկացիների, պետք է էլ ավելի ապահով դարձներ Մերձավոր Արևելքն ու ամրապնդեր Միացյալ Նահանգների դիրքերը:

Ի հակազդեցություն ԱՄՆ, Իսրայել և Եգիպտոս միավորմանը դեկտեմբերի սկզբներին Տրիպոլիում ստեղծվեց Արաբական Կայունության և Հակազդեցության Ճակատ՝ Սիրիայի գլխավորությամբ, որի մեջ Սիրիայից բացի, մտան Ալժիրը, Լիբիան, Հարավային Եմենը, Իրաքը և ՊԱԿ-ը: Երկրորդ անգամ հավաքվելով Ալժիրում՝ վերոհիշյալ պետությունների ղեկավարները որոշում կայացրեցին օժանդակել Սիրիային «բոլոր հնարավոր միջոցներով», հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջինս «միայնակ է կրում Իսրայելին դիմակայելու պատմական ազգային պատասխանատվությունը»:

Սրվում էր իրավիճակը նաև Լիբանանում: Թեև երկրի հարավում գտնվող պաղեստինյան ջոկատները զսպվում էին հիմնականում լիբանանյան բանակի կողմից, այնուամենայնիվ երբեմն հարձակումներ էին իրականացնում Իսրայելի հյուսիսային մասի վրա: 1978թ. մարտին պաղեստինյան ջոկատներից մեկի հարձակման արդյունքում մեծ թվով իսրայելցիներ զոհվեցին: Ի պատասխան դրա, մարտի 15-ին իսրայելական բանակը ներխուժեց հարավային Լիբանան: Ներխուժումը իրականացվեց Քեմփ-Դևիդից առաջ ընթացող ակտիվ

416 « السـفير », 15.01.1978.

417 Polk William. The Arab World Today, p.442.



բանակցությունների ժամանակ և վտանգի տակ դրեց Քարթերի վարչակազմի ռազմավարության իրականացումը: ԱՄՆ-ի առաջարկով հարցը շտապ դրվեց ՄԱԿ-ի Անվտանգության Խորհուրդ, որն էլ որոշում կայացրեց խաղաղապահ ուժեր ուղարկել Լիբանան՝ օգնելու կառավարությանը իսկողություն հաստատելու երկրի հարավում: Սիրիական պաշտոնական աղբյուրներն իսրայելական ներխուժումը հիմնավորեցին հետևյալ կերպ. «Այն Սիրիայի և Պաղեստինյան հեղափոխության դեմ ուղղված ամերիկա-սիոնիստական քողարկված վերջին քայլերից մեկն է: Ներխուժման նպատակն էր դժվարություններ հարուցել Արաբական Կայունության և Հակազդեցության Ճակատի և հատկապես Սիրիայի առջև»:[418] Մեկ տարի անց, Ասադը կհայտարարի. «ԱՄՆ-ը չհակազդեց Լիբանան իսրայելական ներխուժմանը, քանի որ ամերիկյան քաղաքականությունը տարածաշրջանում, ծառայելով Իսրայելի և ոչ թե Միացյալ Նահանգների ժողովրդի շահերին, համապատասխանում է սիոնիզմի նպատակներին: ԱՄՆ-ը ուղղակիորեն վարում է «բաժանիր, որ տիրես» քաղաքականությունը՝ մի կողմից սրում է իրավիճակը, իսկ մյուս կողմից՝ ներկայանում որպես անկողմնակալ միջնորդ, փորձելով որոշ արաբական երկրներ ներգրավել իսրայելական ճամբարի մեջ»:[419]

Հարավային Լիբանան իսրայելական ներխուժումից հետո Սիրիան անմիջապես Արաբական Զսպման Ուժերի տրամադրության տակ դրեց երկրի օդային ուժերը, իսկ Ասադը հայտարարեց, որ «Սիրիան մշտապես կանգնած կմնա Պաղեստինյան հեղափոխության կողքին»՝ այն համարելով իր «ազգային պարտքի մի մասը»:[420]

Սիրիական զորքերը 1978թ. սկսած Լիբանանում հայտնվել էին անապահով ու խոցելի վիճակում, քանի որ երկրի մարոնի ղեկավարությունը համագործակցելով և օժանդակություն ստանալով Իսրայելից, բացահայտորեն պայքարում էր Լիբանանում սիրիական ներկայության դեմ: Վերոհիշյալ հանգամանքի, ինչպես նաև ցրված լինելու պատճառով, սիրիական ուժերը չկարողացան վերածվել իրական «բանակի» ու հաջողությամբ կատարել իրենց վրա դրված հիմնական խնդիրը՝ հակազդել իսրայելական հարձակմանը: Ասադն անձնապես հավատացած էր, որ ստեղծված պայմանները բարենպաստ չեն Իսրայելի դեմ «զինված պայքար մղելու համար», և որ անհրաժեշտ է «պայքարի ճիշտ ձևեր փնտրել», որոնք կհամապատասխանեն առկա իրավիճակին:[421] Այդ տեսանկյունից միանգամայն հասկանալի են

418 «الأهرام», 17.04.1978.

419 "Newsweek", 02.04.1979.

420 «البعث», 17.03.1978.

421 Նույն տեղում՝ 18.03.1978. Ասադի ելույթը Եփրատի ջրամբարի բացման պաշտոնական արարողության ժամանակ:

դառնում արաբական աշխարհի «թուլության» և «ներկայումս զինված պայքարի ոչ իրական լինելու» մասին պաշտոնական Դամասկոսի հաստատումները:

Ահա այդպիսին էր իրավիճակը, երբ 1978թ. սեպտեմբերի 17-ին Քեմփ- Դեվիդում ամերիկյան նախագահի ակտիվ հովանավորությամբ Եգիպտոսի նախագահ Անվար Սադաթն ու Իսրայելի վարչապետ Մենախեմ Բեգինը ստորագրեցին երկու փաստաթուղթ: Առաջինը պարունակում էր երկու երկրների միջև «Խաղաղության պայմանագրի կնքման շրջանակ», որն էլ հիմք հանդիսացավ 1979թ. մարտի 22-ին եգիպտա-իսրայելական համաձայնագրի կնքման համար, իսկ երկրորդը, մասամբ հիմնվելով ՄԱԿ-ի 242 բանաձևի վրա՝ կոչվում էր «Մերձավոր Արևելքում խաղաղության շրջանակ», որը հիմնականում առնչվում էր «Պաղեստինյան խնդրին»: Այն նախատեսում էր Արևմտյան Ափում և Գազայի հատվածում խնդրի երեք փուլային կարգավորում՝ հինգ տարվա անցումային շրջանով: Այդ ընթացքում Իսրայելն ու Հորդանանը պետք է խաղաղության պայմանագիր ստորագրեին, որին պետք է հաջորդեին բանակցությունները Արևմտյան Ափի և Գազայի հատվածի կարգավիճակի վերաբերյալ: Բանակցությունների արդյունքում պետք է ճանաչվեին «պաղեստինցիների օրինական իրավունքներն ու նրանց արդար պահանջները»: Բանակցությունները նախատեսվում էր անցկացնել Եգիպտոսի, Իսրայելի և Հորդանանի միջև՝ աստիճանաբար Արևմտյան ափի և Գազայի հատվածի բնակիչներին «լիակատար ինքնավարություն ապահովելու» նպատակով: Ըստ համաձայնագրի, վերոհիշյալ երեք երկրները պետք է ինքնակառավարման մարմին (վարչական խորհուրդ) ստեղծեին Արևմտյան Ափում և Գազայի հատվածում, իսկ այնտեղի բնակիչներից ընտրված ներկայացուցիչները Իսրայելի, Եգիպտոսի և Հորդանանի հետ պետք է մասնակցեին վերջնական կարգավիճակի շուրջ բանակցություններին:[422]

Փաստորեն, Քեմփ-Դեվիդում ստորագրված համաձայնագիրը Պաղեստինյան ինքնավարություն էր առաջարկում Արևմտյան ափի և Գազայի հատվածի «բնակիչներին», այլ ոչ թե տարածքին: Այն հաստատում էր այնպիսի ինքնակառավարման մարմին (վարչական խորհուրդ), որը օժտված չէր ոչ օրենսդրական, ոչ էլ դատական ուժով: Համաձայնագիրը պաղեստինցիներին շնորհում էր ոչ թե ինքնորոշում, այլ պարզապես հնարավորություն՝ մասնակցելու «իրենց սեփական ապագայի որոշմանը»: Այնտեղ ոչ մի խոսք չկար Երուսաղեմի մասին:

Եգիպտոսի և Իսրայելի միջև համաձայնագրի ստորագրումը ԱՄՆ-ում համարվեց Քարթերի վարչակազմի ամենամեծ արտաքին քաղաքական հաջողություններից մեկը: Սակայն կարելի է արդյո՞ք հաջողություն համարել մի համաձայնություն, որը փակուղի տարավ

[422] Gresh, Alain & Vidal, Dominique. A to Z of the Middle East, pp.239-241.



մերձավորարևելյան համապարփակ կարգավորումը, նոր բաժանումներ ստեղծեց տարածաշրջանում և էլ ավելի ամրապնդեց իսրայելական ծայրահեղական ուժերը:

Իրականացվեց Բժեզինսկու մշակած ծրագրի առաջին «կենտրոնական մասը»՝ եգիպտա-իսրայելական համաձայնագրի կնքումը: Այն ոչ միայն համապատասխան պայմաններ չստեղծեց հաջորդ մասերի՝ պաղեստինյան և սիրիական ճակատներում համաձայնագրերի կնքման համար, այլ ընդհակառակը՝ էլ ավելի ուժեղացրեց նրանց անապահովության և սեփական անվտանգության խոցելիության զգացումները:

Քեմփ-Դեվիդում կնքված գործարքը մեկ անգամ ևս ապացուցեց Վաշինգտոնի անկարողությունը, կամ էլ ցանկության բացակայությունը ձերբազատվելու մասնակի լուծումների քաղաքականությունից, որը խաղաղության փոխարեն ապակայունացում բերեց տարածաշրջանին:

Քարտերի նախագահության վերջին տարիների ընթացքում Մերձավոր և Միջին Արևելքում ամերիկյան դիրքերին շոշափելի հարված հասցրեցին Իրանում 1979թ. տեղի ունեցած հեղափոխությունը, ամերիկյան դեսպանությունում պատանդների հետ կապված ճգնաժամը և, անշուշտ, խորհրդային ներխուժումն Աֆղանստան:

Քեմփ-Դևիդից հետո վատթարացան Սիրիայի հարաբերություն-ները Հորդանանի հետ: Դրա հիմնական պատճառը Սիրիա-ՊԱԿ հարաբերությունների բարելավումն ու Սիրիայի ծայրահեղ անհանդուրժողական վերաբերմունքն էր Քեմպ-Դևիդի գործարքի նկատմամբ: Հուսեյն թագավորը, չնայած նույնպես դժգոհ էր Սադաթից այն բանի համար, որ վերջինս չէր խորհրդակցել Ամմանի հետ նախքան Իսրայելի հետ համաձայնության գալը, այնուամենայնիվ, ոչ բացահայտորեն պաշտպանում էր գործարքը, հույս ունենալով կարգավորել Պաղեստինյան խնդիրն իր շահերին համապատասխան: Սիրիա-հորդանանյան հարաբերություններն էլ ավելի սրվեցին 1980թ. նոյեմբերին՝ Ամմանում տեղի ունեցած Արաբական երկրների գագաթնաժողովից հետո: Սիրիական մահմեդական ընդդիմությանն աջակցելու հիմնավորումով Սիրիան 30 հազարանոց զորք կենտրոնացրեց Հորդանանի սահմանում:

Փաստորեն 1980թ. Կայունության և Հակազդեցության Ճակատի երկրներից՝ Լիբիայից, Ալժիրից, Հարավային Եմենից բացի, մյուս բոլոր արաբական երկրների հետ Սիրիայի հարաբերությունները կամ լարված էին կամ էլ խզված:

Ինչ վերաբերում է սիրիա-ամերիկյան հարաբերություններին, ապա Քեմփ-Դևիդը վերջ դրեց 1973թ. ի վեր ԱՄՆ-ի հետ համագործակցելու Սիրիայի ցուցաբերած պատրաստակամությանը: Հիասթափությունն ամերիկյան քաղաքականությունից, Սիրիայի հարատևող ռազմական ներկայությունը Լիբանանում, ինչպես նաև

արաբական աշխարհում մեկուսացման վտանգը ստիպեցին Ասադին էլ ավելի սերտացնել հարաբերությունները Մոսկվայի հետ:

Հիրավի, տարածաշրջանում տիրող բարդ իրավիճակը, ԱՄՆ-ի քաղաքականությանը դիմակայելու անհրաժեշտությունն ու ներքաղաքական անկայուն իրավիճակը ստիպեցին «թուլացած և մեկուսացված» Սիրիային՝ փնտրել խորհրդային օգնությունն ու պաշտպանությունը:[423] Միացյալ Նահանգների և Եգիպտոսի դաշինքին, Սիրիան փորձեց հակադրել ԽՍՀՄ-ի հետ Բարեկամության համաձայնագրի ստորագրմամբ[424] (1980թ.), որը միևնույն ժամանակ պետք է հնարավորություն ընձեռեր Իսրայելի հետ «ռազմավարական հավասարակշռություն» *(ալ-թավազուն ալ-իսթրաթիջի)* հաստատելու, ինչը զինվելուց բացի, պահանջում էր տարածաշրջանում դաշնակիցների շրջանակի ընդլայնում՝ Իսրայելի վրա ճնշման նոր լծակներ և հենակետեր ձեռք բերելու նպատակով, որոնք կարող էին փոխհատուցել Եգիպտոսի կորուստը:[425]

Քեմփ-Դևիդի համաձայնագրի ստորագրումը լուրջ փորձությունների առջև կանգնեցրեց Սիրիային: Ուժերի նոր հավասարակշռություն ստեղծելով տարածաշրջանում, այն Սիրիային հատկացրեց արաբ-իսրայելական հակամարտության մեջ ամենագլխավոր դերերից մեկը: Արաբական պայքարից Եգիպտոսի դուրս գալուց հետո, Սիրիային վերապահվեց Իսրայելի հետ եթե ոչ պատերազմելու, ապա կայուն և վերջնական խաղաղություն հաստատելու մենաշնորհը:

Քեմփ-Դևիդը բացառեց այսուհետ լայնածավալ արաբ-իսրայելական պատերազմի հնարավորությունը: Առանց Եգիպտոսի, այլևս անհնար էր Իսրայելի դեմ պատերազմում ռազմական հաջողության հասնել:

Անշուշտ, լայնածավալ պատերազմի վտանգը չեզոքացվեց,

---

423 Ամերիկյան քաղաքականությանը հակազդելու անհրաժեշտությունն էր, որ ստիպեց Սիրիայի արտգործնախարար Աբդ ալ-Հալիմ Խադդամին կոչ անել արաբական երկրներին՝ ԽՍՀՄ-ի հետ պաշտպանական համաձայնագրեր ստորագրելու, իսկ 1978թ. հոկտեմբերին, Բաղդադում կայացած Կայունության և Հակազդեցության Ճակատի երկրների արտգործնախարարների հանդիպման ընթացքում հայտարարել, որ «Սիրիան կարող է միանալ Վարշավյան դաշինքին»: Տես՝ Կարապետյան Ռ. Սիրիա-ամերիկյան հարաբերությունները, էջ 93:

424 Ասադը երկու անգամ՝ 1973թ. և 1975թ., մերժեց Բարեկամության և Համագործակցության պայմանագիր ստորագրել ԽՍՀՄ-ի հետ: Սակայն ամերիկյան հովանավորությամբ «Եգիպտոսի դուրսմղումը արաբական պայքարից» և տարածաշրջանային ուժերի հավասարակշռության խախտումը, ինչպես նաև ամերիկա-իսրայելական հարաբերությունների էլ ավելի սերտացումը ստիպեցին Ասադին վերանայել իր նախկին դիրքորոշումը և 1980թ. հոկտեմբերի 8-ին ստորագրել այն:

425 Այդ են վկայում Իրաքի և Սաուդյան Արաբիայի հետ մերձեցումը, ինչպես նաև Իրանի հետ փոխշահավետ համագործակցության հաստատումը /հեղափոխությունից հետո/:



սակայն Իսրայելի և Եգիպտոսի միջև ստորագրված համաձայնագիրը ընավ էլ չնպաստեց խաղաղության և կայունության հաստատմանը Մերձավոր Արևելքում: Այն միայն ամրապնդեց Իսրայելի անվտանգությունը տարածաշրջանում, խորացրեց միջարաբական հակասություններն ու բևեռացումը, հնարավորություն տալով Իսրայելին՝ ուժերը սիրիա-լիբանանյան և պաղեստինյան ճակատներում կենտրոնացնելու համար:

# ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

## ՔԵՄՓ-ԴԵՎԻԴԸ ԾԱՆՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝ ԱՐԱԲ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ (1978-1991թթ.)

### *ՍԻՐԻԱՅԻ ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՔԵՄՓ ԴԵՎԻԴԻՑ ՀԵՏՈ*

Եգիպտա-իսրայելական համաձայնագրի ստորագրումից անմիջապես հետո Սիրիայի մերձավորարևելյան քաղաքականության առջև ծառացան հետևյալ երեք հիմնախնդիրները՝ ***հակազդեցությունը Քեմփ-Դևիդից հետո իր դիրքերն ամրապնդած ու էլ ավելի ինքնավստահ դարձած Իսրայելին, պայքարը արաբական աշխարհում համաձայնագրի գործընթացի օրինականացման դեմ և բազմաբնույթ օժանդակության ապահովումը արաբական աշխարհի կողմից***.

Ինչպես արդեն նշել ենք, Իսրայելի դեմ պայքարում Դամասկոսը կարևորում էր արաբական միասնականության ապահովումը և ջանքերի համադրումը: Քեմփ-Դևիդից հետո տարածաշրջանում հաստատված ուժերի նոր հավասարակշռությանը Սիրիան փորձեց հակադրել Իրաքի հետ մերձեցմանն ուղղված նոր ռազմավարությունն ու երկու երկրների միջև դաշինքի ստեղծումը: Դեռևս 1977թ. դեկտեմբերին Սաղաթի Երուսաղեմ կատարած այցելությունից հետո Ասադը Իրաքի (չնայած երկկողմ հարաբերություններում առկա մշտական լարվածությանը) և արաբական այլ պետությունների հետ նոր միջարաբական դաշինքի ստեղծմանն ուղղված քայլեր ձեռնարկեց: 1978թ. հոկտեմբերին Ասադն ու Իրաքի նախագահ Բաքրը Բաղդադում ստորագրեցին «Համատեղ Ազգային Գործողության» խարտիան, որի համաձայն, նախատեսվում էր «լիակատար ռազմական», ինչպես նաև տնտեսական, քաղաքական և մշակութային միություն երկու երկրների միջև: Խարտիայի ստորագրումը երկուստեք որակվեց որպես «համաարաբական պատմական քայլ» և «սիոնիզմի դիմակայմանն ուղղված կարևոր քայլ»:[426]

Սիրիայի և Իրաքի միջև շփումները շարունակվեցին նաև Քեմփ-Դևիդից և Իրաքում Սադդամ Հուսեյնի իշխանության գալուց հետո: Այնուհանդերձ, կողմերի միջև շարունակ պահպանվում էր անվստահության ու մրցակցության մթնոլորտը: Այդ իսկ պատճառով Ասադը մերժում էր իրաքյան առաջարկները երկու երկրների գործնական

[426] Journal of Palestine Studies, 8/2,1979, pp.200-202.



միավորման, ինչպես նաև սիրիական տարածքում իրաքյան զորքերի տեղակայման վերաբերյալ: Դամասկոսի և Բաղդադի միջև անհամաձայնությունը գագաթնակետին հասավ 1979թ. ամռանը, երբ Իրաքի նախաձեռնությամբ խզվեցին հարաբերությունները երկու երկրների միջև: 1980թ. Բաղդադը երկրից վտարեց Սիրիայի դեսպանին՝ Ս.Հուսեյնի վարչակարգը տապալելուն ուղղված դավադրություն կազմակերպելու մեղադրանքով: Սիրիա-իրաքյան մերձեցման փորձերը ավարտվեցին անհաջողությամբ, դեռ ավելին, իրանա-իրաքյան երկարատև ու հյուծիչ պատերազմի ընթացքում Դամասկոսը հակվեց Իրանի կողմը:

Սիրիայի տարածաշրջանային վարկը բարձրացնելու համար ամենահարմար գործընկերներ կարող էին դիտվել Իրանն ու Սաուդյան Արաբիան: Իրանական հեղափոխությունն ու Իրանի հետ հարաբերությունների զարգացումը թույլ տվեցին մի կողմից որոշակիորեն ամրապնդել Սիրիայի քաղաքական դիրքերը՝ ապահովելով Դամասկոսի համար նոր հզոր դաշնակից տարածաշրջանում, իսկ մյուս կողմից, նոր լիցք հաղորդել տարածաշրջանում հակաարևմտյան և հակաամերիկյան ուժերին:

Ինչ վերաբերում է Սաուդյան Արաբիային, ապա նա Սիրիայի համար ոչ միայն ֆինանսական, այլև վճռական պահերին քաղաքական օժանդակություն ցուցաբերող ազդեցիկ երկիր էր, ինչը դրսևորվեց Սիրիայի ներկայությունը Լիբանանում, և հետագայում Թաիֆի համաձայնագիրը արաբական աշխարհում օրինականացնելու հարցերում:

Քարթերի նախագահության երկրորդ շրջանում սիրիա-ամերիկյան հարաբերություններում ի հայտ եկավ չափազանց կարևոր մի խնդիր, որը հետագայում զգալի ազդեցություն ունեցավ երկկողմ հարաբերությունների վրա: Դեռևս 1976թ. ԱՄՆ կոնգրեսը «Միջազգային անվտանգությանն աջակցելու և զենքի արտահանումը վերահսկելու» վերաբերյալ որոշում ընդունեց, որի 303-րդ մասի համաձայն, արգելվում էր արտաքին օգնության ցուցաբերումը այն երկրներին, որոնք աջակցում են կամ էլ կապ ունեն ահաբեկչության հետ: 1979թ. կոնգրեսն ընդունեց նոր որոշում, որի ուժով ԱՄՆ-ի Առևտրի և Պետական քարտուղարությունները պարտավորվում էին տեղեկացնել Կոնգրեսին 7 մլն դոլարից ավելի արժեցող ապրանքների և տեխնոլոգիաների՝ այն երկրներ արտահանելու մասին, որոնք աջակցում են միջազգային ահաբեկչությանը: Այդ որոշման համաձայն, Պետքարտուղարության վրա էր դրվում վերոհիշյալ երկրների տարեկան ցուցակի նախապատրաստումը: 1979թ. մինչև օրս Սիրիան նշվում է այդ երկրների շարքում, որի վրա նույնպես տարածվում են ԱՄՆ-ի կողմից օժանդակության և առևտրի հետ կապված

սահմանափակումները:[427]

Իրանում տեղի ունեցած հեղափոխությունը, ինչպես նաև ԽՍՀՄ-ի ներխուժումը Աֆղանստան, իրարանցում առաջացրեցին ամերիկյան քաղաքական վերնախավում ստիպելով վերանայել Մերձավոր և Միջին Արևելքում ամերիկյան քաղաքականության որոշ սկզբունքները: 1980թ. հունվարին Բժեզինսկին կոչ արեց Միացյալ Նահանգներին՝ ստեղծել Խորհրդային Միության դեմ ուղղված մերձավորարևելյան երկրներից կազմված «անվտանգության շրջանակ»:[428] Մի քանի օր անց, Քարթերը հայտարարեց. «Արտասահմանում խորհրդային ռազմական ներկայության աստիճանաբար ընդարձակումը, ինչպես նաև Արևմտյան երկրների ու ԱՄՆ-ի աննախադեպ աճող կախվածությունը կենսական կարևորություն ունեցող մերձավորարևելյան նավթի առաքումներից, լուրջ վտանգ են ամերիկյան շահերի համար»: Քարթերը նշեց նաև, որ ստեղծված կացության մեջ անհրաժեշտ է էլ ավելի «ամրապնդել Արագ Տեղակայման Ուժերը, ընդլայնել տարածաշրջանային անվտանգության շրջանակը, անուղղակի օժանդակություն ցուցաբերել աֆղանական ընդդիմադիր ուժերին և զգուշացնել Մոսկվային այն մասին, որ Ծոցում որևէ ներխուժում կարժանանա ամերիկյան ծանրակշիռ պատասխանին»:[429] Այսպիսով, Քարթերը հռչակեց ամերիկյան նոր, այսպես կոչված «Քարթերի դոկտրինան», որի համաձայն՝

1. Մերձավոր Արևելքի, մասնավորապես Ծոցի շրջանի անվտանգության ապահովման հարցերում կենտրոնական տեղ էր հատկացվում Արևելք-Արևմուտք հակամարտությանը:

2. Տարածաշրջանում շեշտը դրվում էր ամերիկյան ուժերի անմիջական ռազմական ներկայության ընդլայնման հնարավորություն-ների վրա:[430]

ԱՄՆ շահերին ուղղված սպառնալիքի դեպքում համապատասխան ռազմական հակազդեցություն ապահովելու նպատակով Քարթերն առաջարկեց Կոնգրեսին որոշում ընդունել 18-26 տարեկան բոլոր քաղաքացիների գրանցման և հետագայում զորահավաք կազմակերպելու վերաբերյալ: Նա նույնպես պահանջեց 5%-ով ավելացնել ռազմական բնագավառի պետական ծախսերը:[431]

Ամերիկյան նոր ռազմավարությանը Ասադը փորձեց հակադրել խորհրդային օժանդակության ու զենքի առաքումների կտրուկ

[427] CRS (Congressional Research Service) Issue Brief, May 3, 1995, p.11.

[428] "The New York Times", 21,01. 1980.

[429] "Washington Post",22.01.1980 .

[430] Eagle Defiant- US Foreign Policy in the 1980's. Ed. Kenneth A.Oye, The Reagan Administration and the Middle East, p.373.

[431] Garthoff, Raymond. Detente and Confrontation: American-Soviet Relations from Nixon to Reagan, pp. 952-955.



ավելացումը: Ամերիկյան արևելագետ Ա.Կորդսմանի տվյալներով, 1979-1983թթ. ընկած ժամանակահատվածում Սիրիան ԽՍՀՄ-ից ստացել է ավելի քան 10մլրդ դոլարի ռազմական օգնություն, ինչը երկու անգամ գերազանցում է Իսրայելին ԱՄՆ-ի կողմից ցուցաբերած տարեկան օժանդակությունը:[432] Սիրիայի արտգործնախարարության պաշտոնյաներից մեկի խոսքերով. «Ասադն ամեն կերպ փորձելու է ապացուցել, որ տարածաշրջանում դեպի խաղաղություն տանող ճանապարհն անցնում է Դամասկոսով: Այդ նպատակով Ասադը պետք է ցույց տա ամերիկացիներին, որ ի վիճակի է հարվածել նրա տարածաշրջանային դիրքերին»: [433]

Աստիճանաբար Սիրիան ներքաշվեց ԱՄՆ-ի հետ հակամարտության մեջ, որը նշանակալի ֆինանսատնտեսական ծախսեր պահանջեց Դամասկոսից: Հարկ է նշել, որ 1970-ականների երկրորդ կեսը ապահովաբար կարելի է առաջընթացի շրջան համարել Սիրիայի համար: Ֆինանսական ներարկումները Ծոցի արաբական երկրներից և նավթատարից ստացված եկամուտները հանգեցրին աննախադեպ, տարեկան 13%-անոց տնտեսական աճի: Թերևս ձեռք բերված տնտեսական հաջողություններով կարելի է բացատրել Ասադի հրաժարվելը Իսրայելի դեմ համաարաբական հակազդեցության ճակատ ստեղծելու գաղափարից և սեփական ուժերով «սիոնիստական թշնամու հետ ռազմավարական հավասարակշռություն » հաստատելու ձգտումը:

Ստեղծված իրավիճակում Սիրիան, չնայած ՊԱԿ-ի նկատմամբ իր սկզբնական անբարյացակամ վերաբերմունքին, փորձեց բարելավել հարաբերությունները նրա հետ՝ պաղեստինյան փախստականների ճամբարներն օգտագործելով Իսրայելի դեմ պարտիզանական գործողություններ իրականացնելու համար:

Սիրիայի ներխուժումը Լիբանան՝ ոչ միայն չողջունվեց սիրիական բնակչության մեծամասնության կողմից, այլև դարձավ դժգոհության պատճառ՝ երկրում սրելով ներքաղաքական վիճակը և հանգեցնելով պետական պաշտոնյաների դեմ մահափորձերի մի ամբողջ շարքի: Ասադի վարչակարգի համար մեծ վտանգ էր պարունակում «Իխվան ալ-Մուսլիմին» մահմեդական ծայրահեղական խմբավորումը, որն ընդհանրապես ընդդիմանում էր Դամասկոսի աշխարհիկ վարչակարգին: 1979թ. հունիսին վերոհիշյալ խմբավորումը ձեռնարկեց Հալեպի հրետանային դպրոցի 32 կադետների սպանությանը: Այդ գործողություններն ուղղված էին հիմնականում ալավիների դեմ: Դրանից կարող ենք եզրակացնել, որ սպանությունների հիմնական նպատակն էր «պառակտելով ներքին ճակատը»՝ խարխլել վարչակարգի հիմքերը:

[432] Cordesman, Anthony. "The Middle East and the Cost of The Politics of Force", Middle East Journal, vol.40. Winter 1986, p.1.

[433] "Time", 19.12.1983, Syria: Bidding for a Better Role.

Սպանություններին հաջորդած գործադուլները ուժով ճնշվեցին իշխանությունների կողմից: 1980թ. հունիսին Հ.Ասադի դեմ անհաջող մահափորձից հետո Թադմուր բանտում սպանվեցին մոտ 200-300 քաղբանտարկյալներ: 1970-ականների վերջերին էլ ավելի ընդլայնվեց երկրի հսկա անվտանգության համակարգը, որը ներառում էր նաև Մուխաբարաթը՝ գաղտնի ոստիկանությունը, 20-30 հազար անդամներով, և Սարայա ադ-Դիֆան՝ 15 հազարանոց հսկիչ ուժերը, որոնք ղեկավարվում էին Ասադի եղբայր Ռիֆաաթ ալ-Ասադի կողմից:[434]

Պաղեստինյան ինքնավարության հարցի ակտիվացման հետ կապված Քարթերի վերջին փորձերը ապարդյուն ավարտվեցին՝ հաջորդ ամերիկյան վարչակազմին ժառանգություն թողնելով տարածաշրջանի խնդիրների էլ ավելի բարդ ու խճճված հանգույց: Պաղեստինյան հիմնախնդիրը կարգավորելու նպատակով Բեգինի կառավարության վրա արդյունավետ ճնշում գործադրելու՝ Քարթերի վարչակազմի անկարողությունը վերջնականապես հեղինակազրկեց Քեմփ-Դևիդի համաձայնագիրն արաբական երկրների մեծամասնության աչքերին, մեկուսացրեց Եգիպտոսը և նվազեցրեց ԱՄՆ-ի հեղինակությունը, իբրև արդար խաղաղարարի:

1980թ. ԱՄՆ-ի նախագահ ընտրվեց Ռոնալդ Ռեյգանը, որն էլ ավելի էր նվիրված Իսրայելի հետ համագործակցության ամրապնդման գաղափարին: Ավելի ուշ՝ Ռեյգանը կգրի. «Իսրայելի կենսունակությունն ապահովելու անհրաժեշտությունն իմ կյանքի ամենախորը համոզմունքներից մեկն էր»:[435] Սպիտակ տուն մուտք գործելուց անմիջապես հետո Ռեյգանը, ընդգծելով Արևելք-Արևմուտք դիմակայության փաստը միջազգային բոլոր հակամարտություններում, ձեռնամուխ եղավ նոր քաղաքականության ձևավորմանը, որը հիմնված էր մի շարք նոր սկզբունքների վրա: Առաջին՝ նավթ արտահանող Ծոցի երկրների անվտանգության դեմ ուղղված յուրաքանչյուր սպառնալիք առանցքային խնդիր է Միացյալ Նահանգների համար: Երկրորդ՝ արաբա-իսրայելական հակամարտությունը համարվում է քիչ կարևոր և մտահոգիչ, այդ իսկ պատճառով չի պահանջում հրատապ քայլեր: Երրորդ՝ արաբ-իսրայելական հակամարտության և Ծոցի շրջանները դիտվում են որպես երկու տարբեր շրջաններ՝ իրենց զարգացման յուրահատուկ օրինաչափություններով: Ռեյգանի մերձավորարևելյան քաղաքականության չորրորդ սկզբունքն այն էր, որ այդ շրջանի բոլոր երկրները Խորհրդային Միությունից բխող վտանգից պաշտպանության կարիք ունեն:

Վերոհիշյալ սկզբունքներից գործնական եզրահանգում արվեց, որ ԱՄՆ-ը պետք է ընդգրկի իր բոլոր դաշնակիցներին պաշտպանական մի

[434] Նույն տեղում:

[435] Reagan, Ronald. An American Life, p.409.



այնպիսի համակարգում, որն ի վիճակի կլինի զսպել խորհրդային առաջխաղացումը՝ ապահովելով Ծոցի երկրների անվտանգությունն ու Արևմուտքի ազատ մուտքը դեպի նրա նավթային պաշարները: Համառոտակի, այդ այսպես կոչված «ռազմավարական կոնսենսուսի» քաղաքականությունն էր, որի մասին այդքան խոսվում էր Ռեյգանի նախագահության առաջին օրերին: Սակայն հետագայում ամերիկյան վարչակազմը ստիպված եղավ իրողությունների ազդեցության տակ և հիմնականում Լիբանանյան պատերազմից հետո, ընդունել Մերձավոր Արևելքում բոլոր հակամարտությունների կարևորությունն ու փոխկապակցվածությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ տարածաշրջանային քաղաքականությունը չի կարող հանգեցնել պարզապես Արևելք-Արևմուտք հակամարտությանը:

Ամերիկյան մերձավորարևելյան նոր ռազմական դոկտրինայի համաձայն, «հաշվի առնելով այն հանգամանքը, որ միայն ԱՄՆ-ը կարող է դիմակայել Մոսկվային», առաջին անգամ նախատեսվում էր ամերիկյան անմիջական ռազմական ներկայությունը տարածաշրջանում: Այնինքն անհրաժեշտության դեպքում Վաշինգտոնը չէր բացառում անմիջական ռազմական միջամտության հնարավորությունը: Իսկ ինչ վերաբերում է տարածաշրջանում ԱՄՆ-ի «պատվիրատու» արաբական երկրներին ապա, նրանք միայն պետք է տրամադրեին բազաներ և ցուցաբերեին տեխնիկական օժանդակություն: Վերոհիշյալ ռազմավարությունից բխած ամերիկա-իսրայելական սերտացումը պետքարտուղարությունը համարում էր հիմնական հակակշիռը «հրեշային կայսրությանը» ԽՍՀՄ-ին և նրա «պատվիրատուներ»՝ Սիրիայի ու պաղեստինցիների դեմ:

1981թ. սեպտեմբերին ամերիկա-իսրայելական Ռազմավարական փոխըմբռնման հուշագրի (Memorandum of Strategic Understanding) ստորագրումից հետո Սիրիայի արտգործնախարարը հայտարարեց, որ ամերիկա-իսրայելական դաշինքը նախատեսում է տարածաշրջանում հաստատված ուժերի հավասարակշռության լուրջ քանակական փոփոխություն: Նա նշեց, որ ԱՄՆ-ի ռազմավարական ներգրավումը տարածաշրջան՝ համընդհանուր ճգնաժամ է հրահրում և նոր թափ հաղորդում Իսրայելի հարձակողական քաղաքականությանը:[436] Սիրիական լրատվական միջոցները նշում էին, որ Սիրիային վտանգ է սպառնում «ագրեսիվ Իսրայելից», որին աջակցում են Միացյալ Նահանգները: Սիրիայի մտահոգությունն էլ ավելի աճեց նոյեմբերի կեսին՝ համատեղ եգիպտա-ամերիկյան զինավարժություններից հետո:

Սիրիային չէր կարող չանհանգստացնել ամերիկյան ղեկավարության անկարողությունը Իսրայելի ագրեսիվ և ռազմատենչ քաղաքականությունը զսպելու գործում: Դամասկոսի համար ամերիկյան

[436] Middle East Contemporary Survey, 1981-1982, p.855.

նոր ռազմավարությունը խախտում էր հավասարակշռությունը Իսրայելի ու Սիրիայի միջև և վտանգ էր պարունակում Սիրիայի ազգային անվտանգության համար:

Այդ վտանգին դիմակայելու միակ միջոցը Դամասկոսի համար Մոսկվայի հետ հարաբերությունների մակարդակի բարձրացումն ու էլ ավելի խորացումն էր: Օգտվելով հնարավորությունից, Խորհրդային Միությունն իր հերթին ամրապնդում էր սեփական դիրքերը Սիրիայում: Դամասկոսը դարձել էր Մոսկվայի ամենահիմնական և կարևոր «հաճախորդը» Մերձավոր Արևելքում: Նրա հետ էին կապված տարածաշրջանում ԽՍՀՄ քաղաքականության իրականացման հետ կապված եթե ոչ բոլոր, ապա հիմնական հաշվարկները:[437]

Դամասկոսը շարունակաբար շեշտում էր ԽՍՀՄ-ի հետ ԱՄՆ-Իսրայել նմանատիպ «ռազմավարական համաձայնագրի» կնքման անհրաժեշտությունը: Սիրիացիների կարծիքով, 1980թ. Մոսկվայի հետ ստորագրված Բարեկամության և Համագործակցության պայմանագիրը շատ թույլ կողմեր ուներ: Օրինակ, այնտեղ բացակայում էր Լիբանանում սիրիացիների ներկայության վերաբերյալ կետը, որը չափազանց կարևոր նշանակություն ձեռք բերեց մասնավորապես 1982թ. հունիսին բռնկված պատերազմի ընթացքում: Խորհրդային Միությունն, իր սեփական հաշվարկներն ունենալով, մերժում էր ռազմավարական հուշագիր կամ այդ բովանդակությամբ այլ փաստաթուղթ կնքելու սիրիական առաջարկները: Վերջին հանգամանքը ստիպեց սիրիացիներին հաշտվողական և ավելի զիջողական կեցվածք ընդունել ԱՄՆ-ի նկատմամբ, հատկապես, Լիբանանում հունիսյան պատերազմից հետո:

Այսուհանդերձ կարևոր է ընդգծել, որ Միացյալ Նահանգների հետ ունեցած լարվածությամբ հանդերձ, պաշտոնական Դամասկոսը ձգտում էր բաց պահել Վաշինգտոնի հետ իր հաղորդակցման ուղիներն ու շարունակում էր պաշտոնական շփումները: Այդ են վկայում Սիրիայի արտգործնախարար Աբդ ալ-Հալիմ Խադդամի ու Ասադի եղբայր Ռիֆաաթ ալ-Ասադի այցելությունները Վաշինգտոն, ինչպես նաև տարբեր առիթներով ամերիկյան բանագնացներ Ֆիլիպ Հաբիբի և Մորրիս Դրապերի այցելությունները Դամասկոս:

Խորհրդային Միության հետ էլ «բարեկամությունը», որն ավելի ճիշտ կլինի անվանել «հաշվենկատ ամուսնություն», հարթ չէր ընթանում: Այդ «ամուսնության» նկատմամբ էլ կողմերը տարբեր մոտեցումներ

[437] 1981թ. Սիրիան առաջին տեղը գրավեց խորհրդային զենքի առաքումների քանակով: Մոսկվան տրամադրեց շուրջ 1մլրդ. ռուբլու /1.5 մլրդ. ԱՄՆ դոլար/ զինամթերք, այդ թվում օդանավեր, ուղղաթիռներ, զենիթային հրթիռներ, ավիացիոն՝ «օդ-օդ» հրթիռներ, 500 տանկ և զրահապատ մեքենաներ: Гриневский О. Сценарий для третьей мировой войны.Как Израиль чуть не стал ее причиной, с.54.



ունեին: Այսպես, 1981թ. փետրվարին Դամասկոս այցելած ԽՍՀՄ պաշտպանության նախարարության բարձրաստիճան պատվիրակությունը վերստին բարձրացրեց Սիրիայում խորհրդային ռազմական բազաների տեղակայման հարցը, որը բազմիցս էր առաջարկվել սիրիացիներին: Հ.Ասադը մշտապես փորձել է խուսափել Սիրիայի տարածքում օտարերկրյա զինված ուժեր տեղակայելուց: Սակայն Լիբանանում իրավիճակի սրման պայմաններում, Դամասկոսը այդ անգամ համաձայնվեց սիրիական նավահանգիստներ խորհրդային նավերին անխափան ելք ու մուտքի իրավունք տալ, Տարտուսում ռազմակայան հիմնադրել, ինչպես նաև համատեղ օգտագործել Տիֆորի օդանավակայանը: Այդ նպատակով պայմանավորվածություն ձեռք բերվեց համապատասխան համաձայնագիր ստորագրելու վերաբերյալ: Ինչպես նշում է ռուս դիվանագետ Օ.Գրինևսկին, «սիրիացիների միտքը, սակայն, ուրիշ էր: Համաձայնվելով խորհրդային ռազմական բազաների ստեղծմանը, նրանց, բնականաբար, չէին հուզում Խորհրդային Միության աշխարհաքաղաքական շահերը: Նրանք ցանկանում էին խորհրդային հրթիռները վահանի պես ծածկեն Սիրիան Իսրայելի հետ պատերազմի դեպքում: Վերջին պահին Ասադը այսպիսի պայման դրեց. Խորհդային Միությունը պետք է սիրիա-իսրայելական սահմանին տեղակայի իր հրթիռային համակարգի երկու գնդերը և մեկ գունդ էլ Դամասկոսի մերձակայքում՝ մայրաքաղաքը պաշտպանելու համար: Այդ հրթիռները պետք է տեղակայվեն խարհրդային զինվորական անձնակազմի հետ միասին»:[438]

ԽՍՀՄ ԱԳ նախարար Ա.Գրոմիկոն չէր ժխտում Սիրիայում ռազմական բազաների ստեղծման ռազմաքաղաքական կարևորությունը, սակայն Սիրիա խորհրդային զինվորների առաքմանը դեմ էր արտահայտվում: Նրա կարծիքով սիրիա-իսրայելական ռազմական բախման դեպքում Մոսկվան ի վիճակի չի լինի ապահովել անհրաժեշտ օժանդակությունը զինվորականներին և նրանք պատանդ կդառնան: Իսկ դա կարող էր Խորհրդային Միությանը ներքաշել համընդհանուր հակամարտության մեջ:[439] Ամեն դեպքում խորհրդային ռազմական բազաներ չտեղակայվեցին Սիրիայում: Չտեղակայվեցին արաբ-իսրայելական ճակատում իրավիճակի կայունացման հետ կապված՝ սիրիացիների կողմից հարցի ձգձգման պատճառով: Այնուհետև, երբ Իսրայելը ներխուժեց Լիբանան, բազաների շուտափույթ տեղակայման վերաբերյալ սիրիական առաջարկն այս անգամ անպատասխան մնաց ԽՍՀՄ-ի կողմից:

Մինչև վերջ չվստահելով Մոսկվային, այսուհանդերձ, Դամասկոսը

[438] Гриневский О. Сценарий для третьей мировой войны.Как Израиль чуть не стал ее причиной, с.31.

[439] Նույն տեղում, էջ 52:

նրա միջոցով էր լուծում իր անվտանգության հետ կապված խնդիրները: Մնացած արտաքին և ներքին քաղաքական հարցերում Ասադին հիմնականում հաջողվեց ապահովել Սիրիայի անկախությունը Մոսկվայից:[440] Բացի հաշվենկատ քաղաքականությունից, Ասադին օգնեց նաև այն հանգամանքը, որ ԽՍՀՄ-ը նույնպես այլընտրանք չուներ, Սիրիայից բացի, իր ռազմավարական դիրքերը տարածաշրջանում ամրապնդելու համար: Այդ հարցում մրցակիցների բացակայությունն ու ԽՍՀՄ-ի համար բացառիկ լինելու հանգամանքն էր, որ հմտորեն օգտագործեց Սիրիայի առաջնորդը:

## *1982թ. ԻՍՐԱՅԵԼԻ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԼԻԲԱՆԱՆ*

1976թ. վերջին Լիբանանում որոշակի ներքին կայունության հաստատումից հետո քրիստոնյա ուժերը (Բաշիր Ժմայելի ղեկավարած «Լիբանանյան Ուժեր»-ը /մարոնիների միլիցիան/ և Լիբանանյան /Քրիստոնեական/ Ճակատը Քամիլ Շամունի գլխավորությամբ) սկսեցին ընդդիմանալ երկրում սիրիացիների ներկայությանը: Ավելացնենք, որ իսրայելական կառավարությունը, հատկապես Բեգինի իշխանության գլուխ անցնելուց հետո, սկսեց բացահայտորեն համագործակցել նրանց հետ: Բեգինը, պետք է նշել, իր նախորդի պես Լիբանանի քրիստոնյաների հարցը դիտում էր ոչ միայն քաղաքական և հումանիտար, այլև գաղափարախոսական ու քաղաքական--ռազմավարական տեսանկյունից: Նա հավատացած էր, որ Իսրայելը պետք է օգնի քրիստոնյաներին՝ «մոլեռանդ» մահմեդական թշնամու դեմ պայքարելու գործում:[441] Ստանալով իսրայելական օժանդակությունը և վայելելով Բեգինի անձնական համակրանքը իրենց պայքարի նկատմամբ, մարոնիները Իսրայելի և Լիբանանում տեղակայված սիրիական բանակի միջև անմիջական բախում հրահրելու փորձեր կատարեցին, որոնք սակայն անհաջող ավարտվեցին:

Այսուհանդերձ, հարավային Լիբանանում ՊԱԿ-ի գործողություններին հակահարված տալու ժամանակ իսրայելական բանակը փորձում էր խուսափել սիրիական ուժերի հետ բախումից: Այսպես, 1978թ. օգոստոսին Բեգինը մերժեց նաև սիրիական զորքերին

[440]Դրա ցայտուն ապացույցն էր սիրիական զորքերի մուտքը Լիբանան, որն իրականացվեց ԱՄՆ-ի հավանությամբ: Այդ մասին, սիրիացիները ոչ միայն նախօրոք տեղյակ չպահեցին Մոսկվային, այլև հարկ չհամարեցին անգամ իրենց մտադրությունների մասին հաղորդել այդ օրերին Դամասկոսում գտնվող ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահ Ա.Կոսիգինին, որը չափազանց անհարմար վիճակի մեջ էր հայտնվել: Примаков Е. Конфиденциально: Ближний Восток на сцене и за кулисами (вторая половина XX-начало XXI века), с.186-187.

[441] Maoz Moshe.Syria and Israel. From War to Peacemaking, p.168.



օդային հարված հասցնելու Ժմայելի և Շամունի խնդրանքը, թեև հայտարարեց, որ Սիրիայի կողմից լիբանանյան քրիստոնյաների նկատմամբ «ցեղասպանություն» իրականացնելու դեպքում Իսրայելը անտարբեր չի կարող մնալ: Իսկ 1978թ. հուլիսին իսրայելական օդանավերը պտույտ կատարեցին Բեյրութի վրայով, կարծես նախազգուշացնելով սիրիացիներին՝ չհարձակվելու քրիստոնյաների վրա: 1979թ. առաջին կեսին իսրայելական օդային ուժերը բազմաթիվ հարձակումներ գործեցին պաղեստինյան ճամբարների վրա: Հունիսի 29-ին սիրիական ինքնաթիռների միջամտության շնորհիվ Սիդոն քաղաքի վրա խփվեց այդ ուժերին պատկանող՝ իսրայելական հինգ ինքնաթիռ:

Ներքաղաքական իրավիճակը Լիբանանում գնալով սրվում էր: Օգտվելով Քեմփ-Դևիդում եգիպտա-իսրայելական համաձայնագրի ստորագրումից հետո Սիրիայի տարածաշրջանային դիրքերի թուլացումից և Լիբանանում նրա ունեցած դժվարություններից, Ժմայելը 1980թ. վերջին հսկողություն հաստատեց Լիբանանի արևելքում գտնվող Բեքաա հարթավայրում քրիստոնեական Զահլե քաղաքի վրա: 1981թ. ապրիլին, երբ սիրիական ուժերը փորձեցին դուրս մղել քրիստոնյա «լիբանանյան ուժերը» Զահլեից, Ժմայելը օգնություն խնդրեց իսրայելցիներից, որոնք ապրիլի 28-ին երկու սիրիական տրանսպորտային ուղղաթիռ խփեցին այդ քաղաքի մոտակայքում: Ի պատասխան դրա, Սիրիան, որը նոր էր ստորագրել ԽՍՀՄ-ի հետ Բարեկամության և Համագործակցության վերաբերյալ պայմանագիրը, մայիսի 8-ին հայտարարեց, որ խորհրդային հակաօդային հրթիռներ է տեղակայելու Զահլեի շրջանում և լիբանանյան սահմանի մոտ:

Սիրիա-իսրայելական հնարավոր պատերազմի սանձազերծումը և Մոսկվայի հետ առճակատումը կանխելու նպատակով Ռեյգանը տարածաշրջան ուղարկեց փորձառու դիվանագետ Ֆիլիպ Հաբիբին, որին հաջողվեց ժամանակավորապես զինադադար հաստատել Սիրիայի և Իսրայելի միջև:[442] Այնուհետև, Միացյալ Նահանգներն առաջարկեցին լիբանանյան ճգնաժամի համապարփակ կարգավորման ծրագրի իրենց տարբերակը, որը նախատեսում էր Լիբանանից սիրիական զորքերի, ներառյալ Զահլեում տեղակայված հրթիռների և Լիբանանի հարավից ՊԱԿ-ի ծանր հրետանու դուրսբերումը, ինչպես նաև իսրայելական ռազմական գործողությունների կասեցումը հարավային Լիբանանում:

Սակայն կողմերից ոչ մեկը պատրաստ չէր ընդունել ու ամերիկյան առաջարկը: Պաղեստինցիները շարունակում էին հարձակումներ գործել, իսկ մեկ ամիս անց, Իսրայելը օդային հարված հասցրեց Բեյրութում տեղակայված ՊԱԿ-ի գրասենյակի վրա, որի պատճառով զոհվեց 200 և վիրավորվեց 800 մարդ: Դրա հետևանքով սաստիկ փոխհրաձգություն տեղի ունեցավ հրեաների և պաղեստինցիների միջև, իսրայելա-

[442] Heig Alexander Jr. Caveat: Realism, Reagan and Foreign Policy, p.180.

լիբանանյան սահմանի երկայնքով: Վաշինգտոնը թեպետ որոշակիորեն կիսում էր Իսրայելի մտահոգությունը Լիբանանում պաղեստինցիների աճող ազդեցության առումով, սակայն կողմնակից էր վերջիններիս նկատմամբ «սահմանափակ» գործողությունների իրականացմանը: Միայն Սաուդյան Արաբիայի օգնությամբ Ֆ.Հաբիբը ի վիճակի եղավ մեկ զինադադար ևս հաստատել, այս անգամ՝ Իսրայելի և պաղեստինցիների միջև:

Լիբանանում իրավիճակի սրումը պետք է բացատրել ոչ միայն պաղեստինցիների աճող ազդեցությամբ և քրիստոնյա մարոնիների գործունեության ակտիվացմամբ, այլև ֆինանսական պատճառներով Լիբանանից որոշ ստորաբաժանումներ դուրս բերելու Դամասկոսի որոշմամբ, ինչպես նաև ՊԱԿ-ի նկատմամբ Սիրիայի քաղաքականության փոփոխությամբ. վերջինս ձգտում էր հարաբերությունները բարելավել և պաղեստինյան փախստականների ճամբարներն օգտագործել Իսրայելի դեմ հարձակումներ իրականացնելու նպատակով: Վերոհիշյալ զարգացումներն իրենց հերթին նպաստեցին Լիբանանում հակադիր ուժերի փխրուն հավասարակշռության խախտմանը: Դրան ավելացնենք 1981թ. Իսրայելում տեղի ունեցած ներքին քաղաքական իրադարձությունները. արտաքին գործերի և պաշտպանության նախարարի պաշտոններում համապատասխանաբար նշանակվեցին ծայրահեղականներ Արիել Շարոնն ու Իցխակ Շամիրը, որոնք դարձան իսրայելական ռազմատենչ նոր քաղաքականության քարոզիչները: Լիբանանում պատերազմի բռնկմանը մեծապես նպաստեց նաև ամերիկյան նոր վարչակազմի քաղաքականությունը, որն էլ ավելի մեծ ինքնավստահություն հաղորդեց Իսրայելի իշխանություններին: Ամերիկացիները, դեռևս 1981թ. հոկտեմբերին տեղյակ լինելով Լիբանան ներխուժման իսրայելական նախապատրաստությունների մասին, ոչ մի գործնական քայլ չձեռնարկեցին այն կանխելու համար:[443]

1980թ. հուլիսի 30-ին Երուսաղեմը Իսրայելի «հավերժ ու անբաժան մայրաքաղաքը» հայտարարելուց հետո, օգտվելով Լեհաստանի հարցով ԱՄՆ և ԽՍՀՄ-ի զբաղվածության հանգամանքից, 1981թ. դեկտեմբերի 14-ին իսրայելական խորհրդարանը (կնեսետը)՝ 63 ձայն կողմ և 21 ձայն դեմ արդյունքով օրենք ընդունեց, որի համաձայն իսրայելական իրավունքը,

[443] Պետքարտուղար Հեյգը տեղեկացել էր Լիբանան իսրայելյան սպասվելիք ներխուժման մասին Եգիպտոսում, Անվար Սադաթի թաղման ժամանակ: Ավելին, 1982թ.մայիսի 26-ին Հեյգը Չիկագոյում ելույթի ժամանակ «միջազգային գործողությունների» կոչ է արել՝ լիբանանյան քաղաքացիական պատերազմին վերջ դնելու նպատակով: Այս ելույթը որոշ վերլուծաբանների կողմից մեկնաբանվել է, որպես«կանաչ լույս» Իսրայելին՝ Լիբանան ներխուժելու հարցում: Kaufman, Burton. The Arab Middle East and the United States. Inter-Arab Rivalry and Superpower Diplomacy, p.122.



օրենքներն ու կառավարումը տարածվեցին 1967թ. պատերազմի հետևանքով գրավված Գոլանների բարձունքների վրա, ինչը փաստորեն նշանակում էր սիրիական տարածքի բռնակցում: 1967թ. պատերազմը 100 հազար սիրիացիների ստիպել էր հեռանալ Գոլաններից: Օրենքի ընդունման պահին այնտեղ բնակվում էին միայն 15-18 հազար դրուզներ (որոնց իսրայելական կառավարությունը պատերազմից հետո թույլատրել էր վերադառնալ) և մոտ 12 հազար հրեաներ: ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի 497 բանաձևն «անվավեր և միջազգային իրավական ուժ չունեցող» համարեց Գոլանների վերաբերյալ իսրայելական այդ օրենքը:[444]

Վերոհիշյալ օրենքի ընդունումը Սիրիան որակեց որպես «պատերազմի հայտարարում, զինադադարի խախտում, ՄԱԿ-ի օրենքների ոտնահարում և տարածաշրջանային խաղաղության դեմ ուղղված քայլ»:[445] Չնայած այն հանգամանքին, որ 1981թ. նոյեմբերին Ասադը չէր մասնակցել Սաուդյան Արաբիայում կազմակերպված համաժողովին՝ մերժելով Ֆահդ թագավորի կողմից առաջարկված ծրագիրը, այնուամենայնիվ, արաբական միասնական հակազդեցությունը կազմակերպելու նպատակով նա այցելեց Ծոցի երկրներ և Սաուդյան Արաբիա: 1982թ. փետրվարին Թունիսում տեղի ունեցավ արաբական երկրների արտգործնախարարների հանդիպումը, որտեղ վերահաստատվեց բարեկամ, մասնավորապես, մահմեդական, չմիացած և սոցիալիստական երկրների հետ հարաբերությունները սերտ դարձնելու մտադրությունը, ինչպես նաև դատապարտվեց ԱՄՆ-ի քաղաքականությունը Մերձավոր Արևելքում, մասնավորապես, Իսրայելին ցուցաբերվող աջակցության պատճառով:[446]

Գոլանների վերաբերյալ իսրայելական այդ օրենքը բացասաբար ընդունվեց նաև Վաշինգտոնի կողմից: Ամերիկացիները շտապեցին չեղյալ հայտարարել 1981թ. Իսրայելի հետ ստորագրված Ռազմավարական փոխըմբռնման հուշագիրը և «ժամանակավորապես» կասեցնել 300մլն դոլարի նախատեսված զենքի առաքումները, ինչը, կարծես թե, բոլորովին չանհանգստացրեց իսրայելական ղեկավարությանը. դեռ ավելին՝ հանդիպելով Իսրայելում ամերիկյան դեսպան Լյուիսի հետ, Բեգինը ինքնավստահ հայտարարեց, որ իր երկիրը ի վիճակի է ինքնուրույն որոշումներ կայացնել և, որ «Իսրայելը բանանային հանրապետություն չէ»:[447]

Իսրայելյան կնեսետի որոշումից հետո, երբ չարդարացան ՄԱԿ-ի

[444] Maoz Moshe. Syria and Israel. From War to Peacemaking, p.193; Օրենքի տեքստը տես Հավելված 9:

[445] Middle East Contemporary Survey, Syria, 1981-82, p.856.

[446] Նույն տեղում, էջ.856

[447] Maoz Moshe. Syria and Israel. From War to Peacemaking, p.172.

Անվտանգության Խորհրդում ամերիկյան աջակցությունն ապահովելու էր հույսերը, Դամասկոսը հակաամերիկյան կեցվածք ընդունեց, իսկ սիրիական խորհրդարանի խոսնակ Մահմուդ ալ-Զուբին կոչ արեց արաբական երկրներին «խզել իրենց հարաբերությունները ԱՄՆ-ի հետ»:[448]

Սիրիա-ամերիկյան հարաբերությունների համար հավելյալ լարվածություն ստեղծեցին նաև Սիրիայում 1982թ. տեղի ունեցած ներքաղաքական իրադարձությունները, երբ մահմեդական սուննի ընդդիմության ելույթներն ու ցույցերը իրենց գագաթնակետին հասան Համա քաղաքում: Պաշտոնական Դամասկոսի տեղեկությունների համաձայն, մուջահեդները գրավեցին կառավարական հիմնարկները, կառավարության շենքը, ոստիկանությունը, բանտերը, հետախուզական և պաշտպանական կենտրոնները: Խռովությանը վերջ դրվեց կառավարության ձեռնարկված պատժիչ գործողությունների միջոցով. սպանվեց շուրջ 5 հազար մարդ:[449]

Երբ Արևմուտքը, մասնավորապես ԱՄՆ-ի պետքարտուղարությունը, հանդես եկավ հայտարարությամբ՝ Համայում «լայնածավալ պատերազմի» վերաբերյալ, դրանից հետո միայն Դամասկոսը լրատվական միջոցներով ակտիվ հակաքարոզչություն ծավալեց: Հետաքրքրական է, որ Համայում դեպքերը սկսվելուց միայն ութ օր անց Դամասկոսը հայտնեց, որ «հուզումներ են տեղի ունեցել Համայում, որոնք հրահրվել են «Իխվան ուլ-Մուսլիմին»-ի կողմից:[450] Այդ օրերին իտալական հեռուստատեսությանը տված հարցազրույցում Ասադը, քննադատելով ֆունդամենտալիստ մահմեդականներին, ընդգծեց հետևյալ երեք կետերը՝

«Իխվան ուլ-Մուսլիմին»-ը հետադիմական կազմակերպություն է:

«Իխվան ուլ-Մուսլիմին»-ը հակամահմեդական է, քանի որ հակառակ նրա, ճշմարիտ մահմեդականությունը հետևում է առաջընթացի, սիրո և եղբայրության:

[448] Նույն տեղում, էջ 868:

[449] Գործողություններին մասնակեց սիրիական բանակի շուրջ 12.000 զինվոր: Սպանվածների վերաբերյալ տեղեկությունները չափազանց տարբեր են՝ 3.000-ից մինչև 20.000 հազար մարդ: Seale, Patrick. Asad of Syria. The Struggle for the Middle East, pp.333-334.

[450] «Մահմեդական եղբայրներ» /Իխվան ալ-Մուսլիմին/ կազմակերպությունը հիմնադրվել է 1928թ. մարտին Եգիպտոսում մասնագիտությամբ ուսուցիչ Հասան ալ-Բաննայի կողմից: Կազմակերպությունը հանդես է գալիս իսլամական արժեքների վրա հիմնված պետության գոյության օգտին: Չնայած, որ կազմակերպության ղեկավարները իրենց համարում են «իսլամի բարեփոխիչներ և նոր հասարակարգ կառուցողներ»: Այսօր կազմակերպության գործունեությունը արգելված է Եգիպտոսում: Սակայն դա չխանգարեց նրա թեկնածուներին 2005թ. խորհրդարանական ընտրություններում որպես «անկախականներ» շուրջ 88 տեղ գրավել երկրի խորհրդարանում:



«Իխվան ուլ-Մուսլիմին»-ը ծառայում է Միացյալ Նահանգներին:[451]

Վերջին կետի կապակցությամբ պետք է նշել, որ «Իխվան ուլ-Մուսլիմին»-ին վերաբերող հայտարարությունը համընկել էր ԱՄՆ պետքարտուղարության կողմից արված վերոհիշյալ հայտարարության հետ: Այդ հանգամանքից ելնելով՝ Դամասկոսը եզրակացրեց, որ Համայի իրադարձությունների հետևում կանգնած է Վաշինգտոնը, որը ցանկանում է երկրում ապակայունացնել իրավիճակը՝ Ասադի վարչակազմը տապալելու հեռանկարով: Վստահ ենք, որ հայտարարությունների համընկնումը զուտ պատահական բնույթ էր կրում, թեև անհասկանալի է թվում Համայի դեպքերից հետո Սիրիայի հետ առևտրական որոշ սահմանափակումների վերացումը Ռեյգանի «հակասիրիական» վարչակազմի կողմից: Վաշինգտոնի վերոհիշյալ քայլը թերևս կարելի է բացատրել նրանով, որ ԱՄՆ-ում մտավախություն կար, որ իրավիճակի հետագա սրումը ապակայունացում կարող է առաջացնել տարածաշրջանում: Մահմեդական ծայրահեղականների դիրքերի թուլացումը ձեռնտու էր ոչ միայն Սիրիային, այլև ԱՄՆ-ին ու արաբական այլ երկրներին: Հակառակ դեպքում, «Եղբայրների» հաջողությունը կարող էր շղթայական ազդեցություն ունենալ և իրական վտանգ ներկայացներ արաբական մի շարք վարչակարգերին:

Այն ժամանակ, երբ արաբական աշխարհում սրվում էին տարաձայնությունները, երկպառակությունները ու «շարունակական հոգեբանական անկումը», Իսրայելում գնալով հաճախակի էին լսվում Լիբանանում ռազմական միջամտություն իրականացնելու կոչերը:

Կասկած չի հարուցում այն, որ Իսրայելը բռնել էր պատերազմելու ուղին: Լիբանան ներխուժումից վեց ամիս առաջ Իսրայելի պաշտպանության նախարար Արիել Շարոնը հիմնավորեց Իսրայելի ռազմավարում էր. «Մեծ տերության վերածվելու համար Իսրայելը պետք է առաջին հերթին գրավի Լիբանանի հարավային շրջանները, որտեղից իրականացվում են հարձակումները Իսրայելի վրա»: Միաժամանակ Շարոնը անհրաժեշտ էր համարում ՊԱԿ-ի ամբողջովին ոչնչացումը Բեյրութում և ոչ միայն ռազմականապես: Վերոհիշյալի իրականացումը, ըստ Շարոնի, պետք է կազմալուծեր և բարոյալքեր պաղեստինյան ընդդիմությունը Գազայում և Արևմտյան Ափում: Հաջորդ քայլով նախատեսվում էր Բեյրութում իշխանության բերել հիմնականում քաթայիբականներից կազմված մարոնիների կառավարությունը, որի շնորհիվ Լիբանանը Իսրայելի հետ կստորագրեր խաղաղության համաձայնագիր և «կչեզոքացվեր»: Դրանից հետո Իսրայելը պետք է բաջալերեր Գազայից և Արևմտյան ափից պաղեստինցիների ներգաղթը Հորդանան, որը աստիճանաբար կվերածվեր Պաղեստինի: Դեպքերի այսպիսի զարգացումը կապակայունացներ իրավիճակը Հորդանանում և

[451] Maoz Moshe. Syria and Israel. From War to Peacemaking, p.852.

հնարավորություն կրնձեռեր Իսրայելին միջամտելու և նոր կառավարության ստեղծումից հետո խաղաղության համաձայնագիր կնքելու նաև Հորդանանի հետ: Այսպիսով, Սիրիան, որպես միակ «ճակատային» պետություն, կհայտնվեր մեկուսացման մեջ: Ստեղծված պայմաններում Հորդանանի միջոցով մոտենալով և համագործակցելով Սաուդյան Արաբիայի հետ, ըստ Շարոնի, Իսրայելը կվերածվեր «ազդեցիկ աֆրոասիական ուժի»:[452] Իսրայելյան հետագա ներխուժումը Լիբանան լիովին համապատասխանում էր Շարոնի վերոհիշյալ ռազմավարությանը:

Երուսաղեմի նախկին փոխքաղաքապետ Մերոն Բենվենիցկու խոսքերով, 1982թ. պատերազմի իրական նպատակն էր «վերջին տարիների ընթացքում Բեյրութում ձևավորված և զարգացած Պաղեստինյան քաղաքական և մտավորական կենտրոնի վերացումը»:[453] Ինչ խոսք, ՊԱԿ-ի ոչնչացումը և Լիբանանում խրայելամետ կառավարության հաստատումն անխուսափելիորեն պետք է հանգեցներ սիրական ուժերի դուրսբերմանը երկրից: Ուստի առնվազն միամտություն կլիներ հավատալ իսրայելական ղեկավարության պնդումներին, թե, իբր, Իսրայելը չի ցանկանում պատերազմել Սիրիայի դեմ:[454]

Լիբանանում «նոր քաղաքական վարչակարգ» հաստատելու գործում ամերիկյան աջակցությունն ապահովելու նպատակով, Շարոնը շեշտում էր Իսրայելի գործողությունների կարևորությունը Մերձավոր Արևելքում խորհրդայնամետ ուժերը՝ Սիրիան և ՊԱԿ-ը թուլացնելու ճանապարհին: Պետքարտուղար Հեյգի խիստ հակախորհրդային հայացքները, համընդհանուր դիմակայության ենթատեքստում Մերձավոր Արևելքի իրադարձությունները դիտարկելու նրա հակվածությունը, ինչպես նաև նրա համոզմունքը, թե Իսրայելը ԱՄՆ-ի հզոր և կարևոր դաշնակիցն է, մեծապես հեշտացրեցին Շարոնի խնդիրը: 1982թ. մայիսին հանդիպելով Շարոնի հետ, Հեյգը նշեց, որ Միացյալ Նահանգները դեմ չեն լինի Լիբանանում Իսրայելի «սահմանափակ ռազմական գործողություններին», պայմանով, որ դրա համար բավարար հիմնավորում գտնվի:[455]

Հարմար առիթը երկար սպասեցնել չտվեց: Լոնդոնում պաղեստինյան ահաբեկչի կողմից (Աբու Նիդալի խմբից) իսրայելական դեսպան Շլոմո Արգովի վրա անհաջող մահափորձից հետո, 1982թ. հունիսի 6-ին Իսրայելը ներխուժեց Լիբանան՝ իր ռազմական այդ օպերացիան երեսպաշտորեն անվանելով «Խաղաղություն Գալիլեային»:

[452] Zeev Schiff. Lebanon: Motivations and Interest in Israel`s Policy. *Middle East Journal,* 38, 1984, p.220.

[453] New York Review of Books, October 13,1983.

[454] Avi-Ran R. The War of Lebanon: Arab Documents (Hebrew; Tel-Aviv, 1987).

[455] Journal of Paletsine Studies, Vol.XVII, No.I, Autumn 1987.



Ներխուժման պահին Լիբանանում տեղակայված էր 26-28 հազարանոց սիրիական զորք, որը գտնվում էր գեներալ-մայոր Սայիդ Բայրակդարի հրամանատարության տակ: Սիրիական զորքերը կենտրոնացված էին Շթորայում: Նրանց օժանդակում էր նաև այսպես կոչված «Ալ-Ֆուրսան ալ-Արաբ» սիրիական միլիցիան, որը հիմնականում գտնվում էր Տրիպոլիի շրջանում՝ Ասադի եղբայր Ռիֆաաթի ուղղակի ենթակայության ներքո:

Իսրայելական հարձակման մեջ Սիրիան անմիջապես մեղադրեց Վաշինգտոնին: Դատափետվեցին նաև «ամերիկամետ և հետադիմական» արաբական վարչակարգերը: Սիրիան հարձակման հենց սկզբից հստակ արտահայտեց Լիբանանը պաշտպանելու իր պատրաստակամությունն ու վճռականությունը:

Լիբանանյան ճգնաժամի նկատմամբ ԱՄՆ-ի քաղաքականության մասին չափազանց շատ է գրվել ու լուսաբանվել, սակայն գրեթե բոլոր ուսումնասիրություններում բացակայում է Սիրիայի հանդեպ ամերիկյան քաղաքականության անկողմնակալ վերլուծությունը: Այդ իմաստով անհրաժեշտ ենք համարում ընդգծել հետևյալը՝

- Ընդգծված հակախորհրդային և հակաահաբեկչական ուղղվածությամբ հանդերձ, Ռեյգանի վարչակազմը, այնուամենայնիվ, չուներ մշակված հետևողական քաղաքականություն Սիրիայի նկատմամբ, շատ դեպքերում այն հետևում էր իրադարձությունների զարգացմանը, և ոչ թե փորձում ազդել դրանց վրա:
- Սիրիային տարածաշրջանային անվտանգության ամենամեծ սպառնալիքը համարելով հանդերձ, Վաշինգտոնը թերագնահատում էր Մերձավոր Արևելքում նրա դերի կարևորությունը և անկարող եղավ մշտական կապ հաստատել Դամասկոսի հետ, ինչն իր հերթին խանգառում էր ԱՄՆ-ին՝ հստակ ըմբռնելու Լիբանանում Դամասկոսի վարած քաղաքականության իրական նպատակներն ու շարժառիթները:

Տեղին է նշել, որ ի տարբերություն ԱՄՆ-ի, Լիբանանում Խորհրդային Միությունը կիրառում էր հավասարակշռված, զգուշավոր քաղաքականություն: Եթե Վաշինգտոնն իր ջոկատներն ու ծովային ուժերը տեղակայեց Բեյրութում՝ խաղաղապահ ուժերի անվան տակ, ապա Մոսկվան ձեռնպահ մնաց սիրիական ուժերի կողքին գործելուց, առել կուզի՝ ուղղակի ռազմական միջամտությունից:

1982թ. հունիսի 26-ին Հ. Ասադը գաղտնի ժամանեց Մոսկվա: ԽՍՀՄ ղեկավարների հետ հանդիպումների ընթացքում նա խնդրեց 7մլրդ դոլարի սպառազինություն ուղարկել Սիրիա և շուտափույթ տրամադրել նախկին համաձայնություններով նախատեսված՝ հավելյալ 1մլրդ դոլարի զինտեխնիկան: Այնուհետև, Ասադը հարց դրեց, որ իրթիռային համակարգի և ավիացիայի հետ Սիրիա գործուղվեն խորհրդային ռազմական մասնագետները՝ այդ զինտեխնիկան սպասարկելու և շահագործելու նպատակով, մինչև որ սիրիացիները չսովորեն և լիովին

չտիրապետեն դրան: Մոսկվան պատասխանեց, որ կարող է ուղարկել իր ռազմական մասնագետներին սոսկ որպես հրահանգիչների՝ տեղում սիրիացիների ուսուցումը կազմակերպելու նպատակով: Խորհրդային Միությունը դրանով հստակեցրեց իր դիրքորոշումը՝ օժանդակություն ցուցաբերելով արաբներին, ձեռնպահ մնալ արաբ-իսրայելական հակամարտության մեջ ուղղակիորեն ներքաշվելուց և խորհրդային անձնակազմի՝ պատերազմին մասնակցելուց:[456]

Վաշինգտոնի վարած քաղաքականությունը, մինչդեռ, հաշվի չառնելով լիբանանյան ճգնաժամի քաղաքական, կրոնական և ազգամիջյան դրդապատճառները, հանգեցրեց նրան, որ ամերիկյան նավաստիները շիաների և դրուզների թիրախը դարձան: Ավելին, մարոնիներին օգնության հասնելու պատրվակով ամերիկյան ներխուժումն ու կարճ ժամանակ անց՝ ռազմական ուժերի անփառունակ դուրսբերումը Լիբանանից՝ հարված հասցրեցին ԱՄՆ-ի հեղինակությանը արաբական աշխարհում:

Մի կողմից, հունիսի 9-ին Վաշինգտոնն օգտագործում էր վետոյի իրավունքը՝ իսրայելական ներխուժումը դատապարտելու վերաբերյալ ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի քվեարկության ժամանակ, իսկ մյուս կողմից, զինադադարի հաստատման ու արաբական աշխարհում ամերիկյան դիրքերի ամրապնդման նպատակով տարածաշրջան էր ուղարկում բանագնաց Ֆիլիպ Հաբիբին:

Ամերիկյան վարչակազմի այս երկդիմի գործելակերպը, թերևս, կարելի է վերագրել պետքարտուղար Ա.Հեյգի և ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության հարցերով խորհրդական Վ. Քլարկի միջև առկա տարաձայնություններին, որոնք հանգեցրին ԱՄՆ պետքարտուղարի հրաժարականին: ԱՄՆ-ում ԽՍՀՄ դեսպան Ա.Դոբրինինը հիշում է, որ Հեյգը իր հետ խոսակցության ժամանակ վրդովված ասում էր, որ Ռեյգանի կալիֆորնիական մերձավոր շրջապատի մարդիկ «տգետներ են» և «պիգմեյներ՝ արտաքին քաղաքականության մեջ»:[457]

Վերոհիշյալի ցայտուն ապացույցն էր այն, որ Լիբանանի հարցում Քլարկը շրջանցելով պետքարտուղարին ուղիղ կապ էր հաստատել սաուդցիների հետ և նրանց միջոցով պաղեստինցիներին տեղեկատվություն էր հաղորդել ԱՄՆ-ի կողմից Իսրայելի վրա ճնշում բանեցնելու մասին՝ ՊԱԿ-ի անդամների անվտանգ դուրսբերումը Լիբանանից ապահովելու նպատակով: Դա հիմք էր տվել Արաֆաթին կարծելու, որ Լիբանանից պաղեստինյան ուժերի դուրսբերման որոշման հետ կարելի է չշտապել: Այդ դիվանագիտական սխալի պատճառով,

[456] Гриневский О.А. Сценарий для третьей мировой войны.Как Израиль чуть не стал ее причиной, с.208-212.
[457] Добрынин. А.Ф. Сугубо доверительно, с.531.



պատերազմի հանգուցալուծումը ձգձգվեց՝ իր բոլոր բացասական հետևանքներով:

Այսպես, կանխելով Հեյգի հրաժարականի խնդրանքը, Ռեյգանը ինքն է առաջինը ասել նրան. «Լսել եմ, որ որոշել եք հրաժարական տալ և ես որոշել եմ ընդունել ձեր հրաժարականը»:[458]

Ինչ վերաբերում է Հաբիբի առաքելությանը, ապա այն որոշակիորեն հետամտում էր նաև Սիրիայի հետ ամերիկյան շփումների պահպանմանը:[459] Հունիսի 10-13-ը Դամասկոսում տեղի ունեցած հանդիպումների ընթացքում Հաբիբին բանակցեց զինադադարի հնարավորությունների շուրջ և սիրիական կողմին հանձնեց Բեգինի գրությունը, որով Իսրայելի վարչապետը հավաստիացնում էր սիրիական ղեկավարությանը, որ Իսրայելը հարձակումներ չի ձեռնարկի Արևմտյան Բեյրութի վրա:[460]

Հաբիբի միջնորդությամբ հաջողվեց հունիսի 11-ին զինադադար կնքել Իսրայելի և Սիրիայի միջև, սակայն, ըստ որոշ հեղինակների, առանց Բեգինի համաձայնության, Շարոնի ու գլխավոր սպայակույտի պետ Էյթանի հրամանով, հունիսի 12-ին իսրայելական զորքերը շարժվեցին դեպի Դամասկոս-Բեյրութ մայրուղու արևմտյան մասը և պաշարեցին Բեյրութը:[461] Իսրայելական բանակին հաջողվեց մոտենալ Բեյրութին՝ պարտության մատնելով սիրիական զորքերն ու ոչնչացնելով 50-100 ինքնաթիռ, 145 տանկ, ինչպես նաև Բեքաայի հակաօդային հրթիռային համակարգը:[462] Իսրայելը շարունակեց ռազմական գործողությունները ընդհուպ մինչև հունիսի 25-ը: Ճնշվեց պաղեստինյան դիմադրությունը, իսկ նրա զինվորները ստիպված եղան թողնել Լիբանանը՝ ապաստան գտնելով արաբական երկրներում: Իսրայելի և ՊԱԿ-ի հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, Բեյրութում ժամանակավորապես պահպանվում էր ՊԱԿ-ի քաղաքական գրասենյակը և 600 հոգանոց պաղեստինյան ստորաբաժանումը: Ամերիկյան ճնշմանն ու պահանջներին հակառակ, Իսրայելը վերսկսեց Բեյրութի ռմբակոծումը, որը նյութական և մարդկային մեծ կորուստներ պատճառեց քաղաքին: Օգոստոսի վերջին ստորագրված

[458] Гриневский О.А. Сценарий для третьей мировой войны.Как Израиль чуть не стал ее причиной, с.213-214.
[459] Примаков.Е.М. История одного сговора., с.275.
[460] Չնայած որ Պրիմակովը նշում է նաև Բեքաայում տեղակայված սիրիական դիրքերի մասին, սակայն հարկ է ընդգծել, որ այնտեղ սիրիական հրթիռային համակարգի և ստորաբաժանումների վրա լայնածավալ հարձակումը Իսրայելը իրականացրել էր մինչ այդ՝ հունիսի 9-10-ը, նպատակ ունենալով հասնել Բեյրութ-Դամասկոս մայրուղուն:
[461] Avi-Ran R. Syrian Involvment in Lebanon, 1975-1985, p.138; Evron Y. War and the Intervention in Lebanon: The Israeli-Syrian Deterrence Dialogue, p.299.
[462] Ընդհանրապես սիրիական խփված ինքնաթիռների թիվը տատանվում է, ըստ տարբեր աղբյուրների՝ 20-100:

համաձայնագրով ՊԱԿ-ը դուրս եկավ Լիբանանից և հաստատվեց Թունիսում:[463]

Պատերազմի ընթացքում սիրիական բանակի ընդհանուր կորուստները կազմեց 400 սպանված և 1400 վիրավոր:[464] Չնայած պատերազմի արդյունքները միանգամայն բացասական էին Սիրիայի համար, այնուամենայնիվ պաշտոնական լրատվական միջոցներն այդ պատերազմը համարեցին հաղթական: Հետաքրքրական է հունիսի 19-ին ժողովրդին ուղղված Ասադի հայտարարությունը, ուր Սիրիայի նախագահը շեշտում էր արաբ-իսրայելական հակամարտության սկզբունքային բնույթը՝ իբրև երկու քաղաքակրթությունների բախում: Այդ հայտարարության մեջ Ասադը անդրադարձավ նաև լիբանանյան ճգնաժամի քաղաքական տեսանկյուններին՝

- Միացյալ Նահանգներն ամբողջությամբ աջակցեցին Իսրայելին.
- Պատերազմի նպատակն էր լուծել արաբ-իսրայելական հակամարտությունը ԱՄՆ-ին և Իսրայելին հարմար պայմաններով.
- Պատերազմն ուղղված էր Պաղեստինյան Դիմադրության և Լիբանանյան ազգային շարժման դեմ:

Այնուամենայնիվ, պատերազմից հետո Միացյալ Նահանգների հետ հարաբերությունների սերտացման Ասադի ձգտումը, կարծում ենք, նման էր յուրահատուկ խոստովանության և պատերազմում ավելի շուտ պարտությունը, քան թե հաղթանակը գիտակցելու արդյունք էր: Հունիսի 19-ին, սկսելով Ծոցի երկրներ իրենց շրջագայությունները, սիրիական բարձրաստիճան պաշտոնյաները խնդրում էին այդ երկրների, մասնավորապես Սաուդյան Արաբիայի ղեկավարներին, համոզել Վաշինգտոնին, որպեսզի նա ճնշում բանեցնի Իսրայելի վրա՝ Լիբանանից ուժերը դուրս բերելու նպատակով:

1982թ. հուլիսի 20-21-ը Սիրիայի արտգործնախարար Աբդ ալ-Հալիմ Խադդամը գտնվում էր Վաշինգտոնում, որպես Արաբական պետությունների լիգայի բանագնաց: Ռեյգանի հետ հանդիպումից հետո նա հայտարարեց, որ «ներկայումս Սիրիայի բոլոր ջանքերը կենտրոնացած են Լիբանանի տարածքից իսրայելական ուժերի դուրսբերման խնդրի վրա»:[465] Օգոստոսին Ասադի եղբայր, Բաասի տարածաշրջանային ղեկավարության անդամ և պաշտպանական ընտիր զինվորական միավորների (Սարայա ալ-Դիֆա) հրամանատար Ռիֆաաթ ալ-Ասադը գտնվում էր Վաշինգտոնում: Ամերիկյան աղբյուրների համաձայն, Ասադի եղբոր այցելությունն ուներ անձնական բնույթ և

[463] Սկզբնական զինադադարից հետո Սիրիան համաձայնվել էր ընդունել ՊԱԿ-ին, սակայն հետագայում Սաուդյան Արաբիայի ճնշման տակ հրաժարվեց իր խոսքից: Տես՝ Caufman B. The Arab Middle East and the US, p.128.

[464] Moshe Maoz. Syria and Israel. From War to Peacemaking. Claredon Press, Oxford, 1995, p.175.

[465] Middle East Contemporary Survey, Syria, p.868.



ամերիկյան ղեկավար շրջաններից ոչ ոք չէր պատրաստվում հանդիպել նրա հետ: Սիրիական աղբյուրները հաղորդում էին, որ Ռիֆաաթի այցը կապված է «բժշկական խնդիրների» հետ: Մեկ այլ հաղորդման համաձայն, նա թանկարժեք տուն էր գնել Վաշինգտոնում, քանի որ Ասադի հետ գժտության պատճառով ստիպված էր հեռանալ Սիրիայից և ամենայն հավանականությամբ, պատրաստվում էր բնակվել Միացյալ Նահանգներում:[466] Որոշ աղբյուրներ էլ նշեցին, որ Ասադն ուղարկել է եղբորը Վաշինգտոն՝ ԱՄՆ-ի և Իսրայելի հետ Լիբանանի վերաբերյալ գործարք կնքելու հնարավորությունները շոշափելու նպատակով: Կարծում ենք, վերջին տեսակետը ավելի հավանական է, քանի որ դրա օգտին է խոսում այն փաստը, որ այդ նույն ժամանակ Վաշինգտոնում էր գտնվում Իսրայելի պաշտպանության նախարար Շարոնը: [467]

ԱՄՆ-ի նախագահ Ռեյգանը անկասկած, ցանկանում էր ոչ միայն ՊԱԿ-ի այլև Սիրիայի դուրսբերումը Լիբանանից, ինչպես նաև Լիբանանի, որպես Սիրիայի և Իսրայելի միջև բուֆերային երկրի վերականգնումը: Սակայն նա չէր պաշտպանում Իսրայելի «թևի տակ» մարոնիական Լիբանան ստեղծելու Բեգինի հավակնությունները:[468]

1982թ. սեպտեմբերի 1-ին Ռեյգանը հանդես եկավ «խաղաղության ծրագրով»՝ կոչ անելով դուրս բերել բոլոր օտարերկրյա ուժերը Լիբանանից: Մերժելով Պաղեստինյան պետության ստեղծման գաղափարը, նա առաջարկում էր Պաղեստինյան ինքնավարություն հաստատել Արևմտյան ափում և Գազայի հատվածում՝ Հորդանանի հետ կոնֆեդերատիվ հիմունքների վրա: [469]

Բեյրութից զորքերի վերջնական դուրսբերման հաջորդ օրը հրապարակված ամերիկյան այս ծրագիրը վերստին բացահայտում էր Վաշինգտոնի քաղաքականության հակասիրիական բնույթը: Ամերիկյան նախագահի նոր դիվանագիտական նախաձեռնության մեջ չէր հիշվում Գոլանների հարցը և Հորդանանի հետ Պաղեստինյան ինքնավարության ստեղծումից բացի, հետամտում էր արաբ-իսրայելական խաղաղության գործընթացում ներգրավել Հորդանանը և պաղեստինցիներին *(ոչ թե ՊԱԿ-ը)*: Անտարակույս, Սիրիան անտեսող ամերիկյան վերոհիշյալ ծրագրի իրականացումը կնպաստեր տարածաշրջանում արաբական այդ կարևոր

[466] Նույն տեղում, էջ 868:

[467] Այնուամենայնիվ, եղբայրների ընդհարման վերաբերյալ լրատվամիջոցների հաղորդումները, ընդհանուր առմամբ, զուրկ չէին իրական հիմքից: Նրանց միջև ամենայուրջ բախումը տեղի ունեցավ 1983թ. նոյեմբերից հետո, երբ Ասադի առողջական վիճակը ծայրաստիճան վատացավ և Ռիֆաաթը իշխանությունը զավթելու անհաջող փորձ կատարեց: Այս պատճառով, 1985թ. նա ստիպված եղավ մեկնել Եվրոպա, և միայն 1992թ. Սիրիա վերադարձավ, իր մոր՝ 82-ամյա Նախայի թաղման արարողությանը մասնակցելու համար:

[468] Patrick Seale. Asad of Syria. The Struggle for the Middle East..Berkeley,1988, p.387

[469] Նույն տեղում, էջ. 402

երկրի էլ ավելի մեկուսացմանը:

1982թ. սեպտեմբերի 14-ին Բեյրութում նախագահ Բաշիր Ժմայելի[470] մահափորձից և պաղեստինյան Սաբրա և Շատիլա ճամբարներում հարյուրավոր պաղեստինցիների սպանությունից հետո իրավիճակն էլ ավելի սրվեց: Վաշինգտոնը պահանջեց Իսրայելից՝ անմիջապես դուրս բերել զորքերը Բեյրութից: Ռեյգանը ՊԱԿ-ի էվակուացումից հետո երկիրը լքած ամերիկյան նավատորմին հրամայեց վերադառնալ Լիբանան: ԱՄՆ-ի նախագահը միևնույն ժամանակ արաբական երկրների ղեկավարներից պահանջեց ազդել Սիրիայի վրա՝ Լիբանանում վերջինիս տեղակայված զորքերը դուրս բերելու նպատակով: Ռեյգանի կարծիքով, սիրիական զորքերի դուրսբերումից հետո ինքն ի վիճակի կլիներ համոզելու Իսրայելին նույնպես դուրս բերել իր ուժերը:[471]

Ստեղծված իրավիճակում՝ 1982թ. հոկտեմբերին, Սիրիան ընդունեց Ռեյգանի ծրագիրը: Ամերիկյան բանագնացներին տեղեկացվեց, որ Դամասկոսը համաձայն է իսրայելական և սիրիական ուժերի զուգահեռ դուրսբերման գաղափարին: Սակայն Ռեյգանի ծրագիրը չիրականացավ հիմնականում Իսրայելի և ՊԱԿ-ի ժխտական կեցվածքի, ինչպես նաև առանց պաղեստինցիների լիազորության բանակցություններից Հորդանանի հրաժարվելու պատճառով:

1982թ. վերջում ԱՄՆ-ը ուշադրությունը սևեռել էր Իսրայելի և Լիբանանի համաձայնագրի ստորագրման վրա, որին պետք է հետևեր երկրից օտար ուժերի դուրսբերումը: Ամերիկյան վարչակազմն այստեղ էլ երկրորդական դեր հատկացրեց Սիրիային. Վերջինս, ըստ Վաշինգտոնի, Իսրայելի և Լիբանանի միջև համաձայնագրի ստորագրումից հետո միայն պետք է միանար գործընթացին:

Լիբանանը դարձավ այն կռվախնձորը, որի շուրջ բախվեցին Սիրիայի և Միացյալ Նահանգների շահերը՝ առաջին անգամ առաջացնելով երկու երկրների միջև ուղղակի առճակատման վտանգը: Վաշինգտոնն ընդարձակեց իր քաղաքական և ռազմական աջակցությունը Լիբանանի նոր նախագահ Ամին Ժմայելին: Դամասկոսում, իհարկե, գիտեին, որ ԱՄՆ-ը ձգտում էր հաստատել մարոնիների իշխանություն, որը Լիբանանը կդարձներ բաց և

---

[470] Բաշիր Ժմայելը Ֆալանգիստ (Քաթաիբ) քրիստոնյա մարոնիների կուսակցության հիմնադիր Պիեռ Ժմայելի կրտսեր որդին էր: 1976թ. նա Լիբանանյան Ուժերի (աջակողմյան) հրամանատարն էր, իսկ Լիբանան իսրայելական ներխուժումից հետո, 1982թ. օգոստոսի 23-ից՝ Լիբանանի նախագահը: Սերտորեն համագործակցելով Իսրայելի հետ, պայքարում էր Լիբանանում, ինչպես ՊԱԿ-ի և սիրիական ներկայության, այնպես էլ իր քաղաքական ընդդիմախոսների դեմ անգամ մարոնիների շրջանակում: Այսպես, 1978թ. նա ռազմական գործողություններ ձեռնարկեց Ֆրանժիեի ընտանիքի դեմ, իսկ 1980թ. ոչնչացրեց Քամիլ Շամունի Ազգային Լիբերալ կուսակցությունը:

[471] Shultz, George. Turmoil and Trimph:My Years as Secretary of State, p.107-111.



խաղաղասեր հարևան՝ Իսրայելի համար, սակայն ոչ վերջինիս լիակատար վերահսկողության ներքո: Այս բոլորն, անկասկած, շատ ավելի լուրջ քաղաքական և ռազմական վտանգ էր պարունակում Սիրիայի համար, քան Քեմփ-Դևիդի գործարքը:

Ամերիկյան քաղաքականությանը հակազդելու նպատակով Սիրիան փորձեց ամեն կերպ խափանել համաձայնագրի կնքումը Լիբանանի և Իսրայելի միջև: Դամասկոսում մտածում էին հետևյալ կերպ. «Եթե մենք ի վիճակի չենք խաղաղություն հաստատել մեզ հարմար պայմաններով, ապա գոնե թույլ չտանք այնպիսի խաղաղություն, որը մեզ անուշադրության է մատնում»:[472] Այդ նպատակով Սիրիան Մոսկվայի օգնությամբ ձեռնարկեց իր բանակի վերազինման ու վերակազմման աշխատանքները: Միաժամանակ Լիբանանում Իսրայելի, ԱՄՆ-ի և մարոնի ֆալանգիստների դաշինքին Սիրիան հակադրեց շիաների Ամալական ուժերի, Իրանի հովանավորությունը վայելող Հեզբոլլահի և Վալիդ Ջումբլատի գլխավորած դրուզների միլիցիայի հետ ռազմա-քաղաքական համագործակցությունը:[473] Այսպիսով, Իսրայելի ժամանակավոր հաղթանակը Լիբանանում ստիպեց Դամասկոսին նոր ռազմավարություն իրականացնել: Այս կերպ, Մոսկվայի օգնությամբ Սիրիան ընդլայնեց իր ռազմական կարողությունները և սերտացրեց հարաբերությունները Թեհրանի հետ՝ Լիբանանում ինչպես իսրայելական, այնպես էլ ամերիկյան ու ֆրանսիական ջոկատների և օբյեկտների դեմ համատեղ պայքար մղելու նպատակով: Սիրիական բարձրաստիճան դիվանագետներից մեկի համաձայն, «ստեղծված իրավիճակում Ասադը կանի ամեն ինչ՝ ամերիկացիներին համոզելու, որ Լիբանանում խաղաղության ճանապարհն անցնում է Դամասկոսով, և որ ինքն ի վիճակի է անգամ հարվածել ԱՄՆ-ին»:[474]

Եվ իսկապես, 1983թ. ապրիլ-սեպտեմբեր ամիսներին իրանամետ Հեզբոլլահ խմբավորումը մի շարք հարձակումներ իրականացրեց ամերիկացիների և ֆրասիացիների դեմ: Այսպես, ապրիլի 18-ին բեռնատար մեքենայի մեջ տեղադրված ականի պայթյունից զգալի վնաս հասցվեց Բեյրութում ամերիկյան դեսպանությանը՝ զոհվեց 63 մարդ, որոնցից 17-ը՝ ամերիկացիներ: Հոկտեմբերի 23-ին պայթեցվեցին

---

[472] The Foreign Policies of Arab States, Bahgat Korany and Ali E. Hillal Dessouki, Westview Press, London,1984, p.315.

[473] Սիրիայի և ԽՍՀՄ հարաբերությունների որոշակի վատթարացումը Լիբանանյան ճգնաժամից ի վեր, փոխվեց Բրեժնևի մահից հետո, երբ Յու. Անդրոպովը համաձայնվեց 2.5 մլրդ դոլարի ռազմական սարքավորումներ և զինտեխնիկա այդ թվում նաև հակաօդային հրթիռներ առաքել Սիրիա: Դրանից բացի, մոտ 8.000 խորհրդային ռազմական մասնագետներ վարժեցնում էին սիրիական բանակը և ցուցաբերում նրան տեխնիկական աջակցություն: “Foreign Affairs” Robert G.Neumann. Assad and the Future of the Middle East, Winter 1983/84, pp.237-356.

[474] Նույն տեղում, էջ 241:

ամերիկյան և ֆրանսիական զորանոցները , զոհվեցին 241 ամերիկացի և 58 ֆրանսիացի:[475]

ԱՄՆ-ի դեսպանության վրա կատարված հարձակումը հրատապ դարձրեց Լիբանանում ամերիկյան ռազմական ներկայության նպատակահարմարության հարցը, որի վերաբերյալ տարաձայնություններ կային ԱՄՆ-ի վարչակազմում: Մի կողմից, պաշտպանության նախարար Կ. Վայնբերգերը առարկում էր ամերիկյան ուժերի օգտագործմանը, հատկապես՝ բազմազգ խաղաղապահ ուժերի կազմում: Պենտագոնը համատացած էր, որ նման խաղաղապահ առաքելությունը լուրջ վտանգի տակ է դնում ամերիկյան ջոկատները, մասնավորապես՝ Իսրայելի և Սիրիայի գերազանցող ուժերին հակադրվելու դեպքում: Մյուս կողմից, պետքարտուղար Շուլցը պնդում էր, որ Լիբանանում անհրաժեշտ է ամերիկյան ռազմական ներկայությունը, նա պատճառաբանում էր, որ անթույլատրելի է ահաբեկիչների ճնշման տակ Միացյալ Նահանգների ջոկատների դուրսբերումը Լիբանանից:

Սիրիայի նկատմամբ ԱՄՆ-ի քաղաքականության վերաբերյալ ևս տարբեր տեսակետներ գոյություն ունեին ամերիկյան վարչակազմում: Եթե Շուլցը կողմ էր Սիրիայի դեմ ուժի գործադրմանը, ապա պաշտպանության քարտուղարը Սիրիայի հետ հարաբերություններում առաջնային էր համարում դիվանագիտական միջոցների օգտագործումը: Իր դիրքորոշումը Շուլցը բացատրում էր այն հանգամանքով, որ Սիրիան «կլսի Միացյալ Նահանգներին այն դեպքում, եթե տեսնի, որ ԱՄՆ-ն և Իսրայելը միասին են»: Այլ կերպ ասած, եթե Շուլցը վերաբերվում էր Իսրայելին, որպես ռազմավարական դաշնակցի, ապա Վայնբերգերը, զուտ որպես պարտավորության: Պաշտպանության քարտուղարի կարծիքով, «առաջադեմ արաբական երկրների բարի կամքը կենսական նշանակություն ունի Ծոցում ամերիկյան շահերը պաշտպանելու համար, ինչը, սակայն, վտանգվում է Իսրայելի հետ ռազմական և տնտեսական սերտ կապերի պատճառով»:[476] Ռեյգանը կիսում էր պետքարտուղար Շուլցի տեսակետը, որն էլ ամրագրվեց 1983թ. հոկտեմբերին Ազգային Անվտանգության Որոշման h.111 Ցուցումի մեջ (National Security Decision Directive 111):[477]

Մայիսին Լիբանանից իսրայելական զորքերի դուրսբերման վերաբերյալ համապատասխան համաձայնագրի ստորագրման հնարավորությունները քննարկելու նպատակով Մերձավոր Արևելք ժամանեց Շուլցը: Նա համոզված էր, որ իսրայելա-լիբանանյան

475 Schieffer, Bob & Gates, Gary Paul. The Acting President, pp.215-216.

476 Journal of Paletsine Studies, Avi-Shlaim. The Impact of US Policy in the Middle East. Vol.XVII, No.I, Autumn 1987, p.22.

477 Weinberger, Caspar. Fighting for Peace: Seven Critical Years in the Pentagon, p.154-155.



համաձայնագրի ստորագրումը պետք է նպաստեր նաև Դամասկոսի և Բեյրութի միջև նմանատիպ համաձայնագրի կնքմանը: Մերձավորարևելյան մայրաքաղաքներ Շուլցի կատարած բազմաթիվ այցելությունները և միջնորդական ջանքերը, չնայած սիրիական հակազդեցությանը, ապարդյուն չանցան. 1983թ. մայիսի 17-ին Իսրայելի և Լիբանանի միջև ստորագրվեց քաղաքական համաձայնագիր, որի համաձայն, իսրայելական զորքերի դուրսբերման դիմաց Լիբանանը համաձայնվեց վերջ դնել Իսրայելի հետ 1948թվականից ի վեր գոյություն ունեցող պատերազմական վիճակին: Թեև Լիբանանը դեռևս պատրաստ չէր դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը Իսրայելի հետ, սակայն համաձայնվեց Բեյրութում իսրայելական ներկայացուցչության բացմանը: Լիբանանը պարտավորվեց չթույլատրել, որ իր տարածքն օգտագործվի Իսրայելի վրա հարձակումներ իրականացնելու նպատակով, ինչպես նաև համաձայնություն տվեց երկրի հարավում անվտանգությանն ուղղված միջոցառումների իրականացմանը:

Համաձայնագիրը հույժ բացասաբար ընդունվեց սիրիացիների կողմից և որակվեց որպես «տարածաշրջանում վերահսկողություն հաստատելու ամերիկյան-սիոնիստական ծրագրի մաս»:[478] Համաձայնագրով նախատեսվում էր նաև զուգահեռաբար սիրիական ուժերի դուրսբերումը Լիբանանից: Սակայն բանակցություններից դուրս մնացած Դամասկոսը, չնայած ամերիկյան դիվանագետների խորհուրդներին, մերժեց դուրս բերել իր զորքերը Լիբանանից: Փաստորեն, հրաժարվելով իրականացնել համաձայնագրի վերոհիշյալ կետը՝ Լիբանանում ամերիկյան ռազմական ներկայության պայմաններում, Սիրիան անմիջական հակամարտության մեջ ներքաշվեց ԱՄՆ-ի հետ: Երկկողմ հարաբերությունները գնալով էլ ավելի սրվեցին, հատկապես, երբ Դամասկոսը persona non grata հայտարարեց ԱՄՆ դեսպան Հաբիբին:

Շուֆ լեռներից դեպի Բեյրութի հարավային մաս, Ավալի գետն իսրայելական զորքերի հետքաշումից հետո, երբ սաստկացան ռազմական գործողությունները դրուզների և կառավարամետ քրիստոնյաների միջև, Վաշինգտոնը Իսրայելից պահանջեց «հետաձգել» իր ուժերի ծրագրված դուրսբերումը Լիբանանից:[479] Այն ժամանակ, երբ պարզ դարձավ, որ դրուզները պարտության են մատնում քրիստոնյա ուժերին և լիբանանյան բանակին, ԱՄՆ նավատորմը կրակ բացեց Բեյրութի մոտակայքում գտնվող Սուկ ալ-Ղարբ դրուզական գյուղի վրա, օդային հարձակումների ենթարկվեցին սիրիական հսկողության տակ գտնվող այլ շրջաններ՝ իբրև «հարձակողական ինքնապաշտպանություն»: Ի պատասխան այս ամենի, դրուզները

478 Maoz Moshe. Asad, The Sphinx of Damascus: A Political Biography, p.169.

479 William R.Polk. The Arab World Today,p.355.

ռմբակոծեցին Բեյրութի օդանավակայանը, որտեղ տեղակայված էին ամերիկյան ուժերը: Խորհրդային Միությունը մեղադրեց Միացյալ Նահանգներին և Իսրայելին «պատերազմի նոր փուլ» նախապատրաստելու մեջ: Սիրիական կառավարությունն իր հերթին զգուշացրեց, որ ռազմական գործողությունների սաստկացումը կարող է պատճառ դառնալ սիրիական միջամտության համար: Սեպտեմբերի 21-ին Ռեյգանը Լիբանանում իրավիճակի սրման պատասխանատվությունը բարդեց Սիրիայի և ԽՍՀՄ-ի վրա:[480]

Միացյալ Նահանգներում աճում էր դժգոհությունն ու քննադատությունը Լիբանանում Ռեյգանի վարած քաղաքականության նկատմամբ, հատկապես՝ հոկտեմբերի 23-ին Բեյրութում ամերիկյան նավատորմի կենտրոնավայրի ու նավաստիների հանգստատեղիի պայթեցումից հետո: Համաձայնվելով պետքարտուղարության հետ, Ռեյգանը մեկ անգամ ևս վերահաստատեց ԱՄՆ-ի վճռականությունն այն բանում, որ «ահաբեկիչները չեն կարող ստիպել Միացյալ Նահանգներին դուրս գալ Լիբանանից և զավթել աշխարհի այս կենսական ու ռազմավարական նշանակություն ունեցող մասը»:[481] 1983թ. դեկտեմբերին Ռեյգանը հրամայեց օդային հարձակում իրականացնել Բեքաա հարթավայրում տեղակայված իրանական և սիրիական դիրքերի վրա: Հարձակման արդյունքում սիրիական հրթիռները ամերիկյան երկու ռմբակոծիչ խփեցին: Օդաչուներից մեկը զոհվեց, իսկ մյուսը գերի ընկավ, սակայն շուտով ազատ արձակվեց:

Հարկ է նշել, որ 1982թ. պատերազմից հետո Արաֆաթի պարտությունն ու թուլացումը հնարավորություն ընձեռեց Հ.Ասադին՝ ՊԱԿ-ի վրա վերահսկողություն հաստատելու համար: Օգտագործելով ՊԱԿ-ի ներսում առկա դժգոհությունները Լիբանանում կրած պարտությունից, 1983թ. հունվարին Դամասկոսը ՊԱԿ-ի ավագ և հեղինակավոր հրամանատարներից մեկին՝ Մուսա Մուրաղային /Աբու Մուսա/ հրահրեց Արաֆաթի դեմ ելույթի: ՊԱԿ-ի այն զինվորները, որոնք քննադատում էին Արաֆաթին կաշառակերության, անտեղյակության և դանդաղկոտության մեջ միացան Սիրիային: Երբ 1983թ. մայիսի 7-ին Արաֆաթը պաշտոնանկ արեց Աբու Մուսային, Ֆաթհի մեջ տեղի ունեցավ ամենամեծ ապստամբությունը: Եթե Հորդանանում, Արևմտյան ափում և Ծոցի երկրերում պաղեստինցիները մնացին հավատարիմ Արաֆաթին, ապա Լիբանանում Աբու Մուսան Ֆաթհի մեջ լուրջ աջակցություն գտավ: Դամասկոսում իշխանությունները օգնեցին ապստամբներին՝ գրավելու Ֆաթհի գրասենյակները, իսկ սիրիական լրատվամիջոցները որակում էին Արաֆաթին որպես «անպատասխանատու» և «մեծամիտ» առաջնորդի:[482]

---

480 Նույն տեղում, էջ 455:

481 Lou Cannon. President Reagan: The Role of a Lifetime, p.443-444.

482 «تشرين», 25 հունիսի, 1983; «الثورة», 30 հունիսի, 1983.



Իրավիճակը հանդարտեցնելու նպատակով սեպտեմբերին Արաֆաթը ժամանեց Լիբանան և Տրիպոլիում մամուլի ասուլիսի ժամանակ հայտնեց. «Ասադը ցանկանում է իմ գրիչը: Նա ցանկանում է վերահսկել պաղեստինյան յուրաքանչյուր որոշում, սակայն ես դա նրան չեմ տա»: Այնուհետև, Արաֆաթը նշեց, որ ավելի շուտ ինքը Տրիպոլին կտեսնի ավերված, քան կհանձնվի, և՝ կվարվի այնպես, ինչպես նախկինում՝ Ամմանում և Բեյրութում:[483]

Փետրվարի 3-ին Ֆաթհի ապստամբները սիրիական ուժերի աջակցությամբ լայնածավալ հարձակում ձեռնարկեցին Արաֆաթի դեմ, պաշարելով ՊԱԿ-ի վերահսկողության տակ մնացած վերջին կետը՝ Տրիպոլին: Վերջինս ռմբակոծության ենթարկվեց սիրիացիների կողմից: 1983թ. դեկտեմբերին Արաֆաթը երկրորդ անգամ ստիպված եղավ թողնել Լիբանանը՝ իր մնացած 4000-անոց ջոկատով:[484]

1982թ. Իսրայելի ներխուժումը Լիբանան գերազանց հնարավորություն ընձեռեց Թեհրանին՝ անմիջական ռազմական միջամտության համար: 800-1000 համեմատաբար փոքրածավալ իրանական «փասդարաններից» (հեղափոխական գվարդիա) կազմված ռազմական ստորաբաժանումը անցավ Սիրիայի տարածքով և տեղավորվեց Բաալբեկի և Բեքաա հարթավայրի սահմեդական շիա շրջանում:

Հետաքրքրական է, որ մինչ 1982թ. Ասադը բացասաբար էր վերաբերվում Լիբանանում իրանական ռազմական ներկայությանը: Սակայն իսրայելական ներխուժման, ինչպես նաև Սիրիայում սրված ներքաղաքական, մասնավորապես Համայում տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով, Դամասկոսն այլևս ակնհայտ էր Իրանի հետ համագործակցելու ռազմավարական կարևորությունը, հատկապես ՊԱԿ-ին Լիբանանից դուրս մղելուց հետո:

Լիբանանի վերահսկողությունը ամրապնդելու, նրա տարածքից Իսրայելի դեմ գործողություններ իրականացնելու հնարավորությունը Դամասկոսը չէր կարող բաց թողնել:

Թույլատրելով իրանական խմբավորումների մուտքը Լիբանան, Սիրիան վարպետորեն օգտագործեց նրանց, որպես խաղաքարտ, Միացյալ Նահանգների հետ հարաբերություններում, մասնավորապես՝ պատանդների հետ կապված հարցերում:

Եվ պատահական չէ, որ հենց 1982թ. սկսած սիրիա-ամերիկյան հարաբերություններում զգալի տեղ զբաղեցրեցին ահաբեկչության ու պատանդների հետ կապված խնդիրները:

Այսպես, 1982թ. Ամալից[485] անջատված Հուսեյն Մուսավիի

---

483 Rubin, Barry. The Truth about Syria, p.89.

484 Նույն տեղում էջ 89:

485 Լիբանանյան շիաների Ամալ շարժումը հիմնադրել էր 1974թ. իմամ Մուսա ալ-Սադրը: Շարժումը ՊԱԿ-ի և դրուզների հետ մտնում էր մահմեդական ձախակողմյան

ղեկավարած խմբավորումը առևանգեց Բեյրութի ամերիկյան համալսարանի նախագահ Դավիդ Դոջը, որը սկզբում պահվեց Բեքաայում, իսկ հետո տեղափոխվեց Իրան: Միայն մեկ տարի անց սիրիական միջամտության շնորհիվ Դոջն ազատ արձակվեց, իսկ Սիրիան ստացավ Դոջի և ամերիկացիների շնորհակալությունները: Նույն սցենարով հետագայում տեղի ունեցան բազմաթիվ առևանգումներ, որոնք անկասկած ծառայում էին Սիրիայի շահերին՝ ԱՄՆ-ի հետ հարաբերությունների պահպանման և երբեմն՝ ճնշում գործադրելու առումով: 1984թ. փետրվարին, երբ սիրիացիների հովանավորությունը վայելող Ամալի միլիցիան գրավեց Արևմտյան Բեյրութը, սիրիացիները բազմաթիվ քայլեր ձեռնարկեցին այլ խմբավորումների կողմից պատանդ վերցված ամերիկացիների ազատ արձակման ուղղությամբ: 1985թ. ամերիկյան հեռուստալրագրող Ջերեմի Լյուվինին ազատելու համար Սիրիան նորից պաշտոնական Վաշինգտոնի երախտիքի խոսքերին արժանացավ: Պետք է նշել, որ Միացյալ Նահանգները սեփական ուժերով պատանդներին ազատելու առանձին փորձեր կատարեցին, որոնք սակայն բոլորն էլ անարդյունք ավարտվեցին: ԿՀԳ և Սենատի հետախուզության հարցերով հանձնաժողովի եզրակացությամբ, ԱՄՆ-ը չուներ «ոչ համապատասխան պատրաստվածություն, ոչ էլ որակներ» նման առաքելություն իրականացնելու համար:[486]

Ահաբեկչական գործողությունները զգալի դեր խաղացին նաև Լիբանանից ամերիկյան ուժերի դուրսբերման հարցում: 1984թ. հունվարի 18-ին Բեյրութում հայտնի գիտնական և արաբական աշխարհի մասնագետ Մալքոլմ Քերրիի սպանությունը հավելյալ նախազգուշացում էր, որ որևէ ամերիկացի չի կարող անվտանգ զգալ իրեն Լիբանանում: ԱՄՆ-ի ներսում աճող ընդդիմությունը, լիբանանյան բանակի հետագա կազմալուծումն ու Ժմայելի կառավարության տապալումը որևէ այլընտրանք չթողեցին Ռեյգանին, քան Բեյրութից նավատորմի դուրսբերման վերաբերյալ 1984թ. փետրվարի 7-ի հրամանի արձակումը: Ամերիկացիների զայրույթն ու անզորությունը այնքան մեծ էր, որ ամերիկյան «Նյու Ջերսի» սուզանավից 250 հրթիռ արձակվեց Բեյրութի մոտակայքում տեղակայված սիրիամետ մահմեդական միլիցիայի դիրքերի վրա: Փետրվարի 26-ին ամերիկյան ռազմական անձնակազմը

ուժերի մեջ: Լիբանանի շիաների սիրիամետ դիրքորոշումը սկսեց ավելի ցայտուն ուրվագծվել, հիմնականում 1975թ. հետո, երբ նվազեց հավատը ՊԱԿ-ի նկատմամբ, ինչպես նաև զգալիորեն սերտացան կապերը վերջինիս և հեղափոխական իրանական շարժման միջև: ՊԱԿ-ի և լիբանանյան շիաների միջև աստիճանաբար աճող հակասությունները հիմք դրեցին հետագայում շիա համայնքի մեջ սիրիամետ և իրանամետ խմբավորումների առաջացմանը: 1984թ. սեպտեմբերին իրանամետ Հեզբալլահի հրապարակային հայտնությունը ուղղակիորեն հակասում էր Լիբանանում Դամասկոսի հետապնդած շահերին:

[486] “Washington Post”, May 12,1985.



վերջնականապես հեռացավ Լիբանանից:

Պատմաբաններն ու քաղաքագետները բազմիցս են անդրադարձել Լիբանանում ամերիկյան քաղաքականության անհաջողությանը: Սակայն շատ քչերն են նշել այն հանգամանքը, որ Վաշինգտոնի քաղաքականության անարդյունավետության հիմնական պատճառը ոչ միայն լիբանանյան ճգնաժամի իրական դրդապատճառների ու ներքին շարժառիթների խոր և համակողմանի վերլուծության բացակայությունը կամ Ռեյգանի վարչակազմի ներսում տարաձայնություններն էին, այլև, ոչ նվազ չափով, *ճգնաժամի ընթացքում Սիրիայի դերի անտեսումն ու թերագնահատումը:*

Չնայած ԱՄՆ պետքարտուղար Շուլցը ձգտում էր «ազդել Ասադի վրա, թեկուզև անուղղակի կերպով, արաբական այլ երկրների միջոցով», այնուամենայնիվ, նա համոզված էր, որ Լիբանանում ամերիկյան անհաջողության պատճառը ոչ թե Սիրիայի նկատմամբ անուշադրությունն էր, այլ դիվանագիտությանը ռազմական ուժով սատարելու վարչակարգի անկարողությունը:[487] Այդ առումով ամբողջ մեղքը Շուլցը բարդում էր Վայնբերգերի վրա, որը «հրաժարվում էր ուժային միջոցների օգտագործումից»:[488]

Դժվար է պատասխան գտնել այն հարցին, թե ինչպես որևէ քաղաքականություն Լիբանանում կարող էր գործել առանց Ասադի հետ համագործակցության: Սիրիայի համար Լիբանանը չափազանց բարձր գին ուներ, այդ իսկ պատճառով Ասադը չէր կարող համաձայնվել զորքերը հենց այնպես դուրս բերել Լիբանանից, հատկապես այն ժամանակ, երբ իր համար նվազագույն գնով ի վիճակի էր պաղեստինյան և այլ ուժերի միջոցով հարված հասցնել այնտեղ տեղակայված իսրայելական և արևմտյան բազմազգ ուժերին (MNF): Դուրս թողնելով Սիրիային բանակցային գործընթացից, ԱՄՆ-ը էլ ավելի հեշտացրեց Ասադի խնդիրը՝ որևէ զիջում չկատարել Լիբանանի հարցում:

Լիբանանյան պատերազմի ընթացքում Իսրայելի հետ Վաշինգտոնի սերտ ռազմավարական համագործակցությունն ու ծայրահեղ հակասիրիական քաղաքականության կիրառումը միանգամայն հակառակ արդյունք ունեցան: Ամերիկյան այն տեսակետը, թե Լիբանանում ԽՍՀՄ-ի, Սիրիայի, ՊԱԿ-ի, դրուզների և շիաների ձևավորված ճակատին անհրաժեշտ է հակադրել ԱՄՆ-ի, Իսրայելի և մարոնիների դաշինքը, մակերեսային էր և հաշվի չէր առնում խմբավորումների մեջ գոյություն ունեցող շահերի անհամատեղելիությունը: Պարտադրելով մայիսի 17-ի համաձայնագրի ստորագրումը, Միացյալ Նահանգներն անուղղակիորեն նպաստեցին Ժմայելի մեկուսացմանն ու թուլացմանը, միևնույն ժամանակ

[487] Shultz, George. Turmoil and Trimph:My Years as Secretary of State, p.233.

[488] Նույն տեղում էջ 234:

ուժեղացնելով նրա հակառակորդներին՝ դրուզներին և շիաներին: Ձեռնարկելով ռազմական գործողություններ նրանց դեմ, Վաշինգտոնը վերջիններիս էլ ավելի մեծ կախվածության մեջ դրեց Դամասկոսից և օգնեց Ասադին՝ ի հայտ գալու որպես լիբանանյան քաղաքականության միակ և իրական ղեկավարի:

## *ԹԱԻՖԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ԵՎ PAX SYRIANA-Ի ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ*

Լիբանանում ԱՄՆ-ի վարած քաղաքականությունը Ռեյգանի իշխանության երեք տարիների ընթացքում հիասթափություն էր առաջացրել նույնիսկ Սպիտակ տան շրջաններում: Նրա նախագահության երկրորդ շրջանում ամերիկյան վարչակազմի հիմնական մտահոգությունն էր տարածաշրջանում ահաբեկչության կտրուկ աճն ու իրանա-իրաքյան պատերազմի ընդարձակումը: ԱՄՆ պետքարտուղար Շուլցը, 1985թ. ապրիլի 21-ին ելույթ ունենալով Ամերիկախսրայելական հասարակայնության հարցերով կոմիտեի տարեկան քաղաքական համաժողովում, առանձնացրեց Մերձավոր Արևելքում ամերիկյան քաղաքականության հետևյալ վեց սկզբունքային հիմնադրույթները՝

- ԱՄՆ-ը շարունակելու է իր ջանքերը մնայուն խաղաղության հաստատման ուղղությամբ: Այնպիսի խաղաղության, որը հաշվի կառնի բոլոր կողմերի արդար պահանջները:
- ԱՄՆ-ը մերժում է խաղաղության և անվտանգության որևէ բռնի և կտրուկ փոփոխություն: ԱՄՆ-ը հակազդելու է այն կառավարություններին և կազմակերպություններին, որոնք ձգտում են ոչնչացնել Իսրայելը և տարածաշրջանում Միացյալ Նահանգների բարեկամ արաբական երկրները:
- ԱՄՆ-ի քաղաքականությունը ՊԱԿ-ի նկատմամբ մնում է անփոփոխ՝ Վաշինգտոնը երբեք չի ճանաչի և չի բանակցի այնպիսի խմբի հետ, որը բռնի լուծումների կողմնակից է և մերժում է ընդունել ՄԱԿ-ի 242 և 338 բանաձևերը կամ էլ ճանաչել Իսրայելի գոյության իրավունքը:
- Իրական, մնայուն խաղաղության հաստատման համար միակ միջոցը արաբների և Իսրայելի միջև ուղղակի բանակցություններն են: Որևէ այլ տարբերակ չի կարող լինել: Հետագա որևէ ծրագրի կամ նախագծի անհրաժեշտությունը չի նկատվում: Գոյություն ունի միայն մի ճանապարհ՝ բանակցել սեղանի շուրջ, երես առ երես:
- ԱՄՆ-ը շարունակելու է պաշտպանել խաղաղ բանակցային միջոցներով պաղեստինցիների օրինական պահանջները: Սակայն Վաշինգտոնը չի պաշտպանի պաղեստինյան անկախ պետության ստեղծումը Արևմտյան ափին և Գազայի հատվածում, միաժամանակ,



չի պաշտպանի այդ տարածքների բռնակցումն ու մշտական վերահսկողությունը Իսրայելի կողմից:
Միացյալ Նահանգները վերահաստատում են Իսրայելի խաղաղ գոյության իրավունքը անձեռնմխելի և ճանաչված սահմաններում: Ինչպես ասաց Ռեյգանը 1982թ. սեպտեմբերի 1-ին. «Մինչ 1967թ. գոյություն ունեցող սահմանները՝ Իսրայելի ամենանեղ մասը 10 մղոնի չափ լայնք ուներ: Իսրայելի բնակչության մեծամասնությունն ապրում էր թշնամական արաբական հրետանու հասանելիության շրջագծի ներքո: Ես չեմ կարող պահանջել Իսրայելից նորից ապրել այդպես»:[489] Միացյալ Նահանգները շարունակելու են կիսել վերոհիշյալ համոզմունքը:

Իսկ այդ ընթացքում լուրջ քաղաքական փոփոխություններ էին տեղի ունենում Խորհրդային Միությունում, ուր կոմունիստական կուսակցության տարեց գլխավոր քարտուղարները հաջորդում էին մեկը մյուսին: Վերջապես՝ 1984թ. կուսակցության ղեկավար դարձավ համեմատաբար երիտասարդ Միխայիլ Գորբաչովը: Խորհրդային Միության մեջ կատարվող բարեփոխումները՝«պերեստրոյկան» ու «գլասնոստը» չէին կարող ուղղակիորեն չազդել նրա վարած արտաքին քաղաքականության վրա:

Փոխվում էր միջազգային մթնոլորտը, ԽՍՀՄ և ԱՄՆ երկխոսությունը ստանում էր այլ, մինչ այդ չարձանագրված երանգ: Տնտեսական հսկա խնդիրների առջև կանգնած գերտերությունը, Աֆղանստանի դեմ մղած պատերազմում խայտառակ ձախողումից հետո ի վիճակի չէր այլևս համասարաչափ պատասխանել Արևմուտքի կողմից պարտադրված սպառազինությունների վազքին: ԱՄՆ-ը ակտիվորեն լրացնում էր միջազգային ասպարեզում ԽՍՀՄ-ի թուլացման հետևանքով ստեղծված վակուումը և առաջնային դերակատարություն էր ստանում միջազգային հիմնախնդիրների կարգավորման գործում, հատկապես դրանցից ամենատևական և առանցքային՝ արաբ-իսրայելական հակամարտությունում: Մոսկվան ի վիճակի չէր այլևս «անհատույց» մեծածավալ օժանդակություն ցուցաբերել աշխարհով մեկ սփռված իր «հաճախորդ» երկրներին, այդ թվում և Սիրիային: Արտաքին օգնության ձևաչափի և ծավալների, ինչպես նաև պայմանների վերաբերյալ ԽՍՀՄ-ի նոր մոտեցումները լուրջ խնդիրներ հարուցեցին Դամասկոսի համար, որի ռազմական ու տնտեսական առաջնահերթ պահանջները բավարարվում էին Մոսկվայի կողմից:

Հ.Ասադի համար ԱՄՆ-ի հետ համագործակցության զարգացումն ու իր «հովանավորի»՝ ԽՍՀՄ-ի կորուստը լրացնելու այլ ուղիների փնտրտուքը սկսվեց 1980-ականների կեսերից: Այդ պատճառով էլ 1984-

489 Journal of Palestine Studies, Vol.XIV, No.4, summer 1985, p. 126.

1989թթ. սիրիա-ամերիկյան հարաբերությունները կարևորագույն տեղ գրավեցին Դամասկոսի արտաքին քաղաքական օրակարգում, հատկապես արաբ-իսրայելական հակամարտության խաղաղ կարգավորման, Լիբանանի հիմնահարցի լուծման, ահաբեկչության, թմրադեղերի առևտրի, մարդու իրավունքների հետ կապված հարցերում:

Խաղաղության գործընթացում ԱՄՆ-ը շարունակում էր կարևորել պաղեստինցիների անունից Հորդանանի հանդես գալու հանգամանքը և ձգտում էր խաղաղություն հաստատել Հորդանանի ու Իսրայելի միջև, որի համար կարծես թե ստեղծվել էին բարենպաստ պայմաններ: Բարենպաստ՝ այն իմաստով, որ արաբական ազգային-ազատագրական պայքարն ակնհայտորեն նահանջ էր ապրում: Արաբական աշխարհում տիրում էին քաոսի, քաղաքական ապակողմնորոշվածության, ապագաղափարականացման և Իսրայելի դեմ պայքարի անարդյունավետության ու անիմաստության տրամադրությունները:[490]

Ծայր աստիճանի լարված էին Սիրիայի և ՊԱԿ-ի հարաբերությունները, հատկապես՝ 1983թ. Յ.Արաֆաթի դեմ սիրիացիների հրահրած խռովությունից հետո: 1985թ. փետրվարին իր քաղաքական կենսունակությունը պահպանելու նպատակով Արաֆաթը ստիպված եղավ համաձայնության գալ Հորդանանի հետ: Սիրիական պաշտոնական «Թիշրին» օրաթերթը վերոհիշյալ համաձայնագիրը որակեց որպես «Պաղեստինյան Ազգային խորհրդի որոշումների խախտում, պաղեստինյան և արաբական պայքարի դավաճանություն»:[491] Դամասկոսն ամեն կերպ փորձում էր թույլ չտալ նոր հորդանանա-իսրայելական համաձայնագրի ստորագրումը և հանդես էր գալիս միջազգային վեհաժողովի գումարման օգտին, որը պետք է բացառեր Իսրայելի հետ արաբական երկրների առանձին-առանձին բանակցելու հնարավորությունը:

Դամասկոսը փորձում էր խուսափել Իսրայելի հետ անմիջական բախումից և, շարունակելով զորացնել իր տնտեսական ու ռազմական ներուժը, սպասում էր հարմար առիթի՝ ուժերի դիրքերից բանակցություններ վարելու նպատակով: Հարկ է ընդծել, որ Սիրիան ի տարբերություն Հորդանանի, շտապելու պատճառներ չուներ: Առաջին հերթին, եթե Սիրիան միանար Հորդանանին և ՊԱԿ-ին՝ խաղաղության հաստատման ուղղությամբ նախաձեռնված գործընթացին, ապա դրանով կթուլացներ Իսրայելի դեմ արևմտյան ճակատն ու իր ներքին քաղաքականությունը խոցելի կդարձներ Լիբանանի կողմից: Ասադը չէր կարող որդեգրել հաշտվողական քաղաքականություն: Նրա համոզումով,



[490] Пырлин Е.Д. Некоторые оссобенности современного этапа развития арабского национально-освободительного движения.-"Проблемы современной арабистики.", с.67.

[491] «تشــــرين», փետրվարի 13,1995թ.:

Սիրիան պաղեստինյան հիմնախնդրի կարգավորման առաջատարն էր և կարող էր հպարտ լինել, որ արաբական մյուս երկրների համեմատ ավել է առավելագույնը՝ Լիբանանում Իսրայելի դեմ պայքարելու գործում: Ներքաղաքական տեսանկյունից ևս Դամասկոսը «չէր կարող մարսել Իսրայելի հետ բանակցություններ վարելու հանգամանքը»:[492] Երկրորդ, Սիրիան չէր կարող խաղաղություն հաստատել առանց Գոլանների վերադարձի, ինչը միջազգային իրավունքի տեսակետից միանգամայն օրինական պահանջ էր: Գոլանների բռնակցումը նույնպիսի ժողովրդագրական վտանգ չէր պարունակում Սիրիայի համար, ինչից կարող էր երկնչել Հորդանանը՝ Արևմտյան ափից պաղեստինցիների տեղահանման դեպքում: Երրորդ, տարածաշրջանային տեսանկյունից Ասադը շահագրգրված չէր այնպիսի կարգավորման մեջ, որը լուծում էր Արևմտյան ափի և Գոլանների հարցը, սակայն Լիբանանում թողնում էր ապակայունացնող և մշտական վտանգ պարունակող պաղեստինյան ներկայության խնդիրը:

Գորբաչովյան «պերեստրոյկան» լուրջ բարդություններ հարուցեց Դամասկոսի համար, ոչ միայն տնտեսական այլև քաղաքական առումներով: 1987թ. ապրիլին Ասադի հետ Մոսկվայում հանդիպման ժամանակ Գորբաչովը, հրաժարվեց պահանջված բոլոր զինատեսակները տրամադրելուց և զգուշացրեց Ասադին, որ Իսրայելի հետ հակամարտությունն անհրաժեշտ է կարգավորել քաղաքական միջոցներով, և որ ԽՍՀՄ-ը մտադիր է վերականգնել Իսրայելի հետ դիվանագիտական հարաբերությունները:[493] Մոսկվայում Ասադը ստիպված էր համաձայնվել համատեղ հայտարարության հրապարակմանը, որը Մերձավոր Արևելքում խաղաղության հաստատման կոչ էր անում, մասնավորապես՝ ՄԱԿ-ի հովանու տակ միջազգային վեհաժողովի գումարման միջոցով:[494]

Ասադը վստահ էր, որ ստեղծված պայմաններում Սիրիան որևէ բան չի կարող շահել խաղաղ բանակցություններից: Նրա կարծիքով, Վաշինգտոնը ցուցադրեց իր բացահայտ անկարողությունը կամ էլ անպատրաստակամությունը Իսրայելի վրա ճնշում բանեցնելու հարցում, միևնույն ժամանակ ջանք չխնայելով Մերձավոր Արևելքում իր միակ դաշնակից Իսրայելը հզորացնելու համար:

Ամերիկացիներին հակառակ, Ասադը չէր ցանկանում ականատես դառնալ Իսրայելի հետ Արևմտյան Ափի և Գազայի վերաբերյալ Հուսեյնի ու Արաֆաթի գործարքին: Եվ հասկանալի է, որ ամերիկյան հովանավորությամբ նման միջազգային վեհաժողովը անընդունելի էր

[492] Kent, Jay. "The Assad Factor", The Middle East, January 1986, p.47.

[493] Karsh, Efraim. Soviet Policy towards Syria since 1970, pp.58-59; 163-177. Golan, Galia. Gorbachev`s Middle East Strategy, Ed. George W.Breslauer, pp.157-158.

[494] Summary of World Broadcast, Part 1,SU/8553 A4/1, 28 April 1987.

Ասադի համար: Ռ.Մերֆիի խոսքերով, «Սիրիային անհնարին է սպառնալ կամ սիրաշահել: Նա երբեք չի հրաժարվի գրավված արաբական հողերը ազատագրելու և արաբների ոտնահարված իրավունքները վերականգնելու իր սկզբունքային դիրքորոշումից: Սիրիան չի կարող ներքաշվել այնպիսի խաղերի մեջ, որոնք որևէ կերպ կուժեղացնեն Իսրայելը և կթուլացնեն արաբական աշխարհի դիրքերը բանակցություններում: Սիրիան, ցանկանալով իրական, արդար խաղաղություն, մշտապես հավատացել է, որ այն հնարավոր է իրականացնել միմիայն ՄԱԿ-ի կողմից հրավիրված միջազգային վեհաժողովի միջոցով»:[495] Իսրայելի հակազդեցությունը պաղեստինյան ներկայացուցչության նկատմամբ, ինչպես նաև Հորդանանի հրաժարվելը՝ առանց պաղեստինցիների և արաբական աշխարհի հավանության բանակցելուց, փակուղու առջև կանգնեցրին նաև ամերիկյան այս խաղաղ նախաձեռնությունը:

1988թ. Գազայում և Հորդանանի Արևմտյան Ափում պաղեստինյան «ինթիֆադայի» (ապստամբության) սկիզբը ստիպեց Միացյալ Նահանգներին՝ փնտրել պաղեստինյան հարցի լուծման նոր ուղիներ: 1988թ. փետրվարին Շուլցը հանդես եկավ նոր նախաձեռնությամբ՝ առաջարկելով անմիջապես բանակցություններ սկսել Արևմտյան ափում և Գազայի հատվածում՝ Պաղեստինյան ինքնավարության ստեղծման և 1989թ. հունվարին վերոհիշյալ տարածքներում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ անցկացնելու շուրջ: Միաժամանակ, Շուլցն առաջարկեց 1988թ. դեկտեմբերին բանակցություններ սկսել գրավված տարածքների վերաբերյալ: Իսրայելի վարչապետ Շամիրը մերժեց ամերիկյան առաջարկը, նշելով, որ «տարածքների վերադարձը խաղաղության դիմաց՝ անընդունելի է»: Իսկ Իսրայելի պաշտպանության նախարար Ռաբինը հայտարարեց, որ «ինքը չի կարող Ասադին գործընկեր համարել խաղաղության հարցում և այդ իսկ պատճառով «խաղաղություն տարածքների դիմաց սկզբունքը համարում է անիմաստ»:[496] Իր հերթին, Ասադը խստորեն քննադատեց Շուլցի նախաձեռնությունը, որակելով այն որպես «կապիտուլյացիա, արդար կարգավորման հետ որևէ կապ չունեցող և Իսրայելի շահերը պաշտպանող առաջարկ»:[497] Մինչև Իսրայելի հետ բանակցություններ սկսելը՝ Ասադը պահանջեց Գոլանների անվերապահ վերադարձը Սիրիային:

Ընդհանրապես 1970-ականների կեսերից սկսած Սիրիան նախապատվություն էր տալիս Իսրայելի հետ կարգավորման քաղաքական և դիվանագիտական միջոցներին: 1988թ. այդ միտումը էլ

[495] US News and World Report, 01.02.1986.

[496] «Haaretz»,08.06.1988:

[497] «البعث», 1988թ. մարտի 10,21,և 29-ը:Տ



ավելի նկատելի դարձավ Սիրիայի արտաքին քաղաքականության մեջ: Հաշվի առնելով Իսրայելի հետ ռազմավարական հավասարակշռություն հաստատելուն խոչընդոտող դժվարությունները, իրանա-իրաքյան պատերազմից հետո տարածաշրջանում Սիրիայի որոշակի մեկուսացումը, երկրում տիրող տնտեսական ճգնաժամը, և ԽՍՀՄ-ի փլուզման հետ կապված գլոբալ փոփոխությունները, միանգամայն բնական էր, որ Դամասկոսը պետք է Միացյալ Նահանգների հետ իր հարաբերությունները բարելավելու ուղիներ փնտրեր՝ տարածաշրջանային և տնտեսական դիրքերի ամրապնդման, ինչպես նաև ամերիկյան և արաբական օժանդակությամբ Իսրայելի հետ հակամարտության կարգավորման նպատակով:

Որպես սկզբնական քայլ Դամասկոսն աստիճանաբար և զգուշորեն ճանապարհ էր հարթում դեպի Վաշինգտոն և Կահիրե: Սիրիական լրատվամիջոցները մի կողմից քննադատում էին Շուլցի վերջին նախաձեռնությունը, իսկ մյուս կողմից նշում էին, որ «եթե Շուլցը ցանկանում է արդար խաղաղություն, ապա դուռը հայտնի է և ինքը կարող է անարգել ներս մտնել»:[498]

1988թ. փետրվարի վերջին, ապրիլի և հունիսի սկզբին Շուլցը հանդիպումներ ունեցավ Դամասկոսում Ասադի և սիրիական բարձրաստիճան այլ պաշտոնյաների հետ: Չնայած դեռևս փետրվարի սկզբին, հանդիպելով սենատոր Արլեն Սպեկտերի հետ, Ասադը նշել էր, որ ինքը պատրաստ է բանակցել Իսրայելի հետ Գոլանների վերադարձի վերաբերյալ, չկապելով այն Պաղեստինյան խնդրի հետ, այնուամենայնիվ, Շուլցի հետ հանդիպումներում նա մեկ անգամ ևս ընդգծեց, որ Սիրիան շահագրգռված է «արդար և համապարփակ կարգավորմամբ», այլ ոչ թե «միջանկյալ» կամ «մասնակի» լուծումներով:[499] Կողմերը այդպես էլ չկարողացան համաձայնության հանգել: Դրա հիմնական պատճառը, կարծում ենք, կայանում էր ոչ այնքան Վաշինգտոնի և Դամասկոսի իրարամերժ և կարծր դիրքորոշումների մեջ, որքան նրանում, որ Շուլցն ավելի շատ էր «հետաքրքրվում պաղեստինցիներով, քան սիրիացիներով»:[500]

1989թ. ընթացքում Մոսկվայի կողմից Սիրիային զենքի առաքումները նվազեցին 50 տոկոսով: Չնայած 1988-89թթ. ընթացքում Խորհրդային Միությունը դեռևս շարունակում էր Սիրիայում տնտեսական ծրագրերի իրականացումը (Տարտուս քաղաքի նավահանգստի կառուցումը և այլն), ինչպես նաև չէր կրճատել մոտ 2.500 ռազմական խորհրդատուների քանակը, սակայն շարունակում էր կարևորել արաբ-իսրայելական հակամարտության քաղաքական կարգավորումը՝

[498] «البعث», 06.04.1988.

[499] «Haaretz», 07.02.1988: US News and World Report, 14.03.1988, p.14

[500] Shultz, George. Turmoil and Trimph: My Years as Secretary of State, p.229. «Haaretz», 25.02.1988; «Maariv», 26.02.1988.

բացառելով «ռազմական տարբերակը»: Քուվեյթյան «Ալ-Կաբաս» օրաթերթը գրում էր, որ Ալեքսանդր Ձոտովի՝ Սիրիայում ԽՍՀՄ դեսպան նշանակումը Մոսկվայի բացահայտ ակնարկն էր Դամասկոսին, որ նա «հրաժարվի Իսրայելի դեմ պայքարի ռազմական տարբերակից», քանի որ, ըստ օրաթերթի, Ձոտովը «կարևոր դեր էր խաղացել խորհրդա-իսրայելական հարաբերությունների բարելավման գործում և խորհրդային հրեաների հարցերով կոմունիստական կուսակցության պատասխանատուն էր»:[501]

Արևելյան Եվրոպայում համայնավարական համակարգի փլուզումն իր հերթին բացասական ազդեցություն ունեցավ Սիրիայի արտաքին քաղաքականության վրա: Արևելյան Եվրոպայի երկրները ոչ միայն մերժեցին շարունակել նախկին օժանդակությունն Ասադին, այլև, Իսրայելի արտաքին գործերի նախարար Մոշե Արենսի խոսքերով, «հերթ էին կանգնել» Իսրայելի հետ իրենց հարաբերությունները վերականգնելու համար:

Ստեղծված պայմաններում Ասադը, հասկանալով իրավիճակի փոփոխման վտանգը, սկսեց փոխզիջումային քայլեր ձեռնարկել Սիրիայի հանդեպ Արևմուտքի դիրքորոշումը մեղմացնելու ուղղությամբ: 1989թ. կառավարական պաշտոնյաները համաձայնվեցին առաջին անգամ հանդիպել «Amnesty International»-ի ներկայացուցիչների հետ, արտաքսված սիրիացիներին թույլատրվեց վերադառնալ երկիր, 1990թ. մայիսի 22-ին կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքում անկախ ներկայացուցիչների թիվը 18 տոկոսից ավելացավ մինչև ընդհանուր քանակի մեկ երրորդը, ազատ արձակվեցին բանտարկության մեջ գտնվող մի քանի սիրիացի հրեուհիներ, վերականգնվեցին դիվանագիտական հարաբերությունները Մեծ Բրիտանիայի հետ, արգելվեցին ահաբեկչական գործողություններն Արևմուտքի ներկայացուցչությունների նկատմամբ և այլն: Խորհրդային Միությանը ռազմավարական դաշնակից համարելով հանդերձ, Դամասկոսն ավելի ու ավելի էր շրջվում դեպի Վաշինգտոն, հատկապես՝ 1989թ. սկզբից, երբ ԱՄՆ նախագահ ընտրվեց Ջորջ Բուշը:

Ինչ վերաբերում է Լիբանանին, ապա հաջողությամբ ավարտելով այնտեղից օտարերկրյա ուժերի դուրսբերումը, բացառությամբ հարավային «անվտանգության գոտում» տեղակայված իսրայելական սահմանափակ ուժերի, Սիրիայի առաջնային խնդիրը դարձավ կարգ ու կանոնի հաստատումն այդ պառակտված երկրում: 1985թ. դեկտեմբերի 28-ին Դամասկոսը նախաձեռնեց շիաների ղեկավար Նաբիհ Բերիի, դրուզների ղեկավար Վալիդ Ջումբլատի և մարոնիների ղեկավար Էլիե Հոբեյկայի միջև եռակողմ համաձայնագրի ստորագրումը, որը, սակայն, նույնպես չիրագործվեց: 1986-87թթ. գնալով սրվեցին

501 «القبس» (Քուվեյթ), 27.01.1989:



հարաբերությունները Սիրիայի և Հեզբոլլահի միջև, իսկ Իրանի միջամտությունը Լիբանանի ներքին գործերին՝ իր հերթին զգալիորեն վատթարացրեց Սիրիայի հարաբերությունները Թեհրանի հետ:

1985-86թթ. հաճախակի դարձան բախումները սիրիա-իսրայելական սահմանին, հատկապես՝ սիրիական հսկողության տակ գտնվող Լիբանանի Բեքաա հարթավայրի օդային տարածքում: 1985թ. նոյեմբերի 15-ին Իսրայելը սիրիական 2 Միգ-23 ինքնաթիռ խփեց Լիբանանի տարածքի վրա: Դրան Դամասկոսը պատասխանեց Բեքաայում իր հակաօդային հրթիռների տեղադրումով: Ամերիկյան դիվանագիտական միջնորդությունից հետո Դամասկոսը հետ քաշեց հրթիռները Բեքաայից, սակայն ոչ լիբանանյան սահմանամերձ շրջանից, ինչը թույլ տվեց սիրիացիներին՝ վերահսկողություն հաստատել Լիբանանի օդային տարածքի նկատմամբ և վերջ դնել իսրայելական հետախուզական թռիչքներին:

Իրավիճակը Լիբանանում սրվեց 1987թ. վարչապետ Ռաշիդ Քարամեի սպանությունից հետո և 1988թ. սեպտեմբերին, երբ նախագահ Ամին Ժմայելի նախագահության մանդատի ավարտով առաջացավ սահմանադրական ճգնաժամ: Գործող սահմանադրության համաձայն, չունենալով վերընտրվելու իրավունք, Ժմայելը նախագահական թեկնածու գեներալ Միշել Աունին նշանակեց վարչապետի պաշտոնակատար: Փաստորեն երկրում հաստատվեց երկիշխանություն. մի կողմից՝ ի դեմս Միշել Աունի և մյուս կողմից՝ ի դեմս նախկին վարչապետ Սալիմ ալ-Հուսսի, որը փոխարինել էր Քարամեին: Իրար հետ մրցակցող կառավարություններն ապակայունացնելով իրավիճակը՝ լրջորեն մտահոգեցին Սիրիային, հատկապես, երբ 1989թ. գեներալ Աունը անհաջող «ազատագրական պայքար» սկսեց Լիբանանում սիրիական ներկայության դեմ:

Շուլցի գործընկերներից մեկն ասել է, որ «ԱՄՆ պարտությունը Լիբանանում խորապես ազդել էր» պետքարտուղարի վրա: Հետաքրքրական է, որ պարտության պատճառների շարքում ամերիկյան քաղաքական գործիչներն ու լրատվական միջոցները, Լիբանանում ամերիկյան քաղաքականության իրականացման ճանապարհին որպես հիմնական խոչընդոտ նշում էին նաև Ասադի «դաժան վարչակարգը»:[502] Այդուհանդերձ, Վաշինգտոնն աստիճանաբար սկսեց գիտակցել, որ ԱՄՆ-ի քաղաքականությունը Լիբանանում պետք է հաշվի առնի սիրիական գործոնը: Սիրիայի արտգործնախարար Շարաայի կարծիքով, «ԱՄՆ-ի վարչակազմն ընդունել է Լիբանանում իր վարած քաղաքականության սխալը և ճանաչել է Սիրիայի կենտրոնական դերն

502 Dickey, Christopher. Assad and his Allies: Irreconcilable Differences, Foreign Affairs, Vol.66, N1,1987, p.61.

այդ տարածաշրջանում»:[503]

Լիբանանյան ճգնաժամը հարթելու նպատակով ամերիկացիները բանակցություններ նախաձեռնեցին սիրիացիների հետ: Այսպես, 1988թ. ապրիլի 4-ին և սեպտեմբերի 14-ին Դամասկոսում էր գտնվում ԱՄՆ պետքարտուղարի խորհրդատու Ռիչարդ Մերֆին, որը սիրիական կողմի հետ քննարկեց Լիբանանում ստեղծված իրավիճակը: Համաձայնություն ձեռք բերվեց մի շարք սկզբունքային հարցերի վերաբերյալ՝ Լիբանանում բոլոր կողմերի շահերը հաշվի առնող համաձայնագրի ստորագրման անհրաժեշտությունը, Լիբանանի բաժանման անթույլատրելիությունը, Լիբանանում նախագահական ընտրություններ անցկացնելու առաջնայ-նությունը:[504] Անհրաժեշտ է նշել, որ սիրիա-ամերիկյան համագործակցությունը չափազանց կարևոր դեր ունեցավ Լիբանանում խաղաղության հաստատման գործում: Այդ համագործակցության, ինչպես նաև սաուդյան «օրհնության» շնորհիվ հնարավոր դարձավ Թաիֆի համաձայնագրի ստորագրումը 1989թ. հոկտեմբերին:

Համաձայնագիրը կազմված էր 4 մասերից: Առաջինը վերաբերում էր ներքին քաղաքական վերափոխումներին, երկրորդը՝ Լիբանանի տարածքում լիբանանյան պետականության վերահաստատմանը, երրորդը՝ հարավային Լիբանանից իսրայելական զորքերի դուրսբերմանը, և չորրորդը՝ Սիրիայի հետ «հատուկ» հարաբերությունների հաստատմանը: Այսպիսով, կարելի է նշել, որ վերջ դնելով Լիբանանում զինված հակամարտությանը, համաձայնագիրը հատուկ հարաբերություններ հաստատեց Սիրիայի և Լիբանանի միջև բոլոր բնագավառներում («ֆի շաթա ալ-մաջալաթ»), ներառյալ արտաքին քաղաքականության, անվտանգության, պաշտպանության, տնտեսության, կրթության և տեղեկատվության ոլորտները: Համաձայնագրով ստեղծվում էր Գերագույն Խորհուրդ, որը կազմված էր յուրաքանչյուր երկրի նախագահից և երեք պաշտոնյաներից: Համաձայնագրում ամրագրվեց նաև Լիբանանի ձևական խնդրանքը՝ որոշակի հիմունքների վրա սիրիական զորքերը այնտեղ թողնելու վերաբերյալ:[505] Այդ առիթով Սիրիայի արտաքին գործերի նախարար Ֆարուկ Ալ-Շարաան հայտարարեց, որ «լիբանանցիների և սիրիացիների մեծամասնությունը կողջուներ մեր երկու երկրների միացումը», միևնույն ժամանակ ավելացնելով, որ իր կառավարությունը ներկայումս այդպիսի մտադրություն չունի:

[503] «الجوادث», 14 հոկտեմբեր 1984թ.:

[504] Հետաքրքրական է, որ Լիբանանում մարոնիների պատրիարք Բուտրոս Սֆեյրի խոսքերով, ինքը **ԱՄՆ-ի միջոցով Սիրիային էր ներկայացրել նախագահական թեկնածուների ցուցակը** (Foreign Broadcasting Information Service, December 30, 1988).

[505] Pipes Daniel. Damascus Courts the West: Syrian Politics, 1989-1991. Washington Institute for Near  East Policy, p.71.



Թաիֆի համաձայնագիրը չբավարարեց լիբանանյան հակամարտության մեջ ներքաշված բոլոր կողմերին, այնուամենայնիվ իրավական տեսանկյունից այն հնարավոր դարձրեց Pax Syriana-ի հաստատումը Լիբանանում: Վերջինիս վերահսկումը Ասադին տվեց Իսրայելի դեմ նոր ռազմական ճակատ բացելու հնարավորություն, ինչն էլ իր հերթին չափազանց կարևոր խաղաքարտ և տարածաշրջանում պայթյունավտանգ իրավիճակը ղեկավարելու արդյունավետ միջոց դարձավ Հ.Ասադի համար:

Լիբանանի վերաբերյալ զեկույցներից մեկում նշվում էր, որ Սիրիան «հրամաններ է տալիս, ղեկավարներ է նշանակում, կազմակերպում է խորհրդարանական և այլ ընտրություններ, առաջ է քաշում և պաշտոնանկ է անում ում որ ցանկանա, միջամտում է Լիբանանի վարչական, իրավական, տնտեսական և հատկապես քաղաքական հարցերին»:[506] Դամասկոսի կողմից Լիբանանի վերահսկումը այլևս սկսեց կրել համապարփակ բնույթ:

Պետք է նշել, որ 1990թ. քրիստոնյա ազգայնական ուժերը Միշել Աունի ղեկավարությամբ դեմ էին Թաիֆի համաձայնագրի ստորագրմանը, որը, թեև «ժամանակավորապես», այնուամենայնիվ երկարաձգում էր և օրինականացնում սիրիական ներկայությունը Լիբանանում: Աունը փորձեց ապստամբել և պայքար ծավալել սիրիամետ լիբանանյան կառավարության դեմ: Վերջինս հայցեց սիրիական բանակի օգնությունը: Արդյունքում, արդեն 1991թ. բոլոր «միլիցիաները» զինաթափվեցին բացառությամբ՝ Դամասկոսի օժանդակությունը վայելող «Հեզբալլահի»: Նույն թվականի մայիսի 20-ին Լիբանանը և Սիրիան ստորագրեցին «Բարեկամության, համագործակցության և կոորդինացման» վերաբերյալ պայմանագիր, որը վերջնականապես օրինականացրեց սիրիական վերահսկողությունը:

Այսուհանդերձ, փոխզիջման վրա հիմնված Թաիֆի համաձայնության առանցքային այն դրույթը, որի համաձայն խորհրդարանում քրիստոնյաներն ու մահմեդականները հավասար ներկայացուցչություն էին ստանում,[507] «անկյունաքարի նշանակություն» ունեցավ ոչ միայն կողմերի հաշտեցման, այլ նաև Լիբանանի ապագայի համար:

«Քրիստոնյաները /մարոնիները/ հրաժարվեցին մոտ 65 տարի տևած իրենց մենաշնորհից, իսկ մուսուլմանները, չնայած այժմ կազմում էին բնակչության մեծամասնությունը, չպնդեցին, որ խորհրդարանում մեծամասնություն պետք է ունենան»:[508]

[506] Rubin, Barry. The Truth abouth Syria, p.121.

[507] Լիբանանի կառավարությունում հայ համայնքին հատկացվեց 2 նախարարական պորտֆել:

[508] Հովհաննիսյան Ն. Արաբական երկրների պատմություն, 3-րդ հատոր, էջ 658-659: Իսկ երկրի կառավարման հենքում դրվեց բաշխման «տրոյկայի» հետևյալ սկզբունքը՝ մարոնի

Առաջին անգամ Լիբանանի կառավարման կրոնահամայնքային բնույթը վերանայման ենթարկվեց՝ ճանապարհ հարթելով ապագայում նաև պետականությունը թուլացնող այդ դրույթը ամբողջությամբ վերացնելու համար:

Թաիֆի համաձայնագրի պատմական նշանակությունը կայացավ նրանում, որ այն պաշտոնապես վերջ դրեց Լիբանանում 15-ամյա քաղաքացիական պատերազմին:

### *ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ, ԹՄՐԱԴԵՂԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԱՄՆ-ՍԻՐԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ*

Սիրիայի կողմից «ահաբեկչական գործողություններին աջակցությունը» դարձավ ԱՄՆ-ի հետ այդ երկրի հարաբերությունների վատթարացման հիմնական պատճառներից մեկը: Եթե սկզբնական շրջանում պաղեստինյան և Իրանի կողմից ֆինանսավորվող այլ խմբերի կողմից Լիբանանում պատանդներ վերցնելու դեպքերը Դամասկոսը հիմնականում օգտագործում էր որպես միջոց՝ ամերիկացիների հետ հարաբերությունները բարելավելու համար, ապա աստիճանաբար իրանական խմբավորումների և Դամասկոսի միջև աճող անհամաձայնությունն ու հակասությունները զրկեցին վերջինիս նաև այդ գործնական հնարավորությունից: Պատանդ վերցնելու գործողությունների աճն ու հաճախականությունը, ի վերջո, դուրս գալով Սիրիայի վերահսկողությունից, շատ ավելի վնասեց, քան օգուտ բերեց նրան:

Այսպես, 1985թ. հունիսին Իսլամական Ջիհադ կազմակերպությունը պատանդ վերցրեց 6 ամերիկացիների՝ լրագրողի, Բեյրութի Ամերիկյան Համալսարանի հիվանդանոցի տնօրենի, ակադեմիկոսի, երկու հոգևորականների և Լիբանանում ԿՀՎ-ի գործակալության ղեկավար Ուիլյամ Բաքլիին: Ասադը փորձեց միջամտել, սակայն հաջողության չհասավ: Հունիսի 14-ին շիաների խմբավորումն առևանգեց TWA 847 չվերթի ինքնաթիռը՝ պատանդ վերցնելով 40 ամերիկացու, որոնցից մեկն ավելի ուշ սպանվեց: Ասադն այստեղ էլ փորձեց միջամտել և, չնայած որ նրա խոսնակը հայտարարեց, թե բոլոր պատանդներն ազատ կարձակվեն, «ծայրահեղականները» նոր պայմաններ դրեցին: Մեկ օր անց, բոլոր պատանդներն ազատ արձակվեցին՝ բացի 6 ամերիկացիներից և 4 ֆրանսիացիներից:[509]

պրեզիդենտի, սուննի վարչապետի և շիա պառլամենտի նախագահի կողմից:

[509] Շուլցի այն կարծիքը, թե իբր Ասադը միջամտեց միայն այն պատճառով, որ վախեցավ ամերիկյան ռազմական հարվածից, չի համապատասխանում իրականությանը:



Հետագայում, 1986թ. նոյեմբերին, Իսլամական Ջիհադը, ազատ արձակելով Բեյրութի Ամերիկյան Համալսարանի հիվանդանոցի տնօրեն Դեյվիդ Ջակոբսենին, նրա վերադարձը կազմակերպեց այնպես, որ Ասադը չկարողանա որևէ ձևով օգտվել դրանից:

Այսուհանդերձ, Դամասկոսը շարունակում էր վստահեցնել Վաշինգտոնին, որ կօգտագործի իր բոլոր հնարավորությունները Լիբանանում ամերիկյան պատանդներին ազատ արձակելու համար: Սակայն ամերիկյան վարչակազմի ներկայացուցիչները աստիճանաբար կորցնում էին վստահությունը Ասադի նկատմամբ և ուղիներ փնտրում Թեհրանի հետ գործարք կնքելու ուղղությամբ: Չնայած ԱՄՆ պաշտոնական շրջանները բազմիցս հերքել են Իրանի հետ շփումների և որևիցե համաձայնության փաստը, այնուամենայնիվ, կան տվյալներ, որ Վաշինգտոնը համաձայնվել էր զինամթերքի որոշ տեսակներ տրամադրել Իրանին՝ ամերիկյան պատանդների ազատ արձակման դիմաց:[510] Ռեյգանի վարչակազմի բարձրաստիճան պաշտոնյաներից մեկի վկայությամբ, երրորդ կողմի միջոցով Վաշինգտոնն անգամ նամակ է հղել իրանցիներին, ուր տեղեկացրել է, որ որևէ անձ լիազորված չէ բանակցել Միացյալ Նահանգների անունից՝ Լիբանանում պատանդների ազատ արձակման հարցի վերաբերյալ:[511]

Դամասկոսը աստիճանաբար զրկվում էր ԱՄՆ-ի հետ հարաբերություններում չափազանց կարևոր լծակից և բնականաբար արժանանում էր ամերիկյան վարչակազմի մեղադրանքներին ու գործնական պատժամիջոցներին: Նկատենք, որ սիրիական կողմն իր հերթին, մշտապես ժխտել է իր մասնակցությունը ահաբեկչական գործողություններին, ինչի վերաբերյալ բազմաթիվ ուղերձներ է հղել Վաշինգտոն:[512]

1985թ. վերջին Վիեննայի և Հռոմի օդանավակայաններում իրականացված ահաբեկչական գործողություններից սպանվեց 20 մարդ, ներառյալ 5 ամերիկացի: 1986թ. ապրիլին Արևմտյան Բեռլինի գիշերային ակումբներից մեկում պայթեցրած ռումբի հետևանքով նույնպես մեծ թվով ամերիկացիներ զոհվեցին: Պետական հովանավորություն վայելող ահաբեկչության դեմ պայքարը դարձավ ամերիկյան վարչակազմի առաջնային խնդիրներից մեկը, որն իր գագաթնակետին հասավ 1986թ. ապրիլին, Լիբիայի ռմբակոծումով: Ապրիլի 24-ին Ռեյգանը հայտարարեց, որ չի բացառում նաև Սիրիայի և Իրանի ռմբակոծումը: Մեկ օր անց պետքարտուղար Շուլցը, հերքելով Սիրիայի կամ Իրանի ռմբակոծման վերաբերյալ որևէ կոնկրետ ծրագրի գոյությունը, չբացառեց ռազմական ուժի օգտագործումն այն երկրների նկատմամբ, որոնք կապեր

[510] George P.Shultz. Turmoil and Trimph:My Years as Secretary of State, p.665-668.

[511] “New York Times”, 08.10.1988.

[512] “Washington Post”, 01.07.1986.

ունեն ահաբեկչության հետ:[513]

Դամասկոսն իր հերթին քննադատեց Լիբիայի ռմբակոծումն ու Ռեյգանի «բշնամական հայտարարությունները»: Հատկապես նշվում էր, որ ամերիկյան գործողությունները «սառեցրեցին» արաբա-ամերիկյան համագործակցությունը տարբեր ոլորտներում, ներառյալ Լիբանանում ամերիկյան պատանդների ազատ արձակման գործընթացը:[514]

Միացյալ Նահանգներին մտահոգում էր Աբու Նիդալի[515] պաղեստինյան ահաբեկչական խմբի գործունեությունը, մասնավորապես, Դամասկոսում վերջինիս գրասենյակի գոյության փաստը: Եվ երբ հոկտեմբերին Լոնդոնում իսրայելական օդանավի պայթեցման փորձի համար ձերբակալված հորդանանցին խոստովանեց սիրիական հետախուզության հետ իր կապերը, Միացյալ Նահանգները, հետևելով Մեծ Բրիտանիայի օրինակին, հետ կանչեցին իրենց դեսպանին Դամասկոսից:[516]

ԱՄՆ-ը նոր պատժամիջոցներ կիրառեց Սիրիայի նկատմամբ, որոնք ընդգրկեցին արդիական տեխնոլոգիաների առաքման և Import-Export բանկի կողմից Սիրիա արտահանումների ֆինանսավորման արգելումը, ինչպես նաև սիրիա-ամերիկյան օդային հաղորդակցությունների համաձայնագրի չեղյալ հայտարարումն ու ճնշումն ամերիկյան նավթային ընկերությունների վրա՝ Սիրիայում նրանց գործունեությունը սահմանափակելու նպատակով: Բացի դեսպանի հետկանչումից Վաշինգտոնը նվազեցրեց նաև Դամասկոսում ԱՄՆ դեսպանության աշխատակազմի թվաքանակը:

ԱՄՆ-ի պետքարտուղարի տեղակալ Ուայթհեդը, ելույթ ունենալով Բրուքինգս հաստատությունում, հայտարարեց, որ «Աբու-Նիդալի ահաբեկչական խումբը համարվում է ամենավտանգավորը և վայելում է սիրիական բացահայտ աջակցությունը: Մասնավորապես, Դամասկոսն արտոնում է վերոհիշյալ խմբի վարժեցումն իր հսկողության տակ գտնվող լիբանանյան ճամբարներում, ինչպես նաև հնարավորություն է տալիս անարգել տեղաշարժվելու սիրիական տարածքով, ապահովում է անհրաժեշտ փաստաթղթերով և այլն: Սակայն Աբու-Նիդալի խմբից բացի, Դամասկոսը աջակցում է նաև տարբեր ծայրահեղական պաղեստինյան, քրդական (Քրդստանի բանվորական կուսակցության), ճապոնական (Կարմիր Բանակի), ինչպես նաև հայկական (ԱՍԱԼԱ) և

[513] "New York Times", 24,25 April,1986.

[514]"Washington Post", 18.05.1986.

[515]Աբու Նիդալ /Սաբրի ալ-Բաննա/(1937-2002), ՊԱԿ-ից անջատված «Ֆաթհի հեղափոխական հրամանատարություն» կազմակերպության ղեկավարն էր, որը հետագայում միացավ Դամասկոսից գործող Յ.Արաֆաթին ընդդիմադիր՝ ՊԱԺՃ-ին:

[516] Christopher Dickey, Assad and His Allies: Irreconcilable Differences., Foreign Affairs, Vol.66, N1,1987, p.59.



պակիստանյան (Ալ-Զուլֆիկարի) խմբավորումներին»:[517]

Ինչպես արդեն նշել ենք, 1979թ. Սիրիան գրանցվեց ԱՄՆ-ի Պետքարտուղարության ցուցակներում, որպես միջազգային ահաբեկչությունը սատարող երկիր, որի հետևանքով արգելվեց 7 մլն դոլարից ավել արտոնագրված ապրանքների և տեխնոլոգիաների արտահանումն այդ երկիր: 1986թ. լրացուցիչ սահմանափակումներ և վերահսկողության միջոցներ սահմանվեցին Սիրիա առաքվող ապրանքների վրա, իսկ 1979թ. Արտահանումը Վերահսկող Արձանագրության (6i) հոդվածի համաձայն, 1986թ. որոշվեց նվազեցնել Սիրիա առաքվող ապրանքների ընդհանուր գումարը մինչև 1մլն դոլարի:[518] 1986թ. ԱՄՆ-ի Կոնգրեսն ընդունեց Դիվանագիտական Անվտանգության և Հակաահաբեկչության վերաբերյալ Ընդհանուր Արձանագրությունը (P.L.99-399), որի 509 կետի համաձայն, արգելվում էր որևէ տեսակի զինամթերքի առաքում ահաբեկչությանը նպաստող երկրներին, այդ թվում և Սիրիային:[519]

Սիրիա-ամերիկյան հարաբերություններում որոշակի ջերմություն նկատվեց Դամասկոսում Աբու-Նիդալի գրասենյակի փակման և Լիբանանում պատանդ վերցված ամերիկյան լրագրող Չարլզ Գլասի ազատ արձակման հարցում Սիրիայի գործադրած ջանքերից հետո: Հունիսի 25-ին ԱՄՆ նախագահ Ռեյգանն անձնական նամակ հղեց Ասադին, իսկ հուլիսի 26-ին Դամասկոս այցելեց ամերիկյան բանագնաց Վերնոն Վոլթերսը, որն Ասադի հետ քննարկեց սիրիա-ամերիկյան հարաբերություններին և ահաբեկչությանը վերաբերող մի շարք հարցեր: Օգոստոսի 18-ին Բեյրութում հայտնվեց լրագրող Չ.Գլասը, որն ավելի ուշ հանձնվեց Դամասկոսում ԱՄՆ-ի դեսպանությանը՝ Սիրիայի արտգործնախարար Ֆարուկ ալ-Շառաայի կողմից: Չնայած Գլասը պնդում էր, որ ինքը դիմել էր փախուստի, այնուամենայնիվ պաշտոնական Դամասկոսը շտապեց իրեն վերագրել նրա ազատ արձակման փառքը: Ինչևիցե, սեպտեմբերի 2-ին, Դամասկոս վերադարձավ ԱՄՆ դեսպան Վիլյամ Իգլտոնը, իսկ մեկ շաբաթ անց Վաշինգտոնը տեղեկացրեց ամերիկյան նավթային ընկերություններին, որ վերջիններս նորից կարող են գործակցել Սիրիայի հետ:

Եթե Վաշինգտոնը մեղադրում էր Սիրիային «ահաբեկչության մեջ», ապա Դամասկոսը երբևէ և մինչ օրս էլ չի կարծում, որ աջակցելով

[517] Journal of Palestine Studies. Vol. XVII, No.3, Spring 1987, p.216.

[518] Congressional Research Service. The Library of Congress. Syrian-US Relations. By Alfred B.Prados. Foreign Affairs and National Defence Division. May 3,1995,p.11.

[519] 1987թ. Ամերիկա-Իսրայելյան Հասարակայնության Գործերով Կոմիտեի (American Israel Public Affairs Committee-AIPAC) հրատարակած Հայտարարության մեջ ԱՄՆ-ի նախագահին կոչ էր արվում կասեցնել բոլոր տեսակի առևտրական կապերը Սիրիայի հետ և կրճատել Դամասկոսում ամերիկյան և Վաշինգտոնում սիրիական դեսպանությունների անձնակազմերը:

պաղեստինցիների պայքարին՝ աջակցել է ահաբեկչությանը: Ի դեպ ահաբեկչության միջազգային իրավական սահմանման խնդիրը չափազանց արդիական է: Մինչ օրս, չնայած ՄԱԿ-ում ստեղծված հատուկ «իմաստունների խմբի» աշխատանքներին, այդպես էլ չհաջողվեց ընդհանուր կարծիք ձևավորել «ահաբեկչություն» հասկացության վերաբերյալ: Պարադոքս է թվում, սակայն դա այսպես է: Միջազգային հանրությունը պետք է սահմանի «ահաբեկչությունը», ինչպես ասենք դա արվեց 1944թ. «ցեղասպանություն» եզրի դեպքում: Այն պետք է հստակ ամրագրի, որ խաղաղ բնակչության դեմ նպատակաուղղված ուժի կիրառումն ու սպանությունը համարվում է «ահաբեկչություն»՝ անկախ դրդապատճառներից: Ազգային-ազատագրական պայքարը և ահաբեկչությունը նույնացնող մարդիկ պետք է հասկանան, որ ոչ մի նպատակ և ազնիվ գաղափար չի կարող անմեղ և խաղաղ մարդկանց մահվան պատճառ դառնալ: Ահաբեկչությունն ու այն կատարողները պետք է դատապարտվեն ամեն մի վայրում և ամեն ժամանակ: Այս արդիական և իրավաքաղաքական հրատապ հարցին, ինչպես կտեսնենք ստորև, անդրադարձավ Հ.Ասադը՝ ամենուրեք ձերբազատվելով ահաբեկչական նպատակներից ու գործողություններից:

1998թ. հունիսի 16-ին ֆրանսիական TF-1 հեռուստաալիքին տված հարցազրույցի ընթացքում Սիրիայի ղեկավարը հետևյալ կարծիքն է արտահայտել ահաբեկչության և պաղեստինյան խմբավորումների գործունեության վերաբերյալ. «Մենք արդեն վաղուց ենք ապրում ահաբեկչության մեղադրանքների հետ: Մեզ չի հուզում այդ անպատշաճ թեման: Ոչ ոք չի կարող գոնե մեկ վկայություն բերել, որով կապացուցվի, թե Սիրիայում առկա է ահաբեկչություն: Այն, ինչի մասին խոսում են, դա ահաբեկչություն չէ: Այն մարդկանց, որոնք պաշտպանում են իրենց տները, իրենց հողը, Հայրենիքը, նրանք անվանում են ահաբեկիչներ: Նրանք մեզ ուղղակի չեն մեղադրում ահաբեկչության մեջ, այլ հաստատում են, որ մենք հովանավորում ենք ահաբեկչությունը, քանի որ թույլատրում ենք տասնյակ հազարավոր պաղեստինցիների ապրել մեզ հետ միասին և օգտվել սիրիական քաղաքացիների բոլոր իրավունքներից: Եվ իսկապես, իրենց տներից վտարված, ահաբեկչության մեջ մեղադրվող պաղեստինցիները գտնվում են Սիրիայում, Լիբանանում և Հորդանանում, միգուցե նաև այլ երկրներում: Ով բողոքում է մեր կողմից նրանց օգնության տրամադրելուց մենք ասում ենք՝ վերադարձրեք նրանց իրենց տները:

Ինչևիցե, արդեն տաս տարուց ավելի է ինչ պաղեստինցիները սիրիական տարածքից բռնություններ չեն իրականացնում: Պաղեստինի հարցերը լուծվում են Պաղեստինում, այլ ոչ թե Սիրիայում: Կցանկանայի հիշեցնել, որ դեռևս 1985թ. ես առաջարկել եմ միջազգային համաժողով գումարել, ուր հստակ կսահմանվեր ահաբեկչությունը և տարբերակում



կդրվեր ահաբեկչության և ինքնապաշտպանության միջև: Քաղաքացիական բոլոր օրենքները, փաստաթղթերը, ՄԱԿ-ի բանաձևերը հաստատում են ինքնապաշտպանության իրավունքը»:[520]

Նույն հարցազրույցում Ասադն անդրադարձել է Մադրիդի համաժողովի ժամանակ տեղի ունեցած հայտնի միջադեպին. երբ Իսրայելի վարչապետ Ի.Շամիրը Սիրիային մեղադրել էր ահաբեկչության մեջ, ապա Սիրիայի արտգործնախարարը ներկաներին ցույց էր տվել Ի.Շամիրի նույն մեծ լուսանկարը, որը շրջանառության մեջ դնելով, բրիտանական մանդատային իշխանությունները փնտրել էին նրան որպես ահաբեկչի: Ասադն այնուհետև ավելացրել է. «Այդ միջադեպը անգամ վիճաբանություն առաջացրեց հենց իսրայելցիների մեջ, որոնք տեղի ունեցածը համարեցին ամոթալի, քանի որ ահաբեկչության մասին բարբառող Շամիրը ինքն էր ահաբեկիչ և դարձել էր Իսրայելի կառավարության ղեկավար»:

Ըստ ամերիկյան կոնգրեսի և պետքարտուղարության բազմաթիվ փաստաթղթերի, Սիրիան տարանցիկ կետ է հանդիսացել թմրադեղերի համար: Նրա տարածքով էր անցնում լիբանանյան Բեքաա հարթավայրից դեպի Եվրոպա և Միացյալ Նահանգներ թմրադեղերի (հաշիշ և հերոին) հոսքը: Այդ և ուրիշ թմրադեղերի տեղափոխման համար (օպիում, մորֆին և պսիխոտրոպ հիմք ունեցող այլ նյութեր) մեկ այլ ուղին Թուրքիայից անցնում է Սիրիայով դեպի Մերձավոր Արևելքի և Պարսից ծոցի երկրներ: Չնայած այն հանգամանքին, որ Սիրիան ստորագրել էր 1961թ. թմրադեղերի վերաբերյալ միջազգային համաձայնագիրը և 1972թ. դրան կից արձանագրությունը, ինչպես նաև 1971թ. համաձայնագիրը պսիխոտրոպ նյութերի մասին և 1988թ. վավերացրել ՄԱԿ-ի համաձայնագիրը՝ թմրադեղերի վերաբերյալ, այնուամենայնիվ, 1987թ. սկսած, Սիրիան ԱՄՆ-ի տարեկան Նախագահական Զեկույցում նշվում է որպես երկիր, որը «բավարար ջանքեր չի գործադրում թմրադեղերի արտադրությունն ու իր հսկողության տակ գտնվող տարածքներով նրանց հոսքը դադարեցնելու ուղղությամբ»:[521] Պետք է նշել, որ այդ հարցը մտահոգում էր Վաշինգտոնին հիմնականում այն պատճառով, որ Սիրիայից թմրադեղերի որոշակի քանակություն առաքվում էր նաև դեպի Միացյալ Նահանգներ: Կարճ ասած, թմրադեղերի հարցը հավելյալ բարդություն առաջացրեց առանց այդ էլ ծայրաստիճան լարված սիրիա-ամերիկյան երկկողմ հարաբերություններում:

Այստեղ պետք է ասել, որ Սիրիայից բացի թմրադեղերի տարանցման մի քանի այլ ուղիներ ևս գոյություն ունեն Մերձավոր Արևելքում: Սակայն նպատակահարմար չնկատելով մտնել այս հարցի

[520] Мир глазами президента Сирии Хафез Асада, с.201-214.

[521] Congressional Research Service. The Library of Congress. Syrian-US Relations. By Alfred B.Prados. Foreign Affairs and National Defence Division. May 3,1995, p.7.

մանրամասների մեջ, պետք է հստակեցնել՝ *Սիրիան երբևիցե հայտնի չի եղել որպես թմրադեղեր արտադրող երկիր կամ էլ «փողերի լվացման» միջազգային կենտրոն: Այս հարցը ԱՄՆ-ի կողմից շահարկվեց ավելի շատ ոչ թե գործնական, այլ քաղաքական նկատառումներից ելնելով:*

Աիաբեկչությանն աջակցելու մեղադրանքներից բացի սիրիացիների վրա ճնշում գործադրելու Վաշինգտոնի համար մեկ այլ հարմար միջոց էր Սիրիայում մարդու իրավունքների վիճակի խնդիրը:

Ընդհանրապես, մարդու իրավունքներն ու ժողովրդավարության հաստատումը ԱՄՆ-ի վարչակազմի ամենահիմնական և լուրջ լծակներից են երրորդ երկրների հետ հարաբերություններում:

ԱՄՆ արտաքին քաղաքականության մեջ այդ հարցը դարձել է այն ինչ ժամանակին Մոսկվայի համար «սոցիալիզմը» և նրա արտահանումն էր աշխարհի տարբեր մասեր: Այսօր «ժողովրդավարության» հաստատման ու «մարդու իրավունքների» պաշտպանության դրոշի տակ Վաշինգտոնը հետապնդում է իր սեփական աշխարհաքաղաքական շահերը: Եթե այս կամ այն երկրի իշխանությունները այնքան էլ ամերիկամետ չեն, ապա Վաշինգտոնը անմիջապես ջերմեռանդորեն գործի է դնում պատժամիջոցների իր ողջ զինանոցը: Եթե այս կամ այն վարչակազմը բավականաչափ ամերիկանպաստ է, ապա չնայած այդ երկրում մարդու իրավունքների խայտառակ իրավիճակին Վաշինգտոնը, կարող է համբերատար լինել:

Մենք բնավ հակված չենք իդեալականացնելու Մերձավոր Արևելքի բոլոր երկրներում ժողովրդավարության մակարդակը կամ էլ մարդու իրավունքների հետ կապված իրավիճակը: Տարածաշրջանի երկրները այսօր հեռու են արևմտյան չափանիշների ժողովրդավարությունից: Այնքան ինչքան հեռու են թշնամիների կողմից պաշարված քաղաքի բնակիչները՝ օպերա կամ մշակութային այլ ձեռնարկ դիտելու շռայլությունից: Պարտադրանքն ու պատժամիջոցները չեն կարող արդյունավետ միջոց լինել արաբական միապետություններում և արաբական այլ երկրներում ժողովրդավարացման գործընթացը ծավալելու համար: Ընդհակառակը՝ ԱՄՆ-ի և Արևմուտքի ճնշումները կարող են անցանկանալի և անսպասելի արդյունքներ ունենալ առաջին հերթին հենց այդ նույն Արևմուտքի համար: Վերջինիս կողմից իսլամական ծայրահեղականության գործոնի թերագնահատումը արաբական գրեթե բոլոր երկրներում՝ հղի է անկանխատեսելի հետևանքներով՝ իսլամիստների՝ իշխանությունը գրավելու միանգամայն իրական հեռանկարով: Վերոհիշյալն ապացուցվեց առաջին անգամ Ալժիրում, 1990-ականների վերջում՝ արմատականության հռչակած պատերազմով, Պաղեստինում 2006թ.՝ «Համասի» հաղթանակով ու իշխանության պառակտմամբ: Եգիպտոսում «Իխվան ալ-Մուսլիմին» կազմակերպությունը թեև արգելված է, սակայն աստիճանաբար



ծավալում է իր ազդեցությունը երկրում՝ 2005թ. խորհրդարանական ընտրություններում այն եռապատկեց իր պատգամավորների թիվը: Նույն իրավիճակն է նաև Մարոկկոյում:

Արաբական երկրներում կրոնական հենքի վրա գործող տարբեր կազմակերպությունների վայելած ժողովրդականությունը լուրջ սպառնալիք է է արաբական աշխարհիկ թերևս բոլոր երկրների իշխող վարչակազմերի համար: Իրական ժողովրդավարության հաստատման դեպքում արաբական երկրները կվերածվեն իսլամական պետությունների՝ Իրանի օրինակով: Այդ պատճառով էլ նրանք փորձում են շահարկել վերոհիշյալ դրույթը՝ սեփական երկրներում բարեփոխումներից զերծ մնալու կամ ժողովրդավարական գործընթացները կասեցնելու նպատակով: *Ամեն դեպքում արաբական երկրներում ժողովրդավարությունը քաջալերելու և խթանելու գործում, Արևմուտքը պետք է հաշվի առնի յուրաքանչյուր երկրի ավանդույթները, քաղաքական մշակույթի ձևավորման պատմությունը, ներքին իրավիճակն ու առանձնահատկությունները:* Եվ վերջապես, ժողովրդավարական հասարակարգ ստեղծելու մեջ ավելի շատ պետք է շահագրգռված լինեն հենց երկրի քաղաքացիները, և ոչ թե հարևան կամ մեծ տերությունները:

Ինչ վերաբերում է Սիրիային, ապա 1963թ. սկսած, բացի 1973-1974թթ. կարճ ընդմիջումից, Սիրիայում գործել է ռազմական դրություն: Պետքարտուղարության զեկույցների մեջ բազմիցս նշվել է «ապօրինի ձերբակալությունների և ազատազրկման վճիռների կայացումն առանց դատաքննության, խոսքի, մամուլի և միությունների իրավունքների ոտնահարումը և այլն»:[522]

Մարդու իրավունքների լուրջ խախտում էր արձանագրվել ԱՄՆ-ի կողմից դեռևս 1982թ. Հալեպի և Համայի հայտնի դեպքերից հետո, երբ կառավարությունը ճնշեց «Իխվան ալ-Մուսլիմին»-ի կազմակերպած խռովությունը: Հետաքրքրական է, որ սիրիական պաշտոնյաները ներկայումս այդ առթիվ նշում են, որ կառավարության արագ գործողությունների շնորհիվ էր, որ հաջողվեց կասեցնել մահմեդական ծայրահեղականների տարածումն ու զերծ պահել երկիրը մահմեդականների հետագա բռնություններից, որոնք տեղի են ունենում Եգիպտոսում, Ալժիրում և արաբական այլ երկրներում: Սիրիան մարդու իրավունքի վիճակի վերաբերյալ մեղադրանքները վերագրում էր ռազմական և պատերազմական դրությանը ու շարունակաբար ժխտում ընդհանրապես քաղբանտարկյալների գոյությունը երկրում: Հետագայում, Արևմուտքին և մասնավորապես Միացյալ Նահանգներին գոհացնելու և

[522] Congressional Research Service. The Library of Congress. Syrian-US Relations. By Alfred B.Prados. Foreign Affairs and National Defence Division. May 3,1995, p.8.

հարաբերությունները կարգավորելու նպատակով, Սիրիան քաղքանտարկյալների համաներում հայտարարեց, ինչպես նաև բարելավեց երկրում ապրող հրեաների վիճակը: Այս վերջին հարցին մանրամասն կանդրադառնանք ավելի ուշ:



# ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

## ՍԻՐԻԱՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱԿՏԻՎ ՄԱՍՆԱԿԻՑ (1991-2000թթ.)

### *ՍԻՐԻԱՅԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԾՈՑԻ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ*

Ինչպես արդեն նշել ենք, 1988թ. սկսած Դամասկոսը զգուշորեն ուղիներ էր փնտրում Միացյալ Նահանգների հետ մերձեցման համար: Մասնավորապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 1989թ. Ջորջ Բուշը ԱՄՆ-ի նախագահ էր ընտրվել առանց «հրեա քվեարկողների» աջակցության, սիրիացիները սկսեցին հույսեր փայփայել, որ ԱՄՆ-ը, «որպես միջազգային անվտանգության և խաղաղության համար պատասխանատու գերտերություն, կհրաժարվի սիոնիստական մտածելակերպից և վերջ կդնի սիոնիստական վտանգին, կստիպի սիոնիստ թշնամուն դուրս բերել զորքերը գրավված տարածքներից և իրագործել միջազգային որոշումները՝ տարածաշրջանում արդար ու համապարփակ խաղաղություն հաստատելու նպատակով»:[523] Բուշն ու պետքարտուղար Բեյքերը քննադատում էին Իսրայելի քաղաքականությունը գրավված արաբական տարածքներում, պահանջելով Իսրայելից կարգավորել արաբ-իսրայելական հակամարտությունը ՄԱԿ-ի 242 և 338 բանաձևերի համաձայն, խաղաղություն՝ տարածքների վերադարձի դիմաց սխեմայով: Սրանով հանդերձ, Միացյալ Նահանգները հավաստիացնում էր Սիրիային բոլոր ճակատներում, ներառյալ Գոլաններում, համապարփակ կարգավորման հասնելու իր մտադրության մասին: Դամասկոսում ամերիկյան դեսպան Է.Ջերեջյանի խոսքերով, Վաշինգտոնը «Սիրիայի հետ համագործակցության նոր շրջան էր բացել»:[524]

Սիրիան, իր հերթին, 1989թ. ավելի ճկուն դիրքորոշում ցուցաբերելով, աջակցություն հայտնեց ՄԱԿ-ի վերոհիշյալ բանաձևերին և աստիճանաբար սկսեց Եգիպտոսի հետ մերձեցմանն ուղղված քայլեր նախաձեռնել: 1988թ. դեկտեմբերին, տասնամյա հակաեգիպտական քարոզչությունից հետո, Ասադը հրապարակայնորեն հայտարարեց, որ «ընդունում է Եգիպտոսի կարևորությունը արաբական բեմի վրա» և որ «սիրիա-եգիպտական համագործակցությունը մշտապես

[523]«تشــرين», 21.01.1989թ.:

[524] «Yedioth Ahronot» 23.05.1989թ.:

համապատասխանել է արաբական աշխարհի ընդհանուր շահերին»:[525] 1989թ. մայիսին Սիրիան այլևս չէր ընդդիմանում Եգիպտոսի վերաանդամակցմանը Արաբական լիգային: 1989թ. դեկտեմբերի կեսերին վերականգնվեցին օդային թռիչքները Կաիրոի և Դամասկոսի միջև, իսկ երկու շաբաթ անց, վերականգնվեցին նաև նրանց դիվանագիտական հարաբերությունները: 1990թ. հուլիսին Ասադը 13 տարվա ընդմիջումից հետո առաջին պաշտոնական այցը կատարեց Եգիպտոս և Կաիրոից մեկնելուց առաջ հայտարարեց.«Մենք պատրաստ ենք միանալ խաղաղության գործընթացին, մենք ընդունում ենք ՄԱԿ-ի 242 և 338 բանաձևերը և շարունակում կոչ անել արդար ու համապարփակ խաղաղության հաստատմանը»:[526]

Սառը պատերազմի ավարտի հետևանքով Սիրիայի արտաքին քաղաքականության մեջ կատարված վերոհիշյալ հիմնարար փոփոխությունը նպատակ էր հետապնդում ոչ միայն բարելավել երկրի տարածաշրջանային դիրքերը, այլև ընդհանուր ճակատ ստեղծել Եգիպտոսի հետ (ինչպես նաև Սաուդյան Արաբիայի և Հորդանանի հետ)՝ հակազդելու Իսրայելի մերձողական կեցվածքի և պաղեստինցիների ու Հորդանանի հետ առանձին գործարք կնքելու նրա ձգտման դեմ: Այդ իսկ պատճառով Դամասկոսը շարունակաբար հայտնում էր արաբ-իսրայելական հակամարտությունը խաղաղ ճանապարհներով լուծելու իր պատրաստակամության մասին: 1990թ. սկզբին Ասադը ԱՄՆ նախագահին փոխանցեց Իսրայելի հետ որոշակի պայմաններով բանակցելու իր համաձայնությունը: Դամասկոսի հայտարարությունները հիմնականում ուղղված էին Բուշի վարչակարգին, որպես միակ ուժի, որն ի վիճակի էր համոզել Իսրայելին՝ բանակցելու համապարփակ կարգավորման շուրջ, դուրս բերել իր զորքերը Գոլաններից, ինչպես և տնտեսական աջակցության հետ մեկտեղ՝ Սիրիան հանելով ահաբեկչությանն աջակցող երկրների ցուցակից:

Այդ ենթատեքստում հետաքրքրական էր 1989թ. նոյեմբերին Նյու-Յորք կայանալիք այցելության ընթացքում ԱՄՆ «առաջադեմ հրեաների հետ» հանդիպելու՝ Սիրիայի փոխվարչապետ Աբդ ալ-Հալիմ Խադդամի խնդրանքը: «Ջերուսալեմ փոստ» իսրայելական օրաթերթի հաղորդման համաձայն, հրեաները մերժել էին Սիրիայի փոխվարչապետի խնդրանքը, այն պատճառաբանությամբ, որ չեն ցանկանում «միջամտել մերձավորարևելյան դիվանագիտությանը»:[527]

Գլոբալ և տարածաշրջանային փոփոխությունները շատ ավելի ծանր հետևանքներ ունեցան Դամասկոսի, քան Թել-Ավիվի համար: Եթե Սիրիային ցուցաբերվող խորհրդային ռազմական, քաղաքական և

[525]«تشــــرين», 09.02.և 16.05.1989թ.:

[526] Նույն տեղում, 1989թ. 12.12. և 17.12:

[527] "Jerusalem Post", November, 1,1989.



դիվանագիտական աջակցությունը նվազեց, ապա Իսրայելի նկատմամբ միջազգային հովանավորությունը ոչ միայն շարունակվեց, այլև աճեց: 1990-ականի սկզբին ռազմավարական տեսակետից Իսրայելի դիրքերն ավելի ամուր էին, քան Սիրիայինը: Սիրիա-ամերիկյան հարաբերություններում ստեղծված կացությունից դուրս գալու և «առաջխաղացում» ձեռք բերելու գործում Ասադին անսպասելիորեն անուղղակի կերպով օգնեց մի անձ, որը տարիներ շարունակ նրա հակառակորդն էր՝ Սադդամ Հուսեյնը:

1990թ. օգոստոսի 2-ին Իրաքը ներխուժեց Քուվեյթ և գրավեց այն:[528] Իրաք-իրանական հյուծիչ պատերազմից հետո /1980-1988/ թուլացած Սադդամը որոշեց իր երկիրը ներքաշել մի այնպիսի արկածախնդրության մեջ, որը ճակատագրական հետևանքներ ունեցավ Իրաքի համար: Մտահոգված լինելով նրանից, որ Սադդամը Քուվեյթից հետո կարող է ներխուժել Սաուդյան Արաբիա, Վաշինգտոնը սկսեց իր ռազմական ուժերն ուղարկել տարածաշրջան և դիվանագիտական ակտիվ գործունեություն ծավալեց հակասադդամական միջազգային կոալիցիա ստեղծելու համար: Վաշինգտոնին չափազանց անհրաժեշտ էր Սիրիայի մասնակցությունը միջազգային դաշինքին: Այդ ուղղությամբ ԱՄՆ-ը լուրջ ջանքեր գործադրեց: Սիրիան «արաբական ռադիկալիզմի» առաջամարտիկն էր և նրա մասնակցությունը Իրաքի դեմ պատերազմում՝ կօրինականցներ միջազգային կոալիցիայի գործողությունները արաբների լայն զանգվածների աչքերում:

Սակայն պետք է նկատի ունենալ, որ հակասադդամական դաշինքին միանալու որոշումն այդքան էլ հեշտ չտրվեց Ասադին: Սիրիայի արտգործնախարար Ֆարուկ Շառաայի խոսքերով, սկզբնական շրջանում իրենք պահանջում էին խուսափել երկակի ստանդարտներից: Այսինքն, պնդում էին, որ եթե «բոլորս ընդունում ենք Ծոցի պատերազմի հետ կապված ՄԱԿ-ի բանաձևերը, ապա պետք է իրագործենք նաև արաբ-իսրայելական հակամարտության վերաբերյալ բոլոր որոշումները»:[529]

[528] Ծոցի պատերազմի մասին տես. Freedman, Lawrence and Karsh, Efraim. The Gulf Conflict 1990-1991-Diplomacy and War in the New World Order. Princeton Universtity Press, 1993; Marcia Lynn Whicker, James P.Pfiffner, and Raymond A.Moore, ed., The Presidency and the Persian Gulf war. Westport, Conn.: Praeger, 1993; Carpenter, Ted Galen. America Entangled: The Persian Gulf Crisis and its Consequences. Washington, D.C., Cato Institute, 1991; Atkinson, Rick. Crusade: The Untold Story of the Persian Gulf War. Boston: Houghton Mifflin Co., 1993; և Watson, W. Bruce. Military Lessons of the Gulf War. Novato, Calif., Presidio Books, 1991; Baram, Amatzia and Rubin, Barry. Iraq`s Road to War. New York, St.Martin Press, 1993.

[529]Bregman, Ahron and El-Tahri, Jihan.The Fifty Years of War Israel and the Arabs, p.202.

1990թ. սեպտեմբերին և 1991թ. հունվարին պետքարտուղար Բեյքերն այցելեց Դամասկոս՝ հակաստրդամական կոալիցիային Սիրիայի մասնակցությունն ապահովելու նպատակով:

Իրաքի դեմ միջազգային դաշինքին միանալու համար Դամասկոսին անհրաժեշտ էր հավաստիացում ստանալ Վաշինգտոնից, որ կոալիցիային իր միանալու դեպքում պատերազմից հետո ԱՄՆ-ը կխթանի *համապարփակ* խաղաղության գործընթացը:

1990թ. նոյեմբերի 23-ին Բուշը Սաուդյան Արաբիայից վերադարձի ճանապարհին կանգ առավ Ժնևում և հանդիպում ունեցավ Ասադի հետ: Ասադը հայտնեց նրա հետևյալը. «Ծոցի պատերազմից հետո չափազանց կարևոր է կայունություն ունենալ Մերձավոր Արևելքում: Եթե դուք իսկապես կայունություն եք ցանկանում, ապա պետք է կարգավորեք արաբ-իսրայելական հակամարտությունը ՄԱԿ-ի համապատասխան բանաձևերի համաձայն, ճիշտ այնպես ինչպես հիմա դուք պնդում եք Քուվեյթ Իրաքի ներխուժման վերաբերյալ ընդունված բանաձևերի իրականացման անհրաժեշտությունը»:[530]

Բուշը հավաստիացրեց Ասադին. «Սադդամի հարցերը լուծելուց և Քուվեյթի ազատագրումից հետո ես խոսք եմ տալիս, որ Միացյալ Նահանգները կխթանի խաղաղության գործընթացն արդարացի ու վճռականորեն»:[531] *Ասադը համաձայնվեց միանալ դաշինքին միայն այն պայմանով, որ Իսրայելը չմասնակցի պատերազմին:* Իր մտավախությունը և դրա իրականացումից բխող Սիրիայի հետագա քայլերը նա ձևակերպեց բացահայտորեն. «Եթե Իսրայելը ներխուժի Հորդանան՝ Իրաք հասնելու նպատակով, մենք կկանգնենք Հորդանանի կողքին՝ Իսրայելի դեմ»:[532]

ԱՄՆ-ի նախագահը իր խոստումը կատարեց: Պատերազմի ընթացքում, երբ Իրաքը Scud տեսակի հրթիռներով հարվածեց Թել-Ավիվին ու Հայֆային, Շամիրի հետ հեռախոսային զրույցի ընթացքում Բեյքերն ու Բուշը խոստանալով ամեն տեսակի աջակցություն Իսրայելին, համոզում էին չպատասխանել Իրաքի հարվածներին և «հեռու մնալ պատերազմից»:[533] Իսրայելի հակահարվածը կարող էր պատերազմը շեղել իր հակաստրդամական բնույթից և արաբ-իսրայելական պատերազմի երանգներ հաղորդել: Իսկ դա արդեն կհանգեցներ արաբական երկրների դուրսբերմանը կոալիցիայից և վերջինիս փլուզմանը: Վերջին հաշվով, հարվածելով Իսրայելին՝ Սադդամը

[530] Նույն տեղում, էջ 200-205:

[531] Նույն տեղում, էջ 203:

[532] Նույն տեղում, էջ 203:

[533] Հարվածներից ձեռնպահ մնալու դիմաց Բուշը խոստացավ Շամիրին «բաց անդորրագիր /չեկ/»՝ ռազմական, տնտեսական, քաղաքական և ամեն տեսակի օժանդակության համար: Baker, James. Politics of Diplomacy, p.423.



հետապնդում էր հենց այդ նպատակը, որը ԱՄՆ-ը ոչ մի կերպ չէր կարող թույլ տալ:

ԱՄՆ-ի գլխավորությամբ միջազգային կոալիցիայի մեջ մասնակցելու Ասադի որոշումը գերազանց հաշվարկված քայլ էր Սիրիայի ղեկավարի կողմից:

Պարսից Ծոցի ճգնաժամը ոչ միայն տնտեսական օգուտներ բերեց Դամասկոսին, այլև հնարավորություն ընձեռեց սեփական դիրքերը միջազգային ասպարեզում բարելավելու համար:[534] Եգիպտոսի և Սաուդյան Արաբիայի հետ միացումն ընդդեմ Իրաքի՝ վերջ դրեց Սիրիայի մեկուսացմանը արաբական աշխարհում և միջազգային ասպարեզում:

Պարսից Ծոցի ճգնաժամը հնարավորություն ընձեռեց Ասադին նաև իրականացնելու 15 տարիների ընթացքում հետապնդած իր նպատակը՝ կառավարել Լիբանանը: Ինչպես արդեն նշել ենք, քաղաքացիական պատերազմի արդյունքում 1976թ. Լիբանան ներխուժումից հետո, Սիրիան հետևողականորեն ձգտում էր քայլ առ քայլ տարածել իր ազդեցությունն այդ երկրում: Արդեն իսկ 1980թ. սիրիական 40-հազարանոց բանակը հսկողության տակ էր առել Լիբանանի տարածքի համարյա երկու երրորդը: Երբ Ծոցի ճգնաժամը շեղեց միջազգային հանրության ուշադրությունը և Սադամ Հուսեյնը դադարեցրեց իր օգնությունը լիբանանյան «protege»-ին, եկավ Ասադի գործելու ժամանակը: 1990թ. հոկտեմբերի 13-ին երեք ժամվա ընթացքում Ասադն իրեն ենթարկեց ամբողջ Բեյրութը և երկրի հիմնական մասը, բացառությամբ հարավում գտնվող Իսրայելի հետ սահմանամերձ «անվտանգության գոտու»:

Եվ վերջապես, Ծոցի պատերազմը ճանապարհ հարթեց Մերձավոր Արևելքում խաղաղության գործընթացը սկսելու համար, որին գործուն մասնակցություն ունեցավ նաև Սիրիան:

## *ՄԱԴՐԻԴԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ՝ ՉԱՎԱՐՏՎԱԾ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՍԿԻԶԲԸ*

Ծոցի պատերազմում Խորհրդային Միության համագործակցությունը ԱՄՆ-ի հետ մեկ անգամ ևս ապացուցեց, որ սառը պատերազմի խաղի պայմանները փոխվել են, և որ արձանագրվել է *ԱՄՆ-ի առաջատար դիվանագիտական դերը*.

Այնուհետև, ԽՍՀՄ-ի փլուզումը և սառը պատերազմի ավարտը բացարձակապես նոր իրավիճակ և ուժերի դասավորում ստեղծեցին

[534] Միայն նավթի գների կտրուկ աճը պատերազմի ընթացքում Սիրիային մոտ 200մլն ԱՄՆ դոլարի եկամուտ ապահովեց: Իսկ պատերազմից հետո տարբեր չափերի ֆինանսական ներարկումներ արվեցին Եվրոպական Միությունից՝ 200 մլն. ԱՄՆ դոլար, Ճապոնիայից՝ 500 մլն. ԱՄՆ դոլար՝ վարկի ձևով, Սաուդյան Արաբիայից, Քուվեյթից և Արաբական Էմիրություններից ստացվեց մոտ 2 մլրդ. ԱՄՆ դոլար:

Մերձավոր Արևելքում՝ ծանր կացության մեջ դնելով որոշ արաբական երկրների, հատկապես Սիրիային և պաղեստինցիներին:

Ստեղծված պայմաններում ակնհայտ էր, որ Ասադի վարչակազմի քաղաքական կենսունակությունն ու Սիրիայի անվտանգության ապահովումը մեծ մասամբ կախված կլինի ԱՄՆ-ի հետ Դամասկոսի հետագա հարաբերություններից:

Ծոցի պատերազմից հետո փոփոխությունների ենթարկվեց նաև ամերիկյան քաղաքականությունը Մերձավոր Արևելքում: Նա երկու հիմնական նպատակ էր հետապնդում: Առաջին, Վաշինգտոնը ձգտում էր մերձավորարևելյան նավթի վրա միանձնյա հսկողություն հաստատել և ապահովել դրա անխափան տեղափոխումը Արևմուտք: Երկրորդ, ԱՄՆ-ը կենտրոնացրեց իր ջանքերը խաղաղության գործընթացի վրա՝ Իսրայելի և արաբական երկրների միջև անվտանգության և համագործակցության մասին համաձայնագրեր ստորագրելու նպատակով:

Սակայն այս անգամ խաղաղության գործընթացում Սիրիան ոչ միայն չանտեսվեց Վաշինգտոնի կողմից, այլև համարվեց ամենակարևոր մասնակիցներից մեկը: Ասադին ուղղված իր նամակում Բուշն ընդգծեց իր «անձնական շահագրգռվածությունը համապարփակ խաղաղության հաստատման գործում» և ընդունեց Սիրիայի «որոշիչ դերն» այդ նպատակի իրականացման ճանապարհին:[535] Հարկ է նշել, որ արդեն իսկ 1991թ. օգոստոսի 1-ից մինչև 1992թ. փետրվարի 19-ը ընկած ժամանակահատվածում, որպես Սիրիայի հետ հարաբերությունները բարելավելու առաջին քայլ, ԱՄՆ-ը թույլատրեց 3 մլն դոլարի արժողությամբ օգտագործված ապրանքների առաքումն այդ երկիր, որոնք թեև տրամադրվել էին քաղաքացիական կարիքների համար, սակայն «կարող էին օգտագործվել ռազմական բնագավառում»:[536]

Խաղաղության գործընթացն ակտիվացնելու նպատակով 1991թ. ԱՄՆ-ի պետքարտուղար Բեյքերը 8 այցելություն կատարեց Մերձավոր Արևելք, որոնց ընթացքում նա փորձեց համոզել հակամարտող կողմերին՝ նստել բանակցությունների սեղանի շուրջ, միջազգային համաժողովի հովանու ներքո: Բեյքերը համոզված էր, որ խաղաղության գործընթացի համար համաժողովին սիրիական ներկայության ապահովումը կենսական նշանակություն ունի: Մարտի 13-ին Բեյքերը Դամասկոսում 7 ժամանոց հանդիպում ունեցավ Ասադի հետ: Հանդիպումից հետո, հեռաձայնելով Բուշին, Բեյքերն ասաց, որ «Ասադը միանգամայն լուրջ մտադրություններ ունի խաղաղություն հաստատելու հարցում»:[537]

Ապրիլի 23-ին Բեյքերը նորից ժամանեց Դամասկոս: Սիրիայում

[535] International Herald Tribune.-25.10.1994.

[536] CRS Issue Brief. Syrian-US Relations, May 13.1995, by Alfred B. Prados, The Library of Congress.

[537] Baker, James. Politics of Diplomacy, p.428.



ԱՄՆ դեսպան Է. Ջերեջյանը հանդիպումից առաջ զգուշացրեց պետքարտուղարին Ասադի բանակցություններ վարելու ոճի վերաբերյալ: Նա ասաց. «Ոչ ոք չի կարող կանխագուշակել, թե որքան ժամանակ կընթանան բանակցությունները: Ասադն ընդմիջումներ և ընդհատումներ չի սիրում: Այնպես որ բանակցությունների ընթացքում սահմանափակեք ըմպելիքների քանակը»:[538]

ԱՄՆ դեսպանը միանգամայն ճիշտ խորհուրդ տվեց՝ հանդիպումը տևեց 9 ժամ 46 րոպե, առանց ընդմիջման: Բանակցություններում երկարատև քննարկումների առարկա դարձան արարողակարգի հետ կապված հարցերը: Չնայած Բեյքերի հայտարարությանը, որ Իսրայելը «ատում է ՄԱԿ-ը» և չի ընդունի ՄԱԿ-ի մասնակցությունը համաժողովին, այնուամենայնիվ Ասադը պնդեց ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի հետ միասին, որպես համաժողովի համահովանավորող (co-sponsor), ՄԱԿ-ի հանդես գալու անհրաժեշտությունը: Սիրիական կողմի նման դիրքորոշումը թերևս կարելի է բացատրել նրանով, որ Դամասկոսը ձգտում էր որոշակի պարտադրողական բնույթ հաղորդել համաժողովի ընթացքում ընդունվելիք որոշումներին: Ստեղծված կացությունից դուրս գալու նպատակով Բեյքերը փորձեց օգտագործել վերջին խաղաքարտը. «Պարոն նախագահ, ինչու իսրայելական ուժերի դուրս բերման հարցը քննարկելու փոխարեն, մենք ժամանակ ենք վատնում ընթացակարգի հետ կապված խնդիրների վրա: Դուք չեք կարող Գոլանները հետ վերադարձնել, եթե Իսրայելը պատրաստ չլինի այնտեղից դուրս հանել իր զորքերը: Իսկ նրանք դուրս կհանեն միայն այն դեպքում, երբ անվտանգության երաշխիքներ կստանան Միացյալ Նահանգներից: Հնարավոր է, որ մենք պատրաստ լինենք այնպիսի երաշխիք տալ, որն անցյալում չենք տվել»:[539]

Բեյքերի վերոհիշյալ խոսքերը սխալ մեկնաբանվեցին սիրիացիների կողմից, որոնք կարծեցին, թե Միացյալ Նահանգները խոստանում են ապահովել իսրայելական զորքերի դուրսբերումը Գոլաններից: Հաջորդ օրը Բեյքերը զայրույթով ասաց Ասադին. «Եթե ես խոստանայի երաշխավորել նրանց դուրսբերումը, ապա բանակցություններ վարելու կարիք ընդհանրապես չէր լինի»: Փակելով իր թղթապանակը, Բեյքերը եզրափակեց. «Պարոն նախագահ, ես կարծում եմ, որ մենք չենք կարող համագործակցել իրար հետ»:[540] Բեյքերի բանակցությունները Դամասկոսում ավարտվեցին ապարդյուն: Միանգամայն պարզ էր, որ չնայած կողմերի փոքր զիջումներին, նրանք դեռևս պատրաստ չէին նստել բանակցությունների սեղանի շուրջ:

1991թ. մայիսի 31-ին Բուշը նամակներ հղեց Իսրայելի վարչապետ

[538] Baker, James. Politics of Diplomacy, p.454.

[539] Bregman, Ahron and El-Tahri, Jihan.The Fifty Years of War Israel and the Arabs. p.211

[540] Նույն տեղում:

Շամիրին, Սիրիայի նախագահ Ասադին, Հորդանանի թագավոր Հուսեյնին, Սաուդյան Արաբիայի թագավոր Ֆահդին, Եգիպտոսի նախագահ Մուբարաքին և Պաղեստինյան գրավված տարածքների ղեկավար Ֆեյսալ Հուսեյնիին, խնդրելով վերջնական որոշում կայացնել մերձավորարևելյան բարձրաստիճան խաղաղության համաժողովին մասնակցելու վերաբերյալ: Առաջին դրական արձագանքը եկավ հուլիսի 14-ին, երբ Ասադը Բուշին ուղղված իր պատասխան նամակում ընդունեց վերջինիս առաջարկությունները՝ դժվար կացության մեջ դնելով Իսրայելի ղեկավարությանը: Սակայն հուլիսի 29-ին «Վաշինգտոն փոստ» օրաթերթին տված իր հարցազրույցում Ասադը պարզաբանեց, որ «խաղաղության համաժողովին մասնակցելու պատրաստակամությունը դեռևս չի նշանակում, որ մենք պետք է համաձայնության գանք Իսրայելի հետ: Դա չի լինի այնքան ժամանակ, մինչև Իսրայելը չվերադարձնի արաբական զավթած *բոլոր* տարածքները»:[541] Այսուհանդերձ, արաբական թերթերը գրում էին. «Ասադի պատասխանը Բուշին ի չիք դարձրեց թշնամու բոլոր հաշվարկները և վերջ դրեց Շամիրի կառավարության այն մեղադրանքներին, որոնց համաձայն, արաբները չեն ցանկանում խաղաղություն հաստատել»:[542]

Իսկ Շամիրի վարչակազմը շարունակում էր իր ծայրահեղական քաղաքականությունը Գոլանների և ընդհանրապես գրավված արաբական տարածքների նկատմամբ: Գոլանները ամեն գնով պահելու վճռականությունն ընդգծելու համար, իսրայելական կառավարությունը 1991թ. հուլիսի 21-ին հրապարակեց Գոլաններում հրեական բնակչության քանակն ավելացնելու, տնտեսական զարգացումը խթանելու և նոր աշխատատեղեր ստեղծելու իր ծրագիրը: Եվ այն ժամանակ, երբ Իսրայելի բանակի սպայակույտի պետ գեներալ Յ.Բարաքը հրապարակայնորեն նշում էր Իսրայելի անվտանգության համար Գոլանների կարևորությունը, կնեսետի 69 անդամներ, ներառյալ Աշխատավորական կուսակցության անդամները, ստորագրեցին մի փաստաթուղթ, ուր խոստանում էին պահպանել Իսրայելի իշխանությունը Գոլաններում:

Սակայն Իսրայելի հիմնական մտահոգությունը ոչ Գոլաններն էին և ոչ էլ Սիրիան, այլ Միացյալ Նահանգները: 1991թ. հունիսին Բեյքերի հետ բազմաթիվ հանդիպումներից հետո Թել-Ավիվը մերժեց Մերձավոր Արևելքի խաղաղության համաժողովի գումարման վերաբերյալ ամերիկյան առաջարկը, վստահ լինելով որ այն նույնպես կմերժվի Սիրիայի կողմից: Բայց Ասադի դրական պատասխանը ստիպեց Շամիրին վերանայել իր դիրքորոշումը: Հնարավոր է նաև, որ Շամիրը և իր գործընկերները կասկածում էին, որ Բուշը խոստացել է Ասադին ճնշում

[541] "Washington Post", 29 July, 1991.

[542]«تشـــرين»,18.07.1991և «الحياة» 19.08.1991:



գործադրել Իսրայելի վրա ստորագրվելիք խաղաղության համաձայնագրի շրջանակներում Գոլաններից դուրս գալու նպատակով: Արձագանքելով այսպիսի սցենարի հնարավորությանը, Իսրայելի պաշտպանության նախարար Մոշե Արենսն ասաց. «ԱՄՆ-ը ի զորու չէ այդպիսի բան խոստանալու: Այդ մենք ենք Գոլաններում, այլ ոչ թե ամերիկացիները»: Իսկ Բենյամին Բեգինը կնեսետում հայտարարեց. «Ինչպես ձեռքը մարմնի մասն է, այնպես էլ Գոլանները Իսրայելի պետության մասն են»: Այլ պաշտոնյաներ նշեցին, որ Բուշին պետք է հիշեցնել նախկին նախագահ Ֆորդի 1975թ. սեպտեմբերի 1-ի նամակը Իսրայելի վարչապետ Ռաբինին, ուր ամերիկյան նախագահը հավանություն էր տալիս «Գոլաններում իսրայելական ներկայությանը, անգամ Սիրիայի հետ խաղաղության համաձայնագրի շրջանակներում»:[543] Այնուամենայնիվ, խորհրդային հրեաներին բնակեցնելու նպատակով ԱՄՆ-ից սպասվող 10 մլրդ վարկը չխափանելու մարտավարական նկատառումներից ելնելով՝ օբստրուկցիոնիզմի մեջ ամերիկյան մեղադրանքներից խուսափելու և «գնդակը սիրիական դաշտը նետելու» նպատակով, 1991թ. հոկտեմբերի 22-ին Իսրայելի նախարարների խորհուրդը որոշեց մասնակցել Մադրիդում կայանալիք խաղաղության համաժողովին:

1991թ. հոկտեմբերի 30-ին, Մադրիդում, Բուշի և Գորբաչովի համատեղ նախագահությամբ կայացավ Մերձավոր Արևելքի խաղաղությանը նվիրված միջազգային համաժողովը, որին մասնակցեցին Իսրայելը, Սիրիան և Լիբանանը, ինչպես նաև միացյալ հորդանանա-պաղեստինյան պատվիրակությունը: Համաժողովին ներկա էին նաև ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի և Եվրոպական Միության ներկայացուցիչները, ինչպես նաև Սաուդյան Արաբիայի դեսպանը: Թեև ամերիկացիներն ու իսրայելցիները համաձայնվել էին, որ Բուշն իր ելույթում չի անդրադառնա «խաղաղություն՝ հողի դիմաց» բանաձևին, այնուամենայնիվ Բուշը նշեց. «Մենք համոզված ենք, որ տարածքային զիջումը կենսական նշանակություն ունի խաղաղության համար: Սահմանները պետք է արտացոլեն ինչպես անվտանգության, այնպես էլ քաղաքական դասավորումների որակը»:[544] Համաժողովի առաջին և երկրորդ օրերն անցան համեմատաբար հանգիստ: Սակայն երրորդ օրը իրավիճակը սրվեց Շամիրի ելույթից հետո, որն, արձագանքելով Սիրիայի արտգործնախարարի ելույթին, Սիրիայի վարչակազմը որակեց որպես «ամենաուժային և ամենածայրահեղ», իսկ երկիրը՝ «ահաբեկչական»: Շամիրից հետո բեմահարթակ դուրս եկավ Սիրիայի արտգործնախարար Ֆարուկ ալ-Շառաան, որը, բարձրացնելով ձեռքի մեջ գտնվող թերթիկն, ասաց. «Ես Ձեզ միայն ցույց կտամ պարոն Շամիրի լուսանկարը: Գիտեք,

[543] «Maariv» 21և 23 հուլիսի 1991; «Haaretz» 20 և 22 հուլիսի 1991:

[544] Bregman, Ahron and El-Tahri, Jihan.The Fifty Years of War Israel and the Arabs, p.216.

թե ինչու է այս լուսանկարը տարածվել ամենուրեք, որովհետև նա գտնվել է հետախուզման մեջ: Նա նպաստել է, եթե չեմ սխալվում, 1948թ. Պաղեստինում ՄԱԿ-ի բանագնաց Կ. Բեռնադոտի սպանությանը: Նա սպանում է խաղաղության բանագնացներին»:[545] Համաժողովի ընթացքում հաջորդ ճգնաժամը եղավ այն, որ ամերիկացիները առաջարկում էին արաբական պատվիրակությունների և Իսրայելի միջև ուղղակի բանակցություններ սկսել տարբեր տեղերում և տարբեր ժամանակ, իսկ սիրիացիները պահանջում էին բանակցությունների անցկացումը միևնույն ժամանակ և միևնույն տեղում: Վերջապես գտնվեց փոխզիջումային տարբերակ՝ կողմերը համաձայնվեցին ուղղակի բանակցություններ վարել նույն հյուրանոցում, սակայն տարբեր ժամերի:

Մադրիդի համաժողովը խաղաղության նոր ճանապարհ հարթեց և հիմք նախապատրաստեց տարածաշրջանում հետագա պատմական իրադարձությունների համար: Այն կարևոր քաղաքական նշանակություն ունեցավ, քանի որ առաջին անգամ հակամարտող կողմերը նստեցին բանակցությունների սեղանի շուրջ: Առաջին անգամ միջազգային համաժողովի մասնակցեցին նաև պաղեստինցիները և ելույթ ունեցան իրենց սեփական անունից: Համաժողովի ամենաէական արդյունքներից մեկը եղավ այն, որ կողմերը համաձայնվեցին շարունակել բանակցային գործընթացը:

Մադրիդի կարևորությունը կայանում է նրանում, որ համաժողովն առաջին անգամ երկու զուգահեռ ուղղություններով տարվող բանակցությունների մեխանիզմ ստեղծեց: Առաջին ուղղությունը բազմակողմ բանակցություններն էին, ուր Իսրայելը, տարածաշրջանի արաբական երկրները և տարածաշրջանից դուրս այլ երկրներ կարողացան միանալ Մերձավոր Արևելքում գոյություն ունեցող հինգ հիմնական՝ ջրի, շրջակա միջավայրի, սպառազինությունների հսկողության, փախստականների և տնտեսական զարգացման խնդիրների շուրջ ընթացող քննարկումներին: Այդ քննարկումները տեղի ունեցան 1992թ. հունվարին, Մոսկվայում, որոնց սիրիացիները մերժեցին մասնակցել այն պատճառաբանումով, որ քանի դեռ Իսրայելը շարունակում է վերահսկել գրավված Գոլանները, Արևմտյան ափն ու Գազայի հատվածը, երկարատև տարածաշրջանային անվտանգության վերաբերյալ բանակցությունների անցկացումը անիմաստ է: Երկրորդ ուղղությունը երկկողմ հարաբերություններն էին, որոնց շուրջ Վաշինգտոնում Իսրայելը պետք է բանակցեր իր արաբ հարևանների՝ Սիրիայի, Հորդանանի, Լիբանանի և պաղեստինցիների հետ:

Մադրիդի համաժողովից հետո նոյեմբերից սկսած սիրիա-իսրայելական բանակցությունները շարունակվեցին մինչև 1992թ. հունիսը՝ Ի.Շամիրի պարտությունը ընտրություններում, և առանց որևէ

[545] Նույն տեղում, էջ 220:



գործնական արդյունքի: Բանակցություններում Իսրայելը ներկայացնում էր վարչապետի գրասենյակի գլխավոր քարտուղար Յոսի Բեն Ահարոնը, իսկ Սիրիան՝ դեսպան Մուվաֆիղ ալ-Ալլաֆը: Սակայն նրանք իզուր ժամանակ վատնեցին անցյալի հետ կապված հարցերի քննարկման վրա: Այսպես, մի անգամ Մ.Ալ-Ալլաֆը ներկայացրեց ՄԱԿ-ի զեկույցը, որից պարզ էր դառնում այն, որ Իսրայելն էր սադրել մինչ 1967թ. սահմանային միջադեպերը: Սակայն Բեն Ահարոնը չէր ցանկանում նրան լսել: Ինչպես պատմում է բանակցություններին ներկա դիվանագետներից մեկը. «Բեն Ահարոնը թողեց բանակցությունների սեղանը և այնուհետև վերադարձավ բեյլի բաժակը ձեռքին, նստեց սեղանի շուրջն ու սկսեց գդալը խփել սեղանին: Ալլաֆն էլ իրեն չկորցնելով շարունակեց կարդալ փաստաթուղթը: Սակայն Բեն Ահարոնը նորից բարձրացավ իր տեղից և սկսեց պարել: «Չնոռանաս, որ ես Ալեքսանդրիայից եմ՝ Եգիպտոսից: Ես գիտեմ արաբական պարերը».-ասաց նա: Երբ Ալլաֆն ավարտեց փաստաթղթի ընթերցումը Բեն Ահարոնն ասաց.«Ես ոչինչ չլսեցի, քանի որ շատ զբաղված էի պարելով»:[546]

1992թ. հունիսին Իսրայելում տեղի ունեցած ընտրություններից հետո իշխանության եկավ Աշխատանքի կուսակցությունը Իցխակ Ռաբինի գլխավորությամբ: Ո՞վ կարող էր ենթադրել, որ այն կուսակցությունը, որ առաջնային դեր խաղաց տարիներ առաջ արաբական հողերը գրավելու և նրանց վրա հրեաների վերաբնակեցման գործում, ձեռնամուխ կլինի խաղաղության գործընթացի արագացմանն ու պատմական համաձայնագրերի ստորագրմանը պաղեստինցիների և Հորդանանի հետ: Իսկ նրա ղեկավար Ի.Ռաբինը այդ խաղաղության համար անգամ կվճարի իր սեփական կյանքով:

Շատ շուտով Ռաբինի իշխանության գալուց հետո որոշ արևմտյան ԶԼՄ-ները սկսեցին հրապարակել հաղորդագրություններ այն մասին, որ իսրայելական կառավարության ղեկավարը նպատակ ունի վերադարձնել Սիրիային՝ վերջինիս մինչև 1967թ. «վեցօրյա» պատերազմը պատկանող Գոլանի բարձունքները: Ի դեպ, Իսրայելում անգամ «Մեծ Իսրայելի» ստեղծման գաղափարի կողմնակիցները ընդունում էին, որ Գոլանները երբեք չի հանդիսացել իսրայելական տարածք չեն եղել և որ նրա բնիկ բնակիչներն են դրուզներն ու արաբները:

Ռաբինի պաշտոնական հայտարարությունն այն մասին, որ իր կառավարությունը պատրաստ է այս կամ այն կերպով հրաժարվել Գոլանների լիակատար վերահսկողությունից և ինչ-որ ձևով փոխել օկուպացիայի ռեժիմը, զայրույթ առաջացրեց Իսրայելի աջ ազգայնական ուժերի շրջանում: Իսրայելյան «Գոլանների խորհրդի» նախագահ Վոլմանը որակեց Ռաբինի խոսքերը որպես «խելագարություն»: Իր վրայից մեղադրանքները հանելու նպատակով հետագայում Ռաբինը

[546] Bregman, Ahron and El-Tahri, Jihan.The Fifty Years of War Israel and the Arabs, p.258.

ելույթներում նշում էր, որ Իսրայելը կարող է համաձայնվել միայն «Գոլանների մասնակի դուրսբերման հետ» ու միայն Սիրիայի հետ քաղաքական, տնտեսական, դիվանագիտական հարաբերությունների լիարժեք նորմալացման և նրա հետ «ամբողջական, պայմանագրային հիմունքներով, ամուր և տևական խաղաղություն հաստատելու» պայմանով:[547]

Ռաբինի ընտրություններից հետո սիրիացիների և իսրայելցիների միջև առաջին հանդիպումը կայացավ Վաշինգտոնում, 1992թ. օգոստոսի 24-ին: Սիրիական պատվիրակությունը գլխավորում էր դեսպան Մուվաֆիդ ալ-Ալլաֆը, իսկ իսրայելյանը՝ արաբական պատմության անվանի մասնագետ և Ռաբինի բարեկամ Իտամար Ռաբինովիչը:[548] Բանակցությունների առաջին օրը Ռաբինովիչն ասաց, որ Սիրիայի հետ բանակցություններում Իսրայելի կառավարությունն ընդունում է ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի 242 բանաձևի բոլոր դրույթները: Այս հայտարարությունը նշանավորում էր Իսրայելի դիրքորոշման սկզբունքային փոփոխությունը: Այսպիսով, եթե Շամիրի կառավարությունը ժխտում էր Գոլանների վերադարձը խաղաղության դիմաց սկզբունքը, ապա Ռաբինի կառավարությունը ընդունեց այն: Հաջորդ օրը տեղի ունեցած հանդիպման ընթացքում Ալլաֆը, օգտվելով ստեղծված բարենպաստ մթնոլորտից, իսրայելական կողմին ներկայացրեց Սկզբունքների վերաբերյալ Արձանագրության նախագիծը (Draft Declaration of Principles)՝ բաղկացած 4 էջից: Առաջին երեքը պարունակում էին Իսրայելի և հարևան արաբական երկրների միջև համապարփակ խաղաղության ծրագիրը, իսկ վերջին էջը վերաբերում էր Սիրիային և Իսրայելին: Այնտեղ գրված էր.

«Խաղաղության գործընթացն արդեն 11 ամիս է, ինչ շարունակվում է առանց շոշափելի առաջընթացի: Մենք կարծում ենք, որ եկել է ժամանակը, եթե գործնականում ցանկանում ենք իրականացնել խաղաղության գործընթացի նպատակները, որպեսզի առանց հավակնությունների, հստակ հավասարակշռված և անկողմնակալ փաստաթուղթ ստեղծենք, ուր նշված կլինեն այն բոլոր հիմնական սկզբունքները, առանց որոնց անհնարին կլինի որևէ խաղաղության հաստատումը»:

Նախագծի 5(A) հոդվածը վերաբերում էր *Իրականացման մեխանիզմներին.*

547Пырлин Е.Д.. Трудный и долгий путь к миру: Взгляд из Москвы на проблему ближневосточногио урегулирования, с.380-381.

5481992-1996թթ. Սիրիա-իսրայելյան բանակցությունների վերաբերյալ համապարփակ տեղեկություններ կարելի է ստանալ Ի.Ռաբինովիչի արժեքավոր աշխատության մեջ՝ Rabonovich, Itamar. The Brink of Peace. The Israeli-Syrian Negotiations. Princeton University Press, 1998.



«Իսրայելի ուժերի լիակատար դուրսբերում 1967թ. գրավված Սիրիայի Գոլանների բարձունքներից, ուր ի հակադրություն Ժնևի Կոնվենցիայի, միջազգային իրավունքի և ՄԱԿ-ի որոշումների, իսրայելական ուժերը իրականացրել էին սիրիական բոլոր բնակավայրերի տարհանում և տեղահանում»:

Նախագծի 7-րդ հոդվածը նվիրված էր *Անվտանգությանն ուղղված միջոցառումներին և երաշխիքներին.*

«Երկու կողմերն իրենց վճռականությունն են հայտնում զուգահեռաբար և փոխադարձորեն միջոցներ ձեռնարկել իրենց անվտանգությունն ապահովելու ուղղությամբ, ներառյալ երկու կողմերում հավասար պայմաններով ապառազմականացված գոտիների կամ նվազեցված զինամթերքով գոտիների ստեղծման, ինչպես նաև առանց կողմերի իրավասությունների ու հավասար իրավունքների սկզբունքի խախտման Անվտանգության Խորհրդից երկու կողմերի անվտանգությունն ապահովող երաշխիքներ ստանալու վերաբերյալ»:[549]

Ռաբինովիչն առաջարկեց բանակցությունները սկսել 7-րդ հոդվածից, որը վերաբերում էր անվտանգության հարցերին և երաշխիքներին, իսկ Ալլաֆը պնդում էր այդ անել 5(a) հոդվածց:

Ինչպես հիշում է ԱՄՆ-ում Սիրիայի դեսպան Վալիդ Մուալլեմը, «1992թ. օգոստոսից մինչև 1993թ. օգոստոսն ամբողջ բանակցությունները կենտրոնացած էին այն հարցի շուրջ, թե որ հոդվածի քննարկումից է անհրաժեշտ սկսել բանակցությունները: Այդ հարցում որևէ առաջընթաց չարձանագրվեց»:[550]

Ի. Ռաբինովիչի համաձայն սիրիական փաստաթուղթը Իսրայելի համար պարունակում էր ինչպես ընդունելի, այնպես էլ անընդունելի դրույթներ և որ իսրայելական պատվիրակության հիմնական նպատակը բանակցությունների ընթացքում կայանում էր «համատեղ, հավասարակշռված փաստաթղթի պատրաստման մեջ, որը ընդունելի կլիներ երկու կողմերի համար»: Իրականում, իսրայելական կողմի կարծիքով, սիրիացիները պատրաստ չէին Գոլանների հարցի փոխզիջումային լուծմանը, այլ պահանջում էին «իսրայելական ուժերի *լիակատար* դուրս բերումը»: Բացի դրանից սիրիացիները չհամաձայնվեցին վստահության մթնոլորտի ստեղծման նպատակով որոշ միջոցառումների իրականացմանը, մասնավորապես Իսրայել-Սիրիա գաղտնի կապի հաստատմանը, որը կարող էր օգտագործվել կողմերի

549 Նախագծի տեքստը տպագրվել է առաջին անգամ հետևյալ աշխատությունում՝ Bregman, Ahron and El-Tahri, Jihan.The Fifty Years of War Israel and the Arabs, pp.259-260.

550 Նույն տեղում, էջ.261:

միջև կարծիքների ոչ-պաշտոնական բայց անկեղծ փոխանակման համար:[551]

1992թ. նոյեմբերին Միացյալ Նահանգների նախագահ ընտրվեց Բիլ Քլինթոնը: Եթե Ասադը «բարյացակամ» էր համարում Բուշի վարչակազմը և Սիրիայի նկատմամբ նրա վարած քաղաքականությունը, ապա Քլինթոնի ընտրությունը մտահոգության տեղիք տվեց Դամասկոսին, մասնավորապես այն պատճառով, որ Քլինթոնն «ընտրվել էր հիմնականում ամերիկյան հրեաների օժանդակության շնորհիվ և հայտնի էր որպես ժողովրդավարական Իսրայելի պաշտպան»:[552]

1992թ. վերջում տված իր հարցազրույցներից մեկում Ասադը հետևյալ կերպ արտահայտվեց խաղաղություն հաստատելու հեռանկարների վերաբերյալ. «Ես իրատեսորեն եմ տրամադրված: Հեռանկարներն ավելի լավ են, քանի որ միջազգային մթնոլորտը բարենպաստ է և քանի որ Իսրայելում աճել է այն մարդկանց թիվը, որոնք խաղաղություն են ցանկանում»: Ռաբինն իր հերթին հայտարարեց, թե հավատացած է, որ խաղաղությունը կհաստատվի, սակայն համոզված չէ, որ այն «իրականություն կդառնա իր կենդանության օրոք»:[553] Սակայն երկուսն էլ գիտակցում էին, որ խաղաղության հեռանկարները մեծապես կախված կլինեն ամերիկյան միջնորդական ջանքերից: Չնայած Քլինթոնի վարչակազմի և նրա մերձավորարևելյան թիմի իսրայելամետ կեցվածքին, Դամասկոսն, այնուամենայնիվ վճռական էր ամերիկյան հովանավորությամբ խաղաղության բանակցությունները վերսկսելու իր մտադրության մեջ:[554]

Հարկ է նշել, որ սիրիա-իսրայելական բանակցությունների վրա որոշակիորեն ազդում էին զուգահեռ ընթացող պաղեստինա-իսրայելական բանակցությունները: Սիրիային ձեռնտու չէր, որ նախքան Իսրայելի հետ համաձայնության գալը, պաղեստինցիների (կամ Հորդանանի) հետ համաձայնագիր ստորագրվի: Այդ առթիվ Ասադը նկատում էր. «Հայտնի է, որ Թել-Ավիվի իշխանությունները, Ռաբինի գլխավորությամբ, ցանկանում են տարբերակել արաբական բանակցողների մակարդակները: Բանակցությունների ութերորդ փուլում նրանք նշում էին, որ սիրիա-իսրայելական ուղղության վրա առաջընթացն ակնհայտ է և համաձայնագրի ստորագրումն անխուսափելի է: Այսօր նրանք նույն խաղն են խաղում, խոսելով պաղեստինյան ուղղությամբ բանակցությունների հաջողության մասին: Սիրիան կարող էր երկկողմ համաձայնագիր կնքել Իսրայելի հետ շատ ավելի վաղ, սակայն մենք

[551] Пырлин Е.Д. Трудный и долгий путь к миру: Взгляд из Москвы на проблему ближневосточногио урегулирования, с.381.

[552] «البعث », Դամասկոս, 3.12.1992; «تشـــرين», Դամասկոս, 09.11.1992.

[553] Moshe Maoz. Syria and Israel. From War to Peacemaking, p.231.

[554] « الحياة», 04.03.1993.



մշտապես կրկնել ենք, որ մտահոգված ենք Երուսաղեմի, Արևմտյան ափի և հարավային Լիբանանի ճակատագրով ոչ պակաս, քան Գոլաններով»:[555]

Սիրիայի և Իսրայելի միջև բանակցությունների իններորդ փուլը վերսկսվեց 1993թ. ապրիլի 27-ին Վաշինգտոնում, սակայն հետագա երկու հանդիպումներում կողմերը նույնպես անկարող գտնվեցին հաղթել սկզբունքային տարաձայնությունները: Իսրայելական կողմը շարունակում էր սիրիացիներից պահանջել «լիակատար խաղաղություն» արտահայտության հստակ պարզաբանումը, Իսրայելի անվտանգության ապահովման անհրաժեշտության ճանաչումը, ինչպես նաև Ասադի կողմից հրապարակային ելույթները՝ Սիրիայում ու Իսրայելում հանրային կարծիքը խաղաղության հաստատմանը նախապատրաստելու նպատակով: Իսրայելական բանակցողները պահանջում էին նաև հստակեցնել համապարփակ արաբ-իսրայելական կարգավորման և սիրիա-իսրայելական կարգավորման միջև կապը: Միայն դրանից հետո իսրայելական կողմը պատրաստ էր քննարկել Գոլաններից դուրսբերման հարցը: Սիրիական պատվիրակությունը շարունակում էր պահանջել 1967թ. գրաված բոլոր արաբական տարածքներից իսրայելական ուժերի դուրսբերումը՝ Իսրայելի և արաբների միջև «լիակատար խաղաղություն» հաստատելու դիմաց, առանց ճշտելու այդ խաղաղության իմաստը: Այսպիսով, սիրիա-իսրայելական բանակցությունները մտան փակուղի:

1993թ. օգոստոսի 4-ին ԱՄՆ նոր պետքարտուղար Քրիսթոֆերը մեկնեց տարածաշրջան՝ փորձելով ելք գտնել ստեղծված իրավիճակից: Ռաբինի հետ հանդիպմանը վերջինս անսպասելիորեն խնդրեց պետքարտուղարին՝ Դամասկոսում Ասադից *հստակ պատասխան* ստանալ այն հարցի վերաբերյալ, թե արդյոք սիրիական կողմը պատրաստ է խաղաղություն հաստատել իսրայելական զորքերը Գոլաններից դուրս բերելու դեպքում: Ռաբինը հետևյալ կերպ էր բացատրում այդ հարցի կարևորությունը. «Եթե Ասադը մտադիր է սիրիա-իսրայելական համաձայնագիր ստորագրել, ապա դրան կհետևի փոքր պաղեստինա-իսրայելական համաձայնագիրը: Եթե Ասադի պատասխանը լինի բացասական, ապա այդ դեպքում կստորագրվի միայն ընդարձակ պաղեստինա-իսրայելական համաձայնագիրը»:[556]

Հաջորդ օրը Քրիսթոֆերը մեկնեց Սիրիա՝ Ասադի հետ հարցը քննարկելու նպատակով: Ասադը դրականորեն արձագանքեց առաջարկին՝ իր պատրաստակամությունը հայտնելով խաղաղություն հաստատել Գոլանների վերադարձի դիմաց: Սակայն ԱՄՆ պետքարտուղարի վերլուծության համաձայն, Ասադը պատասխանեց՝ «Այո, սակայն…»: «Սակայնը» վերաբերում էր դուրսբերման գործընթացի

[555] «الوسط», 10.05.1993.

[556] Bregman, Ahron and El-Tahri, Jihan.The Fifty Years of War Israel and the Arabs, p.262

ժամկետներին՝ Ռաբինը առաջարկում էր 5 տարի, իսկ Ասադը՝ վեց ամիս: Անհամաձայնություն կար նաև անվտանգությունն ապահովող միջոցառումների վերաբերյալ՝ Ռաբինը կարևորում էր հավասարազոր անվտանգության միջոցառումները, իսկ Ասադը՝ սահմանի երկու կողմերում հավասարության սկզբունքը, որն անընդունելի էր Ռաբինի համար, քանի որ դա կնշանակեր իսրայելական ուժերի հետքաշումը Գալիլեայի սահմանային շրջանի համարյա կեսից: Ասադը նաև մերժում էր Իսրայելի հետ հարաբերությունների բարելավումը՝ նախքան Գոլաններից զորքերի դուրսբերումը: Հիասթափված լինելով Ասադի նման պատասխանով, Ռաբինը որոշեց ժամանակավորապես դադարեցնել սիրիացիների հետ բանակցությունները և կենտրոնանալ իսրայելա-պաղեստինյան համաձայնագրի վրա: Այդ կապակցությամբ Ռաբինն ասաց Ռաբինովիչին, որ ինքը չի կարող «միևնույն ժամանակ երկու դրոշակ բարձրացնել»:[557]

Երբ Քրիստոֆերը և իր մերձավորարևելյան հատուկ համակարգող Ռոսսը վերադարձան Վաշինգտոն, դեռ չգիտեին, որ շուտով իրենց ամառային արձակուրդը կընդհատվի Իսրայելի և Նորվեգիայի արտգործնախարարներ Պերեսի և Հոլստի այցելությամբ, որոնք իրենց հետ լուր կբերեն Օսլոյում իսրայելցիների և պաղեստինցիների միջև բանակցությունների ընթացքում ձեռք բերված սկզբունքային առաջխաղացման մասին:

1993թ. սեպտեմբերի 9-ին, տեղի ունեցած երկարատև բանակցություններից հետո, Իսրայելի վարչապետ Ռաբինն ու ՊԱԿ-ի ղեկավար Արաֆաթը նամակներ փոխանակեցին, որոնցով պաշտոնապես ճանաչում էին միմյանց: Իսկ չորս օր անց Սպիտակ տանը տեղի ունեցավ «Սկզբունքների մասին» հայտարարագրի ստորագրման պաշտոնական արարարողությունը: Նույն տարում սկիզբ դրվեց նաև իսրայելա-հորդանանյան աստիճանական մերձեցմանը, որն ավարտվեց 1994թ. հոկտեմբերի 25-ին՝ երկու երկրների միջև խաղաղության պայմանագրի ստորագրումով:

Սիրիական պաշտոնական օրաթերթը ՊԱԿ-Իսրայել համաձայնագրի վերաբերյալ գրում էր. «Ռաբինը սխալմամբ կարծում է, որ պաղեստինցիների հետ խաղաղության պայմանագրի կնքումը բավական է խաղաղության գործընթացը ամբողջացնելու համար: Սակայն դա այդպես չէ: Եթե նա լուրջ մտադրություններ ունի ապա պետք է շարունակի գործընթացը մեզ հետ»:[558] Համաձայնագրի վերաբերյալ Ասադի կարծիքն այն էր, որ «Իսրայելի և պաղեստինցիների միջև շտապփույթ կնքված պայմանագիրը միայն քանդեց Իսրայելի դեմ միասնական արաբական պատը: Իսրայելին հաջողվեց բաժանել

[557]Նույն տեղում:

[558] ««تشـــرين»», 18.10.1995.



արաբներին այն իմաստով, որ դժվարեցրեց Իսրայելի ուժերի լիակատար դուրսբերման հարցը գրավյալ արաբական տարածքներից, այդ թվում և Գոլաններից»:[559]

ՊԱԿ-ի հետ ստորագրված համաձայնագիրը իհարկե նվազեցրեց Սիրիայի խուսանավելու հնարավորությունները արաբ-իսրայելական հակամարտության մեջ: Խաղաղության համաձայնագրերը սկզբում Եգիպտոսի, այնուհետև Հորդանանի և ՊԱԿ-ի հետ՝ աներկրայորեն հարվածեցին ողջ արաբական «հայրենիքը» ներկայացնելու Ասադի հավակնոտ կեցվածքին: ՊԱԿ-ի անկախությունը բնականաբար անհանգստության աղբյուր էր Դամասկոսի համար: Մենք արդեն նշել ենք ի հակակշիռ Յ.Արաֆաթի ՊԱԿ-ի պաղեստինյան այլ խմբավորումներին աջակցություն ցուցաբերելու Ասադի քաղաքականության մասին: Համաձայնագրի ստորագրումից հետո Սիրիայի ղեկավարը արդեն չթաքցրեց. «Օսլոյում ստորագրված համաձայնագրից հետո մենք որևէ աշխատանք չենք կատարում պաղեստինցիներին աջակցություն ցուցաբերելու իմաստով. Ես նկատի ունեմ ՊԱԿ-ը, քանի որ խնդիրն իր վրա է վերցրել ՊԱԿ-ը: Ես դրա մասին ժամանակին տեղյակ եմ պահել ՊԱԿ-ի նախագահին: Համաձայնագիրը մեզ չի գոհացնում, և այնուամենայնիվ, մենք դրան չենք խոչընդոտում՝ մենք չենք ցանկանում պաղեստինցի եղբայրների հետ հարաբերությունների սրում, մեզ արդեն բավարար է այն, ինչ կատարվում է մեր արաբական Հայրենիքում»:[560]

## *ՍԻՐԻԱՆ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ*

ՊԱԿ-Իսրայել համաձայնագրի կնքումը մարտավարական առումով Ասադին դրեց ավելի խոցելի վիճակում, էլ ավելի ուժեղացնելով կասկածը Իսրայելի իրական նպատակների վերաբերյալ: Ստեղծված իրավիճակում պաղեստինյան, ինչպես նաև հորդանանյան ճակատներում առաջանալու պատրվակով, Ռաբինը ճնշման նոր միջոց ձեռք բերեց Ասադի վրա՝ զիջումներ կորզելու նպատակով: Ասադը չէր կարող նաև օժանդակություն ակնկալել արաբական երկրներից, բացառությամբ Մուբարակի բանավոր և դիվանագիտական օգնությունից:[561] Հետևաբար, միակ կողմը, ուր կարող էր շրջվել Ասադը քաղաքական օժանդակություն ստանալու նպատակով՝ դա ԱՄՆ նախագահ Քլինթոնն էր:

[559] Ford, Peter. Syria's 3-Part Strategy: Rely on the US. Christian Science Monitor. 19.10.1993.

[560] 23.12.1995թ. Հ.Ասադի հարցազրույցը Կահիրե կատարած այցելության ընթացքում: Мир глазами президента Хафез Асада, с.120.

[561] Այսպես, 1993թ. հոկտեմբերին Սիրիայի արտաքին գործերի նախարար Ֆ. ալ-Շարաան Կահիրեում հանդիպելով Մուբարաքին՝ խնդրեց Գոլանների հարցը մեկ անգամ ևս բարձրացնել ԱՄՆ նախագահի հետ հանդիպման ժամանակ:

Սակայն Քլինթոնը, զբաղված լինելով Բոսնիայի և Սոմալիի խնդիրներով, հրաժարվեց ոչ միայն պարտադրել Ռաբինին ճանաչել Գոլաններում սիրիական իրավասությունները, այլև որևէ պարտավորություն վերցնել Գոլաններից իսրայելական զորքերի ամբողջական դուրսբերման հարցում: Այնուհանդերձ, Քլինթոնը շարունակաբար պահանջում էր Ասադից վերսկսել բանակցությունները Իսրայելի հետ և հնարավորություն տալ նրան իրագործելու ԴԱԿ-ի հետ իր համաձայնագիրը: Միևնույն ժամանակ, Քլինթոնը սիրիա-իսրայելական համաձայնագրի նկատմամբ իր շահագրգռվածությունը ցուցաբերելու նպատակով, 1993թ. հոկտեմբերին Վաշինգտոնում հանդիպեց Սիրիայի արտաքին գործերի նախարար Շարաային, իսկ նոյեմբերի կեսերին՝ Ռաբինին, մի քանի անգամ հեռախոսային խոսակցություն ունեցավ Ասադի հետ, ինչպես նաև ձեռնամուխ եղավ Ժնևում 1994թ. հունվարին Ասադի հետ հանդիպման նախապատրաստմանը: Հոկտեմբերին և դեկտեմբերի սկզբին ԱՄՆ նախագահը Դամասկոս ու Երուսաղեմ ուղարկեց Ռոսսին և Քրիստոֆերին՝ սիրիա-իսրայելական բանակցությունները վերսկսելու հնարավորությունները քննարկելու նպատակով: Որպես բարի կամքի դրսևորում, 1993թ. դեկտեմբերին Վաշինգտոնը թույլատրեց Քուվեյթից 3 «Բոինգ 727» օգտագործված օդանավերի տեղափոխումը Սիրիա:[562]

Դամասկոսն իր հերթին պատասխան քայլեր ձեռնարկեց՝ խոստացավ թույլատրել ամերիկյան փորձագետների մասնակցությունը 1982թ. Լիբանանում անհայտ կորած իսրայելական զինվորների ճակատագրին վերաբերող քննությանը, ինչպես նաև արտոնեց հրեաների արտագաղթը Սիրիայից (շուրջ 1000 հոգի): Դամասկոս այցելող ամերիկյան սենատորներին Ասադն ասաց. «Մենք ձգտում ենք համապարփակ կարգավորման: Անգամ կիսագրագետ մարդուն պետք է որ հասկանալի լինի այդ խաղաղության իմաստը»: Արդ ալ-Հալիմ Խադդամի բացատրությամբ, «խաղաղության բովանդակությունը ընդգրկում է ճանաչումը (ի՛թիրաֆ) և հարաբերությունների բնականոնացումը (թատբի՛), որոնք ներկայիս բանակցությունների քննարկման առարկաներն են»:[563] Սիրիական լրատվական այլ միջոցներ նշում էին, որ խաղաղության հաստատումը «ռազմավարական ընտրություն է» (խիյար իսթրաթիջի), որ ԱՄՆ-ը, որպես բանակցությունների «լիիրավ կողմ» և «արդար միջնորդ», պետք է ճնշում բանեցնի Իսրայելի վրա՝ ՄԱԿ-ի 242 բանաձևը իրականացնելու նպատակով: Թերևս Ասադը հույս էր փայփայում, որ Քլինթոնը կհանի Սիրիայի անունը ահաբեկչությանը աջակցող երկրների ցուցակից, ինչը հնարավորություն կընձեռի նրա վարչակարգին տնտեսական

---

[562] Los Angeles Times. 06.12.1993, New York Times. 10.12.1993.

[563] «الحياة», 05.01.1994.



աջակցություն ստանալ արևմտյան երկրներից և միջազգային կազմակերպություններից:

Մտադրություն չունենալով Սիրիան հանելու ահաբեկչությունը աջակցող երկրների ցուցակից, Քլինթոնը, այնուամենայնիվ, շարունակեց Ասադի հետ հարաբերությունները սերտացնելու գործընթացը՝ Իրանի և Իրաքի նկատմամբ «երկակի զսպման» քաղաքականությունը և արաբ-իսրայելական խաղաղ գործընթացը շարունակելու նպատակով: Վաշինգտոնը հավատացած էր, որ Քլինթոնի և Ասադի միջև հանդիպումը կխթանի Սիրիայի և Իսրայելի միջև բանակցությունների վերսկսումը և «համապարփակ, արդար և շարունակական խաղաղության հաստատումը»:

Դեռևս 1993թ. աշնանը, մինչև Ասադի և Քլինթոնի՝ Ժնևում հանդիպման կազմակերպումը, ամերիկացիները հարցնում էին իսրայելցիներին՝ «Որն է այն հիմնական զիջումը, որը դուք ցանկանում եք, որ մենք ստանանք Ասադից այդ հանդիպման ընթացքում»: Ռաբինովիչի պատասխանն էր. «Մենք ցանկանում ենք, որ Ասադը համաձայնվի հարաբերությունների բարելավման սկզբունքին»:[564]

1994թ. հունվարի 16-ին Ժնևում հանդիպելով Քլինթոնին Ասադն առաջին անգամ պաշտոնապես հայտարարեց, «որ մտադիր է խաղաղության հասնել» Իսրայելի հետ: Այս հանդիպման ընթացքում Ասադը նաև մեկ այլ կարևոր հայտարարություն արեց. այն, որ «ձգտում է խաղաղության հաստատմանը ոչ միայն Սիրիայի և Իսրայելի, այլև Իսրայելի և Հորդանանի ու Լիբանանի միջև», ավելացնելով, որ «ցանկանում է Լիբանանը տեսնել որպես Իսրայելի հետ խաղաղություն հաստատած անկախ պետություն»:[565] Սակայն հինգ ու կես ժամ տևած բանակցությունների ընթացքում Ասադը չհստակեցրեց, թե ա՞րդյոք իր նշած «բնականոն, խաղաղ հարաբերությունները» և «իրական» խաղաղությունը Իսրայելի հետ, ընդգրկում է կանոնավոր դիվանագիտական հարաբերությունները, բաց սահմանը և զբոսաշրջությունը երկու երկրների միջև:

Բանակցություններից հետո տեղի ունեցած մամուլի ասուլիսում, խաղաղության հասնելու իր մտադրությունների լրջությունը հաստատելու նպատակով, Ասադը նշեց. «Մենք ցանկանում ենք հաստատել իրական խաղաղություն, որն ի վիճակի կլինի գոյատևել: Եթե Իսրայելի ղեկավարներն ունեն համապատասխան խիզախություն այդպիսի խաղաղություն հաստատելու համար, այդ դեպքում սկիզբ կառնի անվտանգության և կայունության մի նոր դարաշրջան, ուր բնականոն խաղաղ հարաբերություններ կհաստատվեն բոլորի միջև»:[566]

---

[564] Bregman, Ahron and El-Tahri, Jihan.The Fifty Years of War Israel and the Arabs, p.262.

[565] The Jerusalem Post.-Alon Pinkas.-17.01.1994.

[566] Նույն տեղում:

Այստեղ հետաքրքիր է Ասադի խոսքերի մեկնաբանությունը Քլինթոնի կողմից: Դրականորեն պատասխանելով ասուլիսի ժամանակ իրեն ուղղված այն հարցին, թե արդյոք Ասադը պարտավորվել է բնականոն հարաբերություններ հաստատել Իսրայելի հետ, Քլինթոնն ասաց. «Նախագահ Ասադը շատ հստակ և կարևոր հայտարարություն արեց կանոնավոր հարաբերությունների վերաբերյալ: Ներկայումս այդ հարաբերությունները հաստատելու նպատակով անհրաժեշտ է խաղաղության համաձայնագրի կնքում»: Ասուլիսի ընթացքում Քլինթոնը ոչ միայն ընդգծեց Սիրիայի առաջնային դերը հարատև և համապարփակ խաղաղության հաստատման գործում, այլև պաշտպանեց Ասադի այն սկզբունքը, որի համաձայն, «համապարփակ խաղաղության հաստատումն ընդգրկում է նաև Լիբանանը, Հորդանանը, ինչպես և ՊԱԿ-ին առնչվող բոլոր խնդիրների կարգավորումը»:[567] Այսպիսով, խորապես տպավորված լինելով Իսրայելի հետ խաղաղություն հաստատելու Ասադի ցուցաբերած վճռական կեցվածքից, Քլինթոնն արտահայտեց իր անձնական նվիրումը Մերձավոր Արևելքում խաղաղության հաստատման նկատմամբ:

Իսրայելի ղեկավարներին չէին կարող գոհացնել վերոհիշյալ հանդիպման հետևանքների հեռանկարները, քանի որ նրանք մտադիր էին առաջին հերթին խորացնել բանակցությունների պաղեստինյան և հորդանանյան ուղղությունը: Ռաբինը և Պերեսը նաև մտահոգված էին Գոլանները վերադարձնելու նկատմամբ երկրի ներսում ստեղծված ոչ բարենպաստ տրամադրություններով: Հասարակական կարծիքի հարցման համաձայն, բնակչության մեծամասնությունը դեմ էր արտահայտվում Գոլաններից զորքերի դուրսբերման դիմաց խաղաղության հաստատմանը:[568] Այդ իսկ պատճառով Քլինթոնի և Ասադի հանդիպման հաջորդ օրը Ռաբինը հայտարարեց, որ Սիրիայի հետ որևէ համաձայնագիր ստորագրումից առաջ պետք է դրվի հանրաքվեի:

1994թ. հունվար-փետրվար ամիսների ընթացքում բանակցությունները շարունակվեցին Վաշինգտոնում, հիմնականում երկու երկրների դեսպանների մակարդակով, ուր սիրիացիները քննադատում էին իսրայելական կողմին՝ Գոլաններից դուրսբերման հարցը համաժողովրդական քվեարկության դնելու մտադրության համար, իսկ վերջիններս պահանջում էին սիրիացիներից հստակեցնել խաղաղության և հարաբերությունների հաստատման սկզբունքները: 1994թ. փետրվարին Լիբանանի հարավում 4 իսրայելական զինվորների,

[567] Ասադի և Քլինթոնի մամլո ասուլիսի ամբողջական տեքստը տես՝ « السفير ». 18.01.1994; "Policywatch".-III.-19.01.1994; "New York Times" and "Washington Post". 17.01.1994.

[568] "International Herald Tribune". 16.01.1994.



Հեբրոնում շուրջ 30 արաբ մահմեդականների սպանությունների, ինչպես նաև Գազայի և Ջերիկոնի վերաբերյալ ՊԱԿ-ի և Իսրայելի միջև համաձայնագրի ստորագրման հետևանքով սիրիա-իսրայելական բանակցություններն ընդհատվեցին:

1994թ. սեպտեմբերի 10-ին, Ասադը Սիրիայի խորհրդարանում իր ելույթի ժամանակ նշեց, որ ամենայն վճռականությամբ պահանջելու է իսրայելական զորքերի լիակատար դուրսբերումը Գոլանի բարձունքներից: Ասադի կարծիքով, «չնայած գոյություն ունեցող դժվարություններին և այդ հարցում առաջընթացի բացակայությանը, որոշակի հույս կա, որ խաղաղությունը կարող է վերջապես իրականություն դառնալ»:[569] Դրանից մեկ շաբաթ առաջ Ռաբինը առաջարկել էր Գոլաններից զորքերի մասնակի դուրսբերման գաղափարը՝ հարաբերությունների կարգավորման եռամյա փորձաշրջանի դիմաց: Սակայն Սիրիան շարունակում էր պահանջել իսրայելական ուժերի ամբողջական դուրսբերումը: Սիրիայի արտգործնախարար ալ-Շառաան Լոնդոնում մամլո ասուլիսի ժամանակ հայտարարեց, որ «Սիրիան անկեղծորեն ձգտում է խաղաղության»:[570] Դա չափազանց հուսադրիչ էր, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սիրիական պաշտոնական միևնույն դարձվածքի մեջ հազվադեպ կարելի էր գտնել «անկեղծություն», «խաղաղություն» և «Իսրայել» բառերը:

Նույն թվականի հոկտեմբերին ԱՄՆ-ի հատուկ բանագնաց Դենիս Ռոսսն այցելեց Դամասկոս: Իսրայելական «Եդիոտ Ահրոնոտ» թերթը մեկնաբանեց այդ այցելությունը որպես ԱՄՆ-ի փորձ՝ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայում Իսրայելի և Սիրիայի արտգործնախարարների միջև պատմական ձեռքսեղմում կազմակերպելու ուղղությամբ:[571] Ասադի հետ հանդիպումից հետո Ռոսսը նշեց, որ «Սիրիայի և Իսրայելի միջև իրական տարաձայնություններ գոյություն ունեն»:[572]

Սիրիա-ամերիկյան հարաբերություններում ամենանշանակալի իրադարձությունը եղավ Քլինթոնի այցելությունը Դամասկոս: Վերջին 20 տարիների ընթացքում Նիքսոնից հետո Քլինթոնը դարձավ առաջին ԱՄՆ նախագահը, որն այցելեց սիրիական մայրաքաղաք: Այդ այցելությունը ԱՄՆ նախագահը կատարեց Մերձավոր Արևելք իր շրջագայության շրջանակներում, հիմնական նպատակ ունենալով մասնակցել հոկտեմբերի 26-ին իսրայելա-հորդանանյան համաձայնագրի ստորագրման պաշտոնական արարողությանը: Երեք ժամ տևած զրույցի ընթացքում նա Ասադի հետ քննարկեց սիրիա-իսրայելական համաձայնության հնարավորությունները: Քլինթոնի խոսքերով, նա

[569] "New York Times". 22.09.1994.

[570] Նույն տեղում:

[571] "Yedioth Ahronot", 21.09.1994

[572] "International Herald Tribune".22.09.1994.

այցելեց Դամասկոս հաշվի չառնելով այն հանգամանքը, որ Սիրիան ահաբեկչության աջակցող երկրների շարքին է դասված պետքարտուղարության կողմից, քանի որ «համոզված էր երկու երկրների բանակցությունների նոր լիցք հաղորդելու անհրաժեշտության մեջ»: Որպես այդ ուղղությամբ առաջին քայլ, երկու նախագահները քննարկեցին Սիրիայի կողմից ահաբեկչության հրապարակային քննադատության և բանակցությունների մակարդակի բարձրացման հնարավորությունները: Ասադի հետ հանդիպումից հետո, ելույթ ունենալով իսրայելական խորհրդարանում Քլինթոնն ասաց. «Ես հավատում եմ, որ Սիրիայում որոշակի փոփոխություններ են կատարվում: Այդ երկրի ղեկավարները սկսում են աստիճանաբար գիտակցել, որ եկել է խաղաղության ժամը: Չնայած, որ առջևում դժվարին բանակցություններ են սպասվում:»[573] Սակայն ամենաէականը, ինչով Քլինթոնը ժամանել էր Իսրայել և Սիրիա, այդ ԱՄՆ-ի խոստումն էր՝ աջակցելու և պահպանելու խաղաղությունն այն դեպքում, եթե Իսրայելը համաձայնվի Գոլանները Սիրիային փոխանցելու պայմաններին:

Թեև Միացյալ Նահանգները համոզված էին, որ Դամասկոսը Գոլանների վերադարձի դիմաց պատրաստ է խաղաղություն հաստատել Իսրայելի հետ, այնուամենայնիվ, ինչպես Քլինթոնը, այնպես էլ Քրիստոֆերը ձեռնպահ էին մնում Գոլաններից դուրսբերման հարցում Ռաբինի վրա ճնշում գործադրելուց: Ամերիկյան ղեկավարները, քաջատեղյակ լինելով հարցի զգացական կողմին, գործում էին աստիճանաբար՝ Իսրայելի հասարակական կարծիքը նախապատրաստելու համար Գոլանների վերաբերյալ քաղաքական հայտարարություններ անելով, ՊԱԿ-ի և Հորդանանի հետ խաղաղ գործընթացը խթանելով, ինչպես նաև շոշափելի ռազմական օգնություն տրամադրելով Իսրայելին:

Բարձունքներում ամերիկյան ռազմական ներկայության գաղափարը քննարկելու նպատակով 1994թ. նոյեմբերի վերջին Ռաբինն այցելեց Վաշինգտոն: ԱՄՆ-ի նախագահի հետ հանդիպման ընթացքում Ռաբինը համոզմունք հայտնեց, որ ամերիկյան ռազմական ներկայությունը Գոլաններում արաբ-իսրայելական խաղաղության հաստատման համար կարևորագույն պայման է: Ռաբինի խոսքերով՝ «ամերիկյան զինվորականները Գոլաններում չեն գործելու, որպես ոստիկանական ուժ: Նրանց խնդիրները կլինեն զուտ տեխնիկական, հսկողական»:[574] Նա շեշտեց նաև Իսրայելի և ընդհանրապես ամբողջ տարածաշրջանի համար անցանկալի հնարավոր հետևանքները Գոլաններում սահմանափակ ուժերի տեղակայման նկատմամբ ԱՄՆ-ի մերժողական կեցվածքի դեպքում: Ինչպես պարզվեց հետագայում, ԱՄՆ-

[573] Նույն տեղում, 28.10.1994:

[574] "Washington Post". 29.11.1994.



ի հրաժարվելու դեպքում Իսրայելի ղեկավարությունն արդեն որոշել էր չափազանց «թանկ գին» պահանջել Վաշինգտոնից Սիրիայի հետ խաղաղություն հաստատելու դիմաց: Գոլաններից իսրայելական զորքերի հնարավոր դուրսբերման դեպքում, որպես երկրի անվտանգությունը ապահովելու համար անհրաժեշտ ծախսերի փոխհատուցում, Իսրայելի ղեկավարությունը 2,5 միլիարդ ԱՄՆ դոլարի չափով ռազմական օգնություն պահանջեց Պենտագոնից՝ ներկայացնելով հեռախուզական ինքնաթիռների, հաղորդակցման կայանների, արբանյակային տեղեկատվական կայանների և այլ անհրաժեշտ ռազմական սարքավորումների մանրամասն ցուցակ:

1995թ. առաջին կիսամյակում ընդհանուր առմամբ սիրիա-իսրայելական երկկողմ շփումները շարունակվեցին: Իսրայելական և արտասահմանյան մամուլում լուրեր տարածվեցին, թե, իբր, Ասադի որդին, ինչպես նաև նրա եղբորորդին, գաղտնի հանդիպումներ են ունեցել իսրայելական գիտնականների, քաղաքագետների և գործարարների հետ: Իսկ իսրայելական ընդդիմությունը հայտարարում էր, որ Սիրիան և Իսրայելը գաղտնի պայմանագիր են նախապատրաստել, որի համաձայն Իսրայելը գաղտնի պայմանագիր են նախապատրաստել, որի համաձայն

Իսրայելն աստիճանաբար իր զորքերը դուրս է բերելու Գոլաններից: Սակայն իրականում Մուալլեմի և Ռաբինովիչի միջև սիրիա-իսրայելական բանակցությունները, հիմնականում արդյունք չտալով, բացառությամբ 1995թ. մայիսի 21-ին «Անվտանգության միջոցառումների նպատակներն ու սկզբունքները» փաստաթղթի, «սառեցվեցին» և նոր թափ ստացան միայն 1995թ. հունիսին, երբ ԱՄՆ-ի արտաքին քաղաքական գերատեսչությունը փորձեց արագացնել սիրիա-իսրայելական համաձայնագրի ստորագրումը մինչև 1996թ. Իսրայելում և ԱՄՆ-ում կայանալիք ընտրությունները: Այդ նպատակով ԱՄՆ-ի հատուկ բանագնաց Ռոսսը այցելեց Դամասկոս, ուր հանդիպում ունեցավ Սիրիայի ղեկավարության հետ: ԱՄՆ-ի նախագահ Քլինթոնը հեռախոսազրույց ունեցավ Ասադի հետ, կոչ անելով ակտիվացնելու «տեղում դոփող» գործընթացը:

Նույն նպատակն էր հետապնդում հունիսին Քրիստոֆերի հերթական՝ 13-րդ այցելությունը տարածաշրջան: Ասադի հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ հունիսի 27-ին Վաշինգտոնում Սիրիայի և Իսրայելի սպայակույտերի ղեկավարները՝ Հիքմեթ Շեհաբին ու Յեհուդ Բարաքը, ինչպես նաև երկու երկրների փորձագետները, կհանդիպեն Գոլանների անվտանգության վերաբերյալ միջոցառումներն ու մանրամասները քննարկելու համար: Երկու կողմերը տեխնիկական հարցերի բավական լայն շրջանակի շուրջ համաձայնության եկան Վաշինգտոնում: Սակայն Սիրիան Իսրայելին պատասխանատու համարեց բանակցություններում առաջընթացի բացակայության համար: Ինչպես նշեցին Սիրիայի կառավարության պաշտոնական ներկայացուցիչները, խորհրդատվությունները ծախողվեցին սեփական

անվտանգության խնդիրների վրա ուշադրությունը բևեռելու իսրայելական կողմի փորձերի պատճառով:

Գոլանի բարձունքներից Իսրայելի դուրսբերման հարցի քննարկման փոխարեն իսրայելական կողմը հանդես եկավ Սիրիայի համար ակնհայտորեն անընդունելի մի շարք նախաձեռնություններով, մասնավորապես, Գոլաններում այսպես կոչված «դիտարկման պահակակետերի» և «անվտանգության գոտիների» ստեղծման առաջարկությամբ: Միևնույն ժամանակ, 1995թ. հուլիսին Ռոսսի Դամասկոս կատարած այցելության օրը Դամասկոսի ռադիոն հաղորդեց, որ Սիրիան համաձայն է Գոլանի բարձունքներում «միջազգային խաղաղապահ ուժերի» տեղակայմանը:[575]

Սիրիա-իսրայելական խաղաղության համաձայնագրի ստորագրման գործում եղած դժվարությունները հաղթահարելու նպատակով իսրայելական կողմն անգամ առաջարկեց կազմակերպել Ռաբինի և Ասադի հանդիպումը:[576]

1995թ. հուլիսին Մադրիդի համաժողովի աշխատանքային կոմիտեի նիստի շրջանակներում Մոսկվայում գտնվող Իսրայելի ԱԳ նախարարի տեղակալ Յ.Բեյլինը հայտարարեց, որ «Իսրայելի երազանքն է ավարտել խաղաղության գործընթացը, ընդգրկելով Սիրիան, հետևաբար նաև Լիբանանը, ինչն էլ կնշանավորեր հակամարտության ավարտը»: «Դժվարությունը կայանում է ուղղակի շփման անհնարինության մեջ: Եթե երկու երկրների բարձր մակարդակով հանդիպումը կայանա, կարելի է հասնել անգամ նրան, ինչին չես սպասում»:[577]

Սակայն 1995թ. նոյեմբերի 4-ին խաղաղ հանրահավաքի ժամանակ Ռաբինը սպանվեց: Այդ ոճրագործությունը խոր ցասում առաջացրեց ողջ աշխարհում: Ռաբինի սպանությունը հարցականի տակ դրեց վերջին տարիներին սիրիա-իսրայելական բանակցություններում ձեռք բերված պայմանավորվածությունները:

Ռաբինին փոխարինեց Պերեսը, որն իր նախորդների պես զբաղեցրեց նաև պաշտպանության նախարարի պաշտոնը, հայտարարելով, որ «մեկ մարդ պետք է ղեկավարի ինչպես խաղաղությունը, այնպես էլ անվտանգությունը»:[578] Ռաբինի թաղման արարողությունից անմիջապես հետո Քլինթոնը առանձնազրույց ունեցավ Պերեսի հետ: Միայն այդ հանդիպման ընթացքում Պերեսը հասկացավ, թե որքանով էր առաջացել Ռաբինը սիրիացիների հետ

[575] "Дума". /բուլղարական օրաթերթ/, 12.07.1995.

[576] Քննարկվել է անգամ Իսրայելում ՌԴ դեսպանությունում Ասադի և Իսրայելի նախագահ Վայցմանի հանդիպում կազմակերպելու հնարավորությունը:

[577] Пырлин Е.Д. Трудный и долгий путь к миру: Взгляд из Москвы на проблему ближневосточногио урегулирования, с.383.

[578] Bregman, Ahron and El-Tahri, Jihan.The Fifty Years of War Israel and the Arabs. p.267.



բանակցություններում: Նա բնավ տեղյակ չէր նրան, որ Ռաբինը համաձայնվել էր դուրս բերել զորքերը Գոլաններից մինչև 1967թ. հունիսի 4-ի գիծը՝ հարաբերությունները կարգավորելու, դուրսբերման ժամկետը 5 տարի սահմանելու, ինչպես նաև հավասարազոր անվտանգության միջոցառումներ իրականացնելու դեպքում: Այնուամենայնիվ, Պերեսը հայտնեց Քլինթոնին, որ ինքը կիրականացնի այն բոլոր պայմանավորվածությունները, որոնք ձեռք էին բերվել Ռաբինի օրոք:

1995թ. նոյեմբերի 19-ին ամերիկյան բանագնաց Ռոսսը կրկին ժամանեց Իսրայել՝ Պերեսին սիրիա-իսրայելական բանակցությունների վերաբերյալ ամբողջական տեղեկություններ հաղորդելու նպատակով: Պերեսը տեղեկացրեց Ռոսսին, որ ինքը պատրաստ է համաձայնագիր ստորագրել Սիրիայի հետ: Նա ավելացրեց նաև, որ «եթե մենք համաձայնության գանք Ասադի հետ, ապա պետք է հանդիպենք նաև բոլոր արաբական ղեկավարների հետ և հայտարարենք, որ արաբ-իսրայելական հակամարտությունը ավարտված է: Դրանից հետո մենք կարող ենք համապարփակ համաձայնագիր ստորագրել Մերձավոր Արևելքում պատերազմի ավարտի մասին»:[579] Իր մտադրությունների լրջությունը ցույց տալու նպատակով, Պերեսը ինքնագիր նամակ պատրաստեց և հանձնելով Ռոսսին, խնդրեց այն հանձնել Ասադին: Ծանոթանալով նամակի բովանդակությանը, Ասադն ասաց Ռոսսին՝ «Լավ նամակ է»: Երբ Քրիստոֆերը և Ռոսսը փորձեցին վստահեցնել Պերեսին, որ Ասադը նույնպես լուրջ մտադրություններ ունի, նա նշեց. «Եթե Ասադը ցանկանում է խաղաղության համաձայնագիր կնքել մինչև 1996թ. Իսրայելում կայանալիք ընտրությունները, ապա բանակցությունների մակարդակը պետք է բարձրացվի»: Պերեսը ցանկանում էր անձամբ հանդիպել Ասադին: Պերեսի առաջարկին Ասադը պատասխանել էր. «Ես հասկանում եմ, որ անհրաժեշտ է իմ հանդիպումը Պերեսի հետ, սակայն ես չեմ կարող հստակ ժամկետներ նշել»:[580]

Ռաբինի սպանությունից հետո առաջին սիրիա-իսրայելական հանդիպումը կայացավ 1995թ. դեկտեմբերի 27-ին, Վաշինգտոնից 80կմ. հեռավորության վրա գտնվող պաշտոնական առանձնատանը. սիրիական պատվիրակության ղեկավարն էր Վալիդ Մուալլեմը, իսկ իսրայելականինը՝ երիտասարդ դիվանագետ Ուրի Սավիրը:[581] Սիրիական կողմը ներկայացրեց հարաբերությունների կարգավորման երեք կետ, որոնցով նախատեսվում էր դեսպանությունների բացում երկու երկրներում, իսրայելական ապրանքների առևտրի վրա դրված արգելքի վերացում և Սիրիայի տարածքով Թուրքիա զբոսաշրջիկների տեղաշարժի

[579] Նույն տեղում, էջ 268:

[580] Նույն տեղում:

[581] Ուրի Սավիրը կարևոր դերակատարություն էր ունեցել Օսլո-1 և Օսլո-2 պաղեստինա-իսրայելական համաձայնագրերի բանակցային գործընթացում, որը վերածվեց գործողության ծրագրի:

արտոնում: Իսրայելի պատվիրակությունն իր հերթին ներկայացրեց հարաբերությունների կարգավորման 18 կետից բաղկացած ցուցակ, որն ընդգրկում էր Իսրայելի և Սիրիայի սահմանների բացումը զբոսաշրջիկների համար, երկու երկրների միջև ազատ առևտրի հաստատում, ճանապարհային, հեռահաղորդակցման և էլեկտրական համակարգերի փոխկապակցում: Կողմերը համաձայնվեցին կարգավորման 11 կետերի վերաբերյալ:

Այդ հանդիպմանը հաջորդեցին երկու երկրների անվտանգության բնագավառի փորձագետների բանակցությունները, որոնք տեղի ունեցան նույնպես Վաշինգտոնում, 1996թ. հունվարի 24-ին: Սիրիական կողմից դեսպան Մուալլեմից բացի, բանակցություններին մասնակցեցին ռազմական հետախուզության պետ Իբրահիմ Օմարը և գեներալ-մայոր Հասան Խալիլը, իսկ իսրայելական կողմից՝ գեներալ Ուզի Դայանը: Կարճատև ընդմիջումից հետո բանակցությունները վերսկսվեցին, սակայն Երուսաղեմում Համասի ահաբեկչական գործողությունից հետո, որի հետևանքով մեծ թվով իսրայելցիներ զոհվեցին և վիրավորվեցին, իսրայելական պատվիրակությունը ընդհատեց բանակցությունները և վերադարձավ Թել-Ավիվ: Պերեսն այլևս «տրամադրություն չունենալով խաղաղության բանակցություններ վարել», վաղաժամկետ ընտրություններ նշանակեց: 1996թ. մայիսի 29-ին Իսրայելում իշխանության եկավ Բենիամին Նեթանյահուն:

Այսպիսով, սիրիա-իսրայելական բանակցություններն ավարտվեցին որևէ գործնական արդյունք չտալով: Այդ տարիների բանակցային գործընթացը միայն *մոտեցրեց* Իսրայելին և Սիրիային համաձայնագրի ստորագրմանը՝ աստիճանաբար հարթելով երկու երկրների միջև եղած հիմնական տարաձայնությունները:

Սիրիան և Իսրայելը իրենց գոյության ընթացքում երբևիցե այդքան մոտ չեն եղել խաղաղության հաստատմանը: Ինչպես գրում է Ի.Ռաբինովիչը, «1992թ. օգոստոսից մինչև 1996թ.մարտն ընկած ժամանակահատվածում Սիրիան և Իսրայելը երբեք կանգնած չեն եղել ճեղքման եզրին»: Սակայն նրանք երկու անգամ *մոտ են եղել այդ կետին* 1993թ. օգոստոսին և Շիմոն Պերեսի իշխանության առաջին շաբաթների ընթացքում՝ 1995թ. նոյեմբեր-դեկտեմբերին:[582]

Ասադն ու Ռաբինը համաձայնվեցին ընդհանուր բանաձևի ձևակերպմանը՝ «խաղաղություն Գոլանների վերադարձի դիմաց», սակայն չկարողացան համաձայնվել ամենակարևոր հարցերի շուրջ՝ որպիսիք էին Գոլաններից իսրայելական ուժերի *դուրսբերման ժամանակացույցը,* (Ռաբինը փորձում էր ամրագրել երկար 5-ամյա ընթացքը, որպեսզի համոզվեր, որ Սիրիան դուրսբերման դիմաց բավարար կերպով է իրականացնում հարաբերությունների

[582] Rabonovich, Itamar. The Brink of Peace. The Israeli-Syrian Negotiations, p.235.



նորմալացումը), *սահմանային անվտանգության ապահովման հետ կապված միջոցառումները* (Ռաբինին անհրաժեշտ էր վստահ լինել, որ Սիրիան չի օգտագործի վերադարձված տարածքները իսրայելի դեմ հարձակում իրականացնելու համար) և *հարաբերությունների նորմալացումը*.

Եթե Ռաբինի համար կարևոր հանգամանք էր հանրային դիվանագիտությունն ու երկկողմ ուղղակի կապի հաստատումը Դամասկոսի հետ՝ առանց Վաշինգտոնի միջնորդության, ապա Ասադի համար այդ անընդունելի էր ու վտանգավոր՝ ռազմավարական և ներքին քաղաքական մի շարք պատճառներով: Եվ ինչպես փորձը ցույց տվեց, ԱՄՆ-ի միջնորդությունը միշտ չէ, որ ճշգրիտ կերպով էր փոխանցում կողմերի արտահայտած դիրքորոշումները, իսկ երբեմն էլ սխալ էր մեկնաբանում իսրայելական կամ սիրիական պաշտոնյաների հնչեցրած մտքերն ու առաջարկները: Ավելին, իսրայելական կողմը «ենթադրյալ» հարցերին Դամասկոսից ակնկալվող պատասխանները թողնում էր ամերիկյան դիվանագետների հայեցողությանը՝ դրանով հետագայում թուլացնելով իրենց իսկ՝ իսրայելցիների բանակցային դիրքերը:

Այսպես, բանակցային ամենակարևոր հարցերից էր իսրայելական ուժերի դուրսբերման գծի հստակեցումը: 1994թ. ապրիլին Դամասկոս ԱՄՆ-ի պետքարտուղար Ու.Քրիստոֆերի հերթական այցի ժամանակ Ասադը խնդրում է հստակեցնել իսրայելական կողմից Գոլաններից ուժերի դուրսբերման գիծը՝ կասկածելով, որ Ռաբինը նկատի է ունեցել ուժերի դուրսբերումը՝ մինչև 1923թ. սահմանները: Մինչ այդ Ռաբինը հայտնել էր Քրիստոֆերին, որ Իսրայելը պատրաստ է սահմանը հաստատել 1967թ. հունիսի 4-ի գծի համաձայն, միևնույն ժամանակ շեշտելով, որ այս պատրաստակամության մասին նա հայտնում է միայն *ամերիկացիներին*, այլ ոչ թե սիրիացիներին: Ռաբինն իր այդ առաջարկը համարեց ԱՄՆ-ի ձեռքի մեջ դրված «կանխավճար»:[583] Սակայն Քրիստոֆերը Ասադին այն ներկայացրեց որպես իսրայելական առաջարկ և զրկելով Ռաբինին լուրջ խաղաքարտից, ոչ միայն թուլացրեց նրա դիրքերը սիրիացիների հետ բանակցություններում, այլև անվստահություն առաջացրեց: Եվ այդ այն դեպքում, երբ բանակցային կողմերի միջև դեռևս չէր հաջողվել վստահության մթնոլորտ ստեղծել:

Ինչևիցե, խաղաղության համաձայնագրի ստորագրումը Սիրիայի և Իսրայելի միջև՝ այդպես էլ իրականության չդարձավ, իսկ բանակցությունների ընթացքում ձեռքբերված բոլոր համաձայնությունները ի չիք դարձան Իսրայելում Նեթանյահուի ընտրվելուց հետո, որը մերժելով հակամարտության կարգավորման նախկին՝ «խաղաղության հողերի դիմաց» տարբերակը, առաջ քաշեց

[583] Schiff, Ze'ev. "What did Rabin promise Syrians?". Haaretz, 29 August 1997; Ben Caspit. Commiting Suicide: A Party Gives up Power, p.53.

«անվտանգ խաղաղության» սկզբունքը՝ բացարձակապես անհնարին համարելով Գոլանների վերադարձը: Դեռ ավելին, Վաշինգտոն կատարած իր առաջին այցելության ընթացքում Նեթանյահուն փորձեց համոզել Քլինթոնին՝ ընդհանրապես մեկուսացնել Սիրիային խաղաղության գործընթացից:

Եթե Ռաբինը փորձում էր ամենաբարձր փոխհատուցումը ստանալ Վաշինգտոնից Սիրիայի հետ խաղաղություն հաստատելու դիմաց, ապա Նեթանյահուն մերժեց նաև այդ հնարավորությունը: Նեթանյահուի համար նախկինում՝ Ռաբինի և Պերեսի օրոք բանակցություններում բանավոր կերպով սիրիացիների հետ ձեռք բերված պայմանավորվածությունները պաշտոնական պարտավորություն չէին նշանակում: Պետք է նշել նաև, որ նա չէր բացառում բանակցությունների վերսկսումը Սիրիայի հետ, իսկ որոշ հրապարակումների համաձայն, պատրաստվում էր անգամ Գոլաններից զորքերի դուրսբերման հարցը դնել համաժողովրդական հանրաքվեի: Սակայն իրականում կարծում ենք, որ Նեթանյահուի կառավարությունը որդեգրել էր առաջին հերթին պաղեստինցիների և Լիբանանի հետ հարաբերություններ հաստատելու «նախապայմաններով լի», անիմաստ և ի սկզբանե դատապարտված քաղաքականությունը՝ հետին տեղ հատկացնելով սիրիական ճակատին:

Այսպիսով, չնայած ամերիկյան միջնորդների գործադրած բոլոր ջանքերին, Սիրիայի և Իսրայելի միջև բանակցությունները արդեն երկրորդ անգամ չափազանց մոտ լինելով հաջող ավարտին, սառեցվեցին: Սիրիայի և Իսրայելի բանակցային գործընթացը ընդհատվեց ընդհուպ մինչև 1999թ. Իսրայելում Եհուդ Բարաքի ընտրությունը:

## *ՍԻՐԻԱՅԻ ԵՎ ԻՍՐԱՅԵԼԻ ՄԻՋԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐՋԻՆ ՓՈՐՁԸ*

Սիրիայի արտաքին քաղաքականության հիմնախնդիրները ձևակերպվեցին Հ.Ասադի՝ Սիրիայի նախագահի պաշտոնում վերընտրվելու առթիվ 1999 թ. մարտի 11-ի նրա ելույթում, որը կարելի է գնահատել որպես *Ասադի ծրագրային վերջին ելույթը* և այդ իսկ պատճառով էլ՝ պատմական: 1999թ. առաջին կիսամյակի ընթացքում սիրիական դիվանագիտությունը հետամուտ եղավ վերոհիշյալ ելույթում տեղ գտած դրույթների իրականացմանը, ըստ որի Սիրիան ձգտում էր.

1. տարածաշրջանում խաղաղության վերջնական հաստատմանը Իսրայելի հետ խաղաղության գործընթացի /ԽԳ/ բանակցությունների վերսկսմամբ, այն կետից, որտեղից ընդհատվեցին վարչապետ Նեթանյահուի իշխանության գալուց հետո,
2. համաարաբական միասնությանը, տարբեր խնդիրների շուրջ մեկ դիրքորոշման մշակմանն ու մեկ միասնական ձայնով հանդես գալուն,
3. բազմաբևեռ աշխարհի ձևավորմանը,



4. ՄԱԿ-ի, Չմիացած երկրների շարժման և այլ միջազգային կազմակերպությունների դերի ու նշանակության բարձրացմանը,
5. Եվրամիության հետ հարաբերությունների զարգացմանը:

Մտորև կանդրադառնանք միայն սիրիա-իսրայելական բանակցային գործընթացին մինչև 2000թ. հունիս՝ Հ.Ասադի մահը:

Եհուդ Բարաքի՝ Իսրայելի վարչապետի պաշտոնում ընտրությունը նոր հույսեր ներշնչեց, որ վերջապես հնարավոր կլինի հասնել խաղաղության համաձայնագրի ստորագրմանը Իսրայելի և Սիրիայի միջև: Հատկապես, երբ 1999թ. հունիսի 6-ին իսրայելական խորհրդարանում երդման արարողության ժամանակ Ե. Բարաքն իր ելույթում նշեց, որ ձգտում է արաբական բոլոր երկրների, մասնավորապես Սիրիայի և Լիբանանի հետ իրական հաշտության հասնել:

Այնուհետև, առաջին անգամ իսրայելական և սիրիական մամուլի միջոցով նախագահ Ասադն ու վարչապետ Բարաքը միմյանց հասցեին հաճոյախոսություններ փոխանակեցին: Ասադը Բարաքին անվանեց «ազնիվ և ուժեղ մարդ, որն իսկապես խաղաղություն է ցանկանում»: Իր հերթին, Բարաքն Ասադին անվանեց «գործիչ, որը ստեղծել է ուժեղ, կայուն և բանակցելու համար վստահելի պետություն և որը կարող է կատարել իր ստանձնած պարտավորությունները»:[584] Երկու կողմերն էլ միանշանակ ազդանշաններ հղեցին միմյանց, որ պատրաստ են ԽԳ բանակցությունների վերսկսմանը: Սակայն ամեն ինչ չէր, որ հարթ էր: Սիրիական կողմը պնդում էր, որ մինչև Նեթանյահուի իշխանության գալը, իսրայելա-սիրիական 1993-96թթ. բանակցությունների ընթացքում.
Իսրայելը համաձայնվել էր զորքերը հետ քաշել մինչև 1967թ. սահմանները, այսինքն՝ զորքերի ամբողջական դուրս բերմանը Գոլանի բարձունքներից, և

սկսել քննարկումներ անվտանգության միջոցառումների շուրջ:

Այսպիսով, ընդհանուր ձևակերպումներով սիրիական կողմը առաջարկում էր շարունակել բանակցությունները ընդհատված կետից և կատարել ՄԱԿ-ի ԽԳ--ին վերաբերող բանաձևերը, ինչպես և Մադրիդի «հող խաղաղության դիմաց» սկզբունքը:

Թեև Բարաքը հայտնեց իր պատրաստակամությունը ԽԳ բանակցությունների վերսկսման համար, սակայն նախընտրական շրջանում այդպես էլ չկոնկրետացրեց իր քայլերը Սիրիայի նկատմամբ, ի տարբերություն լիբանանյան ուղղության, նշելով, որ իր ընտրվելուց հետո մեկ տարվա ընթացքում դուրս կբերի իսրայելական զորքերը Լիբանանի հարավից: Դամասկոսի և Թել-Ավիվի միջև մոտեցումների

[584] Սիրիայում ՀՀ դեսպանության Քաղաքական նամակը՝ Սիրիայի Արաբական Հանրապետության արտաքին և ներքին քաղաքականության որոշ հիմնախնդիրների վերաբերյալ /հունվար – հունիս, 1999 թ./: ՀՀ ԱԳՆ արխիվ, "Սիրիա. արտաքին քաղաքական, 1999թ. h.2:

տարբերությունները պահպանվեցին նաև Լիբանանի և Սիրիայի հետ միաժամանակյա խաղաղության կնքման հարցում:

Խաղաղության գործընթացի շուրջ բանակցությունների վերսկսման հարցում իրենց միջնորդական ջանքերը առաջարկեցին ԱՄՆ-ը, ԵՄ /ինչպես միշտ առավել ակտիվ էր Ֆրանսիան/ և Եգիպտոսը: 1999թ. հուլիսի սկզբին ԱՄՆ կատարած այցի ժամանակ Եգիպտոսի նախագահ Մուբարաքը փորձեց համադրել Եգիպտոսի ջանքերը ԱՄՆ-ի հետ: Սակայն, Սիրիան մերժեց եգիպտական տարբերակը /արաբական գագաթնաժողովի անցկացում, միասնական դիրքորոշման որդեգրում, ԽԳ կոնֆերանսի անցկացում Կահիրեում/:

Սիրիական կողմը պնդում էր, որ մինչև Նեթանյահուի իշխանության գալը Իսրայելը համաձայնվել էր զորքերը հետ քաշել մինչև 1967 թ. սահմանները և մնում էր բանակցել միայն անվտանգության միջոցառումների խնդրի շուրջ: Բարաքը, թեև նախընտրական փուլում ոչ մի խոստում չտվեց, սակայն միշտ ընդգծում էր սիրիական ուղղությամբ խաղաղություն հաստատելու անհրաժեշտությունն ու դրան հասնելու իր պատրաստակամությունը:

Խաղաղության գործընթացը առաջ մղելու նպատակով 1999թ. Սիրիա այցելեցին ԱՄՆ-ի պետքարտուղարի Մերձավոր Արևելքի հարցերով տեղակալ Մարտին Ինդիկը /մարտի 14-ին/, ԱՄՆ նախկին պետքարտուղար Բեյքերը և Սիրիայում ԱՄՆ-ի նախկին դեսպան Ջերեջյանը /հունիս 15-ին/: ԽԳ առնչվող հարցեր քննարկվել են համարյա բոլոր այցելությունների ընթացքում: Այս ցանկին, թերևս, կարելի է ավելացնել ՌԴ ԱԳ նախարար Իվանովի այցը Դամասկոս և Սիրիայի ԱԳ նախարար Շարաայի այցը Մոսկվա:

Ամեն պարագայում, թեև կողմերը հոգեբանորեն պատրաստ էին ԽԳ բանակցությունների վերսկսմանը, առկա էր հստակ տարբերություն Սիրիայի և Իսրայելի դիրքորոշումների միջև. ո՞ր կետից վերսկսել բանակցությունները: Այսպես, Յեհուդ Բարաքի խորհրդական Էյտան Հաբերը հունիսի վերջին հայտարարեց, որ Իսրայելը ոչ մի մտադրություն չունի խաղաղության դիմաց Սիրիային վերադարձնել ամբողջ Գոլանը: Ըստ նրա, Իսրայելը պետք է պահպանի Գոլանի այն մասը, որն անհրաժեշտ կհամարի անվտանգության տեսանկյունից, ինչպես նաև նախազգուշացման կայանները, որոնք նախատեսվում են տեղակայվել Գոլանում, պետք է մնան Իսրայելի հսկողության ներքո: Հաբերը մեղադրեց ԱՄՆ իշխանություններին, մասնավորապես ԱՄՆ նախկին պետքարտուղար Քրիստոֆերին այն բանի համար, որ նրանք ապատեղեկացրել են Սիրիային՝ հավատացնելով, որ Ռաբինի կառավարությունը մտադիր է ամբողջությամբ վերադարձնել Գոլանը: Ըստ խորհրդականի, Բարաքը մտադիր է Գոլանի շուրջ բանակցությունները սկզբից սկսել: Սակայն խորհրդականի այդ հայտարարությունը չմեկնաբանվեց և չհաստատվեց Բարաքի կողմից:



Այնուամենայնիվ կողմերը թեև ոչ բացահայտորեն, բայց հայտնեցին փոխզիջման դիմելու իրենց մտադրությունների մասին: Այսպես օրինակ, Իսրայելի նախկին պաշտպանության նախարարը Գոլանի վերադարձը Սիրիային միանշանակ մերժեց ոչ այնքան անվտանգության, որքան Իսրայելի համար Գոլանի ջրերի կենսական նշանակության նկատառումներով: Դիվանագիտական շրջանակներում շրջանառության մեջ դրվեց այն տեսակետը, որ Սիրիան պատրաստ է Գոլանի ջրերից հատկացումներ անել Իսրայելին: Իր հերթին, Իսրայելի վարչապետը հայտարարեց, որ իսրայելական կառավարությունը սառեցնում է վերաբնակիչների համար նոր տների շինարարությունը, թեև չի կասեցնելու արդեն սկսվածները:

Մինչև սիրիա-իսրայելական բանակցությունների վերսկսումը մի շարք հարցեր մնում էին չպարզաբանված: Արդյոք, եթե Սիրիան համաձայնվեր բանակցությունների վերսկսմանը՝ կնշանակեր, որ Դամասկոսը համաձայնվում է Գոլանի մի մասը Իսրայելի վերահսկողության տակ թողնելուն: Մյուս կողմից, եթե Բարաքը պատրաստ էր ընդունել սիրիական տարբերակը, ապա արդյոք դա նշանակում էր, որ Իսրայելը պատրաստվում է վերադարձնել Գոլանները ամբողջությամբ:

Վերջապես, ԱՄՆ միջնորդական ջանքերի շնորհիվ Սիրիան և Իսրայելը 1999թ. դեկտեմբերի 14-15-ին Վաշինգտոնում վերսկսեցին 1996թվականից ընդհատված խաղաղության բանակցությունները «հող՝ խաղաղության դիմաց» սկզբունքի հիման վրա: Եռակողմ այս հանդիպումով պայմանավորվածություն ձեռք բերվեց 2000թ. հունվարին նույն կազմով ԱՄՆ-ում բանակցությունների առաջին փուլի անցկացման վերաբերյալ:

2000թ. հունվարի 3-ին Վիրջինիա նահանգի Շեփրդսթաուն բնակավայրում սկսվեցին Սիրիայի ԱԳ նախարար Ֆարուկ Շառաայի և Իսրայելի վարչապետ Ե.Բարաքի բանակացությունները: Սակայն սկզբից իսկ օրակարգի վերաբերյալ տարաձայնությունների պատճառով բանակցությունները ընդհատման սպառնալիքի տակ հայտնվեցին և միայն ԱՄՆ-ի նախագահի և պետքարտուղարի գործադրած ջանքերի շնորհիվ հաջողվեց կասեցնել տապալումը: Ուշագրավ է, որ ԱՄՆ-ի նախագահ Բ.Քլինթոնը 7 օրվա ընթացքում 5 անգամ այցելեց Շեփրդսթաուն և առանձին-առանձին բանակցություններ վարեց Շառաայի և Բարաքի հետ: Առանց որևէ լուրջ արդյունքի ավարտված այդ բանակցություններից հետո ամերիկյան միջնորդները կողմերին ներկայացրեցին համաձայնագրի նախագիծ, որը կոչվում էր «Իսրայելի և Սիրիայի միջև խաղաղության շրջանակ»:

Համաձայնագրի մասին տեղեկատվության արտահոսքը և անգամ նրա ամբողջական տեքստի հրապարակումը իսրայելական «Հաարեց»

օրաթերթում՝ փաստորեն խափանեցին փաստաթղթի ստորագրումը և «անհնար դարձրեցին Սիրիայի վերադարձը բանակցային սեղանին»:[585]

Ինչո՞ւ Իսրայելը և Սիրիան չստորագրեցին խաղաղության համաձայնագիրը, ինչո՞ւ Ասադը չարագացրեց խաղաղության գործընթացը, տեղեկանալով այն մասին, որ Ռաբինը պատրաստ է զորքերը դուրս բերել Գոլաններից, ինչո՞ւ ամերիկացիները, անկեղծորեն ցանկանալով խաղաղության հաստատումը Իսրայելի և Սիրիայի միջև, անկարող գտնվեցին համոզել սիրիացիներին:

Ինչ վերաբերում է խաղաղության գործընթացում Սիրիայի ցուցաբերած ***«դանդաղկոտությանը»***, ապա այն արտաքին քաղաքական և ռազմավարական այլ նկատառումներից բացի, կարելի է բացատրել նաև նրանով, որ Իսրայելի հետ խաղաղության հաստատումը պաշտոնական Դամասկոսի համար՝ հղի էր իրական բարդություններով և չափազանց վտանգավոր հետևանքներով ներքին քաղաքական դաշտում:

Առաջին հերթին, այն կարող էր օտարել Բաաս կուսակցության մեծ թվով անդամներին և պետական ծառայողներին, որոնց հիմնական մասը, սիոնիզմի վտանգի պատճառաբանումով, ներգրավված էր ռազմական և ներքին անվտանգության մեծածավալ համակարգերում:

Երկրորդ, սիրիացի գործարարներն ու ազատամիտները Իսրայելի հետ խաղաղության հաստատումը համարում են Արևմուտքի առջև երկիրը բացելու սկիզբ: Ասադը, բնականաբար, չէր կարող մտահոգված չլինել այն հանգամանքից, որ «պերեստրոյկան» կարող է խարխլել ստեղծված կառավարման համակարգի հիմքերը և հանգեցնել իր իշխանության փլուզմանը, ինչպես այդ կատարվեց Արևելյան Եվրոպայի երկրներում: Խաղաղության պայմաններում Իսրայելի տնտեսական գերիշխանության հաստատման հեռանկարը նույնպես չէր կարող չմտահոգել Դամասկոսին:

Շատ է գրվել նաև այն մասին, որ Հ.Ասադը, ներկայացնելով ալավիական փոքրամասնությունը երկրում, վախենում է խաղաղությունից, քանի որ այն կարող էր վտանգել երկրում իր համայնքի գերիշխանությանը: Վախենում էր, քանի դեռ կարծում էր, որ ատելությունը, որ տածում են երկրի մեծամասնությունը կազմող սուննի մահմեդականները ալավիների դեմ այնքան ուժգին է, որ իշխանությունը ալավիներից վերցնելուց հետո նրանք կդիմեն դաժան վրեժխնդրության: Այս թեզը հեշտությամբ կարելի է հերքել միայն այն փաստով, որ 1983թ. երբ Հ.Ասադի առողջական վիճակի վատթարացումը հանգեցրեց վերջինիս կողմից 6 հոգանոց հանձնաժողովի ստեղծմանը, դրա կազմում ընդգրկվել

585«الحياة», 09.01.2000թ., «Haaretz», 13.01.2000թ.: Առաջարկվող համաձայնագրի տեքստը ներկայացված է Հավելված 11-ում:



էին երկրի ամենաբարձրաստիճան պաշտոնյաները՝ բոլորն էլ սուննի մահմեդական: Այս խումբը Հ.Ասադի մահվան դեպքում պետք է իրականացրեր երկրի ղեկավարումը:[586]

Իհարկե, ոչ ոք չի կարող հերքել ալավիների անսահմանափակ իշխանությունը պետության համար ամենակենսական՝ անվտանգության և զինվորական համակարգերում և Բաաս կուսակցության ղեկավարության մեջ: Սակայն Սիրիան, մեր կարծիքով, ***ավելի շատ կենտրոնաձիգ ավտորիտար բաասական պետություն է, քան ալավիական մենիշխանություն:*** Սիրիայում իշխանության հիմնական մտահոգությունը ոչ թե սուննի մահմեդական բնակչության հակազդեցությունն է ալավիականությանը, այլ իսլամական ծայրահեղականությունը՝ «Իխվան ալ-Մուսլիմին»-ի կազմակերպվածությունն ու բնակչության շրջաններում տարվող քարոզչությունը՝ աշխարհիկ պետության սկզբունքների դեմ: Ի դեպ, այդ նույն մտավախությունը առկա է Եգիպտոսի իշխանությունների և հյուսիսային Աֆրիկայի արաբական այլ երկրներում, որոնց ղեկավարները բնավ էլ փոքրամասնությունների ներկայացուցիչներ չեն:

Այն պնդումը, որ Հ.Ասադը չի ցանկացել խաղաղություն, քանի որ այն իրեն «ձեռնտու չէր» մի շարք ռազմավարական պատճառներով,[587] կարծում ենք, չափազանցված է:

Հ.Ասադը ցանկանում էր խաղաղության հաստատումը, սակայն իր կողմից առաջադրված պայմանների ու սեփական պատկերացումների հիման վրա: Իհարկե, խաղաղության գործընթացում Ասադն ունեցել է իր սեփական հաշվարկներն ու մարտավարական նկատառումները: Պարզապես հարցն անհրաժեշտ է դիտարկել այն տեսանկյունից, թե ինչ ակնկալիքներ են ունեցել Ասադից բանակցող և միջնորդական առաքելություն իրականացնող կողմերը: Եթե Ասադը չի բավարարել նրանց ակնկալիքները, դա չի նշանակում, որ նա չի ցանկացել խաղաղության հաստատումը: Խաղաղության հաստատման հնարավորությունների վերաբերյալ իր հստակ ու վճռական դիրքորոշումը Հ.Ասադը կրկնել է բազմիցս: Նրա դիրքորոշումը փոփոխություն չի կրել, նրա արտաքին քաղաքականությունն այդ հարցում հստականշվել է

586 Այդ հանձնաժողովի անդամներն էին պաշտպանության և ԱԳ նախարարներ Մ.Տլասն ու Աբդ լա-Հալիմ Խադդամը, ԶՈՒ շտաբի պետ Հիքմաթ ալ-Շիհաբին, Բաասի Ազգային Ղեկավարության գլխավոր քարտուղարի օգնական Աբդալլահ Ալ-Ահմարը, կուսակցության տարածաշրջանային ղեկավարության գլխավոր քարտուղար գլխավոր քարտուղար Զուհեյր Մաշարիղան և նրա օգնական Աբդ ալ-Ռաուֆ Կասմը: Van dam, Nikolaos. The struggle for Power in Syria. Politics and Society under Asad and the Ba'th Party, p.119.

587 Rubin, Barry. The Truth about Syria, p.110.

հետևողականությամբ և շարունակականությամբ: Այն բոլորին պարզ ու հասկանալի է եղել: Այլ հարց է, որ ոչ Իսրայելը ոչ էլ ԱՄՆ-ը ի վիճակի չեն եղել կամ էլ չեն ցանկացել բավարարել Ասադի հստակ պահանջները, որոնք, ի դեպ չէին տարբերվում արաբ-իսրայելական հակամարտության վերաբերյալ ընդունված ՄԱԿ-ի բանաձևերից ու այլ իրավական փաստաթղթերով ամրագրված միջազգային հանրության պահանջներից: Սիրիայի և Իսրայելի միջև խաղաղություն հաստատելու փորձերի տապալման համար չի կարելի միակողմանիորեն մեղադրել միայն Սիրիային:

Խաղաղության գործընթացի անարդյունավետության պատճառներից էին նաև Իսրայելի դիմադրությունը, նրա խուսանավումները ու ղեկավարների հրաժարումը ճանաչել խաղաղության գործընթացի հիմունքները ու սկզբունքները, հրաժարումը սեփական պարտավորությունների կատարումից: Իսրայելի ղեկավարությունը համառորեն ճնշում էր բանեցնում արաբական կողմի վրա՝ շարունակելով նոր բնակավայրերի կառուցումը և ընդլայնելով արդեն իսկ կառուցվածները, աշխարհի տարբեր ծայրերից նոր ներգաղթողներ հրավիրելով և բնակեցնելով գրավված տարածքներում, մերժելով Գոլանի վերադարձն ու 1967թ. հունիսի 4-ի սահմաններին վերադառնալը, Երուսաղեմը Իսրայելի «հավերժ» մայրաքաղաք հայտարարելով, փախստականների վերադարձի իրավունքը մերժելով և այլն:

Իսրայելի ղեկավարությունը փայլուն կերպով օգտագործում էր նաև միջարաբական հակասությունները ու խնդիրները՝ պաղեստինյան հարցի վերջնական լուծումը հետաձգելու նպատակով: Պաղեստինը Իսրայելից «պատով» բաժանելու որոշումը չի կարող հարատև լուծում լինել: Այն կարող է որոշակիորեն մեղմել անվտանգության հետ կապված իսրայելցիների մտահոգությունները, սակայն երկարատև հեռանկարում այն չի կարող խաղաղություն բերել ոչ Իսրայելին և ոչ էլ տարածաշրջանին:

Անկասկած, Իսրայելի ու Սիրիայի միջև խաղաղության հաստատումը ձեռնտու էր Վաշինգտոնին, քանի որ այն կկայունացներ իրավիճակը տարածաշրջանում, կապահովեր մերձավորարևելյան նավթի անխափան և հարմար գներով արտահանումը, ինչպես նաև էլ ավելի կմեկուսացներ Իրաքն ու Իրանը: Սիրիայի տարածաշրջանային դերի կարևորումը Միացյալ Նահանգների կողմից, երկու երկրների նախագահների և բարձրաստիճան պաշտոնյաների հանդիպումները, Քլինթոնի այցելությունը Դամասկոս և այլն, մեծապես նպաստեցին երկկողմ հարաբերությունների զարգացմանը, ինչպես նաև տարածաշրջանային որոշ խնդիրների վերաբերյալ համաձայնության ձեռքբերմանը:



Սակայն հանրապետականների մեծամասնությունից կազմված ամերիկյան կոնգրեսի «կարծր» դիրքորոշումը շարունակ սահմանափակում էր Սիրիայի նկատմամբ ճկուն քաղաքականություն իրականացնելու Սպիտակ տան հնարավորությունները: Այսպես, 1993թ. մայիսի 20-ին 73 սենատորների կողմից պատրաստված ԱՄՆ-ի նախագահին ուղղված նամակում Սիրիան քննադատության էր ենթարկվում հրեաների նկատմամբ անցագրային ռեժիմի խստության, ահաբեկչական խմբերին աջակցություն ցուցաբերելու և Լիբանանից զորքերը դուրս չբերելու համար:

1993թ. հուլիսի 1-ին սենատոր Չարլզ Ռ-իգլի կողմից ներկայացվեց որոշման նախագիծ, որով կոնգրեսը մեղադրում էր Սիրիային՝ Թաիֆի համաձայնագրի խախտման մեջ, որի համաձայն, սիրիական ուժերը պետք է դուրս բերվեին Լիբանանից մինչև 1992թ. սեպտեմբեր:[588] Չնայած Սիրիան ուղղակի չպատասխանեց, սակայն պատասխանը եկավ Լիբանանից, որի խորհրդարանը հուլիսի 6-ին միաձայն կայացրած որոշման մեջ քննադատվում էր «ԱՄՆ-ի կոնգրեսի կողմից Լիբանանի ներքին հարցերին և սիրիա-լիբանանյան հարաբերություններին միջամտելու փորձերը»:[589] Որոշման մեջ նաև նշված էր, որ Թաիֆի համաձայնագրով նույնպես նախատեսված է Իսրայելի զորքերի դուրսբերումը հարավային Լիբանանից:

1994թ. հունվարի 11-ին Սենատի Ներկայացուցիչների Տան 36 անդամներ նամակ հղեցին Քլինթոնին, նշելով, որ ԱՄՆ-ը կպահպանի Սիրիան ահաբեկչությանը աջակցող երկրների ցանկում այնքան ժամանակ, քանի դեռ «չի ստանա հստակ ապացույց այն մասին, որ ահաբեկչական խմբերին Սիրիայի օժանդակությունը ամբողջովին կասեցված է»:

1994թ. նոյեմբերի 19-ին սենատի միջազգային հարաբերությունների հանձնաժողովի նախագահն իր ելույթներից մեկի ընթացքում մեղադրեց Սիրիային արաբ-իսրայելական խաղաղության գործընթացի նկատմամբ շահագրգռության բացակայության մեջ, նշելով, որ Դամասկոսը «հետաքրքրված է միայն Գոլանների վերադարձի և ամերիկյան տնտեսական օգնության մեջ»:[590]

1995թ. հունվարի 11-ին սենատի միջազգային հարաբերությունների հանձնաժողովի նախագահը մեղադրեց Սիրիայի

---

[588] Congressional Research Service. Syrian –US Relations. May 3,1995. Library of Congress. p.13.

[589] «السـفير», 07.07.1993.

[590] Congressional Research Service. Syrian –US Relations. May 3,1995. Library of Congress. p.13.

կառավարությունը 1983թ. Լիբանանում ամերիկյան զորամասերի ռմբակոծման, ինչպես նաև 1988թ. Pan Am ամերիկյան ավիաընկերության ինքնաթիռը գրոհելու մեջ: Ամերիկյան կոնգրեսի 140-րդ նստաշրջանը գնաց ավելի հեռու՝ արգելեց Ռուսաստանին օգնության տրամադրումը ԱՄՆ-ի կողմից, եթե վերջինս նյութեր տրամադրի 12 երկրներին (այդ թվում նաև Սիրիային)՝ զանգվածային ոչնչացման զենքեր արտադրելու համար: Մեկ այլ որոշման համաձայն, Սիրիան դասվեց Միացյալ Նահանգների համար իրթիռային սպառնալիք ներկայացնող երկրների շարքին:[591]

Այսպիսով, չնայած 90-ական թվականներին երկկողմ հարաբերությունների համեմատաբար բարելավմանը, այնուամենայնիվ, Վաշինգտոնը Սիրիայի հետ հարաբերություններում չկարողացավ ձերբազատվել դեռևս սառը պատերազմից մնացած «մրցակից հովանավոր և մրցակից հաճախորդ» մակարդակին բնորոշ հատկանիշներից: ԱՄՆ-ն ի զորու չեղավ այնպիսի դիվանագիտություն մշակել, որը կնպաստեր Սիրիայի էլ ավելի ակտիվ ներգրավմանը տարածաշրջանային գործընթացների մեջ, ամրապնդելով Սիրիայի հակակշռող դերը Իրաքի և Իրանի նկատմամբ ու աստիճանաբար դուրս բերելով նրան տարածաշրջանային մեկուսացումից:

Խաղաղության հաստատման հարցում Միացյալ Նահանգները չկարողացան նաև անվտանգության որոշակի երաշխիքներ առաջարկել Սիրիային և Իսրայելին, խուսափել Գոլաններում անմիջական ամերիկյան ներկայության հեռանկարից:

Համաձայնագրի ստորագրումն արագացնելու նպատակով ԱՄՆ-ը Սիրիայի հետ իր հարաբերություններում կարող էր օգտագործել նաև տնտեսական լծակները: Միացյալ Նահանգները խաղաղության գործընթացին զուգահեռ՝ կարող էին Ասադին հետաքրքրող երեք առաջարկ ներկայացնել, որոնք վերջինս դժվար թե կարողանար մերժել: Առաջին, Վաշինգտոնը կարող էր իր աջակցությունն առաջարկել Դամասկոսին՝ միջազգային ֆինանսական կազմակերպություններից այնքան անհրաժեշտ վարկեր ստանալու գործում: Երկրորդ, առաջարկել նոր տեխնոլոգիաների (համակարգչային, հեռահաղորդակցման և տեղեկատվական) առաքումը սիրիական համալսարաններին և հետազոտական կենտրոններին: Երրորդ, իր միջնորդությունն առաջարկել Սիրիայի և Թուրքիայի միջև գոյություն ունեցող ջրային, քրդական և այլ խնդիրների կարգավորման հարցում: Սակայն Միացյալ Նահանգները չօգտագործեցին վերոհիշյալ հնարավորություններից և ոչ մեկը:

[591] Նույն տեղում. էջ 14:



Թուրք-սիրիական հարաբերությունների վատթարացումը 1998թ. երբ նրանք կանգնած էին ռազմական բախման եզրին՝ քրդական անջատողականությանը, մասնավորապես Քուրդիստանի Բանվորական կուսակցությանը /ՔԲԿ/ Դամասկոսի օժանդակության պատճառով, փայլուն հնարավորություն էր Վաշինգտոնի համար՝ իրականացնելու իր միջնորդական առաքելությունը: Փոխարենը, թուրքական կողմի սպառնալիքների տակ, Դամասկոսը ստիպված եղավ երկրից վտարել ՔԲԿ-ի առաջնորդ Ա.Օջալանին և քայլեր ձեռնարկել քրդերին ցուցաբերած աջակցությունը կասեցնելու ուղղությամբ:

Անկարան հասավ իր նպատակին՝ էլ ավելի ամրապնդեց սեփական տարածաշրջանային դիրքերը և Սիրիային ներքաշեց իր ազդեցության տակ: Հաջորդ տարիների թուրք-սիրիական հարաբերություններում տեղի ունեցած զարգացումները, հատկապես Բաշար Ասադի օրոք աննախընթաց մերձեցումների «մեղրամիսը» Սիրիայի և Թուրքիայի միջև, վկայում են վերոհիշյալի մասին:[592] Անկարայի ճնշումը Սիրիայի վրա հասավ այն աստիճանի, որ սկսեց վտանգել Դամասկոսի հարաբերությունները այլ երկրների օրինակ՝ Հայաստանի հետ: Հակառակ դեպքում դժվար է բացատրել սիրիական ղեկավարության կողմից Հայոց ցեղասպանության վերաբերյալ հրապարակումների արգելումը երկրում և անգամ հրատարակված գրքերի բռնագրավումը գրախանութներից: Հայ-սիրիական դիվանագիտական հարաբերությունների մակարդակի միակողմանիորեն իջեցումը /Սիրիայի կողմից/՝ դեսպանից մինչև գործերի հավատարմատարի, այդ նույն տրամաբանության շարունակությունն էր:

Ընդհանրապես, Թուրքիայի ԵՄ անդամակցության հարցում ակնհայտ դժվարությունները նրան են մղում «դեպի Արևելք»՝ ակտիվացնելով իր մերձավորարևելյան քաղաքականությունը և հատկապես՝ արաբական ուղղությունը, ինչը սակայն միևնույն ժամանակ չի խանգարում Իսրայելի հետ ռազմական, տնտեսական և քաղաքական հարաբերությունների զարգացմանը:

ԱՄՆ-ում շատերին թվում է, որ Թուրքիան կարող է ավելի մեծ դերակատարություն ունենալ արաբ-իսրայելական հակամարտության կարգավորման գործընթացում: Առաջին հայացքից կարող է թվալ, որ 2008թ, թուրքական միջնորդությունը Սիրիայի և Իսրայելի միջև հարաբերությունների կարգավորման ուղղությամբ վկայում է հենց վերոհիշյալի մասին: Սակայն երկրի անխուսափելի իսլամականացումը

[592] Ռուբեն Կարապետյան. «Նոր զարգացումներ թուրք-սիրիական հարաբերություններում» Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, h.2, Երևան 2003, էջ 59:

/ինչի ականատեսն ենք այսօր թուրքական ներկայիս իշխանությունների գործողություններում/, դեպի Եվրոպա էներգակիրների տարանցիկ կենտրոն դառնալու իր ձգտման մեջ՝ արաբական երկրների և Իրանի հետ անխուսափելի սերտ համագործակցության հաստատումը /Միրիայով իրաքյան նավթը, Եգիպտոսից և Իրանից՝ գազը/, ժամանակի ընթացքում անհեռանկարային է դարձնելու թուրք-իսրայելական տանդեմը:

Իսկ ինչ վերաբերում է թուրք-ամերիկյան հարաբերություններին, ապա նրանց դեռևս սպասում են դժվարին ժամանակներ՝ կապված հատկապես քրդական հարցի «լուծման» նպատակով Իրաք ներխուժման, Վաշինգտոնին անցանկալի հարևանների հետ Անկարայի հարաբերությունների ջերմացման /Իրան, Սիրիա և այլն/, ինչպես նաև մոտ ապագայում Հայոց ցեղասպանության անխուսափելի ճանաչման հետ:

Խաղաղության գործընթացը Մերձավոր Արևելքում, որն այդքան ջանադրաբար հետապնդում էր ԱՄՆ-ը՝ ավարտվեց անարդյունք, քանի որ Վաշինգտոնը անտեսել էր Դամասկոսի դերը և թերագնահատել Սիրիայի կարողությունները տարածաշրջանում: Սիրիա-իրանական համագործակցության ռազմավարական հնարավորությունները չդարձան խորը վերլուծության առարկա:

Սեպտեմբերի 11-ից հետո ահաբեկչության դեմ պայքարը, որն ընդգրկեց երկարատև հեռանկարում ԱՄՆ և ՆԱՏՕ-ի Աֆղանստանում անպտուղ արշավը, առանց ՄԱԿ-ի Անվ-ի հավանությունը ստանալու Ս.Հուսեյնի վարչակարգը տապալելու նպատակով ներխուժումը Իրաք /զանգվածային ոչնչացման զենքի առկայության որևէ փաստ ԱՄՆ-ը այդպես էլ չկարողացավ ներկայացնել/ խարխլեցին Վաշինգտոնի դիրքերը Մերձավոր Արևելքում: Աճող հակաամերիկյան տրամադրությունները անգամ «չափավոր» արաբական երկրներում, տեսանելի հեռանկարում զրկելու են ԱՄՆ-ին նաև միջնորդական լուրջ նախաձեռնություններով հանդես գալու հնարավորությունից:[593]

Արաբական աշխարհը այլևս չի հավատում ԱՄՆ-ին որպես անշահախնդիր ու անկողմնակալ միջնորդի: Ժողովրդի կողմից ազատ և արդար ընտրությունների արդյունքում ընտրված «Համասի» կառավարությունը Պաղեստինում չընդունվեց ժողովրդավարությունը քարոզող ԱՄՆ-ի և Արևմուտքի կողմից: Ժամանակի ընթացքում սակայն նրանք ստիպված կլինեն հաշտվել, ինչպես ստիպված եղան ճանաչել և սեղանի շուրջը նստել ՊԱԿ—ի և նրա ղեկավար Յ.Առաֆաթի հետ, որին սկզբում համարում էին ահաբեկիչ: Սակայն հարցը նրանում է, թե ինչպիսի

[593] 2007թ. Աննապոլիսի ապարդյուն գագաթաժողովը, թերևս, Ջ.Բուշի անփառունակ վարչակազմի վերջին փորձն էր այդ ուղղությամբ:



գին այս անգամ կվճարեն արաբներն ու իսրայելցիները, տարածաշրջանն ու ողջ աշխարհը:

Կցանկանայի միայն հիշեցնել, որ անգամ ԱՄՆ-ի կողմից «չարի կայսրություն» հռչակված ԽՍՀՄ-ում քաջ գիտակցում էին Մերձավոր Արևելքում միջնորդական առաքելություն կատարելու ողջ պատասխանատվությունը: Եվ միանգամայն այժմեական հնչեղություն ունեն 1982թ. Իսրայելի Լիբանան ներխուժման առիթով ԽՍՀՄ ղեկավար Ա. Անդրոպովի հետևյալ խոսքերը. «Այսօր մեր ընկերները պարտություն կրեցին: Նրանց փոխարեն մենք չենք պատրաստվում պատերազմել: Այս պայմաններում մեր մասնակցությունը խաղաղարար գործունեությանը արաբների աչքերում և հատկապես ապագա սերունդների աչքերում կերևա որպես աջակցություն Իսրայելին՝ արաբական գրավված տարածքներում ամրապնդվելու, Լիբանանից պաղեստինցիներին արտաքսելու գործում: Կօգնի՞ այդ ԽՍՀՄ դիրքերի ամրապնդմանը Մերձավոր Արևելքում: Վստահ եմ, որ ոչ: Եթե մենք Մերձավոր Արևելքում ի վիճակի չենք ուժի կամ այլ միջոցներով փոխել իրադարձությունների ընթացքը, ապա պետք է մնանք սկզբունքային մեր դիրքերում և չկապենք մեր ձեռքերը խաղաղարարության դրոշի տակ կասկածելի գործարքներով, որոնք կարող են դիտարկվել որպես իմպերիալիզմի դեմ արաբների արդար պայքարի դավաճանություն: Եվ սա քայլ չէ դեպի մեկուսացում, այլ սկզբունքային դիրքորոշման պահպանում պատմական հեռանկարով, որն արդեն իսկ իր պտուղները կտա ոչ հեռու ապագայում»:[594]

### *ՀԱՖԵԶ ԱՍԱԴԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԱՎԱՐՏԸ՝ ՍԻՐԻԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ԱՌՋԵՎ*

2000թ. հունիսի 10-ին վախճանվեց Սիրիայի նախագահ Հաֆեզ Ասադը: Ավարտվեց Սիրիայի նորագույն պատմության մի ամբողջ կարևորագույն ժամանակաշրջան: Իր կառավարման 30 տարիների ընթացքում, չնայած երկրում հաստատված մենիշխանական և խիստ կենտրոնացված համակարգին, Հ. Ասադին հաջողվեց վերացնել «բազմադեմ երկրի» ներսում գոյություն ունեցող քաղաքական և կրոնական տարաձայնություններն ու հակասությունները, ստեղծել 400 հազարանոց մարտունակ բանակ, վերահսկողություն հաստատել հարևան Լիբանանի վրա՝ տնտեսական և քաղաքական լուրջ ձեռքբերումներ ապահովելով իր երկրին:

[594] Гриневский О. Сценарий для третьей мировой войны.Как Израиль чуть не стал ее причиной, с.216.

Հակասական են Հ.Ասադի կառավարման տարիների վերաբերյալ վերլուծությունները: Մենք չենք ցանկանում և չենք էլ հավակնում այստեղ ներկայացնել այդ մեծ գործչի կենսագործունեության՝ հատկապես նրա վարած ներքին քաղաքականության հետ կապված հարցերը: Այդ մասին գրվել և խոսվել է չափազանց շատ:

Հանրագումարի բերենք միայն, որ Հ.Ասադի իշխանության օրոք Սիրիան վերածվեց տարածաշրջանային կարևոր ուժի, որն այլևս արաբական ավելի հզոր հարևանների, մասնավորապես Եգիպտոսի և Իրաքի, մրցակցության զոհը չէր, ինչպես անցյալում էր: Տարածաշրջանային իր այդ կարևորությունից ելնելով էր, որ Սիրիան սկսեց առաջնային դերակատարություն խաղալ արաբ-իսրայելական հակամարտությունում:

Եթե երկրի ներսում հաստատելով ամբողջատիրական իշխանություն, վարչակազմը կասեցնում էր այլախոհության և այլակարծության որևէ դրսևորում, ապա արտաքին քաղաքական հարցերում միշտ պահպանում էր «ժողովրդավարական» մոտեցումները: Երեք տասնամյակ ի վեր Սիրիայի ալավիական ղեկավարությունը վարել է այնպիսի արտաքին քաղաքականություն, հատկապես արաբ-իսրայելական հակամարտությանը վերաբերող հարցերում, որն առավել համապատասխանել է բնակչության լայն զանգվածների տրամադրություններին: Այդ պատճառով էլ Հ.Ասադի վարած արտաքին քաղաքականությունը հատկանշվում էր հետևողականությամբ ու շարունակականությամբ, իսկ արաբ-իսրայելական հակամարտության նկատմամբ նրա դիրքորոշումը՝ անփոփոխ էր ու հաստատակամ: Հ.Ասադի արտաքին քաղաքականությունը վստահություն էր ներշնչում, քանի որ Սիրիան ապացուցել էր միջազգային պարտավորությունները կատարելու իր պատրաստակամությունը / 1973թ. պատերազմից հետո ստորագրված համաձայնագրի կետերի կատարում և խաղաղության պահպանումը սահմանին/, իսկ Հ.Ասադի պրագմատիզմը արտահայտվում էր գերտերությունների հետ հարաբերություններում:

Այսպես, խուսանավելու քաղաքականության նրա բացառիկ կարողությունների շնորհիվ էր, որ Սիրիան ԽՍՀՄ-ի հետ սերտ համագործակցություն հաստատելով, խորհրդային քաղաքական, տնտեսական, ռազմական անսահմանափակ օժանդակությունն իր երկրին ապահովելով հանդերձ, այդպես էլ Մոսկվայի «հպատակի» չվերածվեց ոչ գաղափարախոսական հարցերում և ոչ էլ իր արտաքին քաղաքականության իրականացման ընթացքում: Սիրիայի համար ներքին և արտաքին քաղաքական կենսական հարցերում Մոսկվայից նրա անկախ կեցվածքի պահպանումը միայն հարգանքի է արժանի: Իսկ 90-ականներին Արևմուտքի հետ հարաբերությունների բարելավմանն ուղղված քաղաքականությունն ու հակաիրաքյան դաշինքին միանալու ու Իրաքի դեմ պատերազմում մասնակցությունը միայն վկայում են



Հ.Ասադի՝ արտաքին քաղաքականության մեջ ցուցաբերած ճկունության մասին:

Այս բոլորը մեծապես նպաստում էին Սիրիայի հեղինակության բարձրացմանը արաբական աշխարհում և միջազգային ասպարեզում նրա դիրքերի ամրապնդմանը:

Հ.Ասադի մահվամբ միջազգային հանրությունը կորցրեց Սիրիայի և Իսրայելի միջև խաղաղության հաստատմանն ու պաղեստինյան հիմնախնդրի լուծման ու արդյունքում համապարփակ խաղաղության հաստատման լուրջ հնարավորությունը տարածաշրջանում: Խաղաղության հաստատումը, հատկապես երբ այն իրականացվում է երկարատև բշնամանքից և հակամարտությունից հետո, առաջնորդներից պահանջում է «խիզախություն», որը սիրիական կողմից կարող էր տալ միայն Հ.Ասադը:

Իշխանափոխության հարցը Սիրիայում դրված է եղել դեռևս 1980-ականների վերջից, երբ ակտիվ աշխատանքներ էին տարվում Հ.Ասադի ավագ որդուն՝ Բասիլին, որպես հավանական փոխանորդի, իշխանական համակարգում ամրացնելու ուղղությամբ: Նա, ի տարբերություն իր եղբոր՝ Բաշարի, զինվորականի կարիերա էր արել և իբրև գլխավոր շտաբի անդամ ղեկավարում էր Հանրապետական գվարդիան՝ զինվորական ընտիր ստորաբաժանումը: Բասիլը մինչև իր մահը (ավտովթարից՝ 1994թ.) արդեն իսկ որոշակիորեն հասցրել էր զինված ուժերում, անվտանգության և ներքին համակարգերում սեփական ուժային հենարանը ստեղծել, ինչպես նաև անձնական կապեր հաստատել Լիբանանի քաղաքական առաջնորդների երիտասարդ սերնդի ներկայացուցիչներից շատերի հետ: Լիբանանում անվտանգության ապահովման հետ կապված նրա գործունեությունը «դրական իմիջ էր ստեղծել իր համար՝ հատկապես թմրանյութերի մաքսանենգության և հաշիշի աճեցման դեմ ակտիվ պայքարի շնորհիվ»:[595]

Նրա հանկարծակի մահը նորից քաղաքական օրակարգում առաջ քաշեց ժառանգորդի հարցը: Հ.Ասադի մյուս որդին՝ Բաշարը, որը Բասիլ Ասադի զոհվելու ժամանակ Լոնդոնում ավարտում էր իր ակնաբուժական ուսումը, արագորեն ներգրավվեց իշխանությունը հորից ժառանգելու գործընթացի մեջ: 1994թ. նոյեմբերին Բաշար Ասադը նշանակվում է տանկային գումարտակի հրամանատար: 1995թ. հունվարին նշանակվում է նախագահական գվարդիայի մայոր, իսկ 1997թ. հուլիսին՝ ստանում է փոխգնդապետի կոչում և նշանակվում Հանրապետական գվարդիայի հրամանատար: Այնուհետև, 1999թ. հունվարին, Բաշարը նշանակվում է զինված ուժերի շտաբի գնդապետ:

[595] Perthes, Volker. The Political Economy of Syria under Asad, p.268.

Ինչպես և իր եղբոր՝ Բասիլի դեպքում, նրա վրա դրվեց ամենածանրակշիռ պարտականությունը՝ «լիբանանյան ծրարի» տնօրինումը, որին նա մասնակից էր դարձել դեռևս 1995թ. մայիսին՝ Լիբանան կատարած իր առաջին պաշտոնական այցի ժամանակ: 1998 թ. վերջերից Բաշարն իր հոր անմիջական վերահսկողության տակ տնօրինում էր սիրիա-լիբանանյան հարցերը: Մինչ այդ, «լիբանանյան ծրարը» տնօրինում էին Սիրիայի փոխնախագահ Աբդել Հալիմ Խադդամը և սպայակույտի պետ Հիքմեթ Շիհաբին: Բաշար Ասադի վճռական «միջնորդությամբ» Լիբանանի նախագահ ընտրվեց գեներալ Լահուդը, իսկ Հոսը նշանակվեց վարչապետ: Սա մեծ հարված էր փոխնախագահ Աբդել Հալիմ Խադդամին,[596] որը միանշանակ պաշտպանում էր Հրարի-Հարիրի տանդեմը:

Այսպիսով, 1994 թվականից սկսած, նախագահ Ասադը աստիճանաբար «աճեցնում է» իր հաջորդին, այդ ընթացքում շրջապատելով նրան հավատարիմ զինակիցներով, և չեզոքացնելով հնարավոր ընդդիմադիրներին: Բաշար Ասադի վերջին նշանակումը Սիրիայի զինված ուժերի սպայակույտի գնդապետի պաշտոնն էր, իր հոր մահից առաջ և այնուհետև, վերջինը՝ նախքան Սիրիայի նախագահի պաշտոնը ստանձնելը:

Ծրագրեր կային, որ նա պետք է ստանձներ երկրի ազգային անվտանգության հարցերով փոխնախագահի պաշտոնը, որը թափուր էր 1998 թ. փետրվարից ի վեր՝ իր հորեղբայր Ռիֆաաթ Ասադի պաշտոնանկ արվելուց հետո: Սակայն այս պաշտոնին անցնելու համար, Բաշար Ասադը սկզբում պետք է տեղ զբաղեցներ Բաաս կուսակցության ղեկավարության մեջ: Նախատեսվում էր, որ այդ պետք է հաստատվեր Բաաս կուսակցության հերթական կոնգրեսում, որն անընդհատ հետաձգվում էր և այդպես էլ չկայացավ հետևյալ երկու պատճառներով: Նախ, Բաաս-ի կոնգրեսը պետք է հավանություն տար և հաստատեր Իսրայելի հետ խաղաղության դիմելու Սիրիայի ղեկավարության ծրագիրը, որն անհնար էր իրականացնել, քանի դեռ ներկայացված չէր որևէ միջնորդական առաջարկ, որի հիման վրա հնարավոր կլիներ հստակեցնել խաղաղությանը համաձայնվելու՝ Սիրիայի համար ընդունելի պայմանները: Երկրորդը՝ սիրիական վերնախավում Բաշար Ասադի հարցում բացակայում էր կարծիքների միասնականությունը, իսկ Ասադի գործելաոճի մեջ բացառվում էին շտապողականությունն ու չհասունացած որոշումներ ընդունելը:

Չնայած Հ.Ասադը հրապարակայնորեն նշում էր, որ ինքը «չի պատրաստում Բաշարին՝ իրեն փոխարինել»,[597] այնուամենայնիվ,

[596]2005թ. նա փախավ Սիրիայից և քաղաքական ապաստան խնդրեց Փարիզում՝ մեղադրելով Բաշարին Լիբանանի նախագահ Ռ.Հարիրիի սպանությունն իրականացնելու մեջ:

[597] Мир глазами президента Хафез Асада, с.211.



Սիրիայի առաջնորդի որդին ակտիվորեն պատրաստվում էր իր ապագա դերին: Այսպես, 1999թ. առաջին կիսամյակում նա մասնակցել է ինչպես պետական նշանակության, այնպես էլ մասնավոր բնույթի մի շարք կարևոր միջոցառումների: Այսպես, նույն թվականի փետրվարի 25-ին Բաշարն այցելեց Ամման՝ ցավակցելու թագաժառանգ Աբդուլլահին՝ թագավոր Հուսեյնի մահվան կապակցությամբ: Բաշարին ցույց տրվեց պետական ամենաբարձր մակարդակով արարողակարգային ընդունելություն: Հարկ է նշել նաև Բաշարի մասնակցությունը Ասադ-Խաթթամի /մայիս 9/, Ասադ-Աբդուլլահ /Սաուդների թագաժառանգ, /հունիս 3// փակ հանդիպումներին, ինչպես նաև իր անմիջական գործառույթների շրջանակում՝ հանդիպումներ Լիբանանի և լիբանանյան ընդդիմության ղեկավարության հետ:

Կարելի է փաստել, որ արդեն իսկ 1999թ. ընթացքում Բաշարը ակտիվորեն ընդգրկված էր արտաքին քաղաքականության իրականացման մեջ: Երկրում աշխատանքներ էին տարվում Բաշարի, որպես տնտեսական բարեփոխումների ջատագովի, դրական իմիջի ձևավորման ուղղությամբ, ինչը կարող էր ապահովել ինչպես ԵՄ երկրների[598], այնպես էլ խոշոր գործարարների աջակցությունը[599], որոնք անմիջական և փոխադարձ կապի մեջ էին երկրի վերնախավի հետ:

Հ.Ասադի մահից հետո Սիրիայի Սահմանադրության այն կետը, որի համաձայն երկրի նախագահ կարող է դառնալ 40 տարեկանը լրացած յուրաքանչյուր քաղաքացի, շտապ փոխվեց՝ հնարավորություն տալով 35-ամյա Բաշարին /ծնվ. 1965 թ./ զբաղեցնելու այդ պաշտոնը:

Բաշար Ասադի իշխանության առաջին տարիների վերաբերյալ արժեքավոր աշխատություն է Էյալ Զիսսերի հրատարակած գիրքը, ուր մանրամասնորեն և անաչառ կերպով անդրադարձ է կատարվում բարեփոխումների անհաջողությանը, Սիրիայի արտաքին քաղաքականությանը:[600] Սակայն քանի որ ժամանակագրական առումով մեր սույն աշխատությունը սահմանափակվում է 2000թվականով՝ Հ.Ասադի մահով, ապա ստորև կանդրադառնանք հակիրճ միայն որոշ կարևոր հարցերին:

Ներքին քաղաքական և տնտեսական բնագավառում նրա առջև ծառացած առաջնային բարդ խնդիրներից էր՝ տնտեսության ազատականացման ու ամրապնդմանն ուղղված քաղաքականությունը և

[598] Սիրիա-ԵՄ Ասոցիացման պայմանագրի կնքման համար ԵՄ-ն պնդում էր բարեփոխումներ անցկացնելու անհրաժեշտության վրա:

[599] Սիրիայի գործարարները թեև դանդաղ, բայց աստիճանաբար ավելի մեծ տեղ էին սկսել զբաղեցնել ինչպես երկրի խորհրդարանում, այնպես էլ հասարակական կյանքում: Նրանց կողմից բարեփոխումներ անցկացնելու անհրաժեշտության վերաբերյալ կոչերը սկսել էին մշտական բնույթ կրել:

[600]Zisser, Eyal. Commanding Syria. Bashar al-Asad and the First Years in Power. I.B.Tauris, London, 2007.

պետության կողմից տնտեսության խիստ վերահսկողության համատեղման հարցը: Որոշ սիրիագետներ անգամ սկսեցին խոսել Սիրիայում «չինական մոդելի» գործադրման մասին: 2000թ. դեկտեմբերին ԲԱԱՍ կուսակցության որոշմամբ թույլ տրվեց նաև մասնավոր բանկերի գործունեությունը, առաջարկվեց ստեղծել բաժնետոմսերի շուկա, քննարկել բանկային գաղտնիքի մասին օրենքը, ինչպես նաև հեշտացնել տարադրամի արտաքին գործարքների և փոխանցումների հետ կապված ընթացակարգը:

Բ.Ասադը որոշակի քայլերի դիմեց նաև քաղաքական ազատությունները երկրի ներսում ընդլայնելու ուղղությամբ: 2000թ. նոյեմբերին շուրջ 600 քաղբանտարկյալներ ազատ արձակվեցին սիրիական բանտերից: Բ. Ասադը հայտարարեց, որ ինքը կոմնակից է բազմաթեկնածուական ընտրությունների անցկացմանը իր պաշտոնավարման ժամկետի ավարտից հետո՝ 2007թվականին: Իշխանությունները ավելի հանդուրժողական կեցվածք են որդեգրել մարդու իրավունքների և ազատությունների ընդլայնման օգտին հանդես եկող նորաստեղծ Մարդու իրավունքների կոմիտեի գործունեության նկատմամբ: Բ.Ասադը առաջին անգամ վերջին 50 տարիներին՝ արտոնեց նաև ոչ պետական թերթի հրատարակումը: Վարչակազմի և ժողովրդի միջև գոյություն ունեցող անջրպետը հաղթահարելու և անձի պաշտամունքի հիմքի վրա ղեկավարման արատավոր պրակտիկային վերջ դնելու նպատակով, իշխանության առաջին իսկ օրերին Բաշարը փողոցներից և հրապարակային վայրերից հանել տվեց իր նկարներն ու այլ ցուցադրությունները: Նրա կարևոր նորամուծություններից էին նաև երկրում ինտերնետային կապի և շարժական հեռախոսների զանգվածային օգտագործման արտոնությունը:

Իր կառավարման վեց ամիսների ընթացքում Բ.Ասադը երկրի ներսում ձեռնարկեց յուրօրինակ «պերեստրոյկա», որը, սակայն, երկար չտևեց. բարեփոխումները խորացնելու և զարգացնելու, ժողովրդավարության սերմերը հասարակության մեջ աճեցնելու փոխարեն, Բ.Ասադը կասեցրեց քաղացիական և հասարակական բոլոր շարժումները, քննարկումների խմբերը, իսկ ժողովրդավարության կողմնակիցները ձերբակալվեցին: «Դամասկոսի գարունն» ավարտվեց:[601]

Բաշար Ասադը վերադարձավ նույն հիմնավորմանը, որը գրեթե տարիներ ի վեր շրջանառվում էր Սիրիայում՝ ԱՄՆ-ի և Իսրայելի հետ պատերազմի պայմաններում, այն է՝ երկրի ներսում անհնարին է թույլատրել անկայունության և անհնազանդության մթնոլորտի ձևավորում, որ պառակտում է ժողովրդի միասնությունը և խոչընդոտում

[601]Սիրիայում բարեփոխների անհաջող ավարտի պատճառների մասին, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների, քաղաքացիների մանրամասն վկայությունների, նրանց դիմումների ու նամակների տեքստերի հետ կարելի է ծանոթանալ. George, Alan. Syria: Neither Bread Nor Freedom. Zed Books, London, 2003.



պետական համակարգի աշխատանքները՝ թուլացնելով Սիրիայի դիրքերը ընդհանուր թշնամու դեմ պայքարում: Ռ.Հարիրիի սպանությունից հետո, միջազգային ուժեղ ճնշման ներքո Լիբանանից սիրիական ուժերի դուրսբերումից հետո, միջազգային մեկուսացման պայմաններում ամբողջապես կասեցվեցին ժողովրդավարական բարեփոխումները:

Միանգամայն տրամաբանական է, որ Իսրայելի հետ խաղաղության հաստատմանն ու Պաղեստինի հիմնախնդրի կարգավորմանը վերաբերող հարցերում Բաշարը շարունակեց իր հոր դիրքորոշումն ու քաղաքականությունը: *Ոչ մի նահանջ Իսրայելի հետ խաղաղության հաստատման հիմնական նախապայմանից՝ խաղաղության հաստատման հիմնական նախապայմանից՝ իսրայելական զորքերի դուրսբերում՝ մինչև 1967թ. հունիսի 4-ի սահմանները*: «Գոլանների վերադարձի հարցը գլխավորն է մեր ազգային առաջնայնությունների մեջ».- հայտարարեց Բ.Ասադը:

Իր հոր՝ Հ.Ասադի կառավարման վերջին տասնամյակի հետ համեմատած, տարբեր են Բաշարի դիրքն ու հեղինակությունը երկրի ներսում, տարբեր են նրա միջազգային կապերի աշխարհագրությունն ու խորությունը, տարբեր են ԱՄՆ-ի հետ նրա հարաբերությունների որակն ու մակարդակը:

Այսօր Բ.Ասադը հայտնվել է չտեսնված միջազգային ճնշման տակ, որն ուղղորդվում է ԱՄՆ-ի կողմից: Մռայլ են համագործակցության հեռանկարները եվրոպական երկրների՝ հատկապես Ֆրանսիայի հետ, որը Ռ.Հարիրիի սպանության և Լիբանանում ստեղծված ներքաղաքական քաոսային իրավիճակում մեղադրում է սիրիական վարչակազմին:

Իրան-Սիրիա-Համաս-Հեզբալլահ համագործակցությունը փաստարացրեց Դամասկոսի հարաբերությունները երկու առանցքային արաբական երկրների՝ Սաուդյան Արաբիայի և Եգիպտոսի հետ: Թեև Բ.Ասադը քայլեր ձեռնարկեց Սիրիայի տարածաշրջանային քաղաքականությունն ակտիվացնելու ուղղությամբ, իրաքյան և թուրքական ուղղություններով, այնուամենայնիվ նրան չհաջողվեց ճեղքել միջազգային մեկուսացումը:

Ինչքան էլ զարմանալի կարող է թվալ, այսօր Սիրիայի հետ խաղաղության հաստատման հարցում ամենաշատը շահագրգռված է Իսրայելը: Վերջինս, քաջ գիտակցելով Դամասկոսի ներքին և արտաքին խոցելի վիճակը, Պաղեստինյան տարածքներում Ֆաթհի և Համասի հակամարտության, «Իսրայելի գոյատևման համար» Իրանի միջուկային ծրագրի անմիջական վտանգի առկայության պայմաններում, ամենաշատն է ձգտում վերսկսել Սիրիայի հետ բանակցային գործընթացը: Սակայն ինչպես տարբեր առիթներով ինձ հայտնել են բարձրաստիճան իսրայելական դիվանագետները՝ Սիրիայի հետ շփումներին դեմ է Վաշինգտոնը: Վերջինս, հայտարարելով մինչև Ջ.Բուշի նախագահության ժամկետի ավարտը Պաղեստինի պետություն

ստեղծելու ուղղությամբ իր ծրագրերի մասին, չի ցանկանում սիրիա-իսրայելական համաձայնագրով վտանգի տակ դնել վերոհիշյալ գործընթացը: ԱՄՆ-ը նաև անհանգստանում է, որ սիրիա-իսրայելական ուղղակի շփումների արդյունքում իրադարձությունների վերահսկողությունը մերձավորարևելյան այդ կարևոր հատվածում դուրս կգա իր վերահսկողությունից: Հնարավոր են նաև այլ նկատառումներ: Համենայն դեպս, ոչ միայն վարչակազմի ահաբեկչական նկարագրի կամ մարդու իրավունքների ոտնահարման, կամ էլ Ռ.Հարիրիի սպանության և Իրանի հետ համագործակցության մեջ մեղադրանքների պատճառով: *Խաղաղության գինն այդ ամենից շատ բարձր է:* Հատկապես եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ ԱՄՆ-ի քաղաքական վերնախավում համամտություն չկա Սիրիայի նկատմամբ իրականացվող քաղաքականության վերաբերյալ: Միևնույն ժամանակ, ոչ ոք չի կասկածում, որ, Սիրիայի հետ խաղաղության հաստատումը անվտանգության լուրջ մթնոլորտ կստեղծի Իսրայելի համար և հնարավորություն կընձեռի Պաղեստինում իրավիճակը կայունացնելու համար:

Սակայն մինչև ԱՄՆ-ի քաղաքականությունը Սիրիայի հանդեպ չենթարկվի փոփոխության, խաղաղության հաստատումը Իսրայելի և Սիրիայի միջև չի կարող իրականանալ: Այն չի կորող իրականանալ Սիրիայի շարունակման ճնշման պայմաններում, հատկապես երբ Լիբանանից դուրս գալուց հետո Բաշարի համար սպառվեց փոխզիջումի և առանց սեփական իշխանությունը վտանգելու՝ Իսրայելի հետ խաղաղություն հաստատելու հնարավորությունը: Այդ պատճառով էլ նա էլ ավելի սաստկացրեց Սիրիայի հակաիսրայելական կեցվածքն ու հռետորական պաթոսը: Ավելի շատ, քան իր հայրը վերջին տարիներին, Բաշարը չափազանց հաճախ է անդրադառնում նաև պաղեստինցիների իրավունքների ապահովման անհրաժեշտությանը, հատկապես Պաղեստինի պետության ստեղծման, վերջինիս մայրաքաղաքը Երուսաղեմում հաստատելու և պաղեստինցի փախստականների վերադարձն ապահովելու հարցերին:

Դամասկոսի համար ստեղծված անբարենպաստ միջազգային մթնոլորտում, երկրի ներքաղաքական հնարավոր զարգացումները հաշվի առնելով Իսրայելի հետ խաղաղության հաստատման հարցը թերևս ամենավերջինն է, որին Բ. Ասադը կարող է դիմել: Արաբ-իսրայելական հակամարտության կարգավորման հարցում Դամասկոսի դիրքորոշումը փոփոխության չի կարող ենթարկվել: Ընդհակառակը՝ հակաիսրայելական և հակաարևմտյան տրամադրությունները ու համապատասխան քաղաքականության իրականացումը Բաշարի համար հավելյալ հզոր միջոց են ներքին ուժերը համախմբելու և իր իշխանությունն ամրապնդելու համար: Ինչքան Արևմուտքը «անկյունի մեջ» դնի Սիրիային, այնքան անզիջում և կոշտ կդառնա նրա



դիրքորոշումը արտաքին քաղաքական կարևորագույն այն հարցերում, որոնք այդքան շատ մտահոգում են ԱՄՆ-ին ու նրա դաշնակիցներին:

Մենք ականատես եղանք, թե ինչպես ԱՄՆ-ի կողմից Իրաք ներխուժումից, Լիբանանում Ռ.Հարիրիի սպանությունից և այնտեղից զորքերը դուրս բերելուց հետո՝ սիրիական վարչակազմի վրա ճնշումների սաստկացման ու միջազգային ասպարեզում երկրի խորացող մեկուսացման պայմաններում, Բաշարը ստիպված եղավ կասեցնել իր իշխանության սկզբում նախաձեռնած՝ տնտեսական և քաղաքական բարեփոխումները:

Ինչպիսիք էլ լինեն զարգացումների ընթացքն ու ուղղությունը, Սիրիան պահպանելու է Մերձավոր Արևելքում ուժերի հավասարակշռություն ու տարածաշրջանային կայունություն ապահովող հիմնական գործոնի իր դերակատարությունը: Իհարկե, այսօր դժվար է ակնկալել մեծածավալ պատերազմի բռնկում Սիրիայի և Իսրայելի միջև: Սակայն առանց Սիրիայի, անհնար է նաև կայունացնել իրավիճակը Լիբանանում և Պաղեստինում:

Դեռևս վաղ է Սիրիային մերձավորարևելյան խաղից դուրս գրելը: Այսօր Դամասկոսում է գտնվում մի շարք հարցերի կարգավորման բանալին: Սիրիային խաղաղության գործընթացից դուրս թողնելու և անտեսելու դեպքում մենք կունենանք տարածաշրջանում մշտական անկայուն իրավիճակ եթե ոչ պարբերաբար փոքրածավալ բախումներ՝ «տեղային պատերազմներ» Սիրիայի անուղղակի մասնակցությամբ:

Սիրիայում իշխանափոխությամբ, այդ երկրի վրա տնտեսական ու քաղաքական ճնշումներ իրականացնելով, Դամասկոսը խաղաղության գործընթացից մեկուսացնելով, անհնար է վերջ դնել իսրայելա-պաղեստինյան հակամարտությանը:

Կասկած չպետք է լինի, որ Սիրիայի վարած քաղաքականությունից ու Իսրայելի հետ նրա հարաբերությունների կարգավորումից է կախված լինելու *արաբ-իսրայելական հակամարտության վերջնական* կարգավորման հնարավորությունը:

# ՎԵՐՋԱԲԱՆ

21-րդ դարը սկսվեց սահմռկեցուցիչ ահաբեկչական գործողություններով, որոնք տեղի ունեցան 2001թ. սեպտեմբերի 11-ին՝ Նյու-Յորքում և Վաշինգտոնում: Դրանց ի պատասխան, ԱՄՆ-ը պատերազմ հայտարարեց ահաբեկչությանը, որը դուրս գալով ԱՄՆ-ի սահմաններից ընդգրկեց աշխարհի գրեթե բոլոր երկրները և առաջին հերթին Մերձավոր և Միջին Արևելքը:

Ահաբեկչության դեմ պատերազմը հանգեցրեց այնպիսի միջազգային կարևոր զարգացումների, որոնք կարող են ճակատագրական հետևանքներ ունենալ մարդկության պատմության ապագայի համար: Այն խարխլելով 2-րդ Համաշխարհային պատերազմից հետո ստեղծված միջազգային իրավակարգի հիմքերը, քաղաքական, տնտեսական, բարոյահոգեբանական ծանր հետևանքներ թողեց առաջին հերթին մահմեդական ու մասնավորապես՝ արաբական աշխարհի վրա:

«Միջազգային ահաբեկչությունը հովանավորող»՝ «Ալ-Կաիդայի» դեմ պայքարը, որը սկսվեց Աֆղանստանից արաբների մեծամասնության կողմից ընկալվեց որպես պայքար իսլամի դեմ: ԱՄՆ-ի վարչակազմի կողմից իսլամի և ահաբեկչության նույնացման անթույլատրելիության վերաբերյալ հրապարակայնորեն բազմիցս հնչեցրած հայտարարարությունները չկարողացան մեղմել արաբական և ողջ մահմեդական աշխարհի անհանգստությունը:

Սակայն երբ ԱՄՆ-ի պատերազմը Աֆղանստանից տեղափոխվեց Իրաք՝ Սադդամ Հուսեյնի վարչակարգը տապալելու նպատակով՝ արաբներն այլևս այդ պատերազմը սկսեցին համարել պատերազմ արաբական աշխարհի դեմ: Իրաքը հանդիսանում է արաբական հայրենիքի՝ «ումմայի» մասը, պատերազմի ընթացքում Իրաքի ժողովրդի տառապանքներն ու զոհերը չէին կարող արդարացվել «արաբական փողոցի» կողմից: Հիմնականում միապետության և ամբողջատիրական վարչակարգերի պայմաններում ապրող հասարակ ժողովրդի համար Իրաքի առաջնորդը իր բոլոր բացասական հատկանիշներով և կատարած հանցագործություններով հանդերձ, «իրենցից մեկն էր»:Այդ պատճառով էլ անգամ Ս.Հուսեյնի դատավարությունն ու հրապարակային մահապատիժը ոչ թե արդարության զգացմունքներ արթնացրեցին արաբների մեջ, այլ նվաստացում և հետևաբար, ատելություն ԱՄՆ-ի նկատմամբ: Իսկ ՝գերտերության կողմից վարչակարգի տապալումն ու սեփական իշխանության պարտադրումը՝ գաղութային երկարատև պատմություն անցած արաբական երկրների համար համարվեց վերադարձ դեպի հին ժամանակները: ԱՄՆ-ը վերածվեց ամենամեծ և միակ գաղութատեր պետության 21-րդ դարում:



Ահաբեկչությունն արմատախիլ անելու, ահաբեկչությունը սնուցող և աջակցող պատճառները վերացնելու փոխարեն իրաքյան պատերազմը խախտեց տարածաշրջանում ուժերի հավասարակշռությունն ու Մերձավոր Արևելքում ռազմաքաղաքական նոր իրավիճակ ստեղծեց:

ԱՄՆ-ի կողմից «պատժիչ» այդ պատերազմը ոչ միայն անվտանգ չդարձրեց տարածաշրջանն ու աշխարհը, այլ հանգեցրեց արաբական աշխարհի մասնատմանն ու թուլացմանը: ԱՄՆ-ը ոչինչ չշահեց այդ պատերազմից: Դեռ ավելին՝ վերջնականապես զրկվեց տարածաշրջանում իրադարձությունները վերահսկելու ու զարգացումների վրա ազդելու հնարավորությունից:

Վերոհիշյալի մասին է վկայում այսօր տարածաշրջանում ստեղծված իրավիճակը՝ Պաղեստինի մասնատումը «Ֆաթհի» և «Համասի» միջև, Իրաքի բաժանման հեռանկարը, Լիբանանում անկայուն իրավիճակը, թուրքական ներխուժումը Իրաքի Քուրդիստան: Ի դեպ վերջինս սպառնում է Վաշինգտոնին զրկել տարածաշրջանում իր նկատմամբ դրականորեն տրամադրված միակ ժողովրդից՝ քրդերից: Թուրք-քրդական առճակատումը տարածաշրջանում վերածվելու ապակայունացման ու մշտական բախման աղբյուրի:

Հեռանկարում Մերձավոր Արևելքի և միջազգային կայունության համար ամենալուրջ վտանգներից մեկը կարող է դառնալ Իրաքի սահմաններից դուրս եկող շիա և սուննի մահմեդականների միջև հակամարտության ծավալումը:

Տարածաշրջանում աստիճանաբար առաջնային դերակատարություն է ստանձնում Իրանը՝ Իրաքի շիաների, լիբանանյան «Հեզբալլահի» և Պաղեստինում՝ «Համասի» միջոցով: Իրանի այդ նոր դերակատարությունը անհանգստացնում է ոչ միայն Իսրայելին և ԱՄՆ-ին, այլ նաև արաբական աշխարհին՝ մասնավորապես Եգիպտոսին ու Պարսից Ծոցի երկրներին:

Հասկանալի է նաև Իրանի միջուկային ծրագրի նկատմամբ միջազգային հանրության ծայրահեղ անհանգստությունը: Իրանի կողմից միջուկային զենքի ձեռքբերումը անխուսափելի է դարձնելու տարածաշրջանի հետագա միջուկայնացումը: Արդեն իսկ միջուկային էներգիայի «խաղաղ նպատակների» օգտագործման վերաբերյալ իրենց մտադրությունների մասին են հայտնել մի շարք արաբական երկրներ՝ Եգիպտոսը, Հորդանանը, Մարոկկոն և այլն: Ի դեպ, Իրանը նույնպես շեշտում է այն հանգամանքը, որ նպատակ չունի միջուկային զենքի համար անհրաժեշտ ուրանի հարստացում իրականացնել: Թե ինչպես Վաշինգտոնը կպայքարի այդ հարցում Իրանի դեմ՝ ցույց կտա ժամանակը, որն արդեն իսկ խաղում է Թեհրանի օգտին:

Հուսանք, որ Իրաքում և Աֆղանստանում կրած ձախողումից հետո, ԱՄՆ-ը ձեռնպահ կմնա Իրանի դեմ ուղղակի ռազմական գործողություններ իրականացնելուց: Չէ՞ որ զինված միջամտության

հետևանքով՝ բալիբներից և Սադդամ Հուսեյնից «ազատվելով», աշխարհն այդպես էլ «ավելի անվտանգ» չդարձավ՝ չնայած ԱՄՆ-ի նախագահ Ջ.Բուշի տված խոստումներին:

Անհրաժեշտ է, որ միջուկային ու ձևավորվող միջազգային բազմաբևեռ աշխարհի բոլոր երկրները միասնաբար միջազգային ակտիվ արշավ ձեռնարկեն հանուն «միջուկային զենքից ազատ Մերձավոր Արևելքի»:

Եվ այս հարցում չափազանց կարևոր է Իսրայելի, որպես տարածաշրջանի միակ միջուկային զենք ունեցող պետության կողմից համապատասխան քաղաքական կամքի դրսևորումը: Դժվար է պատկերացնել, թե ինչպիսի հետևանքներ կարող է ունենալ տարածաշրջանի երկրների կողմից միջուկային զենքի հաջորդաբար ձեռքբերումը: Այն որևէ կերպ չի կարող «զսպող» ազդեցություն ունենալ կողմերի համար, ինչը տեղի ունեցավ սառը պատերազմի տարիներին, որի շնորհիվ էլ մեծապես հնարավոր եղավ պաշտպանել խաղաղությունն ու կայունությունը աշխարհում:

Ատելության և թշնամության կրիտիկական զանգված կուտակած, ահաբեկիչ-մահապարտներ ծնող միջուկային Մերձավոր Արևելքը կարող է կանգնեցնել մեզ երրորդ և թերևս մարդկության պատմության վերջին պատերազմի հեռանկարի առջև:

Պատմական զարգացումների նման ընթացքը կասեցնելու պատասխանատվություն են կրում նաև Իսրայելն ու Սիրիան:

Նրանք երկուստեք և ամենայն լրջությամբ գիտակցում են Մերձավոր Արևելքում անվտանգության իրավիճակի վատթարացման ողջ հետևանքները և այն ազդեցությունը, որ կարող են ունենալ երկու պետությունների վրա տարածաշրջանի ծայրահեղական ուժերի անսահմանափակ գործողությունները:

Այսօր Իսրայելը պատրաստ է վերադարձնել Գոլանները Սիրիային, իսկ Սիրիան, իր հերթին, հասկանում է, որ Իրանի հետ իր հարաբերությունները ունեն անխուսափելի սահմանափակումներ: Սիրիայի ապագա տնտեսական բարգավաճումը կախված է Իսրայելի հետ խաղաղության հաստատումից և ԱՄՆ-ի հետ հարաբերությունների նորմալացումից:

Իսկ Սիրիայի հանդեպ ԱՄՆ-ի և Իսրայելի վարած քաղաքականությունն էլ իր հերթին մեծապես պայմանավորելու և կախման մեջ է պահելու Դամասկոսի արտաքին ու ներքին քաղաքականությունը:

Դժբախտաբար, Բուշի վարչակազմը անկարող գտնվեց տեսնելու Սիրիայի և Իսրայելի միջև խաղաղության հաստատման հրամայականը և դրա հետևանքները ողջ տարածաշրջանի համար: ԱՄՆ-ի ներկայիս վարչակազմը ընդհակառակը՝ ամեն ինչ արեց, որպեսզի մեկուսացնի Սիրիային և չթուլլատրի Իսրայելին՝ հետապնդելու միակ



տրամաբանական ուղեգիծը՝ խաղաղության բանակցությունների վերսկսումը Սիրիայի հետ:

Եթե ԱՄՆ-ը իրականում ցանկանում է տարածաշրջանում Իրանի, «Համասի» և «Հեզբալլահի» դիրքերի թուլացումը, ապա պետք է հովանավորի և ապահովի Սիրիայի և Իսրայելի միջև խաղաղության հաստատումը: ԱՄՆ-ի հաջորդ նախագահը պետք է անհապաղ իր աջակցությունը հայտնի և գործնական քայլեր ձեռնարկի սիրիա-իսրայելական պատմական խաղաղության համաձայնագրի ստորագրման ուղղությամբ:

*Խաղաղության գործընթացը տարածաշրջանում առաջին հերթին պետք է սկսել Սիրիայից, որից հետո միայն կստեղծվեն համապատասխան պայմաններ Պաղեստինի հարցը կարգավորելու համար: Միմիայն սիրիա-իսրայելական խաղաղության համաձայնագրի ստորագրմամբ, զրկելով Իրանին արաբական աշխարհի ներքին գործերին Սիրիայի միջոցով միջամտելու հնարավորությունից, հնարավոր կլինի հասնել Պաղեստինի հիմնախնդրի արդար կարգավորմանն ու Մերձավոր Արևելքում տևական խաղաղության հաստատմանը, այլ ոչ թե հակառակը՝ իսրայելա-պաղեստինյան համաձայնության արդյունքում Պաղեստինի «պետության» ստեղծումով՝ այլընտրանք չթողել Սիրիային և պարտադրել նրան համաձայնության գալ Իսրայելի հետ վերջինիս հարմար պայմաններով:*

## ԲԱԼՖՈՒՐԻ ՀՌՉԱԿԱԳԻՐԸ[602]

*1917թ. նոյեմբերի 2*

Հարգելի լորդ Ռոթշիլդ

Ես մեծ հաճույքով փոխանցում եմ Ձեզ Հրեական սիոնիստական ձգտումների նկատմամբ Նորին մեծության համակրանքի կառավարության հետևյալ հռչակագիրը, որը ներկայացվել և հավանության է արժանացել կառավարության կողմից.

«Նորին մեծության կառավարությունը բարյացակամ է դիտարկում Պաղեստինում հրեա ժողովրդի համար «ազգային տան» (national home) ստեղծման գաղափարը և ամեն ջանք կգործադրի այդ նպատակի իրականացումը խթանելու համար: Այստեղից պետք է հստակ գիտակցվի, որ ոչ մի քայլ չի ձեռնարկվի, որը կարող է վնաս հասցնել Պաղեստինի ոչ հրեական համայնքների քաղաքական ու կրոնական իրավունքներին կամ այլ երկրներում բնակվող հրեաների իրավունքներին և նրանց քաղաքական կարգավիճակին»:

Ես երախտապարտ կլինեմ, եթե Դուք այս հռչակագիրը փոխանցեք Սիոնիստական Դաշնությանը (Zionist Federation):

Հարգանքներով՝

ԱՐԹՈՒՐ ՋԵՅՄՍ ԲԱԼՖՈՒՐ
Մեծ Բրիտանիայի արտգործնախարար

[602] http://www.yale.edu/lawweb/avalon/mideast/balfour.htm





## ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՄԱՆԴԱՏԸ (քաղվածք)[603]

*1922թ. հուլիսի 24*

Ազգերի լիգայի խորհուրդը,

Դաշնակից հիմնական տերությունների միջև ձեռքբերված պայմանավորվածության համաձայն, Ազգերի լիգայի կանոնադրության 22-րդ հոդվածի գործառույթները կյանքի կոչելու նպատակով, *որոշում է* նշված ուժերի կողմից ընտրած մանդատակիր պետությանը հանձնել Պաղեստինի տարածքի կառավարումը, որը նախկինում պատկանում էր Թուրքական կայսրությանը, այն սահմաններում, որոնք կհաստատվեն նրանց կողմից,

քանի որ հիմնական դաշնակից ուժերը նույնպես համաձայնվել են, որ մանդատակիր պետությունը պետք է պատասխանատու լինի 1917թ. նոյեմբերի 21-ի Նորին բրիտանական մեծության[604] կառավարության հայտնի հռչակագրի գործադրման համար, որն ընդունվել էր նշված տերությունների կողմից՝ Պաղեստինում հրեա ժողովրդի համար ազգային տան հիմնումը խթանելու նպատակով, այստեղից, պետք է հստակ գիտակցվի, որ ոչ մի քայլ չի ձեռնարկվի, որը կարող է վնաս հասցնել Պաղեստինի ոչ հրեական համայնքների քաղաքական ու կրոնական իրավունքներին, կամ այլ երկրներում բնակվող հրեաների իրավունքներին և նրանց քաղաքացիական կարգավիճակին,

քանի որ արդեն իսկ ճանաչվել են հրեա ժողովրդի պատմական կապը Պաղեստինի հետ, ինչպես նաև այնտեղ նրանց ազգային տուն ստեղծելու հիմնավորումները,

քանի որ դաշնակից հիմնական տերությունները ընտրել են Նորին Բրիտանական Մեծությունը, որպես Պաղեստինի մանդատակիր պետություն;

քանի որ Պաղեստինի հետ կապված մանդատը ձևակերպվել է հետևյալ պայմաններով և ներկայացվել է Լիգայի խորհրդի հաստատմանը, վերջինս վերահաստատելով նշված մանդատը, սահմանում է հետևյալ պայմանները.

Հոդված 1

[603] Gresh, Alain & Vidal, Dominique. A to Z of the Middle East. Zed Books, London, 1990, pp.226-228
[604] His Britannic Majesty.

Մանդատը պետք է ունենա օրենսդրական և վարչական լիակատար ուժ, եթե այն չի սահմանափակվում մանդատի պայմաններով:

Հոդված 2

Մանդատակիրը պետք է պատասխանատու լինի երկիրը այնպիսի քաղաքական, վարչական և տնտեսական պայմանների մեջ դնելու համար, որոնք կապահովեն հրեական ազգային տան ստեղծումը, ինչպես նշված է նախաբանում, և ինքնակառավարվող ինստիտուտների զարգացումը, ինչպես նաև կպահպանեն Պաղեստինի բոլոր բնակիչների քաղաքացիական և կրոնական իրավունքները՝ առանց որևէ խտրականության:

Հոդված 3

Մանդատը, եթե պայմանները թույլատրեն, պետք է խթանի տեղական ինքնավարությունը:

Հոդված 4

Հրեական գործակալությունը պետք է ճանաչվի որպես հանրային մարմին, որը կխորհրդակցի և կհամագործակցի Պաղեստինի վարչակազմի հետ՝ տնտեսական և սոցիալական հարցերի շուրջ, որոնք կարող են ազդել Հրեական ազգային տան ստեղծման ու Պաղեստինում հրեական բնակչության վրա, և որոնք մշտապես վարչակազմի վերահսկողության տակ կգտնվեն՝ երկրի զարգացմանը մասնակցելու և օժանդակելու նպատակով:

Սիոնիստական կազմակերպությունը, որի կառուցվածքն ու կանոնադրությունը ընդունելի կհամարվեն մանդատակիր պետության կողմից, պետք է ճանաչվի որպես այդպիսի գործակալություն:

Նորին բրիտանական մեծության կառավարության հետ խորհրդակցելով, այն պետք է քայլեր ձեռնարկի ապահովելու համագործակցությունը այն բոլոր հրեաների հետ, որոնք կցանկանան աջակցել Հրեական ազգային տան ստեղծմանը:



*Հավելված 3*

«ՍՊԻՏԱԿ ԹՈՒՂԹ» [605]

*1939թ. մայիս*

1938թ. նոյեմբերի 9-ի Պաղեստինի վերաբերյալ հայտարարությունում Նորին մեծության կառավարությունը հայտնում է իր մտադրությունը՝ Պաղեստինի արաբների, հարևան որոշ երկրների ու Հրեական գործակալության ներկայացուցիչներին Լոնդոն հրավիրելու և նրանց հետ խորհրդակցելու ապագայի քաղաքականության վերաբերյալ: Դա նրանց հույսն է, որ ազատ, անկեղծ և ամբողջական քննարկումների շնորհիվ կհասնեն ճշմարիտ փոխըմբռնման: Վերջերս տեղի ունեցան երկարատև համաժողովներ արաբական և հրեական պատվիրակությունների միջև, որոնց ընթացքում կարծիքներ փոխանակվեցին և պարզաբանումներ տրվեցին Բրիտանական նախարարներին: Պաղեստինում ստեղծված իրադրության վերաբերյալ որոշ առաջարկներ ձևավորվեցին Թագավորական և միջնորդ կողմերի կառավարությունների կողմից և դրվեցին արաբական ու հրեական պատվիրակությունների առջև, որպես համաձայնության հիմք: Ոչ հրեական և ոչ էլ արաբական պատվիրակությունները ի վիճակի չէին ընդունելու ներկայացված առաջարկները: Այդ պատճառով էլ նշված համաժողովները անարդյունք ավարտվեցին: Ուստի և կառավարությունները իրավունք վերապահեցին ձևավորել իրենց սեփական քաղաքականությունը և որոշ քննարկումներից հետո նրանք որոշեցին հավատարիմ մնալ ընդհանուր առաջարկներին, որոնք վերջնականապես ներկայացվել էին արաբական և հրեական պատվիրակների քննարկմանը:

1922թ. Ազգերի լիգայի խորհուրդը հաստատեց Պաղեստինի մանդատի դրույթները, որոնցով ղեկավարվում էր Բրիտանական կառավարությունը վերջին 20 տարիների ընթացքում: Այն ներառում է Բալֆուրի հռչակագիրը և սահմանում է մանդատով կառավարվող պետության չորս գլխավոր պարտավորություններ: Այս պարտավորությունները մանրամասն բացատրված են մանդատի 2-6-13 հոդվածներում:

Չկա ոչ մի վիճելի հարց այն պարտավորությունների մեկնաբանման մեջ, որոնք վերաբերում են սրբավայրերի, կրոնական որևէ շենքի կամ

[605] http://www.yale.edu/lawweb/avalon/mideast/brwh1939.htm

տարածքի պահպանմանն ու մուտք գործելուն: Մյուս երեք հիմնական պարտավորությունները հետևյալն են՝

Երկրում ստեղծել քաղաքական, վարչական, տնտեսական այնպիսի պայմաններ, որոնք կապահովեն Պաղեստինում հրեա ժողովրդի համար ազգային տան ստեղծումը: Հրեական գործակալության հետ համագործակցությամբ ստեղծել նաև հարմար պայմաններ հրեա ներգաղթյալների համար և ապահովել հրեաների տեղավորումը այդ երկրում:

Երաշխավորել Պաղեստինի բնակիչների քաղաքական և կրոնական իրավունքները՝ անկախ ազգությունից և կրոնից, հեշտացնել հրեաների ներգաղթը և բնակեցումը, միաժամանակ ապահովել այնպիսի պայմաններ բնակչության մյուս հատվածի համար, որ պաշտպանված լինեն նրանց իրավունքներն ու դիրքը:

Երկիրը դնել այնպիսի քաղաքական, վարչական, տնտեսական պայմանների մեջ, որոնք կապահովեն ինքնակառավարման մարմինների զարգացումը:

Թագավորական և տեղեկատվության նախկին կոմիտեները ուշադրություն են հրավիրել Մանդատի որոշ արտահայտությունների վրա՝ օրինակ, «ազգային տուն»: Նրանք գտել են, որ արաբների և հրեաների միջև անհանգստության և բշնամական հարաբերությունների առաջացման հիմնական պատճառը այս արտահայտության սխալ մեկնաբանությունն ու դրանից բխող անորոշությունն է: Նորին մեծության կառավարությունը համոզված է, որ քաղաքականության և նպատակների հստակ սահմանումը կենսական նշանակություն ունի Պաղեստինի ողջ ժողովրդի խաղաղ և բարգավաճ ապրելու համար: Թագավորական կոմիտեի կողմից արված առաջարկը տվել է այդպիսի հստակություն, սակայն Պաղեստինի տարածքում հրեական և արաբական պետությունների ստեղծումը գործնական չի կարող համարվել: Այդ պատճառով էլ անհրաժեշտ է նկատել, որպեսզի Նորին մեծության կառավարությունը մշակի այլընտրանքային քաղաքականություն, որը համատեղելի լինի թե՛ արաբների և թե՛ հրեաների պարտավորությունների իրականացման հետ և միաժամանակ, Պաղեստինում իրադրության կարգավորմանը նպաստի: Այդ տեսակետներն ու առաջարկները բերվում են ստորև ներկայացվող երեք մասերում՝

Մաս 1 - «Սահմանադրություն»
Մաս 2 - «Ներգաղթ»
Մաս 3 - «Հող» (Երկիր)

## Մաս 1 Սահմանադրություն

Առաջ է քաշվել այն միտքը, որ հրեաների «ազգային տուն» արտահայտությունը նախանշում է այնպիսի հեռանկար, որի շնորհիվ Պաղեստինը



կդառնա հրեական նահանգ կամ պետություն: Նորին մեծության կառավարությունը համաձայն չէ մեկնաբանության հետ, և այդ հստակ արտահայտել է դեռևս Թագավորական կոմիտեի կողմից ներկայացված 1922թ. զեկույցում: Նորին մեծության կառավարությունը հաստատում է, որ Բալֆուրի հռչակագիրը բնավ նկատի չի առնում, որ Պաղեստինը պետք է դառնա հրեական պետություն՝ երկրի արաբ բնակչության կամքին հակառակ: 1922թ. փաստաթղթում ակնարկված է. Պաղեստինը «չպետք է վերածվի ամբողջովին հրեական պետության»:

Սակայն հռչակագրում արտահայտված միտքը մեկնաբանվել է հետևյալ կերպ. «Պաղեստինը պետք է դառնա հրեական, ինչպես Անգլիան է անգլիական»: Նորին մեծության կառավարությունը կարծում է, որ որևէ այդպիսի հույս գործնական չէ և նպատակին չի ծառայում: Նրանք երբևէ չեն խորհել արաբական բնակչությանը հրեաների ենթակայության տակ դնելու և կամ Պաղեստինի լեզուն ու մշակույթը վերացնելու մասին: Նրանք պետք է ուշադրություն դարձնեն այն փաստին, որ Բալֆուրի հռչակագրի դրույթները չեն ենթադրում, որ Պաղեստինը պետք է դառնա հրեական «ազգային տուն», այլ այն, որ այդպիսի տուն պետք է հիմնադրվի Պաղեստինում: Սակայն այս արտահայտությունը չպետք է կասկածներ հարուցի, այդ իսկ պատճառով էլ Նորին մեծության կառավարությունը աներկբա հայտարարում է, որ իր հետապնդած նպատակների մեջ չի մտնում Պաղեստինի վերածումը հրեական պետության: Նրանք պետք է հաշվի առնեն այն հանգամանքը, որ Նորին մեծության կառավարությունը չի կարող հակառակվել մանդատի դրույթներին, արաբների հանդեպ իր ունեցած պարտականություններին, ինչպես նաև այն հավաստիացումներին, որոնք տրվել էին արաբ ժողովրդին անցյալում, այն մասին, որ արաբ բնակչությունը երբեք իր կամքին հակառակ չի կարող դառնալ հրեական պետության մաս:

Պաղեստինում հրեական ազգային տան էությունը տրված է 1922թ. հիմնական փաստաթղթում.

«Հրեաների 2-3 սերունդներին հաջողվեց Պաղեստինում ձևավորել համայնք, որն այժմ կազմում է 80.000 մարդ, որի մեկ չորրորդը հողագործներ են կամ հողի մշակներ: Այս համայնքն ունի իր քաղաքական մարմինները, ընտրովի ազգային ժողով՝ տեղական հարցեր լուծելու համար, քաղաքներում ընտրական խորհուրդներ, ներքին խնդիրները կարգավորող ընտրովի ասամբլեա, և մի կազմակերպություն էլ համայնքային դպրոցները վերահսկելու համար: Ընտրված է Գլխավոր ռաբբիությունը կամ Ռաբբիական խորհուրդ՝ կրոնական գործերի իրավասությամբ, որի գրագրությունը կատարվում է եբրայերենով, որպես մայրենի լեզու և եբրայերեն մամուլն էլ ծառայում է նրա կարիքներին: Այն ունի իր առանձնահատուկ մտավոր կյանքը և ցուցաբերում է զգալի ակտիվություն: Այս համայնքը իր քաղաքի և գյուղի բնակչությամբ, իր քաղաքական, կրոնական և սոցիալական կազմակերպություններով, իր մայրենի լեզվով, իր սեփական սովորույթներով ունի փաստորեն ազգային դեմք: Երբ հարց տրվի,

թե ի՞նչ ի նկատի ունենք՝ խոսելով Պաղեստինում հրեական «ազգային տան» զարգացման մասին, կարելի է պատասխանել, որ ընդհանուր առմամբ դա հրեա ազգի հակադրումը չէ Պաղեստինի բնակչությանը, այլ գոյություն ունեցող հրեական համայնքի հետագա զարգացումը (աշխարհի այլ մասերի) հրեական համայնքի օժանդակությամբ, այնպես որ այն դառնա կենտրոն, ուր կապահովվի հրեական ազգության, նրա կրոնի, հետաքրքրությունների, հրեա ժողովրդի զարգացումը: Բայց պետք է նկատի առնվի, որ հրեական համայնքի ամենալավ հեռանկարի ստեղծման և ազատ զարգացման համար անհրաժեշտ է հասնել հրեա ժողովրդի հնարավորությունների լիակատար օգտագործմանը խաղաղ միջոցներով և ոչ թե տառապանքով: Ահա թե ինչու է անհրաժեշտ հրեական «ազգային տան» գոյությունը երաշխավորել միջազգայնորեն և պետք է նաև ձևականորեն ճանաչվի՝ վաղնջական պատմական կապերի վրա հիմնվելով:

Նորին մեծության կառավարությունը հավատարիմ է 1917թ. Բալֆուրի հռչակագրի այս մեկնաբանմանը և «Պաղեստինում հրեական ազգային տան» նման բնորոշմանը:

Վերջինս նախատեսում էր նաև աշխարհի մյուս մասերում ապրող հրեաների օգնությամբ հրեա համայնքի հետագա զարգացումը Պաղեստինում:

Այն, որ Նորին մեծության Կառավարությունը կատարել է իր պարտականությունները, ապացուցում է հենց միայն այն փաստը, որ 1922թ. հայտարարության հրապարակումից ի վեր 300.000 հրեա է ներգաղթել Պաղեստին և ազգային տան բնակչությունը դարձել է 450.000, կազմելով երկրի բնակչության մեկ երրորդը: Հրեական համայնքն էլ լիովին օգտագործել է ընձեռված հնարավորությունը: Հրեական ազգային տան աճը և նրա ձեռքբերումները բազմաթիվ բնագավառներում հրաշալի դրական հանգամանք է, որը պետք է ուրախացնի ողջ աշխարհին և հպարտության աղբյուր հանդիսանա հրեա ժողովրդի համար:

Վերջին քննարկումների ժամանակ արաբ պատվիրակությունները շեշտել են այն հանգամանքը, որ Պաղեստինը ընդգրկված է այն տարածքի մեջ, ուր Հենրի Մաք Մահոնը անգլիական կառավարության կողմից 1915թ. հոկտեմբերին պարտավորվել էր ճանաչել և օժանդակել արաբական անկախությանը: Նման պնդումները հիմնված են Հենրի Մաք Մահոնի և Մեքքայի շերիֆի միջև տեղի ունեցած նամակագրության վրա, որոնք էլ մանրամասնորեն հետազոտվեցին բրիտանական և արաբական ներկայացուցիչների կողմից՝ Լոնդոնում կայացած վերջին խորհրդաժողովների ժամանակ:

Նրանց կողմից հրապարակված զեկուցագրի համաձայն, բրիտանական ներկայացուցիչները շատ ջանք թափեցին մյուս կողմի տեսակետը հասկանալու համար, սակայն նրանք ի վիճակի չէին համաձայնության գալ հարցի նման մեկնաբանման հետ: Այստեղ կարիք չկա ի մի բերելու այն տարաձայնությունները, որոնք ներկայացված են երկու



կողմից: Նորին մեծության կառավարությունը ափսոսում է որոշ արտահայտությունների սխալ ընկալման համար: Իրենք կարող են միայն հետևել զեկուցագրի մեջ իրենց ներկայացուցիչների կողմից արված հիմնավորումներին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պաղեստինի ողջ տարածքը Հորդանանից արևմուտք չէր երաշխավորվել Հենրի Մաք Մահոնի կողմից և, որ իրենք այդ պատճառով էլ չեն կարող համաձայնվել այն բանի հետ, որ Մաք Մահոնի նամակագրությունը արդարացի հիմք է Պաղեստինը արաբական պետության վերածելու համար:

Նորին մեծության կառավարությունը որպես մանդատակիր իշխանություն, պարտավորված է «ապահովել ինքնակառավարման մարմինների զարգացումը» Պաղեստինում: Այս հատուկ պարտավորությունից բացի, նրանք կարող են դա համարել Մանդատային համակարգի ոգուն անհարիր, եթե Պաղեստինի բնակչությունը շարունակի ընդմիշտ մնալ Մանդատային վերահսկողության տակ: Եվ միանգամայն հստակ է, որ երկրի բնակչությունը պետք է հնարավորին չափ արագ ստանա ինքնակառավարման իրավունք, այնպես, ինչպես հարևան երկրների բնակչությունը: Դրանից բացի, Նորին մեծության կառավարությունը ներկայումս ի վիճակի չէ կանխատեսելու ճշգրիտ սահմանադրական ձևերը, որոնք վերջին հաշվով կընդունի կառավարությունը Պաղեստինում, սակայն նրա նպատակն է՝ ինքնակառավարման հաստատումը, իսկ ցանկությունը՝ վերջնականապես հասնել անկախ Պաղեստինի պետության ստեղծմանը: Դա պետք է լինի այնպիսի պետություն, որտեղ Պաղեստինի երկու ժողովուրդները՝ արաբներն ու հրեաները կկիսեն կառավարությունում իշխանությունը այնպես, որ ապահովված լինեն յուրաքանչյուր կողմի հիմնական շահերը:

Անկախ պետության ստեղծումն ու մանդատային վերահսկողության վերացումը Պաղեստինում, կպահանջի այնպիսի հարաբերությունների հաստատում արաբների և հրեաների միջև, որը հնարավոր կդարձնի լիարժեք կառավարության ձևավորումը: Դեռ ավելին, ինքնակառավարման կառույցների աճը Պաղեստինում, ինչպես այլ երկրներում, պետք է ընթանա աստիճանաբար: Նախքան անկախության ձեռքբերումը՝ կպահանջվի անցումային ժամանակաշրջան, որի ընթացքում երկրի կառավարման համար հիմնական պատասխանատվությունը կկրի Նորին մեծության կառավարությունը, որպես մանդատային իշխանություն, մինչ երկրի բնակչությունը կունենա աստիճանաբար աճող մասնակցություն կառավարությունում, ինչպես նաև միմյանց հետ համագործակցություն և փոխադարձ հասկացողություն: Նորին մեծության Կառավարությունը մշտապես կխթանի լավ հարաբերությունների հաստատումը Հրեաների և Արաբների միջև:

Այս եզրակացությունների լույսի ներքո, Նորին մեծության կառավարությունը հայտնում է իր հետևյալ մտադրությունները Պաղեստինի ապագա կառավարության վերաբերյալ.

Նորին մեծության կառավարության նպատակն է 10 տարվա ընթացքում ստեղծել Պաղեստինի անկախ պետություն, պայմանագրային այնպիսի հարաբերություններով Միացյալ Թագավորության հետ, որոնք ապագայում կբավարարեն երկու երկրների առևտրական և ռազմավարական պահանջները: Անկախ պետության հաստատման առաջարկը կներառի խորհրդակցություններ Ազգերի Լիգայի խորհրդի հետ Մանդատի՝ ավարտի վերաբերյալ:

Անկախ պետությունը պետք է լինի այնպիսին, ուր արաբները և հրեաները կկիսեն կառավարությունը այնպես, որ ապահովվեն յուրաքանչյուր համայնքի կենսական հետաքրքրությունները:

Անկախ պետության ստեղծմանը կնախորդի անցումային ժամանակաշրջան, որի ընթացքում Նորին մեծության կառավարությունը կշարունակի կրել ողջ պատասխանատվությունը երկրի համար: Անցումային ժամանակաշրջանում Պաղեստինի ժողովրդին աստիճանաբար էլ ավելի մեծ տեղ կհատկացվի երկրի կառավարման գործում: Բնակչության երկու հատվածներին էլ կտրվի կառավարմանը մասնակցելու հնարավորություն և այս գործընթացը կշարունակվի՝ չնայելով այն հանգամանքին, թե կողմերը ինչպես կօգտագործեն իրենց ընձեռված հնարավորությունները:

Պաղեստինում խաղաղության և կարգ ու կանոնի հաստատումից անմիջապես հետո, քայլեր կձեռնարկվեն իր երկրի կառավարման մեջ պաղեստինյան ժողովրդի դերի բարձրացման, ինչպես նաև կառավարության բոլոր ենթակառույցների ղեկավարումը պաղեստինցիներին հանձնելու ուղղությամբ, բնականաբար, բրիտանական խորհրդատուների օժանդակությամբ և Բարձրագույն հանձնակատարի անմիջական վերահսկողության տակ: Հնարավորության դեպքում ենթակառույցների պատասխանատու պաղեստինցիների քանակը կավելացվի մինչև վարչական և խորհրդատվական գործառույթներ իրականացնող բոլոր ենթակառույցների բրիտանացի ղեկավարները չփոխարինվեն պաղեստինցիներով: Այդ փուլին հասնելուն պես, կքննարկվի Գործադիր խորհուրդը պահպանելու և Նախարարների խորհրդի վերածելու հնարավորությունը, դրանից բխող ենթակառույցների պաղեստինցի ղեկավարների կարգավիճակի և գործառույթների համապատասխան փոփոխություններով:

Այս փուլում Նորին մեծություն կառավարությունը ոչ մի առաջարկ չի անում ընտրական օրենսդրության մշակման վերաբերյալ: Այնուամենայնիվ, նրանք պետք է համարեն այս բոլորը որպես բարենպաստ սահմանադրական զարգացում և Պաղեստինի ժողովրդի կողմից նման զարգացման նկատմամբ դրական վերաբերմունքի դեպքում, նախապատրաստվեն համապատասխան ընթացակարգ ստեղծելուն, եթե տեղական պայմանները թույլատրեն:

Խաղաղության և կարգ ու կանոնի հաստատումից հետո, հինգերորդ տարվա վերջում, Պաղեստինի ժողովուրդը և Նորին մեծության



կառավարությունը ձեռնամուխ կլինեն անցումային ժամանակաշրջանի սահմանադրական բարեփոխումներին և առաջարկություններ կնախապատրաստեն Պաղեստինի անկախ պետության սահմանադրության վերաբերյալ:

Նորին մեծության կառավարությունը կպահանջի բավարարել (6) ենթահոդվածում առաջ քաշված հետևյալ դրույթները.

Սրբավայրերի անձեռնմխելիության և ազատ մուտք գործելու իրավունքի ապահովում, տարբեր կրոնական մարմինների շահերի և ունեցվածքի պաշտպանություն:

Պաղեստինում տարբեր համայնքների պաշտպանություն Նորին մեծության կառավարության կողմից՝ արաբների և հրեաների, ինչպես նաև Պաղեստինում Հրեական ազգային տան հանդեպ ստանձնած հատուկ պարտավորությունների համաձայն:

Այնպիսի պահանջների բավարարում, որոնք կհամապատասխանեն ռազմավարական կացությանը և տվյալ պահին անհրաժեշտ կհամարվեն Նորին մեծության Կառավարության կողմից: Նորին մեծության կառավարությունը նույնպես կպահանջի Պաղեստինում այլ օտար երկրների շահերի համապատասխան պաշտպանություն, որի համար ինքը ներկայումս պատասխանատու է:

Նորին մեծության կառավարությունը իր իշխանության սահմաններում կանի ամեն ինչ՝ 10 տարվա ընթացքում Պաղեստինի անկախ պետություն ստեղծելու ուղղությամբ: Եթե 10-րդ տարվա վերջում Նորին մեծության կառավարությանը պարզ դառնա, որ հակառակ իրենց հույսերի, առաջացել են այնպիսի պայմաններ, որոնք պահանջում են հետաձգել անկախ պետականության հռչակումը, ապա նրանք կխորհրդակցեն Պաղեստինի ժողովրդի ներկայացուցիչների, Ազգերի լիգայի խորհրդի, ինչպես նաև հարևան արաբական պետությունների հետ՝ նախքան հետաձգման վերաբերյալ որոշման ընդունումը: Եթե Նորին մեծություն կառավարությունը հանգի այնպիսի եզրակացության, որ հետաձգումը անխուսափելի է, ապա կհրավիրի վերոհիշյալ բոլոր կողմերին՝ ապագա ծրագրերը համատեղ քննարկելու և ամենասեղմ ժամկետներում նպատակին հասնելու ուղղությամբ:

Անցումային ժամանակահատվածում քայլեր կձեռնարկվեն համայնքային և տեղական խորհուրդների լիազորությունների ու պատասխանատվության ընդլայնման ուղղությամբ:

## Մաս 2 Ներգաղթ

Մանդատի 6-րդ հոդվածի համաձայն, Պաղեստինի վարչակազմից պահանջվում է «ապահովելով բնակչության մյուս հատվածների իրավունքներն ու դիրքերը»՝ «հարմար պայմաններ ստեղծել հրեական ներգաղթը խթանելու համար»: Սրանից բացի, Պաղեստին հրեական

ներգաղթի չափերի սահմանափակման վերաբերյալ որևէ տեղ Մանդատում չի հիշատակվում: Սակայն 1922թ. փաստաթղթում գրված է, որ դա արվում է Հրեական ազգային տան հաստատմանն ուղղված քաղաքականության իրականացման համար:

«Անհրաժեշտ է, որ Պաղեստինում հրեական համայնքը աճի ի հաշիվ ներգաղթի: Այս ներգաղթը իր ծավալով չի կարող լինել այնքան մեծ, որ գերազանցի երկրի տնտեսական հնարավորությունները նոր ներգաղթողներին ընդունելու համար:

Հարկ է է ապահովել, որ ներգաղթողները բեռ չդառնան Պաղեստինի ժողովրդի համար, և որ նրանք չզրկեն տեղի բնակչությանը աշխատանքից»: Գործնականում այդ տարեթվից ի վեր, երկրի տնտեսական կարողությունը համարվում էր միակ սահմանափակող գործոնը և 1931թ. փետրվարին դոկտոր Վայցմանին վարչապետ Ռամզայ Մակդոնալդի հղած նամակում նշվում է այդ մասին: Բայց Նորին մեծություն կառավարությունը կարծում է, որ 1922թ. փաստաթղթի և 1931թ. նամակի մեջ նշված պահանջը՝ բոլոր ժամանակներում և բոլոր պայմաններում խթանել Պաղեստին հրեաների ներգաղթը, ելնելով երկրի տնտեսական հնարավորություններից, չի բխում Մանդատի դրույթներից: Նրանք ոչ մի տեղ չեն հայտնաբերում ոչ Մանդատում ոչ էլ հետագա քաղաքական հայտարարություններում, մտքեր այն մասին, որ հրեական ազգային տան հաստատումը Պաղեստինում չի կարող լինել էական, եթե չշարունակվի ներգաղթը անորոշ չափերով: Եթե ներգաղթը ունի վնասակար ազդեցություն երկրի տնտեսական վիճակի վրա, այն պարզորոշ պետք է սահմանափակվի և, եթե այն լուրջ վնասակար ազդեցություն է թողնում երկրի ներքաղաքական վիճակի վրա, ապա սա այնպիսի գործոն է, որ չի կարելի արհամարհել: Չնայած որ մինչև օրս հրեական ներգաղթողների հիմնական մասը տնտեսապես հարմարվել է, այնուամենայնիվ, արաբները մտահոգված են այն բանից, որ հրեաների ներգաղթը կշարունակվի անորոշ ժամանակ, մինչև հրեական բնակչությունը ի վիճակի կլինի գերիշխել արաբներին, ինչն էլ կործանարար հետևանքներ կարող է ունենալ արաբների և հրեաների, ինչպես նաև Պաղեստինի խաղաղության և առաջընթացի համար: Վերջին երեք տարիների ընթացքում տեղի ունեցած ընդվզումները արաբական անհանդուրժողականության ցայտուն ապացույցն են: Արաբ ահաբեկիչների կողմից գործադրվող մեթոդները հարևան արաբների և հրեաների նկատմամբ՝ պետք է ստանան իրենց արժանի դատապարտումը: Բայց չի կարելի նաև ժխտել այն, որ հրեական ներգաղթի ընդարձակման նկատմամբ արաբ բնակչության երկյուղը համատարած է, և որ հենց այդ երկյուղն է, որ պատճառ է դառնում անկարգությունների, որոնք լրջորեն վնասում են Պաղեստինի տնտեսական առաջընթացին՝ սպառելով արաբական գանձարանը, անհաստատ դարձնելով կյանքի և ունեցվածքի պահպանությունը, թշնամություն սերմանելով միևնույն երկրի քաղաքացիների՝ արաբ և հրեա բնակչության միջև: Եթե այս պայմաններում ներգաղթը շարունակվի՝ սպառելով երկրի



տնտեսական կարողությունները, ապա բոլոր այլ քննարկումները անիմաստ կդառնան. ճակատագրական թշնամությունը երկու ժողովուրդների միջև կհավերժանա և Պաղեստինում խաղաղությունը կդառնա մշտական բախումների աղբյուր Մերձավոր և Միջին Արևելքի բոլոր ժողովուրդների մեջ: Նորին մեծության կառավարությունը չի կարող համաձայնվել, որ ըստ մանդատի իր վրա դրված պարտականություններից կամ արդարության զգացմունքից ելնելով՝ պետք է անտեսի նշված հանգամանքները ներգաղթի քաղաքականությունը սահմանելիս:

Թագավորական կոմիտեի տեսակետի համաձայն, մանդատային համակարգից և Բալֆուրի հռչակագրից բխող քաղաքականությունը ենթադրում է, որ այդ քաղաքականության նկատմամբ արաբական թշնամությունը վաղ թե ուշ կհաղթահարվի: Բրիտանական կառավարության հույսը Բալֆուրի հռչակագրից ի վեր կայացել է նրանում, որ ժամանակի ընթացքում արաբ ժողովուրդը կճանաչի Պաղեստինում հրեաների բնակեցման օգուտը և արաբ բնակչությունը կհաշտվի հրեական «ազգային տան» ստեղծման գաղափարի հետ: Այս հույսը սակայն չիրականացավ: Նորին մեծություն կառավարության առջև ծառացել էլ հետևյալ երկընտրանքը՝ ա/ ընդլայնել հրեական «ազգային տունը»՝ ներգաղթի միջոցով՝ հակառակ երկրի արաբ բնակչության կամքին կամ բ/ թույլատրել հրեական ազգային տան ընդլայնումը ներգաղթի միջոցով, միայն արաբների համաձայնության դեպքում: Առաջին քաղաքականությունը կնշանակի ղեկավարվել ուժի դիրքերից: Բացի հնարավոր բացասական հետևանքներից, Նորին մեծության կառավարությունը կարծում է, որ այսպիսի քաղաքականությունը հակասում է Այրիլի 22-ի Ազգային լիգայի պայմանագրի ոգուն, ինչպես նաև Պաղեստինի մանդատով արաբների նկատմամբ ստանձնած առանձնահատուկ պարտավորություններին: Այդուհանդերձ, վաղ թե ուշ Պաղեստինում արաբների և հրեաների հարաբերությունները պետք է հիմնվեն փոխադարձ հանդուրժողականության և բարի կամքի վրա: Սա է պահանջում հրեական ազգային տան գաղափարը՝ խաղաղություն, ապահովություն և առաջընթաց: Այս պատճառով էլ Նորին մեծության կառավարությունը լուրջ քննարկումներից հետո և հաշվի առնելով վերջին 20 տարիների ընթացքում հրեական ազգային տան աճի տևողությունը, որոշեց, որ եկել է ժամանակը՝ ընդունելու վերը շարադրված երկրորդ այլընտրանքի մասը:

Եղել է այն պնդումը, որ հետագա հրեական ներգաղթը Պաղեստին, պետք է անմիջապես դադարեցնել: Իհարկե, Նորին մեծության կառավարությունը չի կարող ընդունել նման առաջարկ: Դա ամբողջովին կխաթարի Պաղեստինի ֆինանսական և տնտեսական համակարգը ու մեծապես կվնասի արաբական և հրեական շահերին: Դեռ ավելին, ըստ Նորին մեծության կառավարության տեսակետի, հետագա ներգաղթի կտրուկ կասեցումը անարդար կլինի հրեական ազգային տան նկատմամբ: Բայց ամենից առաջ Նորին մեծության կառավարությունը գիտակցում է

ներկայիս ծանր իրավիճակը մեծ թվով հրեաների համար, որոնք գալով այլ եվրոպական երկրներից, փնտրում են ապաստան, հավատալով, որ Պաղեստինը կարող է և պետք է անի հետագա քայլեր այդ անհետաձգելի խնդիրը լուծելու համար: Նորին մեծություն կառավարությունը հավատացած է, որ իրենք պետք է գործեն Մանդատով իրենց վրա դրված պարտականությունների շրջանակներում, որը վերաբերում է և՛ արաբներին և՛ հրեաներին ու այնպես հաշվարկեն, որ իրենց գործունեությունը ծառայի ամբողջ Պաղեստինի ժողովրդի շահերին՝ ընդունելով ներգաղթի վերաբերյալ հետևյալ առաջարկները:

Հետագա հինգ տարիների ընթացքում հրեական ներգաղթը պետք է լինի այնքան, որքան ընդունել երկրի տնտեսական իրավիճակն է հնարավորություն տալիս, իսկ հրեական ազգաբնակչության քանակը հավասար պետք է լինի երկրի ամբողջ բնակչության մեկ երրորդին: Հաշվի առնելով արաբ և հրեա բնակչության սպասվող բնական աճը, ինչպես նաև հրեաների անօրինական ներգաղթի քանակը, այժմ երկրում պետք է թույլ տալ այս տարվա ապրիլի սկզբից սկսած՝ *հաջորդ հինգ տարիների ընթացքում ընդունել 75.000 ներգաղթողներ*: Հրեա ներգաղթողները, հաշվի առնելով Պաղեստինի տնտեսական հնարավորությունները, կընդունվեն հետևյալ պայմաններով.

- հաջորդ հինգ տարիների ընթացքում յուրաքանչյուր տարի՝ 10.000 հրեա ներգաղթողներ, այնպիսի հաշվարկով, որ եթե տարեկան կտրվածքով սահմանված քվոտայից պակաս մարդ ներգաղթի, ապա այն կարելի կլինի ավելացնել հաջորդ տարիների ընթացքում:

Ի հավելումն, հրեա փախստականների խնդրի լուծումը խթանելու նպատակով, 25.000 փախստականներ կընդունվեն, հենց որ Բարձրագույն հանձնակատարը կբավարարվի այն հանգամանքով, որ ներգաղթողների համար ապահովված են կեցության համապատասխան պայմաններ՝ հատուկ ուշադրություն դարձնելով փախստական երեխաների կարգավիճակի վրա:

Գոյություն ունեցող տնտեսական կարողությունների մեխանիզմը պետք է պահպանվի և Բարձրագույն հանձնակատարի վրա կդրվի ամբողջական պատասխանատվությունը՝ ներգաղթողներին ընդունելու՝ տնտեսության հնարավորության սահմանները որոշելու հարցում: Նախքան յուրաքանչյուր որոշման ընդունումը, անհրաժեշտ է խորհրդակցել արաբ և հրեա ներկայացուցիչների հետ:

Հինգ տարի նշված ժամանակաշրջանից հետո հրեական ներգաղթ չի թույլատրվի, մինչև որ Պաղեստինի արաբները պատրաստ չլինեն հարմարվելու դրան:

Նորին մեծություն կառավարությունը մտադրված է ստուգել ապօրինի ճանապարհով երկիր ներգաղթածներին և հետագայում համապատասխան միջոցներ կձեռնարկվեն վերոհիշյալը կանխելու ուղղությամբ: Ապօրինի ներգաղթողների որևէ քանակ, որը չնայած



նախատեսվող այդ միջոցներին, կհաջողի մուտք գործել երկիր և հետագայում չի վտարվի երկրից, կհանվի հրեական ներգաղթի տարեկան քվոտայից:

Նորին մեծություն կառավարությունը բավարարված կհամարի իրեն հինգ տարիների ընթացքում ծրագրված ներգաղթի իրականացմամբ, և ստիպված չի լինի որևէ կերպ խթանել կամ էլ պարտավորված լինել աջակցելու հրեական ազգային տան հետագա զարգացմանը ներգաղթողների հաշվին, առանց արաբ բնակչության կամքը հաշվի առնելու:

Մաս 3. Հողը

Պաղեստինի ղեկավարությունից պահանջվում է Մանդատի 6-րդ հոդվածով, «երաշխավորել բնակչության այլ հատվածների իրավունքների ու կարգավիճակի ապահովվածությունը», խթանել «հրեաների բնակությունը այդ երկրում» և ոչ մի սահմանափակում չդնել հողը արաբներից հրեաներին փոխանցելու համար: Մի քանի փորձագիտական հանձնաժողովների զեկուցագրերում նշվել է, որ հաշվի առնելով արաբ բնակչության բնական աճը և վերջին տարիներին հաճախակի դարձած արաբական հողերի վաճառքը հրեաներին, այժմ արդեն որոշ տարածքներում չի մնացել ոչ մի հնարավորություն արաբական հողերի փոխանցման համար, իսկ մի քանի այլ տարածքներում էլ այդ վաճառքը պետք է սահմանափակվի, որպեսզի արաբ հողագործները կարողանան պահպանել գոյություն ունեցող կենսամակարդակը և այնուհետև էլ չդառնան հողազուրկ բնակչություն: Այս պարագայում Բարձրագույն հանձնակատարին կտրվեն ընդհանուր լիազորություններ՝ արգելելու և կանոնակարգելու հողի փոխանցումները: Այս լիազորությունները կգործեն սույն քաղաքական հայտարարության հրապարակումից հետո և Բարձրագույն հանձնակատարը կպահպանի դրանք անցումային ամբողջ ժամանակաշրջանում:

Կառավարության քաղաքականությունը նպատակաուղղված կլինի հողագործության զարգացմանը, ինչպես նաև հնարավորության դեպքում՝ հողամշակման մեթոդների բարելավմանը: Նման զարգացման լույսի ներքո, հողամշակման մեթոդների բարելավմանը: Նման զարգացման լույսի ներքո, Բարձրագույն հանձնակատարը ի վիճակի կլինի պաշտոնապես ապահովել արաբ բնակչության «իրավունքներն ու կարգավիճակը» և արգելել որևէ որոշման իրականացում՝ կապված հողի փոխանցման հետ:

Հանդես գալով վերոհիշյալ առաջարկներով, Նորին մեծություն կառավարությունը անկեղծորեն ջանք չի խնայի Մանդատով սահմանված իր պարտականությունները արաբների և հրեաների հանդեպ խատորեն կատարելու ուղղությամբ: Որոշ շրջանակներում օգտագործվող անպատասխանատու արտահայտությունները հանգեցրել են վիճաբանությունների և դժվարացրել են պարտականությունները մեկնաբանելու գործը: Նորին մեծության կառավարությունը հույս չունի, որ կարող է բավարարել այս կամ այն կուսակցության համախոհների

ակնկալիքները՝ կապված Մանդատի հետ: Կառավարության նպատակն է հավասարապես լինել արդար Պաղեստինի երկու ժողովուրդների նկատմամբ, որոնց ճակատագրերի վրա բացասական ներգործություն են թողել վերջին տարիների իրադարձությունները այդ երկրում: Եվ քանի որ նրանք ապրում են կողք կողքի, ապա պետք է սովորեն հանդուրժողականություն, բարի կամքի դրսևորում և համագործակցություն:

Նայելով ապագային, Նորին մեծության կառավարությունը չի կարող անտեսել այն փաստը, որ անցյալի որոշ իրադարձություններ դժվարեցրել են երկու ազգերի միջև նման հարաբերությունների ստեղծումը, բայց իրենք ոգևորված են այն գաղափարով, որ վերջին տարիներին շատ վայրերում և շատ հաճախ արաբները և հրեաները ապրել են միասին ու բարեկամաբար: Ամեն համայնք դեռևս շատ անելիքներ ունի բարեկեցության համար և յուրաքանչյուրն էլ պետք է անի առավելագույնը հանուն խաղաղության, որով էլ պայմանավորված կլինի երկրի ու ամբողջ ժողովրդի բարեկեցությունը: Պատասխանատվությունը, որն ընկած է նրանց վրա, Նորին մեծության կառավարության պատասխանատվությունից պակաս չէ: Այն կոչված է համագործակցության և ամենակարևորը՝ խաղաղության պահպանմանը, քանի որ իրենց երկիրը երկրպագում են ամբողջ աշխարհի միլիոնավոր մահմեդականները, հրեաները և քրիստոնյաների կողմից, որոնք աղոթում են Պաղեստինում խաղաղության և այդ երկրի ժողովրդի երջանկության համար:



*Հավելված 4*

## ՄԱԿ-ի ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ 181(II) ԲԱՆԱՁԵՎԸ[606]

*1947թ. նոյեմբերի 29*

A

*Գլխավոր ասամբլեան* մանդատակիր երկրի խնդրանքով Հատուկ հանձնաժողով կազմելու նպատակով, գումարեց արտակարգ նիստ, որը Գլխավոր ասամբլեայի երկրորդ հերթական նիստին կներկայացնի Պաղեստինի ապագա կառավարման մասին հարցը, կազմելով Հատուկ հանձնաժողով[607] և հանձնարարելով նրան ուսումնասիրել բոլոր այն հարցերը, որոնք վերաբերում են Պաղեստինի խնդրին, և առաջարկներ մշակել այդ խնդիրը լուծելու համար, ինչպես նաև ստանալով ու քննելով Հատուկ հանձնաժողովի միասնական առաջարկությունների զեկույցը և հանձնաժողովի անդամների մեծամասնության կողմից ընդունված տնտեսական միության հիման վրա բաժանման ծրագիրը,

գտնում է , որ Պաղեստինի իրադրությունը կարող է վնաս հասցնել ընդհանուր խաղաղությանը և վնասել պետությունների միջև հաստատված բարեկամական հարաբերություններին,

հաշվի է առնում մանդատակիր պետության հայտարարությունը, որի համաձայն զորքերի դուրսբերումը Պաղեստինից կավարտվի 1948թ. օգոստոսի 1-ին,

հանձնարարում է Միացյալ թագավորությանը՝ որպես Պաղեստինի մանդատակիր երկրի, ՄԱԿ-ի անդամ բոլոր այլ երկրներին ընդունել և իրագործելու այն ամենը, ինչ վերաբերում է Պաղեստինի ապագա կառավարությանը, տնտեսական միությամբ ներքոշարադրյալ բաժանման ծրագրին, առաջարկում է՝

ա/ որ Անվտանգության խորհուրդը համապատասխան քայլեր ձեռնարկի՝ ծրագիրը կյանքի կոչելու նպատակով,

բ/ որ Անվտանգության խորհուրդը անցումային շրջանում պարտադրող հանգամանքների դեպքում որոշի՝ արդյոք Պաղեստինի

[606] http://domino.un.org/unispal.nsf/9a798adbf322aff38525617b006d88d7/7f0af2bd897689b785256c330061d253!OpenDocument

[607] 1947 թ. մայիսի 15-ին Գլխավոր ասամբլեան իր 106(5-1) բանաձևով կազմավորեց Հատուկ հանձնաժողով հետևյալ կազմով՝ Ավստրալիա, Գվատեմալա, Հնդկաստան, Իրան, Կանադա, Հոլանդիա, Պերու, Չեխոսլովակիա, Շվեդիա, Ուրուգվայ և Հարավսլավիա: Հանձնաժողովն իր աշխատանքներն ավարտեց թիվ 181(II)-ի բանաձևի ընդունումից հետո:

իրադրությունը սպառնում է խաղաղությանը: Եթե նա որոշի, որ այդպիսի վտանգ կա, ապա միջազգային խաղաղության խորհուրդը պետք է Գլխավոր ասամբլեային լիազորի՝ կանոնադրության թիվ 39 և 41 հոդվածների համաձայն, իրավասություններ տալու Միացյալ ազգերի կազմակերպության Խորհրդին, որը սահմանված է բանաձևով, և Պաղեստինում իրականացնելու այն ամենը, ինչը նույնպես սահմանված է բանաձևով,

գ/ որ Անվտանգության խորհուրդը կանոնադրության թիվ 39 հոդվածի համաձայն, վերացնի ագրեսիան կամ խաղաղությունը վտանգող իրողությունները, որոնք ուժով կփորձեն խոչընդոտել այն որոշմանը, որը սույն բանաձևով կյանքի է կոչվում,

դ/ որպեսզի Խնամակալության խորհուրդը տեղեկացված լինի այն պատասխանատվության մասին, որի համաձայն այս ծրագրի իրականացումը դրվել է նրա վրա,

կոչ է անում Պաղեստինի բնակչությանը՝ իր հերթին անհրաժեշտ քայլեր ձեռնարկել ծրագրի իրականացման ուղղությամբ,

կոչ է անում բոլոր կառավարություններին և ժողովրդներին զերծ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են դժվարացնել կամ դանդաղեցնել նշված հանձնարարականների իրագործումը և լիազորում է Գլխավոր քարտուղարին՝ փոխհատուցել հանձնաժողովի բոլոր ծախսերը այնպես, ինչպես ճիշտ կհամարի հանձնաժողովը համապատասխան հանգամանքներում, ինչպես նաև նրան տրամադրել անհրաժեշտ անձնակազմ՝ Գլխավոր ասամբլեայի կողմից դրված պարտականությունների կատարմանը աջակցելու համար:

B

Գլխավոր ասամբլեան

լիազորում է Գլխավոր քարտուղարին շրջանառու ֆոնդից դուրս գրել գումար, որը չի գերազանցի 2 միլիոն ԱՄՆ դոլարը՝ «Պաղեստինի ապագա կառավարման» վերաբերյալ ընդունված բանաձևի իրագործման ծախսերը հոգալու համար:



*Հավելված 5*

ՊԱՂԵՍՏԻՆԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ (Քաղվածք)[608]

*1947թ. նոյեմբերի 29*

Մաս 1. Պաղեստինի կառավարությունը և ապագա սահմանադրությունը

*Ա. Մանդատի դադարեցումը, Պաղեստինի բաժանումը և անկախությունը*

1. Պաղեստինի մանդատը պետք է դադարեցվի ոչ ուշ, քան 1948թ. օգոստոսի 1-ը:
2. Մանդատակիր պետության զինված ուժերը աստիճանաբար պետք է դուրս բերվեն Պաղեստինից, դուրսբերումը պետք է ավարտել հնարավորին չափ արագ սակայն ամեն դեպքում ոչ ուշ, քան 1948թ. օգոստոսը:
3. Մանդատակիր պետությունը պետք է նախօրոք տեղեկացնի Հանձնաժողովին՝ մանդատի դադարեցման և յուրաքանչյուր շրջան ազատելու իր մտադրության մասին:
4. Մանդատակիր պետությունը պետք է օգտագործի իր բոլոր հնարավորությունները, որպեսզի Հրեական պետության տարածքում գտնվող շրջաններից, ներառյալ նավահանգիստը և մեծածավալ ներգաղթի կազմակերպման համար բարենպաստ երկրի ներքին շրջանները, ապահովի դուրսբերումը հնարավոր կարճ ժամկետներում և ամեն դեպքում ոչ ուշ, քան 1948թ. փետրվարի 1-ը:
5. Անկախ արաբական և հրեական պետությունները ու Երուսաղեմ քաղաքի հատուկ միջազգային վարչակարգը սույն ծրագրի երրորդ մասի համաձայն, պետք է իրականություն դառնան Պաղեստինում մանդատակիր պետության զինված ուժերի դուրսբերումից երկու ամիս անց, ամեն դեպքում ոչ ուշ, քան 1918թ. հոկտեմբերի 1-ը: Արաբական պետության, հրեական պետության և Երուսաղեմ քաղաքի սահմանների նկարագրությունը տրված է ստորև 2 և 3 մասերում:
6. Գլխավոր ասամբլեայի կողմից պաղեստինի վերաբերյալ առաջարկությունների ընդունման և Արաբական ու հրեական պետությունների անկախության հռչակման միջև ընկած ժամանակահատվածը կհամարվի անցումային շրջան:

[608] Gresh, Alain & Vidal, Dominique. A to Z of the Middle East, pp.228-235.

*Բ. Հայտարարություն*

Մինչև ստեղծվելիք երկու պետությունների անկախության հռչակումը, նրանց ժամանակավոր կառավարությունները պետք է հանդես գան հայտարարությամբ, ուր կընդգրկվեն հետևյալ պայմանները.

Ընդհանուր դրույթներ

Հայտարարության մեջ ընդգրկված պայմանները ճանաչվում են որպես Պետության հիմնարար օրենքներ և որ որևէ օրենք, կարգադրություն կամ պաշտոնական որոշում չպետք է հակասի կամ հակադրվի այդ պայմաններին, ոչ էլ որևէ օրենք, կարգադրություն կամ պաշտոնական որոշում պետք է գերակայող լինի նրանց հանդեպ:

Գլուխ առաջին՝ Սրբավայրեր, կրոնական շինություններ և հողամասեր

1. Սրբավայրերի, կրոնական շինությունների և հողամասերի վերաբերյալ առկա իրավունքները չպետք է խախտվեն կամ օտարվեն:
2. Ինչ վերաբերում է սրբավայրերին, ապա ազատ մուտքի, այցելության և տարանցման իրավունքը պետք է երաշխավորվի առկա իրավունքներին համապատասխան, այլ երկրի և Երուսաղեմ քաղաքի բոլոր բնակիչների ու քաղաքացիների համար, ինչպես նաև օտարերկրացիներին՝ առանց ազգային խտրականության, անվտանգության և հանրային կարգի պահպանման պահանջներին համապատասխան: Նույնպես պետք է ապահովվի ազատ դավանանքը գործող նորմերի համաձայն, եթե դրանք չեն սպառնում հանրային կարգ ու կանոնին:
3. Սրբավայրերը, կրոնական շինությունները ու հողամասերը պետք է պահպանվեն: Պետք է չթույլատրել որևէ գործողություն, որը կարող է վնաս պատճառել դրանց նվիրական բնույթին (sacred character): Երև կառավարությունը անհրաժեշտ նկատի, որ որևէ սրբավայր, կրոնական հաստատություն և կառույց կարիք ունի վերանորոգման, և եթե համապատասխան ժամկետներում որևէ քայլեր չձեռնարկվեն այդ ուղղությամբ, ապա կառավարությունը ցանկացած ժամանակ կարող է դիմել համայնքին կամ շահագրգիռ համայնքներին:
4. Պետության ստեղծման օրվանից սրբավայրերը, կրոնական շինությունները ու հողամասերը պետք է ազատվեն հարկային որևէ պարտավորությունից: Որևէ փոփոխություն կապված հարկային նշված ռեժիմի կիրառման շրջանակների հետ, չի թույլատրվում:



5. Այդ հարկերի մեջ չի կարող կատարվել այնպիսի փոփոխություն, որը խտրականություն կառաջացնի սրբավայրերի, կրոնական շինությունների կամ հողամասերի սեփականատերերի, կամ դրանք զբաղեցնողների միջև, կամ էլ այդ սեփականատերերին, կամ դրանք զբաղեցնողներին ընդհանուր հարկերի համեմատ կդնի ավելի անբարենպաստ վիճակի մեջ, քան գոյություն ուներ ասամբլեայի հանձնարարականների ընդունման ժամանակ:
6. Երուսաղեմ քաղաքի կառավարիչը պետք է իրավունք ունենա որոշելու, թե արդյոք պետության սահմաններում գտնվող սրբավայրերի, կրոնական կառույցների կամ հողամասերի վերաբերյալ պետության սահմանադրության կետերը պատշաճ կերպով կիրառելի են ու հարգված, ինչպես նաև գոյություն ունեցող օրենքների հիման վրա որոշումներ կայացնելու այն դեպքում, երբ բանավեճեր են առաջանում տարբեր կրոնական համայնքների կամ էլ կրոնական համայնքի ծեսերի միջև, երբ դրանց առարկան այս վայրերը, կառույցները և հողամասերն են: Նա պետք է հասնի լիակատար համագործակցության և այնպիսի առավելությունների ու անձեռնմխելիությունների, որոնք անհրաժեշտ են պետության մեջ իր գործառույթներն իրականացնելու համար:

Գլուխ 2 Կրոնական և փոքրամասնության իրավունքները

1. Բոլորի համար երաշխավորում է խղճի ազատություն և դավանանքի բոլոր ձևերի ազատ գործադրում՝ նպատակ ունենալով պահպանել հասարակական կարգը և բարոյականությունը:
2. Բնակիչների միջև ռասայական, կրոնական, լեզվական որևէ խտրականություն չպետք է լինի:
3. Պետության արդարադատության համաձայն՝ բոլոր մարդիկ ենթարկվում են օրենքների հավասար պաշտպանությանը:
4. Ընտանիքի մասին օրենքը, տարբեր փոքրամասնությունների յուրօրինակ կարգավիճակը և նրանց կրոնական շահագրգռությունները՝ ներառյալ ընդունակությունները, պետք է հարգվեն:
5. Ի բացառյալ հասարակական կարգի և կառավարության պահպանման համար պահանջվող միջոցները, ոչինչ չպետք է ձեռնարկվի յուրաքանչյուր դավանանքի, կրոնական կամ բարեգործական միավորումների նախաձեռնությունները խափանելու կամ ընդհատելու, կամ էլ այդ միավորումների ներկայացուցիչների կամ անդամների միջև կրոնական, ազգային պատկանելության խտրականություն առաջացնելու ուղղությամբ:
6. Պետությունը պետք է երաշխավորի հավասար տարրական և միջնակարգ կրթություն արար և հրեա փոքրամասնությունների

համար՝ համապատասխանաբար իրենց սեփական լեզվին և իրենց մշակութային ավանդույթներին:

7. Չպետք է ժխտվի կամ մեղմացվի յուրաքանչյուր համայնքի իրավունքը՝ ունենալու սեփական լեզվով, իրենց անհատների կրթության համար դպրոցներ, մինչ ձևակերպվելը ընդհանուր բնույթի այնպիսի կրթական պահանջների, ինչպիսիք կպարտադրի պետությունը: Օտար կրթական հաստատությունները պետք է շարունակեն իրենց գործունեությունը գոյություն ունեցող օրենքների հիման վրա:

8. Ոչ մի սահմանափակում չպետք է պարտադրվի պետության յուրաքանչյուր քաղաքացու՝ մասնավոր դասընթացներում, առևտրի մեջ, կրոնում, մամուլում, տարբեր տեսակի հրապարակումներում կամ հասարակական հավաքույթներում որևէ լեզու օգտագործելու համար:

9. Հրեական պետության մեջ չպետք է թույլատրվի արաբների կողմից սեփականացված հողի բռնագրավում՝ բացառությամբ հասարակական նպատակների առկայության: Բռնագրավման բոլոր դեպքերում պետք է տրվի Գերագույն դատարանի կողմից սահմանված լրիվ փոխհատուցում՝ նախքան սեփականության օտարումը:

Մաս 3. Երուսաղեմ քաղաքը

*Հատուկ ռեժիմ*

Երուսաղեմ քաղաքը պետք է հիմնադրվի որպես corpus separatum /անկախ գոտի/ հատուկ միջազգային ռեժիմի ներքո և պետք է ղեկավարվի ՄԱԿ-ի կողմից: Հոգաբարձուների խորհուրդը պետք է նշանակվի՝ ՄԱԿ-ի անունից կատարելու ղեկավարողի իր պարտականությունները:

C. Քաղաքի վերաբերյալ օրենսդրական ակտը (Statute)

Հոգաբարձուների խորհուրդը ներկա ծրագրի հաստատման 5 ամիսների ընթացքում պետք է մանրամասն մշակի և հաստատի քաղաքի օրենսդրական ակտը, որը պետք է պարունակի inter alia /ընդսմին/՝ պայմանագրի հետևյալ կետերը

1. Կառավարության վարչակազմը: Հատուկ նպատակներ:

Գործադիր իշխանությունը իր գործառույթները կատարելիս պետք է հետապնդի հետևյալ հիմնական նպատակները.

ա) պահպանել և պաշտպանել աշխարհի 3 մեծ կրոնների՝ քրիստոնեական, հուդայական և մահմեդական, քաղաք Երուսաղեմի



բացառիկ հոգևոր հետաքրքրությունները՝ դրանով իսկ երաշխավորելով, որ կարգ ու կանոնն ու խաղաղությունը, հատկապես կրոնական խաղաղությունը, կգերիշխեն Երուսաղեմում:

բ) խթանել համագործակցությունը քաղաքի բոլոր բնակիչների միջև՝ ըստ իրենց հետաքրքրությունների, ինչպես նաև խրախուսել և աջակցել Սուրբ տեղերում բնակվող երկու պաղեստինյան ժողովուրդների միջև երկկողմ հարաբերությունների խաղաղ զարգացումը, նպաստել նրանց անվտանգությանը, բարօրությանը և բնակիչների զարգացմանն ուղղված յուրաքանչյուր կոնստրուկտիվ նախաձեռնություն՝ հաշվի առնելով հատուկ հանգամանքները և տարբեր ժողովուրդների և համայնքների սովորույթները:

2. Կառավարիչը և վարչակազմը

Ա) Երուսաղեմ քաղաքի կառավարիչը պետք է նշանակվի Հոգաբարձուների խորհրդի կողմից և պատասխանատու լինի նրան: Նա պետք է ընտրվի հատուկ որակավորման հիման վրա՝ անկախ ազգությունից: Այնուհանդերձ, նա չպետք է լինի Պաղեստինի որևէ պետության քաղաքացի:

Կառավարիչը քաղաքում պետք է ներկայացնի ՄԱԿ-ը և նրա անունից պետք է իրացնի կառավարության ողջ լիազորությունները՝ ներառյալ արտաքին գործերի կառավարումը:

Նրան պետք է աջակցի վարչական անձնակազմը, որը ամրագրվելու է միջազգային աշխատակիցների անվան տակ՝ համաձայն Կանոնադրության 100 հոդվածի և պետք է ընտրվի քաղաքի բնակիչների ու Պաղեստինի մի մասի կողմից՝ առանց որևէ խտրականության: Քաղաքի կառավարության կազմակերպման մանրամասն պլանը պետք է կառավարչի կողմից ներկայացվի Հոգաբարձուների խորհրդին և պատշաճ կերպով վավերացվի նրա կողմից:

3. Տեղական ինքնակառավարում

*ա)* Քաղաքի տարածքում գոյություն ունեցող տեղական ինքնավար միավորումները՝ գյուղերը, քաղաք-ավանները, քաղաքապետարանները պետք է օժտվեն տեղական կառավարության և վարչակազմի լայն իշխանությունից:

բ) Կառավարիչը պետք է ուսումնասիրի և Հոգաբարձուների Խորհրդի քննարկմանն ու որոշմանը ներկայացնի քաղաքի հատուկ միավորումների հիմնադրման նախագիծը՝ բաղկացած համապատասխանաբար Նոր Երուսաղեմի հրեական և արաբական մասերից:

4. Անվտանգության միջոցներ

ա) Երուսաղեմ քաղաքը պետք է լինի ապառազմականացված, նրա չեզոքությունը պետք է հռչակված և պաշտպանված լինի, նրա սահմաններում չպետք է թույլատրվեն ռազմականացված կազմավորումներ, զորավարժություններ կամ գործողություններ:
բ) Եթե Երուսաղեմ քաղաքի կառավարությունը լուրջ վնասներ կրի բնակչության մեկ կամ ավելի մասերի անհամաձայնության կամ միջամտության պատճառով, կառավարիչը իրավասու է ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են կառավարության բնականոն գործունեությունը վերականգնելու համար:
գ) Քաղաքում ներքին օրենքի և կարգ ու կանոնի պահպանմանը աջակցելու նպատակով՝ հատկապես քաղաքի սրբավայրերի, կրոնական կառույցների և հողամասերի պաշտպանության համար, կառավարիչը պետք է կազմակերպի համարժեք ուժերից բաղկացած հատուկ ոստիկանություն, որի անդամները պետք է հավաքագրվեն Պաղեստինից դուրս: Կառավարիչը պետք է լիազորված լինի տնօրինել այնքան բյուջետային միջոցներ, որքան անհրաժեշտ է այդ ուժերի պահպանման համար:

5. Օրենսդիր մարմինը

Օրենսդիր խորհուրդը, որն ընտրվում է քաղաքի չափահաս քաղաքացիներից՝ անկախ ազգությունից, ընդհանուր և գաղտնի իրավունքի հիման վրա, համամասնական ներկայացուցչությամբ, պետք է ունենա օրենսդրական և հարկային իշխանություն:

Ոչ մի օրենսդրական ակտ չի կարող հակասել կամ հակադրվել քաղաքի կանոնադրության կետերին, ոչ մի օրենք, հրահանգ կամ պաշտոնական գործողություն չի կարող գերակայություն ունենալ նրանց նկատմամբ: Կանոնադրությունը պետք է կառավարչին իրավունք տա վետո դնել այն օրինագծի վրա, որը չի համապատասխանի նախորդ հոդվածից բխող կետերին: Այսպիսով, այն պետք է լիազորի նրան հրապարակել ժամանակավոր կարգադրություններ (օրդոնանսներ) այն դեպքում, երբ խորհուրդը ժամանակին չի ընդունի ադմինիստրացիայի նորմալ գործունեության համար էական նշանակություն ունեցող օրինագիծ:

6. Արդարադատության իրացում

Կանոնադրությունը պետք է ապահովի անկախ դատական համակարգի հիմնում՝ ներառյալ բողոքարկման դատարանը: Քաղաքի բոլոր բնակիչները պետք է լինեն դրա սուրյեկտները:

7. Տնտեսական միություն և տնտեսական ռեժիմ



Երուսաղեմ քաղաքը պետք է ներգրավված լինի Պաղեստինի տնտեսական միության մեջ և կապված լինի բոլոր պարտավորություններով ու դրանից բխող յուրաքանչյուր համաձայնություններով, ինչպես նաև միասնական տնտեսական խորհրդի որոշումներով: Տնտեսական խորհրդի վարչությունները պետք է հիմնվեն քաղաքի տարածքում:

Կանոնադրությունը պետք է տնտեսական խնդիրների կարգավորման համար Տնտեսական միության ռեժիմի շրջանակներում առանց խտրականության, Միավորված ազգերի բոլոր անդամներին և նրանց համաքաղաքացիներին հավասար գործելու հնարավորություն տա:

8. Տարանցման և այցելության ազատություն: Բնակիչների ստուգում:

Անվտանգության և տնտեսական բարօրության քննարկումների առարկան, ինչպես որոշվել է կառավարչի կողմից՝ Հոգաբարձուների խորհրդի հրամանով, արաբական և հրեական պետությունների բնակիչներին և քաղաքացիներին մուտքի և քաղաքի սահմաններում բնակվելու ազատություն երաշխավորելն է: Այլ պետությունների քաղաքացիների ներգաղթը և քաղաքի սահմաններում բնակությունը պետք է հսկի կառավարիչը՝ Հոգաբարձուների խորհրդի ղեկավարությամբ:

9. Հարաբերությունները արաբական և հրեական պետությունների միջև

Արաբական և հրեական պետությունների ներկայացուցիչները պետք է հավատարմագրվեն քաղաքի կառավարչի մոտ և պարտավորվեն պաշտպանելու իրենց պետությունների և համաքաղաքացիների շահերը՝ քաղաքի միջազգային վարչակազմի մոտ:

10. Պաշտոնական լեզուները

Արաբերենը և Եբրայերենը պետք է լինեն քաղաքի պաշտոնական լեզուները: Սա կարող է, պահանջի դեպքում, կանխել մեկից ավելի աշխատանքային լեզուների ընդունումը:

11. Քաղաքացիություն

Բոլոր բնակիչները կլինեն Երուսաղեմ քաղաքի ipso facto /փաստացի-Ռ.Կ/ քաղաքացիներ, եթե նրանք չեն հրաժարվել այն պետության քաղաքացիությունից, որի քաղաքացիներն են եղել, կամ էլ, եթե արաբները կամ հրեաները մտադրություն են հայտնել արաբական և հրեական պետության քաղաքացի դառնալու՝ համաձայն այս նախագծի I մասի, B բաժնի 9-րդ կետի:

Հոգաբարձուների խորհուրդը պետք է միջոցներ ձեռնարկի քաղաքի քաղաքացիների հյուպատոսական պաշտպանության համար՝ նրա տարածքից դուրս:

12. Քաղաքացիների ազատությունը

ա) Հասարակական կարգի և բարոյականության համար անհրաժեշտ պայման է քաղաքի բնակիչներին մարդու հիմնական իրավունքները և ազատությունները երաշխավորելը՝ ներառյալ խղճի, կրոնի և պաշտամունքի, լեզվի, կրթության, խոսքի և մամուլի, հավաքվելու և միավորվելու:

բ) Ոչ մի խտրականություն չպետք է դրվի բնակիչների միջև՝ ցեղային, կրոնական, լեզվական կամ սեռական հիմքի վրա:

գ) Քաղաքի բոլոր մարդիկ պետք է ենթարկվեն օրենքի հավասար պաշտպանությանը:

դ) Ընտանեկան օրենքը, տարբեր մարդկանց և համայնքների անձնական կարգավիճակը և նրանց կրոնական հետաքրքրությունները՝ ներառյալ ընդունակությունները, պետք է հարգվեն:

ե) Ի բացառյալ այն, Բացառությամբ, եթե պահանջվի հասարակական կարգի և կառավարության պահպանման համար, ոչ մի միջոց չպետք է ձեռնարկվի խափանելու կամ ընդհարվելու բոլոր դավանանքների, կրոնական կամ բարեգործական միավորումների նախաձեռնությունների հետ, կամ էլ խտրականություն դնելու կրոնական, ազգային պատկանելության այդ միավորումների ներկայացուցիչների կամ անդամների միջև:

զ) Քաղաքը պետք է երաշխավորի հավասար նախնական և միջնակարգ կրթություն արաբ և հրեա փոքրամասնությունների համար՝ համապատասխանաբար իրենց սեփական լեզվին և իրենց մշակութային ավանդույթներին:

Չպետք է ժխտվի կամ նվազեցվի յուրաքանչյուր համայնքի իրավունքը՝ ունենալու սեփական լեզվով, սեփական անդամների կրթության համար դպրոցներ, միևնույն ժամանակ նրանք պետք է ենթարկվեն ընդհանուր բնույթի բոլոր կրթական պահանջներին, որպիսիք կպարտադրի պետությունը: Օտար կրթական հաստատությունները պետք է շարունակեն իրենց գործունեությունը գոյություն ունեցող օրենքների հիման վրա:

է) Ոչ մի սահմանափակում չպետք է կիրառվի պետության յուրաքանչյուր քաղաքացու նկատմամբ՝ մասնավոր դասընթացներում, առևտրի մեջ, կրոնում, մամուլում, տարբեր տեսակի հրապարակումներում կամ հասարակական հավաքույթներում օգտագործելու որևէ լեզու:

13. Սրբավայրերը



ա) Սրբավայրերին, կրոնական շինություններին կամ հողամասերին վերաբերող օրենքները չպետք է ժխտվեն կամ մեղմացվեն:

բ) Սրբավայրերի, կրոնական շինությունների կամ հողամասերի ազատ մուտքի և դավանանքի ազատությունը պետք է երաշխավորվի՝ համաձայն գործող օրենքների, ինչն անհրաժեշտ պայման է հասարակական կարգի պահպանման համար:

գ) Սրբավայրերը, կրոնական շինությունները կամ հողամասերը պետք է պաշտպանվեն: Չի թույլատրվում այնպիսի գործողություն, որը կարող է որևէ կերպ վնասել նրանց նվիրական բնույթը: Եթե երբևէ կառավարությունը հայտնաբերի, որ որևէ սրբավայր, կրոնական շինություն կամ հողամաս անհապաղ նորոգման կարիք ունի, այն պետք է դիմի համապատասխան համայնքին, կամ համայնքներին՝ կատարելու այդ նորոգումը: Եթե սահմանված ժամկետում ոչ մի գործողություն չի ձեռնարկվում, կառավարությունը պետք է ինքը կատարի այն՝ տվյալ համայնքի կամ համայնքների միջոցների հաշվին:

դ) Ոչ մի հարկ չի գանձվում այն սրբավայրից, կրոնական շինությունից կամ հողամասից, որը պետության ստեղծման ժամանակ ազատված էր հարկերից: Այդ հարկերի մեջ չի կարող կատարվել այնպիսի փոփոխություն, որը խտրականություն կառաջացներ սրբավայրերի, կրոնական շինությունների կամ հողամասերի սեփականատերերի, կամ դրանք զբաղեցնողների միջև, կամ էլ այդ սեփականատերերին ու դրանք զբաղեցնողներին ընդհանուր հարկերի համեմատ կդներ ավելի անբարենպաստ վիճակի մեջ, քան գոյություն ուներ ասամբլեայի հանձնարարականների ընդունման ժամանակ:

14. Կառավարչի հատուկ լիազորությունները սրբավայրերի, կրոնական շինությունների կամ հողամասերի նկատմամբ քաղաքում և Պաղեստինի որևէ մասում

ա) Երուսաղեմ քաղաքում տեղակայված սրբավայրերի, կրոնական շինությունների կամ հողամասերի պաշտպանությունը պետք է լինի կառավարչի հատուկ հոգածության առարկա:

բ) Ինչ վերաբերում է Պաղեստինում գտնվող այն վայրերին, շինություններին և հողամասերին, որոնք քաղաքից դուրս են, ապա կառավարիչը պետք է երկու պետությունների սահմանադրություններով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում որոշի, թե արդյոք պատշաճ կերպով կիրառվում և հարգվում են Պաղեստինի արաբական և հրեական պետությունների սահմանադրությունների կետերը, որոնք առնչվում են դրանց, և կրոնական իրավունքները, որոնք վերաբերում են դրանց:

գ) Կառավարիչը պետք է լիազորված լինի գոյություն ունեցող օրենքների հիման վրա որոշումներ կայացնել այն դեպքում, երբ վեճեր են

առաջանում տարբեր կրոնական համայնքների կամ էլ կրոնական համայնքի ծեսերի միջև՝ Պաղեստինի ցանկացած մասում:

Այս առումով նրան պետք է աջակցի տարբեր դավանանքների ներկայացուցիչների խորհրդակցական խորհուրդը, որի գործունեությունը զուտ խորհրդակցական բնույթ է կրում:

դ) Հատուկ ռեժիմի տևողությունը

Հոգաբարձուների խորհրդի կողմից մշակված կանոնակարգը՝ վերոնշյալ սկզբունքների հիման վրա, պետք է ուժի մեջ մտնի ոչ ուշ, քան 1948թ. հոկտեմբերի 1-ը: Այն պետք է ուժի մեջ մնա նախ և առաջ 10 տարի, մինչև Հոգաբարձուների խորհուրդը անհրաժեշտ համարի մոտակա ժամանակում կրկին քննության առնել այդ կետերը: Այդ ժամանակահատվածը լրանալուց հետո ողջ սխեման պետք է վերաքննության ենթարկվի Հոգաբարձուների խորհրդի կողմից՝ այն փորձի հաշվառմամբ, որը ձեռք է բերվել նրա գործողության ժամանակաշրջանում: Քաղաքի բնակիչները պետք է ազատ լինեն հանրաքվեի միջոցով արտահայտելու իրենց կամքը՝ քաղաքի վարչակարգի հնարավոր փոփոխությունների հանդեպ:

Մաս 4. Կապիտուլյացիա

Պետությունները, որոնց քաղաքացիները Պաղեստինում անցյալում օգտվել են օտարերկրացիների առավելություններից և անձեռնմխելիությունից՝ ներառյալ հյուպատոսական իրավասությունը և պաշտպանությունը, նախկինում Օսմանյան կայսրությունում օժտված են եղել կապիտուլյացիայի կամ ավանդութային արտոնություններով, առաջարկվող արաբական և հրեական պետություններում և Երուսաղեմ քաղաքում՝ ազատ են հրաժարվելու իրենց պատկանող յուրաքանչյուր իրավունքից կամ վերականգնելու իրենց ունեցած այդ առավելություններն ու անձեռնմխելիությունը:



*Հավելված 6*

ՄԱԿ-Ի ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 242 ԲԱՆԱՁԵՎԸ[609]

*1967թ. նոյեմբերի 22*

Անվտանգության Խորհուրդը՝

Ծարունակ մտահոգություն արտահայտելով Մերձավոր Արևելքում տիրող ծանր իրավիճակի վերաբերյալ,

Ծեշտելով այն հանգամանքը, որ ՄԱԿ-ի անդամ երկրները ընդունելով ՄԱԿ-ի կանոնադրությունը, պարտավորվել են գործել այդ կանոնադրության 2 հոդվածին համապատասխան՝

1. Վերահաստատում է, որ կանոնադրության սկզբունքների իրականացումը պահանջում է արդար և տևական խաղաղության հաստատում Մերձավոր Արևելքում, որը պետք է ներառի հետևյալ սկզբունքների իրագործումը՝
   (i) Իսրայելի զինված ուժերի դուրսբերում վերջին բախման ընթացքում գրաված տարածքներից
   (ii) Թշնամական վիճակի կամ կոչերի վերացում և տարածաշրջանի յուրաքանչյուր պետության ինքնիշխանության և քաղաքական անկախության, ինչպես նաև խաղաղության մեջ և անվտանգ ու ճանաչված սահմաններում սպառնալիքներից կամ ուժի գործադրումից ազատ, խաղաղ պայմաններում ապրելու նրանց իրավունքների հարգում և ճանաչում:
2. Վերահաստատում է անհրաժեշտությունը՝
   (a) Տարածաշրջանում միջազգային ջրային ուղիներով ազատ նավագնացության ապահովումը,
   (b) փախստականների խնդրի արդար կարգավորումը,
   (c) Տարածաշրջանի յուրաքանչյուր պետության քաղաքական անկախության և սահմանների անձեռնմխելիության ապահովումը տարբեր միջոցներով՝ ներառյալ ապառազմականացված գոտիների ստեղծումը:
3. Պետությունների հետ կապ հաստատելու և պահպանելու համար խնդրում է Գլխավոր քարտուղարին Մերձավոր Արևելքում հատուկ ներկայացուցիչ նշանակել՝ համաձայնագիրը խթանելու և սույն բանաձևի սկզբունքների ու դրույթների հիման վրա խաղաղ և

[609] http://domino.un.org/UNISPAL.NSF/d744b47860e5c97e85256c40005d01d6/7d35e1f729df491c85256ee700686136!OpenDocument

փոխըմբռնման կարգավորմանն ուղղված ջանքերին աջակցելու նպատակով:
4. Խնդրում է որ Գլխավոր քարտուղարը հնարավորին սեղմ ժամկետներում հաշվետվություն ներկայացնի Անվտանգության խորհրդին հատուկ ներկայացուցչի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ:



*Հավելված 7*

ՄԱԿ-Ի ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 338 ԲԱՆԱՁԵՎԸ[610]

*1973թ. հոկտեմբերի 22*

Անվտանգության Խորհուրդը,

1. բոլոր հակամարտող կողմերին *կոչ է անում* անմիջապես դադարեցնել կրակը և վերջ տալ բոլոր տեսակի ռազմական գործողություններին տվյալ որոշման ընդունման պահից սկսած 12 ժամից ոչ ուշ, այն դիրքերում, որոնք նրանք ներկայումս զբաղեցնում,
2. *կոչ է անում* բոլոր շահագրգիռ կողմերին՝ կրակի դադարեցումից անմիջապես հետո իրականացնել Անվտանգության խորհրդի 242 (1967թ.) որոշումն իր բոլոր կողմերով,
3. *որոշում է,* որ կրակի անմիջապես ու փոխադարձ դադարեցմանը զուգահեռ, պետք է բանակցություններ սկսել շահագրգիռ կողմերի միջև՝ Միջին Արևելքում համապատասխան հովանավորությամբ արդար և տևական խաղաղության հաստատման նպատակով:

[610]http://domino.un.org/UNISPAL.NSF/d744b47860e5c97e85256c40005d01d6/7fb7c26fcbe80a31852560c50065f878!OpenDocument

*Հավելված 8*

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԻՍՐԱՅԵԼԻ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ ՄԻՋԵՎ ՈՒԺԵՐԻ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ[611]

*Մայիս 31, 1974*

---

- *Իսրայելի և Սիրիայի միջև ուժերի բաժանման և տարանջատման վերաբերյալ բանակցությունները տեղի ունեցան 1974թ. փետրվար-մարտ ամիսներին, հոկտեմբերյան պատերազմից հետո, երբ իսրայելական և սիրիական ներկայացուցիչները Վաշինգտոնում ներկայացրեցին սեփական նախնական դիրքորոշումները ԱՄՆ պետքարտուղար Հ.Քիսինջերին: Այնուհետև, ԱՄՆ-ի պետքարտուղարը մայիսն անցկացրեց Մերձավոր - Արևելքում ճամփորդելով երկու երկրների միջև: Արդյունքում Իսրայելի կառավարությունը մայիսի 29-ին հաստատեց առաջարկված համաձայնագիրը, որը ստորագրվեց մայիսի 31-ին՝ Ժնևում, երկու կողմերի բարձրաստիճան զինվորական ներկայացուցիչների կողմից: Ստորև ներկայացնում ենք համաձայնագրի տեքստը և կցված արձանագրությունը ՄԱԿ-ի Տարանջատման Դիտորդական Ուժի (ՏԴՈՒ - United Nations Disengagement Observer Force (UNDOF)) գործունեության վերաբերյալ:*

---

Ա. Իսրայելն ու Սիրիան խստորեն կղիտարկեն զինադադարը ցամաքի վրա, ծովում և օդային տարածքում ու ձեռնպահ կմնան իրար նկատմամբ բոլոր տեսակի ռազմական գործողությունների իրականացումից՝ սույն փաստաթղթի ստորագրման պահից և ի կատարումն՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից 1973թ. հոկտեմբերի 22-ին ընդունված հ.338 բանաձևի:

Բ. Իսրայելի և Սիրիայի զինված ուժերը կբաժանվեն համաձայն ստորև ներկայացված սկզբունքների.

[611] http://www.mfa.gov.il/MFA/Foreign+Relations/Israels+Foreign+Relations+since+1947/1947-1974/29+Agreement+on+Disengagement+of+Forces+between+Is.htm



1. Իսրայելական բոլոր զինված ուժերը պետք է տեղակայվեն կից ներկայացված քարտեզի վրա նշված Ա Գծից արևմուտք, բացառությամբ Կունեյտրայի շրջանից, ուր նրանք կտեղակայվեն Ա-1 Գծից արևմուտք:
2. Ա Գծից արևելք գտնվող տարածքը կդրվի սիրիական վարչակազմի վերահսկողության տակ և սիրիական քաղաքացիական բնակչությունը կվերադառնա այդ տարածք:
3. Ա Գծի և Բ Գծի միջև ընկած տարածքը կհամարվի բաժանման տարածք, ուր կտեղակայվի ՄԱԿ-ի *Տարանջատման Դիտորդական Ուժը*՝ համաձայն կցված արձանագրության:
4. Սիրիական բոլոր զինված ուժերը կլինեն կցված քարտեզի վրա նշված Բ Գծից արևելք:
5. Նախատեսվում է երկու հավասար տարածքներում սահմանափակել զինտեխնիկայի և ուժերի ներկայությունը՝ Ա Գծից արևմուտք և Բ Գծից արևելք՝ պայմանավորվածության համաձայն:

Գ. Երկու կողմերի օդային ուժերի կթույլատրվի գործողություններ իրականացնել մինչև իրենց համապատասխան գծերը առանց հակառակ կողմի միջամտության:

Դ. Ա Գծի և Բ Գծի միջև կցված քարտեզի վրա որևէ զինված ուժեր չպետք է լինեն:

Ե. Այս համաձայնագիրն ու կցված քարտեզը կստորագրվեն Իսրայելի և Սիրիայի զինվորական ներկայացուցիչների միջև Ժնևում ոչ ուշ քան 1974թ. մայիսի 31-ը՝ Ժնևի խաղաղության համաժողովի եգիպտա-իսրայելական զինվորական աշխատանքային խմբում, ՄԱԿ-ի հովանու ներքո, խմբին սիրիական ԶՈՒ ներկայացուցչի, ինչպես նաև ԱՄՆ-ի ու ԽՍՀՄ-ի ներկայացուցիչների մասնակցությունն ապահովելուց հետո: Մանրամասն քարտեզագրումը և ուժերի տարանջատումն իրականացնելու ծրագիրը կմշակվի Իսրայելի և Սիրիայի ներկայացուցիչների կողմից՝ եգիպտա-իսրայելական զինվորական աշխատանքային խմբում, ուր համաձայնություն ձեռք կբերվի այդ գործընթացի փուլերի վերաբերյալ: Զինվորական աշխատանքային խումբը կսկսի աշխատանքները սույն համաձայնագիրը ստորագրելուց հետո 24 ժամվա ընթացքում: Այս խնդիրը նրանք կավարտեն 5 օրվա ընթացքում: Տարանջատումը կսկսի գործել զինվորական աշխատանքային խմբի աշխատանքների

ավարտից 24 ժամ հետո: Տարանջատման գործընթացը կավարտվի ոչ ուշ, քան սկսվելուց 20 օր հետո:

Զ. Ա,Բ,Գ- հոդվածների դրույթները պետք է վերահսկվի ՄԱԿ-ի *Տարանջատման Դիտորդական Ուժի* կողմից:

Է. Ժնևում սույն համաձայնագրի ստորագրումից 24 ժամ հետո բոլոր պատերազմի գերիները, որոնք գտնվում են կողմերի մոտ, ինչպես հաստատված է Միջազգային Կարմիր Խաչի կազմակերպության կողմից, պետք է վերադարձվեն: Զինվորական աշխատանքային խմբի աշխատանքները ավարտելուց հետո հաջորդ առավոտյան բոլոր մնացած գերիները պետք է վերադարձվեն:

Ը. Սույն համաձայնագիրը ստորագրելուց հետո 10 օրվա ընթացքում զոհված բոլոր զինվորների դիակները պետք է վերադարձվեն՝ իրենց երկրներում թաղումն իրականացնելու համար:

Թ. Սույն համաձայնագիրը խաղաղության համաձայնագիր չէ: Այն քայլ է արդար և տևական խաղաղության ուղղությամբ ՄԱԿ-ի ԱԽ-ի 1973թ. հոկտեմբերի 22-ի, N338 բանաձևի հիման վրա:

Արձանագրություն ՄԱԿ-ի *Տարանջատման Դիտորդական Ուժի վերաբերյալ*

*Սիրիան և Իսրայելը համաձայնվեցին հետևյալի մասին.*

Սույն համաձայնագրով ՄԱԿ-ի Տարանջատման Դիտորդական Ուժի /ՏԴՈՒ/ գործառույթն է հանդիսանում ջանքերի լավագույն գործադրումը՝ զինադադարը պահպանելու և հավաստիացնելու, որ այն խստորեն իրականացվում է: Նա վերահսկելու է համաձայնագիրն ու արձանագրությունը՝ բաժանման ու սահմանափակումների շրջանի մասով: Իր առաքելությունը իրականացնելիս, նա պետք է առաջնորդվի սիրիական գործող օրենքներով ու կարգերով և չխոչընդոտի տեղական քաղաքացիական վարչակազմի գործունեությունը: Նա կունենա ազատ տեղաշարժվելու և հաղորդակցվելու և այլ հնարավորություններ, որոնք անհրաժեշտ կլինեն նրա առաքելության համար: Նա կլինի շարժունակ և կապահովվի անձնական պաշտպանական բնույթի զենքով, որը կօգտագործվի միայն ինքնապաշտպանության համար: ՄԱԿ-ի Տարանջատման Դիտորդական Ուժի /ՏԴՈՒ/ քանակը կլինի շուրջ 1200 զինվոր, որոնք կընտրվեն ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի կողմից՝ ՄԱԿ-ի այն պետությունների շարքից, որոնք ԱԽ մշտական անդամ չեն:
ՏԴՈՒ-ն գտնվելու է ՄԱԿ-ի հրամանատարության տակ:



ՏԴՈՒ-ն կիրականացնի համաձայնագրից բխող ստուգումներ և պարբերաբար՝ոչ պակաս քան 15 օրը մեկ, կողմերին զեկույց կներկայացնի:
Իսրայելը և Սիրիան կաջակցեն ՄԱԿ-ի ԱԽ-ի բանաձևի ընդունմանը, որը սույն համաձայնագրից բխող լիազորություններ կտրամադրի ՏԴՈՒ-ին:
Սկզբնական վավերացումը կլինի 6 ամսվա համար, որն էլ կնորոգվի ԱԽ-ի համապատասխան բանաձևով:

*Հավելված 9*

## ԳՈԼԱՆԻ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՔԸ[612]

*Դեկտեմբեր 14, 1981*

---

- *Այս օրենսդրությունը, որն ընդունվել է կնեսետի կողմից մեծամասնությամբ, 63 ձայն 21-ի դիմաց, տարածում է Իսրայելի օրենքը Գոլանի Բարձունքների վրա: Կողմ քվեարկողների թվում էին ընդդիմադիր Աշխատանքի կուսակցության 8 անդամները: Ներկայացնելով սույն օրենքը, վարչապետ Մ.Բեգինը նշել է, որ ժամանակն է իրականացնել կառավարության քաղաքականությունը Գոլանի բարձունքներում և ընդգծել է Սիրիայի անբաքույց թշնամական կեցվածքը Իսրայելի նկատմամբ, նաև վերջերս Լիբանանում տեղակայված սիրիական հրթիռների տեղակայման փաստը: Նա հիշեցրել է նախարարներին, որ Սիրիայի նախագահը մերժել է Իսրայելի հետ որևէ կապեր հաստատելուց, անգամ եթե ՊԱԿ-ն էլ ճանաչի Իսրայելը:*

---

Տեքստը

1. Պետության օրենքը, արդարադատությունն ու կառավարումը պետք է տարածվեն Գոլանի բարձունքների վրա, ինչպես նշված է Հավելվածում:
2. Սույն Օրենքը ուժի մեջ է մտնում կնեսետի կողմից այն հաստատելու օրվանից:
3. Ներքին գործերի նախարարի վրա է դրվում սույն օրենքի կիրառումը, և նա, Արդարադատության նախարարի հետ խորհրդակցելով, պատասխանատու է սույն օրենքից բխող կարգի գործադրման և անցումային դրույթների մշակման ընթացքում ապահովել Գոլաններում մինչ սույն Օրենքի կիրառումը՝ հրամանների, վարչական հանձնարարականների, իրավունքների և պարտականությունների կատարման շարունակականությունը:

---

[612] http://www.mfa.gov.il/MFA/Foreign%20Relations/Israels%20Foreign%20Relations%20since%201947/1981-1982/83%20The%20Golan%20Heights%20Law%20-%205742-1981-%2014%20December



*Հավելված 10*

## ՍԻՐԻԱՅԻ ԵՎ ԻՍՐԱՅԵԼԻ ՄԻՋԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԾՐՋԱՆԱԿ

*/Նախագիծ/*

---

Խաղաղության համաձայնագրի այս նախագիծը ներկայացվել էր Քլինտոնի վարչակազմի կողմից Դամասկոսին և Թել-Ավիվին: Իսրայելական «Հաարեց» օրաթերթում համաձայնագրի ստորև ներկայացվող տեքստի հրապարակումը 2000թ. հունվարի 13-ին խափանեց Վիրջինիա նահանգի Շեփերդստաունի բնակավայրում սիրիա-իսրայելական վերջին բանակցությունները: Այն նպատակահարմար ենք գտել ներկայացնել բնագրով:

---

TREATY OF PEACE BETWEEN THE STATE OF ISRAEL AND THE SYRIAN ARAB REPUBLIC
PREAMBLE
The Government of the State of Israel and the Government of the Syrian Arab Republic:
Aiming at the achievement of a just, lasting and comprehensive peace in the Middle East based on Security Council resolutions 242 and 338 and within the framework of the peace process initiated at Madrid on 31 October 1991;
Reaffirming their faith in the purposes and principles of the Charter of the United Nations and recognizing their right and obligation to live in peace with each other, as well as with all states, within secure and recognized boundaries;
Desiring to establish mutual respect and to develop honorable, friendly and good neighborly relations;
Resolved to establish permanent peace between them in accordance with this Treaty.
Have agreed as follows:
ARTICLE I - Establishment of Peace and Security within Recognized Boundaries.
1. The state of war between Israel and Syria (hereinafter "the Parties") is hereby terminated and peace is established between them. The Parties will maintain normal, peaceful relations as set out in Article III below.
2. The permanent secure and recognized international boundary between Israel and Syria is the boundary set forth in Article II below. The location of the boundary has been commonly agreed (Syrian position: and is based on the June 4, 1967 line) (Israeli position: taking into account security and other vital interests of the Parties as well as legal considerations of both sides). Israel will

(S: withdraw) (I: relocate) all its armed forces (S: and civilians) behind this boundary in accordance with Annex --- of this Treaty. (S: Thereafter, each Party will exercise its full sovereignty on its side of the international boundary, including as agreed in this Treaty.)

3. To enhance the security of both Parties, agreed security measures will be implemented in accordance with Article IV below.

4. The time line at Annex --- sets forth an agreed schedule for synchronized implementation of this and the other Articles of this Treaty.

ARTICLE II - International Boundary

1. The international boundary between Israel and Syria is as shown on the mapping materials and co-ordinates specified in Annex ---. This boundary is the permanent, secure and recognized international boundary between Israel and Syria and supercedes any previous boundary or line of demarcation between them.

2. The Parties will respect the inviolability of this boundary and of each other's territory, territorial waters and airspace.

3. A Joint Boundary Commission is hereby established. Its functions and activities are set out in Annex ---.

ARTICLE III - Normal Peaceful Relations

1. The Parties will apply between them the provisions of the Charter of the United Nations and the principles of international law governing relations among states in time of peace.

In particular:

a. they recognize and will respect each other's sovereignty, territorial integrity and political independence and right to live in peace within secure and recognized boundaries; and

b. they will establish and develop friendly and good neighborly relations, will refrain from the threat or use of force, directly or indirectly, against each other, will cooperate in promoting peace, stability and development in their region and will settle all disputes between them by peaceful means.

2. The Parties will establish full diplomatic and consular relations, including the exchange of resident ambassadors.

3. The Parties recognize a mutuality of interest in honorable and good neighborly relations based on mutual respect and for this purpose will:

a. promote beneficial bilateral economic and trade relations including by enabling the free and unimpeded flow of people, goods and services between the two countries.

b. remove all discriminatory barriers to normal economic relations, terminate economic boycotts directed at the other Party, repeal all



discriminatory legislation, and cooperate in terminating boycotts against either Party by third parties.

c. promote relations between them in the sphere of transportation. In this regard, the Parties will open and maintain roads and international border crossings between the two countries, cooperate in the development of rail links, grant normal access to its ports for vessels and cargoes of the other or vessels or cargoes destined for or coming from that Party, and enter into normal civil aviation relations.

d. establish normal postal, telephone, telex, data facsimile, wireless and cable communications and television relay services by cable, radio and satellite between them on a non-discriminatory basis in accordance with relevant international conventions and regulations; and

e. promote cooperation in the field of tourism in order to facilitate and encourage mutual tourism and tourism from third countries.

Annex --- sets forth the agreed procedures for establishing and developing these relations, (I: including the schedule for the attainment of relevant agreements as well as arrangements concerning the Israelis and Israeli communities in areas from which Israeli forces will be relocated pursuant to Article I).

4. The Parties undertake to ensure mutual enjoyment by each other's citizens of due process of law within their respective legal systems and before their courts.

(Notes: (I) Components of normal peaceful relations which require further discussion: cultural relations; environment; interconnection of electricity grids; energy; health and medicine; and agriculture.

(II) Other possible areas for consideration: combating crime and drugs; anti-incitement cooperation; human rights; places of historical and religious significance and memorials; legal cooperation in the search for missing persons.)

ARTICLE IV - Security

*A. Security Arrangements*

Recognizing the importance of security for both Parties as an important element of permanent peace and stability, the Parties will employ the following security arrangements to build mutual confidence in the implementation of this Treaty and to provide for the security needs of both Parties:

1. Areas of limitation of forces and capabilities, including limitations on their readiness and activities, and on armaments, weapon system and military infrastructure, as described in Annex ---.

2. Within the areas of limitation of forces and capabilities, the establishment of a demilitarized zone (I: encompassing both the area from which Israeli forces will be relocated and the existing Area of Separation established under the

Agreement on Disengagement between Israeli and Syrian Forces of 31 May 1974) (S: of equal scope on both sides of the border). As described in Annex ---, no military forces, armaments, weapon systems, military capabilities, or military infrastructure will be introduced into the demilitarized zone by either Party and only a limited civil police presence may be deployed in the area. (I: Both sides agree not to fly over the demilitarized zone without special arrangements.)

3. Early warning capabilities, including an early warning ground station on Mt. Hermon (I: with an effective Israeli presence) (S: operated by the United States and France under their total auspices and responsibilities). Arrangements for the unimpeded, efficient and continuous operation of this station are as detailed in Annex ---.

4. A monitoring, inspection and verification mechanism (I: composed of the two Parties and a multinational component and including on-site technical means) (S: through an international presence), to monitor and supervise the implementation of the security arrangements.

Details regarding these security arrangements, including their scope, positioning and nature, as well as other security arrangements, are specified in Annex ---.

*B. Other Security Measures*

As further steps to ensure a permanent cessation of hostilities of any form between the Parties or from their territories against each other.

1. Each Party undertakes to refrain from cooperating with any third party in a hostile alliance of a military character and will ensure that territory under its control is not used by any military forces of a third party (including their equipment and armaments) in circumstances that would adversely affect the security of the other Party.

2. Each Party undertakes to refrain from organizing, instigating, inciting, assisting or participating in any acts or threats of violence against the other Party, its citizens or their property wherever located, and will take effective measures to ensure that no such acts occur from, or are supported by individuals on, its territory or territory under its control. In this regard, without prejudice to the basic rights of freedom of expression and association, each Party will take necessary and effective measures to prevent the entry, presence and operation in its territory of any group or organization, and their infrastructure, which threatens the security of the other Party by the use of, or incitement to the use of, violent means.

3. Both Parties recognize that international terrorism in all its forms threatens the security of all nations and therefore share a common interest in the enhancement of international cooperative efforts to deal with this problem.

*C. Cooperation and Liaison in Security Matters*



The Parties will establish a direct liaison and coordination mechanism between them as described in Annex --- to facilitate implementation of the security provisions in this Treaty. Its responsibilities will include: direct and real-time communication on security issues, minimization of friction along the international border, addressing any problems arising during the implementation process, helping to prevent errors or misinterpretations, and maintaining direct and continuous contacts with the monitoring, inspection and verification mechanism.

ARTICLE V - Water

1. The Parties recognize that full resolution of all water issues between them constitutes a fundamental element in ensuring a stable and lasting peace. (S: Based on relevant international principles and practices), the Parties have agreed to establish (I: arrangements that will ensure the continuation of Israel's current use in quantity and quality of all) (S: mutually agreeable arrangements with respect to water quantities and quality from) the surface and underground waters in the areas from which Israeli forces will (I: relocate) (S: withdraw) pursuant to Article I, as detailed in Annex ---. (I: The arrangements should include all necessary measures to prevent contamination, pollution or depletion of the Kinneret/Tiberias and Upper Jordan River and their sources.)

2. For the purposes of this Article and Annex ---, the Parties will establish (I: a Joint Water Committee and a supervision and enforcement mechanism) (S: a Joint Administrative Board). The composition, mandate and mode of operations of the (I: Joint Water Committee and the supervision and enforcement mechanism) (S: Joint Administrative Board) will be as detailed in Annex ---.

3. The Parties have agreed to cooperate on water-related matters, as detailed in Annex ---, (I: including ensuring the quantity and quality of water allocated to Israel under other agreements concerning water originating in Syria.)

ARTICLE VI - Rights and Obligations

1. This Treaty does not affect and shall not be interpreted as affecting in any way the rights and obligations of the Parties under the Charter of the United Nations.

2. The Parties undertake to fulfill in good faith their obligations under this Treaty, without regard to action or inaction of any other Party and independently of any instrument external to this Treaty.

3. The Parties will take all the necessary measures for the application in their relations of the provisions of the multilateral conventions to which they are Parties, including the submission of appropriate notification to the Secretary General of the United Nations and other depositories of such conventions. They will also abstain from actions that would curtail the rights of either Party to participate in international organizations to which they belong in accordance with the governing provisions of those organizations.

4. The Parties undertake not to enter into any obligation in conflict with this Treaty.
5. Subject to Article 103 of the United Nations Charter, in the event of a conflict between the obligations of the Parties under the present Treaty and any of their other obligations, the obligations under this Treaty will be binding and implemented.
ARTICLE VII - Legislation
The Parties undertake to enact any legislation necessary in order to implement the Treaty, and to repeal any legislation that is inconsistent with the Treaty.
ARTICLE VIII - Settlement of Disputes
Disputes between the Parties arising out of the interpretation or application of the present Treaty shall be settled by negotiation.
ARTICLE IX - Final Clauses
1. This treaty shall be ratified by both Parties in conformity with their respective constitutional procedures. It shall enter into force on the exchange of instruments of ratification and shall supercede all previous bilateral agreements between the Parties.
2. The Annexes and other attachments attached to this Treaty shall constitute integral parts thereof.
3. The Treaty shall be communicated to the Secretary General of the United Nations for registration in accordance with the provisions of Article 102 of the Charter of the United Nations.

DONE THIS DAY ------ IN -------- IN THE ENGLISH, HEBREW AND ARABIC LANGUAGES, ALL LANGUAGES BEING EQUALLY AUTHENTIC. IN CASE OF ANY DIVERGENCE OF INTERPRETATION, THE ENGLISH TEXT WILL BE AUTHORITATIVE



# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

## 1. Արխիվային նյութեր-Պաշտոնական փաստաթղթեր-Հաղորդագրություններ-Տեղեկատու գրականություն

*ա/ արաբերեն*


1. . المنهج الحزبى. حزب البعث العربى الأشتراكي، القيادة القومية. دمشق، 1965،ص121.
2. أحتفاليات الذكرى الخامسة والعشرين لتأسيس حزب البعث العربى الأشتراكى. دمشق، 1973، ص61.
3. حافظ الأسد. مجموعة كتب فريده القائد حافظ الأسد، الكتاب الأول24/11/1970، 30/8/1971 ،دمشق، 1971،ص356.
4. حزب البعث العربى الأشتراكى. القيادة القومية بعد المنطلاقة النظرية التي أقرها المؤتمر القومى السادس فى تشرين الأول 1963. دمشق، 1967، ص25.
5. حزب البعث العربى الأشتراكى. فى التنظيم والتربية الحزبية. بيروت، 1971،ص118.
6. حزب البعث العربى الأشتراكى. القطر العربى السورى، القضية القطرية لتقارير المؤتمر القطرى الثامن وقراراته وتقاريره فى دمشق فى الفترة الواقعة بين 1985/1/5 – 1985/1/2. التقرير التنظيمى، التقرير السياسى، التقرير الأقتصادى. دمشق، 1985،ص59.
7. حزب الأتحاد الأشتراكى العربى فى سوريا، القطر السورى يمر بأزمة وطنية خطيرة، دمشق، 1979،ص38.
8. دراسة تحليلية موجزة لنضال حزب البعث العربى الأشتراكى 1943-1971. دمشق، 1973، ص201.

9. قضايا الخلافة فى الحزب الشيوعى السورى. بيروت، 1972،ص145.

10. قيادة الثورة الأسلامية فى سوريا، بيان الثورة الأسلامية فى سوريا ومنهجها، دمشق،1980، ص98.

11. نضال البعث فى سبيل الوحدة الحرية الأشتراكية. بيروت، 1963-1964،ص221.

12. نضال البعث 1943-1949. بيروت، 1963،ص209.

13. نضال حزب البعث 1943-1975. دمشق، 1978،ص398.


*բ/ անգլերեն*


14. Arab Summit Conferences and the Palestine Problem (1936-1950), (1964-1966).
15. A Select Chronology and Background Documents relating to the Middle East.-Washington, 1975.
16. Camp-David Framework for Peace in the Middle East, September 17,1978.
17. CIA, World Factbook, Washington 1991-1995, "Syria".
18. CIA, Atlas of the Middle East, Washington, GPO, January, 1993.
19. Circular telegram to Chief of Missions in Arab States from Phillip Talbot, March 18, 1965, Box116, National Security File, Country File, Lyndon J.Baines Johnson Papers, L.B.J.Library, Austin, Texas.
20. Communist Foreign Aid to Arab Countries since 1955, N 96, 8June 1967, DD 139E, 1980.
21. Congressional Research Service Issue Brief, Syrian-US Relations, May 3, 1995, by Alfred B.Prados, Foreign Affairs and National Defense Division.
22. Correspondence between Sir Henry McMahon and the Sharif Hussein of Mecca, July 1915-March 1916. London, 1939.
23. Damascus Domestic Service, 14 October,1974.
24. Department of State Press Bulletin, January 12,1977.
25. Department of State Telegram,196541, of May 17,1967. (Secret declassified August 10,1989).
26. Department of State Telegram 199729 of May 22,1967, (Secret declassified August 24,1990).
27. Divrey Haknesset (Knesset Records, Hebrew), vols. 23-63 (Jerusalem,1957-1972).
28. Documents on American Foreign Relations. Vol.7, 1944-45.Boston, 1947, Jordanian-Palestinian Accord (Jordanian version) February 11,1985.





29. Hearings before the Committe on Foreign Relations United States Senate 93-rd Congress, Washington, 13.12.1973.
30. Israel and Palestine Political Report. 1982. Paris.
31. International Documents on Palestine, (1968-1972) Beirut, Kuwait.
32. Memo of Conversation, 17 May,1968, NSC Secret DD, 1379 (1985), Johnsons Library.
33. Middle East Record, Vol.3,1967, Jerusalem Israeli Universities Press for Shiloah Center for Middle East and African Studies, Tel-Aviv University, 1971.
34. National Archives (NA), Washington. Documents for the Department of State (DOS),1948-1961.
35. National Security File, Country File, Lyndon J.Baines Johnson
36. Papers, L.B.J.Library, Austin, Texas.
37. Press Release. Department of State. Bureau of Public Affairs. September 29,1975.
38. Public Record Office, Foreign Office (FO 371) dispatches to and from Beirut, Damascus, Tel-Aviv, 1948-1962.
39. Public Papers of the President of the United States Richard Nixon, 1974 (Washington,1975).
40. Public Papers of the President of the United States Gerald Ford, 1975 (Washington, 1977).
41. Rabat Resolution, October 28,1974.
42. Report of a Committee Set Up to Consider Certain Correspondence between Sir Henry McMahon and the Sharif of Mecca in 1915 and in 1916. London, 1939
43. Statement on the Results of 9-th Emergency Congress held in Early September 1967.
44. Statistical Abstract, 1971, Damascus, 1971.
45. Statistical Abstract 1976, Damascus 1976.
46. Statistical Abstract 1992, Damascus 1992.
47. Statement on the Results of 9-th Emergency Congress held in Early September, 1967.
48. Summary of World Broadcast, Part 1,SU/8553 A4/1, 28 April 1987.
49. Syrian Arab Republic, Office of the Prime Minister, Central Bureau of Statistics.
50. The Fez Plan (Extracts from the Arab League Summit Statement) September 6,1982.
51. "The Syrian Policy towards Israel", c.f. Foreign Office 371/104757 Damascus, 25 November 1953.
52. The Arab States and the Arab League, A Documentary Record, vol.1, Beirut, 1962.

53. The Arab Baath Socialist Party.National Ledership. Statement on the Results of the 10-th National Congress. September 1968- Damascus, 1968.
54. The Arab-Israeli Conflict. Readings and Documents.-New Jersey, 1977.
55. United Nations Yearbooks and Supplements.
56. United States. Foreign Broadcast Information Service. Negotiating Peace with Syria: Selected Statements by Rabin and Peres. Washington, June 1995
57. US Policy and Diplomacy in the Middle East Crisis, May 15-June 10, 1967, unpublished manuscripts, National Security File, NSC History, Middle East Crisis, Johnsons Papers.
58. US Foreign Policy, 1972. A Report of the Secretary of State, April 1973.
59. US Foreign Policy for the 1970`s. A Report to the Congress by Richard Nixon, February 25,1974 .
60. US Secretary of State to the President, Confidential, 20 Aug.1957, DD 2094 (1987);
61. US President to British Prime Minister, Top Secret 22 Aug.1957, DD2091 (1987)
62. "Vital Speeches of the Day", New-York,1957.
63. Who's Who in the Arab World, Second Edition 1967-68, Beirut.


*գ/ այլ լեզուներով*


64. Հայկական Հարց, Հանրագիտարան, Հայկական Հանրագիտարան. Գլխավոր խմբագրություն, Երևան,1996
65. Архив Внешней Политики Российской Федерации. Ф.128.Оп.14.П.16.Д.22.Л.39-40,60-63
66. "Внешняя политика Советского Союза", Москва,1975,
67. Современная Сирия. (Справочник), Изд-во Наука, Москва, 1974.
68. Statistishes Bundesamt Wiesbaden:Allgemeine Statistik des Auslandes, Landerkurzberichte, *Syrien*, Stuttgart/Mainz, 1967-1978.


## 2. Մենագրական ուսումնասիրություններ - Հոդվածներ

*ա/ արաբերեն*


68- الأيسامى شبلى. فى الثورة العربية. بيروت، 1969،ص 215.

69- العبدالله حميدى. استراتيجية الأسد. دراسة فى التوازن الأستراتيجى بين سوريا واسرائيل بيروت، 1995،ص314.

70- العزم خالد. مذكرات خالد العزم المجلد الثانى. بيروت .دار المتحدة للنشر، 1971 ،ص428.





71- البرازى تاما. ملفات المعارضة فى سوريا. قاهرة، 1994 ،ص22-28.

72 - الحريرى أبوموسى. العلويون .بيروت، 1980 ،ص5-34.

73- الجندى سامى. البعث. بيروت، 1969 ،ص297.

74- الرزاز منيف. الوحدة بعد الحرب رمضان " القضية العربية" ،1974،ص 23-45.

75- الغطسى صفوان. البطل والتاريخ جراء فى فكر حافظ الأسد السياسى. دمشق، 1984،ص32- 46 .

76- النصولى أنيس زكريا. أسباب النهضة العربية فى القرن التاسع عشر. بيروت، 1926/1345،ص456.

77- الرزاز منيف. التجربة المرة. بيروت، 1991 ،ص 10-52.

78- افلاق ميشيل. فى سبيل البعث. بيروت، 1959 ،ص102.

79- بعض القضايا القومية. بيروت، 1975 ،ص56-99.

80- باكرادونى كريم. السلام المفقود. بيروت، 1984 ،ص6-34، 68-91.

81- بازى ناجى عبدالنبى. سوريا: صراع الأستقطاب/ دراسة وتحليل لأحداث الشرق الأوسط والتدخلات الدولية فى أحداث سوريا 1917-1973. دمشق، 1975،ص431.

82- جبور جورج. الفكر السياسى المعاصر فى سوريا. بغداد، 1988، ص365.

83- حول الوحدة العربية. بيروت، 1974.

84- خيرية قومية. فلسطين فى مذكرات فوزى الكاوكجى. بيروت، 1975، ص230

85 - خليل هانى. حافظ الأسد: الدولة الديمقراطية الشعبية. دمشق، 1992 ،ص25-66.

86- خليل هانى. حافظ الأسد: الإيودلوجية الدولية والفكر السياسى، دمشق، 1992 ،ص320.

87- زين نور الدين زين، الصراع الدولى فى الشرق الأوسط وولادة دولتا سوريا ولبنان ، بيروت، 1958، ص305.

88- صايغ أنيس. الهاشيميون والثورة العربية الكبرى. بيروت، 1966، ص33-96.

89- طلاس مصطفى. الرسول العربى وفن الحرب. دمشق، 1972 ،ص98.

90- طلاس مصطفى. كذلك قال الأسد. دمشق، 1993 ،ص125.

91- طلاس مصطفى . مرايا حياتي العقد الثاني. دمشق، 1995 ،ص 13-31.

92- عبدالله فكرى الخانى. جهاد شكرى القوتلى فى سبيل الأستقلال والوحدة. لبنان دار النفايس، 2003، ص 104.

93- عادل حافظ. حافظ الأسد، قائد وأمة. دمشق، 1993،ص 301.

94- عطية جورج. نزهة الفكرية السورية وتطورها/ فكر 39. بيروت، 1980 ،ص 25-98.

95- عواد رياض سليمان . نضال المنظمات الشعبية من فجر التصحيح حتى اليوم. دمشق، 1990 ، ص101-131.

96- عواد رياض سليمان. الديمقراطية والسلام فى نهج حافظ الأسد. دمشق، 1992 ،ص254.

97- عواد رياض سليمان. حافظ الأسد وتجربة الجبهة الوطنية التقدمية فى سوريا. دمشق، 1992 ، ص 14-65.

98- عواد رياض سليمان. النافع فى سياسة حافظ الأسد . دمشق، 1993 ،ص198.

99- عواد رياض سليمان. الشهيد الحى باسل الأسد. دمشق، 1994 ،ص104.

100- عواد رياض سليمان. حركة التاريخ ووحدة الأمة فى فكر حافظ الأسد. دمشق، 1995 ،ص97- 212.

101- عواد رياض سليمان. حافظ الأسد والنظام الدولى الجديد . دمشق، 1995 ،ص20-28.

102- عواد رياض سليمان. حافظ الأسد والسلام فى الشرق الأوسط . دمشق، 1995 ،ص34-115.

103- فلسفة الحركة القومية العربية، بيروت، 1977-1978 ، ص25-46.

104- فرزات محمد. الحياة الحزبية فى سوريا بين 1908 و1955. دمشق، 1968 ،ص 401.

105- كرد على محمد. مجلات المجمع العلمى العربى بدمشق. دمشق، 1926،ص66- 118

106- معلم وليد. سوريا، 1918-1958، دمشق 1985، ص 111-164.

107- موت سافاتى. حزب البعث ، بيروت، 1964 ،ص106.

108- حلو مرغريت.السياسة السورية فى لبنان:أهداف والأساليب،الدفاع الوطن اللبنانى. بيروت 1989ص74- 105

109- هوفهانيسيان نيكولاى. العلاقة التاريخية الأرمنية العربية. قاهرة، 2008 ،ص52.




*բ/ անգլերեն*


110. Abd-Allah, Umar. The Islamic Struggle in Syria. Mizan Press, Berkeley, 1983.
111. Abu Jaber, K. The Arab Ba'th Socialist Party. Syracuse, NY, 1966.
112. Abu Manneh, Butrus. The Christians between Ottomanism and Syrian Nationalism: The Ideas of Butrus Bustani. *International Journal Of Middle Eastern Studies*, 11, 1980, pp.287-303
113. Agha, Husein & Khalidi, Ahmad. Syria and Iran. Rivalry and Cooperation. The Royal Institute of International Affairs. Chatham Papers. London.1995.
114. Ajami, Fouad.The Vanished Imam. Ithaca, New York, Cornell University Press, 1986.
115. Ajami, Fouad. Arab Nationalism. Ch. XI., The Arab Predicament: Arab Political Thought and Practice since 1967. Cambridge University Press, New York, 1981, pp.260-323.
116. Ajami, Fouad. Geopolitical Illusions. The Middle East and the Western Alliance. Ed.Steven L. Spiegel, London, George Allen & Unwin, 1982, pp.147-162.
117. Alan, George. Syria: It's Good to Talk. *The Middle East*, November 1995.
118. Alan, George. Syria: Neither bread Nor Freedom. Zed Books, London, 2003.
119. Alon, Ben-Meir. The Israeli-Syrian Battle for Equitable Peace. "Middle East Policy", Vol.3, No.1, 1994.-Avi-Ran R, The War of Lebanon: Arab Documents. Tel-Aviv, 1987.
120. Ambrose, Stephen E. Eisenhower, 2vols, New York: Simon & Schuster, 1984,
121. Antonius, George. The Arab Awakening: The story of the Arab nationalist movement. Hamish Hamilton, London. 1938.
122. Armanazi, Gayth. "The Concept of Greater Syria", An-Nahda, Sydney, December 17, 1987.
123. Atkeson, Edward. The Syrian –Israeli Military balance: A Pot That Bears Watching, Arlington, Institute of Land Warfare, Paper No.10,1992.
124. Avi-Ran R. Syrian Involvement in Lebanon, 1975-1985,Tel Aviv, 1986.
125. Baker, James. Politics of Diplomacy. New York 1995.
126. Barnett, M.Michael. Dialogues in Arab Politics: Negotiations in Regional Order, Columbia University Press, 1988, http://www.geocities.com/martinkramerorg/ArabNationalism.htm.
127. Bar-Siman-Tov, Yaacov. Linkage Politics in the Middle East. Syria between Domestic and External Conflict, 1961-1970, Westview Press, 1983.

128. Black September, Beirut,1971, p.143.
129. Bowen, David & Drake, Laura. The Syrian-Israeli Border Conflict, 1949-1967, *The Middle East*, Vol.1, No.4, 1992.
130. Brand, Laurie. Palestinians in Syria: The Politics of Integration. *Middle East Journal*, Vol.42, No.4, Autumn 1988, pp.621-637.
131. Brandon, Henry. The Retreat of American Power. Ch.7. Rogers and the Shifting Sands of the Middle East. Doubleday Company Inc., Garden City, New Your, 1973, pp.106-140.
132. Bregman, Ahron & El-Tahri, Jihan. The Fifty Years of War Israel and the Arabs, BBC Books, 1998.
133. Bronson, Rachel. Syria: Hanging Together or Hanging Separately. *Washington Quarterly*, Autumn 2000, pp.91-105.
134. Brown, Carl L. (ed.), Diplomacy in the Middle East, The International Relations of Regional and Outside Powers, I.B.Tauris, London, 2004.
135. Burdett, Winston. Encounter with the Middle East. An Intimate Report What Lies Behind The Arab-Israeli Conflict. A Damascus Affair. Ch.4, Atheneum, New York,1969, pp.124-179.
136. Cannon, Lou. President Reagan: The Role of a Lifetime. New York: Simon & Schuster, 1991.
137. Carter, Jimmy. Palestine Peace not Apartheid. Simon & Schuster, New York, 2006.
138. Caspit, Ben. Commiting Suicide: A Party Gives up Power. Tel-Aviv.1996.
139. Choueiri, Youssef. State and Society in Syria and Lebanon. St.Martin`s Press. New York, 1994.
140. Cleveland, L. William. A History of the Modern Middle East. 2-nd ed. Boulder, Colorado:Westview Press, 2000.
141. Cobban, Helena. The Superpowers and Syrian-Israeli Conflict. Washington, 1991.
142. Cobban, Helena. Syria and the Peace: A Good Chance Missed. Carlisle Barracks, PA, Army War College. Strategic Studies Institute, 1997.
143. Contemporary Syria. Liberazation between Cold War and Cold Peace. Ed. Eberhard Kienle. British Academic Press, London, 1994.
144. Cordesman, Anthony H. The Middle East and the Cost of The Politics of Force, *Middle East Journal*, vol.40. Winter 1986.
145. Cordesman, Anthony H. Perilous Prospects.The Peace Process and the Arab-Israeli Military Balance.Westview Press, Colorado, 1996.
146. Dawn, Ernest C. The Origins of Arab Nationalism. Ed. By Rashid Khalidi, Lisa Anderson, Muhamed Muslih and Reeve S.Simon, Columbia University Press, New York, 1991, pp.3-29.



147. Dawn, Ernest C. The Foreign Policy of Syria. Diplomacy in the Middle East. The International Relations of Regional and Outside Powers. Ed. By Carl Brown. Part II, Ch.8, I.B.Tauris. London. 2004, pp.159-178.
148. Dawisha, Adeed. Syria and Lebanese Crisis. New York.St. Martins Press, 1980.
149. Dawisha, Adeed. Arab Nationalism in the Twentieth Century. From Triumph to Despair. Princeton University Press, New Jersey, 2003.
150. Delvin, John. Syria: Modern State in an Ancient Land, Westview Press, Boulder, Colorado,1983.
151. Delvin, John. The Ba`th Party: A History. Stanford, Calif.,1976.
152. Dickey, Christopher. Assad and his Allies: Irrecincilable Differences?, *Foreign Affairs*, Vol.66. No.1,1987, pp.58-76.
153. Drysdale, Alasdair & Hinnebusch Raymon. Syria and the Middle East Peace Process, Council on Foreign Relations, New York, 1991, pp.244.
154. Evron Y. War and the Intervention in Lebanon: The Israeli-Syrian Deterrence Dialogue, Baltimore, 1987.
155. Fabian, Larry. War Dangers and Receding Peace Prospects, *Foreign Affairs* Vol. 62. N3, 1984, pp.632-639.
156. Faksh, Mahmud. Syrials Role and Objectives in Lebanon. *Medditerranean Quarterly*, Vol.3, No.2, Spring 1992.
157. Ferrell H.Robert. American Diplomacy. A History. The Middle East and Africa. Ch.29, Indiana University, W.W.Norton & Company Inc. New-York, 1975, pp.734-764.
158. Ford, Peter. Syria`s 3-Part Strategy: Rely on the US. *Christian Science Monitor*. 29.11.1994.
159. Freedman, Robert. Israel under Rabin. Westview Press, Colorado, 1995.
160. Fromkin, David. A Peace to End all Peace. The Fall of the Ottoman Empire and the Creation of the Modern Middle East. Avon Books, New York, 1989.
161. Fry, Michael & Rabinovich Itamar. Dispatches from Damascus. Tel-Aviv, 1985.
162. Garthoff Raymond. Detente and Confrontation: American-Soviet Relations from Nixon to Reagan, Washington D.C. Brookings Institution, 1985.
163. George, Alan. Syria: Neither bread Nor Freedom. Zed Books, London, 2003.
164. George, Lloyd. Memoirs of the Peace Conference, 2Vols. New Haven: Yale University Press, 1939. Vol.2
165. Golan, Galia. Gorbachev`s Middle East Strategy,. Ed. George W.Breslauer. Boston : Unwin Hyman, 1990.
166. Golan, Matti.The Secret Conversations of Henry Kissinger, New York, Quandrangle Books, 1976.

167. Gresh, Alain and Vidal, Dominique. An A to Z of the Middle East. Zed Books Ltd. London.1990, 261 pages.
168. Gresh, Alain and Vidal, Dominique. The New A to Z of the Middle East. I.B.Tauris, London. 2004, 418 pages.
169. Haas, Richard. The Middle East: No More Treaties. *Foreign Affairs*. Vol.75, No.5, September/October 1996.
170. Haddad, George. Fifty Years of Modern Syria and Lebanon. Dar al-Hayat, Beirut, 1950.
171. Haim, Sylvia G. Arab Nationalism: An anthology. University of California Press, London, 1962.
172. Handel Michaell, Weak States in the International System, London, Frank Cass, 1992.
173. Harik, I. Lebanon: Anatomy of Conflict. Hanover, Pa., 1981
174. Heig, Alexander. Jr. Caveat: Realism, Reagan and Foreign Policy. New York: Macmillan 1984.
175. Heikal, Mohammed. The Cairo Documents: The Inside Story of Nasser and his Relationship with World leaders, Rebels and Statesman. New York, Doubleday, 1973.
176. Heikal, Mohammed. Secret Channels. London. Harper Collins, 1996.
177. Hinnebusch, Raymond. State and Civil Society in Syria. *The Middle East Journal*, Vol.47, No.2, Spring 1993, pp.243-257.
178. Hinnebusch, Raymond. Revisionist Dreams, realist Strategies: The Foreign Policy of Syria. Ch.10., Ed. By Korany, Bahgat & Ali E.Hillal Dessouki. The Foreign Policies of Arab States., Westview Press, Boulder and London, AUC Press, Egypt,1984. pp.283-322.
179. Hopwood Derek. Syria, 1945-1986: Politics and Society. London, 1988.
180. Hourani, Albert. Arabic Thought in the Liberal Age 1798-1939. 11th reprint, Cambridge University Press, 2002.
181. Hourani, Albert. The Emergence of the Modern Middle East. Berkeley, 1981
182. Hourani, Albert. Syria and Lebanon. A Political Essay. Oxford University Press, London, 1946.
183. Hudson, Michael. To Play the Hegemon: Fifty Years of US Policy Toward the Middle East. *The Middle East Journal*, Vol.50, No.3, Summer 1996, pp.329-343.
184. Kalb Marvin and Bernard. Kissinger. Boston: Little Brown, 1974.
185. Karsh, Efraim.Soviet Policy towards Syria since 1970. New York: St.Martins Press, 1991.
186. Karsh, Efraim. Why the Middle East Is So Volatile. *Middle East Quarterly*, December 2000, http://www.meforum.org/article/51.
187. Karter, Jimmy. The Blood of Abraham. Boston, 1985.



188. Kent, Jay. The Assad Factor. *The Middle East*, January 1986.
189. Kaufman, Burton I. The Arab Middle East and the US: Inter Arab Rivalry and Superpower Diplomacy, Twayne Publishers, New York, 1996, 291 pages.
190. Kayali, Hasan. Arabs and Young Turks: Ottomanism, Arabism and Islamism in the Ottoman Empire, 1908-1918. Berkeley: University of California Press, 1997.
191. Kedourie, Elie. The Bludan Congress on Palestine, 1937. *Middle Eastern Studies*, vol.17, no.1, January 1981.
192. Kimche, Jon. Palestine or Israel: The untold story of why we failed, 1917-1923:1967-1973. London: Secker & Warburg.1973.
193. Kissinger, Henry. White House Years, Boston: Little, Brown & Co, 1979.
194. Kissinger, Henry. Years of Upheaval. London, Weidedenfeld &Nicolson and Michael Joseph, 1982.
195. Khalidi, Rashid. Ottomanism and Arabism in Syria Before 1914: A Reassessment. The Origins of Arab Nationalism. Eds. Rashid Khalidi, Lisa Anderson, Muhamed Muslih and Reeve S.Simon, Columbia University Press, New York, 1991, pp.50-69.
196. Khoury, Fred J. The Arab-Israeli Dilemma, Syracuse Uniuversity Press, New York, 1968.
197. Khoury, Philip S. Syria and the French Mandate: The Politics of Arab Nationalism, 1920-1945. Princeton, New Jersey: Princeton University Press, 1987
198. Khoury, Philip S. Divided Loyalties? Syria and the Question of Palestine, 1919-1939, *Middle Eastern Studies*, Vol.21, 1985.
199. Khoury, Philip S.. Factionalism Among Syrian Nationalist During the French Mandate. *International Journal of Middle Eastern Studies*, 13 (Nov.1981), p.438
200. Landis, Joshua. Early US Policy toward Palestinian Refugees: the Syria Option. The Palestinian Refugees: Old Problems-New Solutions, Eds.Ginat, Joseph and Perkins, Edward, University of Oklahoma Press: Norman OK, 2001, pp.77-87.
201. Laqueur, Walter (ed.),The Arab-Israeli Reader. London.1968
202. Laquer, Walter and Rubin Barry. The Israeli-Arab reader: A Documentary History of the Middle East Conflict. London, Penguin Books, 1995.
203. Lawson, Fred. Why Syria Goes to War: Thirty Years of Confrontation. Cornell University Press, Ithaca, NY, 1996.
204. Lawson, Fred. Can US Economic Assistance Alter Syria's Posture Toward Israel? *Middle East Policy*, Vol.IV, No.4, October 1996, pp.102-115.

205. Lawson Fred. Domestic Transformation and Foreign Steadfastness in Contemporary Syria. *The Middle East Journal*, Vol.48, No.1, Winter 1994, pp.47-64
206. Lesch, David W. Syria and the US: Eisenhowers Cold War in the Middle East. Boulder, Westwiev Press, 1992.
207. Lesch, David W. Is Syria Ready for Peace? Obstacles to Integration in the Global Economy. *Middle East Policy*, February 1999.
208. Leverett, Flynt. Inheriting Syria. Bashar's Trial by Fire. Brookings Institution Press, 2007
209. Lewis, Bernard. Rethinking the Middle East, *Foreign Affairs*, Vol. 71. N4, 1992, pp.99-119.
210. Longrigg, Stephen. Syria and Lebanon under the French Mandate. Oxford University Press, London, 1958
211. Malik, Mufti. Sovereign Creations: Pan-Arabism and Political Order in Syria and Iraq. Ithaca, N.Y.: Cornell University Press, 1996
212. Mandel, Neville. Attempts of an Arab-Zionist Entente: 1913-1914. *Middle Eastern Studies*, Vol.1, No.3, April 1965, pp.238-267.
213. Maoz, Moshe. Syria and Israel. From War to Peacemaking. Claredon Press, Oxford 1995, pp.280.
214. Maoz, Moshe. Asad, The Sphinx of Damascus: A Political Biography, Weidenfeld&Nicholson, London, 1988. pp.226.
215. Maoz, Moshe and Yaniv Avner. Syria under Assad: Domestic Costraints and Regional Risks. St.Martin`s Press, NY. 1987.
216. Moshe Maoz. Society and State in Modern Syria., in Menahem Milson (ed.), Society and Political Structure in the Arab World. New York, 1973
217. Moshe Maoz. Attempts at Creating a Political Community in Modern Syria. *Middle East Journal.* Vol.26, No2, Spring 1972
218. McLaurin, R.D. Golan Security in a Middle East Settlement. *Oriente Moderno*, December 1981.
219. Meir, Golda. My Life. Tel-Aviv, 1975.
220. Moreaux, J.M. The Syrian Army. *Defence Update*, No.69.
221. Muslih, Muhammad. The Golan: Israel, Syria, and Strategic Calculations. *The Middle East Journal*, Vol.47, No.4, 1993, pp.611-632.
222. Muslih, Muhammad. The Rise of Local Nationalism in the Arab East. The Origins of Arab Nationalism. Ed. By Rashid Khalidi, Lisa Anderson, Muhamad Muslih and Reeve S.Simon, Columbia University Press, New York, 1991, pp.167-184.
223. Neff, Donald. Warriors for Jerusalem: the Six Days that Changed the Middle East. New-York, Simon & Schuster, 1984.
224. Neumann, Robert. Assad and the Future of the Middle East, *Foreign Affairs*, Winter 1983/84, pp.237-256.



225. Nixon, Richard. The Memoirs of Richard Nixon. New York, Crosset & Dunlop, 1978.
226. Nuseibieh, Nazem. The Ideas of Arab Nationalism. Ithaca, N.Y., 1956
227. Nutting, Anthony. The Arabs. A Narrative History from Mohammed to the Present. Mentor Books, New York, 1964, 416 pages.
228. Olmert, Yosef. Domestic Crisis and Foreign Policy in Syria: The Assad Regime. *Middle East Review*, Vol. XX, No. 3, Spring 1988, pp.17-25.
229. Peres, Shimon. Battling for Peace. Memoirs. London, Weidenfeld&Nicolson, 1995.
230. Perthes, Volker. The Political Economy of Syria under Asad. I.B.Tauris, London, 1995, pp.298.
231. Pipes, Daniel. Is Damascus Ready for Peace? *Foreign Affairs*, Vol 70, Issue 4, 1991, pp.36-52.
232. Pipes, Daniel. Damascus Courts the West: Syrian Politics, 1989-1991. Washington Institute for Near East Policy, Washington DC, 1991.
233. Pipes, Daniel. Just Kidding: Syrian Peace Bluff. *The New Republic*, January 8&5, 1995.
234. Pipes, Daniel. Greater Syria: The History of An Ambition. Oxford University Press, 1990
235. Polk, William. The Arab World Today, Harward University Press, London,1991, 462 pages.
236. Quandt W.B. The Middle East Conflict in US Strategy, 1970-71, *Journal of Palestiune Studies*. Vol.1, No.1, Autumn 1971, pp.39-52.
237. Quandt, William. Lyndon Johnson and the June 1967 War: What Color Was the Light? *Middle East Journal.* Vol.46, No.2, Spring 1992, pp.198-228.
238. Quandt, William. US Policy toward the Arab-Israeli Conflict. The Middle East. Ten Years after Camp-David, The Brookings Institution,1988.
239. Quandt, William. Decade of Decisions: American Policy toward the Arab-Israeli Conflict 1967-1976, Berkeley University of California Press, Berkeley and Los Angeles, 1977.
240. Quandt, William. Peace Process, American Diplomacy and the Arab-Israeli conflict since 1967, The Brookings Institution, Washington D.C. 1993.
241. Rabil, Robert. The Ineffective Role of the US in the US-Israeli-Syrian Relationship. Middle East Journal, Vol.55, No.3, Summer 2001, pp.415-438.
242. Rabil, Robert. Embattled Neighbours: Syria, Israel and Lebanon. Questia Online Library, http://www.questia.com
243. Rabinovich, Itamar. Syria under Baath: 1963-66. The Army-Party Symbiosis. Israel University Press, Jerusalem, 1972.

244. Rabinovich, Itamar. The Brink of Peace. The Israeli-Syrian Negotiations. Princeton University Press, New Jersey, 1998.
245. Rathmell, Andrew. Secret War in the Middle East: The Covert Struggle for Syria, 1949-1961. I.Tauris, London, 1995.
246. Reagan, Ronald. An American Life. New York: Simon & Schuster, 1990.
247. Riad, Mahmoud. The Struggle for peace in teh Middle East, Quartet Books, UK, 1981.
248. Roberts, David. The Ba`th and the Creation of Modern Syria. St. Martin`s Press. NY. 1986.
249. Ross, Denis. The Missing Peace: The Inside Story of the Fight for Middle East Peace. New York, Farrar, Straus and Giroux, 2004
250. Rubenberg, Cheryl. Israel and the American National Interest, Copyright 1986, University of Illinois Press.
251. Rubin, Barry. The Reagan Administration and the Middle East . Eagle Defiant- US Foreign Policy in the 1980`s. Ed. Kenneth A.Oye, Little, Brown and Company, Boston, Toronto, 1983, pp.367-389.
252. Rubin, Barry. The Truth about Syria. Palgrave Macmillan, New York, 2007.
253. Safran, Nadav. From War to War. The Arab-Israeli Confrontation,1948-1967. Pegasus, New York, 1969.
254. Schiff, Zeev. Lebanon: Motivations and Interest in Israel`s Policy. *Middle East Journal*, 38, 1984.
255. Schiff, Ze'ev. "What did Rabin promise Syrians?". *Haaretz*, 29 August 1997
256. Schoenbaum, D. The United States and the State of Israel. New-York, 1993.
257. Seale, Patrick. The Struggle for Syria. A Study of Post-War Arab Politics. 1945-1958, Oxford University Press, London, 1965.
258. Seale, Patrick. Assad of Syria and the Struggle for the Middle East, University of California Press, Berkeley and Los Angeles, 1989.
259. Shalev, Aryeh. Israel and Syria: Peace and Security on the Golan. Boulder, CO, Westview Press, 1994.
260. Shamir, Yitzhak. Summing Up. London, Weidenfeld&Nicolson, 1994.
261. Sharabi, Hisham. Arab Intellectuals and the West: The Formative Years, 1875-1914. Baltimore, 1970.
262. Sheehan, Edward. Step by Step in the Middle East. *Journal of Palestine Studies*, 1975/76, Vol.5, pp.19-34.
263. Sheehan, Edward. The Arabs, Israelis and Kissinger. New York: Readers Digest Press, 1976.
264. Schieffer, Bob & Gary Paul Gates, The Acting President, New York: E.P.Dutton, 1989.



265. Shlaim, Avi. Collusion Across the Jordan: King Abdullah, the Zionist Movement, and the Partition of Palestine (New York: Columbia University Press, 1988), www.ciaonet.org/book/sites/cup.html.
266. Shlaim, Avi. The Impact of US Policy in the Middle East. *Journal of Palestine Studies*,Vol.XVII, No.2, Winter 1988, pp.15-28.
267. Shoemaker C.Christofer & Spanier, John. Patron-Client State Relationships, Multilateral Crises in the Nuclear Age, New-York, Praeger, 1984.
268. Shultz George. Turmoil and Trimph: My Years as Secretary of State, New York, Charles Scribners Sons, 1993.
269. Spiegel, Steven. The Six Day War and the Benefits of the US-Israeli Alliance, "Major Problems in American Foreign Policy".
270. Stephens, Robert. The Great Powers and the Middle East, Journal of Palestine Studies, Vol.II, No.4, Summer 1973, pp.3-12.
271. Syria and the Palestinians: The Clash of Nationalisms, by Ghada Hashem Talhami. Gainesville: University Press of Florida, 2001.
272. Syria`s Turn. "The Economist", December 23-January 5, 1996.
273. The Golan Heights: Twenty Years After. Occupied Territories Report. "Journal of Palestine Studies", Vol.XVII, No.1, Autumn 1987.
274. The Middle East in the New World Order. Ed.Haifaa A.Jawad. Macmillan Press, London, 1994.
275. Tibawi, L.A. American Interests in Syria, 1800-1901. A Study of Educational, Literary and Religious Work, Claredon Press, Oxford, 1966.
276. Tibawi L.A. Lawrence, T.E. Faisal and Weizmann: The 1919 attempt to secure an Arab Balfour Declaration. Royal Central Asian Journal. Vol.LVI, Part II, June 1969.
277. Tibawi, L.A. "Some Misconceptions About the Nahda", Middle Eastern Forum, No.3-4, 1968.
278. Tibi, Bassam. Arab Nationalism: A Critical Inquiry, The Macmillan Press, London, 1981.
279. Torrey, Gordon. Syrian Politics and the Military, 1945–58. Columbus: Ohio State University Press, 1964.
280. Vance C. Hard Choices. Critical Years in America`s Foreign Policy, New York, 1983.
281. Van Dam, Nikolaos. The Struggle for Power in Syria.Politics and Society under Asad and the Ba`th Party. I.B.Tauris Publishers. London-New York, 1996, 228 pages.
282. Weinberger, Caspar. Fighting for Peace: Seven Critical Years in the Pentagon.New York: Warner Books,1990.
283. Weinberger, Naomi Jay. Syrian Intervention in Lebanon: The 1975-76 Civil War, New Vork, Oxford University Press, 1986.

284. Woodward, L. Ernest and Butler, Rohan. Documents on British Foreign Policy, 1919-1939, first series, vol.4. London, 1952
285. Wortabet, M.Gregory. Syria and the Syrians. James Maddon, London,1856
286. Yergin, Daniel. The Prize: The Epic Quest for Oil, Money and Power. New-York, Simon &Schuster, 1991.
287. Yorke, Valerie. Domestic Politics and the Prospects for an Arab-Israeli Peace. Journal of Palestine Studies,Vol.XVII, No.4, Summer 1988, pp.3-25.
288. Zeine, Zeine N. The Struggle for Arab Independence: Western Diplomacy and the Rise and Fall of Faisal's Kingdom in Syria. Beirut:Khayat`s. 2-nd ed., 1966.
289. Zisser, Eyal. Cammanding Syria. Bashar al-Asad and the First Years in Power. I.B.Tauris, London, 2007.
290. Zuhair, Diab. Have Syria and Israel Opted for Peace? "The Middle East", Vol.3, No.2, 1994.
291. Zunes, Stephen. Israeli-Syrian Peace, the Long Road Ahead. "Middle East Policy", Vol.2.No.3, 1993.

*գ/ հայերեն*

*292.* Կարամանուկյան Շ., Արաբական Պետությունների Լիգայի դերը արաբական երկրների հակաիմպերիալիստական պայքարում, Երևան, 1988
293. Կարապետյան Ռ., Սիրիա-ամերիկյան հարաբերությունները (1967-1996), Երևան, 2000
294. Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, (Ուսումնական ձեռնարկ ԲՈՒՀ-երի ուսանողների համար), Երևան, 2003
295. Կարապետյան Ռ., «Նոր զարգացումներ թուրք-սիրիական հարաբերություններում» *Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ*, հ.2, Երևան 2003
296. Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, 4 հատոր, Երևան, 2004-2006.
297. Հովհաննիսյան Ն., Արաբական Արևելքը ԱՄՆ-ի քաղաքականության մեջ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, Մերձավոր և Միջին Արևելքի Երկրներ եվ Ժողովուրդներ, IX հատոր, Արաբական երկրներ, ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1978.



298. Հովհաննիսյան Ն., Սարգսյան Հ., Սիրիան անկախության համար մղված պայքարում (1917-1946թթ.), ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1975.
299. Հովհաննիսյան Ն., Լիբանանյան կոնֆլիկտը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը (1975-1982), Երևան, 1982.
300. Հովհաննիսյան Ա., Սիրիայի ռազմական միջամտությունը լիբանանյան հակամարտությանը 1976թ., Մերձավոր և Միջին Արևելքի Երկրներ և Ժողովուրդներ, XVI հատոր, Արաբական երկրներ, ՀՀ ԳԱ «Գ-իտություն» Հրատարակչություն, Երևան, 1996.
301. Սարաջյան Պ., 1973թ. արաբ-իսրայելական պատերազմը և արաբական առաջադիմական ուժերի դիրքորոշումը, Մերձավոր և Միջին Արևելքի Երկրներ եվ Ժողովուրդներ, IX հատոր, Արաբական երկրներ, ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1978.
302. Փաշայան Ա., Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը. նպատակները, գործունեությունը, դիրքորոշումը Ղարաբաղյան հակամարտության նկատմամբ. Երևան, 2003
303. Փիր-Բուդաղովա Է., Քաղաքական և սոցիալ-տնտեսական վերափոխումները Սիրիայում (1962-1970թթ., Մերձավոր և Միջին Արևելքի Երկրներ և Ժողովուրդներ, IX հատոր, Արաբական երկրներ, ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1978.

*դ/ ռուսերեն*

304. Александров Б. События в Сирии. *За рубежом*, 1970, стр. 9.
305. Арутюнян А. Турецко-сирийские отношения на рубеже веков (1980-е годы – начало XXI века), Автореферат на соискание ученой степени кандидата исторических наук, Институт Востоковедения РАН, Москва, 2007.
306. Ахмедов В. "Сирия и арабо-израильское урегулирование после иракской войны", "Арабо-израильский конфликт: старые проблемы и новые планы" М., ИИИиБВ, 2003, 65 с.
307. Баранов Р. Нефть и политика США на Ближнем и Среднем Востоке. Наука, М., 1977.
308. Ближневосточный конфликт.1948-1956. Из документов архива внешней политики Российской Федерации. Под редакцией академика А.Н.Яковлева. Москва. Изд-во "Материк", Москва, 2003,.
309. Ближневосточный конфликт. 1957-1967. Из документов архива внешней политики Российской Федерации. Под редакцией академика А.Н.Яковлева. Москва. Изд-во "Материк", Москва, 2003.
310. Бодянский В. Обьединенная Арабская Республика (Сирийский район). – Политика США на Арабском Востоке. М.1961, 461с.

311. Борисов Р. США: Ближневосточная политика в 70-е годы. Наука, М., 1982.
312. Вавилов В., Социально-экономические преобразования в Сирии. (1946-1970гг), Москва, 1972, 240с.
313. Вавилов В, Сазонов А. Сирийская Арабская Республика, Знание, М.1981.
314. Волгин О. Дамасский булат: Сирия. 25 лет по пути революции. М., 1988.
315. Григорян Г. Позиция Сирии в ближневосточном конфликте, Изд-во АН Арм.ССР, Ереван.
316. Гриневский О. Сценарий для третьей мировой войны. Как Израиль чуть не стал ее причиной. «Олма –Пресс», Москва, 2002.
317. Гриневский О. Тайны советской дипломатии. «Вагриус», Москва, 2000.
318. Джабер Х. Ливано-сирийские отношения в контексте ближневосточного урегулирования // Международные отношения на Ближнем и Среднем Востоке и политика России на рубеже XXI века. Изд-во "Немыкин & Шулек Ко", Москва, 2000.
319. Дмитриев Е., Ладейкин В. Путь к миру на Ближнем Востоке. Москва, 1974.
320. Дмитриев Е. Палестинский узел. К вопросу об урегылировании палестинской проблемы. Москва,1978.
321. Добрынин А., Сугубо доверительно. Москва, 1996.
322. Дружинина А.. Сирия старая и новая. Айастан, Ереван, 1981.
323. Захаров А., Фомин О. Кемп-Дэвид: Политика обреченная на провал. Международные отношения, М., 1982.
324. Звягельская И. Роль военной верхушки в формировании государственной политики Израиля. Наука, М.,1982.
325. Иванов С. Межарабская политика Сирии в свете проблем ближневосточного конфликта (1963-1984). М., 1994.
326. Иванова И.И. Турецко-арабские отношения и их место в системе международных связей на Ближнем Востоке (1945–1983), М., 1985.
327. Карапетян Р. Сирийско-американские отношения в свете ближневосточного урегулирования. Вопросы Арабистики, Ереван. 1996.
328. Киселев В. Палестинская проблема и ближневосточный кризис. 2-испр. и доп. издание, Киев, 1983.
329. Котлов Л. Становление национально-освободительного движения на Арабском Востоке (середина XIX в. – 1908 г.), 1975..



330. Кучин В. Сирийская Арабская Республика и ее вооруженные силы. М., 1976.
331. Левин З. Развитие общественной мысли на Востоке: Колониал. период, XIX-XX вв., Наука, Изд. фирма "Вост. лит.", М., 1993.
332. Левин З. Развитие основных течений общественно-политической мысли в Сирии и Египте. М., 1972.
333. Луцкий В. Национально-освободительная война в Сирии (1925-1927гг.), М., 1982.
334. Матвеев И. Национальная и общеарабская слагаемые политики независимой Сирии на Ближнем Востоке. Диссертация на соискание уч. степени кандидата исторических наук. Мос. гос. ин-т. Международных отношений. Москва, 2003.
335. Махлюф В. Сирия первых лет независимости: роль Советского Союза в становлении и укреплении суверенной государственности. Сборник: "Страны Ближнего Востока (актуальные проблемы современности и истории)", М., ИИИиБВ и ИВ РАН,1998.
336. Медведко Л. К востоку и западу от Суэца. Закат колониализма и маневры неоколониализма на Арабском Востоке. М., 1980.
337. Меир Г. Моя жизнь. Перевод с иврита Р. Зерновой, Чимкент: Аурика, 1997.
338. Мир глазами президента Хафез Асада. Сборник речей и выступлений. Институт Востоковедения РАН, Москва, 2000.
339. Млечин Е. Особая папка. Иосиф Сталин-создатель Израиля. Москва, "Яуза", 2006.
340. Оганесян Н. Образование независимой Сирийской Республики: 1939-1946. Издательство Наука, Москва, 1968.
341. Оганесян Н. Отношения Иракской Республики со странами Арабского Востока, Изд-во АН. Арм.ССР, Ереван, 1980.
342. Оганесян Н. Политика империалистических держав на Арабском Востоке в годы второй мировой войны (1939-1945гг.), Ереван, 1980.
343. Оганесян Н. Революционный процесс в арабском мире. , Изд-во АН. Арм.ССР, Ереван, 1990.
344. Перес Ш. Новый Ближний Восток. Издательство "Прогресс:Гамма", Москва, 1994.
345. Пир-Будагова Э. Сирия в борьбе за упрочение национальной незвисимости (1945-1966), Изд-во Наука, Москва, 1978.
346. Примаков Е. История одного сговора: (Ближневосточная политика США в 70-е начале 80-х годов). Москва, Политиздат, 1985.

347. Примаков Е. Анатомия ближневосточного конфликта, Москва, Политиздат, 1978.
348. Примаков Е. Восток после краха колониальной системы. Наука, М., 1982.
349. Примаков Е. Конфиденциально: Ближний Восток на сцене и за кулисами (вторая половина XX-начало XXI века). Изд-во "Российская газета", Москва 2006.
350. Прошин Н.Сирия. Москва, 1979.
351. Пырлин Е. Трудный и долгий путь к миру: Взгляд из Москвы на проблему ближневосточногио урегулирования, РОССПЭН, Москва, 2002.
352. Смирнов А. Израиль в огне джихада, “Вече”, Москва, 2004.
353. Советско-израильские отношения. 1941-1953. Москва, 2005.
354. Филоник А. Хафез Асад: призвание - гражданин. Сборник: “Арабские страны Западной Азии и Северной Африки (новейшая история, экономика и политика)”, М., ИИИиБВ и ИВ РАН, 1997.
355. Хазанов М. ООН и ближневосточный кризис. Международные отношения, М.,1983.
356. Юрченко В.П. "Сирия: проблемы национальной безопасности (военная политика и военное строительство в период правления ПАСВ 1963-2004 гг.)" М., ИИИиБВ, 2004.

3. Պարբերական մամուլ

*ա/ արաբերեն*

1. تشرين
2. الفكر العسكرى
3. المناضل
4. نضال الشعب
5. الثورة
6. الفرسان
7. فنون
8. فلسطين
9. المعرفة
10. إقتصاديات
11. الحوادث
12. السفير
13. الدستور
14. الاحرار
15. الأنباء
16. الديار
17. بيروت
18. الحياة
19. الجديد
20. الجريدة
21. الكفاح
22. الكفاح العربى
23. المحرر
24. ا النهار
25. الرأى
26. الوفاء
27. الزمان
28. الأخبار.
29. الأهرام
30. الأخبار اليوم



31. الأسبوع العربى
32. الجمهورية
33. الرأى العام
34. القبس
35. السياسة
36. الثورة
37. الفجر
38. القدس العربى
39. الدفاع
40. الوسط
41. النهار العربى والدولى
42. المستقبل

*բ/ անգլերեն*

43. "Foreign Affairs"
44. "Middle East Journal"
45. “Journal of Palestine Studies”
46. “Middle East Review”
47. “Middle East Journal”
48. “Middle East Contemporary Survey”
49. “Middle East Record”
50. "Foreign Policy"
51. "The New York Times"
52. "International Herald Tribune"
53. "The Washington Post"
54. "Jerusalem Post"
55. “Time”
56. “Newsweek”
57. “US News & World Report”
58. “The Economist”
59. “Financial Times”
60. “Haaretz”
61. “New Europe”
62. "The Daily Star"
63. “Chicago Sun-Times”
64. “Arab Report and Record”
65. “The Arab World”
66. “The Christian Science Monitor”
67. “Islamic Review and Arab Affairs”
68. “The Times”
69. "London Observer"
70. “Los Angeles Times”
71. “Harpers Magazine”
72. ”The New Republic”

*ա/հայերեն*

73. «Հայաստանի Հանրապետություն»
74. «Ազգ»
75. «Երկիր»
76. «Մոլորակ»
77. «Դրոշակ»
78. «Ազատ օր»
79. «Հայրենիքի Ձայն»
80. «Գանձասար»
81. «Երեկոյան Երևան»
82. «Ազդակ»
83. «Նոր աշխարհ»
84. «Կանչ»
85. «Սովետական Հայաստան»

*դ/ այլ լեզուներով*

86. “Der Spiegel” (գերմաներեն)
87. “Le Monde” (ֆրանսերեն)
88. "За рубежом "
89. “Азия и Африка сегодня”
90. “Глобус”
91. “Дипломатический вестник”
92. “Компас”
93. «Yedioth Aharonot»
94. “Континент”

4. Էլեկտրոնային-համացանցային կայքէջեր


http://albawaba.com/main/
http://www.amin.org/
http://www.arab.net/syria/
http://www.ariga.com/index.asp
http://www.au.af.mil/au/aul/bibs/mideast/me99tc.htm
http://www.biu.ac.il/SOC/besa/publications/index.html
http://www.cacianalyst.org
http://www.ciaonet.org
http://www.csis.org
http://dictionary.al-islam.com
http://www.foreignaffairs.org/articles/mideast.html
http://www.fpif.org/indices/regions/mideast.html
http://www.historyteacher.net/Arab-Israeli_Conflict.htm
http://www.iimes.ru/
http://www.imra.org.il/
http://www.ivran.ru/
http://inic.utexas.edu/menic.html
http://www.internationalaffairs.com/
http://www.ips-dc.org
http://www.library.wisc.edu/guides/MidEast/midinfo.htm
http://www.lib.duke.edu/ias/mideast/index.htm
http://www.meib.org/
http://www.memri.org/
http://www.menewsline.com/
http://www.mepc.org/
http://www.mequarterly.org/
http://meria.idc.ac.il/
http://www.merip.org/index.html
http://www.mideastinsight.org/index.html
http://www.mideastweb.org/middle_east_center.htm
http://middleeast.org.ua/palestina.htm
http://www.palestinecenter.org/cpap/key_issues.html
http://www.riia.org
http://www.rand.org
http://www.sana.sy/
http://www.selfdetermine.org/indices/regions/mideast.html
http://www.stratfor.com
http://www.washington-report.org
http://www.yale.edu/lawweb/avalon/mideast/mideast.htm-/1916-2001թթ. Մերձավոր Արևելքին վերաբերող կարևոր իրավական փաստաթղթերի տեքստերը/

9(569)
Կ-29

ROUBEN KARAPETIAN

THE PLACE AND ROLE OF SYRIA
IN THE ARAB-ISRAELI CONFLICT
(1946-2000)



# ՌՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Եգիպտոսում ՀՀ Արտակարգ և լիազոր դեսպան, ՀՀ Լիազոր ներկայացուցիչ Արաբական պետությունների լիգայում և Աֆրիկյան միությունում:

ՀՀ ԱԳՆ համակարգում է 1993թվականից: Աշխատել է Բուլղարիայում և Հունաստանում ՀՀ դեսպանություններում, ղեկավարել է ՀՀ ԱԳ նախարարի աշխատակազմը, այնուհետև ՀՀ ԱԳՆ Ասիայի, Աֆրիկայի և Օվկիանիայի վարչությունը:

Պատմական գիտությունների թեկնածու է և զբաղվում է ակտիվ գիտամանկավարժական գործունեությամբ: 1999-2004թթ. դասավանդել է Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետում:

2002-2004թթ. զբաղեցրել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի նորաստեղծ Հարավային Ասիայի երկրների բաժնի վարիչի պաշտոնը:

Հեղինակ է ՀՀ ԲՈՒՀ-երի ուսանողների համար «Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն» հայերեն առաջին ուսումնական ձեռնարկի, ինչպես նաև Մերձավոր Արևելքի նորագույն պատմությանը վերաբերող չորս մենագրությունների, Հայաստանում և արտասահմանում հրատարակված բազմաթիվ հոդվածների: